



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՍԱՐԱՆ

Ն. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ռ. Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

ԳՐԱԲԱՐԻ ՉԵՌՆԱՐԿ

5-րդ հրատարակություն

ԵՐԵՎԱՆԻ ՆԱԽԱՍԱՐԱՆԻ ՆՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2003 թ.

Ավետիսյան Ն. Մ., Ղազարյան Ռ. Ս.

Ա 791 Գրաբարի ձեռնարկ (Ուս. ձեռնարկ բուհերի համար): Երևանի պետ. համալս.- 5-րդ հրատ. - Եր.: Երևանի համալս. հրատ., 2003, - 300 էջ:

Ձեռնարկն ընդգրկում է գրաբարի հնչյունաբանության, ձևաբանության և շարահյուսության ամբողջական դասընթացը: Քերականական նյութերը տրվում են առանձին բաժիններով, որոնք ունեն համապատասխան վարժություններ ու բնագրեր ընթերցանության և թարգմանության համար:
Ձեռնարկին կցված են բառարան և 5-12-րդ դարերի մատենագրությունից քաղված հատվածներ՝ լրացուցիչ ընթերցանության համար:
Նախատեսված է բուհերի ուսանողների համար:

Ա $\frac{4602020100}{704 (02) 2003}$ 2003

ԳՄԴ 81.2Հ ց73

ԱՌԱՋԱԲԱՆ

Ներկա ձեռնարկի հիմնական բաժիններն են՝ «Հնչյունների արտասանությունը և գրությունը. հնչյունափոխություներ», «Ձևաբանություն», «Շարահյուսություն», «Գրաբարի հատընտիր» և «Բառարան»: Ձևաբանության բաժնում տրված են նաև չթեքվող խոսքի մասերից մակբայը, շաղկապը և ձայնարկությունը:

Դասագրքում ընդգրկված նյութերը տրված են առանձին դասերով, ըստ որում յուրաքանչյուր դասում հաղորդվող տեսական գիտելիքներին անմիջապես հետևում են դրանց համապատասխան վարժություններ և ընթերցանության հատվածներ՝ քաղված գրաբարի միայն դասական շրջանի (5-րդ դար) ինքնուրույն և թարգմանական գրականությունից: Տեղի խնայողության պատճառով նշված են միայն քերականական գիտելիքներին վերաբերող բնագրային օրինակների աղբյուրները, իսկ վարժություններում բերված օրինակների աղբյուրները չեն նշվում: Ընդհանուր առմամբ ամեն մի դասում բացատրվում են քերականական կամ այլ կարգի բոլոր այն երևույթները, որոնց մասին նախապես ոչինչ չի ասվել: Դասերում ընդգրկված նյութերի ծավալը պայմանական է, ըստ այդմ էլ դրանք կարելի է անցնել մեկ կամ ավելի դասերի ընթացքում:

Ձեռնարկի հեղինակները նպատակահարմար են համարել խոսքի մասերի ուսուցումը սկսել բայից, որը, սակայն, չի խանգարում, որպեսզի ուսուցման ընթացքում այս կամ այն չափով խախտվի դասանյութերի հաջորդականությունը:

Շարահյուսության բաժնում քննվում են գրաբարի կապերի (նախդիր և նախադրություն), հոդերի, որ հարաբերականի կիրառությունը և շարահյուսական այլ հարցեր:

Բառարանում բացատրվող գրաբարյան բառերը տրվում են ոչ թե իրենց ունեցած բոլոր նշանակություններով, այլ այն իմաստներով, որոնք հանդիպում են դասագրքում:

1. ԳՐԱԲԱՐԻ ԱՅԲՈՒԲԵՆԸ. ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

- ա.** անական
- Ագ.,** Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1909
- Բուգ.,** Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912
- գ.** գոյական
- դ.** դերանուն
- եր.** եղանակիչ բայ
- Եզնիկ,** Եզնրկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914
- Եղիշէ,** Եղիշէի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957
- թ.** թվական
- Թռռն.,** Թռռնեան Թ., Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց, Վիեննա, Ա. հ., 1891, Բ. հ., 1910
- Խոր.,** Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1913
- Կոր.,** Կորին, Վարք Մաշտոցի, Երևան, 1941
- կր.** կրավորական
- հ.** հասարակ բայ
- ձ.** ձայնարկություն
- մ.** մակբայ
- ն.** ներգործական բայ
- նխ.** նախդիր, նախադրություն
- ՆՆԲ,** Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, Ա. հ., 1836, Բ. հ., 1837
- շ.** շաղկապ
- չ.** չեզոք բայ
- պր.** պատճառական բայ
- Փարպ.,** Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1904
- փխ.** փոխանակ

Մնացած համառոտագրությունները վերաբերում են 1929 թ. Վիեննայում հրատարակված Աստվածաշնչի համապատասխան գլուխներին:

§ 1. 5-րդ դարից մեզ ավանդված գրաբարի այբուբենն ունի 36 տառ՝ ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ը, ց, ւ (վյուճ/հյուճ), փ, ք:

ՈՒ-ն, իբրև *n* և *i* տառերի կապակցություն, այբուբենի մեջ տեղ չի գտել, իսկ *o* և *ph* տառերն ավելացել են միջին դարերում: Հին հայերենում *ph* հնչյուն չի եղել: Փոխառյալ բառերում այն փոխարինվել է *ph*-ով կամ *h*-ով, ինչպես՝ դաֆնե-դափնի (փոխ. հունարենից), ֆրահանգ-հրահանգ (փոխ. պարսկերենից) և այլն:

§ 2. Գրաբարի ձայնավորներն են՝ ա, ե, է, ը, ի, ո, ու:

§ 3. 5-րդ դարում, երբ հայերենը գրի առնվեց, գրությունը ճշտորեն համապատասխանում էր արտասանությանը, այսինքն՝ ամեն մի հնչյուն ինչպես գրվում էր, այնպես էլ՝ արտասանվում: Հետագա դարերում գրությունը հիմնականում մնում է նույնը, սակայն արտասանությունը, աստիճանաբար փոփոխություններ կրելով, հեռանում է գրությունից, որի հետևանքով ձևավորվում են արտասանության նոր կամ ավանդական կանոններ: Այժմ գրաբարյան բնագրերը կարդում ենք ոչ թե հին կամ գրային, այլ փոփոխված, ավանդական արտասանությամբ: Գրաբար ճիշտ կարդալու և գրելու համար պետք է իմանալ ավանդաբար մեզ հասած արտասանության և ուղղագրության հետևյալ կանոնները:

§ 4. *Յ*-ն բառասկզբում, այլև բարդության և ածանցման մեջ արտասանվում է *h*, օրինակ՝ յայտնի = հայտնի, անյայտ = անհայտ, յատակ = հատակ, սալյայտակ = սալահատակ:

Բառավերջում *ա* և *n* ձայնավորներից հետո գրվում է *j*, բայց չի արտասանվում, օրինակ՝ արքայ = արքա, երեկոյ = երեկո: Բառավերջի *j*-ն արտասանվում է մի քանի միավանկ բառերում՝ բայ, գոյ, խոյ, հայ, ճայ, նայ (=խոնավ, թաց), Նոյ, վայ:

Բառավերջում *ա* և *n* ձայնավորներից հետո *j* չի գրվում՝ ա) բայերի բուն

հրամայականի եզակի 2-րդ դեմքում՝ *ասա՛, ապրեցո՛ւ, ք) սա, դա, նա* դերանունների ուղղական, հայցական, սեռական և տրական, *դու* անձնական դերանվան սեռական (քո) հոլովածներում, գ) *ահա, ապա* բառերում, դ) օտար հատուկ անունների ուղիղ ձևերում՝ Աննա, Յուդա, Եդեսիա, Կեսարիա և այլն:

§ 5. Ի (ւ) տառը գրվում է բառամիջում երկու ձայնավորների միջև և բառավերջում *ա, ե, ի* ձայնավորներից հետո, ինչպես նաև *տ* կապակցության մեջ և արտասանվում է *վ*, օրինակ՝ աւազ=ավազ, տալիլ=տավիլ, առաւել=առավել, մրգաւէտ=մրգավետ, հարաւ=հարավ, տերեւ=տերեվ, անիւ=անիվ, ոսկւով=ոսկվով:

Գրաբարում *ւ* տառով ոչ մի բառ չի սկսվում:

§ 6. Ե տառի փոխարեն բառավերջում միշտ գրվում է *է*, օրինակ՝ թէ, եթէ, բազէ, ափսէ, բուպէ, իսկ բառամիջում գրվում է *է* այն դեպքում, երբ կարող է լինել *է > ի* և *է > ե* հնչյունափոխություն, օրինակ՝ վէճ-վիճել, շէն-չինական, Մովսէս-Մովսեսի:

§ 7. Ու-ն բառամիջում ձայնավորից առաջ արտասանվում է *վ՛* արուեստ=արվեստ, պատուէր=պատվեր, լեզուի=լեզվի, արծույ=արծվո:

ՈՒ-ն բառամիջում ձայնավորից առաջ *ու* է արտասանվում ՈՒ լծորդության բայերի անցյալ անկատարի ձևերում՝ թողուի, թողուիր, թողուաք, թողուիք, թողուին:

§ 8. Բացի հիշյալ կանոններից, պետք է իմանալ, որ *զ* նախդիրը բաղաձայնից առաջ արտասանվում է *ըզ՝* զգետ-ըզգետ, զնա=ըզնա:

§ 9. *Յ, Ն* ձայնորդների և *ա, ե, ի, ռ* ձայնավորների կապակցությամբ կազմվում են երկբարբառներ և եռաբարբառներ: Գրաբարի երկբարբառներն ու եռաբարբառներն են՝ այ, ոյ, աւ, իւ, եւ, եա, եաւ, եայ, տյ:

§ 10. Ոյ երկբարբառը բաղաձայնից առաջ արտասանվում է *ույ՝* բոյս=բույս, գոյն=գույն, յոյս=հույս: Ոյ կապակցությունը *ույ* է արտասանվում նաև *ս, դ, ն*, հոդերից առաջ՝ բոցոյ-բոցոյն=բոցոյն:

Աւ երկբարբառը բաղաձայնից առաջ արտասանվում է *օ* և ընդհանրապես գրվում *օ* տառով՝ աւծ=օծ, արք=օր, կարաւտ=կարօտ: Որպես բացառություն՝ աղաւնի և նաւթ բառերում *աւ*-ն արտասանվում է *աւ*:

Իւ երկբարբառը բաղաձայնից առաջ արտասանվում է *յու՝* կորիւն=կորյուն, սիւն=սյուն, արիւն=արյուն:

Եւ երկբարբառն արտասանությամբ նույնացել է *իւ* երկբարբառին և գրության մեջ էլ հիմնականում արտահայտվում է *իւ*-ով, թեև մի շարք բառերում պահպանվում են այդ երկբարբառների գրության զուգահեռ ձևեր՝ ալելւ//ալիւր=ալյուր, հարեւր//հարիւր=հարյուր, եղջեւր//եղջիւր=եղջյուր:

Չանոթություն. Աւ, եւ, իւ կապակցությունների *ւ*-ը պահպանում է բառա-

վերջի վ արտասանությունը հոգնակի ուղղականի *ւ* և հայցականի *ս* մասնիկներից ու *ս, դ, ն* հոդերից առաջ՝ կաքաւք=կաքավք, պարգեւս=պարգեվս, հովիւդ=հովիվդ, հովիւն=հովիվն:

Եա երկբարբառն արտասանվում է *յա՝* պատեան=պատյան, եղեանն=եղյանն, սիրեա՛ս=սիրյա՛ս:

Եաւ եռաբարբառը բաղաձայնից առաջ արտասանվում է *յո* և ընդհանրապես գրվում *եօ* տառերով՝ ընտանեաք (ընտանեօք)=ընտանյոք, կղզեաք (եօք)=կղզյոք:

Եայ եռաբարբառը բաղաձայնից առաջ արտասանվում է *յայ՝* հրեայք=հրյայք, անդեայք (=նախիր)=անդյայք, բառավերջում՝ *յա՛* պաշտօնեայ=պաշտոնյա:

Իոյ եռաբարբառը բաղաձայնից առաջ արտասանվում է *վույ՝* պատանույն=պատանվույն, տեղույն=տեղվույն:

Վարժություն 1. Կարդալ ավանդական արտասանությամբ.

ա) յիշատակ, յարգել, յաղագս (=մասին, համար), յանցանք, անյայտ, յանախ, յատուկ, անյուսալի, յորդ, անյապաղ, յուշարար, անյիշելի, յիսուն, յանդիման, յայտնի, յաղթանակ, յաջորդ, յաւէտ:

բ) երեխայ-երեխայք, կոփածոյ, արքայ-արքայի, պողոտայ, ճայ, անհաճոյ, շոթայ-շոթայս, գոյ, Տիգրանայ, գետոյ, բայ, սկայ (հսկայ), բրածոյ, Վռամշապիոյ, վկայ, փեսայ-փեսայն, երեկոյ:

գ) աւագանի, շառաիղ, անիւ, արմաւենի, կաւ, նաւ-նաւդ-նաւն-նաւք, լուսաւոր, տիւ (=ցերեկ), հաւ-հաւս-հաւք, տալիղ, աւագ, տերեւ, խոնաւ, ագռաւ, սակաւ, արեւ, բնաւ:

դ) արուեստ, դժուար, նուիրական, պատուական, զինուոր, առեղծուած, գուարակ (=եզ, հորթ), թշուառ, յունական, թունաւոր, հովուական, նուագ, մեղուի, անուանել, սրուակ, կռուել, Գուին:

Վարժություն 2. Գրաբարյան ուղղագրությամբ գրել և կարդալ ավանդական արտասանությամբ:

Աբեղա, կռածո, Տիգրանա, արտաքո, ընծա, մեծարգո, բացակա, ներքո, փիլիսոփա, արմատո, քուրա, գագանաբարո, նա, նոքա, նոցա, ասա՛, պատմեա՛, Սառա, Անանիա, Երեմիա, Ասիա:

Վարժություն 3. Որոշել, թե վ հնչյունը գրաբարյան ուղղագրությամբ ո՞ր բառում ի՞նչ տառով պետք է գրել՝ վ, ւ, թե՞ ու:

Արտասվել, գավառ, թիվ, սով, հարավ, թվական, վիրավոր, վնաս, անվանի, ազնիվ, անվախճան, կավիճ, հովիվ, թավ, լեզվի, անվարժ, բովանդակ, հարված, ավազան, կատվի, նվաճել, հոգվով, Դավթի, Աղվանք:

Վարժություն 4. Ավանդական արտասանությամբ կարդալ.

ա) աւագ, անբաւ, աւդ, ամաւթ, աւր, գաւառ, աւձ, կարաւտ, աւան, պաշտաւն, ծնաւտ, հարաւ, տաւն, ցաւք, արաւտ, ծանաւթ, տաւթ, արաւր:

բ) ապացոյց, հաճոյանալ, դոյլ, գոյութիւն, գայրոյթ, ուրոյն, բարոյական, ողկոյգ, նշոյլ, կոյտ, ախոյեան, քոյր, լոյս, առոյգ, ողջոյն, անյոյս, բոյս:

գ) նիւթ, քաջութիւն, սիւն, իւրաքանչիւր, ձիւթ, անկիւն, հիւսիսի, իւղ, իւր, հիւր, աղիւս, միւս-մէս, գիւտ, հարիւր-հարեր, բեր-բիւր, ալեր-ալիւր:

դ) ցորեան, մատեան, լեռն, մեհեան, դարձեալ, վայրկեան, որդեակ, անցեալ, ծննդեան, ահեակ (=ձախ), դղեակ, առաքեալ, կորեակ, Մամիկոնեան, առաքեալ:

ե) պատանեալ(եօք), ընտանեալ, կարծեալ, տեղեալ, սիրելեալ. հրեայ-հրեայք, քաղեայ-քաղեայք, պաշտօնեայք, լռելեայն. տարւոյն, երանելոյն, այգեստանոյն, հոգւոյս, այգւոյն:

Վարժություն 5. Գրաբարյան ուղղագրությամբ գրել.

ա) կապույտ, ճկույթ, անգույն, զգուշ, սառույց, համբույր, մակույկ, բույն, երևույթ, թույն:

բ) արյուն, հյուսն, դյուրին, հյութ, մրջյուն, եղջյուր, կորյուն, բազմություն, նյութ, իմաստություն, յուր, յուրովի, թյուր:

գ) մանյակ, այծյամն, լյարդ, տասնյակ, կղզյակ, արքայության, Դիմաքայան, իշխանության, արևելյան, տեսյակ, գրյալ:

2. ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

§ 11. Գրաբարի շեշտադրությունը և շեշտից կախված հնչյունափոխությունը հիմնականում նույնն են, ինչ արդի գրական հայերենում:

Շեշտը սովորաբար ընկնում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա, օրինակ՝ հրաման, հրամանի, հրամանաց, հրամայել:

Եթե բառի վերջին վանկի ձայնավորն է չգրվող ը, ապա շեշտն ընկնում է վերջընթեր վանկի վրա, օրինակ՝ աստ(ը)ղ, կարծ(ը)ր, ծմեճ(ը)ն, հարցո(ւ)մ:

Կցական բարդությամբ կազմված մի քանի բառերում շեշտվում է նախավերջին վանկի ձայնավորը, օրինակ՝ ո՞րպէս, նո՞յնպէս, ա՞յսպիսի, ո՞րչափ, ահա՛նապիկ և այլն:

§ 12. Երբ բառերը վերջից նոր վանկ են ստանում, շեշտն անցնում է այդ վանկի վրա. շեշտագրված վերջին վանկի *ի, է, ու, է* ձայնավորները, *ոյ, ես, ի* երկբարբառները և *եսյ* եռաբարբառը սովորաբար ենթարկվում են հնչյունափոխության:

Ի ձայնավորը փակ վանկում շեշտից գրկվելով՝ դառնում է *ը*, որը չի գրվում՝ սիրտ-սրտի, խիճն-խճնալ:

Բազմավանկ բառերի վերջին վանկի *ի-ն* սղվում է՝ վերին-վերնոյ, մարմին-մարմնոյ, դաշտային-դաշտայնոյ, Դալիթ-Դալթի:

Բազմավանկ բառերի վերջի *ի* ձայնավորը *ո-ից* առաջ դառնում է *ւ*, իսկ *ա-ից* առաջ՝ *ե*, օրինակ՝ տարի-տարւոյ-տարեալ:

Ե ձայնավորը սղվում է *ղ* և *ո* բաղաձայններից առաջ մի քանի բառերում՝ ասեղն-ասղան, թիթեղն-թիթղան, Կիրեղ-Կիրղի, լիսեռն-լիսռան, թիթեռն-թիթռան: *Դե* բառում այն փոխվում է *ի-ի՛* դե-դի-դիական,

Ու ձայնավորը փակ վանկում շեշտագրկվելով՝ փոխվում է *ը-ի*, որը չի գրվում՝ հուր-հրոյ, շուրթն-շրթան, կամ սղվում է՝ անասուն-անասնոյ, հեղուկ-հեղոյ:

Փակ վանկի *է* ձայնավորը փոխվում է *ի-ի*, իսկ որոշ դեպքերում՝ *ե-ի՛* սեր-սիրել, պարտէզ-պարտիզպան, էջ-իջանել, եղէգն-եղեգան, աղուէս-աղուեսու, Միքայէլ-Միքայելի:

Ոյ երկբարբառը դառնում է *ու՛* լոյս-լուսոյ, ողջոյն-ողջունել, կոյր-կուրանալ:

Իւ երկբարբառը *ա* ձայնավորից առաջ դառնում է *ե՛*՝ անկիւն-անկեան, մրջ-ջիւն-մրջեան: Բառավերջի *իւ-ը* դառնում է *ու՛*՝ անիւ-անուոյ, թիւ-թուոյ, պատիւ-պատուոյ:

Եա երկբարբառը դառնում է *ե՛*՝ մատեան-մատենագիր, սենեակ-սենեկապետ, պատեան-պատենագէն:

Բառավերջի *եսյ* եռաբարբառը դառնում է *է՛*՝ պաշտօնեայ-պաշտօնէի, հրեայ-հրէական:

Վարժություն 6. Բացատրել, թե ի՞նչ հնչյունափոխության են ենթարկվել ձայնավորներն ու երկբարբառները բերված բառերի փոփոխված ձևերում:

գարուն-գարնանային, ձուկն-ձկնորս, միրգ-մրգաբեր, տէր-տիրանալ, պատանի-պատանոյ, ամիս-ամսօրեայ, բարի-բարեաւ, վրէժ-վրիժառու, գետին-գետնափոր, թոյն-թունաւոր, յոյգ-յուզել, ատեան-ատենակալ, սիւն-սեան, հաշի-հաշուել, սիսեռն-սիսռան, պճեղն-պճղան, հին-հնութիւն, անասուն-անասնական, թռչուն-թռչնոյ, էգ-իգական, թողուլ-թողոյ, Կայէն-Կայենի, վէպ-վիպասան, շիւ-շուոյ, կեանք-կենաց, վարագոյր-վարագուրել, մեծութիւն-մեծութեան, մեհեան-մեհենական:

ՉԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. ԽՈՆԱՐՀՈՒՄ

ԴԱՍ ԵՐԿՐՈՐԴ

1. ԴԵՐԲԱՅՆԵՐ

§ 13. Գրաբարում դերբայները չորսն են՝ անորոշ, ապառնի, անցյալ և ենթակայական (կամ ներկա):

§ 14. Անորոշ դերբայը կազմվում է *-ալ, -ել, -իլ, -ուլ* վերջավորություններով՝ աղալ, գրել, խորհիլ, թողուլ: *Լ* հնչյունին նախորդող *ա, ե, ի, ու* ձայնավորները կոչվում են խոնարհիչներ կամ լծորդ ձայնավորներ: Ըստ խոնարհիչների գրաբարում բայն ունի չորս լծորդություն՝ Ա, Ե, Ի, ՈՒ¹:

Անորոշ դերբայում *ի* խոնարհիչը սովորաբար փոխվում է *ե-ի*՝ խորհիլ-խորհել, ուսանիլ-ուսանել, թռչիլ-թռչել, մարտնչիլ-մարտնչել: Այդ է պատճառը, որ գրաբարում բայերն անվանելիս սովորաբար հիմք են ընդունում ոչ թե անորոշ դերբայի ձևը, այլ սահմանական եղանակի ներկա ժամանակի եզակի առաջին դեմքը՝ աղամ, գրեմ, խորհիմ, թողում:

Ծանոթություն. Գրաբարի *Ի* և *ՈՒ* լծորդության բայերը ժամանակակից արևելահայ գրական լեզվում հանդես են գալիս որպես Ե լծորդության բայեր, օրինակ՝ նայիմ-նայել, գարթնուլ-գարթնել և այլն:

§ 15. Ըստ անորոշ դերբայի կազմության, բայերը լինում են պարզ և ածանցավոր: Գրաբարում բայական ածանցները բաժանվում են երեք խմբի՝ սուկական, բազմապատկական և պատճառական:

Սուկաձանցներն են. *ան*՝ գող-ան-ալ, հարց-ան-ել, ծն-ան-ել(իմ), *են*՝ յազ-են-ալ, *ն*՝ առ-ն-ուլ, *չ*՝ փախ-չ-ել(իմ), *նչ*՝ երկ-նչ-ել(իմ), *աչ*՝ ճան-աչ-ել, *անչ*՝ մեղ-անչ-ել: Բազմապատկական ածանցներն են. *ատ*՝ խանձատել, *ոտ*՝ խոցոտել, *տ*՝ կրճտել:

Պատճառական ածանցն է *ուցան*՝ հաս-ուցան-ել: Պատճառական բայերի մասին տե՛ս § 166:

¹ Գրաբարում մեկ բայ պահպանվել է *ո* խոնարհիչով՝ գոլ (=լինել, գոյություն ունենալ):

§ 16. Յուրաքանչյուր լծորդություն ունի թե՛ պարզ, թե՛ ածանցավոր բայեր:

§ 17. Ապառնի դերբայը կազմվում է *-ոց* վերջավորությամբ, որը դրվում է անորոշ դերբայի վրա, օրինակ՝ ստանալ-ստանալոց, շարժել-շարժելոց, թռչել-թռչելոց: Ու լծորդության բայերում *ու* խոնարհիչը սղվում է՝ հեղուլ-հեղլոց, ջեռնուլ-ջեռնլոց:

Ապառնի դերբայն իմաստով համապատասխանում է արդի հայերենի նույն դերբային՝ գրելոց=գրելու:

§ 18. Անցյալ դերբայը կազմվում է *-եալ* վերջավորությամբ և աշխարհաբար թարգմանվում է վաղակատար, հարակատար դերբայներով, անորոշ դերբայի գործիական հոլովով կամ դիմավոր բայով, օրինակ՝ գտեալ=գտել, գտած, գտնելով, գտավ:

§ 19. Ենթակայական դերբայը կազմվում է *-ող (ող)* վերջավորությամբ և իմաստով համապատասխանում է արդի հայերենի նույն դերբային՝ ծնանող//ծնող=ծնող: Ենթակայական դերբայի իմաստ կարող են արտահայտել նաև.

ա) *-իչ* ածանցով բայանուն ածականներն ու գոյականները՝ այրիչ=այրող, անիծիչ=անիծող, տուիչ=տվող և այլն:

բ) Ներգործական սեռի բայերի անորոշ դերբայից *-ի* (հոգնակի՝ *իք*) մասնիկով կազմված բայանուն ածականներն ու գոյականները՝ ծնանելի=ծնող, կրելի=կրող, ուտելի=ուտող:

գ) Երկրորդական նախադասությունները *որ* հարաբերականով և դիմավոր բայով: Նման կիրառություններում բայի վրա սովորաբար դրվում է *ն* հոդը, օրինակ՝ որ սիրե(ն) զքեզ=նա, որ սիրում է քեզ, կամ՝ քեզ սիրողը. որ ունեին=նրանք, ովքեր ունեին, կամ՝ ունեցողները:

§ 20. Դերբայները կրավորականի իմաստ արտահայտելու համար հատուկ ձև չունեն: Ներգործական սեռի բայերը նույն դերբայական ձևով կարող են արտահայտել նաև կրավորական նշանակություն, բացի ենթակայական դերբայից, որն արտահայտում է միայն ներգործական և չեզոք սեռի իմաստներ, օրինակ՝ տեսանել=տեսնել կամ տեսնվել. տեսանելոց=տեսնելու կամ տեսնվելու. տեսեալ=տեսել կամ տեսնվել, տեսած կամ տեսնված. տեսանող//տեսող=տեսնող:

2. ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԲԱՅԵՐԻ ՄԵՋ

§ 21. Գրաբարում կան բայեր, որոնք զուգահեռաբար հանդես են գալիս երկու կամ ավելի ձևերով: Այդ ձևերում փոխանցումը լինում է հետևյալ կերպ. ա) փոխվում են խոնարհիչները, օրինակ՝ բնակեմ//բնակիմ, մոլորիմ//մոլորեմ, կիզում//կիզեմ. բ) ավելանում են ածանցներ կամ փոխվում են եղած ածանցները, որոնց հետ միաժամանակ կարող են փոխվել նաև խոնարհիչները, օրինակ՝ ըղձամ//ըղձանամ, թաքչիմ//թաքնում: Բայերի փոխանցված ձևերից մեկը սովորաբար հին է և տարածված, իսկ մյուսը կամ մյուսները վկայված են համեմատաբար ուշ շրջանից և սակավ գործածական են: Նկատելի են հետևյալ հիմնական փոխանցումները.

1. *Եմ, իմ*. դադարեմ//դադարիմ, ճեպեմ//ճեպիմ, յաճախեմ//յաճախիմ, պատկառեմ//պատկառիմ, փայլեմ//փայլիմ և այլն:

2. *Իմ, եմ*. թառալիմ//թառալեմ, համարիմ//համարեմ, ճեմիմ//ճեմեմ, մոլորիմ//մոլորեմ և այլն:

3. *Ում, եմ*. արգելում//արգելեմ, զենում//զենեմ, յաելում//յաելեմ և այլն:

4. *Եմ, եամ, ամ, իմ*. ատեմ//ատեամ, խնայեմ//խնայեամ, ախորժեմ//ախորժամ, բովեմ//բովամ, գորովամ//գորովիմ և այլն:

5. *Ամ, անամ*. բաղձամ//բաղձանամ, երթամ//երթանամ, ծուլամ//ծուլանամ և այլն:

6. *Եմ, անեմ*. գատեմ//գատանեմ, մերկեմ//մերկանեմ, տարածեմ//տարածանեմ և այլն:

7. *Եմ, ում, անեմ*. դիզեմ//դիզում/դիզանեմ (այլև՝ դիզանամ), կիզեմ//կիզում/կիզանեմ, հերձեմ//հերձում/հերձանեմ և այլն:

8. *Ում, անեմ, ում, անիմ*. գերծում//գերծանեմ, հեղձում//հեղձանեմ/հեղձանիմ, հեղում//հեղանիմ և այլն:

9. *Նում, անեմ, նում, անիմ*. հերձնում//հերձանեմ, հեծնում//հեծանիմ, ջեռնում//ջեռանիմ և այլն:

10. *Նում, չիմ*. զարթնում//զարթչիմ, ոստնում//ոստչիմ, ուռնում//ուռչիմ և այլն:

11. *Չիմ, նում*. թոչիմ//թոռնում, սառչիմ//սառնում, փախչիմ//փախնում և այլն:

3. ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

§ 22. Գրաբարում բայն ունի երեք եղանակ՝ սահմանական, ստորադասական և հրամայական: Ստորադասականը համապատասխանում է արդի հայերենի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակներին:

§ 23. Բայի ժամանակներն ըստ կազմության լինում են պարզ և բաղադրյալ: Պարզ ժամանակները կազմվում են բայախիմքից՝ համապատասխան դիմային վերջավորություններով: Բաղադրյալ ժամանակները կազմվում են անցյալ ու ապառնի դերբայներով և *եմ, լինիմ* օժանդակ բայերով (տե՛ս § 175):

§ 24. Սահմանական եղանակի պարզ ժամանակներն են՝ ներկա, անցյալ անկատար, անցյալ կատարյալ, ստորադասական եղանակինը՝ առաջին ապառնի, երկրորդ ապառնի, հրամայական եղանակինը՝ արգելական հրամայական, բուն հրամայական (կամ հրամ. եղանակի ներկա), հորդորական հրամայական (կամ հրամ. եղանակի ապառնի):

§ 25. Բայի պարզ ժամանակները կազմվում են երկու հիմքից՝ ներկայի և անցյալ կատարյալի: Ներկայի հիմքից կազմվում են ներկան, անցյալ անկատարը, առաջին ապառնին, արգելական հրամայականը, իսկ անցյալի հիմքից՝ անցյալ կատարյալը, երկրորդ ապառնին, բուն հրամայականը, հորդորական հրամայականը:

4. ՆԵՐԿԱՅԻ ՀԻՄՔԸ ԵՎ ՆՐԱՆԻՑ ԿԱԶՄՎՈՂ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

§ 26. Բայի ներկայի հիմքը որոշելու համար պետք է նրա անորոշ դերբայից անջատել դերբայական վերջավորությունը: Այդ նշանակում է, որ ներկայի հիմքի կազմության մեջ մտնում են նաև բայածանցները: Այսպես, օրինակ՝ *մնալ, իմանալ, գործել, անցանել, բազմել(իմ), մարտնչել(իմ), արգելուլ, ընթեռնուլ* բայերի ներկայի հիմքերն են՝ *մն, իման, գործ, անցան, բազմ, մարտնչ, արգել, ընթեռն*:

§ 27. Ներկայի հիմքից կազմվող ժամանակներով բայը խոնարհելու համար նրա ներկայի հիմքի վրա պետք է ավելացնել դիմային վերջավորությունները՝ համապատասխան խոնարհիչով:

Ներկայի հիմքից կազմվող ժամանակների դիմային վերջավորությունները խոնարհիչների հետ միասին տրվում են հետևյալ տախտակում.

5. ԿՐԱՎՈՐԱԿԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԻ
ՀԻՄՔԻՑ ԿԱԶՄՎՈՂ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

§ 28. Գրաբարում կրավորական սեռի առանձին բայեր չկան:

Ներկայի հիմքից կազմվող ժամանակներում կրավորական իմաստն արտահայտվում է ներգործական սեռի բայերի խոնարհման ձևերում և լծորդի փոփոխմամբ կամ նույն բայաձևերով:

Երբ Ե լծորդության ներգործական սեռի բայերը գործածվում են կրավորականի իմաստով, ներկա ժամանակում, առաջին ապառնիում (այս ժամանակում նաև Ա լծորդության ներգործական սեռի բայերը) և արգելական հրամայականում խոնարհման ձևերի վերջնավանկի *ե* և *է* ձայնավորները փոխվում են *ի-ի*, օրինակ՝ սիրեմ=սիրում են, սիրիմ=սիրվում են. սիրէ=սիրում է, սիրի=սիրվում է. սիրիցեմ =սիրեմ, կսիրեմ, պիտի սիրեմ, սիրիցիմ=սիրվեմ, կսիրվեմ, պիտի սիրվեմ. աղայցե=աղա, կաղա, պիտի աղա, աղայցի=աղացվի, կաղացվի, պիտի աղացվի. մի՛ սիրեր=մի՛ սիրիր, մի՛ սիրիր=մի՛ սիրվիր և այլն:

Նշված ժամանակներում Ա, Ի, ՈՒ լծորդության, իսկ անցյալ անկատարում բոլոր լծորդությունների ներգործական սեռի բայերը խոնարհման նույն ձևերով կարող են արտահայտել թե՛ ներգործական, թե՛ կրավորական իմաստ: Այդ կարգի բայերը, որոնց ներգործական և կրավորական նշանակությունները որոշվում են նախադասության արտահայտած իմաստով, կոչվում են հասարակ (=ընդհանուր) բայեր, օրինակ՝ դատի գնա=դատում է նրան. դատի ի մմանէ=դատվում է նրանից (նրա կողմից). այսպես էլ՝ մոռանամ=մոռանում են կամ մոռացվում են. լնու=լցնում է կամ լցվում է. ծնաներ=ծնում էր կամ ծնվում էր և այլն:

ԴԱՍ ԵՐՐՈՐԳ

ՆԵՐԿԱ

§ 29. Խոնարհման պատկերն է՝

Եզակի

1-ին դ.	աղամ	գրեմ	նայիմ	թողում
2-րդ ,,	աղաս	գրես	նայիս	թողուս
3-րդ ,,	աղայ	գրէ	նայի	թողու

Նոգնակի

1-ին դ.	աղամբ	գրեմբ	նայիմբ	թողումբ
2-րդ ,,	աղայք	գրէք	նայիք	թողուք
3-րդ ,,	աղան	գրեն	նային	թողուն

§ 30. Ներկա ժամանակն իմաստով հիմնականում համապատասխանում է արդի հայերենի սահմանական եղանակի ներկայից՝ գրեմ=գրում են:

Սահմանական եղանակի ներկան համապատասխանում է նաև արդի հայերենի ըղձական և պայմանական եղանակների ապառնուն՝ գրեմ=գրեմ, կգրեմ: *Օրինակ՝* Յորժամ *արգելուս* և *փակես* զամենեսեան ի հեռաւոր օտարութեան, *կատարին* խորհուրդք կամաց քոց (Եղիշէ, 1-ին, էջ 9)՝ Երբ բոլորին *արգելես* ու *պահես* հեռավոր օտարության մեջ, *կկատարվեն* քո կամքն ու խորհուրդը:

Վարժություն 7. Ներկա ժամանակով խոնարհել հետևյալ բայերը՝

ա) խաղալ, գողանալ, մնալ, իմանալ. բ) գործել, գտանել, ասել, իջանել. գ) բազմել(իմ), կորնչել(իմ), նստել(իմ), ուսանել(իմ). դ) կիզուլ, ջեռնուլ, հեղուլ, ընթեռնուլ:

Կ ա ն ն

Եզակի հայցականը ձևով մնան է եզակի ուղղականին: Հոգնակի ուղղականը կազմվում է եզակի ուղղականից՝ ավելանալով *ք* վերջավորությունը, օրինակ՝ տուն-տունք (=տներ), այգի-այգիք: Հոգնակի հայցականը կազմվում է հոգնակի ուղղականից՝ *ք*-ն փոխարինելով *ս*-ով՝ տունք-տունս (=տներ), այգիք-այգիս:

Որոշյալ առման դեպքում եզակի և հոգնակի հայցականը սկզբից ստանում է *զ* նախդիրը՝ զԱրշակ=Արշակին, զգետս=գետերը:

Գրաբարում որոշյալ *ք* հոդ չկա, այլ կա միայն *ն*, որն ունի արդի հայերենի *ն* կամ *ք* հոդի նշանակությունը:

Վարժություն 8. Թարգմանել, որոշել ներկա ժամանակով դրված բայերի ծորրությունը, դեմքն ու թիվը:

Իբրև տեսանէ զգայլն զի գայ, թողու զոչխարսն և փախչի: Ջուրք զհող երկրի ողողանեն և ապականեն: Սուտ խօսիս դու: Շիջանին լապտերք մեր: Յայնժամ խաւարի արեգակն: Ոչ պատրիմք իբրև զողայս, և ոչ մոլորիմք

իբրև զանտեղեակս, և ոչ խաբիմք իբրև զագէտս: Այժմ հաւատա՞յք: Առաքեն առ ձեզ մարգարէս և իմաստունս և դպիրս: Ոչ գիտեմք յո երթաս: Իբրև հաւատայ՝ սիրէ. և իբրև սիրէ՝ յուսայ. և իբրև յուսայ՝ արդարանայ: Չաստուածս անարգէք և զկրակ սպանանէք և զջուրս պղծէք: Ծնանի գորդի իւր զԱմասիա: Ոչ նորոգի, զի ոչ հնանայ. ոչ մանկանայ, զի ոչ ծերանայ: Ահաւասիկ տեսանեմք զի արեգակն գնայ. լուսին և աստեղք ընթանան. ամպք սլացեալք տարածանին: Տիկքն պատառին և զինին հեղու:

իբրև - երբ, ինչպես
զի - որ, որովհետև

յայնժամ - այն ժամանակ
ոչ պատրիմք - չենք խաբվի

Վարժություն 9. Խմբավորել 8-րդ վարժության պարզ և ածանցավոր բայերը և որոշել դրանց ներկայի հիմքը:

Վարժություն 10. Կազմել 7-րդ վարժության բայերի ապառնի դերբայը:

Օրինակ՝ գործել, ապառնի դերբայ՝ գործելոց:

Կ ա ն ն

Գրաբարում հատկացուցիչը սովորաբար դրվում է հատկացյալից հետո՝ տունք մեր=մեր տները, զիրամանս քազատրի=քազավորի հրամանները:

Հատկացուցչի և հատկացյալի կապակցության մեջ հոդը դրվում է հատկացուցչի վրա, իսկ եթե հատկացուցիչը հատուկ անուն է՝ հատկացյալի վրա, օրինակ՝ պարիսպ քաղաքին, վաշտն Գնելոյ:

Վարժություն 11. Թարգմանել գրաբար:

Հրամայում է շինել քաղաքներ և ավաններ: Սիրում ենք մեր բարեկաններին: Հայրը խրատում է որդուն: Երեխաները խաղում են և ուրախանում: Ինչու՞ (ընդէ՞ր) եք դատում անմեղներին: Մարդը ծնվում է և մեռնում: Սիրամարգի փետուրները գեղեցիկ են: Աչքեր (աչս) ունես, բայց չես տեսնում (ոչ տեսանես), ականջներ ունես, բայց չես լսում, լեզու ունես, բայց չես խոսում: Ընթերցում են քազավորի հրովարտակը: Գետերը ոռոգում են դաշտերը:

դատել - դատել(իմ)
ծնվել-ծնանել(իմ)
մեռնել-մեռանել(իմ)

ունենալ-ունել(իմ)
խոսել-խօսել(իմ)
ընթերցել-ընթեռնուլ

ԵՐԳ ԵՐԳՈՑ

Ահաւաղիկ կաս գեղեցիկ, մերձաւոր իմ, ահաւաղիկ կաս գեղեցիկ, աչք քո աղաւնիք, վարսք քո իբրև գերամակս այծից¹, որք երևեցան ի լեռնէն Գաղաադու²: Ատամունք քո իբրև գերամակս կտրելոց³, որք ելանեն ի լուալեաց⁴: Իբրև զթել որդան են շրթունք քո, և խօսք քո գեղեցիկք. իբրև զկեղև նռան են այտք քո, իբրև զաշտարակն Դաթի պարանոց քո: Երկու ստիմք քո իբրև զերկուս ուլս երկուորիս այծեման⁵, որք արածին ի մէջ շուշանաց: Ամենին գեղեցիկ ես, մերձաւոր իմ, և արատ ինչ ոչ գոյ ի քեզ⁶: Մրտակաթ արարեր զմեզ⁷ միով ակամբ քով⁸ և միով քառամանեկաւ պարանոցի քո: Մեղր կաթեցուցանեն շրթունք քո, մեղր և կաթն ի ներքոյ լեզուի քո, և հոտ հանդերձից քոց իբրև զհոտ կնդրկի:

(Երգ երգոց. Դ, 1-11)

- | | |
|--|--|
| ¹ իբրև գերամակս այծից - այծերի հոտի նման (են) | այծյամի համածին (երկվորյակ) երկու ձագերի նման (են) |
| ² ի լեռնէն Գաղաադու - Գաղաաղ լեռից | ⁶ արատ ինչ ոչ գոյ ի քեզ - որևէ արատ չկա քո մեջ |
| ³ իբրև գերամակս կտրելոց - խուզած ոչխարների հոտի նման (են) | ⁷ սրտակաթ արարեր զմեզ - ջերմ սիրով համակել ես մեզ |
| ⁴ ի լուալեաց - լողարանից (լվացարանից) | ⁸ միով ակամբ քով - քո մի նայվածքով |
| ⁵ իբրև գերկուս ուլս երկուորիս այծեման- | |

ԴԱՍ ՉՈՐՐՈՐԴ

ԱՆՅՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ

§ 31. Խոնարհման պատկերն է՝

		Եզակի		
1-ին դ.	աղայի	գրէի	նայէի	թողուի
2-րդ ,,	աղայիք	գրէիք	նայէիք	թողուիք
3-րդ ,,	աղայր	գրէր	նայէր	թողոյր
		Նոզնակի		
1-ին դ.	աղայաթ	գրէաթ	նայէաթ	թողուաթ
2-րդ ,,	աղայիք	գրէիք	նայէիք	թողուիք
3-րդ ,,	աղային	գրէին	նայէին	թողուին

Ծանոթություն. Ե լծորդության բայերն անցյալ անկատարի եզակի 3-րդ դեմքում երբեմն ունենում են *իւր* վերջավորությունը կրավորականի իմաստով՝ կոչիւր=կոչվում էր, գտանիւր=գտնվում էր:

§ 32. Անցյալ անկատար ժամանակն իմաստով հիմնականում համապատասխանում է արդի հայերենի սահմանական եղանակի անցյալ անկատարին՝ աղայի=աղում էի: Սահմանական եղանակի անցյալ անկատարը հաճախ գործածվում է նաև .

ա) Պատմական ժամանակի իմաստով, որն աշխարհաբար թարգմանվում է անցյալ կատարյալ կամ ներկա ժամանակներով՝ *հարցանէր*=հարցրեց կամ հարցնում է: *Օրինակներ.* Իսկ իբրև առաօտն ծագեաց, *հասանէր* վաշտն Գնելոյ ի բանակն արքունի (Բուզ., 4-րդ, ԺԵ)= Իսկ երբ լույսը բացվեց, Գնելի խումբը *հասավ* արքունի բանակը: Ապա *ժողովէր* (=հավաքում է) զօրավարն Հայոց Վասակ զամենայն զգօրսն Հայոց (Բուզ., 4-րդ, Խ):

բ) Ըղծական և պայմանական եղանակների անցյալ ժամանակով՝ կարէր=կարողանար, կկարողանար: *Օրինակներ.* Նոյնպէս և վիշապն ոչ մի անգամ օձածն *երևէր*, և միւս անգամ մարդակերպ (Եզնիկ, 1-ին, ԻԵ)=Այսպէս էլ վիշապը մի անգամ օձածն *չէր երևա*, մի այլ անգամ՝ մարդակերպ: Բայց թէ *գիտէի...* մեծապէս մեծարանօք *արձակէի* զնա խաղաղութեամբ յիւր աշխարհն (Բուզ., 4-րդ, ԾԳ)=Բայց եթէ *գիտենայի...* շատ մեծարանքներով նրան խաղաղութեամբ *կարձակէի* իր աշխարհը:

Վարժություն 12. Անցյալ անկատար ժամանակով խոնարհել հետևյալ բայերը՝

ա) գթալ, ստանալ, ջանալ, մերձենալ. բ) բերել, հատանել, երգել, հասանել. գ) հայել (իմ), մեռանել (իմ), խորհել (իմ), սնանել (իմ). դ) արգելուլ, լնուլ, հեծնուլ, ոստնուլ:

Կ ա ն ն

Գրաբարում եզակի սեռական և տրական հոլովները ունենում են *ի, ու, ոյ, ալ, ան, ին, եր, եղ*, իսկ հոգնակի սեռական և տրական հոլովները՝ *ից, ուց, ոց, աց, անց, երց, եղց* վերջավորությունները, օրինակ. եզակի սեռ.-տր.՝ ձայնի, զանձու, ծառոյ, տիտանայ, ձկան, հարսիմ, դստեր, աստեղ. հոգնակի սեռ.-տր.՝ ձայնից, զանձուց, ծառոց, տիտանաց, ձկանց, դստերց, աստեղց:

Վարժություն 13. Թարգմանել, որոշել անցյալ անկատար ժամանակով նրված բայերի դեմքն ու թիվը:

Մանուկն աճել և զօրանայր: Քանզի վատասիրտքն լքանէին, քաջքն խի-
զախէին և նահատակքն գոչէին: Գնայր գայր և ուտէր: Վարէիք բազում և ժո-
ղովէիք սակաւ: Իսկ նա բազում անգամ կշտամբէր և յանդիմանէր զթագա-
տրն Արշակ: Եթէ չէր չարագործ այրն այն, ապա ոչ մատնէաք զնա քեզ:
Վասն ճշմարտութեանն մինչև ի մահ մարտնչէր: Կամէին սպանանել զԱր-
տաշէս արքայ: Իբրև արևն ջեռնոյր, հալէր: Ազանէր կօշիկս ոսկեգօծս: Բնա-
կէի իբրև զթագատր ի մէջ զօրականաց: Լնոյր զերկիրն Աղձնեաց վաներով:
Շանթեր գալարէր իբրև զօճ թունատր: Քանզի կոչէի, և ոչ լսէիք:

վասն - համար

վաներով - վանքերով

Վարժություն 14. 13-րդ վարժության անցյալ անկատարով գործածված
բայերը փոխարինել ներկա ժամանակով՝ պահպանելով դեմքն ու թիվը:

Կ ա ն ն

Ի և առ նախդիրները հաճախ գործածվում են հայցական հոլովի հետ,
երբ վերջինս ցույց է տալիս այն տեղը կամ առարկան, դեպի ուր, դեպի ո-
րը կամ որի մոտ ուղղվում է գործողությունը (ուղևորման հայցական), օ-
րինակ՝ Փութայր հասանել ի սահմանս բնակութեանն Հայկայ (Խոր., 1-
ին, ԺԱ) = Շտապում էր հասնել Հայկի բնակության սահմանները: Կոչես
զիս առ արքայ (Ա Թագ., ԻԶ, 14) = Կանչում ես ինձ արքայի մոտ:

Վարժություն 15. Թարգմանել գրաբար:

Վարում էինք դաշտերը և տնկում այգիներ: Քաղում էի ծառերի (ծառոց)
պտուղները: Վերցնում էր քնարը և նվագում: Կամենում էին սպանել նրան
(զնա): Ասում էինք, և չէիք լսում (ոչ լսէիք), կանչում էինք, և չէիք գալիս: Թող-
նում էին ավարը և փախչում: Ինքը (ինքն) չէր շարժվում և չէր փոփոխվում:
Ինչ որ (գոր ինչ) Որմիզդն էր ստեղծում, բարի էր և լավ: Յանում էինք, հնձում
և լցնում շտեմարանները: Յուղով օծում էին հիվանդներին: Գալիս հասնում
էին Հայոց սահմանները:

վերցնել-առնուլ
կամենալ-կամել(իմ)
սպանել-սպանանել
կանչել-կոչել
թողնել-թողուլ

փախչել-փախչել(իմ)
ստեղծել-առնել
լցնել-լնուլ
օծել-օծանել
հասնել-հասանել

Եւ եղև ի վաղիս անդր ետ հրաման¹ Շապուի արքայ, ամել գառաջեաւ իւր
զՎասակ Մամիկոնեան զգօրավարն սպարապետն Հայոց Մեծաց. սկսաւ
պատուիասել զնա, քանզի էր Վասակ անձամբ² փոքրիկ, ասէ ցնա արքայն
Պարսից Շապուի. «Աղուես, դու՞ էիր խանգարիչ՝ որ այսչափ աշխատ արա-
րէր³ զմեզ. դու՞ ես այն՝ որ կոտորեցեր զԱրիս այսչափ ամս, և զի՞ գործես⁴
զմահ աղուեսու սպանից զքեզ»⁵: Իսկ Վասակ տուեալ պատասխանի, ասէ.
«Այժմ քո՞ տեսեալ զիս անձամբս փոքրիկ, ոչ առէր զչափ մեծութեան իմոյ. զի
ցայժմ ես քեզ առեծ էի, և արդ աղուես: Բայց մինչ ես Վասակն էի, ես սկայ
էի, մի ոտնս⁷ ի միոյ լերին կայր⁸, և միս ոտնս իմ ի միոյ լերին կայր. յորժամ
յաջ ոտնս յենուի, զաջ լեռոն ընդ գետին տանէի. յորժամ ի ձախ ոտնն յենուի,
զձախ լեռոն ընդ գետին տանէի»: Ապա հարցանէր թագատրն Պարսից Շա-
պուի և ասէ. «Աղէ՛ տուր ինձ զիտել⁹, ո՞վ են լերինքն այնոքիկ՝ զորս դուն ընդ
ունջ տանէիր»: Եւ ասէ Վասակ. «Լերինքն երկուք, մի դու էիր, և մի թագատրն
Յունաց...»:

(Փավստոս Բուզանդ, 4-րդ . ԾԴ)

¹ և եղև ի վաղիս անդր ետ հրաման իսկ մահով սպանեմ քեզ
² հաջորդ օրը հրաման տվեց (հրամայեց)
³ այստեղ՝ մարմնով
⁴ աշխատ արարեր չարչարեցիր,
⁵ նեղություն տվեցիր
⁶ Ենթական անցյալ դերբայի մոտ դրված
է սեռական հոլովով՝ քո տեսեալ զիս
⁷ դու ինձ տեսնելով
⁸ ս-ն ստացական հոլ է
⁹ ի միոյ լերին կայր մի լեռան վրա էր
զիտել տալ զիտեճալ տալ, իմացնել

ՎԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՌԱՋԻՆ ԱՊԱՌՆԻ

§ 33. Խոնարհման պատկերն է՝

Եզակի

1-ին դ.	աղայցեմ	գրիցեմ	նայիցիմ	թողուցում
2-րդ ,,	աղայցես	գրիցես	նայիցիս	թողուցոս
3-րդ ,,	աղայցէ	գրիցէ	նայիցի	թողուցու

Նոգնակի

1-ին դ.	աղայցեմք	գրիցեմք	նայիցիմք	թողուցումք
2-րդ ,,	աղայցեք	գրիցեք	նայիցիք	թողուցուք
3-րդ ,,	աղայցեն	գրիցեն	նայիցին	թողուցուն

§ 34. Ստորադասական եղանակի 1-ին ապառնին իմաստով համապատասխանում է արդի հայերենի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնուն՝ նայիցիմ=նայեմ, կնայեմ, պիտի նայեմ:

Վարժություն 16. Առաջին ապառնի ժամանակով խոնարհել հետևյալ բայերը՝

ա) ողբալ, զարմանալ, բանալ, յագենալ. բ) կաքաւել, ապանանել, հանել, մտանել. գ) կամել(իմ), սասանել(իմ), ծիծաղել(իմ), մարտնչել(իմ). դ) յաւելուլ, երդնուլ, զգենուլ, զքօսնուլ:

Կ ա ն ն

Գրաբարում բացառական հոլովը սկզբից միշտ ունենում է մի նախդիր, սովորաբար՝ *ի* նախդիրը, որը ձայնավորով սկսվող բառից առաջ փոխվում է *յ*-ի և գրվում բառին կից:

Եզակի բացառականը ունենում է *է, ոյ, այ*, իսկ հոգնակի բացառականը՝ *ից, ոց, ուց, աց, անց, երց, եղց* վերջավորությունները, օրինակ՝ *ի ձայնէ=ձայնից, ի ծառոյ, ի տիտանայ. ի ձայնից=ձայներից, ի ծառոց, ի գանձուց, ի տիտանաց, ի ձկանց, ի դստերց, յաստեղց*:

Վարժություն 17. Թարգմանել, որոշել 1-ին ապառնի ժամանակով դրված բայերի դեմքն ու թիվը:

Չիա՞րդ պաշտիցեմք զարեգակն: Եթէ հաւաստեաւ խնդրիցեմք, գտանիցեմք: Մեղր յորժամ գտանիցես, որդեակ, չափով կերիջիր, գուցէ յագիցիս և փսխիցես: Ընդէ՞ր ոչ խորհիցիմք և ասիցեմք: Յորժամ կամիցիս՝ վառիցես և յորժամ կամիցիս՝ խափուցանիցես: Համրն և կոյրն խօսիցի և տեսանիցէ: Յորժամ դուստր զմայր անարգիցէ, և նու զկեսուր իւր: Արդ առնուցում զհաց իմ և զգինի իմ: Քանի փողահարք ի մէջ զնդին ձայնիցեն: Չիա՞րդ թուի ձեզ. եթէ լինիցի մարդոյ հարետր ոչխար և մոլորիցի մի ի նոցանէ, ո՞չ թողուցու զինասուն և զինն ոչխարն ի լերինս, և երթիցէ խնդրիցէ զմոլորեալն:

զիա՞րդ-ինչպե՞ս, ինչու՞
n^o-n^oվ

ի նոցանէ-նրանցից
ի լերինս-լեռների վրա

Վարժություն 18. Թարգմանել գրաբար:

Երբ (յորժամ) գայլերը տեսնեն հովիվներին, կթողնեն ոչխարները և կփախչեն: Գարունը կգա և այգիները կծաղկեն: Ինչ (զինչ) ցանես, այն կհնձես: Դու չես կարող ստել: Մի՞թե միշտ պիտի լռեմ և անասմ: Երբ գա և տեսնի այդ, կսկսի ծեծել իր (իւր) ծառաներին: Ի՞նչ պիտի ուտեք կամ ի՞նչ պիտի ըմպեք: Քաջությամբ կկոպեն, կհաղթեն թշնամիներին և երբ մեռնեն, անուն և հիշատակ կթողնեն: Մեկին (զմին) կատի և մյուսին կսիրի, կամ մեկին կմեծարի և մյուսին կարհամարի: Չեն հանդգնի մերձենալ մեր ասանաներին:

կարողանալ - կարել
տեսնել - տեսանել

սկսել - սկսանել(իմ)
ծեծել - հարկանել

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ե՛րբ¹ առ մրջինն և նախանձեա՛ց² ընդ ճանապարհս նորա և լե՛ր³ իմաստնագոյն և ս քան զնա: Չի նորա ոչ գոյ⁴ հողագործութիւն և ոչ հարկադիր. և ոչ ընդ տերամբք է⁵, և պատրաստէ ամարանի զկերակուր, և բազում համբարս դնէ ի հունձս: Կամ ե՛րբ առ մեղուն և ուսի՛ր զիարդ գործօն է, և գործ նորա որպէս պարկեշտութեամբ գործի. գորոյ զվաստակն թագաորք և տնանկք ի բժշկութիւն մատուցանեն: Յանկալի է ամենեցուն և մեծարոյ⁶. զի թէպէտ և տկար է գորութեամբ, պատուեաց զիմաստութիւն և յարգեցաւ: Մինչև յե՞րբ յորսայտեալ կաս⁷, ո՛վ վատ, կամ ե՞րբ ի քնոյ զարթիցես: Փոքր մի ննջիցես, փոքր մի նստիցիս, փոքր մի նիրհիցես, փոքր մի հանգուցանիցես զձեռն քո ի վերայ լանջաց քոց⁸, ապա այնուհետև հասանիցէ ի վերայ քո իբրև զչար ուղևոր տնանկութիւն և կարօտութիւն իբրև զժիր սուրհանդակ: Ապա եթէ անդանդաղ լինիցիս, հասանիցէ իբրև զաղբեր ամառն քո, և կարօտութիւն իբրև այր մի չար ինքնահալած լինիցի:

(Առակք, Զ. 6-11)

¹ ե՛րբ - գնա՛

է տերերին, ոչ էլ տեր ունի

² նախանձեա՛ց - նախանձի՛ր

⁶ մեծարոյ - հարգի, հարգված, զնահատելի

³ լե՛ր - եղի՛ր, դարձի՛ր

⁷ յորսայտեալ կաս - մեջքի վրա

⁴ նորա ոչ գոյ - նա չունի

պառկած մնաս

⁵ և ոչ ընդ տերամբք է - ոչ էլ ենթակա

⁸ ի վերայ լանջաց քոց - քո կրծքի վրա

ԴԱՍ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՐԳԵԼԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

§ 35. Խոնարհման պատկերն է՝

Եզակի

2-րդ դ. մի՛ աղար մի՛ գրեր մի՛ նայիր մի՛ թողուր

Նոզնակի

2-րդ դ. մի՛ աղայք մի՛ գրէք մի՛ նայիք մի՛ թողուք

§ 36. Արգելական հրամայականն իմաստով համապատասխանում է արդի հայերենի նույն հրամայականին՝ մի՛ թողուր=մի՛ թողնիր, մի՛ թողուք=մի՛ թողնեք:

Վարժություն 19. *Արգելական հրամայականով խոնարհել հետևյալ բայերը՝*

ա) լալ, լուանալ, ջանալ, սլանալ. բ) արշաւել, զարկանել, հերկել, ցուցանել. գ) ողորմել(իմ), անկանել(իմ), շրջել(իմ), փախչել(իմ). դ) կատու, ընկենուլ, հեղձնուլ, ոստնուլ:

Կ ա ն ն

Գրաբարում եզակի գործիական հոլովը ունենում է *իւ, ով, ու, աւ, եաւ, ամբ, երբ, եղբ* վերջավորությունները, իսկ հոգնակի գործիականում այդ նույն վերջավորություններին ավելանում է *ք՝ իւք, ովք, ուք, աւք (օք), եաւք (եօք), ամբք, երբք, եղբք*, օրինակ՝ ձայնիւ=ձայնով, ծառով, գանձու, տիտանաւ, կղզեաւ, ձկամբ, դստերք, աստեղք. ձայնիւք=ձայներով, ծառովք, գանձուք, տիտանաւք (օք), կղզեաւք (եօք), ձկամբք, դստերքք, աստեղքք:

Վարժություն 20. *Թարգմանել, որոշել արգելական հրամայականով դրրված բայերի լծորդությունը և թիվը՝ եզակին դարձնելով հոգնակի, իսկ հոգնակին՝ եզակի:*

Օրինակ՝ մի՛ գողանար-մի՛ գողանայք, մի՛ քննէք-մի՛ քննէր:

Մի՛ արհամարհեր զծերութիւն մօր քո: Ամեն ին ի մահուանէ մի՛ երկնչիք: Մի՛ սպանաներ, մի՛ գողանար, մի՛ սուտ վկայեր: Մի՛ մոռանայք... զառատաձեռն պարզևսն, որ շնորհի ձեզ յարքունուստ: Եթէ աղաչիցէ զքեզ թշնամին, և ի ձայն բարձր աղերսիցէ, մի՛ հաւատար նմա: Մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց: Ջբարեկամ քո և զբարեկամ հայրենի մի՛ թողուր: Դուք մի՛ քննէք զգործսն իմ: Սակայն և դու մի՛ անիծաներ այլոց: Մի՛ կարծեր, զի ոչ ստէ մեզ այրն այն: Ի պիղծս մի՛ մերձենայք: Ջերդումն սուտ մի՛ սիրէք:

ի ձայն - ձայնով

նմա - նրան

Կ ա ն ն

Ընդ նախդիրը, դրվելով հայցականի և եզակի տրականի վրա, արտահայտում է հետ իմաստը, օրինակ՝ Խօսի ընդ որմս (Եզնիկ, 2-րդ, ԻԱ), ընդ որմս=պատերի հետ: Մի՛ ուտիցես զհաց քո ընդ նմա (Առակ, ԻԳ, 8), ընդ նմա=նրա հետ:

Մի շարք բայերի մոտ (նախանձել, զայրանալ, նայել(իմ) և այլն) ընդ նախդիրը հայցական հոլովի հետ արտահայտում է տրական հոլովի իմաստ, օրինակ՝ Նայէր ընդ պէսպէս ամբոխ գուսանացն (Բուզ, 5-րդ, ԼԲ) =Նայում էր գուսանների խայտաբղետ խմբին:

Վարժություն 21. *Թարգմանել գրաբար:*

Մի՛ մոռանա իմ պատվերները: Եթե նա սուտ խոսի, մի՛ զարմանաք: Մի՛ անպատվիր և մի՛ անարգիր ծերերին: Եթե քո եղբայրը կամենա գալ քեզ հետ (ընդ քեզ), մի՛ արգելիր: Երբ առնէք քաղաքը, գերիներին մի՛ սպանէք: Մի՛ վախենա, որովհետև քեզ հետ եմ: Մի՛ խոսիր մեզ հետ: Մի՛ ուտիր և մի՛ ըմպիր հարբեցողների հետ:

արգելել - արգելուլ
առնել - առնուլ

վախենալ - երկնչել(իմ)
հարբեցող-արբեցող

ԽՐԱՏՔ

Ա. Մի՛ ուտեր հաց ընդ առն¹ չարական, և մի՛ ցանկանար կերակրոյ նորա: Մի՛ մուծանիցես զնա առ քեզ և մի՛ ուտիցես զհաց քո ընդ նմա, զի նողկացուցանէ զնա և ապականէ զբանս քո բարիս: Յականջս անզգամի ամենն ին մի՛ խօսիր, զի մի՛ անզգոսնացէ զիմաստուն բանս քո: Մի՛ փոխեր զսահմանս յափտեմականս. և ի ստացուածս որքոց մի՛ մտանիցես:

Մի՛ խնայեր խրատել զտղայ. զի թէ հարկանես զնա զաւազանա՝ ոչ մեռա-

նի: Դու հարկանես զնա գաւազանաւ, բայց զանձն նորա փրկես ի մահուանէ: Որդեակ, եթէ իմաստուն լինիցի սիրտ քո, ուրախ արասցես² և զիմ սիրտս: Լո՛ւր³, որդեակ, հօր որ ծնաւ զքեզ, և մի՛ արհամարհեր զծերութիւն մօր քո: Զճշմարտութիւն ստացիր, և մի՛ թողուր զիմաստութիւն և զխրատ:

(Առակք, ԻԳ, 6-23)

Բ. Որդեակ իմ, մի՛ նախանձիր ընդ չարս, և մի՛ ցանկանայցես կալ ընդ նոսա⁴, զի ստութիւն խորհի սիրտ նոցա: Իմաստութեամբ շինի տուն և հանճարով կանգնի: Լաւ է իմաստուն քան զհօր, և հանճարեղ՝ քան զայն որ ունիցի դաստակերտս մեծամեծս: Մի՛⁴ մատուցաներ զամպարիշտն յարօտս արդարոց, և մի՛ խաբիր լրութեամբ որովայնի: Մի՛ խնդար ընդ չարագործս, և մի՛ նախանձիր ընդ մեղաւորս: Մի՛ լինիր վկայ սուտ՝ ընկերի քում, և մի՛ խաբեր շրթամբք քովք:

(Առակք, ԻԴ, 1-28)

¹ ընդ առն - մարդու հետ
² ուրախ արասցես - կուրախացնես

³ Լո՛ւր - Լսիր
⁴ ընդ նոսա - նրանց հետ

ԴԱՍ ՅՈԹԵՐՈՐԴ

1. ԱՆՅՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՀԻՄՔԸ ԵՎ ՆՐԱՆԻՑ ԿԱԶՄՎՈՂ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

§ 37. Անցյալ կատարյալի հիմքն ըստ կազմութեան լինում է՝ ա) պարզ կամ արմատական, բ) բաղադրյալ կամ ցոյական:

§ 38. Պարզ կամ արմատական հիմքը համընկնում է բայարմատին, օրինակ՝ հասանել, ծնանել(իմ), մարտնչել(իմ), թողուլ, ջեռնուլ բայերի անցյալ կատարյալի հիմքերն են՝ հաս, ծին (անշեշտ՝ ծն), մարտ, թող, ջեռ:

Արմատական հիմք ունեն Ե, Ի լծորդութեան ածանցավոր և ՈՒ լծորդութեան բայերն ընդհանրապէս, օրինակ՝ անցանել-անց, ելանել-ել, հատանել-հատ, իջանել-էջ(իջ), տեսանել-տես, մտանել-մտտ(մտ), անկանիմ-անկ, մեռանիմ-մեռ, ազանիմ-ազ, բուսանիմ-բոյս(բուս), թռչիմ-թռ, երկնչիմ-երկ, արգելուլ-արգել. զենուլ-զեն, հեղուլ-հեղ, թողուլ-թող, կիզուլ-կէզ(կիզ), հեծնուլ-հեծ, հեղձնուլ-հեղձ, զարթնուլ-զարթ, ոստնուլ-ոստ, ցասնուլ-ցաս և այլն:

§ 39. Բաղադրյալ կամ ցոյական հիմքը կազմված է լինում.

ա) Բայարմատից և *աց* ածանցից: Այսպիսի հիմք ունեն Ա լծորդութեան պարզ և *ան* ածանցավոր բայերը՝ գթալ-գթաց, դողալ-դողաց, լալ-լաց, խաղալ-խաղաց, մնալ-մնաց, սզալ-սզաց, գողանալ-գողաց, զարմանալ-զարմաց, հեռանալ-հեռաց, ստանալ-ստաց և այլն:

բ) Բայարմատից և *եսց* (անշեշտ՝ *եց*) ածանցից: Այսպիսի հիմք ունեն Ե լծորդութեան պարզ և բազմապատկական, Ի լծորդութեան պարզ և Ա լծորդութեան *են* ածանցավոր բայերը՝ առաքել-առաքեաց, գործել-գործեաց, կարծել-կարծեաց, շարժել-շարժեաց, սիրել-սիրեաց, երգել-երգեաց, վազել-վազեաց, խոցոտել-խոցոտեաց, դատիմ-դատեաց, խորհիմ-խորհեաց, նայիմ-նայեաց, շրջիմ-շրջեաց, ողորմիմ-ողորմեաց, ծիծաղիմ- ծիծաղեաց, յագենալ-յագեաց, մերձենալ-մերձեաց և այլն:

գ) Բայարմատից կամ կատարյալի ցոյական հիմքից և *ոյց* (անշեշտ՝ *ուց*) ածանցից, օրինակ՝ թաքոյց, ուսոյց, հեռացոյց: Այսպիսի հիմք ունեն պատճառական բայերը (տե՛ս § 167):

§ 40. Նշված կանոններից նկատելի են հետևյալ շեղումները.

ա) Ա լծորդութեան *բառնալ, դառնալ, բանալ, թանալ* (=թրջել) բայերի անցյալ կատարյալի հիմքերն են՝ *բարձ, դարձ, բաց, թաց*. բ) Ե լծորդութեան հինգ պարզ բայեր ունեն *աց* բաղադրիչով անցյալ կատարյալի հիմք՝ ասել-ասաց, գիտել-գիտաց, կարել (=կարողանալ) - կարաց, մարթել-մարթաց, մերկել-մերկաց, իսկ չորս պարզ բայեր ունեն արմատական հիմք՝ ածել-ած, բերել-բեր, հանել-հան, հեղուսել (=զամել, միացնել) -հեղոյս. գ) Ի լծորդութեան *նստիմ, զգածիմ* (=հագնվել) պարզ բայերն ունեն արմատական հիմք՝ *նիստ* (նստ), *զգած*, իսկ *դիպիմ* պարզ բայը գործածվում է և՛ ցոյական, և՛ արմատական հիմքերով՝ *դիպեաց* (դիպեց), *դիպ. դ)* ՈՒ լծորդութեան վեց բայեր ունեն ցոյական հիմք՝ ընթեռնուլ-ընթերց, ընկենուլ-ընկեաց (եց), զգենուլ-զգեաց (եց), լնուլ-լից (լց), խնուլ-խից (խց), յենուլ-յեց:

2. ԽՈՆԱՐՀՄԱՆ ՏԻՊԵՐՆ ԱՆՅՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՀԻՄՔԻՑ ԿԱԶՄՎՈՂ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

§ 41. Ինչպես նշվել է (տե՛ս § 25), անցյալ կատարյալի հիմքից կազմվում են անցյալ կատարյալը, երկրորդ ապառնին, բուն հրամայականը, հորդորական հրամայականը:

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ժամանակներում բայերը խոնարհվում են ներգործածն, կրավորածն և խառն վերջավորություններով: Ըստ այդմ բայն ունի երեք տիպի խոնարհում՝ ներգործածն, կրավորածն և խառն: Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ժամանակների խոնարհման վերջավորությունները տրվում են հետևյալ տախտակում.

§ 42. Ներգործածն խոնարհում ունեն.

ա) Ե լծորդության պարզ և ածանցավոր բայերը: Բացառություն են կազմում *յանցանել* և *մեղանչել* բայերը, որոնցից առաջինը խոնարհվում է խառն ձևով (յանցեայ, յանցեար, յանցեաւ և այլն), իսկ երկրորդը՝ անցյալ կատարյալում և երկրորդ ապառնու եզակի առաջին դեմքում՝ կրավորաձև, մնացած ձևերում՝ խառն վերջավորություններով (անց. կատ.՝ մեղայ, մեղար, մեղաւ, 2-րդ ապ.՝ մեղայց, մեղիցես, մեղիցէ և այլն):

բ) Ա լծորդության պարզ բայերը: Բացառություն են կազմում *գթալ*, *փութալ*, *յուսալ* բայերը, որոնք (բացի բուն հրամայականի եզակի 2-րդ դեմքից) խոնարհվում են միայն կրավորաձև՝ գթացայ, փութացայ, յուսացայ: Իսկ մի շարք բայեր, անկախ սեռից, կարող են խոնարհվել զուգահեռաբար՝ և՛ ներգործածն, և՛ կրավորաձև, օրինակ՝ եռալ-եռացի//եռացայ, գոռալ-գոռացայ//գոռացի, դողալ-դողացայ//դողացի, ողբալ-ողբացի//ողբացայ, հոգալ-հոգացայ//հոգացի, որսալ-որսացայ//որսացի, ջանալ-ջանացայ//ջանացի, սզալ-սզացայ//սզացի և այլն:

գ) Ու լծորդության պարզ բայերը:

§ 43. Կրավորաձև խոնարհում ունեն.

ա) Ի լծորդության պարզ և *ան* ածանց ունեցող բայերը:

բ) Ա լծորդության ածանցավոր բայերը: Բացառություն են կազմում ներգործական սեռի մի քանի բայեր՝ *բանալ*, *բառնալ*, *թանալ*, *լուանալ*, *մերկանալ*, որոնք կարող են խոնարհվել և՛ ներգործածն, և՛ կրավորաձև: *Մոռանալ*, *իմանալ*, *ընթանալ* բայերը բուն հրամայականի եզակի 2-րդ դեմքում *մոռացիր*, *իմացիր*, *ընթացիր* կանոնավոր ձևերից բացի, ունենում են նաև *իմա//իմաց*, *մոռա՛*, *ընթա՛*//*ընթաց՛* ձևերը:

գ) Ու լծորդության այն ածանցավոր բայերը, որոնք չունեն փոխանցումներ, օրինակ՝ յենուլ-յեցայ, զգենուլ-զգեցայ, ընկնուլ-ընկլայ և այլն: Բացառություն են կազմում ներգործական սեռի մի քանի բայեր՝ *առնուլ*, *ընկենուլ*, *լնուլ*, *խնուլ*, որոնք կարող են խոնարհվել և՛ ներգործածն, և՛ կրավորաձև: Ու լծորդության *նում-անեն*, *նում-անիմ* փոխանցումով ածանցավոր բայերը, օրինակ՝ կլնում-կլայ, գբսնում-գբսայ և այլն:

§ 44. Խառն խոնարհում ունեն. ա) Ի լծորդության չ և նչ ածանցավոր բայերը. բ) Ու լծորդության *նում-չիմ* փոխանցումով ածանցավոր բայերը, օրինակ՝ զարթնում-զարթեայ, ոստնում-ոստեայ, ցասնում-ցասեայ, քաղցնում-քաղցեայ և այլն:

§ 45. Պետք է նկատի ունենալ, որ անցյալ կատարյալի հիմքից կազմվող ժամանակներում ներգործածն վերջավորություններով խոնարհվող ներգործական սեռի բայերը կարող են խոնարհվել նաև կրավորաձև՝ ստանալով կրավորական սեռի նշանակություն, օրինակ՝ գրեցի=գրեցի, գրեցայ=գրվեցի և այլն:

Ներգործական սեռի այն բայերը, որոնք խոնարհվում են միայն կրավոր-

րան, նույն վերջավորություններով կարող են արտահայտել թե՛ ներգործական, թե՛ կրավորական սեռի իմաստ: Այդ կարգի բայերի ներգործական և կրավորական սեռի նշանակությունները որոշվում են նախադասության արտահայտած իմաստով, օրինակ՝ դատեցայ զնա = դատեցի նրան, դատեցայ ի նմանե՝դատվեցի նրանից (նրա կողմից):

§ 46. Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ժամանակներով բայը խոնարհելու համար նրա անցյալ կատարյալի հիմքի վրա պետք է ավելացնել համապատասխան դիմային վերջավորությունները:

Ծանոթություն. Գրաբարի հնչյունափոխության կանոնների համաձայն, վերջավորություններից առաջ կատարյալի հիմքի շեշտազրկված *ես* երկբարբառը դառնում է *ե՝* գրեաց+ի=գրեցի, բազմեաց+այ=բազմեցայ, *ու* և *ի* ձայնավորները դառնում են *ը*, որը չի գրվում՝ մուտ+ի=մտի, ծին+այ=ծնայ, է ձայնավորը դառնում *ի՝* էջ+ի=իջի, շեջ+այ=շիջայ:

ԴԱՍ ՈՒԹԵՐՈՐԴ

ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ

§ 47. Անցյալ կատարյալի վերջավորություններն են՝

<i>Ներգործածն</i>		<i>Կրավորածն</i>		<i>Խառն</i>	
Եզակի	Նոգնակի	Եզակի	Նոգնակի	Եզակի	Նոգնակի
1-ին դ. -ի	-աք	-այ	-աք	-եայ	-եաք
2-րդ ,, -եր	-էք,-իք	-ար	-այք, -արուք	-եար	-եայք
3-րդ ,, -	-ին	-աւ	-ան	-եաւ	-եան

§ 48. Ներգործածն խոնարհման եզակի 3-րդ դեմքում բայը որևէ վերջավորություն չունի. չինչյունափոխված կատարյալի հիմքը հանդես է գալիս որպես դիմավոր ձև, ըստ որում եթե կատարյալի հիմքը միավանկ է, բաղաձայնից առաջ կարող է ստանալ *ե*, իսկ ձայնավորից առաջ՝ *է* նախահավելվածը, օրինակ՝ անց. կատ. հիմք՝ *սիրեաց, գիտ, անց*, անց. կատ. եզակի 3-րդ դեմք՝ *սիրեաց, գիտ* կամ *եգիտ, անց* կամ *էանց*:

§ 49. Խոնարհման օրինակներ.

1. Ներգործածն խոնարհում

	աղալ	գրել	անցանել	թողուլ
			Եզակի	
1-ին դ.	աղացի	գրեցի	անցի	թողի
2-րդ ,,	աղացեր	գրեցեր	անցեր	թողեր
3-րդ ,,	աղաց	գրեաց	անց, էանց	թող, եթող

Նոգնակի

1-ին դ.	աղացաք	գրեցաք	անցաք	թողաք
2-րդ ,,	աղացէք աղացիք	գրեցէք գրեցիք	անցէք անցիք	թողէք թողիք
3-րդ ,,	աղացին	գրեցին	անցին	թողին

2. Կրավորածն խոնարհում

	հեռանալ	նայել(իմ)	ուսանել(իմ)	ջեռնուլ
--	---------	-----------	-------------	---------

Եզակի

1-ին դ.	հեռացայ	նայեցայ	ուսայ	ջեռայ
2-րդ ,,	հեռացար	նայեցար	ուսար	ջեռար
3-րդ ,,	հեռացաւ	նայեցաւ	ուսաւ	ջեռաւ

Նոգնակի

1-ին դ.	հեռացաք	նայեցաք	ուսաք	ջեռաք
2-րդ ,,	հեռացայք հեռացարուք	նայեցայք նայեցարուք	ուսայք ուսարուք	ջեռայք ջեռարուք
3-րդ ,,	հեռացան	նայեցան	ուսան	ջեռան

3. Խառն խոնարհում

	փախչել(իմ)	զարթնուլ		
	Եզակի	Նոգնակի	Եզակի	Նոգնակի
1-ին դ.	փախեայ	փախեաք	զարթեայ	զարթեաք
2-րդ ,,	փախեար	փախեայք	զարթեար	զարթեայք
3-րդ ,,	փախեաւ	փախեան	զարթեաւ	զարթեան

§ 50. Անցյալ կատարյալ ժամանակն իմաստով համապատասխանում է արդի հայերենի անցյալ կատարյալին, օրինակ՝ աղացի=աղացի:

Վարժություն 22. *Խոնարհել անցյալ կատարյալ ժամանակով հետևյալ բայերը՝*

ա) որսալ, գողանալ, կարդալ, մոռանալ, բանալ, բ) սիրել, ասել, գտանել, առաքել, ածել, գ) խորհել(իմ), բազմել(իմ), անկանել(իմ), թռչել(իմ), երկն-չել(իմ), դ) կիզուլ, արգելուլ, հեծնուլ, ոստնուլ, լնուլ:

Վարժություն 23. *Թարգմանել, որոշել անցյալ կատարյալ ժամանակով դրված բայերի դեմքն ու թիվը:*

Խաղացաք գնացաք յերկիրն Յունաց: Իբրև գաչս ի վեր եքարձ՝ հայեցաւ ընդ թագաւորն, սկսաւ խօսել ընդ նմա: Մեծարեցաւ ի նմանէ բազում պատուով: Թողեր, լքեր զմեծապատիւ շքեղաշուք ոսկիակոտ զաթոռն քո հայրենի: Աղ և քացախ խառնեցին և արկին ի վերայ մարմնոյ: Փրկեցան սիրելիք քո: Ես բազում անգամ կամեցայ սիրել զԱրշակ արքայ Հայոց: Չարթեաւ ի քնոյ իւրմէ: Այս ասացաւ վասն հարցանելոյ ոմանց: Երկեա՞ր դու ի ծերունի հօրէ քումմէ: Սպանաւ ի գօրացն Յունաց: Անկան կործանեցան ապարանք նոցա: Ես եմ որ փախեայ այսօր ի պատերազմէն: Աքսորեաց զնոսս և ընկեց յաշխարհս օտարս: Ուստի՞ օձն՝ զոր սատանայ կոչէք՝ իմացաւ զհանգամանս չարին: Եւ զամենայն զոր ինչ ասաց ի ժամանակին՝ կատարեաց ըստ կամաց նորա և արգել զնա ի բազում բարկութենէն: Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեւան գեղեցիկ:

ընդ նմա - նրա հետ

ի...հօրէ քումմէ - քո հորից

Վարժություն 24. *Կազմել 23-րդ վարժության բայերի անորոշ դերբայը և անցյալ կատարյալի հիմքը:*

Օրինակ՝ եքարձ - անորոշ դերբայ՝ բառնալ, անց. կատարյալի հիմք՝ բարձ:

Վարժություն 25. *23-րդ վարժության ներգործական սեռի բայերը խոնարհել կրավորաձև՝ պահպանելով դեմքն ու թիվը:*

Վարժություն 26. *Որոշել 23-րդ վարժության բայերի սեռը և խոնարհման ձևը:*

Վարժություն 27. *Թարգմանել գրաբար:*

Քաջությամբ մարտնչեցին և հաղթեցին: Տիկը լցրեց ջրով: Գրավեցին և ավերեցին Տիգրանակերտ քաղաքը: Սիրեցիր արդարությունը և ատեցիր անօրենությունը: Փրկեցիր մեզ մահից (ի մահուանէ): Թողեցիք հայրենի քաղաքը և փախաք: Ինչո՞ւ (ընդէ՞ր) պատռեցիր քո հանդերձները: Գնացի և տեսա իմ սիրելիներին: Ուրացավ և ասաց. «չեմ ճանաչում նրան» (զնա): Արդարությամբ դատեց մեղավորներին: Ծնվեց նոր արքա:

մարտնչել - մարտնչել(իմ)
հաղթել - յաղթել

գրավել - առնուլ
պատռել - պատառել

ՄՇԱԿՔ ԱՅԳԻՈՅՆ

Այր մի էր տանուտէր, որ տնկեաց այգի և ցանկով պատեաց զնա և փորեաց ի նմա՝ հնձան և շինեաց աշտարակ, և ետ զնա ցմշակս² և զնաց ի տար աշխարհ³: Իբրև մերձեցաւ ժամանակ պտոյոյ, առաքեաց զծառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս նորա: Եւ կալեալ մշակացն⁴ զծառայս նորա զոմն տանջեցին, զոմն սպանին, զոմն քարկոծեցին: Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազումս քան զառաջինսն, և արարին նոցա նոյնպէս: Յետոյ առաքեաց առ նոսս զորդի իւր և ասէ. «Թերևս ամաչեսցեն յորդոյ աստի իմմէ»⁵: Իսկ մշակքն իբրև տեսին զորդին, ասեն ընդ միտս. «Սա է ժառանգն, եկա՛յք սպանցուք զսա և կալցուք⁶ զժառանգութիւն տրա»:⁷ Եւ առեալ հանին զնա արտաքոյ քան զայգին⁷ և սպանին: Արդ՝ յորժամ եկեսցէ⁸ տէր այգւոյն, զի՞նչ արասցէ⁹ մշակացն այնոցիկ: Ասեն ցնա. «Չչարսն չարաւ կորուսցէ և զայգին տացէ¹⁰՝ այլոց մշակաց, որք տացեն նմա զպտուղս ի ժամու իւրեանց»:

(Մաարթնու, ԻԱ, 33-41)

¹ ի նմա - նրա մեջ

² ետ ... ցմշակս - տվեց մշակներին

³ ի տար աշխարհ - օտար՝ հեռավոր երկիր

⁴ կալեալ մշակացն - մշակները բռնելով

⁵ ամաչեսցեն յորդոյ աստի իմմէ - ամաչեն իմ այս որդուց

⁶ կալցուք - տիրենք

⁷ արտաքոյ քան զայգին - այգուց

⁸ եկեսցէ - գա

⁹ արասցէ - կանի

¹⁰ տացէ - կտա

ԴԱՍ ԻՆՆԵՐՈՐԴ

ԵՐԿՐՈՐԴ ԱՊԱՌՆԻ

§ 51. Երկրորդ ապառնու վերջավորություններն են՝

<i>Ներգործածն</i>		<i>Կրավորածն</i>		<i>Խառն</i>	
Եզակի	Նոգնակի	Եզակի	Նոգնակի	Եզակի	Նոգնակի
1-ին դ. -ից	-ցուք	-այց	-ցուք	-եայց	-իցուք
2-րդ ,, -ցես	-ջիք	-ցիս	-ջիք	-իցես	-իջիք
3-րդ ,, -ցէ	-ցեն	-ցի	-ցին	-իցէ	-իցեն

§ 52. Ներգործածն և կրավորածն խոնարհումների դեպքում անցյալ կատարյալի հիմքի *ց*-ն վերջավորությունների *ց* և *ջ* հնչյուններից առաջ դառնում է *ս*, օրինակ՝ շարժեաց+ցես=շարժեսցես, շարժեաց+ջիք=շարժեսջիք: Եթե կատարյալի հիմքի *ց*-ն արմատի կամ նրա տարբերակի հնչյուն է, չի դառնում *ս*, ինչպես՝ հարց+ցես=հարցցես, հարց+ջիք= հարցջիք:

§ 53. Խոնարհման օրինակներ.

1. Ներգործածն խոնարհում

	աղալ	գրել	անցանել	թողուլ
	Եզակի			
1-ին դ.	աղացից	գրեցից	անցից	թողից
2-րդ ,,	աղասցես	գրեսցես	անցցես	թողցես
3-րդ ,,	աղասցէ	գրեսցէ	անցցէ	թողցէ
	Նոգնակի			
1-ին դ.	աղասցուք	գրեսցուք	անցցուք	թողցուք
2-րդ ,,	աղասջիք	գրեսջիք	անցջիք	թողջիք
3-րդ ,,	աղասցեն	գրեսցեն	անցցեն	թողցեն

2. Կրավորածն խոնարհում

հեռանալ	նայել(իմ)	ուսանել(իմ)	ջեռնուլ
---------	-----------	-------------	---------

Եզակի

1-ին դ.	հեռացայց	նայեցայց	ուսայց	ջեռայց
2-րդ ,,	հեռացիս	նայեսցիս	ուսցիս	ջեռցիս
3-րդ ,,	հեռացի	նայեսցի	ուսցի	ջեռցի

Նոգնակի

1-ին դ.	հեռացուք	նայեսցուք	ուսցուք	ջեռցուք
2-րդ ,,	հեռացիք	նայեսջիք	ուսջիք	ջեռջիք
3-րդ ,,	հեռացին	նայեսցին	ուսցին	ջեռցին

3. Խառն խոնարհում

	փախչել(իմ)	զարթնուլ		
	Եզակի	Նոգնակի	Եզակի	Նոգնակի
1-ին դ.	փախեայց	փախիցուք	զարթեայց	զարթիցուք
2-րդ ,,	փախիցես	փախիջիք	զարթիցես	զարթիջիք
3-րդ ,,	փախիցէ	փախիցեն	զարթիցէ	զարթիցեն

§ 54. Ստորադասական եղանակի 2-րդ ապառնին իմաստով համապատասխանում է արդի հայերենի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնուն, օրինակ՝ թողից=թողնեմ, կթողնեմ, պիտի թողնեմ:

Ծանոթություն. Երկրորդ ապառնին կարող է թարգմանվել աշխարհաբար նաև սահմանական եղանակի ապառնի ժամանակով՝ մտից=մտնելու եմ: Սահմանական ապառնու իմաստը, սակայն, գրաբարում մեծ մասամբ արտահայտվում է ապառնի դերբայով և *եմ* օժանդակ բայով կազմված բաղադրյալ ժամանակով՝ գալոց եմ=գալու եմ, դատելոց եմ=դատելու եմ:

Վարժություն 28. *Խոնարհել երկրորդ ապառնի ժամանակով հետևյալ բայերը՝*

ա) խաղալ, լալ, գոհանալ, զարմանալ. բ) վազել, ելանել, շարժել, հատանել. գ) հայել(իմ), նստել(իմ), սկսանել(իմ), մարտնչել(իմ). դ) զենուլ, հեղուլ, ընթեռնուլ, զբօսնուլ:

Վարժություն 29. *Թարգմանել, որոշել երկրորդ ապառնի ժամանակով դրրված բայերի դեմքն ու թիվը:*

Եւ իջից անդր և խօսեցայց ընդ քեզ: Չենցես զխոյն և առեալ զարիւն նորա հեղցես շուրջ զտեղանովն: Խցցին բերանք այնոցիկ ոյք խօսեին զանիրաւութիւն: Եւ առցես յիւրոյ անտի օծման, և արկցես ի գլուխ նորա և օծցես զնա: Անուն քաջութեան յերկրի թողցուք: Մարտիցուք իբրև զհսկայս և մի՛ կորիցուք իբրև տկարք: Տէ՛ր, լոյս իմ և կեանք իմ, ես յումմե՞ երկեայց: Եթէ քաղաքն այն շինեսցի և պարիսպք նորա կանգնեսցին, հարկս քեզ ոչ ոք տայ: Եւ հրապարակք քաղաքին լցցին պատանեկօք և աղջկամքք որ խաղայցեն ի հրապարակս նորա: Ելցեն այստե՛տևս զունդք ձեր տալ ընդ նմա պատերազմ: Ես արկից զքեզ ի տանջանս: Եթէ ես զքեզ յաղթահարեցից՝ Յոյնք ինձ հնազանդեսցին ի ծառայութիւն, և եթէ դու ինձ յաղթեսցես՝ մեր կեանքս քեզ նուաճեսցին: Գտջիք զնոսա առ եզեր գետոյն: Հրաման տուր նժոյգ մատուցանել, թող հեծայց: Յարձակեսցուք ի վերայ թշնամեացն: Եւ մտցուք ի քաղաքն և ելցուք: Խզեսցուք զկապանս նոցա, և ընկեսցուք ի մէնջ զլուծ նոցա: Լսելով լուիջիք և մի՛ իմասջիք, և տեսանելով տեսջիք և մի՛ տեսջիք: Ոչ թողացուցից ձեզ, մինչև կատարեսջիք զամենայն կամս հրամանաց իմոց:

յումմե՞ - ումի՞ց
առ եզեր - եզերքին, ափին
ի մէնջ - մեզմից
լուիջիք - կլսեք

Վարժություն 30. 29-րդ վարժության բայերի 2-րդ սպառնու ձևերը փոխարինել 1-ին սպառնիով՝ պահպանելով դեմքն ու թիվը:

Վարժություն 31. 29-րդ վարժության կրավորաձև խոնարհման Ե լծորդության բայերը խոնարհել ներգործաձև:

Վարժություն 32. Թարգմանել գրաբար:

Շքով և պատվով կմտնենք քաղաքը: Տրտմությամբ կծնես որդիներ: Անթիվ զորքեր կուղարկեն ձեր աշխարհը: Չեզ կփնտրենք և կգտնենք: Ոչ ոք չի գտնվի, որ փրկի մեզ: Չեր անունները չեն մոռացվի: Գի՛նով (զինեալ) կլցնենք ձեր ամանները: Երբ (յորժամ) տեսնեն ձեզ, կվախենան և կփախչեն: Ճանապարհին (ի ճանապարհի) կմոլորվի և կկորչի: Չենք թողնի, որ նրանք (նոքա) մոտենան մեզ (առ մեզ): Իմ կյանքը (զկեանս) պիտի պատմեմ քեզ:

ծնել - ծնանել(իմ)
փնտրել - խնդրել
գտնել - գտանել
փախչել - փախչել(իմ)
կորչել - կորնչել(իմ)
մոտենալ - մերձենալ

ՎԱՄՆ ԹՈՂԱՅ ԶԲԻԻ ԲԱՆՔԱՐՆ

Նմանեցա արքայութիւն երկնից առն թագաւորի¹, որ կամեցա համար առնուլ² ի մէջ ծառայից իւրոց: Եւ իբրև սկսա առնուլ, մատուցա³ առ նա

պարտապան մի բեր քանքարոյ: Իբրև ոչ ունէր հատուցանել, հրամայեաց զնա վաճառել տէրն նորա, և զկին նորա և զորդիս և զամենայն, որ զինչ և ունիցի, և հատուցանել: Եւ անկեալ ծառայն երկիր պագանէր նմա և ասէր. «Երկայնամիտ լեր առ իս⁴, և զամենայն հատուցից քեզ»: Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ արձակեաց զնա և զփոխն եթող նմա: Եւ ելեալ ծառայն այն եզիտ զմի ի ծառայակցաց իւրոց, որ պարտէր նմա հարեր դահեկան, և կալեալ զնա⁵ խեղդէր և ասէր. «Հատո՞⁶ ինձ, զոր պարտիսդ⁷»: Արդ անկեալ ծառայակցին առ ոտս նորա, աղաչէր զնա և ասէր. «Երկայնամիտ լեր առ իս, և զամենայն հատուցից քեզ»: Եւ նա ոչ կամէր. այլ չոգաւ⁸ արկ զնա ի բանտ, մինչ հատուցէ զպարտսն:

Իբրև տեսին ծառայակիցքն նորա, որ ինչ եղևն՝ տրտմեցան յոյժ և եկեալ ցուցին տեսոն իւրեանց⁹ զամենայն, որ ինչ եղևն: Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր և ասէ. «Ծառայ՛ չար, զամենայն զպարտսն թողի քեզ, վասն զի աղաչեցեր զիս: Իսկ արդ ո՞չ էր պարտ և քեզ ողորմել¹⁰ ծառայակցին քում, որպէս և ես քեզ ողորմեցայ»: Եւ բարկացեալ տէրն նորա մատնեաց զնա դահճաց, մինչև հատուցէ զամենայն զպարտսն:

(Մաթթէոս, ԺԸ, 23-24)

¹ առն թագաւորի - թագաւոր մարդու
² համար առնուլ - հաշիվ տեսնել
³ մատուցալ - մոտ բերվեց, մոտեցալ
⁴ երկայնամիտ լեր առ իս - համբերող եղիր իմ նկատմամբ
⁵ կալեալ զնա - բռնելով նրան
⁶ հատո՞ - հատուցիր, վճարիր
⁷ զոր պարտիսդ - ինչ որ պարտք ես
⁸ չոգալ - գնաց
⁹ տեսոն իւրեանց - իրենց տիրոջ
¹⁰ ո՞չ էր պարտ և քեզ ողորմել - դու էլ չպիտի՞ խղճայիր

ԳԱՍ ՏԱՄՆԵՐՈՐԴ

ԲՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

(Հրամայական եղանակի ներկա)

§ 55. Բուն հրամայականն ունի միայն 2-րդ դեմք, եզակի և հոգնակի թիվ: Այս ժամանակի վերջավորություններն են՝

Ներգործաձև		Կրավորաձև		Խառն	
Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
2-րդ դ. -	-էք	-իր	-այք, -արուք	-իր	-եայք, երուք

§ 56. Ներգործածն խոնարհման եզակի թվի 2-րդ դեմքը վերջավորություն չունի. անցյալ կատարյալի հիմքը շեշտված հանդես է գալիս որպես դիմավոր ձև, օրինակ՝ սպանանել, անց. կատ. հիմք՝ սպան, բուն հրամ. եզակի թիվ՝ սպան, հատանել - հան, մտանել - մոտ, իջանել - էջ, թողուլ - թող, հեղուլ - հեղ և այլն:

Այս ետև ածանցներով անցյալ կատարյալի հիմքի ց-ն եզակի թվի 2-րդ դեմքում ընկնում է, օրինակ՝ աղալ-աղաց-աղա՛, ասել-ասաց-ասա՛, շարժել-շարժեաց-շարժեա՛: Եթե ց-ն արմատի կամ նրա տարբերակի հնչյուն է, չի ընկնում, օրինակ՝ բանալ-բաց, լնուլ-լից, խնուլ-խից և այլն:

§ 57. Կրավորածն խոնարհման դեպքում Ե և Ի լծորդության պարզ բայերը եզակի թվում -իր վերջավորություն չեն ստանում. անցյալ կատարյալի հիմքը շեշտված հանդես է գալիս որպես դիմավոր ձև, օրինակ՝ սիրել-սիրեաց-սիրեաց, խորհիմ-խորհեաց-խորհեաց, խօսիմ-խօսեաց-խօսեաց, նստիմ-նստեաց-նստեաց և այլն:

Ծանոթություն. Ի լծորդության պարզ բայերի կատարյալի հիմքի ետև ածանցի ց-ն եզակի թվում հաճախ կարող է ընկնել, օրինակ՝ համարիմ-համարեաց կամ համարեա՛, ողորմիմ-ողորմեաց կամ ողորմեա՛, խօսիմ-խօսեաց կամ խօսեա՛, նայիմ-նայեաց կամ նայեա՛ և այլն:

§ 58. Խոնարհման օրինակներ.

1. Ներգործածն խոնարհում

	աղալ	գրել	անցանել	թողուլ
--	------	------	---------	--------

Եզակի

2-րդ դ.	աղա՛	գրեա՛	անց	թող
---------	------	-------	-----	-----

Նոգնակի

2-րդ դ.	աղացե՛ք	գրեցե՛ք	անցե՛ք	թողե՛ք
---------	---------	---------	--------	--------

2. Կրավորածն խոնարհում

	հեռանալ	նայել(իմ)	ուսանել(իմ)	ջեռնուլ
--	---------	-----------	-------------	---------

Եզակի

2-րդ դ.	հեռացի՛ր	նայեաց՛	ուսի՛ր	ջեռի՛ր
---------	----------	---------	--------	--------

Նոգնակի

2-րդ դ.	հեռացա՛յք հեռացարո՛ւք	նայեցա՛յք նայեցարո՛ւք	ուսա՛յք ուսարո՛ւք	ջեռա՛յք ջեռարո՛ւք
---------	--------------------------	--------------------------	----------------------	----------------------

3. Խառն խոնարհում

	փախչել(իմ)	գարթնուլ
--	------------	----------

Եզակի	Նոգնակի	Եզակի	Նոգնակի
--------------	----------------	--------------	----------------

2-րդ դ.	փախի՛ր	փախեսա՛յք փախերո՛ւք	գարթի՛ր	գարթեսա՛յք գարթերո՛ւք
---------	--------	------------------------	---------	--------------------------

§ 59. Բուն հրամայականն իմաստով համապատասխանում է արդի հայերենի նույն հրամայականին, օրինակ՝ գրեա՛=գրի՛ր, գարթի՛ր=գարթնի՛ր, գարթեսա՛յք կամ գարթերո՛ւք=գարթնեցե՛ք:

Վարժություն 33. Խոնարհել բուն հրամայականով հետևյալ բայերը՝

ա) գթալ, որսալ, ստանալ, մերձենալ, իմանալ. բ) խնդրել, երգել, մտանել, սպանանել, հանել. գ) ողորմել(իմ), բազմել(իմ), փախչել(իմ), մարտնչել(իմ), կորնչել(իմ). դ) արգելուլ, առնուլ, զենուլ, ցասնուլ, ընթեռնուլ:

Վարժություն 34. Թարգմանել, փոխել բուն հրամայականով դրված բայերի թիվը՝ եզակին դարձնելով հոգնակի, իսկ հոգնակին՝ եզակի:

Օրինակ՝ Էջ - իջե՛ք, յիջեցե՛ք - յիջեա՛:

Յիջեցե՛ք զամենայն զօրավարսն զառաջինսն: Խի՛ց զականջս քո: Ընտրեա՛ դու քեզ արս զօրատրս: Չարթի՛ր, ընդե՞ր ննջես: Էջ ի տուն քո և լուս՝ զոտս քո: Ողորմեաց՛ ինձ, որդեակ իմ: Չգեա՛ զսուր քո և խոցեա՛ զիս դովա: Փշրեցե՛ք, ընկեցե՛ք զաղեղունս ձեր: Վաճառեա՛ զինչս քո և տո՛ւր աղքատաց: Ան դու ինձ սակաւ մի ջուր ամանով: Մո՛ւտ ի շտեմարանս քո, փակեա՛ գոլորս քո, թաքի՛ր առ ժամանակ մի: Քաջալերեցարո՛ւք, սիրելիք իմ, զի ահա մոռացայք զվշտալի կեանսդ: Խորհեաց՛ ընդ միտս քո թե՛ զինչ գործեսցես: Ան երկան, աղա՛ ալեր, ընկեա՛ զքօղ քո... բաց՛ զսրունս քո, անց ընդ գետս:

դովա - դրանով	ընդ միտս - մտքում
---------------	-------------------

Վարժություն 35. 34-րդ վարժության բուն հրամայականով դրված բայերը փոխարինել արգելական հրամայականով՝ պահպանելով թիվը:

Վարժություն 36. Թարգմանել գրաբար:

Խոսեցե՛ք, ինչու՞ (զի՞) եք լռում: Պատվի՛ր քո հորն ու մորը: Միրեցե՛ք ձեր հայրենիքը: Չորք ժողովի՛ր, գունդ կազմի՛ր, շարժվի՛ր գնա՛ Քուշանների (Քուշանաց) երկիրը: Բերե՛ք ոչխարը և մորթեցե՛ք: Նստի՛ր և գրի՛ր նամակ: Մովորեցե՛ք նրանցից (ի նոցանէ) արդարություն և ճշմարտություն: Մոռացի՛ր իմ ասածները (զասացեալս): Թաքնվի՛ր, մինչև անցնի քո հոր բարկությունը: Աճեցե՛ք, բազմացե՛ք և լցրե՛ք երկիրը:

շարժվել - խաղալ	սովորել - ուսանել(իմ)
մորթել - զենուլ	թաքնվել - թաքչել(իմ)
նստել - նստել(իմ)	անցնել - անցանել

ՎԱՄՆ ԶՏԱՂԱՆՏՄՆ ՏԱԼՈՅ

Այր մի գնացեալ ի տար աշխարհ, կոչեաց զծառայս իւր և ետ նոցա զինչս իւր: Ումեմն ետ¹ հինգ քանքար, և ումեմն՝ երկուս, և ումեմն՝ մի, իւրաքանչիւր ըստ իւրում կարի², և գնաց: Չոգաւ վաղվաղակի որ առ զհինգն, գործեաց նոքօք և շահեցաւ այլ և ս հինգ: Նոյնպէս և որ զերկուսն՝ շահեցաւ այլ և ս երկուս: Եւ որ զմին առ՝ գնաց, փորեաց զերկիր և թաքոյց զարծաթ տեառն իւրոյ: Յետ բազում ժամանակի գայ տէր ծառայիցն այնոցիկ և առնէ համարս³ ի մէջ նոցա: Եւ մատուցեալ, որ զհինգ քանքարն առ՝ մատոյց այլ և ս հինգ քանքար և ասէ. «Տէ՛ր, հինգ քանքար ետուր ցիս⁴, արդ ահաւասիկ, հինգ այլ և ս քանքար ի վերայ շահեցայ»: Ասէ ցնա տէրն իւր. «Ազնի՛, ծառայ բարի և հաւատարիմ, որովհետև ի սակաւուդ հաւատարիմ ես⁶, ի վերայ բազմաց կացուցից⁷ զքեզ. մո՛ւտ յուրախութիւն տեառն քո»: Մատուցեալ և որոյ զերկուս քանքարսն առեալ էր⁸, և ասէ. «Տէ՛ր, երկուս քանքարս ետուր ցիս, ահաւասիկ երկուս և ս այլ քանքարս, զոր ի վերայ շահեցայ»: Ասէ ցնա տէրն իւր. «Ազնի՛, ծառայ բարի և հաւատարիմ, որովհետև ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մո՛ւտ յուրախութիւն տեառն քո»: Մատուցեալ և որոյ զմի քանքարն առեալ էր, և ասէ. «Տէ՛ր, զիտէի, զի այր մի խիստ ես, հնձեա՛ զոր ոչ սերմանեցեր, և ժողովես՝ ուստի ոչ սփռեցեր⁹: Երկեայ, գնացի և թաքուցի զքանքարն քո յերկրի. արդ ահաւասիկ քոյդ ցքեզ»: Պատասխանի ետ տէրն և ասէ ցնա. «Ծառայ չար և վատ, զիտէիր, եթէ հնձեմ՝ ուստի ոչ սերմանեցի, և ժողովես՝ ուստի ոչ սփռեցի. պարտ էր քեզ արկանել զարծաթդ իմ ի սեղանատրս, և եկեալ ես տոկոսեօք պահանջէի զիմն: Արդ՝ առէ՛ք ի դմանէ՛¹⁰

զքանքարդ և տո՛ւք այնմ¹¹, որ ունիցի զտասն քանքարն: Ձի ամենայնի¹², որ ունիցի՝ տացի և յաւելցի. և որ ոչն ունիցի, և զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ: Եւ զծառայդ անպիտան հանէք ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճել ատամանց»:

(Մաթթէոս, ԻԵ, 14-30)

¹ ումեմն ետ - մեկին տվեց	⁷ կացուցից - կրնամ, կնշանակեմ
² իւրաքանչիւր ըստ իւրում կարի - յուրաքանչյուրին իր կարողության չափ	⁸ որոյ առեալ էր - նա, որ առել էր
³ առնէ համարս - հաշիվ է տեսնում	⁹ ժողովես՝ ուստի ոչ սփռեցեր - ժողովում ես այնտեղից, ուր չցանցեցիր
⁴ ետուր ցիս - տվեցիր ինձ	¹⁰ ի դմանէ - դրանից
⁵ ազնի՛ - շա՛տ լավ, շա՛տ ապրես	¹¹ այնմ - նրան
⁶ ի սակաւուդ հաւատարիմ ես - քիչ բաների մեջ հավատարիմ ես	¹² ամենայնի - ամեն մեկի

ԴԱՍ ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ

ՀՈՐԴՈՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

(Հրամայական եղանակի ապառնի)

§ 60. Հորդորական հրամայականն ունի միայն 2-րդ դեմք, եզակի և հոգնակի թիվ: Այս ժամանակում ներգործածն և կրավորածն խոնարհվող բայերն ունեն եզակի *-ջիր*, հոգնակի *-ջիք* ընդհանուր վերջավորությունները, իսկ խառն ձևով խոնարհվող բայերը՝ համապատասխանաբար *-իջիր*, *-իջիք*: *-Ձիր*, *-ջիք* վերջավորություններից առաջ անցյալ կատարյալի հիմքի *ց-*, եթե արմատի կամ նրա տարբերակի հնչյունն չէ, դառնում է *ս*, օրինակ՝ առաքեաց+ջիր=առաքեսջիր, բազմեաց+ջիք=բազմեսջիք, լից+ջիր=լցջիր:

§ 61. Խոնարհման օրինակներ.

	աղալ	գրել	նայել(իմ)	թողուլ
		Եզակի		
2-րդ դ.	աղասջիր	գրեսջիր	նայեսջիր	թողջիր
		Հոգնակի		
2-րդ դ.	աղասջիք	գրեսջիք	նայեսջիք	թողջիք

	Եզակի	Նոգնակի	Եզակի	Նոգնակի
2-րդ դ.	փախիջի՛ր	փախիջի՛ք	գարթիջի՛ր	գարթիջի՛ք

§ 62. Հորդորական հրամայականն իմաստով համապատասխանում է արդի հայերենի ըղձական, պայմանական, հարկադրական եղանակների ապառնուն և բուն հրամայականին, օրինակ՝ գրեսջի՛ր=գրես, կգրես, պիտի գրես, գրի՛ր:

Վարժություն 37. *Խոնարհել հորդորական հրամայականով հետևյալ բայերը՝*

ա) գթալ, փութալ, մոռանալ. բ) սիրել, շարժել, տեսանել. գ) բազմել(իմ), թաքչել(իմ), ուսանել(իմ). դ) կիզուլ, խնուլ, ոստնուլ:

Վարժություն 38. *Թարգմանել, փոխել հորդորական հրամայականով դրված բայերի թիվը՝ եզակին դարձնելով հոգնակի, իսկ հոգնակին՝ եզակի:*

Թաքիջի՛ր և նստիջի՛ր ի թաքստեան: Եւ արդ զիտասջի՛ք, եթէ սրով և սովով և մահուամբ սատակեսջի՛ք: Մեծարեսջի՛ր զնա պատուով ըստ առաջին կարգին: Սիրեսջի՛ք զխաղաղութիւն խնամագութ սիրով: Թօթափեսջի՛ք զփոշին յոտից ձերոց: Ձծերն մի՛ պատուհասիցես, այլ միխթարեսջի՛ր իբրև զհայր: Յաւովք և տրտմութեամբ որդիս ծնջի՛ր: Չամենայն ծառ զազնիւ կոտորեսջի՛ք, և զամենայն աղբերս ջրոց խցջի՛ք:

Վարժություն 39. *38-րդ վարժության հորդորականի հրամայականով դրված բայերը փոխարինել բուն հրամայականով՝ թիվը թողնելով նույնը:*

Վարժություն 40. *Թարգմանել գրաբար:*

Շտապի՛ր գալ ինձ մոտ (առ իս): Իմացած եղի՛ր, որ քեզ սիրում եմ: Կգրուցես ծաղկավետ հովիտներում (ի հովիտս): Կկործանեք մեհյանները և կփշրեք կոտքերի (կոտց) արձանները: Ձեր քաջությանբ պիտի հաղթեք նրանց (զնոսա): Պիտի դատվեք ձեր գործերի համեմատ (ըստ գործոց ձերոց): Կփախչեք և կթաքնվեք անտառներում (յանտառս):

շտապել - փութալ
 իմացած լինել - գիտել
 գրուցել - գրումուլ
 թաքնվել - թաքչել(իմ)

Նմանեցաւ արքայութիւնն երկնից առն, որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում: Եւ ի քուն լինել մարդկան՝¹ եկն թշնամի նորա և ցանեաց ի վերայ որումն ի մեջ ցորենոյն և զնաց: Եւ իբրև բուսաւ խոտն և արար պտուղ, ապա երևեցաւ և որումնն: Մատուցեալ ծառայք տանուտեառնն ասեն ցնա. «Տէ՛ր, ո՞չ սերմն բարի սերմանեցեր յագարակին քում, արդ ուստի՞² ունիցի զորումնն»: Եւ նա ասէ ցնոսա. «Այր թշնամի արար զայն»: Ասեն ցնա ծառայքն. «Կամի՞՞ զի երթիցուք, քաղեսցուք զայն ի բաց»³: Եւ նա ասէ ցնոսա. «Մի՛⁴ գուցէ մինչ քաղիցէք զորումնն և զցորեանն ընդ նմին⁵ ի բաց խլիցէք⁶: Թոյլ տուք երկոցունց⁷ աճել ի միասին մինչև ի հունձս, և ի ժամանակի հնձոց ասացից ցինձողսն. քաղեցէք նախ զորումնդ, և կապեցէք զայդ ի խրճուսն առ ի յայրել⁸, և զցորեանն ժողովեցէք ի շտեմարանս ին»:

(Մաթթէոս, ԺԳ, 24-30)

¹ ի քուն լինել մարդկան - երբ մարդիկ քնած էին
² ուստի՞ - ո՞րտեղից
³ քաղեսցուք ... ի բաց - քաղենք դեմ զցեղնք
⁴ մի - ոչ
⁵ ընդ նմին - նրա հետ
⁶ ի բաց խլիցէք - դուրս հանեք, պոկեք
⁷ երկոցունց - երկուսն էլ
⁸ առ ի յայրել - այրելու համար

ՎԱՍՆ ՏԱՄՆ ԿՈՒՄԱՆԱՅ

Յայնժամ նմանեցի արքայութիւն երկնից տասն կուսանաց, որոց առեալ¹ զլապտերս իւրեանց՝ ելին ընդ առաջ փետային և հարսին: Հինգն ի նոցանէ յիմարք էին, և հինգն՝ իմաստունք: Յիմարքն առին զլապտերսն, և ձէք ընդ իւրեանս ոչ բարձին: Իսկ իմաստունքն առին ձէք ամանովք ընդ լապտերս իւրեանց: Եւ ի յամել փետային², նիբիեցին ամենքեան և ի քուն մտին:

Եւ ի մեջ գիշերի եղև բարբառ. «Ահա փետայ գայ, արի՛ք³ ընդ առաջ նորա»: Յայնժամ յարեան ամենայն կուսանքն և կազմեցին զլապտերս իւրեանց: Ասեն յիմարքն ցիմաստունսն. «Տո՛ւք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր»: Պատասխանի ետուն իմաստունքն և ասեն. «Գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական, այլ երթա՛յք ի վաճառականս և զնեսջի՛ք ձեզ»: Իբրև նոքա զնացին զնել, եկն փետայն, և պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն, և փակեցաւ դուռնն: Յետոյ գան և այլ կուսանքն և ասեն. «Տէ՛ր, Տէ՛ր, բաց մեզ»: Նա պատասխանի ետ և ասէ. «Ամէն⁴ ասեմ ձեզ, թէ ոչ գիտեմ զձեզ: Արթո՛ւն կացեք, զի ոչ գիտեք զօրն և ոչ զժամն»:

(Մաթթէոս, ԻԵ, 1-13)

¹ որոց առեալ - որոնք վերցնելով
² ի յամել փետային - երբ որ փետան ուշացավ
³ արի՛ք - վեր կացեք
⁴ ամէն - ստույգ, ճիշտ, արդարև

1. ԱՆՑՅԱԼ ԴԵՐԲԱՅ

§ 63. Անցյալ դերբայի վերջավորությունն է *-եալ*, որը դրվում է հիմնականում անցյալ կատարյալի, մասամբ էլ՝ ներկայի հիմքի վրա:

§ 64. Անցյալ կատարյալի հիմքից կազմվում է. ա) *Ա* լծորդության թե՛ պարզ, թե՛ ածանցավոր բայերի անցյալ դերբայը՝ աղալ-աղաց-աղացեալ, գթալ-գթաց-գթացեալ, զարմանալ-զարմաց-զարմացեալ, լուանալ-լուաց-լուացեալ և այլն. բ) *Ե* լծորդության ածանցավոր բայերինը՝ անցանել-անցանցեալ, գտանել-գիտ-գտեալ, հատանել-հատ-հատեալ, տեսանել-տես-տեսեալ և այլն. գ) *Ի* լծորդության *ան* ածանց ունեցող բայերինը՝ ծնանիմ-ծին-ծնեալ, անկանիմ-անկ-անկեալ, բուսանիմ-բուս-բուսեալ, մեռանիմ-մեռ-մեռեալ, ուսանիմ-ուս-ուսեալ և այլն. դ) *ՈՒ* լծորդության թե՛ պարզ, թե՛ ածանցավոր բայերինը՝ արգելուլ-արգել-արգելեալ, թողուլ-թող-թողեալ, կիզուլ-կէզ-կիզեալ, հեծնուլ-հեծ-հեծեալ, լնուլ-լից-լցեալ և այլն:

§ 65. Թե՛ անցյալ կատարյալի և թե՛ ներկայի հիմքերից կազմվում է Ե և Ի լծորդության պարզ բայերի անցյալ դերբայը, ըստ որում Ե լծորդության բայերինը հիմնականում կազմվում է ներկայի հիմքից, իսկ Ի լծորդության բայերինը՝ հավասարապես թե՛ ներկայի, թե՛ անցյալ կատարյալի հիմքերից. օրինակ՝ հանել-հանեալ, ածել-ածեալ, սիրել-սիրեալ//սիրեցեալ, գործել-գործեալ//գործեցեալ, բազմիմ-բազմեալ//բազմեցեալ, խորհիմ-խորհեալ//խորհեցեալ, հայիմ-հայեալ//հայեցեալ և այլն:

§ 66. Ի լծորդության *չ, նչ* ածանցավոր և *ՈՒ* լծորդության *նում-չիմ* փոխանցումով բայերի անցյալ դերբայը կազմվում է այդ նույն բայերի պատճառականի անցյալ կատարյալի հիմքից, օրինակ՝ մատչիմ, պատճառականի անց. կատ. հիմք՝ մատոյց, անց. դերբայ՝ մատուցեալ, մարտնչիմ- մարտոյց-մարտուցեալ, ցասնուլ-ցասոյց-ցասուցեալ և այլն:

Բացառություն է կազմում *քաղցնուլ* բայը, որի անցյալ դերբայն է՝ *քաղցեալ*:

Վարժույթյուն 41. *Կազմել հետևյալ բայերի անցյալ դերբայը՝*

ա) փութալ, սզալ, ստանալ, սլանալ. բ) առաքել, զարդարել, արկանել, իջանել. գ) կամել(իմ), նստել(իմ), ուսանել(իմ), սնանել(իմ). դ) զենուլ, հեղուլ, ընթեռնուլ, խնուլ:

§ 67. Ենթակայական դերբայի վերջավորությունն է *ող* (կամ՝ *ող<աղ*), որը դրվում է հիմնականում անցյալ կատարյալի, մասամբ էլ՝ ներկայի հիմքի վրա:

§ 68. Անցյալ կատարյալի հիմքից կազմվում է Ա և ՈՒ լծորդության բայերի ենթակայական դերբայը. օրինակ՝ լալ- լացող, գնալ-գնացող, ցանկանալ-ցանկացող, զենուլ-զենող, արգելուլ-արգելող և այլն:

Բացառություն են կազմում *որսալ, մորալ, յուսալ, հոգալ* բայերը, որոնց ենթակայական դերբայը կարող է կազմվել նաև ներկայի հիմքից՝ *որսող, մորող, յուսող, հոգող*. սրանք սովորաբար գործածվում են իբրև գոյական:

§ 69. Որոշ բացառություններով ներկայի հիմքից կազմվում է Ե և Ի լծորդության պարզ բայերի ենթակայական դերբայը. օր.՝ զրկել-զրկող, գնել-գնող, յաղթել-յաղթող, ասել-ասացող (կամ՝ ասող), խօսիմ-խօսող, կամիմ-կամեցող (կամ՝ կամող) և այլն:

§ 70. Չուգահեռաբար թե՛ ներկայի, թե՛ անցյալ կատարյալի հիմքից կարող է կազմվել Ե և Ի լծորդության *ան* ածանցավոր բայերի ենթակայական դերբայը. օրինակ՝ տեսանել-տեսող//տեսանող, սպանանել-սպանող//սպանանող, ծնանիմ-ծնող//ծնանող, ուսանիմ-ուսող//ուսանող և այլն:

§ 71. Ի լծորդության *չ, նչ* ածանցավոր և *ՈՒ* լծորդության *նում-չիմ* փոխանցումով բայերից ենթակայական դերբայ չի կազմվում:

Վարժույթյուն 42. *Կազմել հետևյալ բայերի ենթակայական դերբայը՝*

ա) խնդալ, բարկանալ, աղալ, ստանալ. բ) շինել, հատանել, սիրել, հարցանել. գ) բազմել(իմ), շիջանել(իմ), հայել(իմ), պատերազմել(իմ). դ) առնուլ, ընթեռնուլ, հեղուլ:

2. ԺԵՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

§ 72. Գրաբարում բայի ժխտական խոնարհման ձևերը կազմվում են *ոչ* ժխտականով և *չ* մասնիկով, օրինակ՝ Հաց ոչ ուտեն (Մարկ., Լ, 3)= Հաց չեն ուտում: Ոչ եթե չկարեն առնել բարի ինչ, այլ չկամիմ (Եզնիկ, 2-րդ, Ը)=Ոչ եթե բարի բան ստեղծել չեմ կարողանում, այլ չեմ կամենում:

Արգելական հրամայականը ստանում է *մի՛* բառ-մասնիկը, որը ժխտական իմաստով կարող է դրվել նաև ապառնի ժամանակների, երբեմն էլ անորոշ դերբայի վրա. օրինակ՝ Մի՛ երդնուցու սուտ (Մատթ., Ե, 33)=Մուտ չերդվես: Չի մի՛ արհամարհեսցե գեղբարսն (Թոռն., Բ, էջ 432)=Որ չարհամարհի եղ-

բայրներին: Մի՛ հպարտանալ ի մեծութիւն սնոտի (Ա ՏԻՄ., 2, 17)=Չհպարտանալ (չպիտի հպարտանալ) սնոտի մեծութեամբ:

Ոչ ժխտականը և մի՛ արգելականը հաճախ բաժանվում են բայերից ուրիշ բառերով, օրինակ՝ Ոչ երբեմն ի կնոջ կերպարանս երև էր (Եզնիկ, 1-ին, ԻԵ))=Երբեմն կնոջ կերպարանքով չէր երևա: Չի մի՛ երբէք հարցես զբարի զոտն քո (Մատթ., Գ, 6-7)=Որ երբէք քո ոտքը չխփես քարի:

ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ

Առն միոջ էին երկու որդիք¹: Ասէ կրտսերն ի նոցանէ ցհայրն. «Հա՛յր, տո՛ւր ինձ բաժին, որ անկանի յընչիցդ»²: Եւ նա բաժանեաց նոցա զկեանսն: Եւ յետ ոչ բազում ատուրց³ ժողովեալ զամենայն կրտսեր որդոյն⁴ զնաց յաշխարհի հեռի և անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ: Եւ իբրև սպառնեաց զամենայն, եղև սով սաստիկ յաշխարհին յայնմիկ⁵, և սկսաւ ինքն չքաւորել: Եւ գնացեալ յարեցաւ ի մի ոմն ի քաղաքացոց⁶ աշխարհին այնորիկ. և յղեաց զնա յազարակ իւր արածել խոզս: Եւ ցանկայր լնուլ գորովայն իւր յեղջերէն, զոր խոզքն ուտէին, և ոչ ոք տայր նմա: Եւ եկեալ ի միտս իւր⁷ ասէ. «Քանի՛ վարձկանք իցեն ի տան հօր իմոյ հացալիցք, և ես աստ սովամահ կորնչիմ: Յարուցեալ զնացից առ հայր իմ և ասացից ցնա. Հա՛յր, մեղայ յերկինս և առաջի քո⁸, և ո՛չ և ս եմ արժանի կոչել որդի քո. արա՛ զիս իբրև զմի ի վարձկանաց քոց»: Եւ յարուցեալ եկն առ հայր իւր: Եւ մինչդեռ հեռագոյն էր, ետես զնա հայրն և զքացաւ, յարեաւ⁹ և ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցան նորա և համբուրեաց զնա: Եւ ասէ ցնա որդին. «Հա՛յր, մեղայ յերկինս և առաջի քո, ո՛չ և ս եմ արժանի կոչել որդի քո»: Ասէ հայրն ցժառայս իւր. «Վաղվաղակի հանէ՛ք զպատմուճանն առաջին և ազուցէ՛ք նմա¹⁰, և տո՛ւք¹¹ զմատանին ի ձեռս նորա և կօշիկս յոտս նորա: Եւ ածէ՛ք զեզն պարարակ, զենէք. կերիցուք և ուրախ լիցուք: Չի այս որդի իմ մեռեալ էր և եկեաց¹², կորուսեալ էր և գտաւ»: Եւ սկսան ուրախ լինել:

Եւ էր երէց որդի նորա յազարակի¹³. և մինչդեռ գայր և մերձ եղև ի տունն, լուաւ¹⁴ զձայն երգոց և զպարուց: Եւ կոչեցեալ առ ինքն զմի ի ծառայիցն՝ հարցանէր, թէ զի՞նչ իցէ այն: Եւ նա ասէ ցնա. «Չի եղբայր քո եկեալ է, և եզեն հայր քո զեզն պարարակ, զի ողջամբ ընկալաւ զնա»: Բարկացաւ և ոչ կամէր մտանել, և հայրն ելեալ արտաքս՝ աղաչէր զնա: Պատասխանի ետ և ասէ ցհայրն. «Այս քանի՛ ամբ են, զի ծառայեմ քեզ և երբէք զպատուիրանաւ քով ոչ անցի¹⁵. ու մի երբէք ոչ ետուր¹⁶ ինձ, զի ուրախ եղէց¹⁷ ընդ բարեկամս իմ: Յորժամ եկն որդիդ քո այդ, որ եկեր¹⁸ զկեանս քո ընդ պոռնիկս, զեներ դմա¹⁹ զեզն պարարակ»: Եւ ասէ ցնա. «Որդեակ, դու հանապազ ընդ իս²⁰ ես, և ամե-

նայն որ ինչ իմ է՝ քո է: Այլ ուրախ լինել և խնդալ պարտ էր, զի եղբայր քո այս մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ»:

(Ղուկաս, ԺԵ, 11-32)

¹ առն միոջ էին երկու որդիք -
² մի մարդ ուներ երկու որդի
³ յընչիցդ - քո ունեցվածքից
⁴ յետ ոչ բազում ատուրց - ոչ շատ օրերից հետո
⁵ ժողովեալ ... որդոյն - որդիներ ժողովելով
⁶ յարեցաւ ի մի ոմն ի քաղաքացոց -
քաղաքացիներից մեկի մոտ մտալ
⁷ եկեալ ի միտս իւր - խելքի գալով
⁸ մեղայ յերկինս և առաջի քո -
մեղավոր եմ երկնքի և քո առջև
⁹ յարեաւ - վեր կացալ

¹⁰ ազուցէ՛ք նմա - հագցրէ՛ք նրան
¹¹ տո՛ւք - տվէ՛ք (հագցրէ՛ք)
¹² եկեաց - կենդանացալ
¹³ յազարակի - ազարակում
¹⁴ լուաւ - լսեց
¹⁵ զպատուիրանաւ քով ոչ անցի -
քո պատվերից դուրս չեկա
¹⁶ ոչ ետուր - չտվեցիր
¹⁷ եղէց - լինեմ
¹⁸ եկեր - կերալ
¹⁹ դմա - դրան, դրա համար
²⁰ ընդ իս - ինձ հետ

Բ. ՀՈՒՆՎՈՒՄ

ԳԱՍ ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԳ

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈՒՆՎՈՒՄ

§ 73. Գրաբարում հոլովվում են գոյական անունները, դերանունները, անձականները, թվականները, ինչպես նաև անորոշ, անցյալ և ենթակայական դերբայները:

§ 74. Գրաբարն ունի վեց հոլով՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական և գործիական: Ներգոյական հոլովի իմաստը դրսևորվում է տրական ու հայցական հոլովներով և *ի* նախդրով (տե՛ս § 90):

§ 75. Անունները հոլովվում են համապատասխան հոլովիչներով, որոնք գործածվում են թեք հոլովներում և ցույց են տալիս հոլովումը: Գրաբարում հոլովիչները հինգն են՝ *ա, ե, ի, ո, ու*:

1. ՊԱՐՉ ԵՎ ԽԱՌՆ ՀՈՒՆՎՈՒՄ

§ 76. Գրաբարում անունները հոլովվում են մեկ կամ երկու հոլովիչով: Ըստ այդմ հոլովումը լինում է պարզ և խառն:

§ 77. Պարզ հոլովման դեպքում բառը եզակի և հոգնակի թվի բոլոր թեք հոլովներում ունենում է մեկ հոլովիչ: Գրաբարն ունի հինգ պարզ հոլովում՝ *Ա, Ե, Ի, Ո, ՈՒ*:

Խառն հոլովման դեպքում բառն ունենում է երկու հոլովիչ, որոնցից մեկը հանդես է գալիս եզակի սեռական, տրական և բացառական հոլովներում, իսկ մյուսը՝ եզակի գործիականում և հոգնակի թվի բոլոր թեք հոլովներում:

Գրաբարն ունի երկու խառն հոլովում՝ *Ի-Ա, Ո-Ա*:

Այսպիսով, գրաբարում կա յոթ հոլովում՝ *Ա, Ե, Ի, Ո, ՈՒ, Ի-Ա, Ո-Ա*:

Գրաբարում, եթե հաշվի չառնենք մի քանի դեպքեր, ապա որոշակի կանոններ չկան իմանալու համար, թե որ բառը որ հոլովմանն է պատկանում: Գրա համար պետք է դիմել գրաբարի բառարաններին, որտեղ ամեն մի հոլովվող անվան դիմաց միշտ տրվում են նրա եզակի և հոգնակի սեռական կամ եզակի սեռական և գործիական հոլովածները:

2. ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԹԵՔՈՒՄ

§ 78. Անունները հոլովվում են կամ արտաքին, կամ ներքին թեքմամբ:

Ծանոթություն. Արտաքին ու ներքին թեքում անվանումներից բացի, գրաբարի դասագրքերում գործածվում են այլ անվանումներ՝ ձայնավոր և բաղաձայն, վերջադրական և ներդրական, հետմասնակավոր և միջմասնակավոր հոլովումներ:

Արտաքին թեքման դեպքում հոլովիչը դրվում է բառի վերջում, օրինակ՝ ձայն *-ի*, գանձ *-ու*, արմատ *-ոյ*: Ներքին թեքման դեպքում հոլովիչը դրվում է բառի վերջին բաղաձայնից առաջ, օրինակ՝ գագաթն *- գագաթան*, աստղ *- աստեղ*, հարսն *- հարսին*:

Ի, Ո, ՈՒ պարզ և *Ո-Ա* խառն հոլովումներն ունեն միայն արտաքին, *Ե* պարզ հոլովումը՝ միայն ներքին, իսկ *Ա* պարզ և *Ի-Ա* խառն հոլովումները՝ և՛ արտաքին, և՛ ներքին թեքում:

3. ՀՈՒՆՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

§ 79. Եզակի ուղղականը բառի ուղիղ, սկզբնական ձևն է, օրինակ՝ տիտան, սիրտ, արմատ, ծով, ձուկ, գառն, ոսկր, աստղ, նահանգ, պատանի:

§ 80. Հոգնակի ուղղականը կազմվում է եզակի ուղղականից՝ *ք* հոլովա-

կերտ մասնիկով, օրինակ՝ տիտանք, սիրտք, արմատք, ծովք, նահանգք, պատանիք:

Ներքին թեքման ենթարկվող այն բառերը, որոնք վերջանում են (ը)ն, (ը)ր, (ը)ղ բաղաձայններով, հոգնակի ուղղականում այդ բաղաձայններից առաջ ստանում են *ու, ի, ք* ձայնավորները, ըստ որում *ն*-ից առաջ՝ *ու* կամ *ի*, իսկ *ր*-ից և *ղ*-ից առաջ՝ *ք*, օրինակ, ձուկն *- ձկունք*, գառն *- գառինք*, ոսկր *- ոսկերք*, աստղ *- աստեղք*:

Գրաբարում կան *ք* մասնիկով կազմված բառեր, որոնք համապատասխան եզակի ձև չունեն և կոչվում են անեզակյան անուններ, օրինակ՝ աչք, բարք, կառք, խելք, չարիք, զարմանք, Հայք, Վիրք, Քուշանք և այլն: Անեզակյան բառերը հոլովվում են հոգնակի թվով և իմաստով ըմբռնվում են որպես եզակի կամ հոգնակի:

Ծանոթություն. Գրաբարում գործածվում են հոգնակիություն նշանակող այլ կարգի մասնիկներ, որոնք դրվելով մի շարք բառերի վրա, արտահայտում են հավաքական իմաստ:

Հավաքական-հոգնակներտ մասնիկներն են՝ ա) *-ական* (գորական (=զինվորներ), գուսանական, բ) *-ան* ձիան, իշան կամ իշանք (=էշեր). գ) *-անի*՝ աւազանի, երիցանի, ազատանի, նամականի, դ) *-եան* նախարարեան, բերդեան, թղթեան, մոզեան, խոզեան (=խոզեր), ե) *-եսր*, *-եր*՝ վանեար/վաներ (=վանքեր), բանեար (=խոսքեր, բանավեճ), զ) *-իկ*՝ մարդիկ, է) *-նեսր*՝ նսկնեար (=նավակներ), բարձկնեար (=բարձիկներ), ը) *-ոտի*՝ ոսկրոտի (=ոսկրներ), փորոտի, թ) *-որեսայ*, *որայ*՝ արտորեսայ/արտորայ (=արտեր), վանորեսայ/վանորայ (=վանքեր), ժ) *-տի*՝ մանկտի (=մանուկներ):

§ 81. Եզակի հայցականը ձևով նման է եզակի ուղղականին, իսկ հոգնակի հայցականը կազմվում է հոգնակի ուղղականից՝ *ք*-ն փոխարինելով *ս* հոլովակերտ մասնիկով, օրինակ՝ սիրտք *- սիրտս*, ձկունք *- ձկունս*, աստեղք *- աստեղս*:

Որոշյալ առման դեպքում հայցական հոլովը սկզբից ստանում է *զ* նախդիրը՝ զտղայ *-* զտղայս:

§ 82. Եզակի սեռականը կազմվում է եզակի ուղղականից:

Արտաքին թեքման դեպքում եզակի սեռականը ստանում է *ի, ու, ո, ա* հոլովիչները, ընդ որում *ո* և *ա* հոլովիչների վրա ավելանում է նաև *յ*, օրինակ՝ սիրտ *- սրտի*, նահանգ *- նահանգի*, ծով *- ծովու*, արմատ *- արմատոյ*, պատանի *- պատանոյ*, տիտան *- տիտանայ*:

Ներքին թեքման դեպքում եզակի սեռականը բառի վերջին բաղաձայնից (ն, ր, ղ) առաջ ստանում է *ա, ի, ք* հոլովիչները, ըստ որում *ն*-ից առաջ՝ *ա* կամ *ի*, իսկ *ր*-ից և *ղ*-ից առաջ՝ *ք*, օրինակ, ձուկն *- ձկան*, գառն *- գառին*, ոսկր *- ոսկեր*, աստղ *- աստեղ*:

§ 83. Հոգնակի սեռականը կազմվում է եզակի սեռականից՝ *g* հոլովակերտ մասնիկով, որից առաջ բառավերջի *յ*-ն ընկնում է, օրինակ՝ սրտի-սրտից, ծովու-ծովուց, ձկան-ձկանց, ոսկեր-ոսկերց, արմատոյ-արմատոց, տիտանայ-տիտանաց:

Խառն հոլովումների դեպքում եզակի սեռականի *ի* և *ո* հոլովիչները հոգնակի սեռականում փոխարինվում են *ա* հոլովիչով՝ նահանգի - նահանգաց, գառին- գառանց, պատանոյ - պատանեաց:

§ 84. Եզակի տրականը հիմնականում կազմվում է եզակի սեռականի նման: Տարբերությունն այն է, որ *Ո-Մ* խառն հոլովման մի քանի բառեր եզակի տրականում *ոյ* վերջավորությունից բացի, ունենում են նաև *ոջ* վերջավորությունը, օրինակ՝ տեղոյ կամ տեղոջ, այգոյ կամ այգոջ: Բացի այդ, *Ո* հոլովման որոշ անուններ եզակի տրականում ստանում են *ում* հոլովակերտ մասնիկը՝ հին-հնում, աջ-աջում, իմ-իմում, մի-միում և այլն:

§ 85. Հոգնակի տրականը ձևով նման է հոգնակի սեռականին:

§ 86. Բացառական հոլովը սկզբից ունենում է սովորաբար ի նախդիրը (այլև՝ գ, առ, ընդ, ըստ նախդիրների), որը ձայնավորով սկսվող բառից առաջ դառնում է *յ* և գրվում բառին միացած:

Եզակի բացառականը կազմվում է եզակի տրականից: Արտաքին թեքման *Ա, Ո և Ո-Մ* հոլովումների դեպքում եզակի բացառականը կազմվում է եզակի տրականի վրա սկզբից *ի* նախդիր ավելանալով՝ տիտանայ-ի տիտանայ, արմատոյ-յարմատոյ, պատանոյ-ի պատանոյ:

Մյուս հոլովումների դեպքում եզակի բացառականը սկզբից ունենում է *ի* նախդիրը, իսկ վերջից՝ *է* հոլովակերտ մասնիկը, ընդ որում *է*-ից առաջ *ի* և *ու* հոլովիչները սղվում են՝ ձկան-ի ձկանէ, աստեղ-յաստեղէ, սրտի-ի սրտէ, նահանգ-ի նահանգէ, ծովու-ի ծովէ:

ՈՒ հոլովիչը որոշ դեպքերում պահպանվում է՝ ի խրատուէ, ի զարդուէ:

Ծանոթություն. Եզակի տրականում *ոջ*-ով և *ում*-ով վերջացող բառերը եզակի բացառականում ստանում են *է* տեղոջ-ի տեղոջէ, աջում-յաջմէ:

§ 87. Հոգնակի բացառականը կազմվում է հոգնակի տրականի վրա սկզբից *ի* նախդիր ավելանալով՝ սրտից-ի սրտից, ծովուց-ի ծովուց, արմատոց-յարմատոց, տիտանաց-ի տիտանաց, ձկանց-ի ձկանց, աստեղց-յաստեղց, նահանգաց-ի նահանգաց, պատանեաց-ի պատանեաց:

§ 88. Եզակի գործիականը կազմվում է եզակի սեռականից՝ *ւ, վ, բ* հոլովակերտ մասնիկներով: Եզակի սեռականում *ա* և *ո* հոլովիչներից հետո եղած *յ*-ն ընկնում է:

ւ-ը դրվում է *ա* և *ի* հոլովիչներից հետո՝ տիտանաւ, սրտիւ, *վ*-ն՝ *ո* հոլովիչից հետո՝ արմատով, *բ*-ն՝ *ն, ղ* բաղաձայններով վերջացող հիմքի վրա, ընդ որում

բ-ից առաջ *ն*-ն դառնում է *մ*՝ ձկան-ձկամբ, ոսկեր-ոսկերբ, աստեղ-աստեղբ:

ՈՒ հոլովման դեպքում եզակի գործիականը որևէ հոլովակերտ մասնիկ չի ստանում. սեռ.՝ ծովու, գործ.՝ ծովու:

Խառն հոլովումների դեպքում *ի* և *ո* հոլովիչները փոխարինվում են *ա*-ով՝ նահանգի-նահանգաւ, գառին-գառամբ, պատանոյ-պատանեաւ:

§ 89. Հոգնակի գործիականը կազմվում է եզակի գործիականից՝ *ք* հոլովակերտ մասնիկով՝ սրտիւ-սրտիւք, արմատով-արմատովք, ծովու-ծովուք, ձկամբ-ձկամքք, տիտանաւ-տիտանաւք(օք), աստեղբ-աստեղքք, պատանեաւ-պատանեաւք(օք):

§ 90. Եզակի ներգոյականի իմաստն արտահայտվում է *ի(յ)* նախդրով և եզակի տրականով՝ ի նահանգի=նահանգում, ի տան, ի ծովու, ի դստեր, յաստեղ:

Արտաքին թեքման *Ա, Ո և Ո-Մ* հոլովման բառերի եզակի ներգոյականի իմաստը դրսևորվում է *ի(յ)* նախդրով և եզակի անորոշ հայցականով՝ ի տիտան=տիտանի մեջ, ի գետ, ի փոշի:

Ծանոթություն. 1. *Ո* հոլովման մի շարք բառեր եզակի ներգոյականի իմաստն արտահայտելու համար ընդունում են *ի* հոլովիչը՝ ի թղթի=թղթում, ի տղմի, յերագի:

Հոգնակի ներգոյականի իմաստն արտահայտվում է *ի(յ)* նախդրով և հոգնակի անորոշ հայցականով՝ ի տունս=տներում, ի ծովս, յագարակս, ի պատանիս:

Գրաբարում հատուկ անունների ներգոյականի իմաստը մեծ մասամբ դրսևորվում է *ի(յ)* նախդրով և հայցական հոլովով՝ ի Տարօն, յԱրշակ, ի Ծովս:

§ 91. Ներգոյականի իմաստն արտահայտող *ի(յ)* նախդրով տրականը և հայցականը գրաբարի որոշ քերականներ համարել են առանձին հոլով՝ ներգոյական: Բացի ներգոյականից, գրաբարի հին քերականներից ոմանք ընդունել են նաև պատմական, պարառական և կոչական հոլովներ, որոնք, սակայն, հոլովական հատուկ վերջավորություններ չունեն:

Պատմական հոլով էր համարվում բացառականի հետ *զ* նախդրի գործածությունը, որն արտահայտում է *մասին* կապի իմաստը՝ զՄուշեղէ=Մուշեղի մասին, զՈցցանէ=Որանց մասին:

Պարառական հոլով էր համարվում գործիականի հետ *զ* նախդրի գործածությունը, որն արտահայտում է *շուրջ* կապի իմաստը՝ զտամբ=տան շուրջը, զպարսպաք (օք)=պարիսպների շուրջը:

Կոչական հոլով էր համարվում ուղղականի հետ *ո՛վ* միջարկության գործածությունը՝ ո՛վ կիմ, ո՛վ մարդիկ, ո՛վ փիլիսոփայք:

Վարժություն 43. *Կազմել հետևյալ բառերի հոգնակի ուղղականն ու հայ-
ցականը:*

ա) Արտաքին թեքում՝ ամպ, ժամանակ, պատանի, այծ, գերի, արքայ, զեն, ձայն, զետ, զարդ, սահման:

բ) Ներքին թեքում՝ Ա հոլովում - ատամն (ատամունք), շուրթն, ուսումն. Ե - դուստր, տարր. անզղ. Ի-Ա - անձն (անձինք), գառն, դաշն:

Վարժություն 44. *Կազմել հետևյալ բառերի եզակի և հոգնակի սեռա-
կանն ու տրականը:*

ա) Արտաքին թեքում՝ Ա- Արշակ, Հայկ, Տիգրան (միայն եզակի). Ի- հաց, նետ, սիրտ. Ո- թռչուն, արծաթ, խոտ. ՈՒ- զանձ, կաքառ, առեւծ. Ի-Ա- ագա-
րակ, հրաման, պատերազմ. Ո-Ա- պատանի (պատանույ-պատանեաց), կեն-
դանի, աղաւնի:

բ) Ներքին թեքում՝ Ա- ձուկն, գագաթն, հարցումն. Ե-աստղ, ոսկր, վագր. Ի-Ա- մասն, հարսն, բեռն:

Վարժություն 45. *Կազմել հետևյալ բառերի եզակի և հոգնակի բացասականը:*

ա) Արտաքին թեքում՝ Ա- Վարդան, Երասխ, Սահակ (միայն եզակի). Ի-
բախտ, խորշ, սրահ. Ո- արջառ, բոյս, հողմ. ՈՒ- դաս, ճակատ, հաւ. Ի-Ա- նա-
խարար, գաւառ, քաղաք. Ո-Ա- թշնամի, գարի, թզենի:

բ) Ներքին թեքում՝ Ա- քաջութիւն, արիւն, սկիզբն. Ե-ազդր, կոճղ, եզր. Ի-Ա-
գառն, հարսն, մատն:

Վարժություն 46. *Կազմել հետևյալ բառերի եզակի և հոգնակի գործիականը:*

ա) Արտաքին թեքում՝ Ա- Արամ, Վռամ, Անահիտ (միայն եզակի). Ի-
փայտ, ծառայ, բազէ. Ո- գործ, ճաշ, սուր. ՈՒ- նախանձ, վրէժ, ուղտ. Ի-Ա-
դաշտ, գագան, կտակ. Ո-Ա- ապակի, եղևնի, հայրենի:

բ) Ներքին թեքում՝ Ա- տուն, երդումն, բազմութիւն. Ե- համր, ուստր, շիզդ
(=կոճակ, զարդ). Ի-Ա - ափն, եզն, ողն:

Վարժություն 47. *Հետևյալ բառերը դնել տրական ու հայցական հոլովներ-
ով և ի(յ) նախդրով՝ եզակի և հոգնակի ներգոյականի նշանակությամբ:*

ա) Արտաքին թեքում՝ Ի- բանտ, ճառագայթ, որովայն. Ո- զետ, ջուր, գուր. ՈՒ- ծով, ցուլ, առաւօտ. Ի-Ա- գերեզման, ճանապարհ, աշտարակ. Ո-Ա- այգի
(յայգուջ), կղզի, զինի:

բ) Ներքին թեքում՝ Ա- շարժումն, կայծակն, եղեգն. Ե- վագր, արկղ, դուստր. Ի-Ա- մասն, անձն, դաշն:

Կ ա ն ն

Եթե գրաբարում գոյականն ունի նախադաս լրացում, նրա նախդիր- ները սովորաբար դրվում են վերջինիս վրա, օրինակ՝ Ատրուշանս շինեին ի բագում տեղիս (Բուգ., 4-րդ, ԾԹ): Թողոյր գրարի և գրնիկ ժառանգու- թիւն նախնեաց իւրոց (Փարպ., 1-ին , Է):

Վարժություն 48. Թարգմանել, որոշել գոյական անունների հոլովն ու թիվը:

Ամենայն գետք և վտակք ի ծով մտանեն, և ծով ոչ լնու: Որպէս հուր զի այ- րէ զանտառ, որպէս բոց որ կիգու զլերինս: Չի ոչ երբէք տեսաք՝ թէ կովք էշս ծնան, և էշքս եզինս, և ոչ գայլք մաքիս, և ոչ մաքիք աղուէսս, և ոչ առիւծք ձիս, և ոչ ձիք օձս: Հրամայէ զահմանս գիւղից և ագարակաց որոշել: Եւ ոչ կամեցաւ արքայն Հայոց ունկնդիր լինել բանիցն պատգամաւորացն թագա- տրին Պարսից Շապիոյ: Մի՞թէ քաղիցեն ի փշոց խաղող, կամ ի տատասկէ թուգ: Հրաման տայր այնուհետև արքայն Վրաց՝ ի կողմանց կողմանց և ի խառնադանջ գաւառաց իշխանութեան իւրոյ ժողովել մանկունս: Առաքէ հրեշտակս առ Արայն գեղեցիկ՝ ընծայիւք և պատարագօք, բագում աղաչա- նօք և խոստամմք պարգևաց: Կերակրեցի զնոսս հացիւ և ջրով: Յաւանս և յագարակս շինէր եկեղեցիս: Յանդիման եղև թագաւորին Խոսրովու յՈւտի գաւառի, ի Խաղխաղ քաղաքի, ի ձմերոցս արքայութեան Հայոց:

ՅԱՂԱԳՍ ՔԱՂԱՔԱՅՆ ՆԱՅՈՑ ԱԲԵՐԵԼՈՅ

Եւ յետ այտորիկ¹ եկին ի քաղաքն մեծ յԱրտաշատ, և առին զնա, և կործա- նեցին զպարիսպ նորա. առին անտի զգանձս մթերեալս՝ որ կային, և գերեցին զամենայն քաղաքն: Եւ խաղացուցին ի յԱրտաշատ ի քաղաքէ ինն հազար տուն երդ Հրեայս, զոր ածեալն էր գերի Տիգրանայ արքայի Արշակունւոյ² յերկրէն Պաղեստինացոց. և քառասուն հազար երդ Հայ, զոր յԱրտաշատ քա- ղաքէ խաղացուցին: Եւ զամենայն շինուած քաղաքին հրձիգ արարին զփայ- տակերտն, և զքարակերտն քանդեցին. զպարիսպն ըստ նմին օրինակի և զա- մենայն շինուած քաղաքին մինչև ի հիմունսն ապականեցին, և ոչ թողին մի, և ոչ թողին բնաւ քար ի քարի վերայ. անմարդի և թափուր յամենայն բնակ- չաց իւրոց կացուցանեին:

Առնուին և զՎաղարշապատ քաղաք. քանդեին բրէին զքաղաքն ի հիմանց տապալեին, և խաղացուցանեին յայնմ և ս քաղաքէ³ իննստասն երդս հա-

զար⁴: Ընդ ամենայն քաղաքս⁵ ոչ թողին ամենևին շինած. զի զամենայն տա- պալեին, քակեալ քանդեին. և ընդ ամենայն երկիրն ասպատակ սփռեալ՝ զա- մենայն այր ի չափ հասեալ կոտորեին, զկանայս և զորդիս ի գերութիւն վա- րեին. և զբերդս ամենայն թագաւորին Հայոց կալան⁶, և լցեալ բագում ամբա- րօք՝ բերդակալս թողուին: Առնուին և զմեծ քաղաքն զԵրուանդաշատ, և խա- ղացուցանեին անտի երդս քսան հազար Հայ, և երդս երեսուն հազար Հրեայ. և զքաղաքն ի հիմանց տապալեալ բրեալ յատակեին: Ապա առնուին և զքա- ղաքն Բագրևանդայ Չարեհաւան, և խաղացուցանեին անտի հինգ հազար երդ Հայ, և ութ հազար երդ Հրեայ. և զքաղաքն ի հիմանց տապալեին յատա- կեին: Առնուին և զքաղաքն մեծ Չարիշատ՝ որ էր ի գաւառին յԱրոյհովտի, չո- րեքտասան հազար⁷ երդ Հրեայ, և տասն հազար երդ Հայս. և զնա ի հիմանց քանդեալ ապականեին: Առին և զամուր քաղաքն Վան, որ է ի գաւառին Տոգ- բայ. և հրձիգ արարեալ, քակեին զհիմունս նորա. և խաղացուցանեին անտի երդս հինգ հազար Հայ, և ութ և տասն հազար երդս Հրեայս:

(Փաստոս Բուզանդ. 4-րդ, ԾԵ)

- ¹ յետ այտորիկ - սրանից հետո, այնուհետև
- ² ածեալն էր գերի Տիգրանայ արքայի Արշակունւոյ - Արշակունի Տիգրան թագավորը գերի էր բերել
- ³ խաղացուցանեին յայնմ և ս քաղաքէ - այն քաղաքից էլ գերի տարան
- ⁴ փխ. իննստասն հազար երդս - տասնինը հազար տուն
- ⁵ ընդ ամենայն քաղաքս - ամբողջ քաղաքում
- ⁶ կալան - առան
- ⁷ չորեքտասան հազար - տասնչորս հազար

4. ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՅԱԿԱՆ ԵՎ ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

§ 92. Գրաբարում կան բառեր, որոնց զուգահեռաբար հոլովվում են մեկից ավելի հոլովմամբ, օրինակ՝ *զանձ-զանձու//զանձի, զանձից. խաղ-խաղոս//խաղոյ, խաղով//խաղի, խաղից, կամ եզակիում հոլովվում են մի հոլովի- չով, իսկ հոգնակիում՝ այլ հոլովիչով՝ քար-քարի, քարի//քարանց, քարամբք, կամ առանձին հոլովներում ունենում են տարբեր ձևեր՝ աղբիւր-աղբերք//աղ- բերաւ, աղբերքք//աղբերօք:*

Կան բառեր էլ, որոնք հաճախ հոլովվում են այլ հոլովմամբ, երբ հանդես են գալիս որպես բարդ կամ ածանցավոր բառերի վերջին բաղադրիչ, օրինակ՝ սէր-սիրոյ, բայց՝ մարդասէր-մարդասիրի, մարդասիրաց, գործ-գործոյ, բայց՝ անգործ-անգործի, անգործից, զէն-զինու, բայց՝ պատենազէն-պատենազինի, պատենազինաց և այլն:

Հոլովումների մեջ նկատվող այդ կարգի բնորոշ փոխանցումները ցույց կտրվեն հոլովման համապատասխան բաժիններում:

§ 93. Գրաբարում կան գոյական և ածական անուններ, որոնք չեն հոլովվում: Գրանցից են՝

ա) *Իմ* վերջածանցով կազմված ձայն նշանակող բառերը՝ գոչին, թնդին, դրդին, հնչին, շառաչին և այլն:

բ) Կրկնակի փոքրացուցիչ *իկ* ածանց ունեցող բառերը՝ պատանեկիկ, նաակիկ և այլն:

գ) Մի շարք այլ բառեր՝ արտօսք, ծունր, կազմ, հաճոյ, գոհ, ձիգ, դոյզն (=չնչին), հաշտ և այլն:

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

ԴԱՍ ՏԱՄԵՉՈՐՄԵՐՈՐԳ

1. ՊԱՐԶ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

Ա ԱՐՏԱՔԻՆ ՀՈԼՈՎՈՒՄ

§ 94. Հոլովման պատկերն է՝

	Եզակի	Նոգնակի
ՈՒ.	տիտան	տիտանք
Հ.	(գ) տիտան	(գ) տիտանս
Ս. Տ.	տիտանայ	տիտանաց
Բ.	ի տիտանայ	ի տիտանաց
Գ.	տիտանաւ	տիտանաւք(օք)

§ 95. Այսպես հոլովվում են.

ա) Անհոգնական և անեզական հատուկ անունների մեծ մասը՝ Ադամ, Անահիտ (Անահտայ), Արամ, Արշակ, Բէլ, Երասխ, Երուանդ, Հայկ, Հռովմ, Մեսրոպ, Սահակ, Վարդան, Տիրան, Տրդատ, Ալանք, Քուշանք, Գուգարք, Ծովք, Հոնք, Մարք, Մոկք, Վիրք (Վրաց), Տաշիրք և այլն:

Հոլովման օրինակներ.

ՈՒ.	Տրդատ	Ալանք
Հ.	(գ)Տրդատ	(գ)Ալանս

Ս. Տ.	Տրդատայ	Ալանաց
Բ.	ի Տրդատայ	յԱլանաց
Գ.	Տրդատաւ	Ալանաւք(օք)

բ) Որոշ բացառություններով *աս, էաս, էոս, էս, իոս, իս, ոս* հնչյունակապակցություններով վերջավորվող հատուկ անունները, որոնց *աս, ոս, ս* բաղադրիչները թեք հոլովներում դուրս են ընկնում, իսկ *է* և *ի* ձայնավորները *ա* հոլովիչից առաջ վերածվում են *ե-ի*՝ Դուկաս-Դուկայ, Անդրէաս-Անդրեայ, Տիմոթէոս-Տիմոթեայ, Հերակլէս-Հերակլեայ, Տիրեղիոս-Տիրեղեայ, Արտեմիս-Արտեմեայ, Հոմերոս-Հոմերայ և այլն:

Ծանոթություն. Ոս-ով վերջավորվող մի քանի հատուկ անուններ սեռական և տրական հոլովներում ստանում են *եսայ*՝ Փաւստոս-Փաւստեայ, Կաղմոս-Կաղմեայ, իսկ *էս*-ով վերջավորվողները՝ *այ*՝ Վրթանէս-Վրթանայ:

գ) *Ա*-ով և *իս*-ով վերջավորվող հատուկ անունները, որոնց սեռական և տրական հոլովները կազմվում են ուղղականին *յ* ավելանալով՝ Աննա-Աննայ, Յուդա-Յուդայ, Ասիա-Ասիայ, Մակեդոնիա-Մակեդոնիայ և այլն:

Ծանոթություն. *Իս*-ով վերջավորվող մի քանի հատուկ անունների *ի*-ն թեք հոլովներում դառնում է *ե*՝ Գալիլիա-Գալիլեայ, Կեսարիա-Կեսարեայ կամ Կեսարիայ, Մամարիա-Մամարեայ կամ Մամարիայ:

դ) *է*-ով և *ի*-ով վերջավորվող հատուկ անունները, որոնց *է*-ն և *ի*-ն *ա* հոլովիչից առաջ վերածվում են *ե-ի*՝ Հոփսիմէ-Հոփսիմեայ, Գայիանէ-Գայիանեայ, Վահէ-Վահեայ, Եսայի-Եսայեայ և այլն:

Վարժություն 49. Հոլովել Ա արտաքին հոլովմամբ հետևյալ բառերը՝

Անակ, Պապ, Մաժակ, Վաղարշակ, Շամիրամ, Փառանձեմ, Ագրիպպաս, Աբիլլէս, Եղիա, Հեղինէ, Մծբին, Միջագետք, Քուշանք:

Վարժություն 50. Թարգմանել, որոշել Ա արտաքին հոլովման բառերի հոլովը:

Աճապարէին հասանել ի բանակն Երուանդայ: Ապստամբեցին յԱրշակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Արձախայ...: Ձխաղաղութիւն խնդրէր արքայն Ալանաց: Իսկ նախարարքն մեր խնդրէին ի Վռամայ այլ աթոռակալ: Առաքէ ի Հայս հանդերձ մեծաւն Վրթանաւ: Ի Վաղարշայ առնու զթագատրութիւնն Խոսրով որդի նորա: Գայր հասանէր դեսպան ի թագատրէն Վրաց Վախտանգայ: Տայ ի ժառանգութիւն Կաղմեայ՝ որդոյ Արամանեկայ: Խաղա՛ գնա՛ դու յերկիրն Քուշանաց: Ինքն մնաց ժամանակս ինչ յԱսիա:

Վարժություն 51. Թարգմանել գրաբար:

Հղում են ողջուն Հայոց Վարդան սպարապետին: Շապուհ արքան կանչեց Արշակ արքային: Ստեպ-ստեպ պատգամավորներ էին գալիս Պապի կողմից Հայաստան: Սահակի և Մեսրոպի հետ միասին (հանդերձ) շրջում էր ավաններում և շեներում: Հրամայում է Ալաններին ավերել գեղեցիկ դաստակերտները: Գերիներին կթողնես Շոփքում:

ԳԱՐՈՒՆ

Չմեռն էանց, անձրևք անցին և գնացեալ մեկնեցան: Ճաղիկք երեւեցան յերկրի մերում. ժամանակ եհաս յատանելոյ¹. ձայն տատրակի լսելի եղև² յերկրի մերում. թզենի արձակեաց զբողբոջ իւր. որթք մեր ծաղկեալք ետուն³ զհոտս իւրեանց: Արի՛ եկ, մերձատր իմ, գեղեցիկ իմ, աղանի իմ: ... Երև եցո՞ ինձ գերեսս քո և լսելի արա ինձ զբարբառ քո. զի բարբառ քո քաղցր է և տեպիլ քո գեղեցիկ:

(Երգ երգոց, Բ, 11-14)

- ¹ յատանելոյ-էտելու
- ² եղև-եղավ
- ³ ետուն-տվին
- ⁴ երև եցո՞-ցույց տուր

ՈՐՈՋ ԱՂՔԱՏԻՆ

Արք երկու էին ի քաղաքի միում¹, մին մեծատուն և միւսն աղքատ: Եւ մեծատանն էին² հօտք և անդեայք բազում յոյժ, և աղքատին և ոչ ինչ, բայց որոջ մի փոքր. և որոջն հաստատեալ էր ընդ մնա³ և ընդ որդիս նորա ի միասին. ի հացէ նորա ուտէր և ի բաժակէ նորա ըմպէր և ի ծոց նորա ննջէր, և էր նորա իբրև զդուստր: Եւ եկն⁴ անցատր առ այրն մեծատուն և խնայեաց մեծատունն առնուլ ի հօտից իւրոց և յանդէոց իւրոց. և էառ զորոջ աղքատին և արար⁵ առնն եկելոյ⁶ կերակուր:

(Բ Թագաորութեանց, ԺԲ, 1-4)

- ¹ արք երկու էին ի քաղաքի միում-մի քաղաքում երկու մարդ կային
- ² մեծատանն էին-հարուստն ուներ
- ³ ընդ մնա-նրա հետ
- ⁴ եկն-եկավ
- ⁵ արար-պատրաստեց
- ⁶ առնն եկելոյ-եկամ մարդու համար

ՎԱՄՆ ՄՐՋԵԱՆ

Նմանեսցուք զոնէ մրջեանն, որ ամարայնոյն¹ պատրաստէ աշխատութեամբ զհամբարս² ձմերայնոյ: Թէպէտ և ոչ է մօտ նեղութիւն ձմերայնոյ, ոչ

ծուլանայ և ոչ հեղգայ ի պատշաճի պիտոյիցն³ նեղութեան ժամանակին. այլ մեծաւ փութով անդանդաղ տայ զանձն ի գործ և ի վաստակ⁴, մինչև ժողովեսցէ դիցէ⁵ համբարս ի շտեմարանս՝ բաւական իւրոյ դարմանիցն: Եւ զկերակուրն՝ գոր ժողովէ, ոչ ծուլութեամբ համբարէ, այլ իմաստուն և խորագէտ հնարիւք զարժան իրացն կատարէ⁶: Չհատ կամ զկորիզ իրիք⁷ յորժամ տանի ի ծակն, ընդ մէջ⁸ կտրէ և դնէ, զի մի բուսցին ի հիւթոց խոնաութեանէ, և վրիպեալ ելանիցեն ի դերև⁹ ի պիտոյից կերակրոց: Եւ դարձեալ եթէ խոնաւացին հատքն, հանէ առ եզերք մրջիւնոցին, արկանէ տարածոց¹⁰ և ցամաքեցուցանէ: Բայց ոչ եթէ հանապազ հանէ, այլ յորժամ գիտէ՝ թէ արև կայ և պարզ իցեն (օղբ) և ոչ անձրև:

(Բարսեղ Կեսարացի, Վասն վեցօրեայ արարչութեան. րե՛ս Թ-ռռն., Բ, էջ 86-87)

- ¹ ամարայնոյն-ամռանը
- ² համբարս-պաշար, պարեն
- ³ ի պատշաճից պիտոյիցն-անհրաժեշտ կարիքները հոգալու համար
- ⁴ տայ զանձն ի գործ և ի վաստակ-աշխատում է
- ⁵ դիցէ-դնի
- ⁶ զարժան իրացն կատարէ-արժանի գործ է կատարում
- ⁷ իրիք-որև է բանի
- ⁸ ընդ մէջ-մեջտեղից
- ⁹ մի... վրիպեալ ելանիցեն ի դերև-չփչանան
- ¹⁰ արկանէ տարածոց-փռում է

Ա ՆԵՐՔԻՆ ՀՈԼՈՎՈՒՄ

§ 96. Հոլովման պատկերն է՝

	Եզակի	Նոգնակի
ՈՒ.	աղեղն	աղեղունք
Հ.	(զ)աղեղն	(զ)աղեղունս
Ս.Տ.	աղեղան	աղեղանց
Բ.	յաղեղանէ	յաղեղանց
Գ.	աղեղամբ	աղեղամբք

Այս հոլովման ենթարկվող այն բառերը, որոնք վերջանում են (ը)ն բաղաձայնով, հոգնակի ուղղակականում այդ բաղաձայնից առաջ ստանում են *m* ձայնավորը: Մի քանի բառեր *m*-ի փոխարեն ստանում են *w* ձայնավորը՝ ակն-ակկանք (գոհարեղենի իմաստով), կողմն-կողմանք, ջերմն-ջերմանք, սերմն-սերմանք (այլև՝ սերմունք, սերմանիք): Հոգնակի ուղղակականում *w* է ստանում նաև *անուն* բառը՝ անուանք:

§ 97. Այս հոլովմամբ հոլովվում են՝

ա) *ն*-ով և նրան նախորդող որևէ այլ բաղաձայնով վերջացող բառերի մեծ մասը՝ ակն (հոգն. ուղղ. ակունք=աղբյուրի ակ), այծեամն (այծեման), ասեղն, ատամն, բուրգն, գազաթն, դիակն, դուռն, եղեռն, երկն, թիթեղն, կայծակն, հիմն, ձմեռն, ձուկն, ճպուռն, մուկն, նուռն, շուրթն, որդն, ունկն, ռունգն, սերմն, սկիզբն, փայլակն, քիրտն և այլն:

Ծանոթություն 1. Մի քանի բառերի մեջ *n* բաղաձայնը, *ն*-ից հեռանալով, դառնում է *ր*՝ ամառն-ամարան-ամարունք, դուռն-դրան-դրունք, մատուռն-մատրան-մատրունք, ձմեռն-ձմերան-ձմերունք, եղեռն-եղերան կամ եղեռան-եղերունք կամ եղերք:

Ծանոթություն 2. *Ունկն* բառը «ականջ» առումով գործածվելիս հոգնակի ուղղականում ունենում է *ականջք* ձևը, որը հոլովվում է *Ի-Ա* արտաքին հոլովմամբ (սեռ. տր. ականջաց, գործ. ականջաբ(օք), իսկ «կանք» առումով՝ *ունկունք*:

բ) *Ումն* ածանցով վերջացող բառերը՝ ագդումն, դեգերումն, երդումն, խոստումն, շարժումն, ուսումն և այլն: Հոլովման օրինակ՝ *հարցումն*. սեռ. տր.՝ հարցման, բաց.՝ ի հարցմանէ, գործ.՝ հարցմամբ, հոգն. ուղղ.՝ հարցմունք, սեռ. տր.՝ հարցմանց, բաց.՝ ի հարցմանց, գործ.՝ հարցմամբք:

Ումն-ով վերջացող բառերի նմանակությամբ է հոլովվում նաև *պաշտօն* բառը. սեռ. տր.՝ պաշտաման, բաց.՝ ի պաշտամանէ, գործ.՝ պաշտամամբ, հոգն. ուղղ.՝ պաշտամունք, սեռ. տր.՝ պաշտամանց, բաց.՝ ի պաշտամանց, գործ.՝ պաշտամամբք:

գ) *Ութին*-ով և *իւն*-ով վերջացող բառերը՝ բազմութիւն, գիտութիւն, իմաստութիւն, մեծութիւն, անկիւն, կորիւն, մրջիւն, ձիւն, սիւն և այլն: Այս կարգի բառերի *իւ* երկբարբառը թեք հոլովներում *ա* հոլովիչից առաջ դառնում է *ե*, իսկ *եա*-ն շեշտագրկվելով՝ եզակի բացառականում սովորաբար փոխվում է *ե*-ի: Հոլովման օրինակներ.

	Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
Ու.	քաջութիւն	քաջութիւնք	արիւն	արիւնք
Հ.	(գ)քաջութիւն	(գ)քաջութիւնս	(գ)արիւն	(գ)արիւնս
Ս. Տ.	քաջութեան	քաջութեանց	արեան	արեանց
Բ.	ի քաջութենէ	ի քաջութեանց	յարենէ	յարեանց
Գ.	քաջութեամբ	քաջութեամբք	արեամբ	արեամբք

Ութին-ով և *իւն*-ով վերջացող բառերի նմանակությամբ են հոլովվում *ունդ*, *ուստ*, *ուրդ* վերջածանցներով մի քանի բառեր՝ *ծնունդ*, *ծննդեան*, ի *ծննդենէ*, *ծննդեամբ*, հոգնակին սովորաբար *n* հոլովիչով է՝ *ծննդոց*, *ծննդովք* (այլն՝ *ծննդեամբք*). *սերունդ*, սերնդեան կամ սերնդոյ. *սնունդ*, սննդեան (այլն՝ սննդի). *փախուստ*, փախստեան (այլն՝ փախստի), փախստեամբ, *թաքուստ*,

թաքստեան (այլն՝ թաքստի), թաքստեամբ. *գալուստ*, գալստեան. *կորուստ*, կորստեան, ի կորստենէ, կորստեամբ. *ժողովուրդ*, ժողովրդեան (այլն՝ ժողովրդի կամ ժողովրդոյ), ի ժողովրդենէ, ժողովրդեամբ կամ ժողովրդով, ժողովրդեանց կամ ժողովրդոց. *խորհուրդ*, խորհրդեան (այլն՝ խորհրդոյ, խորհրդի), խորհրդեամբ, ինչպես նաև հետևյալ բառերը՝ *տեսիլ*, տեսլեան, տեսլեամբ, տեսիլք, տեսլեանց, տեսլեամբք (այլն՝ տեսլիք, տեսլաբ(եօք)), *ամիս*, ամսեան, սովորաբար լինում է *n* հոլովիչով՝ ամսոյ, ամսոց. *հանգիստ*, հանգստեան (այլն՝ հանգստի, հանգստից):

դ) *Ուն*-ով վերջացող մի քանի բառեր՝ *տուն*, տան, ի տանէ, տամբ, տունք, տանց, ի տանց, տամբք, *շուն*, շան, ի շանէ, շամբ, շունք, շանց, ի շանց, շամբք. *ձեղուն* (=առաստաղ), ձեղուան, ի ձեղուանէ, ձեղուամբ, ձեղունք, ձեղուանց, ի ձեղուանց, ձեղուամբք, *անուն*, անուան, յանուանէ, անուամբ, անուանք, անուանց, յանուանց, անուամբք:

Այս բառերի նմանակությամբ հոլովվում են *աշուն*, *գալուն* և *մահ* բառերը՝ աշնան, գարնան, մահուան, ի մահուանէ, մահուամբ, մահուանք կամ մահունք: *Մահ* բառը հոլովվում է նաև *ու* հոլովիչով՝ մահու, մահք, մահուց, մահուք:

ե) *Իկ*-ով, *ուկ*-ով վերջացող մի շարք բառեր՝ *ծաղիկ*, ծաղկան (այլն՝ ծաղկի, ծաղկոյ), ի ծաղկանէ, ծաղկունք (այլն՝ ծաղկեք), ծաղկանց (այլն՝ ծաղկաց, ծաղկոց), *աղջիկ*, աղջկան, աղջկամբ կամ աղջկաւ, աղջկունք, աղջկանց. *անդրանիկ*, անդրանկան (այլն՝ անդրանկի), անդրանիկք, անդրանկաց. *խցիկ*, խցկան (այլն՝ խցկի), խցկունք. *շնիկ*, շնկան, շնկունք. *ընչիկ* (=չնչին, աննշան ունեցվածք), ընչկան. *փոքրիկ*, փոքրկան, փոքրկունք, փոքրկանց. *մանուկ*, մանկան, մանկունք, մանկանց, հատուկ անուններից՝ *Աստղիկ*, Աստղկան. *Յուսիկ*, Յուսկան. *Սաթենիկ*, Սաթինկան. *Չուիկ*, Չրկան (Չուրկան) և այլն:

Մարդ բառը, որը պատկանում է Ո հոլովման, *իկ* մասնիկով գործածվելիս, հոլովվում է այս բառերի նմանակությամբ՝ միայն եզակի ձևով՝ մարդիկ, մարդկան, ի մարդկանէ, մարդկամբ կամ մարդկաւ:

Վարժություն 52. Հոլովել *Ա ներքին հոլովմամբ հետևյալ բառերը՝*

արեզակն, բաղեղն, եղեգն (եղեգան), թէկն կամ թեկն (թիկան), որոմն, կըն-ճիռն, սիսեռն (սիսռան), փայծաղն, երևումն, խոտորումն, կազմութիւն, զօրութիւն, սիւն:

Վարժություն 53. Թարգմանել, որոշել *Ա ներքին հոլովման բառերի հոլովն ու թիվը և կազմել դրանց եզակի և հոգնակի ուղղականը.*

Օրինակ՝ մանկանց - հոգն. սեռ., եզ. ուղղ.՝ մանուկ, հոգն. ուղղ.՝ մանկունք:

Ոչ է բարոյք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց: Յանխնայ կոտորելով՝ նախճիրս արեան գործէին: Առնոյր արար բազում ի կողմանցն Ատորոց: Տապալեաց զերինս ի հիմանէ: Դիակամբք թշնամեաց լցին զդաշտն ամենայն: Քանզի մարդոյ մարմին ի չորից տարերց խառնեալ է, ի խոնաութենէ, ի ցամաքութենէ, ի ցրտութենէ և ի ջերմութենէ: Չոքանչ Սիմովնի տազնապէր ջերմամբ մեծաւ: Չնոյն շշնջին լսէին յամենայն շրթանց: Պահանջմամբ վրիժուցն զվնասն կարճէ: Այրէին կիզուին գտունս պաշտաման կրակի:

Վարժություն 54. Թարգմանել, փակագծերի մեջ առնված բառերը դնել համապատասխան հոլովով և թվով:

Օրինակ՝ արեգակն- եզ. տր.՝ արեգական, տունք-հոգն. բաց.՝ ի տանց, կայծակունք-հոգն. գործ.՝ կայծակամբք, կողմանք - ի նախողով հոգն. հայց.՝ ի կողմանս հոգն. ներգոյականի նշանակությամբ:

Մատուցանեն երկրպագութիւն (արեգակն): Մա շինէ արան մեծ զտեղի (ծնունդ) իւրոյ: Տիեզերք ամենայն զկնի (ուսմունք) նոցա գնային: Մա էր իշխան և հրամանատար ամենայն (տէրութիւն)-ն Պարսից: Մեռանի Արայ ի պատերազմին (մանկունք)-ն Շամիրամայ: Ամենայն քաղաքն երեքէր (պաշարումն) շարժմանցն: Բարի է մարդոյ առնուլ զլուծ խոնարհութեան (մանկութիւն) իւրմէ: Սի՛ հանէք բեռինս (տունք) ձերոց: Եփեաց (կայծակունք) նորա հաց և խորովեաց միս: Չականջն (ատամունք)-ն ի բաց կտրէր: (Երդումն) հաստատենք այսօր առաջի քո: (Զրտունք) երեսաց քոց կերիցես զհաց քո: Չոհէիք զորդիս ձեր... (կողմանք) ձորոցն: Ոչ (անկիւն) ուրեք աշխարհի քարոզի: Տեսանէր (տեսիլ), զի այգի մի էր մեծ և վայելուչ: Արգելուս և փակես զամենեսեան ի հեռաւոր (օտարութիւն):

Վարժություն 55. Թարգմանել գրաբար:

Տեսնում էինք, որ տանից ծուխ էր ելնում: Ամբարտակը բոլոր կողմերից պատեցին կրով և խճով: Մուտ երդումով և սնոտի խոստումով իր մոտ (առ ինքն) կանչեց հայոց նախարարներին: Աղեղների լարերի ձայնից խլանում էին ականջները: Որսում էր ձկներ պղտոր ջրերում: Շունը շան միս չի ուտի: Օրվա (աուր) հացը քրտինքով ենք հայթայթում: Քաջությամբ կկռվենք ու կմեռնենք, բայց մեր հայրենիքը չենք տա թշնամիներին: Մեղը էր կաթում նրա (նորա) շրթունքներից: Արջը փորում էր մրջյունի բույնը, լեզվով (լեզուա) ժողովում և ուտում: Կաղնու (կաղնույ) փայտից կշիներս դռներ: Լուսինն է պատճառը արեգակի խավարման: Խարսխավոր սյուներով շինում է եկեղեցի գմբեթահարկ:

Նման է արքայութիւն երկնից առն տանուտեառն¹, որ էլ ընդ առաօտս ի վարձու ունել² մշակս յայգի իւր: Եւ արկ վարձս³ մշակացն ատուրն դահեկան⁴ և առաքեաց զնոսա յայգի իւր: Եւ ելեալ զերրորդ ժամու⁵ ետես այլս, զի կային դատարկք ի հրապարակս: Ասէ և ցնոսա. «Երթա՛յք և դուք յայգի իմ, և որ ինչ արժան իցէ՛ տաց⁶ ձեզ»: Գնացին և նոքա: Եւ դարձեալ ելեալ զվեց ժամու և զինն ժամու՝ արար նոյնպէս: Եւ զմտասաներորդ ժամու⁷ ելեալ՝ եզիտ այլս, զի կային դատարկք. ասէ և ցնոսա. «Ընդէ՞ր կայք աստ զօրս ցերեկ⁸ դատարկք»: Ասեն ցնա. «Ձի ոչ որ կալաւ զմեզ ի վարձու»: Ասէ ցնոսա. «Երթա՛յք և դուք յայգին, և որ ինչ արժան է՝ առնուցուք»:

Եւ իբրև երեկոյ եղև, ասէ տէր այգւոյն ցգաւառապետ իւր. «Կոչեա՛ զմշակս և տո՛ր նոցա վարձս՝ սկսեալ ի յետնոցն մինչև ցառաջինսն»: Իբրև եկին որք զմտասաներորդ ժամուն⁹, առին մէն մի¹⁰ դահեկան: Եկեալ և առաջինքն՝ համարէին, թէ աւելի առնուցուն, և առին մէն մի դահեկան և նոքա: Իբրև առին, տրտնջէին զտանուտեառնէն¹¹ և ասէին, թէ «Դոքա յետինքդ մի ժամ գործեցին, և հասարակորդս մեզ արարեր¹² զդոսս, որ զժանրութիւն ատուրն բարձաք և զոտօք»: Նա պատասխանի ետ միում ի նոցանէ և ասէ. «Ընկե՛ր, չզրկեմ զքեզ, ո՞չ դահեկանի միոջ սակ արկեր¹³ ընդ իս: Առ զքոյդ և երթ: Եթէ կամիմ յետնոցս տալ, որպէս և քեզ՝ եթէ չիցէ՞ ինձ իշխանութիւն¹⁴ յիմս առնել¹⁵ զինչ և կամիմ. կամ թէ ակն քո չա՞ր է, զի ես առատս եմ»: Այսպէս եղիցին յետինք առաջինք, և առաջինք՝ յետինք: զի բազումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք»:

(Մապթէոս, Ի, 1-16)

¹ առն տանուտեառն-տանուտեր մարդու, տանուտերի	որ ժամի տասնմեկի մոտերն էին գնացել
² ի վարձու ունել-վարձելու	¹⁰ մէն մի-ամեն մեկը մի, մի-մի
³ արկ վարձս-վարձ նշանակեց	¹¹ զտանուտեառնէն-տանուտերից
⁴ ատուրն դահեկան-օրը մի դահեկան	¹² հասարակորդս... արարեր-
⁵ զերրորդ ժամու-ժամը երեքի մոտ	հավասարեցրիք
⁶ տաց-կտամ	¹³ սակ արկեր-սակարկեցիք, զին դրեցիք
⁷ զմտասաներորդ ժամու-ժամը տասնմեկի մոտ	¹⁴ եթէ չիցէ՞ ինձ իշխանութիւն-մի՞թէ
⁸ զօրս ցերեկ- այս օրը ցերեկով	ես իրավունք չունեմ
⁹ որք զմտասաներորդ ժամուն-նրանք,	¹⁵ յիմս առնել- ունեցածներս
	(ունեցվածքս) անել (տնօրինել)

Ե ՀՈՒՆՎՈՒՄ

§ 98. Հոլովման պատկերն է՝

	Եզակի	Նոգնակի	Եզակի	Նոգնակի
ՈՒ.	կայսր	կայսերք	արկղ	արկեղք
Հ.	(զ)կայսր	(զ) կայսերս	(զ)արկղ	(զ)արկեղս
Ս. Տ.	կայսեր	կայսերց	արկեղ	արկեղց
		կայսերաց		արկեղաց
Բ.	ի կայսերէ	ի կայսերց	յարկեղէ	յարկեղց
		ի կայսերաց		յարկեղաց
Գ.	կայսերք	կայսերքք կամ կայսերաք(օք)	արկեղք	արկեղքք կամ արկեղաք(օք)

Ե հոլովման բառերը հոգնակի թեք հոլովներում մեծ մասամբ զուգահեռաբար հոլովվում են *ա* հոլովիչով, որը դրվում է *ե* հոլովիչով հոլովված եզակի սեռական-տրականի վրա:

§ 99. Այս հոլովման ենթարկվում են՝

ա) Այն բառերը, որոնք վերջանում են *ր*-ով կամ *ղ*-ով և նրանց նախորդող որևէ այլ բաղաձայնով՝ ազդր, դուստր, եզր, լիտր (լտեր), ոսկր, ուստր, վագր, տարր, տայգր կամ տագր, աստղ, անգղ, կոճղ, սկուտղ (սկտեղ) և այլն:

բ) *Իւր(եւր)*-ով վերջացող մի քանի բառեր՝ ալիւր (ալեւր), աղբիւր (աղբեր), եղջիւր (եղջեր), եղտիւր (եղտելւր=ճահիճ): Այս բառերը հանդես են գալիս նաև հոլովակաճ տարբեր ձևերով, օրինակ՝ *ալիւր*-սեռ. տր.՝ *ալիւրոյ*. *աղբիւր*-գործ.՝ *աղբերաւ*, հոգն. ուղղ.՝ *աղբիւրք*. *եղջիւր*-գործ.՝ *եղջիւրիւ*, հոգն. ուղղ.՝ *եղջիւրք*, գործ.՝ *եղջիւրովք*:

Վարժություն 56. Հոլովել Ե հոլովմամբ հետևյալ բառերը՝

համր, աղբիւր, ետղ (=տեղ), կողր (=ճյուղ), շիզղ (=կոճակ, գարղ), կուպր, սիկղ (=ծանրության չափ և դրամական միավոր)

Վարժություն 57. Թարգմանել, որոշել Ե հոլովման բառերի հոլովն ու թիվը՝ եզակին դարձնելով հոգնակի, իսկ հոգնակին՝ եզակի:

Քանդէին գՆանէական մեհեանն դստերն Արամագրայ ի Թիլն յաւանի: Ա-
նէք ջոր ուրախութեամբ յաղբերացն: Ունէին զգէնսն պատրաստ, ի ծագելոյ
առաւօտուն մինչև յելանել աստեղն: Մի՛ կասկածեր ի կայսերէ: Սկսանին
փոքրկանալ ստուերք տարերց երկրի: Իսկ մի ոմն ի զինուորացն մտեալ եհար
վաղերբ զգլուխ Երուանդայ: Չդուստր քո մի՛ տացես ուստեր նորա: Տայր
զչափ արկեղացն: Չի իմաստութիւն եբաց զբերան համերց: Չերբակալ առնէ
զվատշուերն յեզեր շամբին Կոզայովտի:

Կ ա ն ն

Ի նախախորը, գործածվելով անորոշ դերբայի հայցական հոլովի հետ, արտահայտում է ժամանակի իմաստ, օրինակ՝ Իսկ ի լինել մարտին հարկանի գորն Արայի (Խոր., 1-ին, ԺԵ)=Իսկ մարտի ժամանակ Արայի գորքը ջարդվում է:

Վարժություն 58. Թարգմանել գրաբար:

Կայսրի հարկահանները հասան Պարսկաստան: Առյուծը վագրից չի վախենում: Աղբյուրների ակունքները չեն փակի: Ուղտերով (ուղտուք) տանում էին զանձերով լի արկղեր: Դաշտը լի էր մարդկանց ոսկորներով: Արեգակի ծագելու ժամանակ (ի ծագել արեգական) խավարում են աստղերը: Ծնողները ուրախանում են ուստրերի և դուստրերի պարկեշտ վարքով (վարուք): Անթաղ դիակները անգղների կերակուր են լինում: Բնակվում են գետի (գետոյ) եզերքում:

Յաղագս¹ թե որպէս զդիւսն և զքաղեայսն հարցեալ Շապուհ² փորձէր զմիտս Արշակայ, և տայր³ զնա յԱնուշ բերդն...

1

Ապա կոչեաց քազատրն Պարսից Շապուհ զդիւսն և զաստեղագէտսն և զքաղեայսն. խօսէր³ ընդ նոսա և ասէր³ եթէ «Ես քազում անգամ կամեցայ սիրել զԱրշակ արքայ Հայոց, և նա համակ անարգեաց զիս: Եւ եղի ընդ նմա⁴ ուխտ խաղաղութեան, և երդուաւ ինձ յիւրեանց օրէնս քրիստոնէութեանն ի գլխատրութիւն այնմ⁵, զոր աւետարանն կոչեն. նախ այն երդմանն ստեաց: Ես նմա բեր բարիս խորհեցայ որպէս հայր որդոյ կատարել նմա, և նա ինձ չար ընդ բարոյ⁶ հատոյց: Իսկ ես կոչեցի զերիցունս եկեղեցոյն Տիսփոնի քաղաքի, և կարծեցի թէ նոքա նենգութեամբ ինչ⁷ ետուն⁸ նմա զերդումն և ետուն ինձ ստել: Եւ պատուհասեալ զնոսա որպէս զմահապարտս. իսկ ասաց ցիս

Մարի երեց գլխատրն նոցա. ասէին՝ թէ մեք արդարութեամբ տուաք⁹ նմա գեր-
դունն. բայց եթէ նա ստեաց, նոյն ատարանն ամէ¹⁰ զնա ամ ոտս ձեր: Եւ ես
նոցա ոչ լուայ. և ետու հրաման՝ եւթանասուն զնոսա ի մի գուր փողոտել, և
զուսումնակիցս նոցա հանել ընդ սուր: Չաւետարանն՝ յոր երդուաւ Արշակ
արքայ, որ է գլխատրութիւն ուսմանց նոցա քրիստոնէութեանն, կապեցի շղ-
թայիւք. և կայ ի գանձի իմում: Բայց բանքն Մարեայ երիցոյ ուշ եղեն ինձ¹¹. և
յիշեցի զի ասէր՝ թէ մի՛ սպանանէր զմեզ, այլ¹² ես գիտեմ՝ զի նոյն ատարանն
ամէ¹⁰ զԱրշակ արքայ ի ծունկս քո: Ահաւասիկ բանք արդարութեամբ կատա-
րեցան, զոր ասէրն: Բայց Արշակ արքայ Հայոց այս երեսուն ամ է Արեաց՝ զի
ետուն ընդ նմա ճակատս, և յաղթել և ոչ մի ամ ոչ կարացաք. և ելեալ է եկեալ
ուսիւք իւրովք: Բայց թէ գիտէի¹³ թէ յայսմ հետէ կայցէ յուխտին իմում և ի
հնազանդութեան բարեաւ ուխտի, մեծապէս մեծարանօք արձակէի¹⁴ զնա
խաղաղութեամբ յիւր աշխարհն»:

Իսկ քաղեայքն ետուն նմա պատասխանի և ասեն¹⁵. «Թող մեզ այսօր, և
վաղիւն պատասխանի արասցուք քեզ»: Իսկ ի վաղիւ անդր¹⁶ ժողովեցան ե-
կին ամենայն քաղեայքն և աստեղագէտքն և ասեն¹⁵ ցարքայ. «Այժմ զի ե-
կեալ է ամ քեզ թագաւորն Հայոց Արշակ, զիա՞րդ խօսի ընդ քեզ, կամ զի՞նչ
ձայն ամէ, կամ զի՞արդ ունի զանձն¹⁷»: Ասէ արքայն. «Իբրև զմի ի ծառայիցն
իմոց համարի զինքն, հող ոտից իմոց ջանայ լինել»: Ասեն նոքա. «Առ¹⁸ արա
զոր ասեմքս քեզ. պահեա դու զնոսա աստէն. և առաքեա դու դեսպանս յեր-
կիրն Հայոց, և տուր բերել անտի հող ի սահմանացն Հայոց իբրև բեռնս եր-
կուս, և կահոյր մի ջուր: Եւ հրաման տացես¹⁹ հարկանել զկէս խորանի յա-
տակ ի բերեալ հողոյն Հայոց. և առցես քեզէն զձեռանէ արքային²⁰ Հայոց Ար-
շակայ, և տարցես նախ յայն տեղ²¹ ուր բնակ իսկ իցէ հողն²². և հարցցես ցնա
բանս: Եւ դարձեալ առցես դու զձեռանէ նորա, և տարցես ի հայատակսն ի
հարեալ հողոյն²³. և լուիցես դու բանս ի նմանէ. և ապա զիտասցես դու՝ եթէ
կա՞յ յուխտի քո և պահէ՞ զդաշինս քո թէ ոչ, յետ արձակելոյ քո զնա ի Հայս:
Ապա թէ ի վերայ հայ հողոյն խիստ ինչ բարբառեսցի, զիտասջիր՝ զի որ օր
հասանէ յերկիրն Հայոց, զնոյն ձայն ամէ ընդ քեզ, և զնոյն պատերազմ նորո-
գէ ընդ քեզ, զնոյն ճակատս և զնոյն թշնամութիւն յուզէ»:

(Փաստոս Բուզանդ, 4-րդ, ԾԴ)

¹ կապի խնդիրը՝ *այնորիկ*.
արտահայտված չէ՝ *այն մասին*
² սեռական հոլովով ենթակա՝ անցյալ դերբայի
մոտ՝ հարցեալ Շապիդ-Շապուհը հարցնելով
³ անցյալ անկատարը անցյալ

¹² այլ. այստեղ՝ որովհետև
¹³ անցյալ անկատարը ըղձական
ապառնու իմաստով՝ իմանայի
¹⁴ անցյալ անկատարը պայմանական
ապառնու իմաստով՝ կարծակելի

կատարյալի իմաստով՝ բանտարկեց
⁴ եղի ընդ նմա-կապեցի՝
հաստատեցի նրա հետ
⁵ յիրեանց օրէնս քրիստոնէութեանն ի
գլխատրութիւն այն-իրենց քրիստոնեական
կրոնի գլխավոր սրբութեան վրա
⁶ ընդ նախդիրը սեռ. հողովի հետ
արտահայտում է *փոխարեն, դիմաց* իմաստը
⁷ թարմատար է, չի թարգմանվում
⁸ ետուն-տվեցին
⁹ տուաք-տվեցինք
¹⁰ ներկան ապառնու իմաստով՝ կբերի
¹¹ ուշ եղեն ինձ-միտքս եկան, հիշեցի

¹⁵ ներկան անցյալ կատարյալի
իմաստով՝ ասացին
¹⁶ ի վաղիւ անդր-հաջորդ օրը
¹⁷ զիա՞րդ ունի զանձն-ինչպէ՞ս է պահում իրեն
¹⁸ ամ. այստեղ՝ դե, հապա
¹⁹ տացես-կտաս
²⁰ առցես քեզէն զձեռանէ արքային-դու
իմքդ կբռնես արքայի ձեռքից
²¹ փխ. տեղի
²² ուր բնակ իսկ իցէ հողն-ուր բուն իսկ հողն է
²³ ի հայատակսն ի հարեալ հողոյն-դեպի
հայկական հողով ծածկված հատակը

Ի ՀՈԼՈՎՈՒՄ

§ 100. Հոլովման պատկերն է՝

	Եզակի	Նոգնակի
ՈՒ.	ճառագայթ	ճառագայթք
Հ.	(զ)ճառագայթ	(զ)ճառագայթս
Ս. Տ.	ճառագայթի	ճառագայթից
Բ.	ի ճառագայթէ	ի ճառագայթից
Գ.	ճառագայթի	ճառագայթիք

§ 101. Այս ձևով հոլովվում են՝

ա) Շատ բառեր՝ աղտ, ատաղձ, բանտ, բառ, գայռ (=ցեխ), դատ, երկիւղ, խրամատ, ծերպ, ծնօտ, կայծ, հանդէս (հանդիսի), ձայն, ճառ, նետ, ոստայն, սիրտ, վտանգ, տօն, փայտ, օձ և այլն: Անեզական բառերից՝ աղօթք, ասք, արևելք, արևմուտք, գահոյք (գահոյից), զնացք, կուրծք, հմայք, ցնորք և այլն:
բ) Որոշ բացառություններով այն բառերը, որոնք վերջում ունեն *այ, աստ, եայ, եան, եստ, է, ոյ, ոյթ*՝ արքայ, շղթայ, իմաստ, պաշտօնեայ (պաշտօնէի), վայրկեան (վայրկենի), գովեստ, բազէ, մարգարէ, երեկոյ, սովորոյթ (սովորութի) և այլն:
գ) Մի շարք հատուկ անուններ՝ Գրիգոր, Մաշտոց, Մատթեոս (Մատթէի), Մովսէս (Մովսեսի կամ Մովսիսի), Ներսէս, Վաչէ և այլն: Անեզական հատուկ անուններից՝ Աղուանք, Կասաք, Պարսք և այլն:

Վարժություն 59. Հոլովել Ի հոլովմամբ հետևյալ բառերը՝

այծ, այտ, արօտ, բան, հաց, որովայն, վկայ, ծառայ, նպաստ, ան, քաղց, ափսե, մատեան (մատենի), փախստեայ (փախստէի), անեծք (անիծից), Արտաշէս (Արտաշեսի):

Վարժություն 60. Թարգմանել, որոշել Ի հոլովման բառերի հոլովն ու թիվը՝ որոշ գրելով առանձին սյունակներում անեզական և անհոգնական անունները:

Ես գիտեմ զհպարտութիւն քո և զչարութիւն սրտի քո: Հայցելին և ս յարքայէ մանկունս մատաղս: Կոյր զրկի ի ճառագայթից արեգական: Կապէ զոտս Արշակայ երկաթեղէն շղթայիւք: Հրամայէ դնել գնա ի վերնատանն ապարանից: Ամենայն ճանապարհ լի էր հանդերձի և կահի: Ոչ թէ յարևելից յարևմուտս գնան՝ այլ յարևմտից յարևելս: Սա պատեաց պարսպաւ և զհօր աւանն Վարդգէսի: Չնշան տէրունական խաչին առնոյր և դիմէր ի դուռն մեհենին: Տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից: Առնոյր Մուրթթ գթագարութիւնն յԱրտաշիս: Ամենն ին ոչ առնու յանձն լսել և հաւանել այսպիսի բանից: Յուղարկէ թագաւորապէս զքոյր իւր Տիգրանուհի մեծ ամբոխի ի Հայս: Նախ ինքն տեղեկանայր ի Դանիելէ նշանագրացն: Աճապարէր կուտէր զօրսն առ ինքն իբրև երեսուն հազար, հանդերձ զօրավարսն Վաչէի: Ապրեցիս որպէս զայծեանն ի հաղթից: Բորբոքեցէք առաւել քան զհնոցն Բաբելոնի: Պատշգամք հինգ՝ առանցիւք և խորշիւք ընդ կողմն հիւսիսոյ: Յայնմ մարտի բազում վիրաւորք անկանէին: Յամենայն ատեանս յիշեցին զանուանս նոցա: Ոչ տեսանեմք այնչափ մեծ աստղ յերկինս:

Վարժություն 61. Կազմել գրաբար նախադասություններ սիրոյ բառի եզակի և հոգնակի հոլովածներով:

Վարժություն 62. Թարգմանել գրաբար:

Գաղտնի խոսքերով գրգռում էին թագավորին: Արև մուտքից փչում էր մեղմ քամի: Հրամայեց կապել շղթաներով գերիներին: Բժշկեցին հիվանդներին պեպսա օրտերից: Ո՞վ են ես, որ լինեմ արքայի փեսա: Հափշտակում էին քրիստոնյաների ամբողջ ունեցվածքը (զամենայն ինչս): Հայոց աշխարհի արևելյան կողմը տալիս է Պարսից արքային: Ահից և երկյուղից կթուլանան նրանց (նոցա) սրտերը: Ընդունելով (ընկալելով) Հաբեից Հայոց նշանագրերը՝ ուրախանում են: Լսում են Արտաշեսի մահվան բոթը: Քաղցով և ծեծով (զանի) տանջում էր իր պաշտոնյաներին:

Յաղագս թէ որպէս զդիւսն և զքաղեայսն հարցեալ Շապիոյ փորձէր զմիտս Արշակայ, և տայր զնա յԱնուշ բերդն...

Ապա թագաւորն Պարսից, քանզի զայս յուեալ ի քաղէիցն, տաճիկ¹ ուղտոք արձակէ ի Հայս արս զհողոյ և զջրոյ², զի եկեսցեն բարձցեն մնա ըզհմայսն: Եւ ընդ սակաւ ատուրս եկին բերին զայն ինչ, զորմէ² յղեացն: Ապա հրաման տայր թագաւորն Շապուհ, զկէս յատակին իւրոյ խորանին հարկանել ի բերեալ հողոյն Հայոց, և զջուրն ցանել ի վերայ նորա. և զկէսն ի նոյն հողն զիւրոյ բնակութեան³ երկրին թողուլ: Եւ ետ ածել⁴ զԱրշակ արքայ Հայոց զառաջև իւրով, և զայլ մարդիկն ի բաց հրամայեաց կացուցանել. և զձեռանէ առեալ՝ շրջէր ճեմելով: Եւ երթև եկս առեալ ընդ խորանն⁵, ասէ ցնա յորժամ ի պարսիկ ի հողոյն ի վերայ⁶ ճեմէին՝ թէ «Ընդէ՞ր եղեր իմ թշնամի, Արշակ արքայ Հայոց. զի ես որպէս զորդի սիրեցի զքեզ, և կամեցայ տալ քեզ զդուստր իմ ի կնութիւն, և որդի ինձ առնել զքեզ. իսկ դու խստացար ընդ իս, և քովք կամօք՝ առանց իմոց կամաց՝ եղեր ընդ իս թշնամի. և այս լի երեսուն ամ է, զի պատերազմեցար ընդ իս»:

Ասէ Արշակ արքայ, թէ «Մեղայ քեզ և յանցեալ. զի ես եկի և կոտորեցի, և յաղթեցի թշնամեաց քոց. և ակն ունէի ի քէն⁷ պարզև կենաց, և թշնամիք իմ հրապուրեցին զիս, և արկին երկիւղուկս⁸ ի քէն, և փախուցին ի քէն: Եւ երդումն իմ, զոր երդուայ քեզ, յառաջ աճն զիս. և եկի աասիկ առաջի քո: Եւ աւասիկ ծառայ քո ի ձեռս քո կամ. զինչ և պէտք է քեզ, արա զիս, զինչ և կամ իցէ. սպան զիս, զի ես ծառայ քո առ քեզ կարի յանցաւոր եմ, մահապարտ եմ»:

Իսկ Շապուհ արքայ առեալ զձեռանէ նորա, շրջէր ճեմելով, ի չքմեղս առեալ⁹ զնա ածէր ի հայակողմն ի հողն հարեալ յատակն: Իսկ իբրև յայն տեղի հասանէր, և զհայ հողն կոխէր, մեծամեծս ըմբոստացեալ հպարտացեալ՝ այլ ձայն շրջէր¹⁰. սկսանէր խօսել և ասել. «Ի բաց կաց յինէն¹¹, ծառայ չարագործ, տիրացեալ տերանցն քոց. այլ ոչ թողից զքեզ¹² և որդոց քոց զվրէժ մախնեաց իմոց, և զմահն Արտնանայ արքայի: Չի այժմիկ ձեր ծառայից զմեր տերանց ձերոց զբարձ կալեալ է¹³. բայց ոչ թողից, եթէ ոչ տեղիդ¹⁴ մեր առ մեզ եկեսցէ»:

Իսկ դարձեալ առնոյր զձեռանէ, դարձեալ տանէր յայն հող Պարսից. ապա աշխարէր զասացեալսն, խոնարհէր բուռն հարկանէր¹⁵ զոտից նորա, մեծապէս ապաշխարելով զղջմամբ զասացեալ բանսն: Իսկ յորժամ առեալ զձեռանէ զնա տանել ի հայ հողն, և ս խստագոյն քան զառաջինսն բարբառէր. իսկ դարձեալ մեսանգաս¹⁶ հանէր յայնմ հողոյն, բանիւք յապաշխարութիւն դառնայր: Յայգուէ և¹⁷ երեկոյն այնպէս շատ փորձ փորձեաց¹⁸ զնա. զի իբրև ի վերայ հարեալ հողոյն տանէր, խստացեալ ամբարտաւանէր. իսկ ի վերայ բուն զետնոյն յատակին՝ և կայր¹⁹, ի զղջումն դառնայր:

Ո ՀՈԼՈՎՈՒՄ

§ 102. Հոլովման պատկերն է՝

	Եզակի	Նոգնակի
ՈՒ.	արմատ	արմատք
Հ.	(գ)արմատ	(գ)արմատս
Ս.Տ.	արմատոյ	արմատոց
Բ.	յարմատոյ	յարմատոց
Գ.	արմատով	արմատովք

Ինչպես նշվել է (§ 90), Ո հոլովման բառերի եզակի և հոգնակի ներգոյականի իմաստը դրան որվում է ի(յ) նախորդով և անորոշ հայցականով: Եզակի ներգոյականի իմաստն արտահայտելիս որոշ բառեր վերջից ստանում են *ի* հոլովիչը՝ մարմին-ի մարմնի, երագ-յերագի, ջրհոր-ի ջրհորի, տօթ-ի տօթի և այլն:

§ 103. Այս հոլովմամբ հոլովվում են՝

ա) Շատ բառեր՝ ածուխ, աղիւս, ամպ, անասուն, արծաթ, բոյն (բունոյ), բոյս, բոց, զետ, զետին, գոմ, գուր, երգ, երկաթ, էշ (իշոյ), թուղթ, թռչուն, թուք, ժողով, իւղ, խոտ, ծառ, ծուխ, կշիռ, հողմ, ձոր, ճաշ, մոխիր, ներկ, ողբ, որս, պտուղ, ջուր (գործ. ջրով կամ ջուրք, հոգն. սեռ. ջրոց կամ ջուրց), սեխ, սէր, սեղան, սողուն, սուգ, տապ, քուն և այլն: Անեզական բառերից՝ դժոխք, կուռք (կռոց), հունձք, տիք (=տարիք, հասակ) և այլն:

բ) Յի-ով վերջավորվող բառերը՝ հելլենացի (հելլենացոյ), հռովմայեցի, քաղաքացի, երբայեցի, քաղդէացի, Կողբացի, Խորենացի և այլն:

գ) Ի-ով վերջավորվող մի քանի միավանկ և բազմավանկ բառեր՝ թի, դի, ձի, ոգի, որդի, հոգի, ոսկի:

Ծանոթություն. Բազմավանկ բառերի վերջին *ի-ն n* հոլովիչից առաջ դառնում է *ւ*՝ քաղաքացի-քաղաքացոյ, որդի-որդոյ:

դ) Ուած ածանցով կազմված բառերը՝ հարուած, կալուած, շինուած, յօրուած և այլն:

ե) Մի շարք անհոգնական և անեզական հատուկ անուններ՝ Շապուհ (Շապիոյ), Սանատրուկ, Կարին, Տարօն, Հայք (Հայոց), Վայք, Տայք, Հոռոմք և այլն:

Իսկ իբրև երեկոյ եղև ժամ ընթրեաց թագաւորին Պարսից, քանզի սովորութիւն էր Հայոց թագաւորին բազմական անդէն ընդ նմին առ նմա ի նորին տախտիւն²⁰ արկանել բազմական²¹, օրէնք էին՝ զի թագաւորն Պարսից և թագաւորն Հայոց ի միում տախտի բազմէին ի միում զահոյս: Իսկ այն օր նախ զտող²² բազմականացն թագաւորացն, որ անդն էին, զամենեցունց կարգեցին. հուսկ յետոյ զկնի ամենեցունց ի ներքոյ բոլորին զԱրշակայ բազմականն առնէին²³, ուր զհայ հողն յատակն հարեալ էր: Նախ ամենեքեան իբրև բազմեցան յիւրաքանչիւր չափու²⁴, յետոյ ածէին²⁵ բազմեցուցանէին²⁶ զարքայն Արշակ: Արդ եկաց բազմեալ ուռուցեալ վայր մի²⁷. Իսկ²⁸ յոտն եկաց²⁹, ասէ ցթագաւորն Շապուհ. «Իմ²⁸ այդ տեղի, ուր դուդ²⁹ ես բազմեալ. յոտն կաց այդի, թող ես այդր բազմեցայց, զի տեղի ազգի մերոյ այդ լեալ է. ապա եթէ յաշխարհն իմ հասից, մեծամեծ վրէժս խնդրեցից ի քեն»:

Ապա տայր²³ հրաման Շապուհ արքայ Պարսից, բերել շղթայս և արկանել ի պարանոցն Արշակայ և յոտս և ի ձեռս նորա երկաթս³⁰, և խաղացուցանել զնա ի յԱնդմըշն՝ զոր Անուշ բերդն կոչեն, և պնդեալ զնա մինչև անդէն մեոցի...:

(Փաստոս Բուզանդ, 4-րդ, ԾԳ)

1 տաճիկ-արագավազ
2 գ նախդիրը բացառական հոլովի հետ նպատակի իմաստով՝ հողի և ջրի(համար)
3 վերացականը թանձրացականի փոխարեն՝ բնական, բուն
4 ետ ածել-բերել տվեց
5 ընդ նախդիրը հայցական հոլովի հետ տեղի իմաստով՝ դահլիճում
6 ի նախդիրը կրկնված է՝ փխ. ի վերայ պարսիկ հողոյն
7 ի քեն-քեզմից
8 երկիտուկս արկանել-վախ ներշնչել
9 ի չքմեղս առեալ-անմեղ՝ միամիտ ձև անալով
10 ձայն շրջել-ձայն հանել, խոսել
11 յինէն-ինձանից
12 հանգման անուղղակի խնդիր է, պետք է լիներ տրական հոլովով, առանց գ-ի
13 ձեր ծառայից զմեր տերանց ձերոց զբարձ կալեալ է-դուք՝ ծառաներո, մեր՝ ձեր տերերի բարձր (աստիճանը) գրավել եք
14 ղ հողը ցուցական իմաստով՝ այդ տեղը

15 բուռն հարկանել-բռնել
16 հոմանիշ է դարձեալ մակբային
17 այստեղ՝ մինչև իմաստով
18 փորձ փորձել-հարցուփորձ անել
18 այստեղ՝ հենց որ կանգնում էր
20 անդէն ընդ նմին առ նմա ի նորին տախտիւն-այնտեղ, նրա հետ, նրա մոտ, նույն թախտի վրա
21 բազմական արկանել-բազմելու տեղ պատրաստել
22 այստեղ՝ շարք իմաստով
23 այստեղ՝ անցյալ կատարյալի իմաստով
24 յիւրաքանչիւր չափու-յուրաքանչյուրն իր չափով, իր աստիճանով
25 եկաց բազմեալ ուռուցեալ վայր մի-մի պահ մնաց մտած ուռած-փքված
26 այստեղ՝ հետո իմաստով
27 յոտն եկաց-ոտքի կանգնեց
28 է օժանդակ բայը զեղչված է
29 դ-ն դիմորոշ հող է
30 այստեղ նշանակում է՝ կապանք

Վարժություն 63. Հոլովել Ո հոլովմամբ հետևյալ բառերը՝

աթոռ, մարմին, ամբար, բերան, արտ, գլուխ, հուր, գիտուն, պղինձ, ճիչ, դիպուած, սափոր, որդի, Փարպեցի, պահք, Վռամշապուհ, Հայք:

Վարժություն 64. Թարգմանել, որոշել Ո հոլովման բառերի հոլովն ու թիվը՝ առանձնացնելով անեզական և անհոգնական անունները:

Քանզի ոգոյ և հողմոյ անուն երրայեցերէն և յունարէն և ասորերէն նոյն է: Սքանչելի է և աշխարհն առատութեամբ ամենայն պտողոց: Մի՛ անսայք երազոց ձերոց գոր դուք տեսանէք: Ձդուրս տաճարաց կոռցն փակեցին: Եւ ի սրոյն բերանոյ ապրեցուցին, և զկապեալս արձակեցին, և ի գրոյ հանին: Չայսու ժամանակաւ կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնոյ: Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ: Ատեաց կինն զարքայն Արշակ. ասելով՝ թէ թաւ է մարմնով և թուխ է գունով: Եւ էին ատուրք հնձոց ցորենոյ: Արտօսրալի որդովք ճառագրեմք զբազում հարուածս: Գտանէր զնոսա յամուրս աշխարհին Տայոց: Շատ յամառեաց այրն իջանել ի ձիոյն: Եւ այն կամ ի շատ ուտելոյ և ըմպելոյ լինի, կամ ի սաստիկ պահոց: Ելանէ հրաման ի Շապիոյ: Վահէվանեան մեհեանն մնացեալ է յերկրին Տարօնոյ:

Վարժություն 65. Թարգմանել, փակագծերի մեջ առնված բառերը դնել՝ ա ենթակետիկներ սեռական և տրական, բ-ինը՝ քացատական, գ-ինը՝ գործիական հոլովներով, իսկ ղ-ինը՝ խ(յ) նախդրով հայցական հոլովով՝ ներգոյականի նշանակությամբ:

ա) Քանզի ընդդիմակաց է (հուր) ջուր, և (լոյս) խաւար, և (ցուրտ) ջերմ: Այս են անուանք (որդիք) նորա: Ոչ կամէին անսալ (խորհուրդք) ինոց: Անվեհեր քաջաբար նման (թոշուն) յերիվարն հեծանէր:

բ) Առնուն ջերմութիւն (տապ) արեզականն: Ոմն քաջ (իմաստունք)-ն ասաց: Ժողովեաց եւթանասուն այր (ծերք): Եւ զխոզէ ասեն՝ եթէ հեղձնու յանուշ (հոտ):

գ) Կապեցին զոտսն և զձեռսն, և մեծաւ (ուժ) պրկեցին: Խօսէր համակ (ողորք), և աղաչէր զԱրշակ արքայ Հայոց: Սա շինէ զՄաժաք ընդարձակագոյն և պայծառ (շինուածք): Մխիթարէր զհաւատացեալս յախտեանական (յոյս):

դ) Ժողովեցէք եղ (ամանք) ձեր: Որք ի նմանէ կերակրին և (ծոց) նորա հանգչին: Տեսանէի աշօք իմովք (երագ): Փայտս պահանգս դնէին (որմք)-ն:

Վարժություն 66. Թարգմանել գրաբար:

Բեռնակիր անասուններով ջուր էին կրում ջրհորներից: Աղյուսները թրծե-

ցեք հրով: Գետերի ջրերը գնում են ծովերը: Չորացան պողպատի ծառերի արմատները: Սև է նրանց մարմնի մորթը: Ծառը պտուղից է ճանաչվում: Երբ քնից պիտի արթնանաս: Ծիչերով և ողբերով սգում էին հարազատներին: Կուռքեր էին կռում ոսկուց, արծաթից, պղնձից և երկաթից: Թաքնվեցին ձորերում, գոմերում և ջրհորներում: Մի՛ խմեք ջուր պղտոր գետից: Սափորի մեջ ջուր չկա (ոչ գոյ):

Յաղագս մահուան Արշակայ թագաւորին Հայոց, թէ զհարդ մեռաւ յերկրին Խուժաստանի յԱնդմըշն բերդին ինքն ինքեամբ ձեռօք, և Դրաստամատն էր պատճառք¹ մահուան:

1

Այլ յայնմ ժամանակի դեռ տակաւին² և ս կայր կենդանի Արշակ արքայ Հայոց յերկրին իշխանութեանն թագաւորութեանն Պարսից ի կողմանս Խուժաստանի յԱնդմըշն բերդին. այս ինքն որ անուն Անյուշն բերդն կոչեն: Եւ զայնու ժամանակաւ խաղաղացաւ պատերազմ տալ Պարսից ընդ Հայս.³ զի Արշակունին թագաւորն Քուշանաց, որ նստէր ի Բաղխ քաղաքի, նա յարոյց տալ պատերազմ ընդ Սասանականին Շապիոյ և թագաւորին Պարսից: Եւ Շապուհ թագաւորն զամենայն զգօրսն Պարսից գումարեալ խաղացոյց տալ պատերազմ ընդ նմա, և զորս միանգամ ածեալ էր զերութիւն յերկրէն Հայոց զամենայն այրն ձի գումարեալ խաղացոյց ընդ ինքեան, և զներքինին անգամ թագաւորին Հայոց Արշակայ տանէր ընդ ինքեան ի գործ պատերազմին:

Եւ էր ներքինի մի Հայոց թագաւորին Արշակայ, ոստիկան հաւատարիմ լեալ⁴, ներքինի սիրելի մեծի իշխանութեան և մեծի պատուի, և անուն Դրաստամատն: Իսկ իբրև եղև պատերազմ ընդ թագաւորին Քուշանաց և ընդ թագաւորն Պարսից, չարաչար տարածէին⁵ զգօրսն Պարսից զօրքն Քուշանաց, և զբազումս կոտորեցին ի զօրացն Պարսից զօրքն Քուշանաց, և զբազումս ձերբակալ արարին, և զկէս փախստականս հալածական առնէին⁵: Իսկ Դրաստամատն ներքինին, որ յամս Տիրանայ թագաւորին Հայոց և Արշակայ որդոյ նորա թագաւորին Հայոց լեալ էր իշխան տան զաւառին և հաւատարիմ զանձուց Անգեղ բերդին, և ամենայն բերդացն արքունի՝ որ ի կողմանս յայնս⁶. սոյնպէս և յերկրին Ծովիաց ի Բնաբեղ բերդին զանձքն լեալ էին ընդ նովաւ⁷, և բարձ նորա ի վեր⁸ քան զամենայն նախարարացն: Եւ քանզի այս գործակալութիւն և մարդպետութիւն, որում հայրն կոչէին ներքինեաց՝ գործ լեալ էր ի բնէ ժամանակաց ի թագաւորութեանն Արշակունոյ, և զայս Դրաստամատն ներքինի զիշխանն զԱնգեղ⁹ տանն զերեալ տարեալ

էր յերկիրն Պարսից ի ժամանակին՝ յորժամ կալան զԱրշակ արքայն Հայոց:

(Փաստոս Բուզանդ, 5-րդ, է)

¹ գործածված է եզակի իմաստով
² հոմանիշ է *դեռ* մակերային
³ գայնու ժամանակալ խաղաղացաւ
պատերազմ տալ Պարսից ընդ Հայս-այն
ժամանակ պարսիկները դադարեցրին
պատերազմները հայերի հետ
⁴ *իմիմ* բայի անցյալ դերբայն է
⁵ անցյալ անկատարը անցյալ կատարյալի

իմաստով՝ տարածելին-նեղեցին,
հալածական առնելին-հալածեցին
⁶ որ ի կողմանս յայնս-որ գտնվում
էին այն կողմերում
⁷ *ընդ* նախդիրը գործիական հոլովի
հետ տակ, ենթարկվել իմաստով՝
նրա տնօրինության տակ էին
⁸ օժանդակ բայը (էր) զեղծված է
⁹ նախդիրը կրկնված է

ՈՒ ՀՈԼՈՎՈՒԹՅՈՒՆ

§ 104. Հոլովման պատկերն է՝

	Եզակի	Նոգնակի	Եզակի	Նոգնակի
ՈՒ.	ծով	ծովք	խրատ	խրատք
Հ.	(զ)ծով	(զ)ծովս	(զ)խրատ	(զ)խրատս
Ս.Տ.	ծովու	ծովուց	խրատու	խրատուց
Բ.	ի ծովէ	ի ծովուց	ի խրատուէ	ի խրատուց
Գ.	ծովու	ծովուք	խրատու	խրատուք

Եզակի բացառականում է հոլովակերտից առաջ *ու*-ն սովորաբար սղվում է, իսկ որոշ բառերում կարող է պահպանվել կամ չպահպանվել՝ ի դասէ-ի դասուէ, ի գանձէ-ի գանձուէ:

§ 105. Այս հոլովմամբ հոլովվում են՝

ա) Մի շարք բառեր՝ առաւօտ, արև, գանձ, դաս, զարդ, զէն (զինու), ժամ, ծով, ճակատ, նախանձ, շաբաթ, ուրբաթ, պար, վրէժ և այլն: Անեզական բառերից՝ բարք (բարուց), պարտք, վարք:

բ) Կենդանիների և թռչունների որոշ անուններ՝ աղուէս (աղուեսու), առեւծ, արջ, գրաստ, ինձ (ընձու), կաքաւ, կով, հաւ, որթ (=հորթ), ուլ, ուղտ, ցուլ և այլն:

գ) Մի շարք հատուկ անուններ՝ Աբգար, Աբրահամ, Խոսրով, Յոհան (Յոհանու), Յովհաննէս (Յովհաննու), Սոկրատէս (Սոկրատու), Յորդանան, Մարիամ (Մարեմու) և այլն:

ՈՒ հոլովման պատկանող *ասր, ծաղր, մեղր* բառերը, որոնք ունեն ներքին թեքման որոշ առանձնահատկություններ, հանդես են գալիս հոլովական տարբեր ձևերով, օրինակ՝ *ասր, սեռ.*՝ ասրոյ, ասրու, բաց.՝ յասրոյ, գործ.՝ աս-

րով, ասերք. *ծաղր. սեռ.*՝ ծաղու, ծաղեր, ծաղրու, *մեղր, սեռ.*՝ մեղեր, գործ.՝ մեղերք, մեղուաւ: Այս բառերի հոգնակի հոլովածն էրը գործածական չեն: Ուղիղ հոլովման պատկերն է՝ *ասր*, հայց. (զ)ասր, սեռ. տր. ասու, բաց. յասուէ, գործ. ասու:

Վարժություն 67. Հոլովել ՈՒ հոլովմամբ հետևյալ բառերը՝

այգ, գահ, զգեստ, առիւծ, դար, սպաս, համբաւ, սակաւ, ձագ, քէն (քինու), վարք, Յովսէփ:

Վարժություն 68. Թարգմանել, որոշել ՈՒ հոլովման բառերի հոլովն ու թիվը՝ եզակին դարձնելով հոգնակի, իսկ հոգնակին՝ եզակի:

Մի՛ բանայցէք վաղվադակի զորունսն մինչև ի ծագել արևուն: Եւ զարդարեցի գքեզ զարդու: Չտեղի ճակատուն շինէ դաստակերտ: Եւ շրջէր ի մէջ առիւծուց: Վարէ զիւր իշխանութիւնն օրինօք մոգուց: Չերկիրն Սիւնեաց դասուք վանականաց լնոյր: Իսկ Խոսրով առեալ ի գանձուցն, հանէ մասն Շապհոյ: Եւ ի քո խրատուէ ատելի և ս կորեաւ աշխարհն Հայոց: Յլուք սպիտակօք և գիսատր նոխագօք առատացոյց զգոհս կրակի: Երկն ի ծովուն ուներ և զկարմրիկն եղեգնիկ:

Վարժություն 69. Թարգմանել, փակագծերի մեջ առնված բառերը դնել համապատասխան հոլովով ու թվով:

Ասա՛ դու մեզ զպատճառս (վնաս)-ն: Մեծի (ծաղր) արժանի է: Թեպէտ և բազում (գանձք) տէր են՝ աղքատ են ոգով: Չօր ծննդեան երանելոյն յիշէին յերկրորդ (ժամ) ատուրն: Անկան (զօր) ծառայիցն Դաթի: Թուի՝ թէ (ծով) ելանիցէ: Եւ սկսաւ կարդալ գնա (առաւօտ) յորժամ ծագէր արեգակն: Լի էր (նախանձ) և (քէն): Կերայ զհաց իմ (մեղր) իմով: Յառաջ խաղային իւրեանց (զէնք)-ն ծածուկ վառեալ: Ոչ է արժան գործել (շաբաթ):

Վարժություն 70. Թարգմանել գրաբար:

Ծովի ջրերը աղի են: Հարդ և խոտ էինք տալիս ուղտերին: Երկիրը լուսավորվում է արևի լույսով: Երգերով և պարերով կմտնէք քաղաքը: Յույի միս ուտելը դարման է մարմնին: Հորդանանի կողմերում լսվում էր Հովհաննեսի ձայնը: Խոսրովի գանձերից տալիս էր իշխաններին և զորավարներին: Իբրև արծիվ խոյանում էր դեպի կաքավների երամը: Աղվեսը կուտի ագռավի ձագերը: Հիվանդներին կերակրում էինք մեղրով: Շատ կենդանիներ են ապրում (բնակին) ծովերում և գետերում:

Յաղագս մահուան Արշակայ թագաւորին Հայոց, թէ զհարդ մեռաւ յերկրի Խուժաստանի յԱնդրըն բերդին ինքն ինքեամբ ձեռօք, և Դրաստամատն էր պատճառք մահուն:

2

Եւ այս Դրաստամատ էր յայնմ ճակատու, յորում վատթարեցին Քուշանքն զՇապուի արքայն Պարսից: Եւ Դրաստամատ գործեաց անհնարին քաջութիւն այնչափ կռուաւ և ս ի վերայ Շապիոյ արքայի, և ապրեցոյց զնա ի մահուանէ. և բազումս ի Քուշանաց անտի կոտորեաց, և զբազում զախոյանից¹ զգլուխս բերէր զառաջեալ: Եւ զՇապուի թագաւորն Պարսից փրկէր ի նեղութենէն պատերազմին թշնամեաց անտի, ուր արգելին զնա ի խուռն պատերազմին ի գորաց անտի: Իսկ իբրև եղև յորժամ դարձաւ Շապուի թագաւորն Պարսից յերկիրն Ասորեստանի, և մեծ շնորհակալութիւն առնէր ներքինոյն Դրաստամատայն վաստակոցն, և ասէր ցնա Շապուի թագաւորն Պարսից. «Խնդրեա՛ դու ինչ յինէն. զինչ և խնդրեսցես, տաց քեզ և ոչ արգելից»: Եւ ասէ Դրաստամատ ցթագաւորն. «Ինձ ի քէն այլ ինչ ոչ պիտի, բայց տուր ինձ հրաման, զի երթայց տեսից զբնակ տէրն իմ զԱրշակ արքայ Հայոց: Եւ առ մի օր, իբրև ես երթայց առ նա, հրաման տուր՝ արձակել զնա ի կապանացն, և ես իշխեցից լուանալ զգլուխս նորա և օծանել, և ազուցանել նմա պատմուճան, և արկանել նմա բազմականս, և դնել առաջի նորա խորտիկս, և տալ նմա զինի, և ուրախ առնել զնա արուեստականօքն մի օր ճիշդ»: Եւ ասէ թագաւորն Շապուի. «Խիստ են խնդրուածքդ, զոր խնդրեսցերդ². զի յաւուրց ժամանակաց յորմէ³ թագաւորութիւնս Պարսից կանգնեալ է, և բերդն այն Անյուշ բերդ կոչեցեալ է, չիք որ մարդ եղեալ ի մարդկանէ՝ որ իշխեցեալ է յիշեցուցանել թագաւորաց զոր յայնմ բերդի եղեալ զոք է թագաւորաց, յիշելով զայն մարդ՝ որ յայնմ բերդի զոք եղեալ է, թող թէ զնա զայր թագաւոր և զիմ ընկեր կապեալ եղեալ յայնմ բերդի զհակառակորդն, որ այնքան աշխատ արար զմեզ, և դու աւաղիկ զանձն ի մահ եղիր և յիշեցուցեր զԱնյուշն, որ ոչ էին լեալ երբէք օրէնք թագաւորութեանս Արեաց ի սկզբանէ: Բայց զի վասն⁴ քո մեծ վաստակք են առ իս, զոր ինչ խնդրեսցերն՝ երթ՝ տուեալ լիցի քեզ. բայց քեզ արժան էր զօգուտ քո անձինդ խնդրել կամ աշխարհս կամ գաւառս կամ զանձս: Բայց յորժամ դու զայդ խնդրեսցեր, անցեալ լիցիս զօրինօք⁵ Արեաց թագաւորութեանս. երթ տուեալ լիցի քեզ որ ինչ յինէնս խնդրեսցեր փոխանակաց քոց»:

Եւ ետ նմա փուշտիպան մի հաւատարիմ. և հրովարտակ՝ արքունի մատանեան, զի գնացեալ⁶ երթիցէ նա ի բերդն յԱնդրըն, և զհարդ և կամք իցէ նո-

րա, զոր օրինակ և խնդրեացն՝ արասցէ կապելոյն Արշակայ, որ յառաջ թագաւորեալն էր ի Հայս: Եւ չոգաւ⁷ Դրաստամատն հանդերձ փշտիպանան և հրովարտական արքունի յԱնուշ բերդն, և ետես զտէրն բնակ. և արձակեաց զԱրշակ ի կապանացն երկաթեաց ի ձեռակապացն և յոտիցն երկաթոց և յանրոց պարանոցէն շոթայիցն սարեացն⁸. և լուաց զգլուխս նորա. և լոզացոյց զանձն նորա: Եւ ազոյց նմա պատմուճան ազնիւ. և էարկ նմա բազմականս, և բազմեցոյց զնա, և եղ⁹ առաջի նորա ընթրիս ըստ օրինաց թագաւորաց, և եղ առաջի նորա զինի որպէս օրէն էր թագաւորացն. սթափեաց զնա և մխիթարեաց, և ուրախ առնէր զնա զուսանօք:

Եւ ի ժամ աղանդեր մատուցանելոյ՝ եղին առաջի նորա միրզ, խնձոր և վարունգ և ամիճ, զի կերիցէ. և եղին դանակ նմա, որպէս զի հատցէ և կերիցէ զհարդ և կամեսցի: Եւ Դրաստամատ մեծապէս ուրախ առնէր զնա. կայր յոտն, և մխիթարէր զնա: Իսկ յորժամ արբեցաւ, և զինին եկն զակամբ¹⁰ նորա, արբեցաւ հպարտացաւ և ասէ. «Վա՛յ ինձ Արշակայ. այս և այս, և յայսմ չափու և այս անցք անցին ընդ իս»¹¹: Եւ զայս ասացեալ, զդանակն՝ որ ունէր ի ձեռինն, որով զմիրզն կամ զամիճն կամէր ուտել, եհար իսրտի իւրում. և անդէն սատակեցաւ, և մեռաւ անդէն ի նմին ժամուն մինչ դեռ կայր ի բազմականին: Իսկ յորժամ զայն ետես Դրաստամատն, հարձակեցաւ եհան ի նմանէ զնոյն դանակ, և եհար յիւրում կշտին. և անդէն մեռաւ և նա ի նմին ժամուն յայնմ:

(Փաստոս Բուզանդ, 5-րդ, Է)

¹ նախդիրը կրկնված է
² դ-ն դիմորոշ հող է
³ հոգնակի հարաբերյալի մոտ *որ* հարաբերականը եզակի բվով, որը գրաբարում սովորական է
⁴ փխ. վասն զի
⁵ անցեալ լիցիս զօրինօք-թող օրենքից դուրս եկած լինես, այսինքն՝ թող բացառությամբ լինես օրենքից

⁶ նույնանիշ է երթալ բային
⁷ չոգաւ- գնաց
⁸ յանրոց պարանոցէն շոթայիցն սարեացն- վզի օղակներից ու շոթաններից
⁹ եղ-դրեց
¹⁰ զինին գալ զակամբ հարբել
¹¹ վա՛յ ինձ Արշակայ. այս և այս, և յայսմ չափու և այս անցք անցին ընդ իս-վա՛յ ինձ, Արշակիս. որտեղի՛ց ուր ընկաւ և ի՛նչ օրի հասաւ

2. ԽԱՌՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

ԴԱՍ ՏԱՄՆՅՈԹԵՐՈՐԳ

Ի-Ա ԱՐՏԱՔԻՆ ՀՈԼՈՎՈՒՄ

§ 106. Հոլովման պատկերն է՝

	Եզակի	Նոգնակի
ՈՒ.	աշխարհ	աշխարհք
Հ.	(գ)աշխարհ	(գ)աշխարհս
Ս.Տ.	աշխարհի	աշխարհաց
Բ.	յաշխարհիէ	յաշխարհաց
Գ.	աշխարհաւ	աշխարհաւք(օք)

§ 107. Այսպէս հոլովվում են՝

ա) Բազմաթիվ բառեր՝ ազգ, ամ (=տարի), ամպրոպ, բլեռ, գագան, գաւառ, գերեզման, գուսան, դաշտ, դէս (դիւի), դպիր, ըմբիշ, իր, հրաման, ճանապարհ, նախարար, նահանգ, ոչխար, պատկեր, պարիսպ, պարտէզ (պարտիզի), սահման, վահան, վիշապ, փիղ և այլն: Անեզական բառերից՝ խելք, կառք, կեանք (կենաց), արտասուք (արտասուաց), աղաչանք, բաղձանք, յանցանք, զարմանք, հանգամանք, տառապանք և այլն:

բ) Որոշ բացառություններով այն բառերը, որոնք վերջում ունեն՝ *ակ, ալկան, արան, եակ, իկ, իշ, որդ, ոց, ու, ուկ, պան, ստան, որ* կամ *սուր*, օրինակ՝ ագարակ, ամբարտակ, աշտանակ, բանակ, կտակ, շինական, զանձարան, դատարան, դայեակ (դայեկի), սենեակ (սենեկի), մրրիկ, բրիչ, գրիչ, որսորդ, փողոց, լեզու, մեղու, բազուկ (բազկի), գեղջուկ, պարտիզպան, բուրաստան, զինուոր, սպասատր, դատատր և այլն:

Վարժություն 71. Հոլովել *Ի-Ա արտաքին հոլովմամբ հետևյալ բառերը՝*

աղքատ, գաւազան, վեմ (վիմի), աղաղակ, բաժակ, լծակ, փախստական, ժամանակ, յաղթանակ, պահարան, դրեակ (դրեկի), կօշիկ, գործիչ (գործչի), եղջերու, ստրուկ, պահապան, աղանդատր, սպասատր, աչք, կամք, անարգանք:

Վարժություն 72. Թարգմանել, որոշել *Ի-Ա արտաքին հոլովման բառերի հոլովն ու թիվը, առանձնացնել անեզական բառերը՝ դիմացը նշելով նրանց ուղղական հոլովածնը:*

Գինի սրսկեն մեղուանոցացն, զի պարսն որ ելանիցէ՝ վաղվաղակի անդ իջանիցէ: Հրաման տայ բնակչաց աշխարհին ուսանել գիտօսս և զլեզուս հայկական: Գովութեան արժանի է և մեծարանաց: Իջաներ յերկարէն, հանեալ գուստերն իր յարձակէր ի վերայ փղին: Բազումք ի գորականացն ոչ կարէին հաւատալ սուտ ուխտին Վասակայ: Հրապուրեաց զմարդպետն իջանել ի կառաց անտի և հեծանել ի մուզի: Ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն: Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին: Յորժամ գամ՝ արձակեմ ի կապանաց: Ապաշխարէր մեծաւ տառապանօք: Որք բազում թոշակօք և հեռագնաց ճանապարհօք մաշէին գաւուրս իւրեանց ի դպրոցս ասորի գիտութեան: Եւ զիւր նենգաւոր խորհուրդն նամակաւ ծանուցանէր նմա: Աղաղակաւ արտասուօք զտաճարն լնուին: Յամենայն քաղաքս և ի գաւառս՝ ուր և ընթեռնուին զհրամանս արքունի՝ խնդութիւն և ուրախութիւն լինէր: Հատին զգլուխ սրբոյն սուտերաւ: Ի հացէ նորա ուտէր և ի բաժակէ նորա ըմպէր:

Վարժություն 73. Թարգմանել գրաբար:

Պատերազմով կամենում էր գրավել քաղաքը: Հայոց թագավորներից ստացան գյուղեր, ագարակներ և գանձեր: Պարտեզի դուռը բաց է: Երգում էին հրապարակներում տավիղներով և քնարներով: Գնում էին քաղաքից քաղաք և գավառից գավառ և չէին գտնում իրենց (իւրեանց) սիրելիներին: Եվ այս է հրովարտակի պատճենը: Մեծ անարգանքով և տանջանքով նեղում էր հավատացյալներին: Քաջաբար հարձակվեցին քաղաքների և բերդերի վրա (ի վերայ): Չենք կամենա ողբալ մեր ազգի թշվառությունը: Թոչունները սընվում են (սնանին) միջատներով: Պանդուխտ են ես օտար երկրում:

Յաղագս գորավարին Մուշեղայ Հայոց, թէ որպէս անկաւ¹ ի վերայ բանակին Շապոյ թագաւորին Պարսից և եհար զնա ի հարուածս անհնարինս², մինչ զի միաձի Շապուհ ճողոպրէր:

Ապա Մուշեղ որդի Վասակայ, ստրատելատն Հայոց Մեծաց ընտրեաց իւր արս ընտիրս միամիտս³ ազատս ազգայինս քառասուն հազար, միաբանս միակամս, և կազմեաց զնոսա ձիով և թոշակաւ և զինու. և առեալ զնոսա ընդ իւր, երթալ նստել⁴ ի սահմանս Ատրպատճացն և պահել⁵ զաշխարհն Հայոց: Ապա յայնմ ժամանակի կազմեաց պատրաստեցաւ Շապուհ արքայ Պարսից ամենայն կազմութեամբ զօրովք իւրովք, եկն եհաս յերկիրն Ատրպատականի. և Մերուժանն առաջնորդ զնրին բանակի նորա, և բուն բանակն ուրեմն թագաւորին ի Թաւրէշն բանակեալ էին:

Եւ հասանէր սպարապետն զօրավարն Հայոց Մուշեղ, անկանէր ի վերայ

բանակին քառասուն հազարաւ, և անդէն ձեռն ի գործ արարեալ⁶ կոտորէր: Ապա միաձի մագապուր թագաւորն Պարսից Շապուհ ճողոպրեալ փախչէր. և զամենայն կարևան բանակին առ հասարակ ընդ սուր հանէր Մուշեղ հանդերձ գործքն Հայոց: Չի բազումս կոտորէին. և զբազումս յաւագանոյն Պարսից ձերբակալս առնէին, և առնուին զգանձս թագաւորին Պարսից յաւարի. և ըմբռնէին զտիկնաց տիկինն հանդերձ այլովք կանամբքն: Եւ զամենայն մաշկաւարզան ի բունն արկանէր Մուշեղ սպարապետն, և զամենայն աւագանին՝ արս իբրև վեց հարիւր՝ հրամայէր մորթել զօրավարն Հայոց Մուշեղ, և լնուլ խոտով, և տայր բերել առ Պասպ արքայն Հայոց: Առնէր զայս ի վրէժս հօրն իւրոյ Վասակայ:

Բայց զկանայսն Շապուհոյ թագաւորին Պարսից ոչ ումեք⁷ ինչ թոյլ տայր Մուշեղ զօրավարն Հայոց անարգել ինչ զնոսա ումեք. այլ ժանաւարս տայր նոցա կազմել ամենեցուն, և հանեալ արձակէր զամենեսեան զհետ առն նոցա⁸ Շապուհ արքայի: Եւ ի պարսկացն ընդ նոսա արձակէր, զի երթիցեն առ Շապուհ թագաւորն Պարսից ողջս և անարատս: Իսկ թագաւորն Պարսից զարմացեալ ընդ բարերարութիւնն Մուշեղի և ընդ քաջութիւնն և ընդ ազատութիւնն, զի ոչ արար ինչ նմա յաղագս կանանցն թշնամանս: Եւ էր ի ժամանակին յայնմիկ երիվարն Մուշեղի⁹, ճերմակ ձի մի. իսկ թագաւորն Պարսից Շապուհ յորժամ առնոյր զինի ի մատունսն ըմպել⁵, յորժամ ուրախութեանն իւրոյ իւրախութիւնս առնէր զօրացն իւրոց, ասէր. «Ճերմակաձին զինի արբեցէ»¹⁰: Եւ ետ նկարել զտաշտ ի պատկեր զՄուշեղ ճերմակաւան. և ի ժամ ուրախութեանն իւրոյ դնէր զտաշտն առաջի իւր, և յիշէր հանապազ զնոյն բանս ասելով՝ թէ «Ճերմակաձին զինի արբեցէ»:

Այլ¹¹ Մուշեղ և ամենայն զօրքն Հայոց անչափ առին զաւար ի բանակէն Պարսից, և անչափ լցան զանձօք և ստացուածովք. և բազում աւարամասն Պասպայ պահէին թագաւորին իւրեանց. և զօրացն Հայոց՝ որ անդէն առ թագաւորին Պասպայ էին մնացեալ՝ հանին աւարամասն և զօրավարացն Յունաց՝ որ էին առ թագաւորին Հայոց. սոյնպէս և ամենայն զօրացն տային բաշխել ի մեծամեծ աւարացն ածելոցն: Այլ¹² իբրև դարձան զօրքն Հայոց յաշխարհն իւրեանց, բազումք ի զօրացն Հայոց ամբաստանէին առ թագաւորին Պասպայ զՄուշեղէ զսպարապետէն, թէ ընդէ՛ր արձակեաց զկանայս թագաւորին Պարսից զթշնամոյն մերոյ և թագաւորին Հայոց Պասպայ. վասն այսր իրաց¹³ ոչ ինչ սակաւ լինէր թշնամութեամբ ընդ Մուշեղի մինչև ի բազում ժամանակս:

(Փասպոս Բուզանդ, 5-րդ, Բ)

¹ այստեղ՝ հարձակվեց

⁶ ձեռն ի գործ արարեալ-սկսեց

² եւար զնա ի հարուածս անհնարինս- սոսկալի հարվածներով շարդ տվեց նրան
³ այստեղ՝ հավատարիմ
⁴ գործածված են դիմավոր բայի նշանակությամբ՝ գնաց, մտեց
⁵ հայցականով նպատակի պարագա՝ պահպանելու համար

⁷ ումեք-որև է մեկին
⁸ զհետ առն նոցա-իրենց ամուսնու ետև ից
⁹ էր ... Մուշեղի-Մուշեղն ուներ
¹⁰ արբեցէ-թող խմի
¹¹ այստեղ՝ իսկ
¹² այստեղ՝ բայց
¹³ վասն այսր իրաց-այս բանի պատճառով

Ի-Ա ՆԵՐՔԻՆ ՀՈԼՈՎՈՒՄ

§ 108. Հոլովման պատկերն է՝

	Եզակի	Նոգնակի	Եզակի	Նոգնակի
ՈՒ.	անձն	անձինք	թռն	թռուներ
Հ.	(զ)անձն	(զ)անձինս	(զ)թռն	(զ)թռուներս
Ս.Տ.	անձին	անձանց	թռին	թռանց
Բ.	յանձնէ	յանձանց	ի թռնէ կամ ի թռանէ	ի թռանց
Գ.	անձամբ	անձամբք	թռամբ	թռամբք

Հոգնակի ուղղականը բառի վերջին բաղաձայնից առաջ ստանում է *ի* կամ *ու* ձայնավորները՝ վերջավորվելով *ինք*-ով կամ *ուք*-ով:

§ 109. Այս հոլովմամբ հոլովվում են *ն*-ով և նախորդող որևէ այլ բաղաձայնով վերջացող մի շարք բառեր՝ ազն. (=ցեղ, սերունդ, հոգն. ուղղ.՝ ազինք), ազն (=ազնվական, հոգն. ուղղ.՝ ազունք), ափն (ափունք), բեռն (բեռինք), բուն (բունք), գառն (գառինք), դաշն (դաշինք), եզն (եզինք), եղն (=եղնիկ, հոգն. ուղղ.՝ եղինք), լեռն (սեռ. տր.՝ լերին, բաց.՝ ի լեռնէ կամ ի լեռանէ, հոգն. ուղղ.՝ լերինք), խաշն (խաշինք), կամն (կամունք), հարսն (հարսունք), մասն (մասունք), մատն (մատունք), ողն (ողունք), տոռն (=պարան, լար, հոգն. ուղղ.՝ տոռունք) և այլն:

Ծանոթություն 1. Հոգնակի ուղղականում *ինք*-ով վերջացող մի քանի բառեր բարդությունների մեջ վերջավորվում են *ուք*-ով, օրինակ, ազն-ազինք, բայց՝ դիւցազն-դիւցազունք. բեռն-բեռինք, բայց՝ մեծաբեռն-մեծաբեռունք և այլն:

Ծանոթություն 2. *Չեռն* և *ոսն* բառերը եզակի թվում հոլովվում են այս հոլովմամբ, իսկ հոգնակիում՝ արտաքին թեքման *Ի-Ա* և *Ի* հոլովմամբ՝ *ձեռն*. սեռ. տր.՝ ձեռին, բաց.՝ ի ձեռանէ, գործ.՝ ձեռամբ, հոգն. ուղղ.՝ *ձեռք*, սեռ. տր.՝ ձեռաց, բաց.՝ ի ձեռաց, գործ.՝ ձեռաք(օք). *ոսն*, սեռ. տր.՝ ոսին, բաց.՝ յոտանէ,

գործ.՝ ուտամբ, հոգն. ուղղ.՝ *ոտք*, սեռ. տր.՝ ոտից, գործ.՝ ոտիւք:

Քար բառը եզակի թվում հոլովվում է Ի հոլովմամբ (սեռ. տր.՝ քարի, բաց.՝ ի քարէ, գործ.՝ քարի կամ քարամբ), իսկ հոգնակիում ունենում է այս հոլովման պատկանող բառերի նույն հոլովական ձևերը (ուղղ.՝ քարինք, սեռ. տր.՝ քարանց, բաց.՝ ի քարանց, գործ.՝ քարամբք):

Վարժություն 74. Հոլովել Ի-Ա ներքին հոլովմամբ հետևյալ բառերը՝

կաթն, սառն, նեռն (նեռինք), առն (առինք=վայրի արու ոչխար), կառափն (կառափունք=գլուխ, գանգ), դիւցազն, վեհանձն:

Վարժություն 75. Թարգմանել, որոշել Ի-Ա ներքին հոլովման բառերի հոլովն ու թիվը՝ եզակին դարձնելով հոգնակի, իսկ հոգնակին՝ եզակի:

Թագաւորն տեսանէր գթաթ ձեռինն որ գրէր: Մատամբք իրեանց վաստակեցին և կերակրեցան: Իջանէր Մովսէս ի լեռնէն Սինայ: Յարձակէին ի վերայ գառանցն: Յանձա՞նց ինչ ունիցին զայնպիսի շարժումս: Դնէին ի վերայ ուղինն Յոհանու: Հրային մասամբ ջեռուցանէ զամենայն զոյացեալս: Եւ նա գնաց զկնի նորա... իբրև զշուն տոռամբ: Փոշոտեցան և ծխտեցան սրահակք և սրկապանք նորեկ հարսանց:

Վարժություն 76. Թարգմանել, փակագծերի մեջ առնված բառերը դնել համապատասխան հոլովով ու թվով:

Արշակ տիրէ երրորդ (մասն) աշխարհիս: Որ եղեր գանձն քո ի վերայ (խաշինք) քոց: Իջեալ էին յամրոցացն (լեռն)-ն Պարխարայ: Ես փրկեցի զքեզ (ձեռք) Սաուղայ: Յորժամ (քարինք) ոք շինուածս առնիցէ: (Գառինք)-ն լինելոց են զայլք: Սի՛ ոք իշխեսցէ մտանել (բեռն): Առնոյր Դաւիթ զքնարն և նուագէր (ձեռն) իւրով: Արբի զգինի իմ (կաթն) իմով: Ետես մեծն Սահակ զայս ամենայն չարիս (մասն)-ն Պարսից: Ո՞չ թողուցու... ոչխարն (լերինք):

եղեր-դրեցիր

արբի-խմեցի

Վարժություն 77. Թարգմանել գրաբար:

Կոփածո քարերով շինում էին տներ: Կալերում կալսում էին ցորենը կանով: Որդիներով և թոռներով զալիս հասնում է Հայաստան: Նավը բեռներից ծանրացավ և խորտակվեց: Երդվում է, որ այլևս չի խախտի դաշինքը: Կաթից պանիր է լինում: Գառների և ոչխարների բուրդը լվանում էինք զետում: Եզի լուծը ծանր է: Շրջում էին լեռներում և չէին կարողանում մտնել շեները:

կալսել-կատու

լինել-լինել(իմ)

Յաղագս թագաւորին Պապայ, թէ որպէս խոտորեցան¹ ի թագաւորէն Յունաց. և կամ որպէս սպանաւ ի զօրացն Յունաց:

Եւ շրջեաց² զմիտս իր թագաւորն Պապ և խոտորեաց զսիրտ իր ի թագաւորէն Յունաց, և կամեցաւ խառնել զսիրտ իր և առնել միաբանութիւն ընդ թագաւորին Պարսից: Եւ սկսաւ թիկունս իր առնել զարքայն Պարսից, և արձակել անդրէն հրեշտակս յաղագս միաբանութեան: Եւ առաքէր հրեշտակս առ թագաւորն Յունաց, եթէ «Կեսարիա հետ՝ և տասն քաղաք մեր լեալ է, արդ ի բաց տուր³. և զՈւռհա քաղաք շինեալ է նախնեացն մերոց. արդ եթէ ոչ կամիս խանգար ինչ առնել⁴, տուր ի բաց. ապա թէ ոչ, կռուիմք մեծաւ պատերազմաւ»: Այլ⁵ Մուշեղ և ամենայն իշխանքն Հայոց շատ եղին ի մտի⁶ արքային, զի մի՛ քակեսցէ զուխտ յերկրէն թագաւորութենէն Յունաց. և ոչ անսաց նոցա, և յայտնեաց զքշնամութիւն իր՝ զոր ունէր ընդ թագաւորին Յունաց:

Այլ իշխանքն Յունաց և զօրքն նոցին տակաւին էին յերկրինն Հայոց. և անուն իշխանացն միումն Տէրէնտ, միսումն Ադէ: Եւ յղեաց դեսպան մի զադտուկ թագաւորն Յունաց առ իշխանսն զօրացն իւրոց՝ որ էին յերկրինն Հայոց, և հրաման տայր սպանանել զթագաւորն Հայոց զՊապ: Եւ եղև իբրև ընկալան զայս հրաման ի թագաւորէն Յունաց իշխանքն իւր՝ որ էին ի Հայոց երկրինն, սպասէին մահու ի դէպ՝ սպանանել զթագաւորն Հայոց զՊապ: Եւ եղև ի դիպան ժամանակի իբրև զիտացին Տէրէնդն և Ադէն զօրավարքն զօրացն Յունաց՝ թէ միայն է թագաւորն Հայոց Պապ, և ամենայն մեծամեծքն և զօրքն Հայոց չէին անդ. և էր թագաւորն Հայոց Պապ բանակեալ ի դաշտին ի Բագրաւանդ գաւառի ի Խու անուն տեղոյն, և բանակ զօրացն Յունաց բանակեալ էր անդէն մօտ առ բանակին Հայոց արքային. ապա զօրավարն Յունաց հաց մեծապէս գործեալ⁷ յընթրիս հրաւիրեալ կոչեցին զմեծ թագաւորն Հայոց զՊապ մեծապէս ըստ արժանաւորութեան նորա, որպէս օրէն էր զայր թագաւոր ի հաց մեծ կոչել և առնելին կազմութիւն պատրաստութեան⁸:

Եւ եկեալ թագաւորն Պապ յընթրիս, մտեալ բազմեցաւ յուտել և յըմպել⁹: Եւ իբրև մտանէր արքայն ի խորանն Տէրէնդի զօրավարին Յունաց, և լեզնն սպարակիր հետևակն վահան ի ձեռն, սակտր զգօտոյ, շուրջ ի ներքոյ գորմով խորանին պատեալ պակէին¹⁰. սոյնպէս և արտաքոյ կազմէին ի ներքոյ կուռ վառեալք և ի վերոյ հանդերձք զգեցեալք պատրաստէին¹¹: Իսկ թագաւորն Պապ համարէր ի միտս իր թէ ի պատիւ ինչ նորա զայն առնիցեն: Եւ մինչ դեռ յընթրիսն ուտէր, սակրաւոր զօրքն ի թիկանց կուսէ նորա կարգեալք պակէեալք կային շուրջ զնովաւ յամենայն կուսէ: Իբրև ընդ զինս մտին, որպէս զառաջին ուրախութեանցն նուազն¹² մատուցին արքային Պապայ, և առ հասարակ թմբկահարք և սրնգահարք քնարահարք և փողահարք, իւրաքան-

§ 110. Հոլովման պատկերն է՝

	Եզակի	Նոգնակի
ՈՒ.	մատանի	մատանիք
Հ.	(զ)մատանի	(զ)մատանիս
Ս.Տ.	մատանոյ	մատանեաց
Բ.	ի մատանոյ	ի մատանեաց
Գ.	մատանեա	մատանեաք(օք)

Այս հոլովման դեպքում բառավերջի *ի* ձայնավորը *n* հոլովիչից առաջ դառնում է *ւ*, իսկ *ա*-ից առաջ՝ *ե*:

Եզակի ներգոյականի իմաստն արտահայտվում է *ի(յ)* նախդրով և եզակի անորոշ հայցականով, իսկ հոգնակին *ի(յ)* նախդրով և հոգնակի անորոշ հայցականով՝ ի թշնամի=թշնամու մեջ, ի թշնամիս=թշնամիների մեջ:

Մի քանի բառերի եզակի ներգոյականի իմաստը, որոնք տրականում ունենում են նաև ոջ վերջավորությունը, սովորաբար դրսևորվում է *ի(յ)* նախդրով և ոջ վերջավորությամբ տրականով՝ տեղուջ-ի տեղուջ=տեղում, այգուջ-այգուջ, կղզուջ-ի կղզուջ և այլն:

§ 111. Այս հոլովմամբ հոլովվում են՝

ա) *Ի*-ով վերջացող բազմավանկ բառերը (բացառություն են կազմում *ցի* վերջածանց ունեցող և *հոգի, ոգի, ոսկի, որդի* բառերը, որոնք ենթարկվում են Ո պարզ հոլովման, տե՛ս § 103)՝ աղանի, այգի, անդրի (=արձան), ապակի, արքունի, գարի, գերանդի, գերի, գինի, գոլորշի, գօտի, եկեղեցի, թշնամի, ծերունի, մորթի, շոգի, ոգնի, պատանի, փոշի և այլն:

բ) *Ենի, ոտի, ուհի* վերջածանցով բառերը՝ առիծենի, ձիթենի, թզենի, ցնցոտի, թագուհի, տիրուհի, Սմբատուհի, Տիգրանուհի և այլն:

գ) *Ունի*-ով վերջացող հատուկ անունները՝ Ամատունի, Արշակունի, Բագրատունի, Մանդակունի, Խոռխոռունի և այլն:

դ) *Իք*-ով վերջացող մի շարք անեզական հասարակ և հատուկ անուններ՝ արգասիք (արգասեաց), երախտիք, ընթրիք, հարսանիք, տանիք, կեղծիք, չարիք, Տնորիք (Տնորեաց), Աղձնիք, Սիւնիք և այլն:

Վարժույթուն 78. Հոլովել Ո-Ա հոլովմամբ հետևյալ բառերը՝

եղևնի, մորի, կենդանի, մարի (=էգ թռչուն), արմատենի, պատասխանի, ջորի, Արծրունի, Տաճատուհի, կարծիք, Աղձնիք:

չիր արուեստօք պէսպէս ձայնիք բարբառեցան: Եւ վահանաւոր լեզունին հրաման ետուն. և մինչ դեռ թագաւորն Պապ գուրախութեան գինին ունէր ի մատունս իւր, և նայէր ընդ պէսպէս ամբոխ գուսանացն, ահեակ ձեռամբն յարմուկն՝ յոր յեցեալ բազմեալ էր՝ ունէր տաշտ ոսկի ի մատունս իւր, իսկ աջ ձեռնն եղեալ էր ի դաստապան նրանին՝ զոր կապեալն էր յաջու ազդերն իւրում, և մինչ դեռ բերանն ի բաժակին էր յըմպելն, և աջօքն յառաջ կոյս պշուցեալ հայէր ընդ պէսպէս ամբոխս գուսանացն, հրաման լինէր ակնարկելով զօրացն Յունաց: Եւ լեզուն սակրաւորքն երկու ի թիկանց կուտէ կային ի սպասու ոսկիկմբէ վահանօքն յանկարծօրէն կից ի վեր առեալ¹³ զասկորսն, զարկանէին թագաւորին Պապայ. մին կշիռ գուլն հարկանէր¹⁴ սակրան, և միսն և սակրաւորն զաջ թաթ ձեռնին՝ որ կայր ի վերոյ դաստապանի նրանին՝ հարկանէր, կտրէր և ի բաց ընկենոյր: Անդէն ի բերանս տապալէր թագաւորն Պապ. և գինին տաշտին և արինն պարանոցին նովաւ հանդերձ ի վերայ բաժակակալ սկըռեղն անկանէր առ հասարակ. և անդէն սատակէր թագաւորն Պապ: Ընդ շփոթելոյ տաճարին խռովութեան¹⁵ Գնէլ տէր գաւառին Անձնացեաց յոտն կացեալ յիւրմէ բազմականէն, հանեալ զիւր սուտերն՝ հարկանէր զմի ի լեզունաց անդի սպանանէր, յայնցանէ՝ որ հարին¹⁶ զթագաւորն: Ապա Տէրէնդ զօրավարին Յունաց զիւր սուտերն հանեալ ամէր¹⁷, տարակաց ի գլխոյն Գնելոյ զսկաւառակն գլխոյն ի վերայ աչացն ի բաց ընկենոյր¹⁸: Եւ այլ ինչ ոք ոչ կարաց յանդգնել ասել ինչ ընդ նոսա և ոչ ինչ:

(Փաստոս Բուզանդ, 5-րդ, ԼԲ)

¹ այստեղ՝ երես դարձրեց
² գործածված է փոխել, շուտ տալ իմաստով
³ ի բաց տուր-ետ տուր
⁴ խանգար ինչ առնել-խռովություն առաջ բերել
⁵ այստեղ՝ թեև, թեպետ
⁶ եղին ի մտի-հորդորեցին
⁷ հաց... գործեալ-հացկերույթ սարքեցին
⁸ առնէին կազմութիւն պատրաստութեան-ամեն բան կազմել պատրաստել էին
⁹ ի նախդրով և հայցականով անորոշ դերբայը նպատակի պարագա՝ ուտելու և ըմպելու
¹⁰ շուրջ ի ներքոյ գործովք խորանին պատեալ պակէին-ներսը, սենյակի պատերի մոտ, շրջապատելով պահպանում էին

¹¹ սոյնպէս և արտաքոյ կազմէին ի ներքոյ կոտ վառեալք և ի վերոյ հանդերձք զզեցեալք պատրաստէին-նույնպէս և (սենյակից) դուրս պատրաստ կանգնած էին լավ սպառազինված, իսկ վրայից սովորական զզեստ հագած (զինվորներ)
¹² այստեղ՝ բաժակ, գավաթ
¹³ կից ի վեր առեալ-միասին վեր բարձրացնելով
¹⁴ կշիռ գուլն հարկանէր-ուղիղ վիզն կտրեց
¹⁵ ընդ շփոթելոյ տաճարին խռովութեան-երբ սեղանատանը աղմուկ և շփոթություն ընկալ
¹⁶ յայնցանէ՝ որ հարին-նրանցից (զինվորներից) մեկին, որը խփել էր
¹⁷ այստեղ՝ խփեց
¹⁸ ի բաց ընկենոյր-շուտ տվեց

Վարժություն 79. *Թարգմանել, որոշել Ռ-Ա հոլովման բառերի հոլովն ու թիվը:*

Լուանային զձեռս և գերեսս ի փոշույ: Ո՞ւր է տերևն թզենույ, ո՞ւր է ողկոյզն այգույ: Պատրաստէր զըմպելիսն արքայի յընտիր և համեղ գինեաց: Եւ այս էր պատճեն հրովարտակին զոր կնքեալ էր մատանեաւ թագաւորին: Եւ աքաղաղ՝ որ շրջի ի մէջ մարեաց սիգալով: Եւ քաղաքն էր ոսկի մաքուր՝ նման սուրբ և սպիտակ ապակույ: Ջանային և ոչ կարէին հանել զվնասակար խոզնս յայգույ անտի: Ոչ ի մորենույ կթեն խաղող: Թագ կապեաց ի զլուխ նորա և ծիրանեօք զարդարեալ մեծացոյց զնա: Ամուրեացն և այրեացն ասեն: Եւ առաքեաց զճառայս իւր կոչել զհրաւիրեալսն ի հարսանիս:

Վարժություն 80. *Թարգմանել, փակագծերի մեջ առնված բառերը դնել՝ ա ենթակետիկներ սեռական և տրական, բ-ինը՝ բացառական, գ-ինը՝ գործիական հոլովներով, իսկ դ-ինը՝ ի(յ) նախդրով և համապատասխան հոլովով՝ ներգոյականի նշանակությամբ:*

ա) Իսկ Վարագդատ թագաւորն պատգամ յղէր (պատասխանի)-ն առ զօրավարն Մանուէլ: Ելէ՞ք ի լեռոն և բերէ՞ք տերևս (ծիթենիք), և տերևս (արմաւենիք): Եւ անզգայ յարձակմամբ յաւարի առնուլ փութային զգանձս սուրբ (եկեղեցիք)-ն:

բ) Արկանէ կալ (գարի): Պատմեաց մի ոմն (մանկտի) անտի: Որք ունէին զկանաչս (այլազգիք)-ն:

գ) Մի՛ արբենայք (գինի): Սկսան այնուհետև պատրել զոմանս (կարասի) և զոմանս ողոքական բանիք: Միով (գօտի) ճշմարտութեան պնդեցին զմէջս:

դ) Ատրուշանս շինէին ի բագում (տեղիք): Պատմեցէք (կղզիք) հեռաւորս: Բերէին և դնէին ի սուրբ (եկեղեցի)-ն:

Վարժություն 81. *Թարգմանել գրաբար:*

Թզենու տերևները դեղին են: Հանդերձները վնասվում են փոշուց: Արտաշեսի հրամանով բնակվեցին Տնորիքում: Ապակու բեկորները փայլում էին արևի ճառագայթներից: Թագավորը հրովարտակը կնքեց մատանիով: Ամբարները պիտի լցնեն գարիով և ցորենով: Քաջալերում էր պատանիներին քաջաբար մարտնչել: Ծերունիներից լսում էին իմաստուն խրատներ: Մանգաղներով և գերանդիներով կհնձեք արտերը: Բագում տեղերից գողեր և ավագակներ էին գալիս Արշակավան: Երգում և պարում էր պատանիների հետ:

Յաղագս Յոհաննու Եպիսկոպոսի, և վարուց նորա, և անմտութեանն և շաղաշուտ խօսիցն և գործոցն, և նշանացն¹ որ յաստուծոյ ի վերայ նորա եղեն:

Այլ² Յոհան Եպիսկոպոս, որդի Փառինայ հայրապետի, հինաւորց³. թէ արժան իցէ զնա կոչել Եպիսկոպոս: Եւ էր սա այր կեղծաւոր, և երևեցուցանէր ինքն զանձն իւր⁴ մարդկան պահող և խորգահանդերձս. մինչ զի մոյգս անգամ ոչ ազանէր, այլ զամառն⁵ հետկով պատէր, և զձմեռն⁵ կենով: Եւ յագահութեան առանց չափոյ էր հեղեալ, և ոչ կարէր տալ զագահութիւն իւր ընդ երկիրին աստուծոյ⁶. այնչափ ինչ զի զիրս անարժանս և չհաւատալիս գործէր:

Չի էր երբեմն դիպեալ ի ճանապարհի ուրեմն⁷, զի նստէր նա ի գրաստու վերայ և գայր. եկն դիպեցաւ սմա օտար պատանի մի աշխարհական հեծեալ ի ձի, աուսեր ընդ մէջ, թուր զգօտույ, աղեղնակապարճ զմիջով. լուացեալ զհերս իւր օծեալ մերձեալ⁸, վարսակալ եղեալ ի զլուխ իւր, և օղիկ արկեալ գուսովք իւր. և գայր զճանապարհս իւր. թերևս յաւագակութենէ: Իսկ ձին՝ յորում հեծեալ՝ մեծ հասակաւ, և էր զուճաւոր, գնացող, մինչ զի ի բացէ տեսանէր Եպիսկոպոսն Յոհան զձին մեծապէս զարմացեալ՝ ակնակառոյց լինէր⁹: Ապա իբրև եկն մերձեցաւ հեծեալն մօտ ի նա անդր, ապա սպասեալ Յոհաննու՝ բուռն հարկանէր զերասանակաց ձիոյն, և ասէր. «Է՛ջ դու վաղվաղակի ի ձիոյ այտի, զի բանք են ինձ ընդ քեզ»¹⁰: Ասէ այրն. «Չի ոչ դու զիս գիտես և ոչ ես զքեզ, զի՞նչ այն բանք իցեն, զոր դու ընդ իս իցես խօսելոյ»¹¹: Մանաւանդ զի այրն արբեալ և ս դիպեցաւ, և շատ յամառեաց այրն իջանել ի ձիոյն: Ապա բռնադատեաց զնա Յոհան, իջոյց ի ձիոյ անտի. և առ տարաւ զնա մեկուսի ի ճանապարհէն: Եւ առնն խոնարհել հրամայէր և ասէր. «Չերիցութեան ձեռն դնեն ի վերայ քո»: Իսկ նա տայր պատասխանի զանձնէն¹², եթէ «Այր աւագակ սպանող չարագործ և խառնագնաց լեալ ի մանկութենէ իմմէ, ես ոչ ինչ եմ արժանի այդպիսի իրաց. և այժմ դեռ ի նմին գործ կամ»: Եւ շատ ի վէզ եկեալ¹³ յամառէր այրն, և նա և ս չար քան զնա: Ապա բռնաբար զգետնեալ գայրն, դնէր Յոհան զձեռն իւր՝ առնել զնա երէց. և յարուցեալ հրամայէր լուծանել զհանգոյցս մեկնոցին, և արկանել նմա աղաբողոն: Եւ ասէր. «Ե՛րբ ի գետ քո, և լիջի՛ր դու անդ երէց գեղջն՝ ուստի ես»: Եւ անգամ ոչ զիտէր գայրն թէ յորմէ գեղջէ իցէ: Ինքն Յոհան մատուցեալ բուռն հարկանէր զձիոյն, և ասէր. «Այս ինձ կօշիկք լիցին, փոխանակ զի երէց արարի զքեզ»: Իսկ այրն յամառեալ ի վերայ ձիոյն չառնոյր յանձն տալ. ապա բռնաբար յինքն հանեալ¹⁴ զձին, և գայրն արձակեաց: Եւ այս ամենայն իրքս վասն ձիոյն եղեն:

Ապա այրն թէ ոչ կամօք՝ աղէբողոն արկեալ, զնայր ի տուն իւր, և երթեալ

ԱՆԿԱՆՈՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

§ 112. Անկանոն կամ զարտուղի հոլովման բառերը, չնայած ունեն հոլովման որոշ օրինաչափություններ, շեղվում են հոլովման սովորական կանոններին և հանդես են գալիս հոլովական հատուկ ձևերով:

Անկանոն հոլովման ենթարկվող բառերն են՝ *այր* (=տղամարդ), *տէր*, *հայր*, *մայր*, *եղբայր*, *քոյր*, *կին*, *տիկին*, *զիւղ* (*զենղ*), *ար* (*օր*), *տիւ* (=ցերեկ): Այս բառերի մեջ հոլովիչներն առանձին կամ բոլոր հոլովներում նույնանուն են արմատական ձայնավորների հետ:

Ներգոյական հոլովի իմաստը դրսևորվում է ընդհանուր ձևով՝ եզակիև եզակի տրականով, իսկ հոգնակին՝ հոգնակի հայցականով և *ի(յ)* նախդրով:

ՀՈԼՈՎՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

1. Այր

2. Տէր

	Եզակի	Նոգնակի	Եզակի	Նոգնակի
ՈՒ.	այր	արք	տէր	տեարք
Հ.	(զ)այր	(զ)արս	(զ)տէր	(զ)տեարս
Ս.Տ.	առն	արանց	տեառն	տեարց, տերանց
Բ.	յառնէ	յարանց	ի տեառնէ	ի տեարց, ի տերանց
Գ.	արամբ	արամբք	տերամբ	տերամբք

Այր, *տէր* բառերի նման հոլովվում են նրանցով բարդված բառերը՝ սկեսայր-սկեսարառն (նաև՝ սկեսարայրի, ի սկեսարայրէ), քեռայր-քեռառն, տանուտէր-տանուտեառն, պարտատէր-պարտատեառն (նաև՝ պարտատիրի, պարտատիրաց), գաւառատէր:

3. Հայր

	Եզակի	Նոգնակի
ՈՒ.	հայր	հարք
Հ.	(զ)հայր	(զ)հարս
Ս.Տ.	հար(հօր)	հարց, հարանց
Բ.	ի հարէ (ի հօրէ)	ի հարց, ի հարանց
Գ.	հարբ, հարամբ	հարբք, հարամբք

մտանէր ի մէջ ընդանեաց իւրոց, ասէ ցկին իւր և ցընդանիս. «Արի՛ք յաղօթս կամք»¹⁵: Եւ նորա ասեն. «Մոլիս դու, դե՞ ուրեմն հարաւ ի քեզ»: Իսկ նա ասէ. «Արի՛ք կամք յաղօթս, վասն զի երէց եմ»: Իսկ նորա զարմացեալ, մերթ շիկնէին, մերթ ծիծաղէին. մինչև բազում անգամ յամառեալք, ասպա ուրեմն հաւանեցան կալ յաղօթս ընդ նմա: Ապա ասէ կինն ցայրն իւր. «Ո՞չ դու երախայ»¹⁶ էիր, և չէիր մկրտեալ»: Ասէ այրն ցկինն իւր. «Ապշեցոյց, չես յիշել. և ոչ ես յիշեցի զայդ ասել ցնա. զիս երէց արար, և ձին սանձաւ քամբաւ առ և անց»: Եւ ասեն ցայրն ընդանիքն իւր. «Յարիցես»¹⁷ անդրէն գնացես առ եպիսկոպոսն, և ասասցես. «Մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս երէց»: Իսկ նորա¹⁸ յարուցեալ գնացեալ առ եպիսկոպոսն, ասէ ցնա. «Ես մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս երէց»: Եւ ասէ Յոհան. «Սափորով միով ջուր բերէք»: Եւ առեալ զջուրն էարկ զգլխով նորա, և ասէ. «Ե՛րթ, մկրտեցի զքեզ»: Եւ արձակէր զայրն վաղվաղակի յիւրմէ:

(Փաստոս Բուզանդ, 6-րդ, Ը)

¹ նշանացն-այն հրաշքների
² օժանդակ բայը (էր) զեղչված է՝ այլ էր
³ այստեղ՝ նախկին
⁴ զանձն իւր-իրեն
⁵ զամառն-ամռանը. զմեռն-ձմռանը
⁶ ոչ կարէր տալ զազահութիւն իւր ընդ երկիւղին աստուծոյ-բառացի՝ չէր կարողանում իր ազահութիւնը տալ աստծու երկյուղի փոխարեն, այսինքն՝ իր ազահութիւնից աստծուց երկյուղ չունէր
⁷ զի էր երբեմն դիպեալ ի ճանապարհի ուրեմն-մի անգամ պատահեց մի ճանապարհի վրա

⁸ մերձեալ, այստեղ՝ հարողարած
⁹ ակնակառույց լինէր-աչքը վրան մնաց
¹⁰ բանք են ինձ ընդ քեզ-քեզ հետ խոսելիք ունեմ
¹¹ փխ. խօսելոց
¹² զանձնէն-իր մասին
¹³ ի վէզ գալ-վիճել, հակառակվել, դեմ կանգնել
¹⁴ յինքն հանել-խլել, հափշտակել
¹⁵ ներկան ապառնու իմաստով՝ աղոթք անենք
¹⁶ երախայ, ի, ից, գ. դեռ չկնքված՝ չմկրտված, անկնունք (փոքր կամ մեծ)
¹⁷ յարիցես-վեր կկենաս
¹⁸ սեռական հոլովով ենթակա՝ անցյալ դերբայի մոտ: Պետք է քարզմանել ուղղականով՝ նա

	4. Մայր		5. Եղբայր	
	Եզակի	Նոգնակի	Եզակի	Նոգնակի
ՈՒ.	մայր	մարք	եղբայր	եղբարք
Հ.	(գ)մայր	(գ)մարս	(գ)եղբայր	(գ)եղբարս
Ս.Տ.	մայր(մօր)	մարց	եղբար(եղբօր)	եղբարց
Բ.	ի մայրէ (ի մօրէ)	ի մարց	յեղբարէ (յեղբօրէ)	յեղբարց
Գ.	մարք	մարքք	եղբարք	եղբարքք

Հայր, մայր, եղբայր բառերի նման հոլովվում են նրանցով բարդված բառերը՝ նախահայր, նախամայր, տիրամայր, հորեղբայր և այլն:

	6. Քոյր		7. Կին	
	Եզակի	Նոգնակի	Եզակի	Նոգնակի
ՈՒ.	քոյր	քորք	կին	կանայք
Հ.	(գ)քոյր	(գ)քորս	(գ)կին	(գ)կանայս
Ս.Տ.	քեռ (քուեր)	քերց (քուերց)	կնոջ	կանանց, կանաց
Բ.	ի քեռէ	ի քերց	ի կնոջէ	ի կանանց, կանաց
Գ.	քերք	քերքք	կանամբ կամ կնաւ	կանամքք

Քոյր բառի նման հոլովվում են նաև *հօրաքոյր* (հօրաքեռ), *մօրաքոյր* (մօրաքեռ) բառերը, իսկ *կին* բառի նման՝ *առնակին* բառը:

	8. Տիկին		9. Գիւղ	
	Եզակի	Նոգնակի	Եզակի	Նոգնակի
ՈՒ.	տիկին	տիկնայք	գիւղ	գիւղք
Հ.	(գ)տիկին	(գ)տիկնայս	(գ)գիւղ	(գ)գիւղս
Ս.Տ.	տիկնոջ	տիկնայց, տիկնաց	գեղջ	գիւղից
Բ.	ի տիկնոջէ	ի տիկնայց, ի տիկնաց	ի գեղջէ	ի գիւղից
Գ.	տիկնամբ կամ տիկնաւ	տիկնամքք	գիւղիւ	գիւղիւք

	10. Աւր (օր)		11. Տիւ	
	Եզակի	Նոգնակի	Եզակի	Նոգնակի
ՈՒ.	աւր(օր)	աւորք	տիւ	տիւք
Հ.	(գ)աւր (գօր)	(գ)աւորս	(գ)տիւ	(գ)տիւս
Ս.Տ.	աւոր	աւորց	տուրնջեան	-
Բ.	յաւրէ (յօրէ)	յաւորց	ի տուրնջեանէ	-
Գ.	աւորք	աւորքք	տուրնջեամբ	-

Տիւ բառը հոգնակի թվում ունի միայն ուղղական և հայցական հոլովածները:

Վարժություն 82. Թարգմանել, որոշել անկանոն հոլովման բառերի հոլովն ու թիվը:

Ի մարց իւրեանց պահանջէին հաց և գինի: Կանայք յարանց իւրեանց, և մանկունք ի հարց իւրեանց, և մարք ի բերանոյ տղայոց իւրեանց յափշտակէին զկերակուրն: Մինչև զոսկերս անգամ հարցն բրեաց ի գերեզմանաց: Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել: Նման է առն, որ շինիցէ տուն ի վերայ հողոյ առանց հիման: Շունք կերակրին ի փշրանաց անկելոց ի սեղանոյ տեսոն իւրեանց: Բայց մնաց Աթանազենի որդի ի Բամբըշնէ ի քեռէ թագաւորին: Իսկ թագաւորն Տրդատիոս հանդերձ միաբանութեամբ կնաւ իւրով Աշխէն տիկնաւ, և քերք իւրով Խոսրովիդիստով, հրաման ետ ի ժողով կոչել միաբանութեամբ ամենայն զօրաց իւրոց: Որ էր ի գաւառէն Բագրն անդայ, ի գեղջէն որ կոչի Եղեգեակ: Յայն աւուրսն երկիրն ի շարժմանէ ոչ դադարէր: Իբրև գառնեւ այնպէս խորտակեաց զամենայն ոսկերս իմ, զի ի տուրնջեանէ մինչև ի գիշեր մատնեցայ: Ելէք ամենայն արք պատերազմողք: Հրամայեաց և յամենայն գեղս վանս շինել:

Վարժություն 83. Թարգմանել, փակագծերի մեջ առնված բառերը դնել համապատասխանաբար սեռական և տրական, բացառական, գործիական հոլովներով:

ա) Եւ արկանէ գրգռութիւն ի մէջ (եղբարք): Պատմեաց (հայր) իւրում, և (եղբարք) իւրոց: Եւ էր նա կին Գարեգնի (տէր)-ն Ուշտունեաց գաւառին: Ետես զգինդսն և զապարանջանսն ի ձեռսն (քոյր) իւրոյ: Երթային երիտասարդք և կուսանք և ամենայն բազմութիւն (արք) և (կանայք): Նմանեցաւ արքայութիւնն երկնից (այր), որ սերմանիցէ սերմն բարի յազարակի իւրում:

բ) Յովք (գիւղք) հարկս առնոյր: Արհմն և Որմիգդ (հայր) ծնան և ոչ (մայր): Մի՛ ստանար նախատինս (արք) չարաց: Գնային (գիւղ)-ն լռելեայն:

զ) Տունն լի էր (արք) և (կանայք): Այր ոմն Անանիա անուն հանդերձ (կին) իւրով Սափիրա վաճառեաց ագարակ: Կոյսք ի կուսաստանաց (մարք)-ն հանդերձ ի հրապարակս հասանէին: Սատակէ զամենայն ծնունդս Արգամայ հանդերձ (հայր)-ն:

Վարժություն 84. Թարգմանել գրաբար:

Իմ քույրերն ու եղբայրները բնակվում են գյուղում: Երեխաներին խլեցին մայրերի գրկից: Մայրապետը եղբայրներով և քույրերով հանդերձ վերադարձավ իր (իւր) երկիրը: Հայտնի թո (քում) հորն ու մորը: Կանայք բաժանվում էին իրենց (իրեանց) ամուսիններից: Մշակում էր իր (իւրոյ) տիրոջ այգին: Որդին սիրվում է հոր և մոր կողմից: Կանանց և տղամարդկանց, ծերերին և երեխաներին գերի էին տանում: Ուրախությամբ անցան իմ (իմոց) կյանքի օրերը: Հրաման ունեին գյուղերում շինել ստորուշաններ:

վերադառնալ-դառնալ

անցնել-անցանել

ՅԱՂԱԳՍ ՆՈՐԻՆ՝ ՅՈՏԱՆՆՈՒ

Երբեմն² սոյն Յոհան անցանէր առ այգեօք ուրումն³. և էր ժամանակն զայգիսն յատելոյ: Աղաղակէր⁴ առ նա այր մի յայգոյն, և ասէ. «Օրհնեա՛, տէր եպիսկոպոս, զնեզ և զայգիսս»: Ասէ Յոհան. «Փուշ և տատասկ բուսցի»: Ասէ այրն. «Ի մարմինդ թո բուսցի փուշ և տատասկ, փոխանակ զի տարապարտուց անիծանես զմեզ»: Եւ եղեն նշանք յաստուծոյ. զի իբրև չոգաւ⁵ եպիսկոպոսն ի վանս իւր, հասին հարուածք ի վերայ նորա, սկսաւ ընդ ամենայն անդամս մարմնոյ նորա որպէս զփուշ հարկանել⁶: Եւ մեծապէս շտապեալ անկեալ ի տանջանս չարաչարս հարուածոց, և ի մեծ տագնապի կայր ատուրս բազումս: Ապա յղեաց կոչեաց առ ինքն զայգորդն, աղաչեաց զնա առնել ի վերայ նորա⁷ աղօթս, զի փրկեսցի նա ի ցաւոցն: Այգորդն ասէր. «Իսկ ես ո՞վ եմ, զի կարեմ զոք⁸ օրհնել կամ անիծանել. թող թէ⁹ զայր եպիսկոպոս»: Իսկ նա բռնադատէր զնա յայնժամ. մինչև յառնէր այգորդն կայր յաղօթս և ասէր. «Տէր աստուած, դու զիտես՝ զի ես այր մեղաւոր եմ և անարժան, ոչ զիտեմ զաղմուկս՝ յորում ըմբռնեցայս¹⁰. դու փրկեա՛ զիս յայս ի չարես¹¹, զի ասեն՝ թէ զայր եպիսկոպոս դու անիծեր, և ասեն թո բանիւ եղև: Չի լաւ էր ինձ մահ, քանզի չզիտեմ զայս՝ զոր ինչ զինէն¹² ասեն»: Եւ զայս ասացեալ՝ անդէն բժշկեցաւ եպիսկոպոսն, և սկսաւ յամենայն մարմնոցն փուշն ի բաց թափել. և էր իբրև զփուշ խտոց. վաղվաղակի յարուցեալ ողջացաւ յախտէն:

(Փաստոս Բուզանդ, 6-րդ, Թ)

¹ նորին - նույն	անդամներն սկսեցին ծակծկվել, կարծես փշից
² մի անգամ	⁷ այստեղ նշանակում է՝ իր
³ առ այգեօք ուրումն - մեկի այգիների մոտով	⁸ զոք-մեկին
⁴ գործածված է անց. կատարյալի իմաստով՝	⁹ թող թէ-այն էլ
⁵ ծայն տվեց	¹⁰ ոչ զիտեմ զաղմուկս՝ յորում ըմբռնեցայս-
⁶ չոգաւ-զնաց	¹¹ չզիտեմ ինչպես ընկա այս փորձանքի մեջ
⁷ սկսաւ ընդ ամենայն անդամս մարմնոյ	¹² նախդիրը կրկնված է
նորա որպէս զփուշ հարկանել-նրա մարմնի բոլոր	զինէն-իմ մասին

ՀԱՄԱՆՈՒՆ ԲԱՆԵՐԻ ՀՈՒՆՎՈՒՄԸ

§ 113 Համանուն բառերն ընդհանրապես ենթարկվում են տարբեր հոլովումների, իսկ որոշ դեպքերում հոլովվում են նույն հոլովմամբ:

- ա) Տարբեր հոլովում ունեցող համանուն բառերի օրինակներ.
- Այր, առն, արամբ (=տղամարդ)
- Այր, այրի, այրի (=բարանձավ)
- Գայլ, գայլոյ, գայլով (=գայլ զագանը)
- Գայլ, գայլի, գայլի (=բերանակապ)
- Դար, դարու (=100 տարի)
- Դար, դարի, դարի (=բարձր տեղ, դարավանդ)
- Խաղ, խաղու կամ խաղոյ, խաղով (=խաղալը, այլն՝ ծաղր, կատակ)
- Խաղ, խաղի, խաղի (=խաղաղ՝ ծանծաղ ջուր, ճահիճ)
- Կար, կարոյ, կարով (=կարելը, այլն՝ պարան)
- Կար, կարի, կարի (=կարողություն)
- Հագար, հագարոյ, հագարով (=մառուլ բույսը)
- Հագար, հագարի, հագարաւ (=1000)
- Հոր, հորոյ, հորով (=փոս)
- Հոր, հորի, հորի (=փեսա)
- Մայր, մայր (մօր), մարբ (=մայր)
- Մայր, մայրի, մարի (=մայրի ծառը)
- Որթ, որթոյ, որթով (=խաղողի տունկ)
- Որթ, որթու (=հորթ)
- Սան, սանու կամ սանի (=սան, սանիկ)
- Սան, սանի, սանի (=կաթսա)
- Փող, փողի, փողի (=պարանոց, վիզ)
- Փող, փողոյ, փողով (=մանր դրամ)
- Օդ, օդոյ, օդով (=օդ)
- Օդ, օդի, օդի (=ոտնաման)

- բ) Նույն հոլովում ունեցող համանուն բառերի օրինակներ.
- Բայ, բայի, բայից (=խոսքի մասը)
- Բայ, բայի, բայից (=գազանների՝ հատկապես արջի որջ)
- Նուագ, նուագի, նուագաց (=երգ, տաղ)
- Նուագ, նուագի, նուագաց (=գավաթ, բաժակ)
- Մարդ, սարդի, սարդից (=դափնի ծառը)
- Մարդ, սարդի, սարդից (=սարդ միջատը)
- Մարդ, սարդի, սարդից (=սարյակ թռչունը)

Վարժություն 85. Թարգմանել, գտնել համանուն բառերը՝ որոշելով նրանց հոլովումը, հոլովն ու թիվը:

Խնուն գակունս աղբերաց: Մի՛ մերժեր զխրատ մօր քո: Եւ զարդարեաց զտունն ակամբք պատուականօք: Առնուն զջուրս ծովուն զաղին և զղառնն, արկանեն ի սանս: Ժողովէր բովանդակ զամենայն ոսկերս սանին: Ահա ես բնակեմ ի տան մայր փայտից: Բագում գայլք շրջին ի հանդերձս գառանց: Եւ ետ կապել զնա ձեռս յետս, և արկանել գայլ ի բերան նորս: Գործ մի մեծ է՝ այր հաւատարիմ գտանել: Փախստեայս արկանէ յամուր այրս ի գաւառին Մանանաղոյ: Օձ ի բոյն հաւուց ձագուց դիմեսցէ: Բայց Տիրան հաւն նորս պատգամս խիստս յղեաց առ որդի իւր Արշակ: Առաքէ զՍմբատ ասպետ, զհայր Բագարատայ՝ ածել զկոյսն Աշխէն՝ դուստր Աշխադարայ: Ի թիկանց կուսէ լերինն Մասեաց շինեաց ձեռակերտ:

ետ կապել-կապել տվեց

ՅԱՂԱԳՄ ՆՈՐԻՆ ՅՈՏԱՆՆՆՈՒ

Սոյն Յոհան եպիսկոպոս՝ որդի Փառինայ յորժամ երթայր առ թագաւորն¹ Հայոց, խաղակատակ լինէր² նոցա. որպէս³ խաղալով² զանձն իւր կրթէր յագահութեան, որում ծարաւեալ պասքեալ փափաքէր⁴, սակայն միահանէք այն էին նորս⁵: Ի չորք անկեալ յոտս և ի ձեռս⁶ սողէր առաջի թագաւորացն, և զուղտու զձայն⁷ ածէր կառաչելով, զօրէն ուղտու այնպէս փարելով⁸: Ընդ կառաչելն⁹ ապա մի մի բան խառնելով առնէր ի ձայն կառաչելոյն, ասելով՝ թէ «Ուղտ եմ, ուղտ եմ, և զարքայի զմեղս⁷ բառնամ. դիք¹⁰ ի վերայ իմ զմեղս արքայի, թող բառնամ»: Իսկ թագաւորքն զմութիակս զիւղաց կամ զագարակաց գրեալ և կնքեալ դնէին ի վերայ ողինն Յոհաննու փոխանակ ընդ մեղաց իւրեանց. և ի թագաւորացն Հայոց ստացաւ իւր զեղս և ագարակս և զանձս յուղտն լինելոյ և զմեղսն բառնալոյ ըստ բանիցն: Այսպիսի էր այրս Յոհանս

կապեալ յըռժողութեան¹¹ և յագահութեան զամենայն աւուրս կենաց իւրոց. զայսպիսի գործս գործէր վասն ագահութեան, որ չէր արժան:

(Փաստոս Բուզանդ, 6-րդ, Ժ)

- ¹ փխ. թագաւորսն
- ² խաղակատակ լինել-խեղկատակություն՝ միմոտություն անել. խաղալ այստեղ՝ ծամածռություն՝ միմոտություն անել
- ³ այստեղ՝ այսպէս օրինակ
- ⁴ որում ծարաւեալ պասքեալ փափաքէր- որին անհագարար փափագում էր
- ⁵ սակայն միահանէք այն էին նորս-և (այդ խեղկատակությունները) նրան իբրև միջոց էին ծառայում
- ⁶ ի չորք անկեալ յոտս և ի ձեռս-սողբերի և ձեռքերի վրա ընկած, չորեքքաթ
- ⁷ նախդիրը կրկնված է
- ⁸ շրջելով, ման գալով
- ⁹ ընդ նախդրով և հայցական հոլովով անորոշ դերբայն իբրև ժամանակի պարագա՝ կառաչելիս, կառաչելու ժամանակ:
- ¹⁰ դիք-դրեք
- ¹¹ կապեալ յըռժողութեան-վարակված ժլատությանը՝ կծծիությանը

ԳԱՍ ՏԱՄՆԻՆՆԵՐՈՐԳ

ԳԵՐԲԱՅՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

114. Գրաբարում հոլովվում են անորոշ, անցյալ և ենթակայական դերբայները, ըստ որում անորոշ դերբայը հոլովվում է միայն եզակի թվով, իսկ անցյալ և ենթակայական դերբայները՝ և՛ եզակի, և՛ հոգնակի թվով: Անորոշ և անցյալ դերբայները հոլովվում են արտաքին թեքման Ո պարզ, իսկ ենթակայականը՝ Ի-Ա խառն հոլովմամբ: ՈՒ լծորդության բայերի *ու* խոնարհիչը թեք հոլովմեքում սղվում է (թողուլ-թողոյ), իսկ անցյալ դերբայի *ես* երկբարբառը դառնում է *ե* (մնացեալ-մնացելոյ): Հոլովման օրինակներ.

Եզակի

ՈՒ.	տեսանել	հնացեալ	պատերազմող
Հ.	(զ)տեսանել	(զ)հնացեալ	(զ)պատերազմող
Ս.Տ.	տեսանելոյ	հնացելոյ	պատերազմողի
Բ.	ի տեսանելոյ	ի հնացելոյ	ի պատերազմողէ
Գ.	տեսանելով	հնացելով	պատերազմողաւ

Հոգնակի

ՈՒ.	հնացեալք	պատերազմողք
-----	----------	-------------

Հ.	(գ)հնացեալս	(գ)պատերազմողս
Մ.Տ.	հնացելոց	պատերազմողաց
Բ.	ի հնացելոց	ի պատերազմողաց
Գ.	հնացելովք	պատերազմողաւք(օք)

§ 115. Գերբայներից անորոշը և ապառնին ունեն միայն անկախ գործածություն, իսկ անցյալ և ենթակայական դերբայները կարող են գործածվել և՛ գոյական անունների հետ, և՛ անկախ:

Անցյալ և ենթակայական դերբայները գոյական անունների հետ գործածվում են թե՛ նախադաս, թե՛ ետադաս: Նախադաս գործածվելիս այս դերբայները հոլովով ու թվով սովորաբար չեն համաձայնում իրենց գոյական լրացյալների հետ, իսկ ետադաս գործածության դեպքում համաձայնում են, օրինակներ՝ Մի՛ ընկղմեսցի նա հաւատոց մերոց ի մէջ *ալեկոծեալ ծովու* մեղաց (Եղիշէ, էջ 152): *Կանթեղիք վառելովք...* գտուրբն յողարկեցին (Բուզ., 5-րդ, ԻԳ): Որ իջին ի դժոխս *պատերազմօղ զինուքն* իւրեանց (Եզեկ., ԼԲ, 27): Մի՛ լինիք ընկեր *առն բարկացողի*, ընդ *բարեկամի գայրացողի* մի՛ բնակեր (Առակ., ԻԲ, 24):

§ 116. Երբ երկու կամ ավելի բայեր ունենում են նույն ենթական, սովորաբար նրանցից առաջինը դրվում է անցյալ դերբայով, որը թարգմանվում է աշխարհաբար կամ անորոշ դերբայի գործիական հոլովով, կամ հաջորդ դիմավոր բայի դեմքով ու թվով, օրինակ՝ Եւ մտեալ ի նաւ անց յայնկոյս և եկն ի քաղաք իւր (Մատթ., Թ, 1)=Եվ նալ մտալ (կամ մտնելով) անցալ այն կողմը և եկալ իր քաղաքը: Այս դեպքում ենթական հաճախ դրվում է սեռական հոլովով և թարգմանվում աշխարհաբար ուղղական հոլովով, օրինակ՝ Եւ լուեալ Արտաշեսի գայսպիսի իմաստուն բանս, գնաց յեզր գետոյն (Խոր., 2-րդ, Ծ)=Եվ Արտաշեսը յսելով այսպիսի իմաստուն խոսքեր, գնաց գետի ափը: Նոցա թողեալ վաղվաղակի գնաւն և գհայր իւրեանց, գնացին գհետ նորա (Մատթ., Դ, 22) =Նրանք թողնելով նալը և իրենց հորը, գնացին նրա ետև ից:

Վարժություն 86. *Թարգմանել, որոշել անորոշ, անցյալ և ենթակայական դերբայների հոլովն ու թիվը. դուրս գրել անցյալ և ենթակայական դերբայներն իրենց գոյական լրացյալների հետ միասին՝ բացատրելով, թե ինչպես են համաձայնել նրանք վերջիններիս հետ:*

Չախ և զգիշեր ոչ դադարեր ի խրատելոյ և ի բողոքելոյ: Արեգակն ծագելովն և վերանալով և ի մուտս դառնալով, և լուսին աճմամբ լնլով և նուազելով: Չօրավարն Վաչէ կատարեր վաղվաղակի գասացեալսն արքայի: Տացէ ինձ հաց ուտելոյ և հանդերձ զգեմլոյ: Եւ արք պատերազմօղը որ ածին աւար: Չամենայն մթերեալ թոյնսն թափեաց ի բաց: Էառ իւր Արշակ զկինն սպանելոյն

զՓառանձեմն: Թունից և սպանող դեղոց աղբիւրս բոխիցէ: Չորս բաժանեաց Մովսէս յարանցն պատերազմողաց: Արք սրտիւ զուարճացելով զգինի քո: Եւ ի բազմութենէ դիականացն անկելոց՝ յստակ ջուրք գետոյն յարին դառնային: Եւ նեղելոց և տարակուսելոց օգնական և վերակացու, և ջատագով ամենայն զրկելոց լինէր նա: Չանալով զցայգ և զցերեկ՝ թարգմանեաց զկտակարանս ամենայն: Ոչ ոք արկանէ կապերտ անթափ ի վերայ հնացեալ ձորձոյ:

Վարժություն 87. *Հոլովել հետևյալ կապակցությունները՝ դրանք համաձայնեցնելով գոյական անունների հետ դերբայների գործածության կանոններին համապատասխան:*

Այր պատերազմող, ծնեալ մանուկ, հայր ծերացեալ, հուր բորբոքեալ:

Վարժություն 88. *Թարգմանել, ընդգծված բայերը դնել անցյալ դերբայով, իսկ ենթակաները՝ սեռական հոլովով:*

Իսկ Արտաւազդ և Տիրան իմանալ զխորհուրդն նորա, դարան գործեալ յորս սպանին զՄաժան, զոր տարեալ թաղեցին ի Բագնացն աւանի իբր զքրմապետ: Առնուլ այնուհետև *երանելին* զհաւատացեալս իւր, դիմեալ իջանէր յանկարգ և յանդարման տեղիս Գողթան: Եւ *իմանալ եղբարք* իջուցին զնա ի Կեսարիա: Եւ *մտանել կաթողիկոսն* Հայոց հանդերձ երանելեան Մաշտոցիւ առ թագաւորն Վռամշապուհ: Չայս *տեսանել թագաւորն Քուշանաց՝ ոչ* հանդուրժէր ելանել ընդ առաջ նորա պատերազմաւ: Եւ *նա* (նորա) *հրամայել* կոչել զմոզսն և զամենայն աւագան դրանն: Եւ *նա* սիրով *ընկալուլ* զնա: Եւ *նոքա* (նոցա) *տեսանել* զհազարապետն և զգօրականսն, դադարեցին ի հարկանելոյ զՊօղոս: Եւ *նոքա յսել* (լուեալ) զայս ի թագաւորէն՝ փութացուցանէին զնա:

Վարժություն 89. *Թարգմանել գրաբար՝ ընդգծված բայերը դնելով անցյալ դերբայով, իսկ ենթակաները՝ սեռական հոլովով:*

Թագաւորն իր մոտ (առ ինքն) *կանչելով* նախարարներին՝ առատ պարգևներ տվեց (ետ) նրանց (նոցա): *Երանելին առնելով* իր աշակերտներին, զնում է Սամոսատ քաղաքը: *Թշնամիները ասպատակեցին*, ավերեցին երկիրը: *Նախարարները ստանալով* կայսրի հրովարտակը, ընթերցում են այն գորքերի առջև (առաջի): *Հովսեփը տեսնելով* իր եղբայրներին՝ ուրախացալ: Իսկ *նա բարկանալով*, հրամայեց գլխատել նրանց (զնոսա): *Նրանք թողնելով* հայրենի երկիրը, փախան օտար աշխարհ:

«Այս¹, ասե՛², Հայկ գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խախտակն և հաստաբազուկ³: Սա ի մէջ սկայիցն քաջ և երևելի լեալ⁴, և ընդդիմակաց ամենեցուն, որք ամբառնային զձեռն՝ միապետել ի վերայ ամենայն սկայիցն և դիցազանց: Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բելայ, ի տարածանել ազգի մարդկան ընդ լայնութիւն⁵ ամենայն երկրի, ի մէջ բազմակոյտ սկայիցն, անհուն, խօլաց և ուժաւորաց: Քանզի անդ⁶ մոլեգնեալ այր իւրաքանչիւր, սուր ի կող ընկերի իւրոյ ձգելով՝ ջանային տիրել ի վերայ միմեանց. ուր պատահմունք ի դէպ ելանէին Բելայ⁷ բռնանալ ունել զամենայն երկիր: Որում⁸ ոչ կամեցեալ հնազանդ լինել Հայկայ, յետ ծնանելոյ գորդի իւր զԱրամանեակ ի Բաբելոնի՝ չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդուլք իւրովք և դատերօք և որդուց որդուլք, արամբք զօրաւորօք, թուով իբրև⁹ երեքհարիւր, և այլովք ընդոժնօք և եկօք յարեցելովք ի նա¹⁰ և բոլոր աղխիւ: Երթեալ բնակել ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում¹¹ սակաք ի մարդկանէ յառաջագոյն գրուելոցն դադարեալ բնակէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ շինէ անդ¹² տուն բնակութեան կալուածոց և տայ ի ժառանգութիւն Կադմեայ՝ որդոյ Արամանեակայ: Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյցս:

«Եւ ինքն խաղայ, ասե՛², այլով աղխիւն ընդ արևմուտս¹³ հիւսիսոյ, զայ բնակել ի բարձրաւանդակ դաշտի միում, և անուանէ զանուն լեռնադաշտին Հարք, այս ինքն թէ հարք են աստէն բնակեալք՝ ազգի տանն Թորգոմայ: Շինէ և գիւղ մի, և անուանէ յիւր անուն՝ Հայկաշէն»: Յիշի աստանօր ի պատմութեանս՝ ի հարաւոյ կողմանէ¹⁴ դաշտիս այսորիկ, առ երկայնանստի միով լեռամբ¹⁵, բնակեալ յառաջագոյն արք սակաք, ինքնակամ հնազանդեալ¹⁶ դիւցազինն: Արդարացուցանէ և այս զասացեալ զրոյցս անգիրս:

(Մովսէս Խորենացի, 1-ին, Ժ)

¹ Հայկ բառի լրացումն է՝ այս Հայկը
² միջանկյալ նախադասություն է
³ օժանդակ բայը (էր) բացակայում է
⁴ լինիմ բայի անցյալ դերբայն է,
 գործածված է դիմավոր բայի (էր) իմաստով
⁵ ընդ լայնութիւն-լայնությամբ
⁶ անդ-այն ժամանակ
⁷ պատահմունք ի դէպ ելանէին Բելայ-
 Բելին պատահաբար հաջողվեց
⁸ որում-որին
⁹ իբրև, այստեղ՝ մոտ, մոտավորապես
¹⁰ եկօք յարեցելովք ի նա-նրան

հարած եկվորներով
¹¹ յորում-որտեղ
¹² անդ-այնտեղ
¹³ ընդ նախդիրը հայցական հոլովի
 հետ արտահայտում է ուղևորման իմաստ՝
 դեպի հյուսիս-արևմուտք, կամ կարելի է
 ըմբռնել հյուսիս արևմուտքով նշանակությամբ
¹⁴ բացառական հոլովը ներգոյականի
 իմաստով՝ այս դաշտի հարավային կողմում
¹⁵ առ նախդիրը գործիական հոլովի հետ
 մոտ իմաստով՝ մի երկայնանիստ լեռան մոտ
¹⁶ հնազանդեալ-հնազանդվեցին

ԳԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈՒՈՎՈՒՄ

§ 117. Գրաբարի դերանունները ութ տեսակ են՝ անձնական, ցուցական, ստացական, փոխադարձ, հարցական, հարաբերական, անորոշ, որոշյալ:
 Գրաբարի որոշ դերանուններ հոլովվում են անվանական հոլովմամբ՝ համապատասխան հոլովիչներով, իսկ որոշ դերանուններ՝ առանց հոլովիչների՝ արմատների յուրահատուկ փոփոխություններով: Նկատի ունենալով այդ փոփոխությունները, դերանունների հոլովումը, ի տարբերություն անվանական հոլովման, կոչվում է դերանվանական հոլովում:

ԱՆՁՆԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§ 118. Անձնական դերանուններն են՝ *ես, դու, նա, ինքն, իւր*, որոնք հոլովվում են հետևյալ կերպ.

	Եզակի Նոգնակի		Եզակի Նոգնակի		Եզակի Նոգնակի	
Ու.	ես	մեք	դու	դուք	նա	նոքս
Հ.	(զ)իս	(զ)մեզ	(զ)քեզ	(զ)ձեզ	(զ)նա	(զ)նոսա
Ս.	իմ	մեր	քո	ձեր	նորա	նոցա
Տ.	իմձ	մեզ	քեզ	ձեզ	նմա	նոցա
Բ.	յինէն	ի մէնջ	ի քէն	ի ձէնջ	ի նմանէ	ի նոցանէ
Գ.	ինն	մեւք(մեօք)	քն	ձեւք(ձեօք)	նովաւ	նոքաւք (նոքօք)

	Եզակի	Նոգնակի	Եզակի	Նոգնակի
ՈՒ.	ինքն	ինքեանք	-	իւրեանք
Հ.	(զ)ինքն	(զ)ինքեանս	-	(զ)իւրեանս
Ս.	ինքեան	ինքեանց	իւր	իւրեանց
Տ.	ինքեան	ինքեանց	իւր	իւրեանց
Բ.	յինքեանէ	յինքեանց	յիւրմէ	յիւրեանց
Գ.	ինքեամբ	ինքեամբք	իւրև, իւրեաւ, իւրեամբ	իւրեամբք

§ 119. *Ես* դերանվան եզակի ներգոյականի իմաստն արտահայտվում է

ի(յ) նախորդով և եզակի հայցականով՝ *յիս*, իսկ հոգնակին՝ հոգնակի հայցականով՝ *ի մեզ*: Մյուս անձնական դերանունների ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է ընդհանուր ձևով՝ *ի(յ)* նախորդով, եզակի տրական և հոգնակի հայցական հոլովներով:

§ 120. *Ինքն* դերանունը կարող է գործածվել առաջին դեմքի նշանակությամբ՝ Ինքեանք ի նմին կատյ ենք (Յովբ, Գ, 19)=Մենք (ինքներս) նույն կավից ենք:

Ինքն դերանունը (առանձին կամ *իսկ* բառի հետ միասին) հաճախ գործածվում է մյուս դերանունների, ինչպես և գոյականների հետ սաստկական նշանակությամբ՝ ես ինքն, դու ինքն, նա ինքն, մեք ինքեանք, նոյն ինքն, ինքն թագաւորն: Օրինակ՝ Եւ ես ինքն մարդ եմ (Գործ., Ժ, 26)=Հենց ես էլ (ինքս էլ) մարդ եմ: Դու ինքն ես թագաւոր իմ և աստուած իմ (Մաղմ., ԽԳ(ԽԴ), 5): Այլ նա ինքն գթած էր (Մաղմ., ՀԷ(ՀԸ), 38): Ես ինքն իսկ եմ, ասէ. կամիմ ի ներքս մտանել և տեսանել զձեզ (Եղիշէ, էջ 148): Այլ և ինքն թագաւորն հրամանի նորա անսայր (Եղիշէ, էջ 88): Եւ ինքեանք իսկ հարքն մեր հպարտացան և անօրինեցան (Նէեմ., Թ, 16):

Ինքն դերանվան փոխարեն անձնական դերանունների, այլև գոյականների հետ սաստկական նշանակությամբ կարող է գործածվել *իքնին* բառը (առանձին կամ *իսկ* բառի հետ միասին)՝ Դուք ինքնին գիտէք (Գործ., Ժ, 28)=Հենց դուք (դուք ինքներդ) գիտէք: Ես ինքնին իսկ, ասէ, փութայի ջանալ կատարել (Բուզ., 4-րդ, Դ): Եւ նա ոչ գիտէ թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ (Մարկ., Դ, 27):

Ինքն դերանվան պես անձնական դերանունների հետ սաստկական նշանակությամբ կարող են գործածվել *ինձէն*, *մեզէն* (երբեմն՝ մեզոյն), *քեզէն* (երբեմն՝ քեզոյն), *ձեզէն* (երբեմն՝ ձեզոյն) բառերը (առանձին կամ *իսկ* բառի հետ միասին), որոնք բացառական հոլովի մթագնված ձևեր են. օրինակ՝ Դուք ձեզէն իսկ քաջ գիտէք (Եղիշէ, էջ 135)=Հենց դուք (դուք ինքներդ) լավ գիտէք: Մեք մեզէն ողջ ենք դիցն օգնականությամբ (Եղիշէ, էջ 9): Չէլ և զմուտ ճանապարհաց քոց ես ինձէն գիտեմ (Եսայի, ԼԷ, 28):

Այս բառերը կարող են գործածվել առանձին՝ դերանվան նշանակությամբ, օրինակ՝ Ո՞չ ահա ձեզէն իսկ արժան էր անդէն դատաստան առնել վասն այդպիսի անարժան ուսմանց (Եղիշէ, էջ 27)=Չէ՞ որ դուք ինքներդ պետք է դատաստան անելիք այդպիսի անարժան ուսմունքների համար:

§ 121. *Անձն* գոյականը գրաբարում հաճախ գործածվում է (առանձին կամ *իմ*, *քո*, *մեր*, *ձեր*, *իւր*, *իւրեանց* բառերի հետ միասին) անձնական դերանվան նշանակությամբ՝ Իսկ նա տայր պատասխանի գանձնէն (Բուզ., 6-րդ, Ը)=Իսկ նա պատասխան տվեց իր մասին: Քանզի անձամբ անձին օգնել ոչ կարէին կորեան (Յովբ, Գ, 20)=Որովհետև իրենք իրենց չէին կարողանում օգնել, կորան: Փրկեցեր զանձն իմ ի մահուանէ (Մաղմ., ԾԵ(ԾԶ), 13)=Փրկեցիք ինձ մահից: Վարաներ յանձն իւր (Ազ., Բ, 24)=Վարանում էր ինքն իր մէջ:

Վարժություն 90. *Թարգմանել, որոշել անձնական դերանունների հոլովն ու թիվը՝ եզակին դարձնելով հոգնակի, իսկ հոգնակին՝ եզակի:*

Ես և եղբարք իմ հարազատ այսօր հրաժարիմք ի քէն: Իսկ ես ո՞վ եմ, զի աղաչես դու զիս: Հանդերձ նորքօ յառաջ խաղայր սպարապետն Հայոց Վասակ: Եւ աղաչէր զնոսա մարդասէրս լինել: Չիք ի մնա նենգութիւն: Եւ իւր անդէն քաղաք բնակութեան շինեաց: Ոչ ունի արմատս յինքեան: Գովիչք իմ ինն երդնովին: Ծառք բողբոջեն պտղովք իւրեանց: Առնու ի նմանէ գօր յօգնականութիւն ինքեան: Նոքա ոչ հաւատացին նմա: Գործովք իւրեանց ուրացեալ են ի նմանէ: Եւ ինքեանք դառնային, և ի մի վայր ժողովէին: Մեռաւ յերկրին Խոթաստանի յԱնդրըն բերդին ինքն ինքեանք ձեռօք: Բագումք ի ձէնց լաւագոյնք էք քան զիս արութեամբ: Ի քէն տանջանք և ի մէնց յանձնառութիւնք: Նովաւ եկեղեցիքն պարծին իբրև քաջ և կատարեալ զինուոր: Քեւ փրկեցայց ի փորձութենէ:

Վարժություն 91. *Թարգմանել, փակագծերի մէջ առնված անձնական դերանունները դնել համապատասխան հոլովով ու թվով:*

Ապստամբել (դու) կամեցաւ Եմանոս: Թագաւորն և մեծամեծքն ոչ երբէք մեկնէին (նա): Ոչ եթէ (ինքն) հակառակ էր, այլ ընկերին: Քանզի պատուէր ընկալայ (դու): Չա՞յս ամենայն կամենայիք լսել դուք (ես): Ուսան գղարկութիւն հայրենի աշխարհին (իւրեանք): Հանէր զգէն իւր (ինքն): Ոչ ունիմ ինձ օգնական բաց (դու): Ես նոյն պատմեմ (դուք): Եւ նա համակ անարգեանց (ես): (Դու) զքշնամիս մեր հարցուք, և անուամբ քով արհամարհեսցուք զյարուցեալսն ի վերայ մեր:

Վարժություն 92. *Թարգմանել գրաբար:*

Իրենք իրենց ձեռքերով այրեցին կրակատները: Խորամանկությամբ պատվում էր նրանց: Մենք ձեզ երբէք չենք լսի: Թագավորը խնդրում էր նրանից սեր և խաղաղություն: Չէր ընկերը ի՞նչ (զի՞նչ) է խնդրում ինձնից: Մի՛ լքիր ինձ: Քեզանից ենք կամենում ուսանել ճշմարիտը: Նրանցից ոմանց (զոմանս) մեծարում էր պարզ կերով և ընծաներով: Կուսուցանեն նաև իրենց որդիներին: Մենք չենք երկնչում ձեզանից:

Վարժություն 93. *Թարգմանել՝ ուշադրություն դարձնելով ահա՛ բառի ընդգծված ձևերի նշանակության վրա:*

Եթէ ասիցենք եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, *զանձինս* խաբենք: Եկա՛յք, *զանձինս անձամբք* մխիթարեսցուք: Փրկեցեր ի վշտաց *զանձն իմ*: Եւ ամենայն

պատրաստութեամբ *զանձն* զարդարեալ, հարկանէր զիշխանացն սպասաորութիւնսն: *Անձամբ անձին* այր իւրաքանչիւր զվճիռ վատ մահու... տեսանէր: Ի տազնապի զկառավարն և *զանձինս* կացուցանեն: Ոչ ոք կարէ լինել երաշխատր *անձին իւրում*: Բազում անգամ ողորմիմ *անձանց ձերոց*: Մեծաւ տրտմութեամբ խռովեալ տարակուսէր *յանձն իւր*: *Անձամբ անձին* առէր զբեռն ծանրութեան:

ՅԱՂԱԳՍ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԵՎ ՄԱՆՈՒՄՆՆ ԲԵԼԱՅ

Եւ յառաջ մատուցեալ զբանս իւր ասէ¹, թէ ի հաստատել Տիտանեանն Բելայ զթագաւորութիւն իւր ամ ամենեսեան² առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդոց իւրոց ամ Հայկ արամբք հաւատարմօք, զալ նմա ի հնազանդութիւն և կեալ խաղաղութեամբ³: «Բնակեցեր, ասէ, ի մէջ ցրտութեան սառնամանեաց. այլ ջեռուցեալ մեղկեա՛ գրտութիւն սառուցեալ քո հպարտացեալ բարուդ, և հնազանդեալ ինձ՝ կեա՛ց ի հանդարտութեան, ո՛րք հաճոյ է քեզ յերկրիս իմում բնակութեան»: Եւ ի բաց դարձուցեալ Հայկայ զպատգամաւորսն Բելայ՝ խըստութեամբ պատասխանեաց: Դառնայ առաքեալն անդրէն ի Բաբելոն:

Ապա զօրաժողով լինի ի վերայ նորա Տիտանեանն Բէլ ամբոխիս հետևակ զօրաց. զայ հասանէ ի հիւսիսի, յերկիրն Արարադայ, մերձ ի տունն Կաղմեայ: Փախստական լինի Կաղմոս առ Հայկ, քաջընթացիկս առաջի իւր առաքէ. «Գիտեա՛, ասէ, ո՛վ մեծոյ դիւցազանց, զի դիմեալ զայ ի վերայ քո Բէլ յաւերժիւք քաջօք և երկնադիգօք հասակօք սկայիւք մրցողօք: Եւ իմացեալ իմ զմերձ լինելն ի տուն իմ՝ փախեայ, և գամ աւասիկ տազնապար: Արդ աճապարեա՛ խորհել զոր ինչ գործելոց ես»:

Իսկ Բէլն, յանդուգն և անճոռնի զօրութեամբ ամբոխին, որպէս յորձան ինչ սաստիկ ընդ գառ ի վայր հեղեղեալ՝ փութայր հասանել ի սահմանս բնակութեանն Հայկայ, ի սիրտ և ի մարմին վատահացեալ արանց զօրաւորաց: Աստ ուշիմ և խոհեմ սկայն քաջազանգուրն և խայտակնն, աճապարեալ հաւաքէ զորդիս իւր և զթռուռնս, արս քաջս և աղեղնաւորս, թուով յոյժ նուագունս, և զայլսն և ս որ ընդ իւրով ձեռամբ. հասանէ յեզր ծովակի միոյ, որոյ աղի են ջուրքն, մանունս⁴ ունելով յինքեան ձկունս: Եւ կոչեցեալ զգօրս իւր՝ ասէ ցնոսա. «Յելանելն մեր հանդէպ ամբոխին Բելայ, դիպել ջանասցուք տեղոյն, ուր անցեալ կայցէ⁵ ի մէջ խռան քաջացն Բէլ: Չի կամ մեռցուք, և աղիս մեր ի ծառայութիւն Բելայ կացցէ, կամ զաջողութիւն մատանց մերոց ի նա ցուցեալ ցրուեսցի ամբոխն, և մեք եղիցուք յաղթութիւն ստացեալք»:

Եւ յառաջ կոյս անցեալ բովանդակ ասպարէզս՝ հասանեն ի միջոց ինչ դաշտաձև՝ լերանց բարձրագունից: Եւ յաջմէ⁶ ջուրց հոսանաց ի բարձրաւան-

դակում կուռ կալով ի տեղոջ⁷, ի վեր զերեսս ամբարձեալ՝ երևեցաւ նոցա բազմութիւն անկարգ հրոսակի ամբոխոյն Բելայ, ցան և ցիր յանդուգն յարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալով. իսկ Բէլ հեզ և հանդարտ ամբոխի մեծաւ ի ձախմէ⁸ ջուրցն ի վերայ ոստոյ⁸ միոյ, իբրև ի դիտանոցի: Ծանեալ⁹ Հայկ զխումբ վառելոյ¹⁰ ջոկատին, յորում Բէլ առաջի ամբոխին եկեալ հասեալ¹¹ ընտրիւք և վառելովք ոմամբք. և երկար միջոց ճանապարհի ընդ նա և ընդ ամբոխն¹²: Եւ ինքն զխանոց ազուցեալ երկաթի, նշանաւորօք վերջիւք¹³, և տախտակս պղնձիս թիկանց և լանջաց, և պահպանակս բարձից¹⁴ և բազկաց. գօտևորեալ զմէջսն, և յահեկէ զուրն երկսայրի. և նիզակ անարի ի ձեռին իւրում աջոյ և յահեկումն վահան, և ընտիրք յաջմէ և ի ձախմէ: Եւ տեսեալ Հայկին զՏիտանեանն կուռ վառեալ, և զարս ընտիրս ընդ նմա աջինս և ահեկինս՝ կարգէ զԱրամանեակն երկու եղբարքք ընդ աջմէ¹⁵, և զԿաղմոս և զայս երկուս յորդոց իւրոց ի ձախմէ, զի արք կորովիք էին յաղեղն և ի սուսեր. և ինքն առաջի, և զայս հրոսակին զկնի իւր կարգեաց. երեքանկիւնի իմն կարգեաց ձևով, հանդարտ յառաջ մատուցեալ:

Եւ հասեալ երկոցունց կողմանց սկայիցն ի միմեանս՝ ահագին դրդողմունս ի վերայ երկրի առնէին շահատակելով, և ահս պակուցանողս տարագուր¹⁶ յարձակմանցն սկայազունքն զմիմեամբք¹⁷ արկանէին: Անդ ոչ սակաւք երկոցունց կողմանց արք յաղթանդամք բերանոյ սրոյ դիպեալք՝ տապալ յերկիր կործանէին, և մարտն յերկոցունց կողմանց մնայր անպարտելի: Չայսպիսի անակնունելի դիպումս տարակուսանաց տեսեալ արքայն Տիտանեան զարհուրեցաւ, և ի նոյն բլուր ուստի էջն՝ վերջոտնեալ ելանէր¹⁸. քանզի խորհէր ի միջոցի ամբոխին ամբանալ, մինչև հասցէ բովանդակ զօրն, զի միսանգամ ճակատ յօրինեացէ: Չայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն, լի քարշէ զայնալիճն, դիպեցուցանէ զերեքն եանն կրծից տախտակին, և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր հարստի սլաքն. և այսպէս ճոխացեալն Տիտանեան կործանի յերկիր զարկուցեալ, և փշէ զոգին: Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեան՝ փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց: Եւ վասն այսորիկ այսչափ բաւական լիցի ասել:

Բայց զտեղի ճակատուն շինէ դաստակերտ, և անուն կոչէ Հայք, վասն յաղթութեան պատերազմին. այսորիկ աղագաւ և գաւառն այժմ անուանի Հայոց Չոր: Իսկ զբլուրն, ուր քաջամարտկօքն անկաւ Բէլ՝ անուանեաց Հայկ Գերեզմանս, որ այժմ ասին Գերեզմանակք: Բայց զդիակն Բելայ պաճուճեալ դեղովք, ասէ, հրամայէ Հայկ տանել ի Հարք, և թաղել ի բարձրաւանդակ տեղոջ, ի տեսիլ կանանց և որդոց իւրոց: Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախնուոյն մերոյ Հայկայ՝ Հայք:

(Մովսէս Խորենացի, 1-ին, ԺԱ)

¹ նկատի ունի Մար Աբաս Կատինային
² *ամ* նախդիրը հայցական հոլովի
 հետ *վրա* իմաստով՝ ամենքի վրա
³ դերբայական երկրորդական
 նախադասություն է, որի ենթական դրված է
 տրական հոլովով, իսկ ստորոգյալները՝
 անորոշ դերբայով
⁴ ձկունն բառի որոշիչն է՝ մանր
⁵ ուր անցեալ կայցե-ուր անցած կանգնած կլինի
⁶ բացառականը ներգոյականի իմաստով
⁷ կոտ կալով ի տեղուշ-ամուր դիրք գրավելով
⁸ այստեղ՝ բլուր իմաստով
⁹ ծանեալ-ճանաչել

¹⁰ վառեալ-սպառազինված
¹¹ օժանդակ բայը զեղչված է
¹² նախադասության ստորոգյալը
 (էր, կայր) չի արտահայտված
¹³ նշանատրոօք վերջիւք-նշաններ
 ունեցող վերջերով
¹⁴ բարձք. այստեղ՝ ազդրեր
¹⁵ ընդ նախդիրը բացառականի
 հետ ներգոյականի իմաստով
¹⁶ այստեղ՝ ձև երով
¹⁷ գ նախդիրը գործիականի հետ *վրա* իմաստով
¹⁸ վերջուտեալ ելանել-ետ
 քաշվելով բարձրանալ

ԴԱՍ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

ՅՈՒՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§ 122. Յուցական դերանուններն են՝ *սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն*, որոնց հիմքում ընկած են ս, դ, ն արմատական հնչյունները:
Ճանոթություն. Այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն դերանուններով և այլն (պիսի), չափ, քան բառերով կազմվում են նաև հետևյալ յուցական դերանունները՝ այսպէս, այդպէս, այնպէս, սոյնպէս, դոյնպէս, նոյնպէս, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նոյնպիսի, այսքան, այդքան, այնքան, նոյնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նոյնչափ:
 § 123. Սա, դա, նա

Եզակի			
Ու.	սա	դա	նա
Հ.	(գ)սա	(գ)դա	(գ)նա
Ս.	սորա	դորա	նորա
Տ.	սմա	դմա	նմա
Բ.	ի սմանէ	ի դմանէ	ի նմանէ
Գ.	սովաւ	դովաւ	նովաւ

Նոգնակի

Ու.	սոքա	դոքա	նոքա
Հ.	(գ)սոսա	(գ)դոսա	(գ)նոսա
Ս.	սոցա	դոցա	նոցա
Տ.	սոցա	դոցա	նոցա
Բ.	ի սոցանէ	ի դոցանէ	ի նոցանէ
Գ.	սոքաք(օք)	դոքաք(օք)	նոքաք(օք)

Վարժություն 94. *Թարգմանել, որոշել սա, դա, նա յուցական դերանուններին հոլովն ու թիվը՝ եզակին դարձնելով հոգնակի, իսկ հոգնակին՝ եզակի:*

Չշառաիդ արմատոյ դորա թողէք յերկրի: Չի սոքա աւելի վնասակար են գազանացն՝ քան թէ գազանքն սոցա: Չիք հաւատք ի սմա: Չներքին և զարտաքին աղտեղութիւնս մեր նոքօք սրբեմք: Ի նմանէ կերակրին և ի ծոց նորա հանգչին: Կամ նա զսա ապականէր, կամ սա զնա: Աչք մեր գիջացեալ են արտասուօք ի կծութենէ ծխոյ դորա:

Վարժություն 95. *Թարգմանել, գրաբար:*

Հավատացե՛ք դրան: Նրանք ուրախանում են սրանցով: Չենք վախենում սրանից: Դրանով կնքեց հրովարտակները: Դրա միսը չի ուտվում: Դրանցից կկռեն մանգաղներ և խոփեր: Դրա մեջ չկա (ոչ գոյ) խոնավություն:

§ 124. *Այս, այդ, այն*
Այս, այդ, այն դերանունները հոլովվում են երկու ձևով՝ կարճ և երկար: Երկար ձևերը հանդես են գալիս եզակի թվի թեք և հոգնակի թվի բոլոր հոլովներում:

Եզակի

Ու.	այս	այդ	այն
Հ.	(գ)այս	(գ)այդ	(գ)այն
Ս.	այսր, այսորիկ	այդր, այդորիկ	այնր, այնորիկ
Տ.	այսմ, այսմիկ	այդմ, այդմիկ	այնմ, այնմիկ
Բ.	յայսմ, յայսմանէ	յայդմ, յայդմանէ	յայնմ, յայնմանէ
Գ.	այսու, այսուիկ	այդու, այդուիկ	այնու, այնուիկ

Նոգնակի

Ու.	այսք,	այդք,	այնք,
-----	-------	-------	-------

Հ.	այստքիկ (գ)այս, (գ)այստսիկ	այրոքիկ (գ)այր, (գ)այրոսիկ	այնոքիկ (գ)այնս, (գ)այնոսիկ
Ս.	այսց, այսոցիկ	այրց, այրոցիկ	այնց, այնոցիկ
Տ.	այսց, այսոցիկ	այրց, այրոցիկ	այնց, այնոցիկ
Բ.	յայսց, յայսցանէ կամ յայսոցիկ	յայրց, յայրցանէ կամ յայրոցիկ	յայնց, յայնցանէ կամ յայնոցիկ
Գ.	այստքիւք (այստքիւնքք)	այրոքիւք (այրոքիւնքք)	այնոքիւք (այնոքիւնքք)

Ծանոթություն. Հոգնակի հայցականում *այս* և *այդ* դերանունների կարճ ձևերը *ս* հոլովակերտ չեն ստանում: Հոգնակի գործիականում այս դերանունները հոլովվում են միայն երկար ձևերով՝ *այստքիւք, այրոքիւք, այնոքիւք*:

§ 125. *Այս, այդ, այն* դերանունները գործածվում են գոյական անունների հետ և՛ նախադաս, և՛ ետադաս:

Նախադաս գործածվելիս *այս, այդ, այն* դերանունները՝ ա) հոլովով ու թվով համաձայնում են գոյական անուններին, բացի հոգնակի ուղղական և հայցական, մասամբ էլ՝ գործիական հոլովներից, որտեղ մնում են եզակի, բ) հոլովվում են կարճ ձևով, դ) իրենց վրա են կրում գոյականների նախդիրները:

Հոլովման օրինակ

Եզակի

Հոգնակի

ՈՒ.	այս ժամանակ	այս ժամանակք
Հ.	(գ)այս ժամանակ	(գ)այս ժամանակս
Ս.	այսր ժամանակի	այսց ժամանակաց
Տ.	այսմ ժամանակի	այսց ժամանակաց
Բ.	յայսմ ժամանակէ	յայսց ժամանակաց
Գ.	այսու ժամանակաւ	այսու ժամանակաւք(օք) կամ այստքիւք ժամանակաւք(օք)

Ծանոթություն 1. Նշված կանոններն ունեն շեղումներ. ա) երբեմն *այս, այդ, այն* դերանունները հանդես են գալիս երկար ձևերով՝ *այնորիկ* գրչի (Վոր., Ը), *այստքիկ* թագաորք (Ա. Մնաց., Ա, 43). բ) հոլովով ու թվով կարող են չհամաձայնել գոյականներին՝ *այն սերմանէ* (Եզնիկ, 2-րդ, Ժ), *այս գործով* (Բուզ., 4-րդ, Դ), *այս սեանց* (Ազ., ՃԲ, 737). գ) գոյականը կարող է ստանալ

համապատասխան դերանվան հոդը՝ *այդ* հրամանիդ (Փարս., 2-րդ, ԻԶ), *յայսմ* ժամանակիս (Բուզ., 5-րդ, Դ):

Ետադաս գործածվելիս *այս, այդ, այն* դերանունները՝ ա) հոլովով ու թվով համաձայնում են գոյական անուններին. բ) հոլովվում են երկար ձևով. գ) գոյականի նախդիրները (բացի *առ* նախդիրից) կրկնվում են դերանունների վրա. դ) գոյականները ստանում են համապատասխան դերանվան հոդը՝ *ս, դ, ն*:

Հոլովման օրինակ

Եզակի

Հոգնակի

ՈՒ.	ժամանակս այս	ժամանակքս այստքիկ
Հ.	(գ)ժամանակս զայս	(գ)ժամանակսս զայստսիկ
Ս.	ժամանակիս այստքիկ	ժամանակացս այսոցիկ
Տ.	ժամանակիս այսմիկ	ժամանակացս այսոցիկ
Բ.	ի ժամանակէս յայսմանէ	ի ժամանակացս յայսցանէ
Գ.	ժամանակաւս այստիկ	ժամանակաւք(օք)ս այստքիւք

Ծանոթություն 2. Նշված կանոններն ունեն մասնակի շեղումներ. ա) երբեմն *այս, այդ, այն* դերանունները հոլովվում են կարճ ձևով՝ բանակի *այնր* (Փարս., 3-րդ, ՀԷ), ի մեծ գահոյս *յայսմ* (Եղիշէ, էջ 83). բ) հոլովով ու թվով կարող են չհամաձայնել գոյականներին՝ *արքս այս* (Գործ., ԺԶ, 17), *բանքն այն* (Բուզ., 5-րդ, ԼԸ), *ի խորհրդիս յայս* (Փարս., 3-րդ, ԿԶ). գ) նախդիրները կարող են չկրկնվել դերանունների վրա՝ ըստ բանիդ *այդմիկ* (Ծննդ., ԽԴ, 8), զբաղաբօքն *այնոքիւք* (Յեսու, ԺԹ, 8). դ) գոյականը կարող է չստանալ համապատասխան դերանվան հոդը՝ *ի տեղոջէ* յայդմանէ (Ծննդ., ԺԳ, 14), *ի ժամանակի* անդ յայնմիկ (Բուզ., 4-րդ, ԻԵ), յամբարիշտ *աշխարիէ* աստի յայսմանէ (Բուզ., 5-րդ, ԻԴ):

Վարժույթուն 96. *Թարգմանել, որոշել անկախ գործածված այս, այդ, այն ցուցական դերանունների հոլովն ու թիվը՝ եզակին դարձնելով հոգնակի, իսկ հոգնակին՝ եզակի:*

Պատիւս և պարզևս այնոցիկ շնորհէր: Երանի իցէ այնմ, որ հաւատայ յիս: Այդմ ես լինիմ երաշխատոր: Բագունք այնոքիկ էին, որ իբրև լսէին՝ գովէին զպատասխանիս: Այնմ ոչ էր տեղեակ: Ոչ այնու միայն զարմանալի է: Եւ յայնմանէ խնդրէր Մահակ փախչել յԱրշակայ: Փրկեա՛ զիս յայնցանէ, ոչք գործեն զանօրէնութիւն: Եւ այնու ցուցանէ՝ թէ տկար էր Զրուանն: Այսմ հաւատացեալ Արշակ, յղէ զնոյն իսկ զՎարդան առ Գ.նէլ:

Վարժություն 97. Թարգմանել, որոշել գոյականների հետ գործածված *այս, այդ, այն* դերանունների հոլովն ու թիվը՝ բացատրելով հոդերի ու նախդիրների կիրառությունը:

Ուստի՞ է ինձ միս՝ տալ ամենայն ժողովրդեանս այսմիկ: Պատգամս յղեր օրինակաւս այսուիկ: Մի՞թէ ի վիմէս յայսմանէ համիցենք ձեզ ջուր: Եւ մինչ դեռ պատասխանի այսց թղթոց ոչ էր ընկալեալ, վախճանի Աբգարիոս: Շինեաց նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնոցիկ: Անկաներ ի պատերազմին յայնմիկ մեծ սպարապետն Հայոց Վաչէ: Իբրև ելանիցէք ի տանէն կամ ի քաղաքէն յայնմանէ: Դու ես ապաւէն իմ ի նեղութենէս յայսմանէ: Եւ պատմեաց նմա Յովնաթան զամենայն բանս զայսոսիկ: Մի՞ ուտիցէք յայդմ ծառոյ: Յայն քաղաքս և տունս և ի գեղս զամենայն համբարեն: Յայնմ տեղոջ ծածկեցին զմարմինս արքոյն Դանիէլի ընդ հողով: Այսու օրինակաւ խորհեցաւ առնել զիշխանութիւնս Պարսից յանապատ աներակ:

Վարժություն 98. Թարգմանել, փակագծերի մեջ առնված դերանունները դնել գոյականի պահանջած հոլովով ու թվով:

Եւ մխիթարեաց զքեզ տեսեամբ (այդ): Այսուհետև մխիթարեցէք զմինեանս բանիքս (այսոքիկ): Յօժարեցին զարքայ՝ փոյթ առնել վասն պիտոյիցն (այնոքիկ): Եւ տայ պատերազմ ընդ նախարարսն (այնոքիկ): Եւ ի ժամանակին (այն) յիշեաց թագաւորն Պապ զհին գրոյցսն: Դու կարող ես փրկել զիս ի պղծութենէս (այս): Եւ (այնք) ժամանակաց մինչև ի քո հայրենի աթոռ՝ մեք զնոյն ծառայութիւն ծառայեցաք: Ի վերայ (այդ) վիմի շինեցից զեկեղեցի իմ: Չ(այն) ժամանակաւ երթեալ հասանէր եպիսկոպոսապետն Վրթանէս ի մեծն յառաջին ի մայրն եկեղեցեացն Հայոց:

Վարժություն 99. Հոլովել հետևյալ կապակցությունները:

Այս ճանապարհ, արն(օրն) այն, ծառայդ այդ, դուստրս այս, այն պարիսպ, այդ բան:

Վարժություն 100. Թարգմանել գրաբար՝ *այս, այդ, այն* դերանունները գործածելով գոյականների հետ նախադաս:

Այս քարերով կշինեմ իմ տունը: Չենք հավատում այդ խոսքերին: Այն մատանիով կկնքես հրովարտակը: Խմում էին այս գետի ջրից: Այդ պատերազմում կհաղթեն իրենց թշնամիներին: Այս պատվերները չենք մոռանա: Ես կլինեմ միջնորդ այդ գործի: Օրըստօրե գեղեցկացան այս քաղաքները: Այդ գե-

րիներից շատերը մեռան ճանապարհին: Չէր կամենում այն գինուց ըմպել: Այգիներ էին տնկում այս դաշտերում:

Վարժություն 101. Թարգմանել գրաբար՝ *այս, այդ, այն* դերանունները գործածելով գոյականների հետ ետադաս:

Այդ օրը կխավարի արեգակը: Այս գետերը սկիզբ են առնում այն լեռների բարձունքներից: Այդ դեղերով բուժեցին վիրավորներին: Մի՞ հանք ջուր այն ջրհորից: Այդ քաղաքը կոչվեց նրա անունով: Թշնամու գործերը այն կողմից էին հարձակվում: Այդ հրամանները անմիջապես կկատարվեն: Այս քաղաքի հրապարակները գեղեցիկ են: Այդ անտառներում զազաններ են բնակվում: Հեռացեք այս քաղաքից, գնացեք այն քաղաքը:

§ 126. Սոյն, դոյն, նոյն

Եզակի			
ՈՒ.	սոյն	դոյն	նոյն
Հ.	(զ)սոյն	(զ)դոյն	(զ)նոյն
Ս.	սորին	դորին	նորին, նորուն
Տ.	սմին	դմին	նմին
Բ.	ի սմին	ի դմին	ի նմին
Գ.	սովին, սովիմբ	դովին, դովիմբ	նովին, նովիմբ

Նոգնակի			
ՈՒ.	սոքին, սոյնք	դոքին, դոյք	նոքին, նոյնք
Հ.	(զ)սոսին, (զ)սոյնս	(զ)դոսին, (զ)դոյնս	(զ)նոսին, (զ)նոյնս
Ս.	սոցին, սոցուն, սոցունց	դոցին, դոցուն, դոցունց	նոցին, նոցուն, նոցունց
Տ.	սոցին, սոցուն, սոցունց	դոցին, դոցուն, դոցունց	նոցին, նոցուն, նոցունց
Բ.	ի սոցունց	ի դոցունց	ի նոցունց
Գ.	սոքիմբք, սովիմբք	դոքիմբք, դովիմբք	նոքիմբք, նովիմբք, նոքունքք

Ծանոթություն 1. Դոյն դերանունն իմաստով համապատասխանում է *դա, այդ* դերանուններին և թարգմանվում աշխարհաբար դրանց համապատասխան ձևերով, օրինակ՝ Ըստ դմին օրինակի կորիցեն (Ազ., ԺԸ, 198)=Դրանման (այդ ձևով) կկորչեն:

Ծանոթություն 2. Խիստ հազվադեպ եզակի սեռականում սոյն դերանունն ունենում է սորուն, հոգնակի գործիականում՝ սորունքք ձևերը, իսկ դոյն դերանունը հոգնակի գործիականում՝ դորունքք ձևը:

§ 127. *Սոյն, դոյն, նոյն* դերանունները գոյականների հետ գործածվում են նախադաս և սովորաբար հոլովով ու թվով համաձայնում նրանց: Հոգնակի ուղղականում և հայցականում այդ դերանունները գոյականների հետ գործածվում են սովորաբար եզակի թվով կամ *սոքին, դոքին, նոքին, գոսսին, գրոսին, գնոսին* ձևերով, իսկ հոգնակի գործիականում համաձայնում են միայն հոլովով թվով մնալով եզակի:

Հոլովման օրինակ

	Եզակի	Հոգնակի
ՈՒ.	նոյն ճանապարհ	նոյն կամ նոքին ճանապարհք
Հ.	(գ)նոյն ճանապարհ	(գ)նոյն կամ (գ)նոսին ճանապարհս
Ս.	նորին ճանապարհի	նոցին ճանապարհաց
Տ.	նմին ճանապարհի	նոցին ճանապարհաց
Բ.	ի նմին ճանապարհի	ի նոցունց ճանապարհաց
Գ.	նովին ճանապարհաւ	նովին ճանապարհաւք(օք)

Ծանոթություն. Նկատվում են հետևյալ շեղումները նշված կանոններից. ա) խիստ հազվադեպ *սոյն, դոյն, նոյն* դերանունները դրվում են գոյականից հետո՝ Ե սոքա աստուածս գնոյնս քարոզեն (Եզնիկ, 3-րդ, Բ), Չօրէնս և պաշտօն գնոյն ունի (Փարպ., 2-րդ, ԻԱ). բ) հաճախ հոլովով ու թվով չեն համաձայնում գոյականին՝ ի սոյն ժամու (Գ Թագ., ԺԹ, 2), ի նոյն ամսեան (Կոր., ԻԳ, 15), նոյն շաւղօք (Խոր., 2-րդ, ՁԹ):

Վարժություն 102. Թարգմանել, որոշել աշն, դոյն, նոյն դերանունների հոլովն ու թիվը:

Եւ որ բառնայ քարինս՝ նոքինքք չարչարեսցի: Եւ որդոյն պատուիրեաց վասն իր նմին յաշտ առնել: Նովին կապանօք զնախարարսն և զքահանայսն հրամայեաց պահել: Կին թագաւորին և ս գրգռէր զթագաւորն սովին բանիք: Վաղվաղակի ի թիկունս հասանէին... Աղուանք... և այլ և ս որ ի սմին կողմանց: Յաղագս նորին Յովհաննու: Ի նմին ամի վախճանեցաւ Արշէզ: Նովինք զմաղծս հնացեալս հնարին բժիշկք հատանել: Դովին մարմնովն պարտաւորեաց զմեղսն աստուածախառն մարմնովն: Նովին իսկ անուամբ անուանին: Որ փորէ խորխորատ՝ ի նոյն անկցի:

Վարժություն 103. Հոլովել հետևյալ կապակցությունները:

Սոյն հրաման, նոյն գետ, դոյն օրինակ:

Վարժություն 104. Թարգմանել զրաբար. աշն, ադոյն, նոյն դերանունները փոխարինել համապատասխանաբար աշն, դոյն, նոյն դերանուններով՝ համաձայնեցնելով իրենց լրացյալներին նշված կանոնների համաձայն:

Ըստ այդ հրամանի հեռացան այդ քաղաքից: Նրանք խմում էին այս ջրից: Այդ քարերով կշինեք ամբարտակը: Բնակվում էինք նույն ավանում: Սրանով պատժում էր նրանց: Նույն նշաններից ճանաչում է նրան: Առաջնորդվում էին նույն ցուցումներով: Նույն գետի ջրերով ոռոգում էինք դաշտերը: Նույն ծովն են գնում այս գետերը: Նրանք նույն երկրից էին և նույն լեզվով էին խոսում: Պատմում է նույն թագավորի և իշխանների մասին (յաղագս):

ՅԱՂԱԳՍ ԱՐԱՅԻ, ԵՎ ՄԱՆՈՒԱՆ ՆՈՐԱ ՊԱՏԵՐԱԶՄԱԻ Ի ՀԱՄԻՐԱՄԱՅ

Արայ սակաւ ամօք յառաջ քան զվախճանելն Նինոսի խնամակալեաց¹ իւրոց հայրենեացն, նոյնախում շնորհի արժանատրեալ ի Նինոսէ՝ որպէս և հայրն իր Արամ: Բայց վաւաշն այն և բորբորիտոնն Շամիրամ ի բագում ամաց լուեալ² զգեղեցկութենէ նորա՝ ցանկայր հասանել. այլ³ ոչ ինչ յայտնապէս զայսպիսիս իշխէր գործել: Իսկ յետ վախճանելոյն, կամ փախստական լինելոյն Նինոսի ի Կրետէ, որպէս հաւանեալ եմ⁴, համարձակ պատուելով Շամիրամայ⁵ զախսոն՝ առաքէ հրեշտակս առ Արայն զեղեցիկ՝ ընծայիք և պատարագօք, բագում աղաչանօք և խոստմամբ պարգևաց, զալ առ նա⁶ ի Նինուէ, կամ առնուլ կնութեան և թագաւորել ի վերայ ամենայնի՝ որոց տիրէր և Նինոս, և կամ կատարել զկամս ցանկութեան⁷ նորա և դառնալ մեծաւ պատարագօք և խաղաղութեամբ ի տեղի իւր:

Եւ ի բագում անգամ երթն եկութեան հրեշտակագնացութեանն լինել⁸, և յոչ հաւանել Արային, ի սաստիկ ցասման լեալ Շամիրամայ՝ ի վախճանի պատգամաւորութեանն առնու զբազմութիւն զօրաց իւրոց, և փութայ երթալ հասանել յերկիրն Հայոց ի վերայ Արայի: Բայց որչափ դիմացն⁹ էր նշանակեալ, ոչ այնչափ ի սպանանել¹⁰ զնա և ի հալածել¹⁰ փութայր, քան թէ ի նուաճել կամ զբռամբ ածել¹¹, զի լցցէ զկամս ցանկութեան⁷ իւրոյ. զի առ յոյժ ցանկականի մոլեգնութեանն¹², ի բանսն որ զմտանէ՝ որպէս ի տեսութիւն¹⁴ շամբշութեամբ վառեալ էր¹³: Գայ հասանէ տագնապաւ ի դաշտն Արայի, որ և յանուն նորա անուանեալ Այրարատ: Եւ ի լինել ճակատուն՝ պատուէր տայ զօրապետաց

ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§ 128. Ստացական դերանուններն են՝ իմ, քո (քոյ), մեր, ձեր, իր, որոնք առաջացել են անձնական դերանունների սեռական հոլովածն էրից և հոլովվում են տարբեր ձևով՝ արտաքին թեքման Ո պարզ հոլովմամբ. եզակի տրականում ստանում են ում, իսկ եզակի բացառականում՝ է հոլովակերտ մասնիկները: Ներգոյականի իմաստն արտահայտվում է ընդհանուր ձևով՝ ի(յ) նախդրով, եզակի տրական և հոգնակի հայցական հոլովներով.

Եզակի

Table with 7 columns: Case (ՈՒ, Հ, Ս, Տ, Բ, Գ), Pronoun (իմ, քո, քոյ, մեր, ձեր, իր), and Inflected forms (e.g., (զ)իմ, (զ)քո, (զ)քոյ, (զ)մեր, (զ)ձեր, (զ)իր).

Հոգնակի

Table with 7 columns: Case (ՈՒ, Հ, Ս, Տ, Բ, Գ), Pronoun (իմք, քոյք, մերք, ձերք, իրք), and Inflected forms (e.g., (զ)իմս, (զ)քոյս, (զ)մերս, (զ)ձերս, (զ)իրս).

§ 129. Ստացական դերանունները գործածվում են գոյականների հետ և՛ նախադաս, և՛ ետադաս՝ սովորաբար հոլովով ու թվով համաձայնելով նրանց, բացի հոգնակի ուղղական և հայցական, մասամբ էլ գործիական հոլովներից, որտեղ դրվում են եզակի թվով:

Հոլովման օրինակ

Table with 4 columns: Case (Եզակի, Հոգնակի), Pronoun (իմ, քո, մեր, ձեր), and Inflected forms (e.g., իմ տուն, իմ տունք, տուն իմ, տունք իմ).

իրոց, թե դէպ լինիցի՝ հնարել ապրեցուցանել զԱրայն: Իսկ ի լինել մարտին՝ հարկանի գորն Արայի, մեռանի և Արայ ի պատերազմին ի մանկանցն¹⁵ Շամիրամայ: Դիակապուտս առաքել տիկինն յետ յաղթութեանն ի տեղի ճակատուն, խնդրել ի մէջ դիականացն անկեղց զըղձալին իր և գտարփածուն: Գտանն զԱրայն մեռեալ ի մէջ քաջամարտկացն, և հրամայէ դնել զնա ի վերնատան ապարանիցն:

Իսկ ի գրգռել միսանգամ գորացն Հայոց ի մարտ պատերազմի⁷ ընդ տիկնոջն Շամիրամայ, քինախնդիր լինել մահուանն Արայի, ասէ. «Հրամայեցի աստուածոցն լեզով զվերս նորա, և կենդանացի»: Միանգամայն և ակն ունէր դիւրութեամբ վիկութեան իրոյ կենդանացուցանել զԱրայ, ցնորեալ ի տրոփական ցանկութենէն: Իսկ իբրև նեխեցաւ դի նորա՝ հրամայէ ընկենով ի վիհ մեծ և ծածկել. զմի ոմն ի հոմանեաց իւրոց զարդարեալ ունելով ի ծածուկ՝ համբաւէ զնմանէ այսպէս. «Լիզեալ աստուածոցն զԱրայ և կենդանացուցեալ լցին զփափագ մեր և զհեշտութիւն. վասն որոյ առաւել յայսմ հետէ պաշտելիք են ի մէնջ և փառաւորեալք, իբրև հեշտացուցիչք և կամակատարք»: Կանգնէ¹⁶ և նոր իմն¹⁷ պատկեր¹⁸ յանուն դից, և մեծապէս զոհիւք պատուէ, ցուցանելով ամենեցուն, իբր թէ այս գորութիւն աստուածոցն կենդանացուցին զԱրայ: Եւ այսպէս համբաւեալ զնմանէ ի վերայ երկրիս Հայոց, և հաւանեցուցեալ զամենեսեան՝ դադարեցուցանէ զխազմն:

Եւ որ ինչ յաղագս Արայի կարճառօտիւ և այսչափ շատ լիցի յիշատակել: Սա կեցեալ ամս՝ ծնաւ զԿարդոս:

(Մովսէս Խորենացի, 1-ին, ԺԵ)

- 1 այստեղ՝ քազավորել իմաստով
2 լուեալ-լսելով
3 գործածվածց է բայց իմաստով
4 հաւանեալ եմ-համոզված եմ
5 ենթական դրված է սեռական հոլովով
անորոշ դերբայի գործիական հոլովի մոտ, որը հազվադեպ կիրառություն է
6 այստեղ՝ ինքն դերանվան իմաստով՝ իր մոտ
7 սեռականով ավելադրություն է
8 ի բազում անգամ երթևեկութեան
հրեշտակագնացութեանն լինել-երբ պատգամավորները շատ անգամ գնացին եկան
9 ենթական դրված է սեռական հոլովով
անցյալ դերբայի մոտ՝ դենքն էր ցույց
տայիս, դեմքից երևում էր
10 ի նախդիրն անորոշ դերբայի
հետ նպատակի իմաստով
11 զբռամբ ածել-ծեռքը օգել
12 առ յոյժ ցանկականի մոլեգնութեանն-մոլեգին ցանկության (կրքի) պատճառով
13 այսինքն՝ շամբշութեամբ վառեալ էր ի բանն, որ զնմանէ-տոփանքով սիրահարվել էր այն զրույցներից, որ նրա մասին (պատմում էին)
14 որպէս ի տեսութիւն-ինչպէս տեսնելիս լինէր
15 այստեղ՝ զինվոր իմաստով
16 այստեղ՝ կանգնեցնում է
17 իմն-ինչ-որ, մի
18 այստեղ՝ արձան իմաստով

Հ.	զիմ տուն	զիմ տունս	զտուն իմ	զտունս իմ
Ս.	իմոյ տան	իմոց տանց	տան իմոյ	տանց իմոց
Տ.	իմում տան	իմոց տանց	տան իմում	տանց իմոց
Բ.	յիմմէ տանէ	յիմոց տանց	ի տանէ իմմէ	ի տանց իմոց
Գ.	իմով տամբ	իմովք տամբք	տամբ իմով	տամբք իմովք

Ծանոթություն. *Քո (Քոյ)* ստացական դերանունը նախադաս գործածվելիս սովորաբար հոլովվում է *քոյ*, իսկ ետադաս՝ *քո* հիմքերով՝ քոյոյ տան, քոյում տան, տան քոյ, տան քում և այլն:

Վարժություն 105. *Թարգմանել, որոշել ստացական դերանունների հոլովն ու թիվը՝ եզակին դարձնելով հոգնակի, իսկ հոգնակին՝ եզակի:*

Եւ առաքէր յիւրմէ նմա պատարագս հաշտութեան: Ջգաւառն և զծովն անուանէ իւրով անուամբն: Որոնէ հովիւ զհանդերձս իւր: Հող ոտից իմոց ջանայ լինել: Եւ մագ մի ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ: Որ է ի տէրութեան քում: Ջգիր ողջունի քոյոյ տեսի: Եւ կերակրես զամենեսեան կամովք քովք: Հանապագ տեսանեն զերեսս հոր իմոյ: Իմովք ականջօք լուայ ի Գնելայ: Ոչ ընդունիմ ի տանէ քումմէ՛ զուարակս, և ոչ ի հօտից քոց նոխագս: Յաշխարհի ձերում փառաւորեցան:

Վարժություն 106. *Թարգմանել, փակագծերի մեջ առնված ստացական դերանունները դնել համապատասխան հոլովով ու թվով:*

Ամենայն մարդ զսերմն վաստակոց (իւրք) ժողովէ: Ի ձայնէ որոտալոյ (քո) սարսիցեն: Ինքն (իւրք) ձեռօքն լուանայր զամենեսեան: (Ձեր) խորհրդի գործեն զայն անօրէնութեան չարիս մարգպանն և մոզպետն: Հաւաքէ գորդիս (իւր) և գթոռունս: Իսկ աշխարհս (մեր) կոչի յանուն նախնույն (մեր) Հայկայ՝ Հայք: Ձգեա՛ ձեռամբ (քո) զգաւագանդ (քո) ի վերայ գետոյն: Տայր հրաման Վասակայ (իւր) զօրավարին զօր ժողովել: (Իւրք) ձեռօք խորտակեաց զհաստատուն կնիք մատանույն:

Վարժություն 107. *Հոլովել հետևյալ կապակցությունները:*

Քոյր իմ, մեր զիւղ, քո հրաման, հայր ձեր, եղբայր իւր:

Վարժություն 108. *Թարգմանել գրաբար, գոյականների հետ գործածված դերանունները դնել նախադաս կամ ետադաս՝ համաձայնեցնելով հոլովով ու թվով ըստ նշված կանոնների:*

Թոթափում էր իր ոտքերի փոշին: Թագավորը հրամայեց իր զորավարին: Քո ձեռքով կգրես այդ: Իր կամքով իշխանությունը թողնում է հայոց նախարարներին: Գնում է Հայոց երկիրը իր որդիներով և թոռներով հանդերձ: Ձեր խոսքերով թշնամություն եք զրգռում: Գրի՛ր մեր ազգի պատմությունը: Ահա մոտենում է ձեր փրկության ժամանակը: Մեր ձայնից ճանաչում են մեզ: Ամեն ինչ կլինի քո կամքի համաձայն (ըստ): Բագում ազգեր են ապրում մեր երկրում: Մեր այգիներն առատ բերք կտան:

ՓՈՒԽԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§ 130. Փոխադարձ դերանուններն են՝ *միմեանց, իրերաց*, որոնք հոլովվում են անվանական հոլովմամբ՝ ա հոլովիչով, ըստ որում միայն հոգնակի թվով և չունեն ուղղական հոլովածն:

ՈՒ.	-	-
Հ.	(զ)միմեանս	(զ)իրեարս
Ս.	միմեանց	իրերաց
Տ.	միմեանց	իրերաց
Բ.	ի միմեանց	յիրերաց
Գ.	միմեամբք	իրերաւք(օք)

Վարժություն 109. *Թարգմանել, որոշել փոխադարձ դերանունների հոլովը:*

Կորինք առիծու լքին զմիմեանս: Ձիա՞րդ իցեն թշնամիք միմեանց Որմիզդն և Արհմնն: Երկու հակառակք իրերաց՝ միմեանց ծախիչք են: Գազանացեալ զօրութեամբ յիրեարս յարձակէին: Անդ պատահեցին միմեանց եղջերուք և տեսին զերեսս իւրեանց: Մեկնեցան ի միմեանց առնակինն և կոյսն: Որ ընդ միմեանս կռուին, և միմեանց հակառակ են: Նա և ազատակոյտն, խառնաճաղանճ ամբոխին հանդերձ, զմիմեամբք դիզանէին ի միմեանց վերայ: Եւ հրաժարեցաք ի միմեանց և ելաք ի նաւն:

Վարժություն 110. *Թարգմանել գրաբար:*

Հայրն ու որդին բաժանվեցին միմյանցից: Մխիթարում էին միմյանց և ասում: Ողջույն էին տալիս միմյանց: Չկարողացավ նրանց իրարից բաժանել: Հարգում և սիրում էին իրար: Հպարտանում և ուրախանում էին միմյանցով: Նրանք իրար նման չեն: Խլում էին ավարը իրար ձեռքից: Ջանում էին տիրել միմյանց վրա (ի վերայ): Դեսպաններ էին առաքում միմյանց մոտ:

ՀԱՐՑԱԿԱՆ-ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Յաղագս Շամիրամայ, թէ է՛ր աղագաւ կոտորեաց գորդիս իւր, և թէ ո՛րպէս փախստական լինի ի Ջրաղաշտէ մոզէ ի Հայս, և մեռանի ի Նինուսայ որդւոյ իւրմէ:

Սա հանապազ յամառնայինսն¹ ի խաղալն իւրում ի կողմանս հիւսիսոյ ի քաղաքն ամարաստանի² գոր շինեաց ի Հայս՝ կողմնապետ և վերակացու Ասորեստանի և Նինուէի թողու զՋրաղաշտ մոզ՝ նահապետ Մարաց: Եւ զայս աշայէս բազում ժամանակս կարգեալ³ Շամիրամայ՝ ամենն ին հաւատայ ննա յարդարել⁴ զիւր իշխանութիւնն:

Եւ բազում անգամ յանդիմանեալ յորդոց իւրոց վասն սաստիկ և վաւաշ պոռնկական բարուց իւրոց՝ կոտորէ զամենեսեան, և ապրի կրտսերագոյնն միայն, որ է Նինուա: Բարեկամաց և հոմանեաց իւրոց պարզս ելով զամենայն իշխանութիւն և զգանձս՝ ոչ ինչ վասն որդոց իւրոց փոյթ յանձին ունէր⁵: Քանզի և այրն նորա Նինու ոչ, որպէս ասի, մեռեալ թաղեցաւ ի նմանէ ի Նինուէ յարքունիսն, այլ իմացեալ զախտասէր բարս նորա և զչարասէր, թողեալ զթագաւորութիւնն՝ փախստական անկանէր ի Կրետէ: Իսկ ի հասակ և ի միտս հասեալ որդոց նորա՝ յիշեցուցանեն նմա զայս ամենայն, կարծելով ցածուցանել զնա ի դիւական պակշոտութենէն, և աւանդել զիշխանութիւնն և զգանձս՝ որդոց իւրոց: Ընդ որ առաւել զայրագնեալ՝ սատակէ զամենեսեան. և մնայ միայն, որպէս վերագոյնն ասացաք, Նինուա:

Իսկ ի լինել սխալանաց ինչ Ջրաղաշտի առ տիկիինն, և հակառակութեան ի ներքս անկանել⁶, պատերազմ ի վերայ նորա յարուցանէ Շամիրամ, քանզի բռնանալ ի վերայ ամենայնի խորիէր մարն: Եւ ի սաստկանալ պատերազմին՝ փախստական լինի Շամիրամ յերեսաց Ջրաղաշտի ի Հայս: Աստ ժամանակ վրէժխնդրութեան պատեհ գտեալ Նինուսայ՝ սպանանէ զմայրն և ինքն թագաւորէ ի վերայ Ասորեստանի և Նինուէի: Ահա ասացաք և յաղագս մահուանն Շամիրամայ, թէ ուստի՛ և ո՛րպէս:

(Մովսէս Խորենացի, 1-ին, ԺԷ)

¹ ամեն ամառ, ամառները

² ամառանոցային

³ աշատեղ՝ կարգավորելով

⁴ աշատեղ՝ վարել, դեկավարել

⁵ փոյթ յանձին ունել-հոգ տանել

⁶ իսկ ի լինել սխալանաց ինչ Ջրաղաշտի առ տիկիինն, և հակառակութեան ի ներքս անկանել-իսկ երբ Ջրաղաշտը տիկնոջ դեմ մի սխալանք գործեց, և մեջտեղը հակառակութիւն ընկալ

§ 131. Հարցական դերանուններն են՝ *n*^o, *n*^oվ, *զհ*^o, *զհ*^oնչ, *քանի*^o, *n*^oր, *n*^oրպէս, *n*^oրչափ, *որքա՞ն*, *ե՞րբ*, *ինչպիսի*^o, *n*^oր, *յո*^o (= *n*^oր), *ուստի*^o (= *որտեղից*^o), *n*^oրպիսի: Հարաբերական դերանունները նույն այս դերանուններն են առանց հարցականի:

Հարցական-հարաբերական դերանուններից հոլովվում են միայն *n*^o, *n*^oվ, *զհ*^o, *զհ*^oնչ, *n*^oր, *քանի*^o, ըստ որում *n*^o, *n*^oվ, *զհ*^o, *զհ*^oնչ դերանունները հոլովվում են դերանվանական, իսկ *n*^oր, *քանի*^o դերանունները՝ անվանական հոլովմամբ: *Ո՞ր*-ը հոլովվում է *n* հոլովիչով, եզակի տրականում ստանալով *ուս*, բացառապանում՝ է հոլովակերտ մասնիկները, իսկ *քանի*^o-ն Ո-Ա խառն հոլովմամբ:

	Եզակի	Նոգնակի	Եզակի
Ու.	<i>n</i> ^o , <i>n</i> ^o վ	<i>n</i> ^o յք	<i>զհ</i> ^o , <i>զհ</i> ^o նչ
Հ.	<i>զո</i> ^o , <i>զո</i> ^o վ	<i>զո</i> ^o յս	<i>զհ</i> ^o , <i>զհ</i> ^o նչ
Ս.	<i>n</i> ^o յր	<i>n</i> ^o յց	է՞ր
Տ.	<i>n</i> ^o ւմ	<i>n</i> ^o յց	ի՞նչ, հի՞նչ, էրո՞ւմ
Բ.	յո՞ւմէ՞	յո՞ւց	յի՞մէ՞, առ ի՞մէ՞, զմէ՞
Գ.	-	-	ի՞՛

Ո՞ր, n^oվ դերանունները եզակի բացառականում հանդիպում են նաև *յո՞ւմէ՞* ձևով, իսկ գործիական հոլովում նրանց պակասած ձևերի փոխարեն գործածվում են *n^oր* դերանվան համապատասխան ձևերը՝ *որո՞ւվ*, *որո՞ւվք*:

Ձի՞, զի՞նչ դերանունների *զ-ն* նախդիր է, որը պահպանվում է բացառական հոլովում, որտեղ հանդես է գալիս նաև *առ* նախդիրը:

Ձի՞, զի՞նչ, է՞ր, ի՞նչ, հի՞նչ, էրո՞ւմ, յի՞մէ՞, առ ի՞մէ՞, զմէ՞ նշանակում են *ի՞նչ, ինչո՞ւ, ինչո՞ւ համար, ինչի՞ց, ինչպէ՞ս*: Այս իմաստներով գործածվում են նաև *ընդէ՞ր, վասն է՞ր, է՞ր աղագաւ, զիս՞րդ* հարցական բառերը:

	Եզակի	Նոգնակի	Եզակի	Նոգնակի
ՈՒ.	<i>n</i> ^o ր	<i>n</i> ^o րք	<i>քանի</i> ^o	<i>քանի</i> ^o ք
Հ.	<i>զո</i> ^o ր	<i>զո</i> ^o րս	<i>զքանի</i> ^o	<i>զքանի</i> ^o ս
Ս.	<i>որո</i> ^o յ	<i>որո</i> ^o ց	<i>քանո</i> ^o յ կամ <i>քանո</i> ^o յ	<i>քանեա</i> ^o ց
Տ.	<i>որո</i> ^o ւմ	<i>որո</i> ^o ց	<i>քանո</i> ^o յ կամ <i>քանո</i> ^o յ	<i>քանեա</i> ^o ց
Բ.	յո՞ւմէ՞	յո՞րոց	ի քանո՞յ կամ ի քանո՞յ	ի քանեա՞ց
Գ.	<i>որո</i> ^o վ	<i>որո</i> ^o վք	<i>քանեա</i> ^o ւ կամ <i>քանո</i> ^o վ	<i>քանեա</i> ^o ւք (<i>քանեո</i> ^o ք)

§ 132. Հարցական-հարաբերական դերանուններից գոյականի հետ գործածվում են՝ *զի՞նչ, քանի՞, ո՞ր, ո՞րչափ, ո՞րպէս, որքա՞ն, ինչպիսի՞, որոնք* լինում են միայն նախադաս: *Ո՞ր* դերանունը հոլովով ու թվով սովորաբար համաձայնում է իր լրացյալին, բացի հոգնակի ուղղական և հայցական հոլովներից, իսկ մյուս հարցական-հարաբերական դերանուններն ընդհանրապես չեն համաձայնում. օրինակներ՝ *Յորում տեղոջ* և ինքն իսկ արժանի եղև առնուլ զկատարեալ նահատակութիւնն (Եղիշէ, էջ 118): *Չորո՞ց վկայից* ասես (Ագ., Ի, 223): *Ո՞ր ցաք* չպաշարիցեն զոգիս նոցա (Թոռն., Ա, էջ 102): Տեսէք *որպիսի գրով* զրեցի առ ձեզ իմով ձեռամբ (Գաղ., Զ, 11) և այլն:

Վարժություն 111. *Թարգմանել, առանձնացնել հարցական և հարաբերական դերանունները՝ որոշելով նրանց հոլովն ու թիվը:*

Ո՞ր ես դու և ուստի՞ գաս կամ յո՞ երթաս: Ո՞վ է ի գալիքս: Ո՞ զիտասցէ զինչ գործիցեմք: Ուստի սակաւ մի կասկածոտն էր, անտի աներկիւղ հաստատեցաւ: Չմէ՞ դարձուցանես զերեսս քո ի մէնջ: Յումմէ՞ առնուն զհարկս: Եւ եթէ գայլ էր, զգառնն զՈրմիզդ հի՞մ ծնանէր: Ո՞րպէս ընթեռնուս: Արարին՞ որպէս ուսանն: Որ եսն երթամ, դուք ոչ կարէք գալ: Ո՞ր առնէր զյաշուն կամ ի՞: Որո՞վ իշխանութեամբ առնես զայդ: Չի՞ խորհիք ի միտս ձեր: Չի՞նչ է այս, զոր լսենս զքէն: Չինչ խնդրեսցես, տաց քեզ: Ե՞րբ ի քնոյ զարթիցես: Ո՞րքան է զօրութիւն քո, արա՛: Հրեշտակք երբ լսեն զանուն աստուծոյ, ուրախ լինին: Բաշխեաց, ո՞րչափ և կամեցանն:

Վարժություն 112. *Թարգմանել գրաբար:*

Ո՞ր քաղաքից ես գալիս: Ո՞ւմ խոսքերով եք դա հաստատում: Ինչո՞ւ չանսացիր իմ խոսքերին: Ո՞վ է նրա հայրը: Որտեղի՞ց ես ճանաչում ինձ: Ումի՞ց են վախենում քո որդիները: Ո՞ր ես գնում նրանք: Ինչո՞ւ այս ծառը պտուղ չի տալիս: Ո՞վքեր են արժանի այդ մեծ պատվին: Ո՞ւմ է կամենում արքան փառավորել, եթե ոչ ինձ: Ինչո՞վ պիտի մխիթարեն քեզ: Ո՞ւմ պատկերն է սա: Քանի՞ տարով մեծ ես նրանից: Ի՞նչ ես խորհում նրա մասին: Ո՞ւմ պիտի տաս այդ ընծաները:

ՅԱՐԶԱԿՈՒԾՆ ԱԿԱՆՁՅ Ի ՄԵՁ ԵՒ ՊԱՐՏՈՒԾՆ, ԵՒ ԽՆԱՄՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՇԻՍԻ ԸՆԴ ՆՈՍԱ

Չայսու ժամանակաւ միաբանեալ Ալանք լեռնականօքն ամենայնիւ, յինքեանս արկանելով¹ և զկէս Վրաց աշխարհին, մեծաւ ամբոխի տարածեալ ընդ աշխարհս մեր: Ժողովէ և Արտաշէս զհարոյ գօրացն բազմութիւն, և լինի

պատերազմ ի մէջ երկրիս երկոցունց ազգացն քաջաց և աղեղնատրաց: Սակաւ ինչ տեղի տայ² ազգն Ալանաց, և գնացեալ անցանէ ընդ գետն մեծ Կուր, և բանակի առ եզերք գետոյն ի հիւսիսոյ. և հասեալ Արտաշիսի բանակի ի հարաւոյ, և գետն ընդ մէջ նոցա:

Բայց քանզի գորդի Ալանաց արքային ձերբակալ արարեալ գօրացն Հայոց ածեն առ Արտաշէս, զխաղաղութիւն խնդրէր արքայն Ալանաց, տալ Արտաշիսի զինչ և խնդրեսցէ. և երոմունս և դաշինս ասէր հաստատել մշտնջենատրս, որպէս զի մի՛ և ս մանկունք Ալանաց ասպատակաւ հինից³ ելցեն յաշխարհն Հայոց: Եւ ի շառնուլ յանձն Արտաշիսի առ ի տալ⁴ զպատանին, զայ քոյր պատանոյն յափն գետոյն ի դարաւանդ մի մեծ, և ի ձեռն թարգմանչաց ձայնէ ի բանակն Արտաշիսի.

Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս,
Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց.
Եկ հաւանեա՛ց բանից
Աչագեղոյ դստերս Ալանաց՝
Տալ զպատանիդ.
Չի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց՝
Չայլոց դիւցազանց զարմից
Բառնալ զկենդանութիւն,
Կամ ծառայեցուցանելով
Ի ստրկաց կարգի պահել.
Եւ թշնամութիւն յախտենական
Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել:

Եւ լուեալ Արտաշիսի զայսպիսի իմաստուն բանս, գնաց յեզր գետոյն. և տեսեալ զկոյսն գեղեցիկ, և լուեալ ի նմանէ բանս իմաստութեան, ցանկացաւ կուսին: Եւ կոչեցեալ զդայեակն իւր Սմբատ, յայտնէ նմա զկամս սրտի իւրոյ, առնուլ զօրիորդն ի կնութիւն իւր, և դաշինս և ուխտս հաստատել ընդ ազգի քաջացն, և զպատանին արձակել ի խաղաղութիւն: Եւ հաճոյ թուեցեալ Սմբատայ, յղէ առ արքայն Ալանաց՝ տալ զտիկին օրիորդն Ալանաց զՍաթինիկ ի կնութիւն Արտաշիսի: Եւ ասէ արքայն Ալանաց.

Եւ ուստի՞ տացէ՛ քաջն Արտաշէս
Հազարս ի հազարաց և բիրս ի բիրոց
Ընդ քաջազգոյ կոյս օրիորդիս⁶ Ալանաց:

Չայս տեղի առասպելաբանելով վիպասանքն յերգելն իրեանց ասեն.
Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեւան գեղեցիկ,
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
Եւ անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն,

Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
Ընկէց ի մէջք⁷ օրիորդին Ալանաց,
Եւ շատ ցաւեցոյց զմէջք⁸ փափոկ օրիորդին,
Արագ հասուցանելով ի բանակն իւր:

Որ և ճշմարտութեամբ ունի այսպէս: Քանզի պատուեալ է առ Ալանս մորթ կարմիր, լալթա շատ և ոսկի բագում տուեալ ի վարձանս⁹, առնու գոխկին օրիորդն Սաթինիկ: Այս է ոսկէօղ շիկափոկ պարանն: Դոյնպէս զհարսանեաց առասպելեալ երգեն, այսպէս ասելով.

Տեղ ոսկի տեղայր¹⁰ ի փեսայութեանն Արտաշիսի.

Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն:

Քանզի սովորութիւն իսկ էր թագաւորացն մերոց, փեսայութեամբ ի դուռն տաճարին հասանել¹¹ դահեկանս ճապաղել իբրև զհիւպատեանն հռովմայեցոց. սապէս և թագուհեացն¹² յառազաստին՝ մարգարիտ: Այս է ճշմարտութիւն բանիցս:

(Մովսէս Խորենացի, 2-րդ, Ծ)

- | | |
|---|--|
| 1 յինքեան արկանելով-իրենց կողմը ձգելով | 7 փխ. ի մէջս |
| 2 տեղի տայ-նահանջում է | 8 փխ. զմէջս |
| 3 սապատակաւ հինից-ավազակային հարձակմամբ | 9 տուեալ ի վարձանս-վարձանք տալով |
| 4 առ ի տալ-տալու | 10 տեղ ոսկի տեղայր-ոսկի անձրև էր տեղում |
| 5 ուստի՞ տացէ-ո՞րտեղից պիտի տա | 11 փեսայութեամբ ի դուռն տաճարին |
| 6 ընդ... օրիորդիս-այս օրիորդի փոխարեն | 12 սապէս և թագուհեացն-նույնպէս և թագուհիները |

ԴԱՍ ՔՍԱՆՉՈՐՄԵՐՈՐԳ

ԱՆՈՐՈՇ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§ 133. Անորոշ դերանուններն են՝ *ոմն*, *ոք*, *իմն*, *ինչ*, *այլ*, *միս* (*մես*): *Ոմն*, *ոք* դերանունները հոլովվում են խառն՝ դերանվանական-անվանական, *իմն*-ը և *ինչ*-ը՝ դերանվանական, *այլ*-ը և *միս*-ը՝ անվանական հոլովումներով:

§ 134. *Ոմն*, *ոք*

Իմն, *ինչ*

	Եզակի		Հոգնակի		Եզակի	
ՈՒ.	ոմն	ոք	ոմանք	իմն	ինչ	
Հ.	(զ)ոմն	(զ)ոք	(զ)ոմանս	(զ)իմն	(զ)ինչ	

Ս.	ուրումն	ուրուք	ոմանց	իրիք	
Տ.	ումեմն	ումեք	ոմանց	իմիք	
Բ.	յումեմնէ	յումեքէ	յոմանց	յիմեմնէ	յիմեքէ
Գ.	ոմամբ	-	ոմամբք	-	իւիք

Ոք դերանունը եզակի գործիական հոլով չունի. պակասը լրացվում է *ոմն* դերանվան գործիական հոլովածնով՝ *ոմամբ*: Հոգնակի թվում *ոմն*, *ոք* դերանունները հոլովվում են նույն ձևով:

Իմն, *ինչ* դերանունները հոգնակի թվով չեն հոլովվում:

§ 135. *Ոմն*, *ոք* դերանունների վերաբերյալ պետք է իմանալ հետևյալը.

ա) Անկախ գործածվելիս նշանակում են *մարդ*, *մի մարդ*, *մեկը*, իսկ հոգնակին՝ *ոմանք*, *մի քանիսը*. օրինակ՝ Ասէ ոմն (=մեկը, մի մարդ) ցնա (Գուկ., ԺԳ, 23): Եթէ զարիւնն ոք (=մեկը) ըմպիցէ՝ սատակի (Եզնիկ, 1-ին, ԺԵ): Ումեմն (=մեկին) ետ հինգ քանքար (Մատթ., ԻԵ, 15): Չգոյշ լեր, մի՛ ումեք (=որևէ մեկին) ասիցես (Մատթ., Ը, 4): Փառքն յումեքէ՞ (=ո՞ւմ կողմից) յաջողեալ էին մնա (Եզնիկ, 2-րդ, Գ): Եւ ոմանք յերկուացան (Մատթ., ԻԸ, 17):

բ) Որպէս որոշիչ գործածվելիս նշանակում են *մի*, իսկ հոգնակի գոյականի հետ՝ *մի քանի*. օրինակ՝ Եւ ոմն երիտասարդ (=մի երիտասարդ) զհետ երթայր նորա (Մարկ., ԺԴ, 51): Ի կնոջէ ումեմնէ (=մի կնոջից) ծնաւ (Եղիշէ, էջ 26): Ծառայ ոք (=մի ծառա) իցէ (Թռռն., Բ, էջ 435): Ի բռնաւորէ ումեքէ (=մի բռնակալի կողմից) վտարանդի վարեալ (Թռռն., Ա, էջ 283): Եւ կանայք ոմանք (=մի քանի կանայք) որ բժշկեալ էին յայտոց չարաց և ի հիւանդութեանց (Գուկ., Ը, 2):

գ) *Ոք* դերանունը հիմնականում գործածվում է հարցական, ժխտական, թեական (պայմանական), իսկ *ոմն*-ը՝ հաստատական նախադասություններում. օրինակ՝ Էր ոմն ի վեր քան զնա զօրագոյն և փառաւորագոյն (Եզնիկ, 2-րդ, Գ): Առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդոց իւրոց առ Հայկ (Խոր., 1-ին, ԺԱ): Եթէ ուտեր ոք՝ չվնասեր (Եզնիկ, 1-ին, ԺԵ): Եւ ոչ ոք տայր մնա (Գուկ., ԺԵ, 16): Չիք ոք մարդ եղեալ ի մարդկանէ (Բուգ., 5-րդ, Է): Մի՞ թէ և զարալիզէն և ս ոք կարիցէ ասել (Եզնիկ, 1-ին, ԻԵ): Մի՛ ոք օտար հաղորդեսցէ քեզ (Առակ., Ե, 17):

§ 136. *Իմն*, *ինչ* դերանունների վերաբերյալ պետք է իմանալ հետևյալը.

ա) Անկախ գործածվելիս նշանակում են *քան*, *մի քան*, *որևէ քան*. օրինակ՝ Եւ ինչ (=քան, որևէ քան) ոչ ունէին ուտել (Մարկ., Ը, 1): Ոչ իմիք (=մի քանի) ազդիցէ այնուհետև (Մատթ., Ե, 13): Չիք ինչ (=որևէ քան) որ բնութեամբ չար է (Եզնիկ, 1-ին, ԺԵ): Քանզի և ոչ արարիչ իրիք (=որևէ քանի) էր (Եզնիկ, 2-րդ, Գ): Չի որ շարժին և փոփոխի՝ չէ էական. այլ կամ լեալ յումեքէ և յիմեքէ (=մի քանի կողմից), և կամ հաստատեալ ի չգոյէ (Եզնիկ, 1-ին, Բ):

բ) Որպէս որոշիչ գործածվելիս նշանակում են *մի*, *որևէ*, *ինչ-որ*, *մի քանի*.

օրինակ՝ Եւ գօրութիւն իմն ծածուկ կառավար (Եզնիկ, 1-ին, Գ)=Եվ (կա) կառավարող մի գաղտնի գորություն: Չի ոչ որ ունէր նշանակ ինչ յայտնի (=որևէ բացահայտ օրինակ) բարերար կոչելոյ զԱստուած (Եզնիկ, 1-ին, ԺԳ): Եւ արուեստագէտ միայն նիւթոյ իմիք (=ինչ-որ նյութի) գնա համարիցին (Եզնիկ, 3-րդ, ԺԷ): Ապա եթէ իբր ի պղծոյ իմեքէ արարածոց (=ինչ-որ պիղծ արարածից) հրամայէր հրաժարել (Եզնիկ, 3-րդ, ԺԱ):

զ) Հաճախ *ինչ* դերանունը գործ է անվում որպէս թարմատար, հատկապէս հարցական, ժխտական և թեական (պայմանական) մախադասություններում՝ արտահայտելով անորոշություն կամ սաստկացնելով, մեղմացնելով խոսքի իմաստը: Այս դեպքում այն աշխարհաբար կամ չի թարգմանվում, կամ թարգմանվում է *ինչ-որ, որևէ, որևէ ձևով, կերպով, երբեք, ամենևին, բնավ, բոլորովին* բառերով. օրինակ՝ Կարծեցի թէ նոքա նենգութեամբ ինչ ետուն մնա գերդումն (Բուգ., 4-րդ, ԾԴ)=Կարծեցի թէ նրանք նենգությամբ նրան երդվեցրին: Յորժամ վնաս ինչ առնիցեն (Եղիշէ, էջ 63)=Երբ որևէ վնաս հասցնեն: Ապա թէ ի վերայ հայ հողոյն խիստ ինչ բարբառեսցի (Բուգ., 4-րդ, ԾԳ)=Իսկ եթէ հայկական հողի վրա խիստ ձևով խոսի: Քանզի չնարթի բնութեան իմիք՝ առանց կամաց՝ մերթ բարի լինել, մերթ չար (Եզնիկ, 1-ին, ԺԳ)=Ուրովիետև ինչ-որ (որևէ) էություն առանց կամքի չի կարող մերթ բարի լինել, մերթ՝ չար: Ոչ ինչ զանգիտեաց գալ յատեան հրապարակային (Եղիշէ, էջ 129)=Ամենևին (բնավ) չվախեցավ գալ ներկայանալ հրապարակային ատյանին: Եւ արատ ինչ ոչ գոյ ի քեզ (Երգ., Դ, 7)=Եվ ամենևին (բնավ, բոլորովին) արատ չկա քո մեջ:

դ) *Իմն* դերանունը հաճախ գործածվում է անունների գործիական հոլովի, ձևի պարագայի պաշտոն կատարող բառերի և բայերի հետ՝ արտահայտելով անորոշություն, ստանալով *ինչ-որ, մի տեսակ, մի ձևով, կարծես* բառերի իմաստը. օրինակ՝ Փակեալ գերկինս իբրև սրահակաւ իմն (Ազ., ԿԹ, 549)=Փակեց երկինքը կարծես ինչ-որ (մի տեսակ) վարագույրով: Երև էր իմն ի վերայ ամենեցուն աստուածային շնորիք (Եղիշէ, էջ 69)=Կարծես մի տեսակ աստվածային շնորիք էր երևում բոլորի վրա: Մտադեր իմն անսացիք անմտացն (Ա Կորնթ., ԺԱ, 19)=Կարծես սիրով (հոժարությամբ) լսեցիք անմիտներին: Յետ մահուանն Սանատրկոյ արքայի շփոթի իմն թագաւորութիւնն (Խոր., 2-րդ, ԼԷ)=Սանատրուկ արքայի մահից հետո թագավորության մեջ ինչ-որ (ինչ-որ ձևով) խառնաշփոթություն է ընկնում:

ե) *Իմն, ինչ* դերանունները երբեմն գործածվում են կրկնությամբ՝ *իմն իմն, ինչ ինչ, իրիք իրիք, իմիք իմիք, իւիք իւիք*, որոնք ունեն հոգնակի նշանակություն՝ արտահայտելով *տարբեր, զանազան, պեսպես, տեսակ-տեսակ, մի քանի* իմաստներ. օրինակ՝ Վասն իրիք իրիք տեսչութեանց (Եզնիկ, 1-ին, ԻԳ)=Չանազան բաներ կատարելու համար: Եւ ըստ մմանութեան ձկանցն օրինակի գտանէ զնոսա իւիք իւիք (=տեսակ-տեսակ) (Թռռն., Բ, էջ 69):

§ 137. Հաճախ *ոք, ինչ* դերանունները գործածվում են հարցական դերանունների հետ և հոլովվում միասին.

Եզակի		Նոգնակի		Եզակի	
ՈՒ.	ո՞ք	ոք	ո՞յք	ոմանք	զի՞նչ ինչ
Հ.	զո՞ք	ոք	զո՞յս	ոմանս	զի՞նչ ինչ
Ս.	ո՞յր	ուրուք	ո՞յց	ոմանց	է՞ր իրիք
Տ.	ո՞ւմ	ումեք	ո՞յց	ոմանց	ի՞մ իմիք
Բ.	յու՞մէ՞	ումեքէ	յո՞յց	ոմանց	առ ի՞մէ՞ իմեքէ
Գ.	(որո՞վ)	ոմամք	(որո՞վք)	ոմամքք	ի՞ւ իւիք

Չի՞նչ ինչ կապակցությունը հոգնակի թվով չի հոլովվում:

§ 138. *Այլ, միս*

Եզակի		Նոգնակի		Եզակի	
ՈՒ.	այլ	այլք	միս		
Հ.	(զ)այլ	(զ)այլս	(զ)միս		
Ս.	այլոյ	այլոց	միսոյ		
Տ.	այլում	այլոց	միսում		
Բ.	յայլմէ	յայլոց	ի միսմէ		
Գ.	այլով	այլովք	միսով		

Այլ և *միս* դերանունները հոլովվում են *n* հոլովիչով, եզակի տրականում ստանալով *ում*, իսկ բացառականում՝ *է* հոլովակերտները: *Միս* դերանվան հոգնակի ձևերը սովորական չեն:

Հաճախ *այլ* դերանունն անորոշ նշանակությամբ գործածվում է *ոմն, ոք, իմն, ինչ* դերանունների հետ և հոլովվում միասին՝ այլ ոմն, այլոյ ուրումն, այլում ումեմն... այլ ոք, այլոյ ուրուք, այլում ումեք... այլք ոմանք, այլոց ոմանց... այլ ինչ, այլ իմն, այլոյ իրիք, այլում իմիք...:

§ 139. *Ոմն, ոք* դերանունները գոյականների հետ գործածվելիս դրվում են հիմնականում ետադաս՝ համաձայնելով հոլովով ու թվով:

Եզակի		Նոգնակի	
Ու.	աշակերտ ոմն	աշակերտ ոք	աշակերտք ոմանք
Հ.	(զ)աշակերտ ոմն	(զ)աշակերտ ոք	(զ)աշակերտս ոմանս
Ս.	աշակերտի ուրումն	աշակերտի ուրուք	աշակերտաց ոմանց

S. աշակերտի ումեմն	աշակերտի ումեք	աշակերտաց ոմանց
Բ. յաշակերտե ումեմնե	յաշակերտե ումեքե	յաշակերտաց ոմանց
Գ. աշակերտա ոմամբ	աշակերտա ոմամբ	աշակերտաք(օք) ոմամբք

Ումն դերանունը (մասամբ էլ՝ ոք) հաճախ դրվում է գոյականից առաջ՝ համաձայնելով հոլովով ու թվով. օրինակ՝ Էին ուրումն Սկեւեայ Հրէի քահանայապետի եւթն որդի (Գործ., ԺԹ, 14): Եւ գտանել գոմանս զաշակերտս (Գործ., ԺԹ, 2):

§ 140. Իմն, ինչ դերանունները սովորաբար դրվում են գոյականից հետո և ընդհանրապես համաձայնում հոլովով ու թվով, բացի հոգնակի թվի հոլովներից, որտեղ մնում են անփոփոխ, եզակի ուղիղ ձևով:

	Եզակի	Նոգնակի
Ու.	տունկ ինչ	տունկք ինչ
Հ.	(գ)տունկ ինչ	(գ)տունկս ինչ
Ս.	տնկոյ իրիք	տնկոց ինչ
Տ.	տնկոյ իմիք	տնկոց ինչ
Բ.	ի տնկոյ իմեքե	ի տնկոց ինչ
Գ.	տնկով իւիք	տնկովք ինչ

§ 141. Այլ դերանունը սովորաբար նախադասվում է գոյականին և հոլովով ու թվով համաձայնում նրան, բացի հոգնակի ուղղական և հայցական հոլովներից, որտեղ ընդհանրապես մնում է եզակի:

	Եզակի	Նոգնակի
Ու.	այլ ազգ	այլ ազգք
Հ.	(գ)այլ ազգ	(գ)այլ ազգս
Ս.	այլոյ ազգի	այլոց ազգաց
Տ.	այլում ազգի	այլոց ազգաց
Բ.	յայլմե ազգե	յայլոց ազգաց
Գ.	այլով ազգաւ	այլովք ազգաւք(օք)

Հաճախ այլ դերանունը նախադասվելիս հոլովով ու թվով մնում է անհամաձայն՝ «խառնեալ ընդ այլ դեղոյ» (Եզնիկ, 1-ին, ԺԵ), «այլ տոհմէն»

(Փարս., 2-րդ, ԽԵ) կամ համաձայնում է հոգնակի ուղղական և հայցական հոլովներում՝ «այլքն հնախօսք» (Խոր., 1-ին, Ջ), «գայլս... գունդս» (Խոր., 2-րդ, Է). կամ հանդես է գալիս ետադաս գործածությամբ՝ «ազգի այլում» (Դան., Բ, 44):

§ 142. Միս դերանունը դրվում է գոյականից առաջ և համաձայնում հոլովով ու թվով. հոգնակի հոլովաձևերի հետ չի գործածվում:

Եզակի

Ու.	միս կողմն
Հ.	(գ)միս կողմն
Ս.	միսոյ կողման
Տ.	միսում կողման
Բ.	ի միսմե կողմանե
Գ.	միսով կողմամբ

Երբեմն միս դերանունը հանդիպում է ետադաս գործածությամբ՝ «ի գալուստ ամին միսոյ» (Ազ., Բ, 23) կամ նախադաս գործածվելիս հոլովով չի համաձայնում՝ «ի միս կողմանե» (Խոր., 1-ին, Լ):

Վարժություն 113. Թարգմանել, որոշել անկախ գործածված անորոշ դերանունների հոլովն ու թիվը:

Ոչ յումեքե առի զհաց բռնի: Այլք հատանէին ոստս ի ծառոց: Չգոյր ինչ ժամանակակից Աստուծոյ: Ոչ իմիք կարօտանայ: Ումեմն ետ հինգ քանքար և ումեմն երկուս և ումեմն մի, իւրաքանչիւր ըստ իւրում կարի և գնաց: Թէ կարօտ եղև յայլմե միք մուրանայ: Յորժամ իցե ոք ուրուք թշնամի: Հրամայե ոմանց ի նոցանե երթալ ի գաւառն Աղիովտի: Ոչ այլ իւիք խոշտանգե: Բայց զկանայսն Շապիոյ թագաւորին Պարսից ոչ ումեք ինչ թոյլ տայր Մուշեղ զօրավարն Հայոց անարգել: Թէ որպէս ստուեր իրիք ոչ երբեք հեռանայ յիմեքե:

Վարժություն 114. Թարգմանել՝ բացատրելով, թե նախադաս և ետադաս անորոշ դերանունները հոլովով ու թվով ինչպես են համաձայնել իրենց լրացյալներին:

Հարիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդացեալ՝ մերձ էր ի վախճանել: Ի կնոջէ ումեմնէ ծնաւ: Ի չարէ ումեքէ արարչէ կարծիցին: Առաքէ բազում համարձակութեամբ, հանդերձ Սանատրկաւ ոմամբ: Կանայք ոմանք որ բժշկեալ էին յայտոց չարաց և ի հիւանդութեանց: Քանզի չմարթի բնութեան իմիք առանց կամաց՝ մերթ բարի լինել, մերթ չար: Եւ ինքն խաղայ, ասէ, այլով աղխիւն ընդ արև մուտս հիւսիսոյ: Եւ չէ կարօտ այլում օգնականի: Իսկ ի միսում ատուրն ընդ այգն ընդ առաւօտն հրամայեաց արկանել ծիրանիս: Մասամբ միով ուրախացաւ, և միսով և ս մասամբ տրտմեցաւ մինչև ի մահ: Չնոյն բաջադանս այլովք պատմութեամբք կարկատեցին: Դէպ լինէր ոմանց եղբարց ի Հայաստան աշխարհէս: Քանզի ոչ ուրուք մեծ թագաւորի կայր ի նմա ձեռնարկութիւնք այսպիսիք: Թէ են ինչ ցաւք՝ որ վասն մեղաց լինին: Եւ ի մտոյ հրաժարեցոյց իբրև ի պղծոյ և ի խոտանէ իմեքէ:

Վարժութիւն 115. Հոլովել հետևյալ կապակցությունները՝ այր ոք, կին ոմն, ծառ ինչ, այլ թագաւորութիւն, ազգ այլ, միւս ար (օր):

Վարժութիւն 116. Թարգմանել գրաբար:

Իր բարեկամներից մեկին չէր ճանաչում: Նրանցից ոմանց չէր հավատում: Ոմն հարյուրապետի դուստրը հիվանդ էր: Որևէ մեկի կողմից չէր սիրվում: Մի՞թե ինչ-որ բանի կարիք էք զգում: Հետո երևաց ուրիշ կերպարանքով: Եկան մի ինչ-որ տեղ: Ինչ-որ բույսից դեղ էր պատրաստում: Կգա նրանց տերը և այգին կտա ուրիշ մշակների: Մեկին կսիրի, իսկ մյուսին կատի: Իսկ մյուս օրը հրամայեց սպանել նրան: Մյուս դռնով (ընդ դուռն) ներս մտեք:

կարիք զգալ-կարօտանալ

ՅԱՂԱԳՍ ՄԵԾԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ՝ ՈՐ ԵՂԵՎ Ի ՁԻՐԱԲ, ԵՎ ՍԱՏԱԿՄԱՆ ԱՄՔԱՐՇՏԻՆ ՄԵՆՐՈՒԺԱՆԱՅ

Ազդ արարեալ Մեհրուժանայ յերկիրն Խորասանայ առ Շապուհ զամենայն օգնականութիւն Թէոդոսի գոր արար առ Պապ՝ ելանէ հրաման ի Շապուհոյ՝ ամենայն զօրացն Պարսից երթալ ընդ Մեհրուժանայ ի Հայս ի պատերազմ: Դոյնալէս ազդեն¹ ինքնակալին Թէոդոսի Պապ և Տերենտիանոս զՇապուհոյ, թէ ամենայն զօրացն հրամայեաց ելանել ի վերայ մեր, բայց ի դրանկացն: Ապա և Աւգոստոսն Թէոդոս հրամայեաց Աղղէի կոմսին մեծի երթալ յօգնականութիւն Պապայ, առնուլ զամենայն զօրս Յունաց, ոչ գոք թողուլ՝

գոր ոչ առցէ. այլ և զհետև ակս պահապանս քաղաքացն, որք զմտաքսեայսն ունէին զվիշապս²:

Եւ խմբեցաւ պատերազմն ի դաշտին որ կոչի Չիրաւ, և մատեան ճակատ առ ճակատ: Եւ մանկունք քաջ նախարարացն Հայոց, ինքնակամ նահատակեալք, մտին ի մէջ ճակատուցն, առաջնորդութեամբ սպարապետին իւրեանց Սմբատայ ասպետի, որդոյ Բագարատայ, որ³ յազգէն Բագրատունեաց: Ելին և ի զօրացն Պարսից համատիք նոցա, և խաղացին ի մէջ ճակատուցն. և ցիրք ընդ ցիրս լինէին: Եւ ի դառնալ մանկանցն Պարսից, ընդ հուպ դարձեալ մերոցն զհետ նոցա⁴, օրինակ իմն որպէս փոթորիկ յանտառէ տերև աթափ, այնպէս երազ յերկվարացն առեալ⁵ միգակօք, դի ցուրտ յերկիր ընկեցուին, ոչ կարելով նոցա⁶ յիւրեանց ճակատն մտանել: Իսկ յորժամ պարսիկքն զմերն շրջէին⁷ նոքա ի վահանափակն Յունաց իբր յամուր քաղաք մտանէին, առ ոչ ինչ վնասելոյ: Քանզի այնպէս արար Գորգոնոս իշխան հետևակ զօրուն, իբր պարսպաւ պատեաց վահանօք զճակատն Պապայ:

Քանզի զօրքն Յունաց վառեալ էին ի զէնս ոսկւոյ և արծաթոյ, և երկվարք նոցա նոյնպէս զարդու, և էր տեսանել իբրև զպարիսպ ինչ, յորոց յովք ի ջղեայ և ի կաշեայ պահպանակաց զգեստուն զկարծրութեան վիմաց բերէին երևոյթս⁹. և ի վերայ նոցա անխալամ գէսք¹⁰ նշանք արձակեալք իբր զսաղարթս ինչ հովանաւոր ծառոց: Բայց զվիշապացն մանուածս¹¹, ահազին բերանաբացութեամբ ուռուցեալ ի փչմանէ օդոյն¹², ոչ ինչ ուրեք կարեն նմանեցուցանել, այլ միայն իբրև զլեռն ինչ աղամանդեայ խոնարհիլ¹³ ի ծով—բովանդակ ճակատն Յունաց ի պարսկական զօրսն: Քանզի և զնոսա էր տեսանել իբրև զհզօր ինչ զետ առ ի կողմն ի լայն ծաւալեալ. արդարև զջրոյ գոյն զրահագգեստացն բերէր տեսութիւն¹⁴:

... Իսկ ի ծագել արեգականն ընդդէմ մերոց զօրացն, ի պղնձապատ վահանացն նշոյլք զլերամբքն փայլատակէին իբրև յամպոյ մեծէ, և ի նոցանէ ի դուրս ոստչէին ի մերոց նախարարացն քաջ զրահատրք՝ որպէս փայլատականց ճառագայթք. յորոց միայն ի տեսութենէն զանգիտեալ պարսկական գունդն, սակաւ ինչ և մերն, վասն ոչ կարել¹⁵ հայել ընդդէմ արեգականն ծագման: Իսկ ի բաղխել զմիմեանս՝ եղև ի վերայ հովանի ամպոյ, և հողմ սաստիկ ի մերոցն կուտ ընդդէմ պարսկականին փչեալ: Եւ ի խառնակել մարտին՝ պատահէ Կամսարականն Սպանդարատ խմբի մեծի, յորում էր քաջն Շերգիր Ղեկաց արքայ, զգլուխ միջին գնդին պնդութեամբ զտեղի ճակատուն կալեալ¹⁶: Եւ յարձակեալ Սպանդարատ, և հերձեալ զխումբն, որպէս զշանթահար յերկիր կործանէր զքաջն, և զխումբն պտուտեալ ի փախուստ դարձուցանէր: Եւ այսպէս ի վերին օգնականութենէն զօրացեալ առ հասարակ զօրքն Յունաց և Հայոց, դիակամբք թշնամեացն լցին զդաշտն ամենայն, և զմնա-

ցորդսն ամենայն ի փախուստ շրջեալ հալածեցին: Ընդ որս և զՈւռնայր Ա-
դուանից արքայ խոցոտեալ ի Մուշեղայ որդոյ Վասակայ Մամիկոնննի, հա-
նին ի պատերազմէն:

Բայց ամբարշտին Մեիրուժանայ վիրատրեալ ձին՝ ոչ կարաց երագել ընդ
փախստեայսն. որում աճապարեալ հասանէ սպարապետն Հայոց Մմբատ, և
զորս ընդ նմայն էին կոտորեալ ձերբակալ առնէ զվատշուէրն յեզեր շամբին
Կոզայովտի: Եւ զմտաւ ածեալ, թէ գուցէ թափիցէ¹⁷ գնա մեծն Ներսէս, այնու-
րիկ աղագաւ ոչ ածէ ի բանակն. այլ զտեղեօքն գտանէ պատրաստական առ
ի կորուստ ամբարշտին զոմանս խորանաւորս հուր լուցեալ, և շամփուր եր-
կաթի՝ միս խորովելոյ. զոր ջեռուցեալ, կրկնեաց բոլորեալ որպէս պսակ, և յոյժ
արտաշէկ արարեալ, ասէ. «Պսակեմ զքեզ, Մեիրուժան, քանզի ի խնդիր էիր
թագաւորել Հայոց. և ինձ ասպետիս պարտ է զքեզ պսակել ըստ սովորական
իշխանութեան իմոյ հայրենեաց»։ Եւ մինչ դեռ տաքն էր իբրև զհուր՝ եղ¹⁸ ի
զլուխն Մեիրուժանայ, և այնպէս սատակեցաւ չարն: Եւ յայնմ հետէ խաղա-
ղեցաւ երկիրն, ընդ ձեռամբ Պապայ նուաճեալ:

(Մովսէս Խորենացի, 3-րդ, ԼԷ)

¹ այստեղ՝ տեղեկացնելու, իմաց
տալու իմաստով
² զմետաքսեայսն ունէին զվիշապս-կրում
էին մետաքսայ վիշապանկար դրոշներ
³ ստորոգյալը (էր) զեղչված է
⁴ ընդ հուպ դարձեալ մերոցն զհետ
նոցա-մերոցն անմիջապէս հասնում
էին նրանց հետևից
⁵ այստեղ ցած զցելու իմաստով
⁶ սեռական հոլովով դրված ենթական
անորոշ դերբայի գործիական հոլովի
մտո՝ նրանք չկարողացան
⁷ այստեղ ետ դարձնելու իմաստով
⁸ էր տեսանել-կարելի էր տեսնել
⁹ զկարծրութեան վիմաց բերելին երևոյթս-
կարծր քարերի տեսք էին ստանում

¹⁰ ստորոգյալը (կային) զեղչված է
¹¹ զվիշապացն մանուածս-վիշապների
(վիշապի նկարով դրոշակներ) գալարումները
¹² ահագին բերանաբացութեամբ ուռուցեալ
ի փչմանէ օդոյն-քամուց ուռչելով ահագին
կերպով բացել էին բերանները
¹³ անորոշ դերբայը իլ մասնիկով 5-րդ
դարում խիստ հազվադեպ է հանդիպում
¹⁴ տեսութիւն. այստեղ՝ տեսք, տպավորություն
¹⁵ փխ. կարելոյ
¹⁶ զզլուխ միջին գնդին պնդութեամբ
զտեղի ճակատուն կալեալ-ճակատի մեջ-
տեղում ամուր կանգնած էր՝ միջին
զնդի զլուխն անցած
¹⁷ այստեղ՝ ազատել, փրկել
¹⁸ եղ-դրեց

§ 143. Որոշյալ դերանուններն են՝ *ամենեքին, ամենքեան* (=ամենքը, բո-
լորը, ամենքն էլ, բոլորն էլ), *բոլորեքին, բոլորեքեան* (=բոլորը, բոլորն էլ), *ամե-
նայն, այլև՝ ամէն, բոլոր, իւրաքանչիւր, համայն, հանուր(ց), ողջոյն*:

Ամենեքին-ամենքեան, բոլորեքին-բոլորեքեան, ամենայն դերանունները
հոլովվում են անվանական հոլովմամբ, ըստ որում *ամենեքին-ամենքեան,
բոլորեքին-բոլորեքեան* դերանունները հոլովվում են միայն հոգնակի թվով՝ *ու*
հոլովիչով, իսկ *ամենայն* դերանունը՝ միայն եզակի թվով՝ *ի* հոլովիչով:

Ու.	ամենեքին, ամենքեան	բոլորեքին, բոլորեքեան
Հ.	(զ)ամենեաին, (զ)ամենեսեան	(զ)բոլորեսին, (զ)բոլորեսեան
Ս.	ամենեցուն, ամենեցունց	բոլորեցուն, բոլորեցունց
Տ.	ամենեցուն, ամենեցունց	բոլորեցուն, բոլորեցունց
Բ.	յամենեցունց	ի բոլորեցունց
Գ.	ամենեքումբք	բոլորեքումբք

ՈՒ.	ամենայն
Հ.	(զ)ամենայն
Ս.	ամենայնի
Տ.	ամենայնի
Բ.	յամենայնէ
Գ.	ամենայնի

Ծանոթություն. Երբեմն *բոլոր* դերանունը հանդիպում է հոլովված ձևով՝ ե-
զակի տրական և գործիական հոլովներով. *Բոլորումս* Հայոց զօրութեամբ օ-
տար ազգաց խորհէր տիրել (Խոր., 3-րդ, Գ): Եթէ հաւատասա *բոլորով* սրտի
քով (Գործ., Ը, 7):

§ 144. *Իւրաքանչիւր* դերանվան հոմանիշ ձևերն են *անձնիւր* կամ *անցնիւր*,
որոնք խիստ սակավ գործածություն ունեն: *Իւրաքանչիւր* դերանունն ուղիղ
ձևով կարող է գործածվել նաև թեք հոլովների իմաստով՝ թարգմանվելով աշ-
խարհաբար *յուրաքանչյուրն իր, ամեն մեկս մեր, ամենքն իրենց, ամեն մեկդ
ձեր* և նման իմաստներով. օրինակ՝ Ումեմն ետ հինգ քանքար և ումեմն երկուս
և ումեմն մի, ըստ իւրաքանչիւր կարի (=յուրաքանչյուրին իր կարողության
չափ), և գնաց (Մատթ., ԻԵ, 15): Ապա արձակեաց զմարգիկսն յիւրաքանչիւր
տեղիս (Եղիշէ, էջ 12) =Հետո զինվորներին ուղարկեց ամեն մեկին իր տեղը:

§ 145. *Ամենեքին-ամենքեան* դերանունը գործածվում է գոյականի հետ և՛

նախադաս, և՛ ետադաս՝ հողովով ու քվով համաձայնելով իր լրացյալին. օրինակ՝ Վասն զի արհաւիրք ի Տեառնէ անկան ի վերայ ամենեցուն բնակչաց զաւառացն (Բ Մնաց., ԺԵ, 5): Յայնժամ ի մի վայր ժողովեալ նախարարացն ամենեցուն (Փարպ., 2-րդ, ԻԷ): Սի ի հարիրոց յամենեցունց պիտանեացն առնու պատանդս (Խոր., 2-րդ, ԿԵ):

Ամենայն դերանունը գործածվում է գոյական անվան հետ նախադաս և ետադաս, սակայն տարածվածը նախադաս գործածությունն է: Այն հողովով ու քվով չի համաձայնում իր լրացյալին. օրինակ՝ Թաքստեամբ ասրէր հանդերձ ամենայն զօրօքն իւրովք (Եղիշէ, էջ 18): Եւ գործակալք ամենայն յիմում ձեռին են (Փարպ., 2-րդ, ԽԵ):

Ծանոթություն. Երբեմն *ամենայն* դերանունը, մանավանդ ետադաս գործածվելիս, համաձայնում է միայն հողովով՝ «անդրանիկ ամենայնի մեռելոցն» (Բուզ., 4-րդ, Ե), «լեռնականօքն ամենայնի» (Խոր., 2-րդ, Ծ), «ի ժողովդդէնէն յամենայնէ» (Ա Թագ., Բ, 13):

§ 146. *Իւրաքանչիւր* դերանունը գործածվում է գոյականի հետ և՛ նախադաս, և՛ ետադաս, իսկ մյուս որոշյալ դերանունները՝ միայն նախադաս, որոնք հողովով ու քվով չեն համաձայնում իրենց լրացյալներին. օրինակ՝ Այս են որդիքն Իսրայելի՝ ըստ իւրաքանչիւր տեղեացն (Եզր, Բ, 1): Բոլոր մարմնոյս հոգի է կենդանութիւն (Եղիշէ, էջ 15): Բոլոր ընտանեօքն (Խոր., 3-րդ, ԼԱ): Հանուրց մարդկութեանս (Խոր., 1-ին, Դ): Ի վերայ ողջոյն ազգի (Եղիշէ, էջ 90):

Վարժություն 117. *Թարգմանել, որոշել որոշյալ դերանունների հողովը:*

Եւ զի այս այսպէս՝ է ամենեցուն յայտնի է. որ կամին ուսանել: Եւ դու տիրես ի վերայ ամենայնի: Այսք էին ամենեքեան, որ ունէին զկանայս յայլագեացն: Իսկ այն ո՞վ էր որ որսացաւ ինձ որս և երեր մատոյց, և կերայ յամենայնէ: Առատ ռոճկօք ուրախ առնէր զամենեսեան, և զուարթագին զինքն ցուցանէր ամենեցուն: Ուսաւ և տեղեկացաւ յամենեցունց մարգպանն: Դարձեալ փութայ ամենեքումբք հանդերձ: Այն է ճշմարիտ Աստուած՝ բոլորեցունց մեր արարիչ: Եւ զայս իբրև ասաց, եղեալ ծունր ամենեքումբք՝ եկաց յաղօթս: Անարգս և վատթարս յաչս ամենեցուն գնոսս ցուցանէին: Քանզի ոչ բոլորեցունց դիպի մարտիրոսութեան վիճակն: Այլ որպէս յամենայնի մոլորեցան հերձուածոք:

Վարժություն 118. *Թարգմանել, բացատրել, թե որոշյալ դերանունները հողովով ու քվով ինչպես են համաձայնել իրենց լրացյալներին:*

Եւ եկին ամենեքեան ծերքն Իսրայելի: Չդուռն քաղաքին պահէր մինչև ի գալն Արտաշիսի և զօրացն ամենեցուն: Եւ սպան զամենեսեան զեղբարսն իւր

սրով: Չկնի իսկ եկելոցս մարգարէիքն ամենեքումբք ծանօթս տայ: Սիրեսցես... յամենայն սրտէ քումմէ: Սոյն օրինակ և ամենայն զիրք հոգեպատումք նշանակեալ ունին զքաջութիւնս ամենայն զօրաց: Չայսու ժամանակաւ միաբանեալ Ալանք լեռնականօքն ամենայնի... մեծաւ ամբոխի տարածեալ ընդ աշխարհս մեր: Սի ի հարիրոց յամենեցունց պիտանեացն առնու պատանդս:

ծանոթս տալ-իր մասին ծանոթություն տալ

Վարժություն 119. *Թարգմանել գրաբար:*

Բերում էին գրքերը և այրում բոլորի առջև (առաջի): Առատ պարզևներ կտա բոլորին: Ամենքը վախենում էին նրանից: Ամեն ինչից հարկ էին պահանջում: Ողջոյն հղեց իր տերութեան բոլոր ազգերին: Ամեն ինչում դու արդար ես: Հանդիմանվում է բոլորի կողմից: Բոլոր գերիներին զխատեցին քաղաքի հրապարակում: Այգու բոլոր ծառերը ծաղկեցին: Ամբողջ սրտով սիրում էր իր որդիներին: Ամենքին հայտնի է, որ նա քաջ է: Բոլոր կողմերից պաշարեցին քաղաքը:

ԱՐՏԱՄԱՐԳՆԱՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆՆՆՆԻ, ԵՎ ՆԱԼԱԾԵԼ ԶԵՂԲԱՐՍ ԻԻՐ ԵՎ ԶՔՈՐՍ, ԵՎ ՄԱՆ ՆԱՆԴԵՐԶ ԱՅԼԱԲԱՆԵԼՈՎ

Յետ Արտաշիսի թագաւորէ Արտաւագդ որդի նորա, և հալածէ յԱյրարատոյ զամենայն եղբարս իւր ի գաւառս Աղիովտայ և Առբերանոյ, զի մի՛ բնակեացեն յԱյրարատ ի կալուածս արքայի. քայց միայն զՏիրան պահէ փոխանորդ իւր, զի որդի ոչ գոյր նորա: Որ յետ սակաւ ինչ աւուրց թագաւորելոյն իւրոյ, անցեալ զկամրջաւն Արտաշատ քաղաքի՝ որսալ կինճս և իշավայրիս զակամբք Գինայ, աղմկեալ ի ցնորից իմն խելագարանաց², ընդ վայր յածելով³ երկվարաւն, անկանի ի խոր իմն մեծ, և խորատոյգ լեալ՝ անհետի:

Չսմանէ երգիչքն Գողթան առասպելաբանեն այսպէս. եթէ ի մահուանն Արտաշիսի բազում կոտորածք լինէին ըստ օրինի հեթանոսաց. դժուարի⁴, ասեն, Արտաւագդ՝ ասելով ցհայրն.

Սինչ դու գնացեր,
Եւ զերկիրս ամենայն ընդ քեզ տարար,
Ես աւերակացս ո՞նք թագաւորեմ:

Վասն որոյ անիծեալ զնա Արտաշիսի՝ ասաց այսպէս.
Եթէ դու յորս հեծցիս⁵ յԱզատն ի վեր ի Մասիս,
Զքեզ կալցին քաջք,

Տարցին յԱզատն ի վեր ի Մասիս.

Անդ կայցես, և գոյս մի՛ տեսցես:

Չրուցեն զսմանէ և պառաւունք, եթէ արգելեալ կայ յայրի միում՝ կապեալ երկաթի շղթայիւք. և երկու շունք հանապազ կրծելով զշղթայսն, ջանայ ելանել և առնել վախճան աշխարհի, այլ ի ձայնէ կռամարկութեան դարբնաց զօրանան, ասեն, կապանքն: Վասն որոյ և առ մերով իսկ ժամանակաւ՝ բազումք ի դարբնաց, զհետ երթալով առասպելին, յաւուր միաշաբաթօջ երկօս կամ չորիցս բախեն զսալն, զի զօրասցին, ասեն, շղթայքն Արտաւազդայ: Բայց է ճշմարտութեամբ այսպէս, որպէս ասացաքս վերագոյն:

Այլ ոմանք ասեն և ի ծնանելն զսա դիպեալ պատահարաց իմն. զոր⁶ համարեցան կախարդել զսա կանանց⁷ զարմիցն Ածրահակայ. վասն որոյ զնոսս բազում չարչարեաց Արտաշէս: Եւ զայս նոյն երգիչքն յառասպելին ասեն այսպէս, եթէ.

Վիշապագունք գողացան զմանուկն Արտաւազդ,

Եւ դև փոխանակ եղին:

Բայց ինձ արդարացեալ⁵ թուի լուրն այն, թէ ի ծննդեմն և եթ մոլութեամբ լեալ⁹, մինչ նովիմք¹⁰ և վախճանեցաւ: Եւ առնու զքազաւորութիւնն Տիրան եղբայր նորին:

(Մովսէս Խորենացի, 2-րդ, ԿԱ)

¹ այստեղ՝ *թագավորները* իմաստով
² աղմկեալ ի ցնորից իմն խելագարանաց-
ինչ-որ ցնորքից շփոթվում, խելագարվում է
³ ընդ վայր յածել-վայր ընկնել
⁴ այստեղ՝ նեղանում է
⁵ եթէ դու յորս հեծցիս-թե դու
(ձի) հեծնես որսի գնաս
⁶ ուղիղ խնդիրը կրկնված է (գոր, զսա).

պետք է թարգմանել որևէ մեկը
⁷ անորոշ դերբայի մտա ենթական
դրված է տրական հոլովով. համարեցան
կախարդել զսա կանանց-կարծում են,
թե սրան կախարդել են կանայք
⁸ այստեղ՝ ճշմարիտ, արդարացի
⁹ մոլութեամբ լեալ-խելագար է եղել
¹⁰ նովիմք-նույնով, այսինքն՝ նույն
հիվանդությամբ

ԳԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՍԱԿԲԱՅՆԵՐ

§ 147. Գրաբարում մի շարք բառեր՝ *աստ, անդ, այսր, այդր, անդր, աստի, այտի (այդի), անտի*, անկախ գործածվելիս հանդես են գալիս որպես մակբայներ. օրինակ՝ Եւ անդ (=այնտեղ) պահեցէք զնոսս զգուշութեամբ (Եղիշէ, էջ 146): Զիա՞րդ մտեր այսր (=այստեղ) (Մատթ., ԻԲ, 12): Թողէք անդր (=այնտեղ) զառաջին յանցանս ձեր (Եղիշէ, էջ 165): Քանզի անդ (=այն ժամանակ) մոլեգնեալ այր իւրաքանչիւր, սուր ի կող ընկերի իւրոյ ձգելով՝ ջանային տի-

րել ի վերայ միմեանց (Խոր., 1-ին, Ժ): Եւ անտի (=այնտեղից) չուեալ՝ յուսանն ի Դուին մտանէին (Փարպ., 3-րդ, էջ 157):

§ 148. Գերանվանական մակբայները հաճախ գործածվում են նաև գոյական անունների հետ: Այս դեպքում պետք է նկատի ունենալ հետևյալը.

1. Դրանք մշանակությամբ փոխարինում են *այս, այդ, այն* ցուցական դերանուններին կամ *ս. դ, ն* ցուցական հոդերին. օրինակ՝ Է՛ջ դու վաղվադակի ի ձիոյ այտի (Բուզ., 6-րդ, Ը), փխ., Է՛ջ դու վաղվադակի ի ձիոյոյ յայդմանէ=ցած իջիր իսկոյյն այդ ձիոց (կամ՝ ձիոցոյ): Յաշխարհէ աստի չեն (Յովհ., ԺԷ, 16), փխ. Յաշխարհէս յայսմանէ չեն=այս աշխարհից չեն: Թաքեայց ի դաշտի աստ (Ա Թագ., Ի, 5), փխ. Թաքեայց ի դաշտիս յայսմիկ=կթաքնվեմ այս դաշտում: Եւ ոչ ի տար աշխարհ այսր զհետ նոցա զնայաք (Եղիշէ, էջ 184), փխ. Եւ ոչ ի տար աշխարհս յայս զհետ նոցա զնայաք=և ոչ էլ նրանց հետևից այս օտար աշխարհը կգնայինք (բառացի՝ գնում էինք):

2. Հաճախ էլ այդ բառերը չեն արտահայտում ցուցական դերանունների կամ հոդերի նշանակություն և չեն թարգմանվում աշխարհաբար համապատասխան դերանուններով ու հոդերով. օրինակ՝ Ի պտղոյ անտի ծառն ճանաչի (Մատթ., ԺԲ, 33)=Պտղից է ծառը ճանաչվում: Ապա իմացեալ Չրուանայ, ասէ. «Երկու որդիք են յորովայնի անդ» (Եզնիկ, 2-րդ, Ա)=Ապա Չրվանն իմանալով ասում է՝ «Երկու որդիներ կան որովայնում»: Չարթոյց զսուրբսն ի քնոյ անտի (Եղիշէ, էջ 151)=Զնից զարթնեցրեց սրբերին: Եթէ որպէս նոքա ի բանտի անդ անիծանէին զքեզ (Եղիշէ, էջ 143)=Թե ինչպես նրանք բանտում անիծում էին քեզ:

§ 149. Գերանվանական մակբայներն ունեն նաև գործածության հետևյալ առանձնահատկությունները.

1. *Աստ, անդ, այդր* բառերը գործածվում են ներգոյականի իմաստ արտահայտող *ի(յ)* նախդրով տրականի հետ. օրինակ՝ Գտանէր յամրոցի անդ (Բուզ., 3-րդ, Ը): Արկէք զդա ի գուր մի յանապատի աստ (Ծննդ., ԼԷ, 22): Գրեցի ձեզ ի թղթի այդր (Ա Կորնթ., Ե, 9):

2. *Այսր, անդր* բառերը գործածվում են *ի(յ)* նախդիր ունեցող ուղևորման հայցականի հետ. օրինակ՝ Եթէ ո՞չ գայցէ ի տօն այսր (Յովհ., ԺԱ, 56): Մտեալ ի սենեակ անդր՝ ելաց (Ծննդ., ԽԳ, 30): Գայր հասանէր ի տեղի անդր (Թռռն., Բ, էջ 501):

Ծանոթություն. Երբեմն *անդր* բառը կարող է գործածվել ներգոյականի իմաստ արտահայտող *ի(յ)* նախդրով հայցականի հետ. օրինակ՝ Եւ ձկունք, որ ի գետ անդր էին՝ աստակեցան (Ելք, Է, 21):

3. *Աստի, այտի (այդի), անտի* բառերը գործածվում են բացառական հոլովի հետ. օրինակ՝ Հանին զՅովսէփ ի գրոյ անտի (Ծննդ., ԼԷ, 28): Առաքեցից զմի յաշակերտաց աստի իմոց (Խոր., 2-րդ, ԼԲ): Ել նա յատենն անտի (Թռռն., Բ, էջ 562): Ել ի տապանէ այտի (Ծննդ., Ը, 16):

Վարժություն 120. *Թարգմանել, որոշել, թե ո՞ր հոլովների հետ և ի՞նչ նշանակությամբ են գործածվել դերանվանական մակբայները:*

Լուարո՛ք (Էսեցե՛ք) յազգականաց այտի դորա: Իբրև մերձեցան ի բանակ անդր: Ածե՛ք այս և ի կապելոցն, որք են ի բանտի անդ: Եւ դարձուցին զնա ի ջրհորոյ անտի: Չախոռապետն արքային Պարսից գլխատէր ի ներքս յասպաստանի անդ: Ոչ հաւանէր նա իջանել յանապատէ անտի: Եմուտ այրն ի տուն անդր: Նոքա եկեալ ցուցանէին ի քաղաքի անդ: Ոչ կարէին հանել ըզվնասակար խոզսն յայգոյ անտի: Լուայ զձայն քո ի դրախտի աստ և երկեայ: Թերևս ամաչեսցեն յորդոյ աստի իմնէ:

Վարժություն 121. *Թարգմանել՝ բաց թողած բառերի տեղ դնելով համապատասխան դերանվանական մակբայներ:*

Երթայր վաղվաղակի ի դաշտ...: Հոսէր արիւնն ի վիրէ...: Ինքն կերակրեաց ի սակաւ հացէ գողովորդն յանապատի...: Եկն եմուտ ի խորան...: Յամենայն ծառոց որ իցեն ի ներքս դրախտի... մի՛ ուտիցէք: Ես աւասիկ ախոյեան ելանեն քեզ ի մերոց զօրաց..., և դու ինձ ի յունականաց...: Ընկենուիմ յերիվաբէ... զպատանեակն Գնել: Ի պարսպէ... ի ձոր... ընկենուիմ զնոսա:

Վարժություն 122. *Թարգմանել գրաբար, ընդգծված բառերի փոխարեն գործածել համապատասխան մակբայներ:*

Այն աղբյուրից էին ջուր տանում: Կմտնեք այն քաղաքը: Այս անապատում էին բնակվում: Շապուռի թագավորը փախչում էր այս պատերազմից: Ոչ-խարներն արածում են այդ դաշտում: Նավը ընկղմվեց (ընկղմեցաւ) այս ծովի մեջ: Այն տեղում տնկում էին այգիներ: Այս գիւղացիները ընկնում: Կվերցնեք այդ ալյուրը և կլցնեք այդ ամանի մեջ: Այդ գյուղից հարկ էին պահանջում:

ՎԱՄՆ ՉԵՌԱԿԵՐՏԻՆ, ՈՐ ԿՈՉԻ ԵՐՈՒՄՆԻԱԿԵՐՏ

Քաղցր է ինձ ասել և յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, գոր յօրինեաց¹ նոյն ինքն Երուանդ գեղեցիկ և չքանալ յօրինուածովք: Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ և պայծառ շինուածովք՝ լուսաւոր որպէս ական բիր: Իսկ շուրջ զմարդկութեամբն² ծաղկոցաց և հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբբովն զայլ բոլորակութիւն³ ական: Իսկ զբազմութիւն այգեստանոյ⁴ իբր զարտնանանց խիտ և գեղեցիկ ծիր⁵. որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնաձև՝ արդարև գեղաւոր կուսից յօնից դարաւան-

դաց համեմատ⁶: Իսկ ի հարաւոյ հարթութիւն⁷ դաշտաց՝ ծնօտից պարզութեան գեղեցկութիւն⁸: Իսկ գետն բերանացեալ դարաւանդօք ավանցն՝ գերկթերթիսն նշանակէ շրթունս⁹: Եւ այսպիսի գեղեցկութեան⁷ դիր՝ անքթթելի իմն գոգցես ի բարձրաւանդակ թագաւորանիստն զհայեցուածսն ունի¹⁰. և արդարև բերրի և թագաւորական դաստակերտն:

Չայս ամենայն զգործեցեալսն Երուանդայ պարզէ մեծն Տրդատ մարդկան ազգին Կամսարականաց, որպէս մտերմաց և արեան կցորդաց¹¹ ազգին Արշակունեաց. գոր յիւրում տեղուջն պատմեսցուք...:

(Մովսէս Խորենացի, 2-րդ, ԽԲ)

¹ այստեղ՝ կառուցեց, շինեց	համեմատվում էր գեղեցիկ
² շուրջ զմարդկութեամբն-բնակության	կույսերի հոնքերին
շուրջը: Այս և հաջորդ մի քանի նախադասություններում բայ-ստորոգյալը կամ բաղադրյալ ստորոգյալի հանգույցն արտահայտված չեն	⁷ վերացականը բանձրացականի փոխարեն. հարթութիւն դաշտաց-հարթ դաշտերը
³ այստեղ՝ բոլորակ	⁸ ծնօտից պարզութեան գեղեցկութիւն-(հիշեցնում էին) ծնօտների գեղեցիկ ողորկությունը
⁴ այգեստանոյ-այգիների	⁹ ամբողջ նախադասությունը պետք է թարգմանել այսպէս. իսկ գետը ավերի բարձրություններով պատկերանում էր մի բերան՝ իր երկու շրթունքներով
⁵ իբր զարտնանանց խիտ և գեղեցիկ ծիր-նմանվում էր խիտ արտնանունքի գեղեցիկ գծին	¹⁰ կարծես անթարթ հայացքն ուղղել է թագավորանիստ բարձրավանդակի վրա
⁶ ամբողջ նախադասությունը պետք է թարգմանել այսպէս. որի հյուսիսային կողմի կամարածն դիրքը իսկապէս	¹¹ արեան կցորդ-արյունակից

ՅԱՂԱԳՍ ՇԻՆՈՒՄԾՈՅ ԱՄՐՈՅԻՆ ԳԱՌՆՈՅ

... Չայսու ժամանակաւ կատարէ Տրդատ զշինուած ամբողջին Գառնոյ, գոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և կապարով մածուցեալ. յորում շինեալ և տուն հովանոց¹, մահարձանօք², սքանչելի դրօշուածովք բարձր քանդակաւ, ի համար քեռ իւրոյ Խոսրովիդիստոյ, և գրեալ ի նմա զյիշատակ իւր հելլենացի գրով...:

(Մովսէս Խորենացի, 2-րդ, Ղ)

¹ տուն հովանոց-հովանոց

² մահարձան-արձան

ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 150. Գրաբարում ածականները լինում են երկու տեսակ՝ որակական և հարաբերական:

Որակական ածականները ունեն համեմատության երեք աստիճան՝ դրական, համեմատական, գերադրական:

§ 151. Ածականի համեմատական կամ բաղդատական աստիճանը կազմվում է երկու ձևով՝ ա) (ա) *գոյն* վերջածանցով, բ) *քան* նախադրությամբ:

ա) *Գոյն* ածանցը դրվում է ածականի ուղիղ ձևի վրա, օրինակ՝ մեծ-մեծագոյն=ավելի մեծ, հզոր-հզորագոյն=ավելի հզոր, լաւ-լաւագոյն=ավելի լավ և այլն: Հարկ է կարծել՝ թէ էր ոմն ի վեր քան գնա գորագոյն և փառատրագոյն (Եզնիկ, 2-րդ, Գ)=Պետք է կարծել, թե նրանից վեր ավելի գորեղ և փառավոր մեկը կար:

Ծանոթություն. Երբեմն *գոյն* ածանցով կազմված ածականներն արտահայտում են գերադրական իմաստ. օրինակ՝ Ապրի կրտսերագոյնն միայն, որ է Նիմուսա (Խոր., 1-ին, ԺԷ)=Ազատվում է միայն ամենափոքրը՝ Նինվասը:

բ) *Քան* նախադրությունը դրվում է սովորաբար դրական աստիճանից, երբեմն էլ *գոյն* ածանցով կազմված ածականներից հետո, այնուհետև՝ համեմատելի բառը հայցական հոլովով և *զ* նախդրով. օրինակ՝ մեծ քան գերկիր=երկրից ավելի մեծ, բարձրագոյն քան գնա=նրանից ավելի բարձր և այլն: Մեծ քան գտոսա այլ պատուիրան ոչ գոյ (Մարկ., ԺԲ, 31)=Սրանցից ավելի մեծ պատվիրան չկա: Քաղցր է նա քան զմեղու խորիսխ (Մաղմ., ԺԸ(ԺԹ), 11)=Նա մեղրի խորիսխից ավելի քաղցր է: Սին բարձրագոյն էր քան զմիսն (Դան., Ը, 3)=Մեկը մյուսից ավելի բարձր էր: Ձի՞նչ հզորագոյն քան զառեծ (Դատ., ԺԳ, 18)=Ի՞նչն է առյուծից ավելի հզոր:

§ 152. Գրաբարում ածականի գերադրական աստիճանը հատուկ ձև չունի: Այդ իմաստն արտահայտվում է *կարի, յոյժ, սաստիկ, անհնարին* և սաստկական իմաստ ունեցող այլ մակբայների միջոցով, որոնք դրվում են սովորաբար ածականի ուղիղ ձևի վրա. օրինակ՝ Ծածկեալ յոյժ բարակ կտառով (Փարպ., էջ 29)=Ծածկելով շատ բարակ կտավով:

Ծանոթություն. Բարդ բառերի կազմության մեջ հանդիպող *ամեն* բառը արտահայտում է ոչ թե գերադրական, այլ *ամեն ինչ* իմաստը. օրինակ՝ Թողոյր... զգաւառն Այրարատու... զամենաբոյսն. զամենաբողխն, զամենալին... (Փարպ., էջ 9)=Թողեց (բառացի՝ թողնում էր) ամեն ինչ բուսեցնող, ամեն ինչ բխեցնող, ամեն ինչով լի Արարատյան գավառը:

§ 153. Ածականներն ունեն անվանական հոլովում, հոլովվում են արտաքին թեքման *Ի, Ո, Ի-Ա, Ո-Ա*, մասամբ էլ *ՈՒ* հոլովմամբ:

Ծանոթություն. Մի քանի ածականներ եզակի տրականում ստանում են *ում* հոլովակերտ՝ հին-հնոյ-հնում, նոր-նորոյ-նորում, վերին-վերնոյ-վերնում և այլն:

ա) *Ային, ին* վերջածանց ունեցող ածականները հոլովվում են Ո հոլովմամբ՝ դաշտային-դաշտայնոյ, ամառնային-ամառնայնոյ, վերին-վերնոյ, վերջին-վերջնոյ և այլն:

բ) *Ի*-ով վերջացող բազմավանկ ածականները հոլովվում են Ո-Ա խառն հոլովմամբ՝ սիրելի-սիրելոյ-սիրելեալ, բարի-բարոյ-բարեալ, առաքինի-առաքինոյ-առաքինեալ, իմանալի-իմանալոյ-իմանալեալ, գեղանի-գեղանոյ-գեղանեալ, պիտանի-պիտանոյ-պիտանեալ և այլն:

գ) *Գոյն* վերջածանց ունեցող ածականները հոլովվում են Ի հոլովմամբ՝ մեծագոյն-մեծագունի-մեծագունից, լաւագոյն-լաւագունի-լաւագունից, վեհագոյն-վեհագունի-վեհագունից, ազնուագոյն-ազնուագունի-ազնուագունից և այլն:

դ) *Ը*-ով և նախորդող որևէ բաղաձայնով վերջացող *թանձր, կարծր, մանր, ծանր, փոքր, քաղցր* ածականները հոլովվում են *ՈՒ* հոլովմամբ և ունեն ներքին թեքման որոշ առանձնահատկություններ: Եզակի թվի թեք հոլովներում *ը*-ն ընկնում է, իսկ հոգնակի ուղղականը վերջավորվում է *ունք*-ով:

Հոլովման օրինակ.

	Եզակի	Հոգնակի
ՈՒ.	փոքր	փոքունք
Հ.	(զ)փոքր	(զ)փոքունս
Ս.Տ.	փոքրու	փոքրունց
Բ.	ի փոքրուէ	ի փոքրունց
Գ.	փոքրու	փոքրումբք

Ծանոթություն. *Բարձր* ածականը եզակի թվում հոլովվում է (ը)*ը*-ով վերջացող բառերի նման, իսկ հոգնակի թվում՝ ներքին թեքման Ա հոլովմամբ:

ՈՒ.	բարձր	բարձունք
Հ.	(զ)բարձր	(զ)բարձունս
Ս. Տ.	բարձրու	բարձանց
Բ.	ի բարձրուէ	ի բարձանց
Գ.	բարձրու	բարձամբք

Մնացած ածականների հոլովման վերաբերյալ որոշակի կանոններ չկան, նրանց հոլովումն իմանալու համար պետք է դիմել գրաբարի բառարաններին:

**ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ**

§ 154. Գրաբարում ածականները դրվում են գոյական անուններից և՛ ա-
նաջ, և՛ հետո, սակայն ավելի տարածվածը նախադաս գործածությունն է:

§ 155. Որպես ընդհանուր կանոն, նախադաս ածականները հոլովով ու
թվով չեն համաձայնում գոյականներին: Նախդրավոր հոլովներում նախդիր-
ները դրվում են ածականի վրա: Հոլովման օրինակ.

	Եզակի	Նոգնակի
ՈՒ.	սիրելի եղբայր	սիրելի եղբարք
Հ.	(զ)սիրելի եղբայր	(զ)սիրելի եղբարս
Ս. Տ.	սիրելի եղբար(եղբօր)	սիրելի եղբարց
Բ.	ի սիրելի եղբարե(եղբօրե)	ի սիրելի եղբարց
Գ.	սիրելի եղբարք	սիրելի եղբարքք

Ծանոթություն. Երբեմն նախադաս ածականները հոլովով ու թվով համա-
ձայնում են իրենց լրացյալներին. օրինակ՝ *ի ձեռն պատուաւորի զօրագլխի
ուրուք* (Եղիշէ, էջ 44), *ի ձեռաց կորովեաց աղեղնատրաց* (Խոր., 2-րդ, ԿԵ), *սի-
րելեաց վկայիցն* (Ազ., էջ 10), *ի մեծի տան* (Եզնիկ, 1-ին, Գ), *ի հնոց ժամանա-
կաց* (Բուզ., 4-րդ, Ե), *ի չարէ արարչէ* (Եզնիկ, 1-ին, ԺԵ) և այլն:

Այս դեպքում անեզական գոյականների հոգնակի գործիականի հետ ա-
ծականները սովորաբար համաձայնում են միայն հոլովով. օրինակ՝ *մեծաւ
բշնամանօք* (Բուզ., 3-րդ, Դ), *բացաւ աչօք* (Եղիշէ, էջ 125) և այլն:

§ 156. Ետադաս ածականները, որպես կանոն, հոլովով ու թվով համաձայ-
նում են գոյականներին: Հոլովման օրինակ.

	Եզակի	Նոգնակի
ՈՒ.	ազգ քաջ	ազգք քաջք
Հ.	(զ)ազգ քաջ	(զ)ազգս քաջս
Ս. Տ.	ազգի քաջի	ազգաց քաջաց
Բ.	յազգէ քաջէ	յազգաց քաջաց
Գ.	ազգաւ քաջաւ	ազգաք(օք) քաջաք(օք)

Ծանոթություն. Ետադաս ածականները խիստ հազվադեպ չեն համաձայ-
նում իրենց լրացյալներին հոլովով ու թվով. օրինակ՝ *ի քաղաքի մի փոքր*
(Խոր., 2-րդ, ԴԱ), *քաղեաւ կածեայ* (Խոր., 3-րդ, Թ), *զպաղատանս արտա-
սուալից* (Կոր., Ը) և այլն:

Արքունի բառը թե՛ նախադաս և թե՛ ետադաս գործածվելիս միշտ մնում է
անհամաձայն:

Վարժություն 123. Հոլովել հետևյալ կապակցությունները՝ ածականները
հոլովով ու թվով համաձայնեցնելով գոյականներին:

Բարեկամ սիրելի, այր առաքինի, զօրավար քաջ, ընկեր հաւատարիմ, մեծ
քաղաք:

Վարժություն 124. Թարգմանել, բացատրել, թե նախադաս և ետադաս ա-
ծականները հոլովով ու թվով ինչպես են համաձայնել իրենց լրացյալներին:

Իմաստուն կանայք շինեցին տունս, իսկ անզգամքն ձեռք իրեանց կոր-
ծանեցին: Մեծաւ խնդութեամբ ընդունէին զչարչարանս: Մակայն Վաղարշ
մեռանի ի ձեռաց կորովեաց աղեղնատրաց: Պաշտէր զկոռս համերս և ան-
շունչս: Այսօր թագաւորք օտարք տիրեն ի վերայ մեր: Յորժամ զաներեւութն
և զնորին զմշտնջենատր զօրութենն ճառիցէ որ: Ամիսս վեց օճանէին իդովք
անուշիւք: Ախտք մահաբերք հանապազ տանջեն զմարդիկ: Դարձեալ հրա-
ման տայր վասն առաքինոյն Գայիանեայ: Եւ եղ զիս ի վերայ լերին միոյ
բարձու յոյժ:

Վարժություն 125. Թարգմանել, փակագծերի մեջ առնված ածականները
հոլովով ու թվով համաձայնեցնել ընդգծված լրացյալներին:

Եւ ածին զիշխանսն թագաւորին (զհաւատարիմ): Բայց (ամբարիշտ(ն))
Մեհրուժանայ վիրատրեալ ձին՝ ոչ կարաց երագել ընդ փախստեայսն: (Մեծ)
անարգանօք տանջէր զամենեսեան: *Հոգով* իրով (սուրբ) մխիթարեացէ զձեզ
հանապազ: Դարձարո՛ք ի ճանապարհաց ձերոց (չար): Եկեալ հասանէր առ
իս հրաման *առն* միոյ (պատուական) Յովսէփ կոչեցելոյ: Հասանեն և *զօրքն*
(կայսերական): Եւ *զօրութեամբ* (բազում) տային վկայութիւն առաքեալքն: Եւ
նեղեալքն *յայսոց* (պիղծ) բժշկէին:

Վարժություն 126. Թարգմանել գրաբար՝ ածականները հոլովով ու թվով հա-
մաձայնեցնելով ընդգծված լրացյալներին, ըստ որում առաջին երեք նախադաս-
ությունների ածականները գործածել նախադաս, իսկ մյուսներինը՝ ետադաս:

Մեծ սիրով սիրում էր նրան: Ըստ էին *ավանդության* զոհեր էին մատուցում
իրենց աստվածներին: Սպանվում է իր հարազատ *եղբոր* կողմից: Կրնակվեն
ավերակ *քաղաքներում* և անշեն *տներում*: Սրբութեամբ են պահում առաքինի
մարդկանց հիշատակը: Բազում *վիրավորներ* ընկան այն մեծ *պատերազմում*:
Ուղարկում է պատգամավորներ Հայաստան հավատարիմ *մարդկանցով*: Օգ-
նություն էին ստանում իրենց սիրելի *բարեկամներից*: Ինչո՞ւ եք թշնամություն
զցում իմ երկու հարազատ *եղբայրների մեջ*: Փոքր *ամաններով* ջուր էին հա-
նում խոր *ջրհորից*: Ինձ ասում են՝ դուրս ելիր (ել արտաքս) այս գեղեցիկ *այ-*

գուց: Մեծ և հզոր գործով հարձակվում է թշնամու բանակի վրա: Միջնաբերդն ամրացրեց բարձր պարսպով:

զգեյ-արկանել

ՎԵՐԱՅԱԿԱՆԸ ԹԱՆՁՐԱՅԱԿԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

§ 157. Գրաբարում հաճախ ածականը ստանում է ութիւն ածանցը՝ վերածվելով վերացական գոյականի, որը սովորաբար դրվում է սեռական հոլովով և գործածվում ածականի իմաստով: Այդ բառերը պետք է թարգմանել աշխարհաբար որպես ածական, օրինակ՝ Բազմացի ի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ (Եղիշէ, էջ 9) = Թող շատանա ձեզ վրա մեր մարդասիրական ողջոյնը: Բնակեցեր, ասէ, ի մէջ ցրտութեան սառնամանեաց (Նոր., 1-ին, ԺԱ) = Բնակվեցիր, ասում է, ցուրտ սառնամանիքների մէջ:

Երբեմն այսպիսի վերացական գոյականները դրվում են ուղիղ ձևով, իսկ նրանց հատկացյալները՝ սեռական հոլովով: Մրանք նույնպես աշխարհաբար պետք է թարգմանել իբրև որոշիչ-որոշյալի կապակցություններ. օրինակ՝ Վասն այնորիկ յանձն իւր տարաբերեր, եթէ յո՞ թափեցից գղառնութիւն թիւնից, կամ ո՞ր բացատրեցից զբազմութիւն նետիցն (Եղիշէ, էջ 7) = Այդ պատճառով էլ ինքն իր մէջ ալեկոծվում էր, թէ ո՞ւմ վրա թափեմ դառն թույներս կամ ո՞ր արձակեմ բազմաթիվ նետերս:

Վարժություն 127. Դուրս գրել սեռական հոլովով և ուղիղ ձևով գործածված վերացական գոյականներն իրենց լրացյալների և լրացումների հետ միասին՝ դիմացը տալով աշխարհաբար թարգմանությունը:

Պարտ է մեզ, ասէ, յայսպիսում բարեխառնութեան օրոց և մաքրութեան ջուրց և երկրի, քաղաք և արքունիս շինել բնակութեան: Չմի առաքինութիւն հաւատոյ զգեցան: Պատուհասեր զնա բանիւք խստութեան: Այլ և մարմնոյն նեղութեամբք առաւել և ս բարձին զբեռն ծանրութեան: Բայց գտեղի ճակատուն շինէ դաստակերտ, և անուն կոչէ Հայք, վասն յաղթութեան պատերազմին: Ապաքէն զայդ կամիս՝ զի ծածկեցի խորհուրդ ամբարշտութեանդ: Եւ երդուա ինձ յիրեանց օրէնս քրիստոնէութեանն: Իսկ անօրէն իշխանն իբրև գիտաց եթէ յայտնեցաւ խորամանկութիւն խորհրդոյն: Չայն ամենայն ոյժ պնդութեան տեսեալ Լիկիանէս զարմացաւ: Եւ հրաժարեալք ի միմեանց համբուրի սրբութեանն՝ խաղայր զնայր... ի քաղաքս երկուս Ասորոց: Մատակարարէ անբաւ բազմութեամբ յոստանն, կանամբք, արամբք և ընտանեօք, զանպակասութիւն հացի և զինւոյ, զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն:

ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ
(Հատուած)

Մինչ չև բնաւ էր ինչ¹, ասեն, ոչ երկինք և ոչ երկիր և ոչ այլ ինչ արարածք՝

որ յերկինս կամ յերկրի, Չրուան ոմն անուն էր², որ թարգմանի բախտ կամ փառք: Չհազար ամ յաշտ արար³ զի թերևս որդի մի լինիցի նմա, որում անուն Որմիզդ, որ զերկինս և զերկիր և զամենայն որ ի նոսա՝ առնիցէ. և յետ հազար ամի յաշտ առնելոյ՝ սկսաւ ածել զմտաւ⁴, ասէ. «Օգո՞ւտ ինչ իցէ յաշտս զոր առնեմ, և լինիցի՞ ինձ որդի Որմիզդ, եթէ ի զուր ինչ ջանայցեմ»: Եւ մինչ դեռ նա զայս խորհէր, Որմիզդ և Արհմն յղեցան յարգանդի մօր իւրեանց. Որմիզդն ի յաշտն առնելոյ, և Արհմն ի յերկուսնալոյ անտի: Ապա իմացեալ Չրուանայ, ասէ. «Երկու որդիք են յորովայնի անդ, որ ոք ի նոցանէ վաղ առ իս հասցէ՝ զնա թագաւոր արարից»⁵. և ծանուցեալ⁶ Որմիզդի զխորհուրդս հօրն՝ յայտնեաց Արհմնին. ասէ. «Չրուան հայր մեր խորհեցաւ՝ թէ ոք ի մէջ վաղ առ նա երթիցէ, զնա թագաւորեցուցէ»: Եւ զայն լուեալ Արհմնին ծակեաց զորովայնն, և էլ եկաց⁷ առաջի հօրն: Եւ տեսեալ զնա Չրուանայ, ոչ գիտաց եթէ ո՞ր ոք իցէ. և հարցանէր՝ եթէ «Ո՞վ ես դու»: Եւ նա ասէ. «Ես եմ որդին քո»: Ասէ ցնա Չրուանն. «Իմ որդին անուշահոտ և լուսաւոր է, և դու խաւարին և ժանդահոտ ես»: Եւ մինչ դեռ նոքա զայս ընդ միմեանս խօսէին, ծնեալ Որմիզդի ի ժամու իւրում լուսաւոր և անուշահոտ, եկն եկաց առաջի Չրուանայ: Եւ տեսեալ զնա Չրուանայ, գիտաց՝ եթէ Որմիզդ որդի նորա է, վասն որոյ զյաշտն առնէր. և առեալ զբարսմունսն՝ զոր ի ձեռին իւրում ունէր, որովք զյաշտն առնէր, ետ ցՈրմիզդ և ասէ. «Յայժմ ես վասն քո յաշտ առնէի, յայսմհետէ դու վասն իմ առնիցես»: Եւ ի տալ Չրուանայ⁸ զբարսմունսն ցՈրմիզդ և օրհնել զնա, մատուցեալ Արհմնի առաջի Չրուանայ՝ ասէ ցնա. «Ո՞չ այնպէս ուխտեցեր՝ թէ ո՞ք երկուց որդուցն իմոց յառաջ առ իս հասցէ, զնա թագաւոր արարից»: Եւ Չրուանն առ ի չջրելոյ⁹ զուխտն՝ ասէ ցԱրհմնն. «Այ տու և չարագործ, տուեալ լիցի¹⁰ քեզ թագաւորութիւնն ինն հազար ամի, և զՈրմիզդ ի վերայ քո արքայ կացուցեալ¹¹. և յետ ինն հազար ամի Որմիզդ թագաւորեցէ, և զինչ կամիցի առնել՝ արասցէ»: Յայնժամ սկսան Որմիզդ և Արհմնն առնել արարածս. և ամենայն ինչ՝ զոր Որմիզդ առնէր՝ բարի էր և ուղիղ, և զոր ինչ Արհմնն գործէր՝ չար էր և թիւր:

(Եզնիկ Կողբացի, 2-րդ, Ա)

¹ մինչ չև բնաւ էր ինչ-քանի դեռ բնավ ոչինչ գոյություն չունէր
² Չրուան ոմն անուն էր-Չրվան անունով մեկը կար
³ յաշտ արար-գոհ արեց
⁴ ածել զմտաւ-մտածել

⁵ արարից-կանեն
⁶ իմանալով
⁷ էլ եկաց-եկավ-կանգնեց
⁸ ի տալ Չրուանայ-երբ Չրվանը տվեց
⁹ առ ի չջրելոյ-չործելու համար
¹⁰ տուեալ լիցի-թող տրվի
¹¹ կացուցեալ-նշանակած լինեմ

ԴԱՍ ՔՍԱՆՅՈՒԹԵՐՈՐԴ

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

§ 158. Գրաբարում թվականները երեք տեսակ են՝ քանակական, դասական և անձներական:

ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 159. Քանակական թվականներն են՝ մի, երկու, երեք, չորք, հինգ, վեց, եփն (եօթն), ութ, ինն, տասն, ապա 11-ից մինչև 16-ը մասնակի փոփոխություններով միավորները սկզբից բարդվում են *տասն* թվականի *տասան* ձևին՝ մետասան, երկոտասան, երեքտասան, չորքտասան, հնգետասան, վեշտասան, այնուհետև 17-ից մինչև 19-ը միավորը և տասնավորը միանում են *և շաղկապով*՝ երփնտասան, ութտասան (կամ ութուտասան), իննտասան, իսկ *քսանից* սկսած միավորները *և շաղկապով* հարադրվում են տասնավորներին վերջից՝ քսան և մի, քսան և երկու..., երեսուն և երեք..., քառասուն և ութ..., յիսուն և չորք..., վաթսուն և հինգ..., երփանասուն և ինն..., ութսուն և վեց..., իննասուն և երփ..., հարեր, հարեր և մի..., երկերիւր, երեքհարիւր, չորքհարիւր, հինգհարիւր, վեցհարիւր, երփհարիւր, ութհարիւր, իննհարիւր, հազար, բեր (բիւր) և այլն:

Ծանոթություն 1. Հարյուրավորներին, հազարավորներին և բիւր-ին սկզբից ավելացող թվականները կցվում կամ հարադրվում են առանց շաղկապի՝ հինգհարիւր կամ հինգ հարիւր, երկու հազար, երկու բիւր և այլն:

Ծանոթություն 2. Հարյուրավորներին և հազարավորներին բարդող միավորները միանում են *և շաղկապով*, իսկ միավորներից բարձրերը՝ թե՛ շաղկապով, թե՛ առանց շաղկապի. օրինակ՝ Երկերիւր ութսուն և երփն, և այլ և ս երփն հարեր և քառասուն այր (Եղիշէ, էջ 120): Հարք երեք հարեր և ութ տասն (Խոր., 2-րդ, Գ): Հազար և երեսուն և վեց (Եղիշէ, էջ 120): Յերկերիւր և ի հընգետասան բիւրոց ամաց (Թոռն., Ա, էջ 332): Չորք հազարք և հինգ հարեր չափովն (Եզեկ., ԽԸ, 33) և այլն:

§ 160. Քանակական թվականները հոլովվում են անվանական հոլովմամբ՝ ենթարկվելով տարբեր հոլովումների:

1. *Մի* թվականը հոլովվում է *n* հոլովիչով՝ միայն եզակի թվով, սեռականում ստանում է նաև *ոջ* վերջավորությունը, իսկ տրականում՝ *ում* հոլովակերտը՝ սեռ.՝ միոյ, միոջ, տր.՝ միում, բաց.՝ ի միոջէ, ի միոյ, գործ.՝ միով:

2. *Երկու, երեք, չորք* թվականները հոլովվում են միայն հոգնակի թվով, ըստ որում *երկու* թվականը հոլովվում է *ու*, իսկ մյուսները՝ *ի* հոլովիչով:

Ու.	երկու	երեք	չորք
-----	-------	------	------

Հ.	(զ)երկուս	(զ)երիս	(զ)չորս
Ս. Տ.	երկուց	երից	չորից
Բ.	յերկուց	յերից	ի չորից
Գ.	երկուք	երիք	չորիք

Ծանոթություն. *Երկու* թվականը ուղղական հոլովում խիստ հազվադեպ հանդիպում է *երկուք* ձևով. օրինակ՝ Լերինքն երկուք (Բուգ., 4-րդ, ԾԳ):

3. *Հինգ*-ից սկսած՝ մյուս բոլոր թվականները հոլովվում են ն՝ եզակի, և՛ հոգնակի թվով:

4. *Հինգ, վեց, ութ, ինն, մետասան, երկոտասան, երեքտասան, չորքտասան, հնգետասան, վեշտասան* թվականները և բոլոր տասնավորները, սկսած քսանից՝ *քսան, երեսուն, քառասուն, յիսուն, վաթսուն, երփանասուն, ութսուն, իննասուն*, հոլովվում են Ի պարզ հոլովմամբ: Թեք հոլովներում տասնավորների վերջնականակի *ու*-ն սղվում է՝ երեսնի, քառասնի և այլն:

	Եզակի			Հոգնակի		
Ու.	հինգ	ինն	քսան	հինգք	ինունք	քսանք
Հ.	(զ)հինգ	(զ)ինն	(զ)քսան	(զ)հինգս	(զ)ինունս	(զ)քսանս
Ս. Տ.	հնգի	ըննի	քսանի	հնգից	ըննից	քսանից
Բ.	ի հնգէ	յըննէ	ի քսանէ	ի հնգից	յըննից	ի քսանից
Գ.	հնգիւ	ըննիւ	քսանիւ	հնգիւք	ըննիւք	քսանիւք
				կամ		
				հնգօք		

Հոգնակի թվում *ինն* թվականը հոլովվում է նաև *ու* հոլովիչով՝ ինունք, ինունց, յինունց, իննուք (կամ՝ իննամբք):

5. *Երփն* (եօթն) թվականը հոլովվում է ներքին թեքման Ա հոլովմամբ՝ սեռ.-տր.՝ երփան, բաց.՝ յերփանէ, գործ.՝ երփամք, հոգն., ուղղ.՝ երփանք, սեռ.-տր.՝ երփանց, բաց.՝ յերփանց, գործ.՝ երփամբք:

6. *Տասն, երփն տասն, ութն տասն, իննն տասն* թվականները հոլովվում են ներքին թեքման Ի-Ա խառն հոլովմամբ՝ *տասն*. սեռ.-տր.՝ տասին. բաց.՝ ի տասնէ, գործ.՝ տասամք, հոգն. ուղղ.՝ տասունք, սեռ.-տր.՝ տասանց, բաց.՝ ի տասանց. գործ.՝ տասամբք: *Տասն* բաղադրիչ ունեցող նշված բարդ թվականները հոգնակի ուղղականում *ն*-ից առաջ ստանում են *ա* ձայնավոր՝ երփն տասանք, ութն տասանք, իննն տասանք:

7. Բոլոր հարյուրավորները հոլովվում են Ո պարզ հոլովմամբ՝ *հարեր*. սեռ.-տր.՝ հարիւրոյ, բաց.՝ ի հարիւրոյ, գործ.՝ հարիւրով, հոգն. ուղղ.՝ հարերք, սեռ.-տր.՝ հարիւրոց, բաց.՝ ի հարիւրոց, գործ.՝ հարիւրովք:

8. Հազար թվականը հոլովվում է արտաքին թեքման Ի-Ա խառն հոլովմամբ՝ սեռ.-տր.՝ հազարի, բաց.՝ ի հազարէ, գործ.՝ հազարաւ, հոգն., ուղղ.՝ հազարք, սեռ.-տր.՝ հազարաց, բաց.՝ ի հազարաց, գործ.՝ հազարաւք (օք):

9. Բեր (բիր) թվականը հոլովվում է ՈՒ պարզ հոլովմամբ. սեռ.-տր.՝ բիրու, բաց.՝ ի բիրէ, գործ.՝ բիրուո, հոգն. ուղղ.՝ բերք, սեռ.-տր.՝ բիրուց, բաց.՝ ի բիրուց, գործ.՝ բիրուք:

Բեր թվականը հանդիպում է նաև տարբեր հոլովիչներով հոլովված՝ բիրաւ կամ բիրեաւ, բիրօք, բիրոց, բիրով:

10. Հարադրական կազմություն ունեցող թվականների հոլովման ժամանակ սովորաբար հոլովվում է միայն վերջին բաղադրիչը:

	Եզակի	Տոգնակի
ՈՒ.	երեսուն և հինգ	երեսուն և հինգք
Հ.	(գ)երեսուն և հինգ	(գ)երեսուն և հինգս
Ս. Տ.	երեսուն և հնգի	երեսուն և հնգից
Բ.	յերեսուն և հնգէ	յերեսուն և հնգից
Գ.	երեսուն և հնգիւ	երեսուն և հնգիւք

ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 161. Դասական թվականները կազմվում են քանակական թվականներից *երորդ* կամ *յորդ* ածանցներով՝ երկրորդ, երրորդ, չորրորդ, տասներորդ, մետասաներորդ, հարիւրերորդ կամ հարիւրորդ, երկերիւրերորդ, հազարերորդ և այլն:

Մի քանակական թվականի համար իբրև դասական թվականի ձև գործածվում է *առաջին* բառը, որը հանդիպում է նաև *առաջնորդ*, *առաջներորդ* ձևերով:

Հարադրական կազմություն ունեցող թվականների դեպքում ածանցը դրվում է բոլոր բաղադրիչների վրա՝ քսաներորդ առաջին (կամ՝ քսաներորդ առաջնորդ, քսաներորդ առաջներորդ), քսաներորդ երկրորդ, յիսներորդ եւթներորդ, հազարերորդ քսաներորդ հինգերորդ և այլն:

§ 162. Դասական թվականները հոլովվում են անվանական հոլովմամբ՝ եզակի և հոգնակի թվով:

1. *Առաջին* թվականը հոլովվում է *n* հոլովիչով, եզակի տրականում գուգահեռաբար ստանում է *ու՛մ*, իսկ եզակի բացառականում՝ *է* հոլովակերտները՝ սեռ.՝ առաջնոյ, տր.՝ առաջնոյ, առաջնում, բաց.՝ յառաջնոյ, յառաջնմէ, գործ.՝ առաջնով, հոգն. ուղղ.՝ առաջինք, սեռ.-տր.՝ առաջնոց, բաց.՝ յառաջնոց, գործ.՝ առաջնովք:

2. Մյուս դասական թվականները հոլովվում են արտաքին թեքման Ի-Ա

խառն հոլովմամբ, այն տարբերությամբ միայն, որ եզակի տրականում գուգահեռաբար ստանում են նաև *ու՛մ* հոլովակերտը՝ *հինգերորդ*. սեռ.՝ հինգերորդի, տր.՝ հինգերորդի, հինգերորդում, բաց.՝ ի հինգերորդէ, գործ.՝ հինգերորդաւ, հոգն. ուղղ.՝ հինգերորդք, սեռ.-տր.՝ հինգերորդաց, բաց.՝ ի հինգերորդաց, գործ.՝ հինգերորդաւք (օք):

3. Հարադրական կազմություն ունեցող դասական թվականները սովորաբար հոլովվում են իրենց բոլոր բաղադրիչներով՝ հազարերորդ քսաներորդ վեցերորդ-հազարերորդի քսաներորդի վեցերորդի և այլն:

ԱՆՉՆԵՐԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 163. Անձներական թվականները կազմվում են քանակական թվականներից *եքին*, *եքեան* ածանցներով՝ երկոքին կամ երկոքեան, երեքին-երեքեան, հնգեքին-հնգեքեան, տասնեքին-տասնեքեան, չորեքտասանեքին-չորեքտասանեքեան և այլն:

Անձներական թվականները ցույց են տալիս այս կամ այն քանակով առարկաների միասին վերցված լինելը, օրինակ՝ վեցեքին կամ վեցեքեան=վեցն էլ, վեցն էլ միասին:

§ 164. Անձներական թվականները հոլովվում են անվանական հոլովմամբ, միայն հոգնակի թվով և *m* հոլովիչով:

Ու.	երկոքին,	երկոքեան
Հ.	գերկոսին,	գերկոսեան
Ս. Տ.	երկոցուն,	երկոցունց
Բ.	յերկոցունց	
Գ.	երկոքումքք	

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

§ 165. Քանակական, դասական և անձներական թվականները գործածվում են գոյական անունների հետ և՛ նախադաս, և՛ ետադաս:

ա) Ետադաս գործածվելիս թվականներն ընդհանրապես հոլովով ու թվով համաձայնում են գոյական անուններին, որոնք քանակական և անձներական թվականների հետ դրվում են միայն հոգնակի, իսկ դասականների հետ՝ միայն եզակի թվով. օրինակ՝ ամացն քառասնից (Գործ., Է, 30), ամսովք ութիք (Թռռն., Ա, էջ 355), նախարարքն երեքեան (Եղիշէ, էջ 160), սեանցն քսանեցունց (Ելք, ԼՁ, 24), յամսեանն մետասաներորդի (Ծննդ., Ը, 5), յամի քսաներորդի եւթներորդի (Գ Թագ., ԺՁ, 15):

Ուղղական և հայցական հոլովներում ետադաս քանակական թվականը մեծ մասամբ թվով չի համաձայնում գոյականին. օրինակ՝ հարք երեք հարիւր և ութն տասն (Խոր., 2-րդ, Գ), ատուրս քառասուն (Ղուկ., Գ, 2) և այլն:

բ) Նախադաս գործածվելիս քանակական և դասական թվականներն ընդհանրապես հոլովով ու թվով չեն համաձայնում գոյական անուններին, իսկ անձներական թվականները համաձայնում են, ըստ որում քանակական թվականների հետ գոյական անունները կարող են դրվել և՛ եզակի, և՛ հոգնակի, անձներականների հետ՝ միայն հոգնակի, իսկ դասականների հետ՝ միայն եզակի թվով. օրինակ՝ ինն հազար ամի (Եզնիկ, 2-րդ, Ա), ի տասն դահեկանէ (Ծննդ., ԻԳ, 22), քառասուն և ութ բեր սպառազինօք (Թռռն., Ա, էջ 361), ի հինգերորդ ամի (Կոր., Է), յիններորդ օրէն (Ղևտ., ԻԳ, 27), քսանեցունց սեանցն (Ելք, ԻԶ, 19), երթանեցունց գառանցն (Թիւք, ԻԹ, 5) և այլն:

Երբեմն նախադաս քանակական թվականները կարող են հոլովվել, ըստ որում միայն հոգնակի թվով՝ համաձայնելով հոգնակի գոյական անվան հետ. օրինակ՝ երկուսասանից առաքելոցն (Փարպ., 3-րդ, Գ), երթանց ատուրց (Եզնիկ., ԽԵ, 25) և այլն:

Առանձին դեպքերում դասական թվականները կարող են հոլովով համաձայնել գոյական անվանը՝ ի չորրորդում ատուրն (Եղիշէ, էջ 180), ի հինգերորդի ամի (Կոր., Զ) և այլն:

1. Մի թվականը, նախադաս թե ետադաս, հոլովով համաձայնում է գոյականին, որը հանդես է գալիս միայն եզակի թվով. օրինակ՝ ի միմում ատուր (Եզնիկ, 2-րդ, ԺԳ), ի միոջէ ի հօրէ (Եզնիկ, 1-ին, ԻԸ), միով ակամբ (Երգ., Գ, 9) և այլն:

Ծանոթություն. Ետադաս գործածվելիս մի թվականը ստանում է անորոշ դերանվան նշանակություն՝ այր մի=մի մարդ, ինչ-որ մարդ:

2. *Երկու, երեք, չորք* թվականները, նախադաս թե ետադաս, հոլովով համաձայնում են գոյականներին, որոնք դրվում են միայն հոգնակի թվով. օրինակ՝ յերկուց բնութեանց (Եզնիկ, 1-ին, ԻԵ), եղբարքք երիւք (Եղիշէ, էջ 191), ի չորից հիւքից (Եզնիկ, 1-ին, ԻԳ) և այլն:

Երբեմն նկատվում են անհամաձայնության դեպքեր՝ հատկապես գործիական հոլովում՝ երեք մանկամբքն (Եզնիկ, 2-րդ, ԻԵ), երկու քարընկեցօք (Փարպ., 3-րդ, ՀԶ), յերեք ժամուց (Ագ., ԺԷ, 181) և այլն:

Վարժություն 128. *Թարգմանել, առանձնացնել նախադաս և ետադաս գործածված թվականներն իրենց լրացյալների հետ միասին և բացատրել, թե հոլովով ու թվով ինչպես են համաձայնել միմյանց հետ:*

Ի միոջէ ի հօրէ երկու որդիք ծնան: Կապեցին զնա երիւք կարովք նորովք: Ի քարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք: Ի չորից հիւքից յօղեալ է: Որ հեռի էր յԵրուսաղեմէ հարեր և վաթսուն ասպարիսա: Եւ ի կա-

տարել ամացն քառասնից՝ երկեցաւ նմա յանապատի... հրեշտակ Տեառն: Եւ եղև յետ ատուրց քսան և հնգից մոգպետն ինքնին մոգօքն հանդերձ հասանէր մեծաւ զօրութեամբ: Արդ ի սկզբան երկուսասաներորդ ամի թագաւորութեան իւրոյ գունդ կազմէր անհամար բազմութեամբ: Եւ կոչեցին զղալիսն արքունի յամսեանն առաջնում, յատուրն երեքտասաներորդի: Եւ նստաւ տապանն յերթերորդում ամսեանն ի քսան և յեթն ամսոյն ի լերինս Արարատայ: Յամի քսաներորդի երթերորդի Ասայի արքայի Յուդայ, թագաւորեաց Չամբրի: Եւ ձուլեաց նմա չորս օղամանեակս ոսկիս ի չորեցունց կողմանց նորա: Լինէր խօսնակից ի մէջ թագաւորացն երկոցունց: Ընկէց ի ձեռաց իւրոց զտախտակսն երկուսին: Հանդերձ Արշակունի տիկնաւն, և մանկամբքն երկուքովք... հասանէր ի գաւառն Կարնոյ:

Վարժություն 129. *Թարգմանել գրաբար, ճիւղ, երկու թվականները գործածել նախադաս, իսկ մյուսները՝ ետադաս, համաձայնեցնելով ընդգծված լրացյալների հոլովով ու թվով:*

Բոլորին կապեցին մի շղթայով: Երկու վկաներով հաստատեցին այդ խոսքերը: Մի օրում անցան այդ ճանապարհը: Մեռնում է Մծբինում՝ թագավորելով քսանհինգ տարի: Երեք տարի մնացին օտար երկրում: Չորս ամսից հետո (յետ) դարձյալ սկսվեց պատերազմը: Տասնմեկ ամիս պաշարեցին բերդը: Ութը տարով մեծ էր նրանից: Վաճառեցին իրենց ուղտերը երեք հարյուր հիսուն դահեկանի: Տասներկու զինվորներից չորսին գլխատեցին: Հինգ նախարարներով հանդերձ ներկայացավ (հանդիման եղև) թագավորին:

Վարժություն 130. *Թարգմանել գրաբար, առաջին երեք նախադասությունների դասական թվականները գործածել նախադաս՝ եզակի ուղիղ ձևով, իսկ մյուսներինը՝ ետադաս, համաձայնեցնելով ընդգծված լրացյալներին հոլովով ու թվով:*

Վռամշապուհ թագավորի հինգերորդ տարում հորինվեցին հայոց նշանագրերը: Ութերորդ ամսում պատգամավորներ է ուղարկում նրա մոտ: Առաջին սրահի լայնությունը հիսուն կանգուն էր: Յոթերորդ օրը (օրում) նրան իր մոտ կանչեց: Հենց առաջին օրվանից հավատարմության երդում էր պահանջում նրանից: Տասնմեկերորդ ամսից հետո թշնամու գորքը պարտության մատնվեց: Երկրորդ դահլիճի սյուների խոյակները պատեց ոսկով: Այդ քաղաքը շինեց իր թագավորության քսաներեքերորդ տարում: Յոթերորդ ամսվա տասնհինգերորդ օրում տոն էր: Երկրորդ հրովարտակով նախարարներին կանչում է Տիգրան:

Վարժություն 131. *Թարգմանել, փակագծերի մեջ առնված անձներական թվականները դնել իրենց ընդգծված լրացյալների հոլովով:*

Եւ թշնամութիւն յաիտենական ի մէջ (երկոքեան) *ազգաց* քաջաց հաստատել: Եւ նստաւ հազարապետն՝ զի լուիցէ *կողմանցն* (երկոքեան): Եւ ինքն էր կաղ (երկոքեան) *նտից* իւրոց: Այնպէս կենդանւոյն մորթեցին *գտորքսն* (երեքին): (Երկոքեան) *կողմանց* բազում վիրաւորք յերկիր անկեալ դիաթաւալ խաղային: Այլ սրբոյն Պաւղոսի (չորեքտասանեքեան) *թղթովք* պատմէ զիր առաքելակիցս և նիզակակիցս:

Վարժութիւն 132. *Թարգմանել գրաբար, թվական անունների փոխարենն դնել համապատասխան անձներական թվականներ՝ նախադաս կամ ետադաս, հոլովով ու թվով համաձայնեցնելով ընդգծված լրացյալներին:*

Չորս *կողմից* քաղաքը պատեց պարսպով: Յոթ *երեցներին* էլ մորթեց մի գբում: Այդ մեծ պատերազմում երկու *կողմերն* էլ մնացին անպարտելի: Տասներկու *որդիներով* և *թռններով* գալիս հասնում է այդ երկիրը: Ութ *եղբայրներին* էլ պատվիրեց գգուշանալ նրանցից: Երկու *գետերից* էլ ջուր էին տանում: Երեք *երկրների* բոլոր նախարարներին իր մոտ կանչեց: Քսան սպառազինված (վառեալ) *մարդկանցով* հարձակվեց թշնամու բանակի վրա:

ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ

(Հատուած)

Արդ՝ մեր թողեալ գնոսա, հարցցուք գտոսա. Ջրուանն, զոր յառաջ քան զամենայն ինչ ասեն, կատարեալ՝ ոք էր, թէ անկատար: Եթէ ասիցեն՝ եթէ կատարեալ էր, լուիցեն¹՝ եթէ կատարեալն յումմէ՞ կարօտանայր խնդրել որդի, որ գայցէ և զերկինս և զերկիր առնիցէ. զի եթէ կատարեալ էր, ինքն իսկ կարող էր առնել զերկինս և զերկիր: Ապա եթէ անկատար էր, յայտ է, թէ էր ոմն ի վեր քան զնա², որ զնորա թերակատարութիւնն լնուլ կարէր: Եւ եթէ էր ոք ի վեր քան զնա, մմա³ պարտ էր առնել զերկինս և զերկիր և զամենայն ոք⁴ ի նոսա՝ առ ի ցուցանելոյ՝ զիր բարերարութիւնն և զօրութիւն. և ոչ Ջրուանայ որդի շնորհել, որ զերկինս և զերկիր և զամենայն ոք⁴ ի նոսա՝ առնիցէ:

Այլ, ասեն, փառաց առնէր զյաշտն:

Հարցցուք. փառքն յումեքէ՞ յաջողեալ էին մմա, թէ վասն զի մշտնջենաւոր էր՝ փառաւոր էր: Եթէ յումեքէ պարզևեալ էին մմա փառքն, հարկ է կարծել՝ թէ էր ոմն ի վեր քան զնա զօրագոյն և փառաւորագոյն, ուստի ի նա փառքն հասին: Ապա եթէ չէր ոք ի վեր քան զնա, ի գուր էր զյաշտն հազարամեան առնել. զի փառքն ոչ եթէ անձնաւոր ինչ են, այլ ի յաջողութենէ ուրուք անուանին

փառք, որպէս ի չաջողութենէ ուրուք անուանի թշուառութիւն. և երկոքին ի դիպաց արգասիք են, և ոչ անձանց հաստատութիւնք:

Եւ այլ և ս. զի եթէ արեգակն և լուսին չն և ս էին լեալ, որով ժամքն և ատուրք և ամիսք և տարիք կարգին, հազար ամն ուստի՞՞ երևէր. զի չէին⁶ ի միջի լուսաւորքն, որք զթիւ ատուրք և ամսոց և տարեաց կարգէին, այլ յայտ է՝ թէ անմըտութեամբ լի են բաջադանքն:

Դարձեալ թէ⁷ երկինք և երկիր և որ ի նոսայն՝ չէին⁶, ո՞ր առնէր զյաշտն կամ ի՞ր: Յորժամ երկիր չէր և ոչ տունկք ինչ որ ի մմանէ, զբարսմունսն ուստի՞՞ գտանէր ունել ի ձեռին. կամ բնաւ զի՞նչ իսկ յազէր, զի անասունք չն և ս էին արարեալ: Եւ որ քան զամենայն անմտագոյն է, զհազար ամ, ասեն, յաշտ արար. և յետ հազար ամին յերկուացաւ, ասէ՝ թէ լինիցի՞ ինձ որդի Որմիզդ, և եթէ չլինիցի, և ի գուր ինչ վաստակիցիմ: Եւ այնու ցուցանէ՞ թէ տկար էր Ջրուանն և կարօտ⁸ և առանց գիտութեան⁹, և պատճառք¹⁰ չարեացն նոյն է, և ոչ Արիմն: Չի եթէ նորա չէր յերկուացեալ¹¹, որպէս ասենն, Արիմնն ոչ լինէր¹²՝ զոր չարեացն արարիչ համբաւեն. այլ ինքն երկմտեաց, որ անհաւատն է և լի անկարգութեամբ...:

(Եզնիկ Կողբացի, 2-րդ, Գ)

¹ լուիցեն-կլսեն, թող լսեն
² էր ոմն ի վեր քան զնա-նրանից վեր մեկը կար
³ ենթական դրված է տրական հոլովով պարտ էր միադիմի բայի մոտ՝ նա պիտի
⁴ ստորոգյալը (են) զեղծված է
⁵ առ նախդիրը բացառականի հետ նպատակի իմաստով՝ ցույց տալու համար

⁶ այստեղ՝ չկային իմաստով
⁷ գործածված է եթե իմաստով
⁸ այստեղ՝ կարիք ունեցող, կարիքավոր
⁹ առանց գիտութեան-ուզետ, անգետ
¹⁰ պետք է թարգմանել եզակի իմաստով
¹¹ չէր յերկուացեալ-երկմտած չլինէր, չկասկածէր
¹² ոչ լինէր. այստեղ՝ չէր լինի

ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐ

§ 166. Գրաբարի պատճառական բայերը կազմվում են *ուցան* (< ոյց+ան) ածանցով, որն ավելանում է անցյալ կատարյալի հիմքին, որից հետո դրվում է *ել* դերբայական մասնիկը: Այսպիսով, տարբեր լծորդության բայեր պատճառական դառնալիս վերածվում են Ե լծորդության բայերի: Պատճառական բայերը հիմնականում կազմվում են չեզոք սեռի բայերից. օրինակ՝ վազել, անց. կատ. հիմք՝ վազեաց-վազեցուցանել (=վազեցնել), յիշել-յիշեաց-յիշեցուցանել (=հիշեցնել), անցանել-անց-անցուցանել (=անցկացնել), զգալ-զգաց-զգացուցանել (-զգացնել), զարմանալ-զարմաց-զարմացուցանել (=զարմացնել), բազմիմ-բազմեաց-բազմեցուցանել (= բազմեցնել), ուսանիմ-ուս-ուսուցանել (=սովորեցնել), թռչիմ-թռ-թռուցանել (=թռցնել), փախչիմ-փախ-փախուցանել (=փախցնել), ջեռնուլ-ջեռ-ջեռուցանել (=տաքացնել), զգենուլ-զգեց-զգեցուցանել (=հազցնել), զարթնուլ-զարթ-զարթուցանել (=զարթեցնել) և այլն:

Մի քանի բայերի պատճառականի կազմության ժամանակ *ուցան* ածանցի *ց*-ն դառնում է *ս* կամ *զ*՝ կորնչիմ-կորուսանել, ելանել-ելուզանել (=դուրս հանել, դուրս բերել), ընկլնուլ-ընկլուզանել (= կուլ տալ, ընկղմել), փլչիմ-փլուզանել/փլուցանել (=փլցնել):

§ 167. Պատճառական բայերը խոնարհվում են Ե լծորդության ածանցավոր բայերի նման, ըստ որում ներկայի հիմքից կազմվող ժամանակներում *ուցան* ածանցը պահպանվում է, իսկ անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում այդ ածանցի *ան* բաղադրիչն ընկնում է: Անցյալ կատարյալ ժամանակի եզակի թվի 3-րդ դեմքում *ուցան* ածանցի *ուց* բաղադրիչը շեշտված դառնում է *ոյց*՝ թաքուցանել-թաքոյց, մատուցանել-մատոյց, իջուցանել-իջոյց: Բուն հրամայականի եզակի թվի 2-րդ դեմքում սուր շեշտի հետևանքով *յ* և *ց* հնչյուններն ընկնում են՝ բազմեցուցանել-բազմեցոյց-բազմեցո՛, լցուցանել-լցոյց-լցո՛, ուսուցանել-ուսոյց-ուսո՛:

Պատճառական բայերն ընդհանրապես խոնարհվում են ներգործածն: Խոնարհման օրինակ. *ուսուցանել*, ներկայի հիմք՝ *ուսուցան*, անցյալ կատարյալի հիմք՝ *ուսոյց*:

Ներկա

Անցյալ անկատար

	Եզակի	Նոգնակի	Եզակի	Նոգնակի
1-ին դ.	ուսուցանեմ	ուսուցանեմք	ուսուցանեի	ուսուցանեաք
2-րդ -	ուսուցանես	ուսուցանեք	ուսուցանեիր	ուսուցանեիք
3-րդ -	ուսուցանի	ուսուցանեն	ուսուցաներ	ուսուցանեին

Անցյալ կատարյալ

	Եզակի	Նոգնակի
1-ին դ.	ուսուցի	ուսուցաք
2-րդ -	ուսուցեր	ուսուցեք(իք)
3-րդ -	ուսոյց	ուսուցին

ՍՏՈՐԱԳԱՄԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Առաջին ապառնի

Երկրորդ ապառնի

	Եզակի	Նոգնակի	Եզակի	Նոգնակի
1-ին դ.	ուսուցանիցեմ	ուսուցանիցեմք	ուսուցից	ուսուցուք
2-րդ -	ուսուցանիցես	ուսուցանիցեք	ուսուցես	ուսուսջիք
3-րդ -	ուսուցանիցի	ուսուցանիցեն	ուսուցի	ուսուցեն

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Բուն հրամայական

Հորդորական հրամայական

	Եզակի	Նոգնակի	Եզակի	Նոգնակի
2-րդ դ.	ուսո՛	ուսուցե՛ք	ուսուսջի՛ր	ուսուսջի՛ք

Արգելական հրամայական

	Եզակի	Նոգնակի
2-րդ դ.	մի՛ ուսուցաներ	մի՛ ուսուցանեք

Ապառնի դերբայ՝ ուսուցանելոց, անցյալ դերբայ՝ ուսուցեալ, ենթակայա-կան դերբայ՝ ուսուցանող կամ ուսուցող:

§ 168. Գրաբարում պատճառականի իմաստն արտահայտվում է նաև անորոշ դերբայի հետ տալ բայի հարադրությամբ: Խոնարհման ժամանակ անորոշ դերբայը մնում է անփոփոխ, խոնարհվում է միայն տալ բայը (տալ բայի խոնարհումը տե՛ս § 170): օրինակ՝ Եւ նա ետ բերել ... աղ (Բուզ., 4-րդ, ԾԳ)=Եվ նա բերել տվեց ... աղ: Ետ տանել նմա թուղթ աղաչանաց (Խոր., 2-րդ, Լ): Շատ տայր ընպել (Բուզ., 5-րդ, ԼԵ):

Վարժություն 133. *Կազմել հետևյալ բայերի պատճառականը ռպան անցով.*

ա) գնալ, հեռանալ, զարմանալ, յագենալ, մեղմանալ. բ) հնչել, հասանել, զարկանել, բնակել, փայլել. գ) յոզնիմ, նստիմ, թռչիմ, սնանիմ, շիջանիմ, դ) լնուլ, հեղձնուլ, զգենուլ, զարթնուլ, ջեռնուլ:

Վարժություն 134. *Խոնարհել դարձուցանել, հասուցանել, լուսուցանել, սնուցանել, լցուցանել պատճառական բայերը:*

Վարժություն 135. *Թարգմանել, որոշել պատճառական բայերի ժամանակը, դեմքն ու թիվը:*

Բայց փոխանակ իմ թագաուրեցո՛ր զԱրշակ գորդի իմ: Ջգոյշ լինիցիք, գուցե ոք զձեզ մոլորեցուցանիցե: Թեթևացուցին զնաև՝ թափեալ զցորեանն ի ծովն: Մի՛ թաքուցաներ յինն զբան զոր ես հարցից քեզ: Եւ զգեցուցեն զպատմուճանն առնն այնմիկ զոր արքայն սիրէ, և հեծուցեն զնա յերիվարն արքունի: Դու բխեցուցեր զաղբերս և զվտակս, դու ցամաքեցուցեր զգետս սաստիկս: Արդ եթէ կամիս ուսանել զճշմարիտն, քաղցրացո՛ր զդառնութիւն սրբտիդ: Մեծագոչ բարբառով զլերինս հնչեցուցանէին: Եւ գտեալ յԱսիայ պղնձաճոյլ ոսկեգօծ պատկերս զԱրտեմիդեայ և զՀերակլեայ և զԱպողոնի, տայ բերել յաշխարհս մեր: Եւ հեծուցէք զՍողոմոն զորդի իմ ի ջորուջն իմում, և իջուցէք զնա ի Գեհոն: Չեղբայրն իւր ետ կորուսանել:

Վարժություն 136. *Թարգմանել գրաբար:*

Նստեցրեց նրան իր կառքում: Ամենքից վերև (ի վերոյ քան զամենեսեան) բազմեցրին Արշակ թագավորին: Բաղցով և ծարավով տառապեցնում էին զերված զինվորներին: Իջեցրին նրան կախաղանից: Միջնաբերդն ամրացնում էր բարձր պարիսպներով: Շատերին բնակեցրին հեռավոր տեղերում:

Մի՛ թաքցրեք նրանց ձեր տներում: Արևը տաքացնում է երկիրը: Շտապ հասցրո՛ւ այս նամակը թագավորին: Արթնացրե՛ք նրանց քնից: Ինչո՞ւ վշտացրիր քո ընկերոջը: Հայոց երկրից հող և ջուր է բերել տալիս:

տաքացնել-ջեռուցանել

ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ
(Հատուած)

Դարձեալ ասեն. «Ջբարսմունսն զոր ի ձեռին ունէր, ցորդին իւր ցՈրմիզդ ետ, և ասէ. «Յայժմ ես վասն քոյ յաշտ առնէի, յայսմ հետէ դու վասն իմ առնիցես»:

Արդ եթէ նա վասն նորա յաշտ առնէր, զի որդի լինիցի նմա¹, իսկ Որմիզդ վասն նորա յո՞ր սակս² առնէր, միթէ կասկած ինչ ուստեք էր նմա, և այնր առնագաւ պատուիրէր նմա վասն իւր յաշտ առնել, միթէ յորմէ գորդի՞ն խնդրեաց, թէ գուցէ ընդ որդոյն տալոյ՝ զնա բաժ առնուցո՞ւ: Եթէ այն ինչ ի մտի էր նորա, բարսմունքն ինչ ոչ կարէին օգնել. և ի տալ զբարսմունսն չասաց սա՛ թէ «Դու ինձ յաշտ առնիցես», զի ցուցցէ թէ էր ոմն՝ որում նա վասն որդոյն յաշտ առնէր. և որդոյն պատուիրեաց վասն իւր նմին յաշտ առնել:

Եւ եթէ էր ոք ի վեր քան զնա և քան զորդին, որում զյաշտն առնէին, զնա պարտ էր իմանալ պատճառ իւրեանց և արարիչ ամենեցուն, և ոչ զՋրուան պատճառ Որմիզդի և Արիմենի. և զնոսա արարիչ չարեաց և բարեաց: Քան Ջրուանայ որդի արարիչ տայր, որ ի վերն քան զՋրուանն էր, ինքն իսկ իւրովի չկարէ՞ր զերկինս և զերկիր և որ ինչ ի նոսա՛ առնել, որպէս յառաջագոյնն ասացաւ, և զիւր զօրութիւնն և զբարերարութիւնն ցուցանել: Կամ թէ յորդոյն իւրմէ Արիմենայ կասկած ինչ էր նմա⁴, և վասն այնորիկ զբարսմունսն յՈրմիզդ⁵ տայր, զի նոքօք յաշտ արարեալ վերագունին՝ անկասկած լինիցի, ապաքէն պարտ էր ումեք⁶ ի միջի լինել, որում զյաշտն առնէր: Եւ եթէ էր ոք ի միջի՝ որում օրէն էր զյաշտն առնել, ապա Ջրուանն չէր մշտնջենատր, այլ յումեքէ եղեալ: Եւ պարտ է խնդրել յումէ՛ նայն⁷ եղև. և ո՛վ էր՝ ում ինքն զյաշտն առնէր, և ով այն՝ որում որդոյն հրամայեաց վասն իւր յաշտ առնել: Չի ոչ է մարթ ումեք սկիզբն առնուլ լինելոյ⁸, եթէ ոչ յայլմէ առնուցու զլինելն. և աստուած միայն կարող իցէ առնել յոչընչէ ինչ որպէս և կամի: Եւ արդ ո՞վ իցէ որ զՋրուանն արար, եթէ ոչ աստուած, որում և զյաշտն առնէր. որ և որդի այնպիսի ետ նմա, զի զերկինս և զերկիր և որ ի նոսա՛ առնիցէ: Եւ այն են զարմանք⁹ զի ինքն ոչ արար, և որդոյն Ջրուանայ կարող է տալ զառնելն:

Այլ չէր¹⁰ ոք ի միջի, ասեն, որում Ջրուան զյաշտն առնէր. եթէ այնպէս իցէ,

և ոչ Ջրուանն իսկ էր¹⁰ . և մեծի ծաղու արժանի է, զի չէրն չէին վասն չէին յաշտ առնէր¹¹ :

(Եզնիկ Կողբացի, 2-րդ, Ե)

¹ այստեղ՝ իրեն	այիտի լիներ մեկը
² յոր սակս-ինչ նպատակով՝ պատճառով	⁷ մ-ն հող է, իսկ յ-ն ավելացել է
³ միթե յորմէ գորդի՞ն խնորեաց, թէ գուցե ընդ որդւոյն տալոյ՝ զնա բաժ առնուցու-մի՞թե նրանից (էր կասկածում), որից խնորեց որդին՝ (մտածելով), թե որդին տալու դիմաց գուցե հատուցում պահանջի	⁸ զի ոչ է մարթ ումեք սկիզբն առնուլ լինելոյ-որովհետև հնարավոր չէ, որ մեկը լինելու սկիզբ առնի
⁴ էր նմա-նա ուներ	⁹ այն են զարմանք-զարմանալին այն է
⁵ սովորական է՝ ցՈրմիզդ	¹⁰ այստեղ՝ չկար
⁶ ենթական պարտ էր միադիմի բայի մոտ տրական հոլովով՝ մեջտեղը	¹¹ չէրն չէին վասն չէին յաշտ առնէր-չեղածը (նա, որ չկար) չեղածին չեղածի համար գոհ էր մատուցում

ԳԱՍ ԶՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

§ 169. Գրաբարում կան մի շարք բայեր, որոնք անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում ունենում են տարբեր կարգի շեղումներ, իսկ ներկայի հիքից կազմվող ժամանակներում չեն շեղվում խոնարհման ընդհանուր կանոններից: Այդպիսի բայերը կոչվում են անկանոն բայեր: Անկանոն բայերի մի մասը, որոնք խոնարհման մեջ հանդես են գալիս մասնակի շեղումներով, նըշվել են անցյալ կատարյալի հիմքի և նրա ժամանակների կազմության համապատասխան բաժիններում (տե՛ս § § 40, 42, 43): Ստորև տրվում են մնացած անկանոն բայերը, որոնք ըստ իրենց շեղումների կամ անկանոնությունների բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբի բայերն անցյալ կատարյալի հիմքից կազմվող ժամանակներում խոնարհվում են մասնակիորեն հնչյունափոխված արմատներով, իսկ երկրորդ խմբի բայերն ընդհանրապես խոնարհվում են այլ հոմանիշ արմատներով: Վերջին խմբի բայերը նաև պակասավոր բայեր են:

§ 170. Առաջին խմբի բայերն են՝ *առնել, դնել, երդնուլ, լսել, հարկանել, ճանաչել, յառնել, տալ, տանել (իմ)*, որոնք անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում են հետևյալ կերպ.

1. *Առնել* (=անել, կատարել, ստեղծել, դարձնել). անցյալ կատարյալի հիմքն է *արար*. անց. կատ.՝ արարի, արարեր, արար, արարաք, արարեք(իք),

արարին, 2-րդ աս.՝ արարից, արասցես, արասցե, արասցուք, արասջիք, արասցեն, բուն հրամ.՝ արա՛, արարե՛ք, հորդ. հրամ.՝ արասջի՛ր, արասջի՛ք, անց. դերբայ՝ արարեալ, ենթ. դերբայ՝ արարող: Խոնարհվում է նաև կրավորաձև՝ անց. կատ.՝ արարայ, 2-րդ աս.՝ արարայց և այլն:

2. *Դնել*, անց. կատ.՝ եղի, եղիր (եղեր), եղ, եղաք, եղիք, եղին, 2-րդ աս.՝ ե-դից, դիցես, դիցե, դիցուք, դիջիք, դիցեն, բուն հրամ.՝ դի՛ր, դի՛ք, հորդ. հրամ.՝ դիջի՛ր, դիջի՛ք, անց. դերբայ՝ եղեալ: Խոնարհվում է նաև կրավորաձև՝ անց. կատ.՝ եղայ, եղար, եղաւ, եղաք, եղայք, եղան, 2-րդ աս.՝ եղայց, դիցիս, դիցի, դիցուք, դիջիք, դիցին:

3. *Երդնուլ*. անցյալ կատարյալի հիմքն է *երդ*. անցյալ կատարյալում, բուն հրամայականում և 2-րդ ասպանում եզակի 1-ին դեմքում խոնարհվում է կրավորաձև, իսկ 2-րդ ասպանում մյուս ձևերում՝ խառն խոնարհմամբ. անց. կատ.՝ երդուայ, երդուար, երդուաւ, երդուաք, երդուայք, երդուան, 2-րդ աս.՝ երդուայց, երդուիցես, երդուիցե, երդուիցուք, երդուիջիք, երդուիցեն, բուն հրամ.՝ երդուի՛ր, երդուարո՛ւք, հորդ. հրամ.՝ երդուիջի՛ր, երդուիջի՛ք, անց. դերբայ՝ երդուեալ:

4. *Լսել*. անցյալ կատարյալի հիմքն է *լու*. անցյալ կատարյալում և 2-րդ ասպանում եզակի 1-ին դեմքում խոնարհվում է կրավորաձև, իսկ 2-րդ ասպանում մյուս ձևերում՝ խառն խոնարհմամբ. անց. կատ.՝ լուայ, լուար, լուաւ, լուաք, լուայք, լուան, 2-րդ աս.՝ լուայց, լուիցես, լուիցե, լուիցուք, լուիջիք, լուիցեն, բուն հրամ.՝ լու՛ր, լուա՛յք կամ լուարո՛ւք, հորդ. հրամ.՝ լուիջի՛ր, լուիջի՛ք, անց. դերբայ՝ լուեալ, ենթ. դերբայ՝ լսող:

5. *Հարկանել*. անցյալ կատարյալի հիմքն է *հար*, անց. կատ.՝ հարի, հարեր, հար կամ եհար, հարաք, հարեք(իք), հարին. 2-րդ աս.՝ հարից, հարցես, հարցե, հարցուք, հարջիք, հարցեն, բուն հրամ.՝ հա՛ր, հարե՛ք, անց. դերբայ՝ հարեալ: Խոնարհվում է նաև կրավորաձև. անց կատ.՝ հարայ, 2-րդ աս.՝ հարայց և այլն:

6. *Ճանաչել*. անցյալ կատարյալի հիմքն է *ժան*. խոնարհվում է խառն խոնարհմամբ. անց. կատ.՝ ծանեայ, ծանեար, ծանեաւ, ծանեաք, ծանեայք, ծանեան, 2-րդ աս.՝ ծանեայց, ծանիցես, ծանիցե, ծանիցուք, ծանիջիք, ծանիցեն, բուն հրամ.՝ ծանի՛ր, ծանեա՛յք կամ ծաներո՛ւք. հորդ. հրամ.՝ ծանիջի՛ր, ծանիջի՛ք, անց. դերբայ՝ ծանուցեալ, ենթ. դերբայ՝ ճանաչող:

7. *Յարնել* (=առողջանալ, վեր կենալ). անցյալ կատարյալի հիմքն է *յար*. խոնարհվում է խառն խոնարհմամբ՝ անց. կատ.՝ յարեայ, յարեար, յարեաւ, յարեաք, յարեայք, յարեան, 2-րդ աս.՝ յարեայց, յարիցես, յարիցե, յարիցուք, յարիջիք, յարիցեն, բուն հրամ.՝ արի՛, արի՛ք. հորդ. հրամ.՝ յարիջի՛ր, յարիջի՛ք, անց. դերբայ՝ յարուցեալ:

8. *Տալ*. անց. կատ.՝ տաու, տաուր, տա, տաաք, տաուք, տաուն, 2-րդ աս.՝ տաց, տացես, տացե, տացուք, տաջիք, տացեն, բուն հրամ.՝ տո՛ւր, տո՛ւք, հորդ.

հրամ.՝ տաջի՛ր, տաջի՛ք, անց. դերբայ՝ տուեալ, ենթ. դերբայ՝ տուող: Խոնարհվում է նաև կրավորածն՝ անց. կատ.՝ տուայ, տուար, տուաւ, տուաք, տուայք, տուան, 2-րդ ապ.՝ տուայց, տացիս, տացի, տացուք, տաջիք, տացին:

9. *Տանել(իմ)*. անցյալ կատարյալի հիմքն է *տար*. անց. կատ.՝ տարայ, տարար, տարաւ, տարաք, տարայք, տարան, 2-րդ ապ.՝ տարայց, տարցիս (տարցես), տարցի (տարցէ), տարցուք, տարջիք, տարցին (տարցեն), բուն հրամ.՝ տա՛ր, տարա՛յք, հորդ. հրամ.՝ տարջի՛ր, տարջի՛ք, անց. դերբայ՝ տարեալ, ենթ. դերբայ՝ տանող:

§ 171. Երկրորդ խմբի բայերն են՝ *գալ, երթալ, ըմպել, լինել(իմ), ունել(իմ), ուտել*, որոնք անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում են հետևյալ կերպ.

1. *Գալ*. անցյալ կատարյալի հիմքն է *ել*. խոնարհվում է ներգործածն, իսկ բուն հրամայականի հոգնակի թվի 2-րդ դեմքում՝ կրավորածն: Երկրորդ ապառնիում, սկսած եզակի թվի 2-րդ դեմքից, վերջավորություններից առաջ ավելանում է *ես*: Անց. կատ.՝ եկի, եկիր, եկն, եկաք, եկիք, եկին, 2-րդ ապ.՝ եկից, եկեսցես, եկեսցէ, եկեսցուք, եկեսջիք, եկեսցեն, բուն հրամ.՝ եկ, եկա՛յք, հորդ. հրամ.՝ եկեսջի՛ր, եկեսջի՛ք, անց. դերբայ՝ եկեալ, ենթ. դերբայ՝ եկող:

2. *Երթալ*. անցյալ կատարյալում խոնարհվում է *չոզ*, իսկ մյուս ժամանակներում՝ *երթ* արմատներով: Անցյալ կատարյալում և 2-րդ ապառնու եզակի 1-ին դեմքում խոնարհվում է կրավորածն, իսկ 2-րդ ապառնու մյուս ձևերում՝ խառն խոնարհմամբ. անց. կատ.՝ չոզայ, չոզար, չոզաւ, չոզաք, չոզայք, չոզան, 2-րդ ապ.՝ երթայց, երթիցես, երթիցէ, երթիցուք, երթիջիք, երթիցեն, բուն հրամ.՝ ե՛րթ, երթա՛յք, հորդ. հրամ.՝ երթիջի՛ր, երթիջի՛ք, անց. դերբայ՝ երթեալ:

3. *Ըմպել*. խոնարհվում է *արբենալ* բայի *արբ* արմատով՝ անց. կատ.՝ արբի, արբեր, արբ կամ էարբ, արբաք, արբէք(իք), արբին, 2-րդ ապ., արբից, արբցես, արբցէ, արբցուք, արբջիք, արբցեն, բուն հրամ.՝ ա՛րբ, արբէ՛ք, հորդ. հրամ.՝ արբջի՛ր, արբջի՛ք, անց. դերբայ՝ արբեալ: Խոնարհվում է նաև կրավորածն՝ անց. կատ.՝ արբայ, 2-րդ ապ.՝ արբայց և այլն:

4. *Լինել(իմ)*. անցյալ կատարյալում խոնարհվում է *եղանիմ* բայի *եղ* արմատով, իսկ երկրորդ ապառնիում՝ գուգահեռաբար և՛ *եղ*, և՛ *լի* արմատներով: Մնացած ձևերում խոնարհվում է միայն *լի* արմատով: Անց. կատ.՝ եղէ, եղեր, եղև, եղաք կամ եղեաք, եղէք, եղեն, 2-րդ ապ.՝ եղէց, եղիցիս կամ եղիցես, եղիցի, եղիցուք, եղիջիք, եղիցին, կամ լիցիմ, լիցիս, լիցի, լիցուք, լիջիք, լիցին, բուն հրամ.՝ լե՛ր, լերո՛ւք, հորդ. հրամ.՝ լիջի՛ր, լիջի՛ք, անց. դերբայ՝ լեալ:

5. *Ունել*, իմ (=բռնել, համարել և այլն), խոնարհվում է *կալուլ* կամ *կալնուլ* բայի *կալ* արմատով. անց. կատ.՝ կալայ, կալար, կալաւ, կալաք, կալայք, կալան, 2-րդ ապ.՝ կալայց, կալցիս, կալցի, կալցուք, կալջիք, կալցին, բուն հրամ.՝ կա՛լ կամ կա՛, կալա՛յք կամ կալարո՛ւք, հորդ. հրամ.՝ կալջի՛ր, կալջի՛ք, անց. դերբայ՝ կալեալ:

6. *Ուտել*. անցյալ կատարյալի հիմքն է *կեր*. անցյալ կատարյալում և 2-րդ ապառնու եզակի 1-ին դեմքում խոնարհվում է կրավորածն, իսկ 2-րդ ապառնու մյուս ձևերում՝ խառն խոնարհմամբ. անց. կատ.՝ կերայ, կերար, կերաւ կամ եկեր, կերաք, կերայք, կերան, 2-րդ ապ.՝ կերայց, կերիցես, կերիցէ, կերիցուք, կերիջիք, կերիցեն, բուն հրամ.՝ կե՛ր, կերա՛յք, հորդ. հրամ.՝ կերիջի՛ր, կերիջի՛ք, անց. դերբայ՝ կերեալ, ենթ. դերբայ՝ կերող:

Վարժություն 137. *Թարգմանել, որոշել անկանոն բայերի ժամանակը, դեմքն ու թիվը:*

Ա. Յարեաւ Դաւիթ և փախեաւ յաւուր յայնմիկ յերեսաց Սաւուդայ: Բայց ծանի՛ր զանիրաւութիւնս քո: Մի՛ տացուք զդատերս մեր ուստերաց ժողովրդոց օտարաց: Արացուք մնա վերնատուն մի փոքրիկ, և դիցուք ի մնա մահիճս և սեղան և աթոռ և աշտանակ: Գովեսցին ամենեքեան՝ որ երդնուն նովաւ: Ծանեաւ Հայկ զխումբ վառելոյ ջոկատին: Լուաւ զայս ամենայն թագաւորն ի բերանոյ մեծ հազարապետին: Չհազար ամ յաշտ արար՝ զի թերևս ուրդի մի լինցի մնա: Եւ դու տուր ինձ պատասխանի իբրև ընկերի: Եւ տարցես նախ յայն տեղ՝ ուր բնակ իսկ իցէ հողն: Չթիկունս իմ հարին մեղաւորք:

Բ. Ե՛րթ ի գեղ քո և լիջի՛ր դու անդ երէց՝ ուստի ես: Արբջիք ջուր ի ջրհորոց ձերոց: Ես եղէց մնա ի հայր, և նա եղիցի ինձ յորդի: Ոչ կերայց հաց և ոչ արբից ջուր ի տեղուջս յայսմիկ: Չոզաւ յանդիման եղև թագաւորին Պարսից Շապուհ: Եւ արք պարսիկք... որք էին ի քաղաքի կայսեր, կալաւ և ետ ի ձեռս նորա: Դի՛ր զայդ առաջի քո և կե՛ր: Քանզի իբրև եկին հասին հրամանք իրովարտակացն ի մեծ թագաւորէն Յունաց առ Տրդատ արքայն Հայոց Մեծաց՝ ոչ սակաւ ինչ խռովութիւն եղև ի մէջ աշխարհին Հայոց: Եկա՛յք, երթիցուք ուխտ դիցուք և դաշինս կռեսցուք ընդ ամենայն ազգս հեթանոսաց: Մեսն եկն և փարատեաց զերկիւղն:

Վարժություն 138. *Թարգմանել գրաբար:*

Ա. Ես նրանց չլսեցի և տվեցի հրաման: Դանաչիր, թե ովքեր են քո թշնամիներն ու բարեկամները: Մկրտավաճ չէի, ինչո՞ւ ինձ արիր երեց: Հովնանը վեր կացավ և զնաց Նիմվե: Չգիտեր, թե ինչ պատասխան տա այդ խոսքերին: Երբեք սուտ չի երդվում: Ինչ որ կասի քեզ՝ կանես: Թագ կդնենք նրա գլխին (ի գլուխ) և կմեծարենք նրան: Դրան Հայոց մարզպան արեք: Ոսկի և արծաթ կտաք նրանց: Այս ընծաները կտանես քո հավատարիմ մարդկանց: Երբ մոտեցավ (մերձեցաւ) տանը, լսեց երգերի և պարերի ձայն: Իր դատերը կտա նրան կնության (ի կնութիւն): Ականջ դրեք իմ խոսքերին:

Բ. Բռնեցին նրան, շղթաներով կապեցին ձեռքերն ու ոտքերը: Մատուցեք

մեզ գինի, որ խմենք: Իսկ նրանք եկան հասան Հայոց երկիրը: Լսեցեք բոլորդ, որ իմ ամուսնու մահը իմ պատճառով (վասն իմ) եղավ: Ապա գնացին հաղթեցին Պարսից գործին: Առավ նրա պտղից և կերավ: Թող խաղաղություն լինի ամբողջ աշխարհում: Ինչո՞ւ եկաք ինձ մոտ: Թող չխմի գինի և օղի: Որսորդը մի կաքավ բռնեց: Կզնաս կբռնես նրան և կբերես ինձ մոտ:

ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ (Հատուած)

Հրամանա՞ւ¹, ասեն, մեռանիցին մարդիկ, թէ առանց հրամանաց:

Նախ պարտիմք գիտել՝ թէ զի՞նչ հրամանք իցեն, և ուստի՞ բան հրամանացն ընդ աշխարհ տարածեալ իցէ:

Հրաման կապեալ՝ վասն մահուան՝ յաստուածատուր գիրս ոչ ուրեք գտանեմք. քանզի Տէրն մահու և կենաց՝ և կարճել իշխել զհրամանն իւր և երկայնել: Որպէս առ ջրհեղեղան ասէ, եղիցին ատուրք կենաց մարդկանս այսորիկ հարիւր և քսան ամ. և վասն բազմութեան անօրէնութեանն պակասեցոյց ի նոցանէ զքսանն: Եւ որպէս առ Ադամ ասէ. յատուր յորում ուտես ի պտղոյ ծառոյն, ի նմին մեռանիս. և առ իւրում բարերարութեանն, և վասն որդէծնութեան և մարդկան յաշխարհի սերելոյ. ներեաց նմա ինն հարիւր և երեսուն ամ, զի մի՞ գեղեցիկ ստեղծուածն իւր համօրէն ջնջեսցի: Եւ վասն արտասուացն Եզեկիայի արքայի՝ յաւելաւ նմա հնգետասան ամ: Եւ վասն ապաշխարութեան նինուէացոցն՝ ոչ կորոյս զբաղաքն յատուրն երրորդի ըստ քարոզութեան մարգարէին իւրոյ:

Եւ ոչ որպէս քաղեայքն աստեղանշմարք, որ և զծննդոց պատճառս և զմահուանց՝ յաստեղաց իբրև ի կենդանեաց³ դնեն: Որպէս թէ յորժամ ծնանիցինն, անդէն և մահուանքն իւրաքանչիւր ուրուք անվրէպ սահմանիցին. և ըստ այն ոչ յառաջել ումեք մեռանել հնար իցէ, և ոչ յամենալ:

Այլ յանդիմանեն զնոսա և պատերազմացն դէպք. զի ի միում ատուր բիւրք բիւրոց մարդկան կոտորին այլ և այլ տիռվք կէսք մատաղօրեայք, և կէսք երիտասարդք, և այլք ի կատարեալ հասակի ծերութեան. որոց ծնունդքն ի միում ժամու չէին, և մահքն ի միասին եղանին:

Եւ դարձեալ թէ յաստեղաց⁴ էին պատճառք ծննդոց, ընդէ՞ր ի հնդիկս⁵ ոչ ոք երբէք սպիտակ ծնաւ, և ոչ յայլ աշխարհս այնպիսի ինչ երևակ⁶. մի թէ ա՞նդր միայն ոչ եհաս աստղն սպիտակարար, և ոչ յայլ աշխարհս աստղն սևագործ: Եւ ատամունքն հնդկին ուստի՞ իցեն այնչափ սպիտակ:

Դարձեալ բախտատրութեանց և չուառութեանց՝ զաստեղսն դնեն պատ-

ճառս. որպէս թէ աստեղատունք ինչ իցեն, և ըստ դիպելոյ պատճառաւորաց աստեղացն յաստեղատունսն⁷ նոյնպիսիք և ծնունդքն լինիցին:

Մինչ դեռ առիւծն, ասեն, յաստեղատանն իցէ՝ և ծնանիցի ոք, թագաւոր լինելոց է. և մինչդեռ եզն է՝ և ծնանիցի ոք, հզօր և բարենշան գալոց է⁸, և մինչ դեռ խոյն է՝ և ծնանիցի ոք, մեծատուն լինելոց է, և որպէս նայն⁹ թաւ և ասուեղ է. և յորժամ կարիճն է՝ և ծնանիցի ոք, չար և մեղանշական լինելոց է: Եւ այլքն և ս այլոց ազգի ազգի իրաց պատճառք լինին: Որպէս թէ յորժամ Կռոնոսն¹⁰ յաստեղատունն մտանիցէ, թագաւոր մեռանի, որ եղև ն իսկ երկիցս, որպէս ասենն, առ Թէոդոսի կայսերք. և քաղեայքն պնդեալ էին՝ թէ մեռանի թագաւորն, և նա ոչ մեռաւ, զի յամօք լիցի սափասուտ¹¹ արուեստգիտութիւնն:

Արդ նախ զայն ասասցեն. ո՞ր էհան զայնպիսի երկրական անուանս՝ զգիշակեր և զխոտակերս յերկինս, զի պատճառք ծննդեան մարդկան լինիցին. զի որ ոք ուրուք պատճառ ծննդեան կարիցէ լինել, նա ի վեր քան զնա՞ որոյ պատճառն է՝ պարտի լինել իմաստութեամբ¹²: Արդ հասարակաց¹³ մտօք հայեցեալ, տեսցուք ո՞ր ի վեր իցէ, մարդն՝ որ անասնոյն տիրէ, թէ անասունն՝ որ մարդոյն ի հարկի կայ,¹⁴ և ոչ միայն ի հարկի կայ, այլ և կերակուր նորա է: Եւ գազանացն զկէսն փախստականս եղեալս տեսանեմք, և զկէսն յանտառախիտ մայրիս ամրացեալ՝ յորժամ զբարբառ միայն մարդոյն լսիցեն: Զանզի գահ և զերկիւղ մարդոյն՝ արկեալ է արարչին ի վերայ գազանացն և սողնոցն և անասնոցն և թռչնոց, վասն առաւել զնա պատուելոյն...

(Եզնիկ Կողբացի, 2-րդ, ԺԳ, ԺԴ)

¹ *հրաման* բառն այստեղ և շարունակութեան մեջ գործածվում է *ճակատագիր* իմաստով
² այստեղ՝ *սահմանված* իմաստով
³ զծննդոց պատճառս և զմահուանց՝ յաստեղաց իբրև ի կենդանեաց-ծնունդների ու մահերի պատճառք աստղերն են՝ իբրև կենդանիներ
⁴ գործածված է ուղղական հոլովի նշանակությամբ՝ աստղերը
⁵ պետք է հասկանալ՝ սև ամորք, նեգր
⁶ էակ (սև ամորք իմաստով)
⁷ և ըստ դիպելոյ պատճառաւորաց

աստեղացն յաստեղատունսն-և պատճառ դարձող ինչպիսի աստղեր որ հանդիպում են այդ աստղատներում
⁸ այստեղ՝ լինելու է
⁹ ն-ն հող է
¹⁰ Երևակ կամ Մատուրն մոլորակը
¹¹ սափասուտ-սուտումուտ
¹² նա ի վեր քան զնա՞ որոյ պատճառն է՝ պարտի լինել իմաստութեամբ-իմաստութեամբ պիտի բարձր լինի նրանից, որի (ծննդյան) պատճառն է
¹³ այստեղ՝ պարզ
¹⁴ ի հարկի կայ-ծառայում է

ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐ

§ 172. Պակասավոր են կոչվում այն բայերը, որոնք չունեն առանձին ժամանակներ կամ եղած ժամանակներում՝ առանձին դիմավոր ձևեր: Այդ կարգի բայերից են՝ գալ, երթալ, ըմպել, լինել(իմ), ունել(իմ), ուտել (տես § 171): Գրաբարում պակասավոր բայեր են նաև՝ *են, պարտել(իմ), գոլ, կայ, գոգ, չիք*:

1. *Եմ*, ունի ներկա, անցյալ անկատար և առաջին ապառնի ժամանակները. ներկա՝ են, ես, է, ենք, էք, են. անցյալ անկատար՝ էի, էիր, էր, էաք, էին. 1-ին ապառնի՝ իցեմ, իցես, իցե, իցեմք, իցեք, իցեն:

Ծանոթություն. Բուն հրամայականում *եմ* բայն ունենում է *ե՛ր, է՛ք* կամ *ե-րո՛ւք* ձևերը, որոնք առանձին չեն գործածվում, հանդիպում են միայն *ողջ* բառի հետ՝ *ողջ եր* (=ողջ եղի՛ր), *ողջ էք* կամ *ողջ երուք* (=ողջ եղե՛ք):

2. *Պարտել*, իմ(=պետք լինել, պարտավոր լինել, պարտք ունենալ). ունի ներկա, անցյալ անկատար և առաջին ապառնի ժամանակները. ներկա՝ պարտիմ, պարտիս, պարտի, պարտիմք, պարտիք, պարտին, անցյալ անկատար՝ պարտեի, պարտեիր, պարտեիր, պարտեաք, պարտեիք, պարտեին, 1-ին ապառնի՝ պարտիցիմ, պարտիցիս, պարտիցի, պարտիցիմք, պարտիցիք, պարտիցին: Այս բայը չպետք է շփոթել *Ե* լծորդության *պարտել* (=հաղթել) կանոնավոր բայի հետ:

3. *Գոլ* (=լինել, գոյություն ունենալ), ունի ներկա, անցյալ անկատար և առաջին ապառնի ժամանակները, ըստ որում անցյալ անկատարում և առաջին ապառնիում գործածական են միայն եզակի և հոգնակի 3-րդ դեմքերը. ներկա՝ գոմ, գոս, գոյ, գոմք, գոյք, գոն, անցյալ անկատար՝ գոյր, գոյին, 1-ին ապառնի՝ գուցե, գուցեն:

4. *Կայ* (=կա). ունի միայն ներկա, անցյալ անկատար և առաջին ապառնի ժամանակների եզակի և հոգնակի 3-րդ դեմքերը. ներկա՝ կայ, կան, անցյալ անկատար՝ կայր, կային, 1-ին ապառնի՝ կայցե, կայցեն: Այս բայը չպետք է շփոթել *Ա* լծորդության *կալ* (=մնալ, կանգնել) կանոնավոր բայի հետ: *Կայ* բայի ժխտականը կազմվում է *չ* մասնիկով՝ *չկայ*, իսկ *կալ* բայինը՝ *ոչ-ով ոչ կայ* (=չի մնում, չի կանգնում):

5. *Գոգ* (=ասա). ունի միայն երկրորդ ապառնի (բացի եզակի թվի 1-ին դեմքից), բուն և հորդորական ժամանակները. 2-րդ ապառնի՝ գոգցես, գոգցե, գոգցուք, գոգջիք, գոգցեն, բուն հրամայական՝ գո՛գ, գոզե՛ք, հորդորական հրամայական՝ գոզջի՛ր, գոզջի՛ք:

6. *Չիք* (=չկա). ունի միայն այս ձևը:

§ 173. Պակասավոր բայերի գործածության վերաբերյալ պետք է նկատի ունենալ հետևյալը.

ա) *Եմ*, *գոլ* բայերի 3-րդ դեմքերը (*եմ* բայինը սովորաբար շեշտված), ինչպես նաև *չիք* բայը ուղղական հոլովով բառերի հետ գործածվելիս արտահայտում են *կա, գոյություն ունի* իմաստը. օրինակ՝ Ոչ ոք իցե որ օգնիցե քեզ (Բ. օր., ԻԸ, 32)=Ոչ ոք չկա, որ քեզ օգնի: Է ճանապարհ որ թուի յաչս մարդկան թե ուղիղ իցե (Առակ., ԺԴ, 12)=Ճանապարհ կա. որ մարդկանց թվում է, թե ուղիղ է: Ջուր ոչ գոյր ի մնա (Ծննդ., ԼԷ, 25)=Նրա մեջ ջուր չկար: Չիք ինչ յերկրի՝ որ մնան է մնա (Յովբ., ԽԱ, 24)=Երկրի վրա չկա մի բան, որ մնան է նրան:

բ) *Եմ*, *գոլ, կայ* բայերի 3-րդ դեմքերը, ինչպես նաև *չիք* բայը սեռական (երբեմն էլ տրական) հոլովով բառերի հետ գործածվելիս արտահայտում են *ունենալու* իմաստ. օրինակ՝ Էր նորա աղջիկ մի (Ծննդ., ԺԶ, 1)=Նա մի աղջիկ ուներ: Ոչ գոյր իւր արու որդի (Փարպ., 1-ին, ԺԸ)=Նա չուներ արու որդի: Կայցե՞ ձեր հայր կամ եղբայր (Ծննդ., ԽԴ, 19)=Ունե՞ք դուք հայր կամ եղբայր: Չիք սորա իշխանութիւն (Թռռն., Բ, էջ 562)=Սա իրավունք չունի:

գ) *Եմ* և *կայ* բայերը (սովորաբար դրանց 3-րդ դեմքերը) ներգոյականի իմաստ ունեցող (նախդրով տրական և հայցական) բառերի հետ գործածվելիս արտահայտում են *գտնվելու, կա* իմաստը. օրինակ՝ Չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ որ է ի կողմանս հիւսիսոյ (Խոր., 1-ին, Ժ)=Չվում գնում է Արարադի երկիրը, որը գտնվում է հյուսիսային կողմում: Կապեցի շղթայիւք և կայ ի գանձի իմում (Բուզ., 4-րդ, ԾԴ)=Շղթաներով կապեցի, և գտնվում է իմ գանձարանում:

դ) *Եմ*, *գոլ* բայերի եզակի 3-րդ դեմքերը, գործածվելով անորոշ դերբայի հետ, արտահայտում են *պիտի, պետք է, կարելի է, կարող է, հնարավոր է* իմաստները: Այս դեպքում անորոշ դերբայի հետ կարող է դրվել տրական հոլովով խնդիր, որն աշխարհաբար թարգմանվում է ուղղական հոլովով որպես ենթակա. օրինակ՝ Էր ինձ ...լինել այսօր յերկրի անձանօթում (Խոր., 1-ին, ԻԶ)=Այսօր ես պիտի լինեի անձանոթ երկրում: Ոչ գոյ մեզ բանալ զբերանս մեր (Դան., Գ, 33)=Մենք չենք կարող մեր բերանը բացել: Ի Յոբայ փորձանաց է ուսանել (Եզնիկ., 1-ին, ԺԹ)=Հորի փորձություններից պետք է սովորել:

Պարտիմ պակասավոր բայն անորոշ դերբայի հետ գործածվելիս արտահայտում է հարկադրական եղանակի իմաստ՝ *պիտի, պետք է*: Անորոշ դերբայն այս դեպքում աշխարհաբար թարգմանվում է դիմավոր բայով. օրինակ՝ Բայց գայն և ս պարտիմք գիտել (Եզնիկ., 1-ին, ԻԳ)=Բայց այն էլ պիտի իմանանք:

Վարժություն 139. Թարգմանել, բացատրել, թե ո՞ր հոլովների հետ և ի՞նչ իմաստով են գործածված *եմ, գոլ, չիք* պակասավոր բայերը:

Ի բաց կային զանձք՝ և ոչ ոք էր որ յափշտակէր: Եւ այլ և սաստեղք են, որ ի տարուջ հազիւ մի անգամ հասանեն ի նոյն տեղի: Ոչ ոք էր, որ օգնէր Արշամայ: Եւ էին բազում սպասատրք արքունի: Բայց ինքն եթ իցէ և եթ չիցէ՝ զայն ոչ զիտէ, զի չէ ի բանաւորաց և ի մտաւորաց: Գոյ յոյս թէ շուն որ կենդանի է՝ լաւ է քան զառեւծ մեռեալ: Էր ոմն ի վեր քան զնա: Եթ գոյր ոք երեխայ ի բազմութեան զօրուն՝ զգիշերն ամենայն մկրտեցին: Յորժամ տեսանէին ուրեք դուրս փակեալ՝ նշան էր այս այնոցիկ՝ թէ կերակուր ինչ գուցէ ի ներքս: Էին և այլ սուրբք արք և կանայք: Եւ դրախտն ոչ եթ յերրորդ երկինս իցէ... այլ յերկրի: Նիստ ի գետնի, զի չիք աթոռ: Եւ արք պարսիկք, որք... էին ի քաղաքի կայսեր: Եւ եթ այլ ոք չգոյր դատաւոր, և առ հայրն չկարէ՞ին երթալ:

Վարժություն 140. Թարգմանել, բացատրել, թե ինչ իմաստով են գործածված ընդգծված եմ, գրչ, կայ, չիք պակասավոր բայերը և սեռական հոլովով դրված բառերը:

Էր դուստր մի Անդովկայ ուրումն: Բերան է նոցա, և ոչ խօսին: Է որդի մի Հովնաթանու հաշմն ոտիւր: Էր ներքինի մի Հայոց թագաւորին Արշակայ: Եւ լուսնի չիք իւր լոյս առանձին: Իսկ Վահանայ էր քոյրաբիւ ի Մամիկոնեան տոհմն: Ոյր իցեն երկու հանդերձ՝ տացէ զմին այնմ, ոյր ոչն գուցէ. և ոյր կայցէ կերակուր՝ նոյնպէս արասցէ: Ոչ գոյին նորա որդիք, այլ դստերք միայն: Դատաստան կայ իմ ընդ քեզ: Ադուեսուց որջք գոն և թռչնոց երկնից բոյնք: Ոչ գուցէ նոցա հովիւր: Վիշտայի այլազգ ինչ բնութիւն չէ՝ եթ ոչ օձի, այն յայտ իսկ է:

Վարժություն 141. Թարգմանել՝ ուշադրություն դարձնելով, թե ինչ նշանակություններ են գործածված եմ, գրչ և պարսեւ(իմ) պակասավոր բայերն անորոշ դերբայի և տրական հոլովի կամ միայն անորոշ դերբայի հետ:

Չի քաջ արանց է յարձակ դաշտի և յազատ տեղուջ կռուել: Նա այր ժանտ է, և ոչ գոյ խօսել ընդ նմա: Այլ անդ էր լսել զձայնս լալոյ և զձայնս գուժի: Եւ այլ ինչ ոչ իցէ անդ տեսանել՝ բայց միայն ջուր և հուր և կաւ և մոխիր: Է և զայս իմանալ՝ թէ ոչ զի ես միայն արժանի եղայ խորհրդոյն: Չի արդ ժամ իսկ է մեզ ի բնոյ զարթնուլ: Եւ ընդ այն է զարմանալ, զի և ի ծառս համրացեալս՝ զտանին կերպարանք մարդկան: Եւ անդ էր տեսանել նոր գոմն Ողիսս: Ոչ այժմ թագաւորել է նմա, և ոչ ի վախճանի՝ որպէս ասեցն՝ յաղթել կարէ: Ոչ պարտի օրէնսդիրն օրէնս դնել:

Վարժություն 142. Թարգմանել գրաբար, ընդգծված բառերը դնել սեռական հոլովով, իսկ ունենալ բայի համար գործածել եմ, գրչ, կայ, չիք պակասավոր բայերից որևէ մեկը:

Գուք իրավունք չունեք դատելու նրանց: Ես ունեմ եղբայրներ և քույրեր: Ամեն ինչ, որ նա ունեի, տվեց նրան: Նրանք չունեն ոսկի և արծաթ իրենց տներում: Այդ թագավորները շատ զանձեր կունենան: Դրանք արու զավակ չունեն: Մենք հույս չունենք, որ նրանք այսօր կգան: Այդ երկրի քաղաքները պարիսպներ չունեն:: Հունաց կայսրն ուներ մի գեղեցիկ դուստր:

ԵՂԱՆԱԿԻՉ ԲԱՅԵՐ

§ 174. Գրաբարում կան բայեր, որոնք անորոշ դերբայի հետ գործածվելիս արտահայտում են եղանակիչ իմաստ, այսինքն՝ անորոշ դերբային տալիս են այս կամ այն եղանակի, հատկապես հարկադրականի իմաստ: Այդ կարգի բայերը կոչվում են եղանակիչ բայեր: Պակասավոր բայերը նաև եղանակիչ բայեր են: Եղանակիչ-պակասավոր բայեր են նաև հետևյալները. *արժան է* (=պետք է, պատշաճ է), *պարտ է* (=պետք է), *պիտոյ է* (=պետք է), *օրէն է* (=կարելի է, սովորություն է, վայել է), *անկ է* (=վայել է, պատշաճ է), *վայել է* (=հարմար է, վայել է), *մարթ է* (=կարելի է), *հնար է* (=հնարավոր է, կարելի է), *հարկ է* (=պետք է), *ի դէպ է* (=հարմար է, տեղին է), *ի ճահ է* (=հարմար է, պատշաճ է), *փոյթ է* (=հոգն է, հոգ ունի), *կամ է* (=ցանկալի է), *պատշաճ է* կամ *պարտ և պատշաճ է* (=պատշաճ է, պետք է, հարմար է), *հասանէ* (=վիճակված է, պիտի լինի), *մարթի* (=կարելի է, հնարավոր է, համարվում է), *պիտի* (=պետք է, հարկավոր է) և այլն:

Եղանակիչ բայերի մոտ ենթակայի իմաստ արտահայտող բառը դրվում է տրական հոլովով, որը պետք է թարգմանել աշխարհաբար ուղղական հոլովով, իսկ անորոշ դերբայը՝ դիմավոր բայով: Օրինակներ՝ *Որոց պարտ է պաշտել* զնա և առնել զկամս նորա (Ազ., Ե, 52)=Որոց պետք է պաշտեն նրան և կատարեն նրա կամքը: *Ինձ պիտոյ է ի քէն մկրտել* (Մատթ., Գ, 14)=Ես պետք է քեզնից մկրտվեմ: Եւ ոչ պիտի մեզ այր սպանանել (Բ, Թագ., ԻԱ, 4)=Եվ մենք չպետք է մարդ սպանենք: *Չէր մարթ մարմնատրի* անմահ կալ (Եզնիկ, 1-ին, ԺԸ)=Մարմնավորը չէր կարող անմահ մնալ:

Հաճախ եղանակիչ բայերը գործածվում են միայն անորոշ դերբայի հետ, առանց տրականով ենթակայի՝ արտահայտելով ընդհանուր բնույթի հարկադրական իմաստ: Այս դեպքում անորոշ դերբայն աշխարհաբար թարգմանվում է անորոշ դերբայով, իսկ եղանակիչ բայերը՝ իրենց արտահայտած համապատասխան իմաստներով. օրինակ՝ *Սկսցուք ուստի արժան է սկսանել* (Եղիշէ, Էջ 5)=Սկսենք այնտեղից, որտեղից պետք է սկսել: *Յերբայեցոց լեզու երկին չմարթի ասել* (Եզնիկ, 4-րդ, է)=Երբայեցիների լեզվով չի կարելի ասել երկինք:

Ունիմ անկանոն-պակասավոր բայը նույնպես կարող է եղանակիչ իմաստով գործածվել անորոշ դերբայի հետ, սակայն տարբեր դեմքերով՝ արտա-

հայտելով կարողանալ իմաստը. օրինակ՝ Սոյնպէս ունիս նայել և ընդ ջուրս ծովու (Թռռն., Բ, էջ 28)=Այսպէս էլ կարող ես նայել ծովի ջրերին:

Վարժություն 143. Թարգմանել՝ ուշադրություն դարձնելով ընդգծված եղանակիչ բայերի, անորոշ դերբայների և տրական հոլովով դրված խնդիրների իմաստի և կիրառության վրա:

Ի դէպ էր ինձ անսալ ձեզ: Եւ չէ հնար լուսնի յերկիր իջանել: Բայց պարտ և պատշաճ էր նոցա ոչ միայն ընդ արեգական և լուսնի ընդ արարածս զարմանալ, այլ և ընդ գեղեցիկ պարզ և անդադար ընթացից արշաւանս աստեղաց: Չէր մարթ անմարմնոցն ընդ կանայս մարմնատուրս ամուսնանալ: Պիտոյ է ինձ յղել զքեզ առ թագաւորն Պարսից Շապուհ: Արժան է քեզ ուրախ լինել այսօր: Եւ զի՞ պիտոյ է մեզ բնաւ մի ըստ միոջէ թուել: Եւ ինձ ասպետիս պարտ է զքեզ պսակել ըստ սովորական իշխանութեան իմոյ հայրենեաց: Որով յայտ է, թէ երկուց անարարաց ի միասին չէ մարթ լինել: Չոր ձեզ պարտ է ընդունել:

Վարժություն 144. Թարգմանել գրաբար՝ ընդգծված բառերը փոխարինելով համապատասխան եղանակիչ բայերով (ճարթի, պարտ է, պարշաճ է, ի դէպ է, ճարթ է, հնար է), դիմավոր բայերը դնելով անորոշ դերբայով, իսկ ենթակաները՝ տրական հոլովով:

Ինչպե՞ս (զիս՞որդ) այդ կարող է լինել: Նա պետք է գնա Տիգրոն և պատասխան տա արքային: Անկարելի է, որ նրանք մոռանան ձեր երախտիքը: Պատշաճ էր, որ դուք էլ նրանց որդիներին խնամէիք: Հարմար է, որ մենք ելնենք այս քաղաքից և գնանք այն քաղաքը: Ես պետք է Հռոմն (Հռովմ) էլ տեսնեմ: Այն չէր կարող վրիպել:

ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՆԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ
(Հատուած)

Քանզի ի բառնալ ազգին Արշակունեաց, տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանայ պարսկի, որ վարէր զիր իշխանութիւնն օրինօք մոգուց¹. և բազում անգամ մարտնչէր ընդ այնոսիկ՝ որ ոչ ընդ նովին օրինօք մտանէին², սկիզբն արարեալ յամացն Արշակայ արքայի որդւոյն Տիրանայ, և կռուէր մինչև յամն վեցերորդ Արտաշիսի արքայի Հայոց, որդւոյն Վռամշապիոյ: Եւ իբրև գնա և ս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարասն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ և գանձն³ յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուծին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի: Վասն որոյ և աստուածպաշտութիւնն բարձրագլուխ կամակարու-

թեամբ⁴ երևելի լինէր յաշխարհին Հայոց, ի սկզբան տէրութեանն Շապիոյ արքայից արքայի մինչև յամն երկրորդ Յազկերտի արքայից արքայի՝ որդւոյ Վռամայ, զոր եզիտ աստանայ իր գործակից, և զամենայն մթերեալ թոյնսն թափեաց ի բաց, և ելից գնա իբրև զպատկանդարան դեղեալ նետիւք: Եւ ըսկըսաւ եղջեր ածել⁵ անօրէնությամբ, գոռզանայր, և գոռալով հողմն հանէր ընդ չորս կողմանս երկրի, և թշնամի և հակառակորդ երևեցուցանէր իր գիւատացեալքս ի Քրիստոս, և նեղեալ տագնապէր անխաղաղասէր կենօք:

Քանզի յոյժ սիրելի էր նմա խռովութիւն և արինհեղութիւն, վասն այնորիկ յանձն իր տարաբերէր⁶, եթէ յո՞ւ⁷ թափեցից զդառնութիւն թիւնաւոր, կամ ո՞ւր բացատրեցից⁸ զբազմութիւն նետիցն: Եւ առ յոյժ յիմարութեան⁹ իբրև զգագան կատաղի յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց, եհար մինչ ի քաղաքն Մծբին, և բազում զաւառս Հռոմոնց աւերեաց ասպատակաւ, և զամենայն եկեղեցիս հրձիգ արար. կուտեաց զաւար և զգերի, և ահաբեկ արար զամենայն զօրս աշխարհին:

Իսկ երանելի Թէոդոս կայսր՝ քանզի էր խաղաղասէր... ոչ կամեցաւ ընդ առաջ նորա ելանել պատերազմաւ. այլ այր մի Անատոլ անուն, որ էր նորա սպարապետ արևելից, առաքեաց առ նա բազում զանձիւք: Եւ արք պարսիկք, որք փախուցեալ էին վասն քրիստոնէութեան և էին ի քաղաքի կայսեր, կալաւ և ետ ի ձեռս նորա: Եւ զամենայն զոր ինչ ասաց՝ ի ժամանակին կատարեաց ըստ կամաց նորա, և արգել գնա ի բազում բարկութենէն¹⁰, և դարձաւ անդրէն ի քաղաքն իր Տիգրոն:

Եւ իբրև ետես անօրէն իշխանն, եթէ յաջողեցաւ չարութիւն նորա, սկսաւ այլ և ս խորհուրդ յաւելուլ, որպէս ոք զի ի հուր բորբոքեալ յաւելու բազում նիւթս փայտից: Քանզի ուստի սակաւ մի կասկածոտն էր, անտի աներկիւղ հաստատեցաւ. վասն այնորիկ դրդուեցոյց զբազումս ի սուրբ ուխտէն քրիստոնէից, էր՝ զոր բանիւք սպառնալեօք, էր՝ զոր կապանօք և տանջանօք, և էր՝ զոր չարաչար մահուամբ վախճանէր: Յափշտակութիւն առնէր ընչից և արարոց. և մեծաւ անարգանօք տանջէր զամենեսեան: Եւ իբրև ետես՝ եթէ վարատեալ¹¹ ցրուեցան ի բազում կողմանս, ի խորհուրդ կոչէր զպաշտօնեայս ձախակողմանն՝ որք կապեալ էին ի կռապաշտութեանն անլուծանելի հանգուցիւք, վառեալք և ջեռեալք իբրև զհնոց առ այրել¹² զուխտ սուրբ եկեղեցւոյ:

Քանզի էին իսկ այնպիսիք բնակեալ ի կեանս իրեանց իբրև ի թանձրամած խաւարի, և ոգիքն արգելեալք ի մարմին իբրև զկենդանի ի գերեզմանի...: Նա և արջք օրհասականք ընդ վախճանել շնչոցն¹³ հզօրագոյնս կռուին. յորոց և իմաստունքն տեղի տուեալ փախչին ի նոցանէ: Այսպիսի իմն եկեալ

հասեալ է վախճան տէրութեանն. եթէ հարկանին՝ չզգան, և եթէ հարկանեն՝ չհամանան. և իբրև ոչ գտանի արտաքին թշնամի, ընդ անձիս իւրեանց մարտ եղեալ կռուին...:

Արդ զի՞ կոծիս, զի՞ մրցիս, զի՞ այրիս, զի՞ բորբոքիս, զի՞ չիջանիս. զի՞ կոչես ի խորհուրդ զայնոսիկ՝ որոց զոգիսն ձեր ի ձենջ քաղեալ՝ հանեալ է զանապականդ յապականութիւն, և զապականելի մարմինդ գէշաքարշ արարեալ իբրև զազիր մեռելուտի ի բաց ընկեցեալ: Ապաքէն զայդ կամիս՝ զի ծածկեսցի խորհուրդ ամբարշտութեանդ. տեսչի՛ր յորժամ յայտնեսցի, ապա զիտասցես զելս կատարածի դորա:

Ասեն մոգքն. «Արքայ քաջ, աստուածքն ետուն քեզ զտէրութիւնդ և զյաղթութիւն, և ոչ ինչ կարօտ են նոքա մարմնաւոր մեծութեան. բայց եթէ ի մի օրէնս դարձուցանես զամենայն ազգս և ազիւս, որ են ի տէրութեան քում, յայնժամ և աշխարհն Յունաց հնազանդեալ մտցէ ընդ օրինօք քովք: Արդ զմի բան զմեր վաղվադակի կատարեա՛ դու, արքայ. զօր գումարեա՛ և գունդ կազմեա՛ խաղա՛ գնա՛ դու յերկիրն Քուշանաց. և զամենայն ազգս ժողովեա՛ և անցո՛ ըստ Պահ դուռն ի ներքս¹⁴. և դու անդէն արա՛ քեզ բնակութիւն: Յորժամ արգելուս և փակես զամենեսեան ի հեռաօր օտարութեան, կատարին խորհուրդք կամաց քոց. և որպէս երևիս մեզ ի դենիս մերում¹⁵, տիրես դու և երկրին Քուշանաց, և Յոյնք իսկ ոչ ելանեն ընդ քո իշխանութիւնդ: Բայց միայն զաղանդ քրիստոնէից բարձ ի միջոյ»:

Հաճոյ թուեցաւ խորհուրդն թագաւորին և մեծամեծացն, որ էին ի նմին բանի. հրովարտակս գրէր, պնդադեսպանս արձակէր յամենայն տեղիս տէրութեան իւրոյ: Եւ այս է պատճեն հրովարտակին.

«Առ ամենայն ազգս տէրութեան իմոյ՝ արեաց և անարեաց, բազմասցի ի ձեզ որջոյն մարդասիրութեան մերոյ. դուք ողջ լերուք, և մեք մեզէն ողջ ենք դիցն օգնականութեամբ:

«Առանց զձեզ ինչ աշխատ առնելոյ խաղացաք զնացաք յերկիրն Յունաց, և առանց գործոյ պատերազմի սիրով մարդասիրութեամբ նուաճեցաք զամենայն երկիրն մեզ ի ծառայութիւն: Դուք զբարի գնտաւ ածէք, և անսպառ լերուք յուրախութեան. բայց զբանս զայս կատարեցէ՛ք վաղվադակի, գոր ասենքս:

«Մեք ի մտի եղաք անվրէպ խորհրդովք խաղալ զնալ յաշխարհն արևելից, աստուածոցն օգնականութեամբ դարձուցանել ի մեզ զտէրութիւնն Քուշանաց. դուք իբրև զհրովարտակս զայս տեսանէք՝ անխափան վաղվադակի այրև ձի գումարեցէք առաջոյ քան զիս, յանդիման լիջիք ինձ յԱպար աշխարհին»:

Ըստ այսմ պատճենի հրովարտակ եհաս յաշխարհն Հայոց, ի Վրաց և յԱրուանից...:

(Եղիշէ, էջ 6-10)

¹ օրինօք մոգուց-մոգերի կրոնով
² որ ոչ ընդ նովին օրինօք մտանէին-ովքեր չէին ընդունում նույն կրոնը
³ գանձ. այստեղ նշանակում է հարկ
⁴ բարձրագլուխ կամակարութեամբ-ազատ ու համարձակ
⁵ եղջեր ամել-հոխորտալ
⁶ յանձն իւր տարաբերէր-ինքն իր մեջ ալեկոծվում էր
⁷ յո՞-ո՞ւմ վրա
⁸ ո՞ր բացատրեցից-ո՞ր արձակեմ

⁹ առ յոյժ յիմարութեան-սաստիկ հիմարության պատճառով
¹⁰ արգել գնա ի բազում բարկութենէն-իջեցրեց նրա մեծ բարկությունը
¹¹ հոմանիշ է հաջորդ բային
¹² առ այրել-այրելու համար
¹³ ընդ վախճանել շնչոցն-շունչները փչելիս
¹⁴ անցո՛ ըստ Պահ դուռն ի ներքս-անցկացրու Պահ դռնից ներս
¹⁵ ի դենիս մերում-մեր գուշակությունների մեջ

ԴԱՍ ԵՐԵՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ

ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

§ 175. Գրաբարի բաղադրյալ ժամանակները կազմվում են անցյալ և ապառնի դերբայներով և *եմ, լինիմ* օժանդակ բայերի համապատասխան ձև ետրով:

Եմ օժանդակ բայը բաղադրյալ ժամանակներ է կազմում թե՛ անցյալ, թե՛ ապառնի դերբայների, իսկ *լինիմ* բայը՝ միայն անցյալ դերբայի հետ:

§ 176. *Եմ* բայն անցյալ դերբայի հետ կազմում է երեք բաղադրյալ ժամանակ՝ ներկա (վաղակատար-հարակատար ներկա), անցյալ (վաղակատար-հարակատար անցյալ), ապառնի:

Ներկա

(Վաղակատար-հարակատար ներկա)
գտեալ եմ, գտեալ ես, գտեալ է
գտեալ եմք, գտեալ էք, գտեալ են

Անցյալ

(Վաղակատար-հարակատար անցյալ)

գտեալ էի, գտեալ էիր, գտեալ էր
գտեալ էաք, գտեալ էիք, գտեալ էին

Ապառնի

գտեալ իցեմ, գտեալ իցես, գտեալ իցէ
գտեալ իցեմք, գտեալ իցէք, գտեալ իցեն

Ներկա, անցյալ և ապառնի ժամանակներում անցյալ դերբայն աշխարհաբար թարգմանվում է վաղակատար կամ հարակատար դերբայներով: *Եմ* բայը ներկայում թարգմանվում է ներկայի համապատասխան ձևերով (եմ, ես է, ենք, եք, են), անցյալում՝ անցյալ անկատարի ձևերով (էի, էիր, էր, էինք, էիք, էին), ինչպես նաև *լինիմ* բայի ըղձականի և պայմանականի անցյալ ժամանակներով (լինեի, կլինեի...), իսկ ապառնիում՝ *լինիմ* բայի ըղձականի և պայմանականի ապառնի ժամանակներով (լինեմ, կլինեմ...), ինչպես նաև *եմ* բայի ներկայի ձևերով (եմ, ես, է...): Ներգործական սեռի բայերը նույն ձևերով կարող են արտահայտել նաև կրավորական իմաստ. օրինակ՝ *սիրեալ եմ*=սիրել եմ կամ սիրվել եմ, սիրած եմ կամ սիրված եմ. *սիրեալ էի*=սիրել էի կամ սիրվել էի, սիրած էի կամ սիրված էի, սիրած լինեի կամ սիրված լինեի, սիրած կլինեի կամ սիրված կլինեի. *սիրեալ իցեմ*=սիրած լինեմ կամ սիրված լինեմ, սիրած կլինեմ կամ սիրված կլինեմ, սիրել եմ կամ սիրվել եմ, սիրած եմ կամ սիրված եմ:

Հաճախ *եմ* բայով և անցյալ դերբայով կազմված ներկա, անցյալ և ապառնի ժամանակների եզակի 3-րդ դեմքերի մոտ ենթակայի իմաստով իբրև խնդիրներ գործածված դերանունները և գոյականները դրվում են սեռական հոլովով, որոնցով արտահայտվում են բայի դեմքն ու թիվը. օրինակ՝ *ես տեսեալ եմ. դուք տեսեալ էք, արքայ տեսեալ է* ձևերի փոխարեն լինում են՝ *տեսեալ է իմ, տեսեալ է ձեր, տեսեալ է արքայի*: Այս ձևերով արտահայտվում են միայն ներգործական և չեզոք իմաստներ: Ահա մի քանի բնագրային օրինակներ. Եւ գուռիս քաղաք շինեալ է նախնեացն մերոց (Բուգ., 5-րդ, ԼԲ)=Ուռիս քաղաքն էլ մեր նախնիներն են շինել: Իմ եթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա (Յովհ., ԺԵ, 22)=Եթե ես եկած և խոսած չլինեի նրանց հետ: Մինչև ձեր խնդրեալ ինչ իցէ ի մամնէ (Մատթ., 2, 8)=Նախքան դուք նրանից որևէ բան կխնդրեք:

§ 177. *Եմ* բայն ապառնի դերբայի հետ կազմում է երեք բաղադրյալ ժամանակ՝ ներկա (ապառնի ներկա), անցյալ (ապառնի անցյալ), ապառնի:

Ներկա

(Ապառնի ներկա)

գտանելոց եմ, գտանելոց ես, գտանելոց է

գտանելոց եմք, գտանելոց էք, գտանելոց են

Անցյալ

(Ապառնի անցյալ)

գտանելոց էի, գտանելոց էիր, գտանելոց էր
գտանելոց էաք, գտանելոց էիք, գտանելոց էին

Ապառնի

գտանելոց իցեմ, գտանելոց իցես, գտանելոց իցէ
գտանելոց իցեմք, գտանելոց իցէք, գտանելոց իցեն

Ապառնի դերբայն աշխարհաբար թարգմանվում է ապառնի (կատարելի) դերբայով: *Եմ* բայը ներկա և անցյալ ժամանակներում թարգմանվում է ներկայի և անցյալի անկատարի համապատասխան ձևերով (եմ..., էի...), իսկ ապառնիում՝ ներկայի ձևերով (եմ, ես, է...), ինչպես նաև *լինիմ* բայի ըղձականի և պայմանականի ապառնի ժամանակներով (լինեմ, կլինեմ...): Ներգործական սեռի բայերը նույն ձևերով կարող են արտահայտել նաև կրավորական իմաստ. օրինակ՝ *սիրելոց եմ*=սիրելու եմ կամ սիրվելու եմ. *սիրելոց էի*=սիրելու էի կամ սիրվելու էի. *սիրելոց իցեմ*=սիրելու եմ կամ սիրվելու եմ, սիրելու լինեմ կամ սիրվելու լինեմ, սիրելու կլինեմ կամ սիրվելու կլինեմ:

§ 178. Անցյալ դերբայով և *լինիմ* բայով բաղադրյալ ժամանակներ կազմելիս անցյալ դերբայը մնում է անփոփոխ, իսկ *լինիմ* բայը խոնարհվում է, որով որոշվում են բայի եղանակը, ժամանակը, դեմքն ու թիվը:

Մահմ. ներկա՝ գտեալ լինիմ, գտեալ լինիս, գտեալ լինի, գտեալ լինիմք, գտեալ լինիք, գտեալ լինին:

Մահմ. անց. անկատար՝ գտեալ լինեի, գտեալ լինեիր, գտեալ լիներ, գտեալ լինեաք, գտեալ լինեիք, գտեալ լինեին:

Մահմ. անց. կատարյալ՝ գտեալ եղէ, գտեալ եղեր, գտեալ եղև, գտեալ եղաք (կամ եղեաք), գտեալ եղէք, գտեալ եղեն:

Ստոր. 1-ին ապառնի՝ գտեալ լինիցիմ, գտեալ լինիցիս, գտեալ լինիցի, գտեալ լինիցիմք, գտեալ լինիցիք, գտեալ լինիցին:

Ստոր. 2-րդ ապառնի՝ գտեալ եղէց, գտեալ եղիցիս (կամ եղիցես), գտեալ եղիցի, գտեալ եղիցուք, գտեալ եղիջիք, գտեալ եղիցին, կամ՝ գտեալ լիցիմ, գտեալ լիցիս, գտեալ լիցի, գտեալ լիցուք, գտեալ լիջիք, գտեալ լիցին:

Բուն հրամայական՝ գտեալ լեր, գտեալ լերո՛ւք:

Հորդորական հրամայական՝ գտեալ լիջի՛ր, գտեալ լիջի՛ք:

Արգելական հրամայական՝ գտեալ մի՛ լինիր, գտեալ մի՛ լինիք:

Այս բաղադրյալ ձևերն ունեն հիմնականում կրավորական նշանակություն և աշխարհաբար թարգմանվում են տարբեր իմաստներով. օրինակ՝ սիրեալ լինիմ=սիրվում եմ, սիրած եմ լինում կամ սիրված եմ լինում, սիրած կլինեն կամ սիրված կլինեն, սիրած կամ սիրված լինեն. սիրեալ եղև=սիրվեց, սիրած եղավ կամ սիրված եղավ:

§ 179. Բաղադրյալ ժամանակներում եմ և լինիմ բայերի փոխարեն երբեմն հանդես են գալիս կայ և ունիմ բայերը, օրինակ՝ գրեալ կայ (Փարս., 1-ին, ԺԷ) գրված է, եկեալ... կայր (Եզնիկ, 2-րդ, Դ)՝ եկել էր, կապեալ կան (Եզնիկ, 1-ին, ԻԵ) կապված են, փակեալ ունի (Թոռն., Բ, էջ 18)՝ փակել է, նշանակեալ ունիմ (Աոր., Բ)՝ նշանակած ունեն, նշանակել են:

Վարժություն 145. Թարգմանել, դուրս գրել բաղադրյալ ժամանակներով դրված բայերը՝ որոշելով նրանց եղանակը, ժամանակը, դեմքն ու թիվը:

Ո՞չ գիտես, զի խորհեալ է Գնել սպանանել զքեզ: Եւ կինն նորա յոյի էր, և հասեալ էին ատուրք ծննդեան իւրոյ: Եթէ մուրեալ ինչ իցեն, արարեք զիս խելամուտ: Ի գառաճնցն լինելոց են գայլք, որ կոտորելոց են գաւրք գառիս: Անիծեալ լիցի օրն, յորում ծնայ: Որ լսելոցն իցէ՝ լուիցէ, և որ արհամարհելոցն իցէ՝ արհամարհեսցէ: Վասն զի լուեալ էր զնմանէ՝ թէ այր չար և անզգամ է: Ուր եղեն ժողովեալ հարք: Չի այս որդի իմ մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ: Մանրագորս բազում անգամ բժիշկք քուն ածեն այնոցիկ՝ որոց քուն հատեալ իցէ յայաց: Եւ նա ելանելոց է և ունելոց զաշխարհս, և ի սնոտի յոյս կապեալ կան անհաւատք. որպէս և Հրեայք՝ որ ի գուր ակնկալութիւն կապեալ կան, եթէ Դաւիթ գալոց է՝ շինել զԵրուսաղէմ: Անկեալ կայր այն Գարեգին ի մէջ անկելոցն:

Վարժություն 146. Թարգմանել գրաբար՝ ընդգծված բայերը դնելով համապատասխան բաղադրյալ ժամանակներով:

Ինչ որ լինելու է՝ կլինի: Դուք մի՛ քննեք իմ գործերը, որ կատարելու եմ: Եվ գրված էր նամակում այսպես: Ներս չէինք կարողանում մտնել, որովհետև դուրը փակված էր: Այդ խոսքերը լսած կլինի: Չեզանից մեկը մատնելու է ինձ: Նրա ջուրը աղբյուրի ակունքից է պոտորված: Եկել էին փղերով և անչափ գորքով: Եթե քաղցած լինի, կերակրիր նրան: Սրանք բնակվելու են Արարատյան գավառում: Հեռացել էին մեր երկրի սահմաններից: Եթե տեսնելու լինես նրան, ուղարկիր ինձ մոտ: Ճանապարհին որդիներից մեկը կորել էր: Ծնվել է օտար աշխարհում: Նրանց շտեմարանները լցված էին ցորենով:

Վարժություն 147. Թարգմանել՝ ուշադրություն դարձնելով ընդգծված բաղադրյալ ժամանակների և սեռական հոլովով խնդիրների իմաստի վրա:

Իմ զի աղ և հաց կերեալ է յաշխարհին ձերում, գութ և սէր ունիմ ընդ աշ-

խարհն ձեր: Հայր քո երդմնեցոյց զմեզ՝ մինչ չև վախճանեալ էր նորա: Լուեալ է իմ վասն քո և վասն բժշկութեանդ: Բայց թէպէտ և նորա ատերեալ էր ատորուշան մի, և բազում չարչարանօք հարեալ էր զպաշտօնեայս կրակին, ոչ ինչ զանգիտեաց զալ յատեան հրապարակին: Այլ յայսմ ամենայնէ յայտ է՝ եթէ ոչ երբէք լեալ է Չրուանայ հայր աստուածոց: Նոյնպէս և մուրութիւնն դիաց խաբեաց զիւցապաշտս Հայոց, եթէ զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիաց: Չի՞ կոչես ի խորհուրդ զայնոսիկ, որոց զոգիսն ձեր ի ձեռք քաղեալ՝ հանեալ է զանապականդ յապականութիւն: Լուեալ է մեր յառաջոցն՝ որք քարոզեցին զճշմարտութիւնն: Էր ոմն երիտասարդ ի քաղաքի, որոյ բազում և մեծամեծս չարիս գործեալ էր:

Վարժություն 148. Թարգմանել գրաբար՝ ընդգծված բայերը դնելով համապատասխան բաղադրյալ ժամանակներով, իսկ անունները (դերանուն, գոյական)՝ սեռական հոլովով:

Մենք լսել ենք նրա քաջության մասին: Ես պատվիրել եմ քեզ կերակրել: Նա իր երեսը ծածկել էր: Դուք չէ՞ք կարողացել այդ նամակը: Նրանք մոռացած կլինեն այս խոսքերը: Դու ինքդ ես ծնել մեզ: Մենք տեսել էինք այդ քաղաքը: Թագավորը չէր հայտնել իր խորհուրդը բոլորին: Նա տեսել է նրան: Գնելը խորհել էր սպանել քեզ: Դու խմե՞լ էիր այս ջրից: Դա եղել է շատ պատերազմներում: Դրանք են շինել այս գեղեցիկ ապարանքը:

ՎԱՄՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՆՎՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (Հատուած)

Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն՝ յոյժ ընդ անիւ՝ անկեալ է բնութիւն մարմնոյ. յամենայն հողմոյ շարժի, և յամենայն բանէ խռովի, և յամենայն իրաց դողայ. երազագէտ է այնպիսին ի կեանս իւրում, և յանգիտ կորուստն յուղարկի ի մահուան իւրում՝: Որպէս և ասաց ոմն ի հնումն. մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է: Որ զմահ ոչ գիտէ, երկրնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի մմանէ:

Եւ այս ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ: Կոյր զրկի ի ճառագայթից արեգական, և տգիտութիւն՝ զրկի ի կատարեալ կենաց: Լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք: Որպէս մեծ է ոգի քան զմարմին՝ այսպէս մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոց:

Եթէ ոք կարի առաւելեալ իցէ աշխարհական մեծութեամբ, և ⁴ մտօքն աղքատագոյն, այնպիսին ողորմելի է քան զբազումս. որպէս և տեսանեմք իսկ՝ ոչ միայն ի չափաւոր մարդիկ, այլ և յոր ⁵ մեծն է քան զամենայն: Թագաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իւր, ոչ կարէ ի վիճակին իւրում վայելուչ գոյ: Իսկ եթէ առ մարմնաւորս ⁶ այսպէս, որչափ և ս առաւել առ հոգևորն՝ ...:

Իսկ անօրէն իշխանն իբրև գիտաց եթէ յայտնեցաւ խորամանկութիւն խոր-

ՍԱԿԲԱՅ

§ 180. Գրաբարում մակբայները, ըստ իրենց արտահայտած իմաստի, լինում են չորս տեսակ՝ տեղի, ժամանակի, ձևի, չափի և աստիճանի:

Տեղի մակբայներ

Տեղի մակբայներն են՝ *այդր* (=այդտեղ), *այդրէն* (=այդտեղ, նույն տեղը), *այլուստ/յայլուստ* (=ուրիշ տեղից), *այլուր* (=ուրիշ տեղ), *այլ ուրեմն*, *այլ ուրեք* (=ուրիշ տեղ), *այսր* (=այստեղ), *այսր անդր* (=այս ու այն կողմ), *այսրէն* (=այստեղ, նորից այստեղ), *այտի/այդի* (=այդտեղից), *անդ* (=այնտեղ), *անդէն* (=այնտեղ, նույն տեղը), *անդուստ* (=այնտեղից, այն կողմից), *անդր* (=այնտեղ, դեպի այնտեղ), *անդրէն* (=նույն տեղը), *անտի* (=այնտեղից), *առաջուստ/յառաջուստ* (=առջևից), *աստ* (=այստեղ), *աստանօր* (=այստեղ), *աստէն* (=այստեղ, այստեղից), *աստի* (=այստեղից), *աստուստ* (=այստեղից), *արտաքուստ* (=դրսից), *արտաքս* (=դուրս), *ի բաց* (=հեռու), *բացուստ/ի բացուստ* (=հեռվից), *զճանապարհայն* (=ճանապարհին), *ի մօտոյ, ընդ մօտոյ* (=մոտից, մոտերը), *մօտ ի մօտ* (=իրար մոտ, մոտերը), *յայսկոյս* (=այս կողմ, այստեղ), *յայնկոյս* (=այն կողմ, այնտեղ), *յետս* (=ետ, դեպի ետ, ետևից), *յետուստ* (=ետևից), *ի ներքս* (=ներս), *ուստէք* (=մի տեղից), *ուրեք* (=մի տեղ), *ի վեր, ի վայր* (=վայր, ցած) և այլն:

Ժամանակի մակբայներ

Ժամանակի մակբայներն են՝ *ամարայնի* կամ *ամարանի* (=ամռանը), *ամ ըստ ամէ* (=տարեցտարի), *ամ յամէ, ամի ամի* (=տարեցտարի), *այգուն* (=առավոտյան), *ընդ այգս այգուն* (=առավոտյան), *այգուն այգուն* (=ամեն առավոտ), *այգուց/յայգուց* (=առավոտվանից, վաղը, առավոտյան), *այժմ այժմիկ, այնուհետև, այսուհետև, այսօր, անագան* (=ուշ), *անագան ուրեմն, ապա, առաւօտու/առաւօտուց* (=առավոտյան), *ընդ առաւօտն/ընդ առաւօտս* (=առավոտյան), *առժամայն* (=իսկույն), *առ ժամանակ մի* (=մի առ ժամանակ), *արդ* (=այժմ), *արդէն/արդէն իսկ, զարնանայնի* (=զարնանը), *գիշերայն/գիշերի* (=գիշերը, գիշերով), *դարձեալ, դեռ, դեռևս, եռանդ* (=երեկ չէ մյուս օրը), *երբ, երբեմն երբեմն, երբէք* (=երբեմն, մի անգամ, մի ժամանակ), *երբէք երբէք, երեկ, ժամանակ առ ժամանակ, ընդ ժամանակս ժամանակս/ըստ ժամանակս ժամանակս* (=ժամանակ առ ժամանակ), *իբրև* (=երբ), *իսկոյն, կանխաւ*

հրրդոյն, և պատրաստեալ հուրն՝ մինչև ուրուք ի նա փչեալ⁷ վառումն նորա յայտնի իմացաւ⁸ երկիւղածացն Աստուծոյ, սկսաւ ծածուկ նետիւք խոցոտել զմիտս իւրոյ չարութեանն. և անբժշկական վերս յոգիս և ի մարմինս տեսանէր⁹:

Մերք շանթեր գալարեր իբրև զօժ թինաւոր, մերք պարզեր գոչեր իբրև զառիւծ գայրացեալ. գելոյր, գլորեր, տապալեր երկդիմի մտօք և զխորհուրդս կանացն կամէր կատարել: Քանզի ճեռն արկանել և ունել ոչ կարէր,-վասն զի ոչ էին համագունդ ի միում վայրի առ նմա,-սկսաւ այնուհետև յառաջ կոչել զկրսերս յաւագաց և զանարգս ի պատուականաց և զտգէտս ի գիտնոց և զանարիս ի քաջ արանց. և զի¹⁰ մի մի թուիցեմ, այլ զամենայն զանարժանսն յառաջ մատուցանէր և զամենայն զարժանաւորսն յետս տանէր. մինչև զհայր և զորդի քակեր ի միմեանց:

Թէպէտ և ընդ ամենայն ազգս առնէր զանկարգութիւնս զայս, առաւել ընդ Հայոց աշխարհին մարտնչէր. քանզի տեսանէր զնոսա ջերմագոյն յաստուածապաշտութեան, մանաւանդ որք էին յազգէ նախարարացն Հայոց, և անմեղութեամբ ունէին զսուրբ քարոզութիւն առաքելոցն և զմարգարէից: Պատրէր զոմանս ի նոցանէ ոսկով և արծաթով, և զբագումն այլով եւս առատ պարգև օք. իսկ զոմանս ազարակօք և մեծամեծ գեղօք, զոմանս պատուովք և իշխանութեամբք մեծամեծօք: Եւ այլ և ս սնտոյի յոյս ոգւոց առաջին դներ. և այսպէս հրապուրէր և յորդորէր հանապազ. «Եթէ միայն, ասէ, զօրէնս մոգութեան յանձին կալջիք¹⁰, և զձեր նոյրութիւնդ սրտի մտօք դարձուսջիք ի ճըշմարտութիւն երեւելի մերոց դից օրինացս¹¹, ի մեծութիւնս և յաւագութիւնս հասուցից հաւասար իմոյ սիրելի նախարարացս, և առաւել և ս զանցուցից»¹²: Եւ այսպէս կեղծաւորութեամբ խոնարհեցուցանէր զինքն առ ամենեսեան, խօսելով ընդ նոսա ի պատճառս սիրոյ¹³, զի խորամանկութեամբ որսալ մարքասցէ զնոսա ըստ առաջին խորհրդականացն խրատուց: Եւ զայս առնէր սկսեալ ի չորրորդ ամէն մինչև մետասաներորդ ամն իւրոյ տէրութեանն:

(Եղիշէ, էջ 14-17)

¹ ընդ ահիւ-երկյուղի մեջ	բաների վերաբերմամբ
² յանգիտ կորուստն յուղարկի ի մահուան իւրում-մահանալիս	⁷ մինչև ուրուք ի նա փչեալ-դեռ ոչ որ նրա վրա չփչած
անդառնալի կորստյան է մատնվում	⁸ յայտնի իմացաւ-հայտնի դարձաւ
³ պետք է թարգմանել՝ տգետը	⁹ յոգիս և ի մարմինս տեսանէր-հոգիների և մարմինների համար պատրաստում էր
⁴ այստեղ՝ բայց	¹⁰ յանձին կալջիք-հանձն առնէք
⁵ բացակայող հարաբերյալի նախ-դիրը դրված է հարաբերականի վրա՝ փխ. ի նմա որ	¹¹ ի ճշմարտութիւն երեւելի մերոց դից օրինացս-մեր երևելի աստվածների կրոնի ճշմարտությանը
⁶ առ նախդիրը հայցականի հետ վերաբերության իմաստով՝ մարմնավոր	¹² առաւել և ս զանցուցից-էլ ավելի կբարձրացնեմ
	¹³ ի պատճառս սիրոյ- սիրո պատրվակով

(=շուտ), *հանապագա/հանապագորդ* (=միշտ, շարունակ), *հանապագոր* (=ամեն օր), *հերոս/ի հերոսն հետև* (=անցյալ տարի), *ձմերայնի/ձմերանի* (=ձրմուռանը), *մերթ ընդ մերթ, միս անգամ, միշտ, յայնժամ* (=այն ժամանակ), *յար* (=միշտ, շարունակ), *յարածամ* (=միշտ), *յախտեան, յորժամ* (=երբ), *նախ, նոյնհետայն* (=իսկույն), *նոյնժամայն* (=նույն ժամին, իսկույն), *վաղվաղակի* (=շուտով, իսկույն), *վաղի/ի վաղի անդր/ի վաղի/ան վաղի* (=հաջորդ օրը, վաղը, առավոտյան), *տարածամ* (=վաղաժամ), *ցանկ կամ ցանգ* (=միշտ, շարունակ, մինչև վերջ), *ցարդ/ցարդ և ս* (=մինչև այժմ), *օր ըստ օրե, օր քան օր* (=օրեցօր) և այլն:

Չև ի մակբայներ

Չև ի մակբայներն են՝ *ակամայ/յակամայ, այլ ընդ այլոց* (=տարբեր ձևով), *անձամբ անձին* (=ինքն իրեն, ինքն իր կողմից), *առաւելապէս, առնաբար/առնապէս* (=տղամարդու պէս, քաջաբար), *արագ, արագ արագ, ահ ընդ ահ* (=վախով/խելով), *արմատաքի* (=արմատով, արմատից), *աքացի* (=տոբով, քացով), *բերանացի* (=բերանով), *բռնի, բռնցի* (=բռով), *գլխիկայր, գլխովին/ի գլխիկովին, դիրաւ կամ դիրեաւ* (=հեշտ կերպով), *գուր/ի գուր, իւրովի/իւրովին, լռելեայն, խառն ի խառն, խիտ առ խիտ, կաղ ի կաղ/կաղ ի կաղս/կաղս ի կաղս* (=կաղալով), *կեղծս ի կեղծս* (=կեղծ, շինծու կերպով), *կենդանոյն* (=ողջ-ողջ), *կերպս կերպս/ի կերպս կերպս* (=զանազան ձևերով), *հազիւ, հազիւ հազիւ, ի հարկէ/հարկաւ* (=բռնի կերպով, ակամա), *ձեռն ի ձեռն* (=ձեռքով), *ճեպ ի ճեպոյ* (=շտապելով), *յանգէտս* (=չիմանալով), *յանպատրաստից, յանգզաստից/յանգզաստուց* (=հանկարծ), *ընդ վայր, վայրապար* (= իզուր տեղը), *վարկպարագի* (=վայրիվերո), *տարապարտուց/ի տարապարտուց* (=իզուր տեղը, իզուր), *փոթ ի փոթոյ* (=շտապելով) և այլն:

Չափի և աստիճանի մակբայներ

Չափի և աստիճանի մակբայներն են՝ *առաւել, բազում անգամ, գամ քան զգամ* (=քիչ-քիչ), *գամու գամու* (=շատ անգամ), *երկիցս* (=երկու անգամ), *երիցս* (=երեք անգամ), *կարի, կրկին, կրկնակի, հազ քան զհազ* (=քիչ-քիչ), *հասարակ առ հասարակ* (=հավասար չափով), *հնգիցս, յաճախ, յոլովակի/յոլով անգամ* (=շատ անգամ), *յոյժ, շատ, սաստիկ, ի սպառ, ստեպ, ստեպ ստեպ, վերստին/ի վերստին* և այլն:

§ 181. Կան մակբայներ, որոնք հաճախ գործածվում են մեկից ավելի մակբայական նշանակությամբ. այսպես, օրինակ՝ *անդ* մակբայը գործածվում է և՛ տեղի, և՛ ժամանակի իմաստով՝ Շինե անդ (=այնտեղ) տուն բնակութեան (Խոր., 1-ին, Ժ): Քանզի անդ (=այն ժամանակ) մոլեգնեալ այր իւրաքանչիւր...

զանային տիրել ի վերայ միմեանց (Խոր., 1-ին, Ժ):

Տարբեր մակբայական իմաստով են գործածվում նաև հետևյալ մակբայները. *անդէն* (1. այնտեղ, 2. այն ժամանակ), *անդրէն* (1. այնտեղ, նույն տեղը, 2. նորից), *աստ* (1. այստեղ, 2. այս ժամանակ), *աստէն* (1. այստեղ, այստեղից, 2. այս ժամանակից, այժմվանից), *անդուստ* (1. այնտեղից, 2. այն ժամանակից) և այլն:

§ 182. Գրաբարում շատ մակբայներ կազմվում են տարբեր խոսքի մասերից մակբայակերտ ածանցներով՝ *բար, պէս, օրէն, ակի, անակի, ոյն, այն, ի, ցի(ացի), իցս, եք(էք), աքի*. օրինակ՝ քաջաբար, առիժաբար, սաստկապէս, գեղեցկապէս, ազատօրէն, վաղվաղակի, փութանակի, միահաղոյն (=միանգամից, միաժամանակ), առժամայն, բռնի, բերանացի, բազմիցս, երբեք (երբեք), արմատաքի և այլն:

Վարժություն 149. *Թարգմանել, դուրս գրել տեղի մակբայները՝ դիմացը նշելով աշխարհաբար թարգմանությունը:*

Քանի՜ վարձկանք իցեն ի տան հօր իմոյ հացալիցք, և ես աստ սովամահ կորնչիմ: Յոտն կաց այդի, թող ես այդ բազմեցայց: Վասն որոյ արժան է մեզ աստանօր մեծ գործ կատարել: Եւ քարշեալ ի բաց ընկեցին զմարմինս նոցա: Մի՛ այլ ուրեք երթիցես քաղել հասկ: Ելանէին ի վեր, և կործանէին զպարիսպ նորա: Յարուցեալ թագաւորն ել արտաքս: Տեսեալ զնա ի բացուստ՝ ոչ ծանեան: Անդ էր տեսանել զբեկումն նիզակացն և զխորտակումն աղեղանց: Չեւլանեմ, քանզի աստէն մեռանիմ: Թողեալ էր զոմանս ի նախարարացն անդէն յաշխարհիւն Հայոց: Անթիւ բազմութիւն մարդկան ի ներքս բնակեցուցանէ:

Վարժություն 150. *Թարգմանել գրաբար՝ ընդգծված բառերը փոխարինելով համապատասխան տեղի մակբայներով (արտաքուստ, ի ներքս, անդր, աստ, յայսկոյս, անտի, ի հեռուստ, (յ)այլուստ, ի բաց, աստի, ի վայր, այտի, այլ ուրեք, արտաքս):*

Խորտակում էին դռները և դրսից ներս մտնում: Ամեն կողմերից հավաքվեցին այնտեղ: Այստեղ պետք է շինել արքունի ապարանքը: Այնտեղից եկան գետի այս կողմը: Հեռվից տեսան նրան և ճանաչեցին: Ուրիշ տեղերից բերում էին մթերքներ (համբաբս) և ուտում: Հեռու կացեք մեզանից: Այստեղից ընկավ ցած: Այդտեղից իջի՛ր և ուրիշ տեղ գնա: Նրանց դուրս հանեցե՛ք տանից: Հրաման տվեց նրան ներս կանչել:

Վարժություն 151. *Թարգմանել, դուրս գրել ժամանակի մակբայները՝ դիմացը նշելով աշխարհաբար թարգմանությունը:*

Ոչ կարի վաղ առնիցէ և ոչ յոյժ անագան: Գարձաւ անդրէն ի քաղաքն իւր

Տիգրան: Յորժամ յաջ ոտնս յենուի, զաջ լեառն ընդ գետին տանէի. յորժամ ի ձախ ոտնն յենուի, զձախ լեառն ընդ գետին տանէի: Ընդ առաւօտս առաւօտս քանային զորունս տաճարին: Վաղին պատասխանի արասցուք քեզ: Իսկ ի վաղիւ անդր մատուցեալ առնոյր հրաման դահճապետն վասն սրբոյն Գայիանայ սպանման: Խորշակահար լինի ամարայնի որդի անօրէն: Երբեմն տյն Յոհան անցանէր առ այգեօք ուրումն. և էր ժամանակ զայգիսն յատելոյ: Կամ զերկիր՝ որ հանապազ բրեմք, և ցանկ կոխեմք և զաղբ զմեր և զանասնոց մերոց ի նա հեղումք: Եւ երբէք երբէք խաւարեցուցանէ: Եւ անդէն թագաւորն ի ներքս կոչեցեալ զղայրապետն, հրամայէր գրել հրովարտակ: Վաղվաղակի հանէք զպատմութեանն առաջին և ագուցէք նմա: Եւ զկարգեալ ռոճիկ նոցա յարքունուստ՝ ամ յամէ թոշակ առնէին և տային տանել նոցա ի մխիթարութիւն:

Վարժություն 152. *Թարգմանել գրաբար՝ ընդգծված բառերը փոխարինելով համապատասխան ժամանակի մակբայներով (իբրև, ամարանի (ամարայնի), յայնժամ, վաղին, այգուն այգուն, ընդ առաւօտն, ընդ երեկս, առժամայն, հանապազ, վայր մի, օր քան օր):*

Երբ մտան տուն, տեսան հրավիրվածներին: Ամռանը պատրաստում է իր կերը (զկերակուր): Այն ժամանակ Հերովդեսը գաղտնի (գաղտ) կանչեց մոզերին: Սովոր էին երկրպագել արևին *ամեն առավոտ*: Իր մոտ կկանչի քեզ *վաղը* այս ժամին: *Առավոտյան դեմ* ծաղկում է, իսկ(և) *երեկոյան* թառամում: Երբ բուսնեց, իսկույն չորացավ տալից: *Շարունակ* լալիս էր և չէր մխիթարվում: Մնա դու այստեղ *մի փոքր*, մինչև մտնեն հարցնեն: *Օրեցօր* աճում էր և մեծանում:

Վարժություն 153. *Թարգմանել, դուրս գրել առանձին սյունակներում ձևի, չափի և աստիճանի մակբայները՝ դիմացը նշելով աշխարհաբար թարգմանությունը:*

Եւ ինայեալ՝ յանձն քո, մի՛ հեղուլ զարիւն եղբօր քո հարազատի՝ սպանանել զարդարն ի տարապարտոց յանխնայ: Չի յորժամ զտառապանաց բունիկն կամիցի շինել, բերանացի քաղէ տանի շիղս: Քանի՞ցս անգամ տուեալ է քեզ խրատ և պատուէր: Այլ և վիշապք, ասեն, և նհանգք կեղծս ի կեղծս լինին: Խոյս ետ յերեսաց նորա Դաւիթ երկիցս: Չի և ձեզ դրունք փակեցցին, և մի՛ մերձենայք ի սեղան իմ վայրապար: Եւ նոյնհետայն փոյթ ընդ փոյթ ազդ առնէ Փիլիպպոսի կասեր հռովմայեցոց, օգնականութիւն ի նմանէ խնդրելով: Որչափ մերձենայ, այնչափ առ սակաւ սակաւ աճէ ի նա լոյսն: Եթէ թողցես զնա՝ լքցէ զքեզ ի սպառ: Ամս տասն ստէպ ստէպ զայս օրինակ աւար առեալ զամենայն երկիրն յապականութիւն դարձուցանէր: Եւ կանգնեցան կացին ի վերայ ոտից իւրեանց, ժողովուրդ բազում յոյժ յոյժ: Յայնմ հետէ, թէ կամաւ կամաւ՝ և թէ ոչ

կամաւ, յարեալ թագաւորն Հայոց Արշակ... չոգաւ յանդիման եղև թագաւորին Պարսից Շապիոյ: Պեղեալ երկուս խորս յոյժ քաջախորս և սաստկապէս լայնս: Չօրն դարանակալ յանպատրաստից յանկարծօրէն յայլակարծուց զնոսս յանկարծուստ յիւրաքանչիւր բազմականի ի վերայ հասեալք ըմբռնէին:

Վարժություն 154. *Թարգմանել գրաբար՝ ընդգծված բառերը փոխարինելով համապատասխան ձևի և չափի ու աստիճանի մակբայներով (յանգգաստս, կենդանւոյն, ճեպով, սակաւ, յոյժ, բազում անգամ//յոյժով անգամ, տարապարտուց, երիցս, առատաբար, յաճախ, յոյժ, արմատաքի, առաւել):*

Հանկարծակի կհասնի մահվան օրը: Նրան գցեցին կրակի մեջ (ի հուր) և ողջ-ողջ այրեցին: Հրամայում էր շտապ ուղարկել դեսպաններ Հայոց երկիրը: Ուսուցանում էր նրանց քիչ խոսել և շատ իմանալ: Շատ անգամ տեսնում էք, բայց չեք զգուշանում: Ինչո՞ւ իզուր զրգռեցիր քո եղբայրներին: Երեք անգամ հարցրեց նրան: Շնորհիւր մեզ քո պարզ և ներք առատաբար: Հաճախ կանչում էր նրան իր մոտ և խիստ հանդիմանում: Ծառը արմատներով պոկեց հանեց: Մարտը ավելի էր սաստկանում:

ՎԱՄՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՆԱՅՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (Հատուած)

Իսկ արին Վարդան յառաջ մտուցեալ և զաւագանին¹ հարցանէր², և միաբան ամենեցուն խրատու զգորագլուխսն կարգէր.

Զգունդն առաջին տայր ի ձեռն իշխանին Արծրունեաց, և նիզակակից նմա զմեծ իշխանն Մոկաց. և զայն ամենայն նախարարեան³ համհարզս երկոցունց, և զամենայն բազմութիւն գնդին թևս աստի և անտի կազմէր նոցա:

Եւ զգունդն երկրորդ տայր ի ձեռն Խորենայ Խորխոռունոյ, և նիզակակից նմա զԸնծայինն և զՆերսէհ Քաջբերունի:

Եւ զգունդն երրորդ մատուցանէր ի ձեռն Թաթոյ Վանանդացոյ, և նիզակակից նմա հրամայէր զՏաճատ Գնթունի, և զբազումս ի քաջ արանց աստի և անտի ի թևս նոցա:

Յանձն իւր առնոյր զգունդն չորրորդ, և նիզակակից իւր զքաջն Արշալիր և զհարազատ եղբայրն իւր զՀամագասպեան:

Կարգէր և կազմէր զճակատն յորդորելով ընդ ամենայն երեսս դաշտին⁴ դէմ յանդիման Արեաց գնդին, առ⁵ ափն Տղմուտ գետոյն:

Եւ իբրև այս այսպէս պատրաստեցան, երկոքեան կողմանքն լի սրտմտութեամբ և մեծաւ բարկութեամբ զայրանային, և զազանացեալ զօրութեամբ յիրեարս յարձակէին և ամբոխ աղաղակին⁶ երկոցունց կողմանց՝ իբրև ի մէջ

ամպոց շփոթելոց՝ ճայթմունս գործեր⁷, և հնչումն ձայնից զքարանձաւս լե-
րանցն շարժեր: Ի բազմութենէ սաղաւարտիցն և ի փայլիւն պատենազէն վա-
ռելոցն իբրև նշոյլք ճառագայթից արեգական հատանէին: Նա և ի բազում շո-
ղալ սուտերացն և ի ճօճել բազմախումն նիզակացն իբրև յերկնուստ ահագին
հրաձգութիւնք եռային⁸: Քանզի ո՞վ իսկ է բաւական ասել⁹ զմեծամեծ տագ-
նապ ահաւոր ձայնիցն, որպէս կոփիւնք վահանատրացն և ճայթմունք լարից
աղեղանցն զլսելիս ամենեցուն առ հասարակ խլացուցանէին:

Անդ էլ տեսանել¹⁰ շտապ մեծի տագնապին¹¹ և զաղէտս անբաւ տարակու-
սանացն երկոցունց կողմանցն՝ առ ի յանդուզն յարձակմանէն զմիմեանս բա-
խելով. քանզի թանձրամիտքն յիմարէին և վատասիրտքն լքանէին. քաջքն
խիզախէին և նահատակքն գոչէին: Եւ խումբ արարեալ ամենայն բազմու-
թեանն՝ զգետն ի մէջ փակէին, և զանգիտեալ գունդն Պարսից ի դժուարութե-
նէ գետոյն՝ զտեղեանս զեռալ սկսան¹²: Իսկ գունդն Հայոց հասեալ անցա-
նէին¹², ձի ի վերայ առեալ¹³ յարձակէին մեծաւ զօրութեամբ. սաստկապէս
բախեալք ընդ միմեանս, յերկոցունց կողմանց բազում վիրաւորք յերկիր ան-
կեալ դիաքաւալ խաղային:

Յայնմ մեծ տագնապի ի վեր հայեցաւ քաջն Վարդան, և տեսանէր զըն-
տիր ընտիր քաջ նահատակաց Պարսից զօրուն, զի զճախակողմն շարժե-
ցին¹⁴ զՀայոց զնդին. մեծաւ ուժով յարձակէր ի տեղին, և զաջ թևն Պարսից
զնդին բեկեալ՝ արկանէր զգագանօքն¹⁵, և շրջան առեալ կոտորէր մինչև ի
նոյն տեղի: Եւ այնպէս շտապ տագնապի¹⁶ ի վերայ հասուցանէր, մինչև
գունդն Մատեան քակեալ բաժանեցան ի մեծամուր պատրաստութենէն, դեռ
և ս քաջ քաջ ի փախուստ դառնային¹⁷:

Ապա դէտակն ի վեր ամբառնայր¹⁸ Մուշկան Նիսալաւորտ, քակեալ գո-
մանս տեսանէր ի գնդէն Հայոց, և զկնի մնացեալ ի հովիտս լերանցն: Վասն
որոյ զաղաղակ բարձեալ՝ քաջալերէր շուրջ զիրեաւ զգօրս Արեաց, որք զտե-
ղի առեալ կային ընդդէմ զնդին Վարդանայ: Եւ անդէն ի տեղուցն երկոքին
կողմանքն զպարտութիւն խոստովանէին, և առ յոյժ թանձր անկեալ դիա-
կանցն իբրև զքարակոյտս դերբկաց երևէին¹⁹:

Չայն իբրև ետես Մուշկան Նիսալաւորտ, մնայր զագանացն Արտաշրի,
որ ի վերայ նոցա նստէր ի բարձր դիտանոցին իբրև յամուր քաղաքի. և ի
ձայն մեծ զալարափողոցն զիր գունդսն ստիպէր, և յառաջամարտիկ զօրօքն
զնա ի մէջ փակէր:

Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցօքն ոչ սակաւ նախճիրս ի
տեղուցն գործեաց, յորում տեղուց և ինքն իսկ արժանի եղև առնուլ զկատա-
րեալ նահատակութիւնն:

Եւ յերկարել գործոյ պատերազմին՝ օրն տարածամէր, և մօտ առ երեկս
կարճատէր²⁰. Բազմաց օրահասք մահու հասանէին, մանաւանդ ի թանձրու-
թենէ անկեալ դիականց մօտ առ մօտ խտացեալ իբրև զփայտահարս մայրա-
տրաց:

Անդ էր տեսանել զբեկումն նիզակացն և զխորտակումն աղեղանց. վասն
այնորիկ և ոչ կարէին կալ ճշմարտի ի վերայ սուրբ մարմնոյ երանելեացն²¹.
և սաստիկ խուճապ տագնապի²² էր կողմանցն երկոցունց անկելոց: Եւ որք
մնացեալքն էին՝ վատեալք և ցրուեալք լինէին ի լեռնադաշտս ամուր ձորոցն.
և յորժամ պատահէին միմեանց՝ դարձեալ միսանգամ²³ զմիմեանս սատա-
կէին: Եւ մինչև ի մուտս արեգականն անդադար լինէր գործ դառնութեանն²⁴:

Եւ քանզի գարնանային էր ժամանակն, ծաղկալից դաշտքն դառնային
յորդահոսանս արեանց բազմաց: Մանաւանդ յորժամ տեսանէր որ զբազմա-
կոյտ դիականցն անկելոց. սիրտն բեկանէր և աղիքն զալարէին՝ լսել զմոնչիւն
խոցելոցն և զմոնչիւնս բեկելոցն, զթաւալզոր խաղալ սողալ վիրաւորացն,
զփախուստ վատացն, զբաքուստ լքելոցն, զսրտաթափումն զանարի ա-
րանցն, զճչիւն կանացեացն, զողբս սիրելեացն, զաշխարտումն մերձաւորացն,
զվայ և զաւաղ բարեկամացն: Քանզի ոչ եթէ կողմ էր՝ որ յաղթեաց, և կողմ էր՝
որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն
մատնեցան:

Բայց քանզի անկեալ էր զօրավարն Հայոց ի մեծ պատերազմին, ոչ որ գոյր
այնուիտես ի մէջ զլխաւոր, յոր յեցեալ ժողովէին գունդք մնացելոցն: Թէպէտ և
բազում այն էր որ ապրեցան՝ քան թէ որ մեռանն, սակայն ցանեալ ցրուեցան,
և հասեալ անկանէին ի տեղիս տեղիս յամուրս աշխարհին, և բռնանային ի վե-
րայ բազում զաւառաց և բերդից, գոր և ոչ առնուլ իսկ որ կարէր:

(Եղիշէ, էջ 116-119)

¹ աւագանի-ավագներ, մեծամեծներ
² այս և հաջորդ բայերից շատերը գործած-
ված են անցյալ կատարյալի իմաստով
³ նախարարեան-նախարարներ
⁴ յորդորելով ընդ ամենայն երեսս
դաշտին-սփռելով ամբողջ դաշտի երեսին
⁵ առ նախդիրը հայցական հոլովի հետ
տեղի իմաստով՝ Տղմուտ գետի ափին
⁶ ամբոխ աղաղակին-աղմուկն ու աղաղակը
⁷ ճայթմունս գործեր-ճայթում էր

¹³ ձի ի վերայ առեալ-ձի նստած՝ հեծած
¹⁴ այստեղ՝ ընկճեցին
¹⁵ արկանէր զգագանօքն-հարձակվեց
զագանների վրա
¹⁶ շտապ տագնապի-շփոթ ու տագնապ
¹⁷ դեռ և ս քաջ քաջ ի փախուստ դառնային-
դեռ չպարտված փախուստի դիմեց
¹⁸ դէտակն ի վեր ամբառնայր-աչքերը
վեր բարձրացրեց
¹⁹ իբրև զքարակոյտս դերբկաց երևէին-

⁸ ահագին հրաձգութիւնը եռային-
 ահագին կրակ էր թափվում
⁹ ո՞վ իսկ է բաւական ասել-ո՞վ
 կարող է պատմել
¹⁰ անդ էր տեսանել-այնտեղ կարելի
 էր տեսնել, պետք էր տեսնել
¹¹ հոմանիչ է շտապ բառին
¹² ստորոգյալը համաձայնել է ենթակային
 ((գունդ) ըստ իմաստի, պետք է
 քարզմանել եզակի թվով

նմանվում էին խորդուբորդ քարակույտերի
²⁰ մօտ առ երեկս կարճատեր-
 երեկոյան դեմ դադարեց
²¹ ոչ կարելին կալ ճշմարտիս ի վերայ սուրբ
 մարմնոյ երանելեացն-չէին կարողանում ստույգ
 ճանաչել երանելիների սուրբ մարմինները
²² խուճապ ու իրարանցում
²³ մակբայական ավելադրութուն է
²⁴ վերացականը թանձրացականի
 փոխարեն

ԳԱՍ ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԳ

ՇԱՂԿԱՊ

§ 183. Գրաբարում շաղկապներն ըստ կիրառության լինում են երկու տե-
 սակ՝ ա) համադասական, բ) ստորադասական:

ա) Համադասական շաղկապներն են՝ *և* (=և, նաև, էլ), *և...և*, *և ս* (=ևս), *ե-
 թե... եթե* (=թե... թե), *թե... թե*, *այլ* (=բայց, իսկ, այլ), *այլև* (=այլև), *այլ և ս*
 (=այլև, էլ), *բայց* (=բայց, սակայն, այլ, իսկ, բացի), *սակայն, եթե, թե* (=թե, այս
 նշանակությամբ *եթե, թե* շաղկապները գործածվում են սովորաբար հարցա-
 կան նախադասություններում. օրինակ՝ Արժա՞ն է հարկ տալ կայսեր եթե ոչ
 (Մարկ., ԺԲ, 14)՝ Պե՞տք է կայսրին հարկ տալ, թե ոչ), *կամ, կամ... կամ, կամ
 թե... կամ թե* (=կամ...կամ, կամ թե), *ոչ եթե, ոչ թե... այլ, իսկ, մանաւանդ, մա-
 նաւանդ թե* (=մանավանդ, մանավանդ թե) և այլն:

բ) Ստորադասական շաղկապներն են՝ *զի* (=որ, որովհետև, որպեսզի),
քանզի (=որովհետև), *վասն զի* (=որովհետև, որպեսզի), *որպէս զի* (=որպէս-
 զի), *որովհետև, փոխանակ զի* (=նրա համար, որ. Եւ օրհնեսցին... ամենայն
 ազգք երկրի, փոխանակ զի լուար ձայնի իմում (Ծննդ., ԻԲ, 18)՝ Երկրի բոլոր
 ազգերը կօրհնվեն նրա համար, որ լսեցիր ինձ), *իբր զի/իբրև զի* (=որով-
 հետև), *իբրև թե* (=իբրև թե, իբր թե), *եթե* (=եթե, թե), թե (=թե, թե որ), *եթե... ա-
 պա, ապա թե ոչ, մինչ, մինչև, մինչդեռ* (=մինչ, մինչդեռ, քանի դեռ), *ուստի, այ-
 սինքն//այս է* (=այսինքն), *թէպէտ/թէպէտ և//թէ և* (=թէպէտ, թեև) և այլն:

Վարժություն 155. Թարգմանել, դուրս գրել առանձին սյունակներում հա-
 մադասական և ստորադասական շաղկապները՝ դիմացը նշելով աշխարհա-
 բար թարգմանությունը:

Մինչև յե՞րբ ոչ դադարիցես, հանդարտեա՛ զի և մեք խօսեսցուք: Եւ գիա-
 գար՝ եթէ ի տօթ ժամանակի ուտիցէ ոք, քանզի գովացուցիչ է, գտապս ի փո-
 ռոյն փարատէ, և եթէ ի հով ժամանակի ուտիցէ ոք, վնասէ: Յամենայն ծառոց
 որ է ի դրախտիդ՝ ուտելով կերիցես, բայց ի ծառոյն գիտութեան բարոյ ի չա-
 րի՝ մի՛ ուտիցէք: Եւ դատաւորք ստոյգ, որք դատին զչարագործս, ոչ եթէ չարք
 անուանին և չարչարիչք, այլ յոյժ բարիք և բարեգործք: Չի՞նչ շահ է՝ զի ծա-
 ռայեսցուք նմա, կամ զի՞նչ օգուտ՝ զի հանդիպեսցուք նմա: Եւ թէ այնպէս ինչ
 ոչ էր, ապա և ոչ նա զչարն իր որդի կոչէր: Հաճոյ թուեցաւ Հերովդի, ուստի և
 երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ և խնդրեսցէ: Իսկ զի՞ մկրտես, եթէ դու
 չես Զրիստոսն: Այլ ուստի՞ յայտ իցէ՝ թէ մայր գոյր. մանաւանդ զի ասեն իսկ՝
 թէ մինչ չև էր ինչ բնաւ, ոչ երկինք և ոչ երկիր: Դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ այ-
 լում ակն կալցուք: Բայց որովհետև ոչ կացէք յիմում պատուիրանին. դուք
 իբրև զմարդիկ մեռանիք: Կամ արարէք զծառն բարի և զպտուղ նորա բարի,
 կամ արարէք զծառն չար և զպտուղ նորա չար: Եւ կոչեաց զանուն նորա Բա-
 րիա. վասն զի ի չար ժամանակի ծնաւ: Թէպէտ և երկնչէին յահէ տէրութեանն,
 սակայն ի ծածուկ առ միմեանս զնոյն վկայութիւնս գովութեանց տային: Այլ
 թէ ինքն բարի էր, զչարն եղծանէր և բարոյն տայր զթագաւորութիւնն: Եւ ա-
 սէին բանս մխիթարութեան, իբրև թէ լաւ իցէ մարդոյ մահու չափ ճգնել՝ քան
 յայդպիսի օրինաց ուրանալ:

ՉԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

§ 184. Գրաբարի ձայնարկություններն են՝ աղէ՛ (=հապա, դե), ա՛յ, աւա՛ղ
 (=ափսոս), վա՛յ, վա՛հ, վա՛շ, եղո՛ւկ (=վա՛յ, վա՛խ, ափսոս), օ՛ն (=հապա), օ՛շ
 (=երանի), բարէ՛ (=արտահայտում է զարմանք), երանի՛, իցի՛ (=երանի), իցի՛
 թէ (=երանի թե) և այլն:

Վարժություն 156. Թարգմանել՝ դուրս գրելով ձայնարկությունները:

Վա՛յ քեզ, քաղաք, որոյ թագաւոր քո մանուկ է: Աղէ՛ տուր ինձ գիտել, ո՞վ են
 լերինքն այնքիկ՝ զորս ընդ ունց տանէիր: Ո՛հ, որ շինէ գտուն իւր՝ և ոչ արդա-
 րութեամբ, և զվերնայարկս իւր՝ և ոչ իրաւամբք: Եթէ ամպարշտեցայց՝ վա՛հ է
 ինձ: Ո՛, ո՛, փախերուք յերկրէ հիսիսոյ: Աւա՛ղ զրկանացս, աւա՛ղ թշուառական
 պատմութեանս: Եղո՛ւկ դու, Նիմուէ, ո՞վ իցէ որ հեծիցէ վասն քո: Ա՛յ, մի՛ լինիք
 տիրասպանուք: Օ՛ն անդր ի բաց թողցուք զխաւարային խորհուրդս մուրե-
 լոցն: Իցէ՛ թէ լուիցէ ինձ, կամ իրաւացուցանիցէ զբանս իմ: Ա՛հ, գութ և որոգայք
 ի վերայ ձեր, բնակիչք երկրի: Երանի՛ սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին:

ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՏԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

(Հատուած)

Իսկ կանայք երանելի առաքիներացն և կապելոցն և անկելոցն ի պատերազմին՝ ընդ ամենայն աշխարհն Հայոց համօրէն համարել ես ոչ կարեմ. զի բազում այն են՝ գոր ոչ գիտեմ, քան թէ գիտիցեմ¹: Չի հինգ հարիւրով չափ յականէ յանուանէ՝ ճանաչեմ. ոչ միայն որ աւագագոյնքն էին, այլ զբազումս ի կրսերագունաց անտի:

Ամենեքեան միահամուռ զերկրաւոր նախանձ բերելով, ոչ ինչ ընդհատ երևեցան յայնցանէ՝³ որ ոչ ճաշակեցին զաշխարհ: Քանզի եթէ աւագագոյնք էին, և եթէ մանկագոյնք, զմի առաքիներսն հաւատոյ զգեցան: Ոչ ինչ յիշեցին ամենսն զանուն փափկութեան մայրենի ազատութեանն, այլ իբրև մարդք, որ վշտամբերք լեալ իցեն անդստին ի շինական սովորութեանցն⁴, տանջելով վարեալ զկեանս աշխարհիս, անդրագոյնք և ս քան զնոսա՝⁵ յանձն առին զհամբերութիւն վշտաց:

Ոչ միայն յոգիսն մխիթարեալ կացին առ աներևոյթ զօրութիւն յուսոյն յափտենից, այլ և մարմնոյ նեղութեամբք առաւել և ս բարձին զբեռն ծանրութեան: Չի թէպէտ և ունէին զհորաքանչիւր ձեռնասուն սպասաւորս, ոչ որ երևէր ի նոցանէ՝ թէ որ տիկինն իցէ¹ և կամ որ նաժիշտն. մի հանդերձ էր հասարակաց, և միապէս զետնախշտիք երկոքեան: Ոչ որ ունէր անկողնարկ լինէր⁶. քանզի և չճանաչէին իսկ զխտեղէնսն ընտրել ի միմեանց. մի գոյն թխութեան փսիւրայիցն⁷, և մի գոյն սևութեան սնարից բարձիցն:

Ոչ գոյր նոցա խահամոքք անուշարար առանձինն, և ոչ հացարարք որոշեալ ի պէտս սպասու ըստ ազատաց կարգի, այլ հասարակաց էր⁸: Շաբաթամուտն ըստ կարգի միայնակեցաց⁹, որ յանապատս բնակեալ են: Ոչ որ ունէր ջուր ի ձեռս արկանէր, և ոչ կրտսերք աւագաց դաստառակս մատուցանէին. չանկաւ օշնան ի ձեռս փափկասուն կանանց, և ոչ մատուցաւ եղ ի զուարթութիւն խրախտութեան: Չեղան առաջի¹⁰ սուրբ սկտեղք, և ոչ անկան բաժակակալք յուրախտութիւն¹¹. չեկաց ուրուք նոցա նուիրակ առ դուրս¹², և ոչ կոչեցան պատուականք յարանց ի տաճարս նոցա, չիշեցան նոցա, թէ զուցէ որ ամենսն ին ի բնականունդ դայեկաց և կամ բնաւ ի սիրելի հարազատաց¹³:

Փոշոտեցան և ծխոտեցան սրահակք և սրկապանք նորեկ հարսանց, և սարդիոստայնք ձգեցան ի սենեակս առագաստաց նոցա. կործանեցան բարձրագահք տաճարաց նոցա. և խանգարեցան սպասք երախանաց նոցա. անկան կործանեցան ապարանք նոցա, և տապալեալ աւերեցան ամուրք¹⁴ ապաստանի նոցա: Չորացան ազագեցան բուրաստանք ծաղկոցաց նոցա, տաշտախիլ եղեն որք զինեքեր այգեաց նոցա:

Աչօք իրեանց տեսին զյափշտակութիւն արարոց իրեանց, և ականջօք իրեանց լուան զչարչարանս վշտից սիրելեաց իրեանց. առան զանձք իրեանց յարքունիս, և ոչ մնացին ամենսն ին զարդք երեսաց իրեանց:

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ գրգեալք և գգուեալք էին¹⁵ յիւրաքանչիւր բաստեռունս և ի գահատրակս, հանապազ բոկ և հետի երթային ի տունս աղօթից, անձանձրոյթ խնդրեալ ուխտիւք՝ զի համբերել կարասցեն մեծի նեղութեանն: Որ ի մանկութենէ իրեանց սնեալ էին ուղղովք զուրակաց և ամճովք էրեոց, խոտաբուտ կենօք իբրև զվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդութեամբ, և ոչ յիշէին ամենսն զսովորական փափկութիւնն: Սևացեալ ներկան մորքք մարմնոյ նոցա. վասն զի ցերեկ արևակէզք էին և զամենայն զիշերսն զետնաբեկք:

Սաղմոսք էին մշտնջենաւորք՝ մրմունջք ի բերանս նոցա, և մխիթարութիւնք կատարեալք ընթերցուածք մարգարէիցն: Միաբանեցին երկու երկու իբրև ամուրք հաւանք և հաւասարք՝ ուղիղ տանելով զակօսն արքայութեան, զի առանց վրիպելոյ հասցեն ի մաւահանգիստ խաղաղութեան:

Մոռացան զկանացի տկարութիւն, և եղեն արուք առաքիներք ի հոգևոր պատերազմին. մարտ եղեալ կռուեցան ընդ մեղսն կարևորս, հատին կտրեցին և ընկեցին զմահաբեր արմատս նորա: Միամտութեամբ յաղթեցին խորամանկութեան, և սուրբ սիրով լուացին զկապուտակ ներկուածս նախանձուն. հատին զարմատս ազահութեան, և չորացան մահաբեր պտուղք ոստոց նոցա: Խոնարհութեամբ կռիւցին զամբարտաւանութիւն, և նովին խոնարհութեամբ հասին երկնաւոր բարձրութեանն: Աղօթիւք բացին զփակեալ դրունս երկնից, և սուրբ խնդրուածովք իջուցին զհրեշտակս ի փրկութիւն. լուան աւետիս ի հեռաստանէ, և փառաւորեցին զԱստուած ի բարձունս:

Այրիք որ ի նոսա էին՝ եղեն վերստին հարսունք առաքիներսն, և բարձին յանձանց¹⁶ զնախատինս այրութեանն: Իսկ կանայք կապելոցն կամօք կապեցին զմարմնաւոր ցանկութիւնս, և եղեն կցորդ չարչարանաց սուրբ կապելոցն. ի կեանս իրեանց նմանեցին քաջ նահատակացն մահուամբ, և ի հեռաստանէ եղեն վարդապետք մխիթարիչք բանտարգելեացն: Մատամբք իրեանց վաստակեցին և կերակրեցան, և զկարգեալ ռոճիկ նոցա յարքունուստ՝ ամ յամէ բոշակ առնէին և տային տանել նոցա ի մխիթարութիւն: Անարիւն ճիպռանց նմանեցին, որ երգոյն քաղցրութեամբ առանց կերակրանաց կեան, և կենդանի են միայն զօղն ծծելով, զանմարմնոցն բերեն զմանութիւն:

Բազում ձմերաց հալեցան սառնամանիք¹⁷. Եհաս զարուն, և եկին նորեկ ծիծռունք. տեսին և խնդացին կենցաղասէր մարդիկ, և նոքա ոչ երբէք կարացին տեսանել զանձկալիսն իրեանց: Ծաղիկք զարնանայիւք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա, և աչք իրեանց կարօտացան տեսանել զցան-

ԳԱՍ ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԳ

§ 185. Գրաբարի շարահյուսությունն ունի շատ ընդհանրություններ արդի հայերենի շարահյուսության հետ, սակայն կան և զգալի տարբերություններ: Այս բաժնում կխոսվի հատկապես շարահյուսական այն երևույթների մասին, որոնք առանձնապես բնորոշ են գրաբարին:

1. ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

§ 186. Գրաբարում նախադասության անդամների շարադասությունն ընդհանրապես ազատ է, սակայն սովորական շարադասության համար կան որոշակի կանոններ: Դրանք են.

ա) Ենթական դրվում է ստորոգյալից թե՛ առաջ, թե՛ հետո. օրինակ՝ Արքայ յղեաց զիս առ ձեզ (Եղիշէ, էջ 161): Ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր (Ծննդ., Ա, 1):

Բ) Որոշիչը դրվում է որոշյալից և՛ առաջ, և՛ հետո, սակայն տարածվածը նախադաս գործածությունն է. օրինակ՝ Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցօքն ոչ սակաւ նախճիրս ի տեղտջն գործեաց (Եղիշէ, էջ 118): Ահա ետու քեզ սիրտ իմաստուն և հանճարեղ (Գ Թագ., Գ, 12):

գ) Հատկացուցիչը դրվում է հատկացյալից և՛ առաջ, և՛ հետո, սակայն տարածվածը ետադաս գործածությունն է. օրինակ՝ Իշխեցէք ձկանց ծովու և թռչնոց երկնից (Ծննդ., Ա, 28): Սերմն նորա դեղ է (Եզնիկ, 1-ին, ԺԵ): Որ հայի ի կողմն ծովակին ի գետոյ կուսէ (Բուզ., 4-րդ, ԾԹ): Իմ որդին անուշահոտ և լուսատու է (Եզնիկ, 2-րդ, Ա):

Ծանոթություն. Հարցական-հարաբերական դերանուններով արտահայտված ենթակաները, որոշիչները և հատկացուցիչները լինում են նախադաս. օրինակ՝ Ո՞վ էս դու (Եզնիկ, 2-րդ, Ա): Որ սիրէ զխրատ, սիրէ զիմաստութիւն (Առակ., ԺԲ, 1): Որոք ոգիքն թուլացեալ են յերկնատր առաքինութենէն (Եղիշէ, էջ 14): Չինչ անցք անցանելոց իցեն ընդ նա (Մարկ., Ժ, 32):

դ) Բացահայտիչը դրվում է բացահայտյալից հետո. օրինակ՝ Սառա, կին Սարգիսի, ոչ ծնանէր նմա (Ծննդ., ԺԶ, 1): Առաքէ զՍմբատ ասպետ, զհայր Բագարատայ (Խոր., 2-րդ, ԶԳ):

ե) Սովորաբար իրենց լրացյալից հետո են դրվում կողմնակի անդամները, այսինքն՝ դերբայների, բայանունների, ածականների և թիվ ու քանակ ցույց սովոր բառերի լրացումները. օրինակ՝ Եւ տեսեալ զնա Ջրուանայ, ոչ զիտաց ե-

կալի գեղ երեսաց նոցա: Սպառնեցան բարակք որսականք, և խցեալ կուրացան¹⁸ արշաւանք որսորդաց: Բնագրօք յիշատակեցան նոքա, և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ածին զնոսա ի հեռաստանէ. ի ճաշատեղս նոցա հայեցան և արտասուեցին, և յամենայն յատեանս յիշեցին զանուանս նոցա: Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա:

Եւ իբրև այնպէս յամենայն կողմանց պէկոծ լինէին միտք նոցա, ոչ ինչ կասեալ թուլացան յերկնատր առաքինութենէն: Արտաքնոցն երևէին իբրև այրիք սգաւորք և չարչարեալք, և յոգիս իւրեանց զարդարեալք և մխիթարեալք երկնատր սիրով:

Ոչ և ս սովորեցին հարցանել զեկեալ ոք ի հեռաստանէ, եթէ երբ լինիցի մեզ տեսանել զսիրելիսն մեր...:

(Եղիշէ, էջ 199-203)

¹ առաջին ապառնին ներկայի իմաստով
² յականէ յանուանէ-անունով, ամձամբ
³ ոչ ինչ ընդհատ երևեցան յայնցանէ-ամենևին պակաս չմնացին նրանցից
⁴ որ վշտամբերք լեալ իցեն անդատին ի շինական սովորութեանցն-որոնք հենց սկզբից ներդրությունների են համբերել շինականների սովորությունների օրինակով
⁵ անորոգոյնք և ս քան զնոսա-նրանցից է՛լ ավելի
⁶ ոչ ոք ումեք անկողնարկ լինէր-ոչ մեկը մյուսի համար անկողին չէր գցում
⁷ մի գոյն թխութեան փսիրայիցն-մին նույն թուխ գույնն ունեին փսիաթները
⁸ այլ հասարակաց էր-այլ (այլ ամենը) ընդհանուր էր
⁹ ստորոգյալը (անցուցանէին) բացակայում է
¹⁰ չեղան առաջի-չդրվեցին (նրանց) առջև

¹¹ և ոչ անկան բաժակակալը յուրախութիւն-և ոչ էլ բաժակակալներ տրվեցին ուրախության համար
¹² չեկաց ուրոք նոցա նուիրակ առ դուրս-նրանցից ոչ մեկի դռների մոտ սպասավոր չկանգնեց
¹³ չիշեցան նոցա, թէ գուցէ ոք ամենևին ի բնականունը դայեկաց և կամ բնաւ ի սիրելի հարազատաց-նրանք չիշեցին, թէ գուցէ սնուցանող որևէ դաստիարակ կամ մի սիրելի հարազատ ունեն
¹⁴ այստեղ՝ *ամբոց* իմաստով
¹⁵ որ գրգեալք և զգուեալք էին -որոնք փափուկ կյանքով ու քնքուշ մեծացել էին
¹⁶ բարձին յանձանց-իրենց վրայից վերացրին
¹⁷ այստեղ՝ սառույցներ
¹⁸ խցեալ կուրացան. այստեղ՝ բոլորովին դադարեցին

թէ ո ոք իցէ (Եզնիկ, 2-րդ, Ա): Եւ յերկարել գործոյ պատերազմին՝ օրն տարա-
ժամէր (Եղիշէ, էջ 118): Սպանումն *Արգամայ* և որդոց նորա (Խոր., 2-րդ, ԾԱ):
Ետես այր մի կոյր *ի ծնէ* (Յովհ., Թ, 1): Հինգն *ի նոցանէ* յիմարք, էին, և հինգն՝
իմաստունք (Մատթ., ԻԵ, 2):

Վարժություն 157. *Դուրս գրել 30-րդ դասի ընթերցանության հատվածից ենթակայի և ստորագայի, որոշյի և որոշյայի, հատկացուցչի և հատկացյալի, բացահայտչի և բացահայտյալի կապակցությունները և որոշել՝ ենթակա-
ները, որոշիչները, հատկացուցիչները և բացահայտիչները նախադասումն են գործածված, թե՞ ետադաս:*

2. ՀԱՍԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ

§ 187. Ենթակայի և ստորագայի, բացահայտչի և բացահայտյալի, հատ-
կացուցչի և հատկացյալի համաձայնությունը գրաբարում ընդհանուր առ-
մամբ նույնն է, ինչ որ արդի հայերենում: Նկատելի են հետևյալ առանձնա-
հատկությունները:

1. Եզակի կամ հոգնակի նշանակությամբ անեզական անուններով արտա-
հայտված ենթակաների ստորոգյալը սովորաբար դրվում է հոգնակի թվով. օ-
րինակ՝ *Եղիցին կամք քո* (Մատթ., Զ, 10): *Ուստի չարիքն* յաշխարհ *մտին* (Եզ-
նիկ, 2-րդ, Գ): *Փառքն ոչ եթէ անձնատր ինչ են* (Եզնիկ, 2-րդ, Գ): Հավաքա-
կան իմաստ արտահայտող եզակի ենթակաների ստորոգյալը կարող է դրվել
հոգնակի թվով. օրինակ՝ *Տիրեցին* աշխարհիս Հայոց *ազգն* Սանասայ պարս-
կի (Եղիշէ, էջ 6):

2. Որոշիչը, եթե նախադաս է, սովորաբար հոլովով ու թվով չի համաձայ-
նում իր լրացյալին, իսկ եթե ետադաս է՝ համաձայնում է. օրինակ՝ Հրաման
տայր *կապեալ ոտիք...* խաղացուցանել զնա յԱյրարատ գաւառ (Ազ., ԺԱ,
122): Եւ յետ *հազար ամի* յաշտ առնելոյ՝ սկսաւ ածել զմտաւ (Եզնիկ, 2-րդ, Ա):
Երգօք հոգևորօք և բարձրագոյն օրհնութեամբք ի քաղաքն դառնային (Կոր.,
Թ): (Տե՛ս գոյականի հետ ածականների, դերանունների, թվականների, դեր-
բայների գործածությանը վերաբերող բաժինները):

3. Եթե հատկացուցիչն արտահայտված է ստացական դերանուններով,
սովորաբար հոլովով ու թվով համաձայնում է հատկացյալին. օրինակ՝ Եւ առ
ի պտղոյ նորա, եկեր և ետ *առն իրում* (Ծննդ., Գ, 6): (Տե՛ս գոյականի հետ
ստացական դերանունների գործածությանը վերաբերող բաժինը):

Վարժություն 158. *Դուրս գրել 33-րդ դասի ընթերցանության հատվածից ենթակայի և ստորագայի, որոշյի և որոշյայի, հատկացուցչի և հատկացյալի
կապակցությունները՝ բացատրելով դրանց համաձայնության կանոնները:*

§ 138. Հոլովների գործածությունը գրաբարում ընդհանուր առմամբ նույնն
է, ինչ որ արդի հայերենում: Նկատելի են գրաբարին բնորոշ հետևյալ հիմնա-
կան առանձնահատկությունները:

1. Հայցական հոլովով կարող են դրվել.

ա) Խնդրառու բայի արմատից կազմված կամ նրան իմաստով մոտ լրա-
ցումները, որոնք աշխարհաբար թարգմանվում են գործիական հոլովով. օրի-
նակ՝ *Երկեան երկիտ* (=երկյուղով) մեծ (Դուկ., Բ, 9): *Մեծացաւ մեծութիւն* (=մե-
ծությամբ) յոյժ (Դան., Ը, 8): *Կոծեցան* զնա անդ *կոծ* (=կոծով) մեծ (Ծննդ., Ծ,
10): *Խնդացին* յոյժ *ուրախութիւն* (=ուրախությամբ) մեծ (Մատթ., Բ, 10):

բ) Խիստ հազվադեպ ենթական, որի մոտ դիմավոր բայի փոխարեն գոր-
ծածվում է անորոշ դերբայը. օրինակ՝ Կամին *զձեզ* իմաստունս լինել ի բարիս
և անմեղս՝ ի չարիս (Հռով., ԺԶ, 19)=Կամին, զի դուք իմաստունք լիջիք ի բա-
րիս և անմեղս՝ ի չարիս:

2. Սեռական հոլովով դրվում են.

ա) Նույն նախադասության անցյալ դերբայի և հաջորդ դիմավոր բայի
ընդհանուր ենթական, որն աշխարհաբար թարգմանվում է ուղղական հոլովով
(տե՛ս § 116). օրինակ՝ Մատուցեալ *Արհմենին* առաջի Չրուանայ՝ ասէ ցնա
(Եզնիկ, 2-րդ, Ա): Արդ անկեալ *ժառայակցին* առ ոտս նորա, աղաչէր զնա և
ասէր (Մատթ., ԺԸ, 29):

բ) Եմ օժանդակ բայի եզակի 3-րդ դեմքերով և անցյալ դերբայով կազմ-
ված բաղադրյալ ժամանակներում ենթակայի իմաստով գործածված խնդիր-
ները (տե՛ս § 176). օրինակ՝ Չպայն իսկ *իմ* աչօք *տեսեալ* է (Եզնիկ, 1-ին, ԻԵ):
Եթէ զոմն Արտաւագդ անուն *արգելեալ իցէ դիւսց* (Եզնիկ, 1-ին, ԻԵ):

գ) Ածականներից *ութիւն* ածանցով կազմված և սովորաբար որոշյի իմաս-
տով գործածվող վերացական գոյականները, որոնք աշխարհաբար թարգ-
մանվում են որպես ածական (տե՛ս § 157). օրինակ՝ Բարձին զբեռն *ծանրու-
թեան* (Եղիշէ, էջ 200)=Կրեցին ծանր բեռը: Այսպես նաև՝ ոյժ պնդութեան,
խորհուրդ ամբարշտութեան, պաշտօն պղծութեան, գոյն թխութեան, ողջոյն
մարդասիրութեան և այլն:

Այսպիսի կապակցություններում սեռական հոլովով է դրվում լրացյալը, իսկ
ութիւն ածանցով վերացական գոյականը դառնում է հատկացյալ, որն աշ-
խարհաբար դարձյալ թարգմանվում է որպես որոշիչ. օրինակ՝ Իսկ անօրէն
իշխանն իբրև զիտաց եթէ յայտնեցաւ *խորամանկութիւն խորհրդոյն* (Եղիշէ,
էջ 16)՝ *խորամանկութիւն խորհրդոյն*=խորամանկ խորհուրդը: Այսպես նաև՝
քաղցրութիւն բանջարացն, անպակասութիւն հացի և զիտոյ, հարթութիւն
դաշտաց, բազմութիւն նետիցն, կարծրութիւն նիւթոյ և այլն:

դ) Չափ ու քանակի սեռականը (մասնական սեռական). օրինակ՝ Տուեալ

լիցի քեզ թագաւորութիւնն *ինն հազար ամի* (Եզնիկ, 2-րդ, Ա): Եւ Սողոմոն տայր Քիրամայ *քսան հազար բոռ ցորենոյ* և *քսան հազար սափոր իւղոյ* (ԳԹագ., Ե, 11): Այսպէս նաև՝ ափ մի գարոյ, տիկ մի գինոյ, հինգ նկանակ հացի, հազար սիկղ արծաթոյ, տաղանդ մի արծաթոյ, բեռն մի փայտի և այլն:

Այս կապակցութիւնները կարող են հողովիլ. օրինակ՝ Վասն *սփոյ միոյ գարոյ* և *կոտորոյ միոյ հացի* (Եզեկ., ԺԳ, 19): *Ի տաղանդէ միոյ ոսկոյ* սրբոյ արար գնա (Ելք, ԼԷ, 24): Այսպէս նաև՝ յիսուն սկեղ արծաթոյ, միոյ ատուր կեանք, երիս ալեր նաշոյ և այլն:

ե) Ոճական նկատառումով իրար մոտ դրված հոմանիշ կամ նույնանիշ բառերից երկրորդը. օրինակ՝ Ընկալաք *զհրաման պատուիրանի* (Եղեիշէ, էջ 5)=Ստացանք պատվեր ու հրաման: Գայր տալ *մարտ պատերազմի* (Ագ., Դ, 39)=Գալիս էր պատերազմ տալու (պատերազմելու): Այսպէս նաև՝ գկանս ցանկութեանն (կամքն ու ցանկությունը), գելս կատարածի (վերջը, վախճանը), գխորհուրդ կամացն (կամքն ու խորհուրդը), խունաս տագնապի և այլն:

գ) Ամ բառը, երբ գործածվում է *տարիք* իմաստով. օրինակ՝ Եւ եղև Աբրամ *ամսց իննսուն և ինունց* (Ծննդ., ԺԷ, 1): Եւ էր Իսահակ *ամսց քառասնից* (Ծննդ., ԻԵ, 20):

3. Տրական հողովով դրվում են.

ա) Եղանակիչ բայերի մոտ ենթակայի իմաստ արտահայտող բառը, որն աշխարհաբար թարգմանվում է ուղղական հողովով (տես § 174) օրինակ՝ *Նմա պարտ էր առնել գերկինս և գերկիր* (Եզնիկ, 2-րդ, Գ)=Նա պիտի ստեղծեր երկինքն ու երկիրը:

բ) Անորոշ դերբայի մոտ կողմնակի ենթական, որն աշխարհաբար թարգմանվում է որպէս երկրորդական նախադասության ենթակա, իսկ անորոշ դերբայը՝ դիմավոր բայով. օրինակ՝ Ոչ կամինք *թագաւորել դմա* ի վերայ մեր (Դուկ., ԺԹ, 14)=Չենք կամենում, որ դա թագավորի մեզ վրա: Մի՛ պատահեսցէ *ինձ թողուլ* զքեզ և դառնալ (Հուրթ, Ա, 16)=Թող չպատահի, որ ես քեզ թողնեմ և վերադառնամ: Եւ ի հայեցուածոցն դժնութենէ ասեն *պայթել* որձաքար *վիմացն* (Խոր., 2-րդ, ԽԲ)=Ասում են, որ որձաքար վեմերը պայթելիս են եղել՝ հայացքի չարությունից:

4. Բացառական և գործիական հողովներով դրվում են չափ ու քանակ ցույց տվող բառերը, որոնք պատասխանում են որքա՞ն հարցին. օրինակ՝ *Ի տասն կանգնոյ* (=տասը կանգուն) գերկայնութիւն միոյ սիւնակին առնիցես (Ելք, ԻԶ, 16): *Կանգնաւ և կիսով* (=մեկ ու կես կանգուն) յերկայնութիւն, և *կանգնաւ և կիսով* ի լայնութիւն, և *կանգնաւ և կիսով* ի բարձրութիւն (Եզեկ., Խ, 42): Եւ արասցես գնա չորեքանկիւնի, *թգաւ* (=մի թիզ) յերկայնութիւն և *թգաւ* ի լայնութիւն (Ելք, ԻԸ, 16):

Ընդ նուագել ժամանակաց թագաւորութեանն Պարթևաց, ի բառնալ տէրութեանն յԱրտաւանայ որդոյ Վաղարշու, ի սպանանել գնա Արտաշրի որդոյ Մասանայ,- որ էր նախարար ոմն ի Ստահր գաւառէ, որ եկեալ միաբանեաց զգօրս Պարսից, որք լիին խոտեցին մերժեցին անարգեցին զտէրութիւնն Պարթևաց, և հաճեցան հաւանութեամբ ընտրել զտէրութիւնն Արտաշրի որդոյ Մասանայ,-արդ իբրև յետ մահուն հասանելոյ գուժիս այսորիկ առ Խոսրով թագաւորն Հայոց,-որ էր երկրորդ տէրութեանն Պարսից, զի որ Հայոց թագաւոր էր՝ նա էր երկրորդ Պարսից տէրութեանն,-արդ՝ թէպէտ և վաղու՞ լուեալ զբօքն՝ ոչ ինչ ժամանեաց հասանել յամբովկ գործոյն՝ պատերազմի իրացն պատրաստութեան՝: Յետ այսորիկ դարձեալ լինէր յիրացն եղելոց՝ մեծաւ տրտմութեամբ, զի ոչ եհաս՞ ինչ նմա գործել գործ, ի մեծ ի տրտմութենէն և յիրացն վճարելոյ՝ դարձեալ անցեալ եկեալ լինէր յաշխարհ իւր:

Արդ՝ ի միւս և ս ի գլուխ տարւոյն սկսանէր Խոսրով թագաւորն Հայոց գունդ կազմել և զօր բովանդակել, գումարել զգօրս Աղուանից և Վրաց, և բանալ ըզդրոնս Ալանաց և զճորայ պահակին, հանել զգօրս Հոնաց, ասպատակ դնել ի կողմանս Պարսից, արշաւել ի կողմանս Ատրեստանի, մինչև ի դրոնս Տիսրոնի: Աւար առեալ գերկիրն ամենայն՝ յապականութիւն դարձուցանէր զշինանիստ քաղաքացն և աւանացն ցանկալեաց. զէն երկիրն ամենայն թափուր և աւերակ թողոյր. ջնջել ի միջոյ ի բաց կորուսանել, խլել քակել, հիմն ի վեր ջանայր առնել, համարէր՝ բառնալ զօրէնս տէրութեանն Պարսից: Ուխտ եղեալ միանգամայն՝ վրէժ խնդրել մեծաւ քինութեամբ զանկանելն իւրեանց ի տէրութենէն. սպառ սպուռ ջանայր զվրէժ խնդրել, մեծաւ քինու նախանձաբեկ լինելով. մեծամեծս փքայր՝ ի բազմութիւն՝ զօրացն ասպատան եղեալ, և ի քաջութիւն՝ զօրացն յուսացեալ: Վաղվաղակի ի թիկունս հասանէին մեծաւ բազմութեամբ ժիր և քաջ առն և ձիոյ և բուռն կազմութեամբ Աղուանք, Լփինք և Ճիղպք, Կասպք և այլ և ս որ ի սմին կողմանց, զի զվրէժ արեանն Արտն անայ խնդրեսցեն:

... Առեալ Խոսրովու զբազմութիւն զօրացն իւրոց, և որ ուստեք ուստեք եկեալ հասեալ էին ի թիկունս օգնականութեան նիզակակիցք գործոյն պատերազմի: Իսկ իբրև ետես թագաւորն Պարսից զայն ամբոխ բազմութեան՝ զընդի, զի մեծաւ ուժով դիմեալ եկեալ հասեալ էին ի վերայ նորա՝ ել և նա ընդ առաջ նոցա ի պատրաստութիւն պատերազմի: Բայց սակայն ոչ կարաց ունել զդէմ նորա, փախստեալ լինէր առաջի նոցա. զիտ մտեալ կոտորէին զամենայն զօրսն Պարսից, և դաշտացն և ճանապարհացն ցիր դիաթաւալ կացու-

ցանէին¹² և չարախտավար վատնէին¹³ և անհնարին հարուածս ի վերայ հատուցանէին: Եւ թագաւորն Հայոց դառնայր ի մեծ կոտորածէն մեծաւ յաղթութեամբ և բազում աւարաւ և ցնծալից ուրախութեամբ ի կողմանս Հայոց յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք, մեծաւ ուրախութեամբ և բարի անուամբ և բազում աւարաւ:

Ապա հրաման տայր ընդ կողմանս կողմանս դեսպանս արձակել, հրովարտակս առնել, յեօթն բազինս մեհենիցն ուխտաւոր լինել պատկերաց կռոց դիցն պաշտաման: Սպիտակ ցլուք և սպիտակ նոխագօք, սպիտակ ձիովք և սպիտակ ջորովք, ոսկեղէն և արծաթեղէն զարդուք, ի վերջաւորս փողփողեալս, նշանակապ պալարակապ մետաքսիւքն և ոսկովք պսակօք և արծաթի գոհարանօք, յանօթս ցանկալիս ակամբք պատուականօք, ոսկով և արծաթով, ի հանդերձս պայծառս և ի զարդս գեղեցիկս, զիր ազգին Արշակունեաց զհայրենեացն պաշտամանց տեղիսն մեծարէր: Նա և հինգերորդ և ս հանէր¹⁴ յամենայն մեծամեծ աւարացն ածելոց, և մեծամեծ պարզս և քրմացն շնորհէր: Իսկ զօրացն որ զիրեան էին՝ ետ պարզս և արձակեաց յիրմէ:

Իսկ ի գալուստ ամին միւսոյ զօր բազում կուտէր յոյժ, գումարտակ առնէր, զնոյն զօր կոչէր, և և ս բազում քան զնոյն ասպատակ սփռեալ զկողմամբքն Ասորեստանի. մանաւանդ զի և զօրք Տաճկաց ի թիկունս եկեալ էին. աւար առեալ զերկիրն ամենայն՝ քաջութեամբ դառնային յիրաքանչիւր տեղիս: Եւ ամս մետասան ստէպ ստէպ զայս օրինակ աւար առեալ՝ աւերէին զամենայն երկիր սահմանացն, որ ընդ Պարսից թագաւորութեամբն և ընդ իշխանութեամբն էր:

(Ագաթանգեղոս, էջ 11-19)

¹ ընդ նախդիրն անորոշ դերբայի հայցական հոլովի հետ ժամանակի իմաստով՝ երբ վերջացան, վերջանալիս
² վաղու-վաղուց
³ ամբովկ գործոյն-գործի ավարտը
⁴ ոչ ինչ ժամանեաց հասանել յամբովկ գործոյն պատերազմի իրացն պատրաստութեան-չկարողացալ պատերազմի պատրաստութիւնն ավարտել
⁵ յիրացն եղելոց-ավարտված՝ կատարված դեպքերից
⁶ ոչ եհաս. այստեղ՝ չհաջողվեց

⁷ ասպատակ դնել-ասպատակել
⁸ համարել. այստեղ՝ ջանալ, ձգտել
⁹ միանգամայն. այստեղ՝ միաժամանակ
¹⁰ ի նախդիրը հայցական հոլովի հետ *վրա* իմաստով
¹¹ նույնանիշ է ամբոխ բառին
¹² ցիր դիաթաւալ կացուցանէին- դիակներ էին փռում
¹³ չարախտավար վատնէին-դաժանորեն
¹⁴ ցրիվ էին տալիս՝ կոտորում էին
¹⁴ հինգերորդ և ս հանէր-հինգերորդ մասն էլ բաժին էր հանում

ԴԱՍ ԵՐԵՍՈՒՆՆԻՆԳԵՐՈՐԴ

ՀՈՂԵՐ

§ 189. Գրաբարի հողերն են՝ *ս, դ, ն*, որոնք գործածվում են ցուցական, դիմորոշ, ստացական և որոշիչ իմաստներով:

1. Ցուցական իմաստով գործածվելիս արտահայտում են *այս, այդ, այն* դերանունների նշանակությունը. օրինակ՝ Ընկեցէք զիս ի ծովդ (Յովհ., Ա, 12)=Գցե՛ք ինձ այդ ծովի մեջ: Ես ատերակացս ո՞ւմ թագաւորեմ (Խոր., 2-րդ, ԿԱ)=Ես այս ավերակների վրա ո՞ւմ (ինչպե՞ս) թագավորեմ: Ես այս է պատճեն հրովարտակի՛ն (Եղիշէ, էջ 71) =Եվ այս է այն գրութեան պատճեն:

2. Դիմորոշ իմաստով գործածվելիս արտահայտում են *ես, դու, մեք, դուք* դերանունների նշանակությունը. օրինակ՝ Ես արդ եթէ ես լուսցի գոտս ձեր, տէրս և վարդապետս (Յովհ., ԺԳ, 14)=Եվ արդ՝ եթէ ես՝ տերս և վարդապետս, լվացի ձեր ոտքերը: Չորմէ դուդ ասացեր (Երեմ., ԼԲ, 43)=Որի մասին դու ինքդ ասացիր:

3. Ստացական իմաստով գործածվելիս այդ հողերը արտահայտում են *ին, քո, մեր, ձեր, իր, իրեանց, նորա, նոցա* դերանունների նշանակությունը, որոնց հետ էլ հաճախ գործածվում են. օրինակ՝ Եկին լցին զաշխարիս Հայոց (Բուզ., 5-րդ, ԾԵ)=Եկան լցվեցին (բառացի՝ լցրին) մեր Հայոց աշխարհը: Քաղցրացո՛ղ զդառնութիւն սրտիդ (Եղիշէ, էջ 167)=Քաղցրացրու քո սրտի դառնությունը: Ի մարմինդ քո բուսցի փուշ և տատասկ (Բուզ., 6-րդ, Թ)=Քո մարմնի վրա թող բուսնի փուշ և տատասկ: Ձի որ լաւ ոք եկեալ յաշխարհ մեռանէր, վասն յիշատակի քաջութեանն զպատկերն երանգօք ի նկարու հանէին (Եզնիկ, 3-րդ, Ե)=Որովհետև երբ աշխարհ եկած մի քաջ անձնավորություն մեռնում էր, նրա քաջության հիշատակի համար պատկերը ներկերով նկարում էին:

4. Որոշիչ իմաստով գործածվում է *ն* հողը, որն ունի աշխարհաբարի նույն *ն* կամ *ը* հողի նշանակությունը. օրինակ՝ Եկին ամենայն քաղեայքն և աստեղագէտքն (Բուզ., 4-րդ, ԾԴ)=Եկան բոլոր քավոյաներն ու աստղագուշակները: Ես իբրև ելին ի նաւն, հանդարտեաց հողմն (Մատթ., ԺԴ, 32)=Երբ մտան նավը, քամին դադարեց: Քաջալերէր զընկերակիցսն իր (Եղիշէ, էջ 177)=Քաջալերում էր իր ընկերակիցներին:

§ 190. Գրաբարում հողերն ունեն գործածության հետևյալ ընդհանուր կանոնները:

1. Գրաբարում սովորաբար որոշիչ հող չեն ընդունում.

ա) Այն գոյական անունները, որոնք գործածվում են ընդհանուր, վերացական, ոչ կոնկրետ առումով, օրինակ՝ Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր, որդի անմիտ՝ տրտմութիւն է մօր (Առակ., Ժ, 1): Ես զօձ յաղթանդամ, կամ զգագան ինչ ծովածին կոչեն զիրք վիշապ (Եզնիկ., 1-ին, ԻԵ): Նոյնպէս և ի բան-

ջարս է ինչ՝ որ առանձինն սատակիչ է, և խառնեալ ընդ այլ արմատս՝ բժշկիչ պէսպէս ցաւոց լինի (Եզնիկ, 1-ին, ԺԵ):

Ծանոթություն. Հաճախ հայցական հոլովով դրված և *զ* նախդիր ունեցող գոյական անունները գործածված են ընդհանուր, վերացական իմաստով, որոնք այս դեպքում նույնպես որոշիչ հոդ չեն ստանում (տես բերված օրինակները):

բ) Բնության մեջ գոյություն ունեցող եզակի առարկաների անունները (լուսին, արեգակն, երկիր, երկին, աշխարհ, հիսախ, հարաւ և այլն). օրինակ՝ Եւ լուսին, ասեն, ի ներքոյ է քան զարեգակն (Եզնիկ, 3-րդ, Ա): Երկնէր երկին, երկնէր երկիր, երկնէր և ծովն ծիրանի (Խոր., 2-րդ, ԼԱ):

գ) Հատուկ անունները, մանավանդ, երբ ընդգծված, շեշտված չեն. օրինակ՝ Փախստական լինի Կաղմոս առ Հայկ (Խոր., 1-ին, ԺԱ): Ելանէ հրաման ի Շապիոյ՝ ամենայն զօրացն Պարսից երթալ ընդ Մեիրուժանայ ի Հայս ի պատերազմ (Խոր., 3-րդ, ԼԷ): Առաքեաց ի Մակեդոնիա երկուս ի պաշտօնէիցն իւրոց (Գործ., ԺԹ, 22):

2. Եթե հատուկ անունն ունի նախադաս ածական կամ գոյական լրացում, ապա վերջինիս վրա դրվում է *ն* որոշիչ հոդը, իսկ եթե հատուկ անունն է դրվում նախադաս, թե՛ հատուկ անվան, թե՛ ածական կամ գոյական անդամների վրա սովորաբար հոդ չի դրվում. օրինակ՝ Մեծն Ներսէս-Ներսէս մեծ, քաջն Վարդան-Վարդան քաջ, գետն Երասխ-Երասխ գետ, արքային Արշակայ-Արշակայ արքայի և այլն: *Սուրբն Յովսէփ* հեզաբար սկսալ խօսել ընդ դահճին (Եղիշէ, էջ 146): Լուսւ գայս ամենայն *թագաւորն Տրդատ* (Ազ., ՃԻԳ, 860): Յառաջ մատնաւ *Ղևոնդ երէց* (Եղիշէ, էջ 162): Սկիզբն արարեալ *յամացն Արշակայ* արքայի *որդոյն Տիրանայ*, և կռուէր մինչև *յամն* վեցերորդ *Արտաշեսի* արքայի Հայոց, *որդոյն Վռամշապիոյ* (Եղիշէ, էջ 6):

3. Երբ որոշյալը կամ հատկացյալը գեղջվում են, այսինքն՝ որոշիչն ու հատկացուցիչը գործածվում են իբրև փոխանուններ, վերջիններիս վրա դրվում են սովորաբար *ն*, երբեմն էլ *ս*, *դ* հոդերը. օրինակ՝ Չչարն եղծանէր և բարոյն տայր զթագաւորութիւնն (Եզնիկ, 2-րդ, Գ): Տո՛ւք զկայսերն կայսեր և զաստուծոյն՝ աստուծոյ (Մատթ., ԻԲ, 21): Որ առ զհինգն, գործեաց նոքօք և շահեցաւ այլ և ս հինգ: Նոյնպէս և որ զերկուսն՝ շահեցաւ այլ և ս երկուս (Մատթ., ԻԵ, 16-17): Արդ աւասիկ քոյդ ցքեզ (Մատթ., ԻԵ, 25): Եւ նա չղացելոյն և չճնելոյն անուն դներ (Եզնիկ, 2-րդ, Գ): Եթէ չիցէ ինձ իշխանութիւն յիմս առնել զինչ և կամիմ (Մատթ., Ի, 15):

4. Երկրորդական նախադասությունները գլխավորին կապող *որ*, ինչպէս և *որ ինչ*, *որ որ*, *որպէս*, *ուր*, *զի*, *յորժամ* հարաբերականներին հաջորդող բառերի վրա սովորաբար դրվում է *ս*, *դ*, *ն* հոդերից մեկը: Այս դեպքում *ս*, *դ*, *ն* հոդերը նշանակում են. *ս*-ն՝ *ես*, *սա*, *այս* և նրանց հոգնակիները, *դ*-ն՝ *դու*, *դա*, *այդ* և նրանց հոգնակիները, *ն*-ն՝ *նա*, *այն* և նրանց հոգնակիները, որոնք աշխարհաբար կարող են չթարգմանվել. օրինակներ՝ Քաղցրութեամբ լո՛ւր գոր ասելոցս ենք (Եղիշէ, էջ 45)՝Քաղցրութեամբ լսի՛ր, ինչ որ (մենք) ասելու ենք:

Չոր ինչ խնդրեցերն՝ երթ տուեալ լիցի քեզ (Բուզ., 5-րդ, Է): Էր ժամանակ՝ յորժամ հիւղձ չէր ի միջի (Եզնիկ, 1-ին, Ը):

5. Երբ ետադաս որոշիչն արտահայտված է *այս*, *այդ*, *այն* ցուցական դերանուններով, նախադաս որոշյալի վրա դրվում են համապատասխան *ս*, *դ*, *ն* հոդերը (մանրամասնությունները տես ցուցական դերանունների բաժնում):

6. Գրաբարում հատկացուցիչ և հատկացյալի կապակցության մեջ հոդը, ի տարբերություն աշխարհաբարի, դրվում է հատկացուցիչ վրա, իսկ եթե հատկացուցիչը հատուկ անուն է՝ հատկացյալի վրա. օրինակ՝ Եկաց ի վերայ ջուրց գետոյն (Ազ., ՃԺԸ, 833): Գուժկան հասանէր ի կողմանցն Քուշանաց (Եղիշէ, էջ 49):

Ծանոթություն. Եթե հատկացուցիչն արտահայտվում է ստացական և ցուցական դերանուններով, հոդը սովորաբար դրվում է հատկացյալի վրա. օրինակ՝ Թէ՛ որ յորդոցն իմնց վաղ առ իս հասցէ՛ գնա թագաւոր արարից (Եզնիկ, 2-րդ, Գ): Մեծամեծ չարիս հասուցին ի վերայ զօրացն ձերոց (Եղիշէ, էջ 164): Եւ բարկացեալ տէրն նորա (Մատթ., ԺԸ, 34):

7. Որոշիչ և որոշյալի կապակցության մեջ հոդը դրվում է որոշյալի վրա, իսկ եթե որոշյալը հատուկ անուն է՝ որոշիչ վրա. օրինակ՝ Ի նոյն ջուրս պիղծ ճճիքն ընդ սուրբ ձկունսն սնանիցին (Եզնիկ, 2-րդ, ԺԱ): Չապականելի մարմինդ գէշաբարչ արարեալ (Եղիշէ, էջ 8): Եւ երթիցեն նոքա ի տանջանսն յաւիտենականս (Մատթ., ԻԵ, 46): Վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ (Խոր., 2-րդ, ԿԱ):

8. Գրաբարում հաճախ հոդերը ոճական նկատառումներով, իբրև ավելադրություն, կարող են կրկնվել. օրինակ՝ Կամ որպէս երէցն Մրջիւնիկն մահուան դեղովն զնա... սպանանէր (Բուզ., 4-րդ, ԺԵ): Ի կապելոցս երիցանցս գորս մեք այսօր ի բաց տանիմք (Փարսլ., 2-րդ, ԾԳ):

Վարժություն 159. *Թարգմանել, բացատրել, թե ընդգծված հոդերը ի՛նչ ի՛մաստով են գործածված (ցուցական, դիմորոշ, ստացական, որոշիչ):*

Խիստ են խնդրուածքդ, գոր խնդրեցերդ: Խելամուտ լեր բանիցս գոր խօսեցայց ընդ քեզ: Արձակեա՛ գժողովորդսդ, զի երթիցեն... զմեսցեն իրեանց կերակուրս: Իջուցանէին անթիւ գանձս ի բերդէն: Եւ ընդէ՞ր լինիցի քաղաքդ աւերակ: Արձակէ զձեզ ի կապանացդ յորում էքդ: Մա՞ է որդին ձեր, գորսն դուքն ասէիք, եթէ կոյր ծնաւ: Յանձն առ, ասեն, զիրաման թագաւորիդ: Դառնային յաշխարհս մեր: Մեք պատրաստ ենք ի մեռանել վասն քո սիրոյդ: Որպէս կարծեսդ՝ ասա ինձ: Արա գոր ասենքս քեզ: Եթէ ոչ արձակէք զդա ի բանտէդ, այրենք զքաղաքս զամենայն: Կամ թէ ակն քո չա՞ր է, զի ես առատս եմ: Հայր, տուր ինձ բաժին, որ անկանի յրնչիցդ: Հատո՛ ինձ գոր պարտիսդ:

Վարժություն 160. *Թարգմանել, բացատրել, թե նախադասության ո՞ր անդամի կամ բառի վրա են դրված ընդգծված հոդերը և ի՛նչ կանոնի համաձայն:*

Բախեաց գրուր սենեկի՛ն: Լռեաց ձայն՛ն յորդորեցուցիչ: Եկն նահապետն Վարդան առ Արշակ: Ոչ գիտեմ զկինդ գորմէ ասեսդ: Երեցն՛ Ղևոնդ հրաման առեալ ի սուրբ ընկերացն: Բացին գրուրն քաղաքի՛ն: Դստերքդ՝ դստերք իմ են: Ջինչ է, որ եղև ՛ն նոյն ինքն որ լինելոցն է: Ջկամուրջն՛ Արտաշատու գտին աւերեալ: Ողբա՛ հանդերձ մարգարեութեամբ որ ինչ թշուառացաքս և որ ինչ թշուառանալոցս ենք: Եկին ընդ նոսա սուրբքն Յովսէփ և Ղևոնդ երեց: Երթ դու ընդ արադ ընդ աշոտսիկ: Շուրջ զնովա հարքն ծերք բնակեալ էին: Ոչ է հնար մեզ գերծանել ի չարէս յայսմանէ: Որ եղև ՛ն իսկ երկիցս, որպէս ասենն, առ Թէոդոսիւ կայսերք: Գոն նշանագիրք հայերէն լեզուոյս:

Վարժապետն 161. Թարգմանել, ընդգծված հատկացուցիչ-հատկացյալի և որոշիչ-որոշյալի կապակցությունները գործածել և հորով՝ գրաբարի հողառության կանոններին համապատասխան:

Արձակեաց զԱրշակ ի կապանաց երկաթեաց: Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեան Արտաշիսի: Ոչ և ս ուտելով ի պատուիրեալ ծառայ: Բազումք և քաջք զհետ լինէին փախուցելոյ Տիրիթայ: Մնացելոց զօրաց հրաման տայր: Ետ ածել զերանելի Գայիանէ: Կոտորէին զամենայն զօրս Պարսից: Ի ներքս մտեալ քողոր զօրք: Եւ ի կատարել ամաց քառասնից՝ երևեցաւ նմա յանապատի: Ի կիրճս ճանապարհաց արգելին զնոսա: Անկաւ զպարանոցաւ նորա և համբուրեաց զնա: Երկեայ, զնացի և թաքուցի զքանքար քո յերկրի: Ոչ արձակէ զեզ իւր... և տանի տայ ջուր:

ՎԱՐՔ ՄԱՇՏՈՅԻ
(Հատուած)

Առն, զոր ի նախակարգ բանիս¹ նշանակեմք, վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշտոց անուն, ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելոյ Վարդան կոչեցելոյ: Ի մանկութեան տիսն վարժեալ² հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի դուռն³ Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանացն առ հազարապետութեամբքն⁴ աշխարհիս Հայոց՝ Առաւանայ ուրումն: Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զհնուորական արուեստին իւրոց զօրականացն: Եւ անդէն ուշ եղեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն գրոց, որով առ ժամայն լուսաւորեալ և թևամուխ միջամուխ եղեալ յաստուածատուր հրամանացն հանգամանս, և ամենայն պատրաստութեամբ զանձն զարդարեալ, հարկանէր զիշխանացն սպասաւորութիւնսն:

... Առեալ այնուհետև երանելոյն զհաւատացեալս իւր, դիմեալ իշանէր

յանկարգ և յանդարման տեղիս Գողթան: Այլ և ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գողթան, այր երկիւղած և աստուածաւոր, որում անուն էր Շաբիթ. և ասպնջական հիւրամեծար գտեալ՝ բարեպաշտութեամբ սպասաւորէր ըստ աշակերտաց հաւատոցն Քրիստոսի: Իսկ երանելոյն վաղվաղակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր զգաւառովն⁵ հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին. գերեալ զամենեսեան ի հայրենեաց արանդելոց, և ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէն՝ ի հնագանդութիւն Քրիստոսի մատուցանէր:

... Եւ իբրև ատուր բազումս անդէն ի նմին դեգերէր, յարուցեալ այնուհետև հասանէր առ սուրբ կաթողիկոսն Հայոց Մեծաց, որոյ անուն ճանաչէր Սահակ, զոր պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեալ...:

Ապա ելանէր նոցա պարգև ական⁶ յամենաբարին աստուծոյ ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, և ի գիւտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել:

Բազում հարցափորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ և բազում աշխատութեանց համբերեալ, ազդ առնէին ապա և զկանխագոյն խնդրելին իրեանց թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վռամշապուհ:

Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն գտեալ նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի: Եւ իբրև պատմեցաւ նոցա յարքայէ վասն գտելոյն ի Դանիէլէ, յօժարեցին զարքայ՝ փոյթ առնել վասն պիտոյիցն այնոցիկ: Եւ նա առաքէր զոմն Վահրիճ անուն հրովարտակօք առ այր մի երեց, որոյ անուն Հաբէլ կոչէին, որ էր մերձաւոր Դանիէլի ասորոյ եպիսկոպոսի:

Իսկ Հաբէլին զայն լուեալ, փութանակի հասանէր⁷ առ Դանիէլն, և նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրացն, և ապա առեալ ի նմանէ առաքէր առ արքայն յերկիրն Հայոց: Ի հինգերորդի ամի թագաւորութեան նորա ի նա հասուցանէր: Իսկ արքային հանդերձ միաբան սրբովքն Սահակաւ և Մաշտոցի ընկալեալ զնշանագիրսն ի Հաբէլէն, ուրախ լինէին:

Ապա առեալ երանելի հոգաբարձուացն զյանկարծագիւտ խնդրելին, հայցէին և ս յարքայէ մանկունս մատաղս, որով զնշանագիրսն արծարծել մարթասցեն: Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել. որով և յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ՝ երանելին հասանէր, և իբրև⁸ ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր. և նովին նշանագրովք տանէր:

(Կորին, 36-44)

¹ ի նախակարգ բանիս-մեր խոսքի սկզբում, առաջաբանում

⁵ զաւետարանական արուեստն ի մէջ առեալ ձեռն արկանէր զգաւառովն-ավետա-

² այստեղ և հաջորդ նախադասություններում անցյալ դերբայը հաճախ գործածված է դիմավոր բայի նշանակությամբ՝ վարժեալ-կրթվել էր, եկեալ հասեալ-եկել, հասել էր ³ այստեղ՝ արքունիք, պալատ ⁴ առ նախդիրը գործիական հոլովի հետ ժամանակի իմաստով՝ հազարապետության օրոք, ժամանակ

րանական արվեստը բանեցելով՝ սկսեց (քարոզել) գավառում ⁶ ելաներ նոցա պարզև ական-պարզև վեց նրանց ⁷ այստեղ և հաջորդ նախադասություններում անցյալ անկատարը գործածված է անցյալ կատարյալի իմաստով ⁸ այստեղ՝ մոտավորապես, մոտ

ՈՐ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆԸ

§ 191. Ինչպես արդի հայերենում, այնպես էլ գրաբարում հարաբերական դերանունները նույն հարցական դերանուններն են առանց հարցականի: Դրանցից իր շարահյուսական կիրառություններով առանձնանում է *որ* հարաբերական դերանունը:

Որ հարաբերականը երկրորդական նախադասությունը կապում է գլխավորին: Այս դեպքում գլխավոր նախադասությունը կարող է ունենալ կամ չունենալ համապատասխան հարաբերյալ:

1. Երբ գլխավոր նախադասությունը ունենում է հարաբերյալ, *որ* հարաբերականը թվով համաձայնում է նրան, բայց դրվում է երկրորդական նախադասության մտքի պահանջած հոլովով. օրինակ՝ Բերեին *ածուխ, որով* խարեին զաչսն Տիրանայ (Բուզ., 3-րդ, Ի): Ջի ցուցցե թե էր *ոմն՝ որում* նա վասն որդոյն յաշտ առնէր (Եզնիկ, 2-րդ, Ե):

Ճանորություն. Հոգնակի ուղղական և հայցական հոլովներով դրված հարաբերյալներին *որ* հարաբերականը թվով կարող է համաձայնել կամ չհամաձայնել. օրինակ՝ Եւ *արք պարսիկք, որք* փախուցեալ էին վասն քրիստոնէութեան... կալաւ և ետ ի ձեռս նորա (Եղիշէ, էջ 7): Մահապարտ են *այնորքիկ՝ որ* իշխեսն խօսել չարութիւն զՄուշեղէ (Բուզ., 5-րդ, Դ): *Չբարսմունսն զոր* ի ձեռին ունէր, ցորդին իւր ցՈրմիզդ ետ (Եզնիկ, 2-րդ, Ե):

2. Եթե գլխավոր նախադասության հարաբերյալները արտահայտվում են *նա, այն* դերանուններով, հաճախ զեղչվում են: Այս դեպքում *որ* հարաբերականը նշանակում է *նա որ, այն որ* կամ՝ *ով որ, ինչ որ, որը որ, որ մեկը որ, այն ինչ որ*. օրինակ՝ Եւ մատուցեալ որ զիինգ քանքարն առ (Մատթ., ԻԵ, 20)=Մոտեցավ նա, որ հինգ քանքար էր վերցրել: Որ կամի փոխ առնուլ ի քէն՝ մի դարձուցանէր զերեսս (Մատթ., Ե, 42)=Ով որ կամենում է...:

3. Երբ գլխավոր նախադասության հարաբերյալը բացակայում է, *որ* հարաբերականը երբեմն դրվում է ոչ թե երկրորդական, այլ գլխավոր նախադասության մտքի պահանջած հոլովով, այսինքն՝ այն հոլովով, որով պիտի դրվեր բացակայող հարաբերյալը. օրինակ՝ Որում խնդրէ ի քէն՝ տուր (Մատթ., Ե, 42)՝ փխ. այնմ որ խնդրէ՝ տուր: Որոց մտանենն՝ չտայք թոյլ մտանել (Մատթ., ԻԳ, 13)՝ փխ. այնոցիկ, որք մտանեն:

Վարժություն 162. *Թարգմանել, բացատրել, թե որ հարաբերականը ինչպես է համաձայնել գլխավոր նախադասության հարաբերյալին և ինչ հոլովով է դրված:*

Եկին հասին ի գեղ մի, որում անուն Գալարիս կոչէին: Ոչ թողցես զայնուսիկ որ խնդրեն գրեզ: Եւ կանեփուկն թուփ ինչ է, որոյ սերմն նորա դեղ է: Փըրկեա՛ զիս յայնցանէ՛ որ պաշարեցին զիս: Տայ նոցա գեղս և դաստակերտս ընտիրս և յարմարս՝ յայնոցիկ ժառանգութենէ, որք ի բաժնոյն Պարսից մնացին: Լուան նախարարքն Հայոց, այնք՝ որք ունէին զիշխանութիւն ի գաւառս բաժնին Պարսից: Նա և արջք օրհասականք ընդ վախճանել շնչոցն հօրապոյնս կռուին. յորոց և իմաստունքն տեղի տուեալ փախչին: Ետ հրաման ժողովել զամենայն զօրս իւր և զմեծամեծս իւր և զփոքունս և զամենայն մարդիկ աշխարհին իւրոյ՝ որ ինքն իշխէր: Չիք տեղի թաքչելոյ այնոցիկ՝ որ գործեն զանօրէնութիւն: Եւ զգեցուցեն զպատմուճանն առնն այնմիկ գոր արքայն սիրէ: Չէին ի միջի լուսատրքն, որք զթիւ աւուրց և ամսոց... կարգէին: Եւ առեալ զբարսմունսն՝ գոր ի ձեռին իւրում ունէր, որովք զյաշտն առնէր, ետ ցՈրմիզդ:

Վարժություն 163. *Թարգմանել, վերականգնել գլխավոր նախադասության զեղչված աշխ կամ նա հարաբերյալը՝ դնելով որ հարաբերականի հոլովով, իսկ վերջինս՝ երկրորդական նախադասության մտքի պահանջած հոլովով:*

Ի գիշերի խնդրեցի գոր սիրեաց անձն իմ: Փրկեա՛ գորս ի մահ տանին: Որ սիրէ զխրատ՝ սիրէ զիմաստութիւն, և որ ատեալ զյանդիմանութիւն՝ անմիտ է: Առաջի տիկնոջն Փառանձեմայ ուտէին և ըմպէին և ուրախ լինէին որք էին ի տաճարին: Դուք երկիր պազանք որում ոչն զիտք: Չիա՞րոք կարիցեն նոզվել զսատանայ, որք զկամս նորա կատարեն: Վա՛յ որ ասիցէ ցհայր իւր՝ թե ընդէ՞ր ծնար զիս: Որպէս և տեսանեմք իսկ՝ ոչ միայն ի չափաւոր մարդիկ, այլ և յոր մեծն է քան զամենայն: Փրկեա՛ զմեզ ի ձեռաց որ չարչարենս զմեզ: Չոր տեսին աչք քո՝ խօսեա՛ց: Եւ եկեացեն արտաքս. որոց զբարիս գործեալ իցէ: Երևել որոց ի խաւարի... նստէին:

ՎԱՐՔ ՄԱՇՏՈՅԻ (Հատուած)

... Իսկ իբրև ի վերայ հասեալ¹, թե չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղոբայս զկապս հայերէն լեզույն, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայնոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ:

Վասն որոյ առեալ երանելոյն Մաշտոցի դաս մի մանկտոյ հրամանաւ ար-

քայի և միաբանութեամբ սրբոյն Սահակայ, և հրաժարեալք ի միմեանց համբուրի սրբութեանն՝ խաղայր գնայր ի հինգերորդ ամի Վռամշապիոյ արքային Հայոց, և երթեալ հասանէր ի կողմանս Արամի² ի քաղաքս երկուս Ասորոց. որոց առաջինն Եղեսիս կոչի, և երկրորդին Ամիդ անուն: Ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն, որոց առաջնոյն Բաբիլաս անուն և երկրորդին Ակակիոս. հանդերձ կղերականօքն և իշխանօքն քաղաքաց պատահեալ, և բազում մեծարանս ցուցեալ հասելոցն՝ ընդունէին հոգաբարձութեամբ...:

Իսկ աշակերտասէր վարդապետին գտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դպրութիւնն կարգէր (ի քաղաքին Եղեսացոց), և զոմանս ի յունական դպրութիւնն՝ անտի ի Սամուսատական քաղաքն զումարէր:

Եւ նորա իւրովք հաւասարօք զսովորականն առաջի եղեալ³ զաղօթս և զտքնութիւնս և զպաղատանս արտասուալից, զխստամբերութիւնս, զհոգս զաշխարհեծս, յիշելով զասացեալսն մարգարէին, եթէ՝ «Յորժամ հեծեծեսցես, յայնժամ կեցցես»:

Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ: Որում պարգևէր իսկ վիճակ յամենաշնորհողն աստուծոյ. հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ, յօրինէր սիողոքայիւք կապօք:

Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսէն սրբոյ, հանդերձ օգնականօք իւրովք իջանէր ի քաղաքն Սամուսատացոց, յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն և յեկեղեցոյն մեծարեալ լինէր:

Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ⁴ ոմն հեյլենական դպրութեան Հռովանոս անուն գտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրացն զնրբագոյնն և զլայնագոյնն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնատրն, միանգամայն յօրինեալ և յանկուցեալ, ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամքք երկուք, աշակերտօքն իւրովք. որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին, յեկեղեցաց գաւառէն, և երկրորդին Յովսէփ անուն՝ ի Պաղանական տանէն: Եւ եղեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ եթէ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Որ և գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի, հանդերձ ուսուցանելով զմանկունս գրիչս նմին դպրութեան:

Ապա յետ այնորիկ առնոյր թուրքս յեպիսկոպոսէ քաղաքին և հրաժարեալ ի նոցանէ հանդերձ ամենայն իւրովքն, բերէր առ եպիսկոպոսն Ասորոց: Որ յորոց նախընկալն եղև⁵, առաջի արկեալ⁶ նոցա զնշանագիրս աստուածատուրս. վասն որոյ բազում իսկ գովութիւնք յեպիսկոպոսաց սրբոց և յամենայն եկեղեցեաց բարձրանային ի փառս աստուծոյ, և ի մխիթարութիւն աշակեր-

տելոցն ոչ սակաւք: Յորոց հրաժարեալք այնուհետև և առեալ թուրքս անտագիրս, հանդերձ շնորհատուր պարգևօքն և ամենայն իւրայիւքն, ի շնորհացն աստուծոյ ճանապարհորդ լինէր⁷. զօթևանօք անցեալ⁸ աջողութեամբ և հոգելից ուրախութեամբ եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն, ի կողմանս Այրարատեան գաւառին, առ սահմանօք Նոր Քաղաքին⁹, ի վեցերորդ ամի Վռամշապիոյ արքային Հայոց Մեծաց:

... Եւ արդ եկեալ յիշելին մերձ ի թագաւորական քաղաքն, ազդ լինէր թագաւորին և սրբոյ եպիսկոպոսին: Որոց առեալ զամենայն նախարարագունդ աւագանոյն ամբոյս, ի քաղաքէն ելեալ՝ պատահէին երանելոյն զափամբ¹⁰ Ռահ գետոյն: Եւ զցանկալի ողջոյնն միմեանց տուեալ, ուստի և բարբառօք ցնծութեան և երգօք հոգևորօք և բարձրագոյն օրհնութեամբք ի քաղաքն դառնային, և զաւուրս տօնական ուրախութեամբ անցուցանէին:

(Կորին, Էջ 46-54)

² ի վերայ հասանել. այստեղ՝ հասկանալ, իմանալ
² Արամ անունով կոչվում էր Ասորիքը
³ առաջի եղեալ-սկսեց
⁴ այստեղ՝ գրագիր
⁵ յորոց նախընկալն եղև-որոնցից սկզբում ընդունվել էր
⁶ առաջի արկանել. այստեղ՝ ներկայացնել

⁷ ճանապարհորդ լինել-ճանապարհ ընկնել
⁸ անցանել զօթևանօք-օթևաններ անցնել, այսինքն՝ շատ օրերի ճամփա անցնել
⁹ նկատի ունի Վաղարշապատ քաղաքը, որն այն ժամանակ Հ-ի մայրաքաղաքն էր
¹⁰ զ նախդիրը գործիական հոլովի հետ տեղի իմաստով՝ Ռահ (Երասխ) գետի ափին

ԴԱՍ ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԳ

ՆԱԽԳԻՐՆԵՐ

§ 192. Գրաբարի նախդիրներն են՝ *առ, գ, ի(յ), ընդ, ըստ, ց*:
Նախդիրները գործածվում են տարբեր հոլովների հետ, բացի ուղղակա-նից՝ արտահայտելով բազմազան իմաստներ:
Եթե նախդիր կրող բառն ունի նախադաս կամ ետադաս լրացում կամ լրացումներ, ապա նախդիրը սովորաբար դրվում է նախադաս անդամից առաջ, ինչպես նաև կարող է կրկնվել նախադաս և ետադաս լրացումների վրա. օրինակ՝ *Շրջի ընդ* անջրդին *տեղիս* (Մատթ., ԺԲ, 43): *Առ* ամենայն *ազգս* տերութեան իմոյ (Եղիշէ, Էջ 9): Չարամահ սպանանէին զամենեսեան *յամենայն ի բերդսն* (Բուգ., 4-րդ, ԾԹ): Եղև սով սաստիկ *յաշխարհին յայնմիկ* (Դուկ., ԺԵ, 14):

ԱՌ

§ 193. Առ նախդիրը գործածվում է հայցական, տրական, բացառական և գործիական հոլովների հետ:

1. Առ նախդիրը հայցական հոլովի հետ արտահայտում է.

ա) *Դեպի, մոտ* իմաստները. այս դեպքում նախդիր կրող բառը ցույց է տալիս այն անձը, որին ուղղված է գործողությունը (ուղևորման հայցական) կամ այն տեղը, առարկան, որտեղ կամ որի մոտ կատարվում է գործողությունը. օրինակ՝ Առաքեաց առ նա (=նրա մոտ) բազում գանձիք (Եղիշէ, էջ 7): Ո՞վ ես դու, որ կոչես զիս առ արքայ (Ա Թագ., ԻԶ, 14)=արքայի մոտ: Եւ մինչ դեռ մանուկն էր՝ սնանէր առ ծնողսն (Թորոն., Բ, էջ 395) =ծնողների մոտ: Իջին բանակեցան առ ափն (=ափին) գետոյն (Ազ., Ե, 48): Նիստ առ իս (=ինձ մոտ) և մի երկնչիք (Ա Թագ., ԻԲ, 23):

բ) *Վերաբերություն*, որ թարգմանվում է աշխարհաբար *վերաբերմամբ, նկատմամբ, մասին, համեմատությամբ* բառերով. օրինակ՝ Երկայնամիտ լեր առ իս (=իմ վերաբերմամբ, նկատմամբ), և զամենայն հատուցից քեզ (Մատթ., ԺԸ, 26): Առ մե՞զ (=մեր մասին) ասացեր զառակդ զայդ՝ եթէ առ ամենեսեան (Գուկ., ԺԲ, 41): Իսկ եթէ առ մարմնատուրս (=մարմնավոր բաների վերաբերմամբ) այսպէս, որչափ և ս առաւել առ հոգևորն (Եղիշէ, էջ 15):

գ) Առանձին կամ *ի* նախդիրի հետ դրվելով անորոշ դերբայի կամ այլ բառի հայցական հոլովի վրա, արտահայտում է *նպատակ* և *պատճառ*, որոնք թարգմանվում են *համար, նպատակով, պատճառով* բառերով, կամ ուղղակի նախդիրավոր բառի բացառական հոլովով. օրինակ՝ Եւ քարշեալ ի բաց ընկեցին զմարմինս նոցա՝ առ ի կեր լինել (=կեր դառնալու համար) շանց քաղաքին (Ազ., ԺԸ, 201): Առ սէր (=սիրո համար) այնր յուսոյ՝ զոր տեսանեմք (Եղիշէ, էջ 46): Եւ ժողովեալ մանկունս առ ի նիւթ վարդապետութեանն (Կոր., ԺԳ)=ուսուցանելու նպատակով (սովորեցնելու համար): Եւ առ մղձկել սրտին (=սրտնեղությունից, սրտնեղության պատճառով) չգիտէր թե յո՞ թափէր զթոյնս դառնութեանն (Եղիշէ, էջ 142):

դ) Տրական հոլովի իմաստ (նախդիրի տրական). օրինակ՝ Բայց Աբգար յօժարեցաւ գրել թուրք առ Տիբերիոս կայսր (Խոր., 2-րդ, ԼԳ)=կայսրին: Աղաղակէր առ նա (=նրան) այր մի (Բուզ., 6-րդ, Թ): Վասն որոյ և պատգամ յղեցին առ մարգպան (=մարգպանին) աշխարհին (Եղիշէ, էջ 132):

ե) *Յուրաքանչյուր, ամեն մի* իմաստը. օրինակ՝ Տալ յիսուն սիկղ առ այր (ՆՀԲ)=յուրաքանչյուր մարդու: Երկուս զառինս տարևորս առ օր (ՆՀԲ)=օրը:

զ) *Ունիմ* բայը *համարելու* իմաստով որպէս ստորոգյալ գործածվելիս ընդունում է կրկնակի հայցական, որոնցից մեկն ունենում է *առ* նախդիր և միշտ դրվում հոգնակի թվով. աշխարհաբար կարելի է թարգմանել «*համարել*» կամ «*մի բանի տեղ դնել*» նշանակությամբ՝ օրինակ՝ Չանձինս առ իմաստունս, կամ արդարս ունէին (ՆՀԲ)=Իրենց իմաստուն կամ արդար էին համարում (Ի-

րենց իմաստունի կամ արդարի տեղ էին դնում): Չնա առ աստուածս ունին (Եզնիկ, 2-րդ, Գ)=Նրան աստված են համարում:

է) Կազմում է մի շարք ոճեր՝ *առ ոտն կոխել* «ոտնատակ անել, կոխտուել», *առ ոտն հարկանել* «ոտնահարել, բանի տեղ չդնել», *առ ոչինչ համարել* «բանի տեղ չդնել», *առ հասարակ, առ երես* և այլն:

2. Առ նախդիրը տրական հոլովի հետ նշանակում է.

ա) *Պատճառ*, որն աշխարհաբար թարգմանվում է *պատճառով* կամ նախդիրավոր բառի բացառական հոլովով. օրինակ՝ Առ տգիտութեան (=տգիտության պատճառով կամ տգիտությունից) մոլորեալ են (Եղիշէ, էջ 144): Դուք առ ձերում անմտութեան (Բուզ., 3-րդ, ԺԳ)=Դուք ձեր անմտության պատճառով, անմտությունից: Այսպէս էլ՝ առ նախանձու=նախանձից, առ ահի=ահից, առ վշտի=վշտից և այլն:

բ) Մի առարկայի մոտ գտնվելը, լինելը. օրինակ՝ Ընկեցին զնա ի գուր առ դրան (=դռան մոտ) քաղաքին (Յեսու., Ը, 29): Չցայգ և զգերեկ կային առ նմա (Ազ., Գ, 722)=նրա մոտ:

3. Առ նախդիրն առանձին կամ *ի* նախդիրի հետ դրվելով բացառական հոլովի վրա՝ արտահայտում է.

ա) *Նպատակ*. Թարգմանվում է *համար, նպատակով* բառերով. օրինակ՝ Եւ Չրուանն առ ի չըրելոյ (=չորժելու համար) զուխտն՝ ասէ ցԱրհմնն (Եզնիկ, 2-րդ, Ա): Չի՞նչ գեղեցկագոյն քան զսիրամարգ՝ զոր առ ի ցուցանելոյ (=ցույց տալու նպատակով) զգեղեցկագործութիւնն արար (Եզնիկ, 2-րդ, Ը):

բ) *Պատճառ*. օրինակ՝ Առ ի չգոյէ (=բացակայության պատճառով) հիւթոյ երկրին (Մատթ., ԺԳ, 5): Առ ի չգոյէ (=չլինելու պատճառով) մարդկան և առ ի չգոյէ բնակչաց և առ ի չգոյէ անասնոց (Երեմ., ԼԳ, 10):

գ) *Մոտ* իմաստը. օրինակ՝ Խնդրեցես զիմաստութիւն առ ի չարացն (=չարերի մոտ) և ոչ զտցես (Առակ., ԺԴ, 6):

դ) Միայն բացառականի իմաստ. օրինակ՝ Եւ լիցի փախստական առ ի ձէնց (Յակովբ., Դ, 7)=ձեզանից: Չի ոչ տկարասցի առ յԱստուծոյ (=աստծու կողմից) ամենայն բան (Գուկ., Ա, 37):

4. Գործիական հոլովի հետ ցույց է տալիս.

ա) *Տեղ*, մի բանի մոտ լինելը, մոտավոր տեղը, մոտերքը, մոտով. օրինակ՝ Հասանէ առ սահմանօքն (=սահմանների մոտ) Խաղտեաց (Խոր., 2-րդ, Գ): Երբեմն սոյն Յոհան անցանէր առ այգեօք (=այգիների մոտով) ուրումն (Բուզ., 6-րդ, Թ): Դարձեալ սկսաւ ուսուցանել առ ծովեզերքն (Մարկ., Դ, 1)=ծովափին:

բ) *Ժամանակ*. օրինակ՝ Առ Սերուբա (=Սերուքի օրոք) եղև, ասեն, սկիզբն հեթանոսութեան (Եզնիկ, 2-րդ, ԺԵ): Առ ջրհեղեղան=ջրհեղեղի ժամանակ, առ մերօք=մեր օրոք և այլն:

գ) *Համեմատություն*. օրինակ՝ Չի՞նչ է յարդ առ ցորենաւ (Երեմ., ԻԳ, 28)՝ Հարդն ի՞նչ է ցորենի համեմատությամբ:

Վարժություն 164. *Թարգմանել, բացատրել, թե ո՞ր հոլովի հետ և ի՞նչ նշանակությամբ է գործածված առ նախդիրը:*

Արկաներ գնոսա առ ցասման ի գեհեն: Կոչեաց գնոսա ի ներքս և առ իւր ագոյց: Թագաւորն Պապ յղեաց դեսպանս առ մարդպետն Դոնալ: Ո որ յերկուց որդուցն իմոց յառաջ առ իս հասցէ, զնա թագաւոր արարից: Կարդա առ իս, և տաց քեզ պատասխանի: Եւ նորա աչք կալեալ էին առ ի չճանաչելոյ զնա: Որպէս և տեսեալ էր իւր առ հնօքն թագաւորօքն: Եւ եղև ի սերմանելն, ոմն անկաւ առ ճանապարհաւ: Առ ի պատերազմել ընդ խուժադուժ ազգսն ընդ այնոսիկ: Եւ մի՛ յուզեսցի ցասումն քո առ արարածս քո: Քանզի գիտէին ամենեքեան, եթէ ոչ առ առատութեան տայ, այլ առ երկիւղի վատնէ: Դարձոյց զարծաթն առ քահանայապետսն: Եկ շրջեսցուք ընդ երկիրդ առ ամենայն աղբերքք ջրոց և առ հեղեղատօք: Գրեաց Դաւիթ հրովարտակ առ Յովաք: Եւ ոչ հաւատայր նմա, թէ պահեսցէ առ նա զմտերմութիւն սիրոյն: Առ ակին աղաղակեցին: Հանին թաղեցին առ առն իւրում: Դիպեցան միմեանց առ ակն ծովուն Բզնունեաց: Եւ ետու առ նոսա զթողթս թագաւորին: Եւ չկայր և ս որ անդ առ նմա: Եւ չէին առ գերեզմանօք մեռելոցն: Անցանէի ես առ մեհենի միով:

Վարժություն 165. *Թարգմանել գրաբար՝ ընդգծված բառերը դնելով առ նախդիրով և հայցական հոլովով (թարգմանելիս կապերը վերանում են):*

Ուղարկեցին երկու մարդ նրա մոտ: Զո սիրո համար արեցի: Եվ նրանք եկան նրանց գորագույնների, իշխանների և հազարապետների մոտ: Հանդիպեցին (դիպեցան) միմյանց Տղմուտ գետի ափին: Երկու պահապաններ կային խորանի դռների մոտ: Հրովարտակ գրեց իր երկրի բոլոր նախարարներին, իշխաններին և մեծամեծներին: Մի առակ ասաց նրանց մասին: Այդ օրը նրանք մեզ մոտ գիշերեցին (ազան): Սաստիկ ցավերից ճշում էր: Նրանք զնացին հրապարակ՝ տանջելու և սպանելու համար գերիներին:

Վարժություն 166. *Թարգմանել գրաբար՝ ընդգծված բառերը դնելով առ նախդիրով և համապատասխան հոլովներով (տրական, բացառական, գործիական):*

Այդ բոլորն արեց մարդկանց նկատմամբ իր բարերարությունը ցույց տալու նպատակով: Տուն է շինում գետի եզերքին: Տրդատի օրոք քրիստոնեությունը տարածվեց Հայաստանում: Ամոթից շիկնում էր: Սա նրա համեմատությամբ փոքր է: Թաղեցին նրան եկեղեցու մոտ: Երկյուղից գիշերը փախավ քաղաքից: Փակեցին իրենց ականջները՝ ճշմարտությունը չլսելու համար: Նախանձից մատնեցին նրան:

Եւ եկեալ Նիխոր յաշխարհն Հայոց՝ ոչ իշխեաց միջամխել¹ ի Հայոց տեղիսս, այլ դադարեալ ի գաւառին որ կոչէր Հեր, ի գեօղն որում անուն էր Նուարսակ, առաքեաց նա պատգամաւորս առ Մամիկոնեանն Վահան զՇապուի խորհրդեան դպիր և զՄիիր-Վշնասպ Գուարշացի, որովք տայր զհտել նմա զիրս գալոյն իւրոյ ի Հայս, և թէ «Հրովարտակ ունիմ առ ձեզ ի թագաւորէն Վաղարշու՝ նուաճել զձեզ խաղաղութեամբ, և յամենայն աւագորերոյ² որ յԱրիս են՝ պատգամ ունիմ առ ձեզ. արդ՝ արիք եկայք և լուարուք. և որպէս է ձեզ հաճոյ և խորհիք՝ ընտրեցէք որ բարին է»:

Եւ տեսեալ Վահանայ Մամիկոնէի զպատգամաւորսն Նիխորոյ, և լուեալ զայս ամենայն բանս պատգամին ի նոցանէն՝ ժողովէր առ ինքն զամենայն հաւատարիմ ուխտապահացն գունդ, գնախարարս և զագատս և զամենայն այրև ձիոյ. և հրամայէր Մամիկոնեանն Վահան եկելոցն ի Նիխորոյ՝ ասել առաջի ամենեցուն զբանս թագաւորին Վաղարշու և զբանս ամենայն Արեաց աւագանոյն: Եւ տուեալ լսել Մամիկոնեանին Վահանայ ամենայն Հայորեւորոյն³ միահամուռ զպատգամն Նիխորոյ՝ ասէր ցպատգամաւորսն Պարսից՝ առ վաղիւն առնել նոցա պատասխանի:

Եւ ժողովեալ ի վաղիւն ամենայն Հայորեւորոյն առ Մամիկոնեանն Վահան, և խորհեալ նախ ընդ միմեանս զվաղնջուց զպետս և զխնդիր իրացն, եկեալ և պատգամաւորացն Նիխորոյ յատեանն՝ սկսաւ խօսել Մամիկոնեանն և առնել պատասխանի բանիցն Նիխորոյ. «Եւ մեր ապստամբութեան իրացն, և յայսպիսի կարևոր և մահաբեր գործ տալ զանձինս՝ բազում են բանք և կարևոր⁴. և չէ հնար գրով վճարել⁵ և կամ պատգամաւ, բայց եթէ յանդիման խօսել ընդ նմա՝ որ Արեաց տէրն է և ընդ ձեզ՝ որ դրանն աւագանի էք: Բայց երիս բանս ասեմ ձեզ, որ թէ այս երից բանիցս պատասխանի առնէ ինձ, որպէս ես կամիմ և ամենեքեան սոքա որ աստէն իսկ են, և կարէ զայս երիս խնդիրս տալ մեզ գրով և կնքով թագաւորին՝ զամենայն գոր ինչ ասէք, զպատեհն և զարժանն՝ առնեմք, և բանի ձերոյ լսեմք՝ որպէս և նախնիքն մեր լուան: Քանզի ոչ իմ բանքս, գոր խօսիմս ես ընդ ձեզ այժմս, այլ նոցա ամենեցուն, աւագի և կրտսերոյ, որ այժմ ձեր առաջի են. և ոչ եթէ այսօր ինչ խորհեալ կամ իմացեալ է մեր զբանս զայս, այլ յաւուր, յորում տուաք զանձինս ի մահ՝ նախ զայս երիս ընտրութիւնս խորհեալ եղաք այր ամենայն առաջի: Եթէ յանձն առցեն Պարսիկք թողացուցանել մեզ զայս երիս իրս՝ ծառայեսցուք նոցա որպէս ըզբնիկ և զհաւատարիմ ծառայս. և եթէ ոչ հաւանին յանձն առնուլ, և խստանան՝ ելցուք ըստ աշխարհ և կորիցուք և խնդութեամբ մեռցուք, այլ Պարսկի առն երկիր ոչ պագցուք:

«Եւ է մին յերիցն՝ նախ և առաջին խնդիրս այս կարևոր և պիտանի. եթէ գիտարեմի և զբնիկ օրէնս մեր ի մեզ թողուք, և զՀայ այր գոք մի՝ մոգ ոչ առնէք, և ումեք յաղագս մոգութեան գահ և պատիւ չտայք, և զկրակարանն յաշխարհէս Հայոց ի բաց տանիք, և զեկեղեցոյ թշնամանս յաղտեղի և յանպիտան մարդկանէ, որ ցայժմ լինէր, յայսմ հետէ մեզ չտայք տեսանել. և քրիստոնէայ մարդկան և քահանայից զկարգ և զպաշտօնն քրիստոնէութեան համարձակութեամբ և աներկիւղ տայք պաշտել՝ ուր և կամին. ապա բարի է, և առաջին խնդիրն մեր այդ է:

«Եւ երկրորդ խնդիրն այս է, թէ զմարդ ոչ իշխանաբար⁶ ճանաչէք, այլ իրաւաբար գիտել զլաւն և զվատթարն, ընտրել զպիտանին և զանպիտանն, իմանալ զտոհմիկն և զանտոհմիկն, ունել առ լաւսն և պատուականս՝ զբաջն և զօգտակարն, արհամարհել և առ ոչինչ համարել զվատն և զանպիտանն. սիրել զվաստակարսն և ատել զանվաստակն, ունել ի մօտ զիմաստունս և խորհուրդս առնել, և զանմիտն ոչ մօտեցուցանել, այլ և ի հրապարակէ և ս հալածել: Եւ յորժամ այս ամենայն այսպէս լինի՝ ամենայն իրք Արեաց աշխարհիս աջող լինի և անսխալ. ապա եթէ զընդդէմն սիրէք, որպէս և ցայժմ, և ոչ զդէպսն՝ և գործքն այդպէս ընդդէմ լինին, որպէս և եղենդ իսկ, և տեսէք:

«Եւ երրորդ խնդիր մեր այս է. որ տերն է Արեաց և աշխարհի թագաւոր՝ կամինք, զի ինքն տեսցէ իւրովք աչօք, և ինքն լուիցէ իւրովք ականջօք, և ինքն զիտասցէ և ինքն խօսեսցի իւրովք բերանով. և մի՛ այլոյ աչօք տեսցէ և այլոյ ականջօք լուիցէ և այլովք հանապազ զիտասցէ զմարդ լաւ և զանլաւ, և այլոյ բերանով խօսեսցի զպէտսն: Յաղագս որոյ չլինի ուղիղ հայեցումն, և ոչ արդար լտողութիւնն. այլ յոլով սուտ խօսքն ճանաչին և հրամանքն ընդունայնք, և բնաւ այլ ընդ այլոյ լինի իմաստն ամենայն: Եւ յորժամ այս ամենայն այսպէս լինի՝ կործանեալ ամենայն վաստակք՝ ծառայիւքն կորնչին, և ոչ կարել կալ աշխարհ և ի նմա բնակեալք անշարժ և հաստատուն: Բայց թագաւոր, որ իւրովք առողջ աչօքն հայի և աննախանձ լտողութեամբ լսէ և արդար բանի խօսի ընդ իւր ծառայս՝ կենդանացեալ ծառայքն՝ չյազին վաստակով, այլ յաւելեալ ի վաստակն՝ օր քան զօր աճեցուցանել ջանան զբարին: Այսպէս աշխարհ շինի, և տերն շքեղացեալ պայծառանայ հանապազ:

«Արդ՝ եթէ զայդ այդպէս կարէք խոստանալ, զխոստացեալսն գրով և կրնքով հաստատեալ տայք ցմեզ՝ ապա կոչեա՛, և զամբ կամաւ և լսենք բանից ձերոց, և հրամանի թագաւորին հաւանիմք գոր ինչ ասէ: Ապա եթէ զայս երիս խնդիրս ոչ կարէք տալ մեզ, և զիտէք թէ չէ հնար՝ որպէս եղեալ մեզ մահ առաջի՝ պատրաստ ենք մեռանել, այլ ծառայութիւն առնել Արեաց տեսուն չկարենք: Եւ այլ բանք, որ ինչ են, թէ ինձ լինի գալ՝ ինձէն իսկ խօսիմ ընդ նմա, ապա թէ ոչ լինի դէպ գալ՝ մնացե՛ բանն և իրքն»:

(Ղազար Փարպեցի, դրուագ Գ, 2Թ)

¹ միջամխել-խոր մերս մտնել, խորանալ
² սաագորեար-ազնվականներ, իշխանավորներ
³ հայորեար-հայ ազնվականներ
⁴ կամ իշխանավորներ
⁵ ամբողջ նախադասութիւնը պետք է

թարգմանել այսպէս. մենք, որ տվել ենք մեզ ապստամբութեան և այսպիսի կարևոր ու մահաբեր գործի, կարևոր խոսքեր ունենք ասելու
⁵ այստեղ՝ արտահայտել
⁶ այստեղ՝ ազատորեն, քմահաճ կերպով

ԴԱՍ ԵՐԵՍՈՒՆՅՈՒԹԵՐՈՐԴ

2

§ 194. 2 նախդիրը գործածվում է հայցական, տրական, բացառական և գործիական հոլովների հետ:

1. ա) Հայցական հոլովով դրված բառը, երբ գործածվում է որոշյալ առումով, սովորաբար ստանում է *զ* նախդիր: Այս դեպքում հայցական հոլովը, բացի *զ* նախդիրից, կարող է ստանալ նաև *ն* հոդ. օրինակ՝ Ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր (Ծննդ., Ա, 1)=երկինքն ու երկիրը: Չմիջնաբերդն (=միջնաբերդը) ամրացուցանել բարձր պարսպօք (Խոր., 2-րդ, ԼԹ):

բ) Հայցական հոլովի հետ *զ* նախդիրը կարող է արտահայտել գործիական հոլովի իմաստ. օրինակ՝ Չի՞ գործես. զմահ (=մահով) աղուեսու սպանից զքեզ (Բուգ., 4-րդ, ԾԳ): Եւ գրէր նամակ առ Մամիկոնեանն Վահան օրինակ զայս (Փարպ., 3-րդ, Գ)=այս ձևով:

2. 2 նախդիրը տրական հոլովի հետ գործածվում է միայն *հարկանել*, *զարկանել* բայերի մոտ. օրինակ՝ Յետս յետս չոգան և *զարկան զգետնի* (Յովի., ԺԸ, 6)=զարկվեցին գետնին: *Ծափ զծափի հարին* (=ծափ տվին) ամենայն անցաւորք ճանապարհի (Ողբ Երեմ., Բ, 15): *Չսհի հարաւ* (=վախեցավ) Աղեքսանդրոս. ընթացաւ եկն առ դատաւորն (Թռռն., Բ, էջ 111):

3. ա) Բացառական հոլովի հետ *զ* նախդիրը կազմում է «պատմական հոլով», որն աշխարհաբար թարգմանվում է սեռական հոլովով և *մասին* կապով կամ միայն բացառական հոլովով: Այս դեպքում բացառականի *ի* նախդիրն ընկնում է: 2 նախդրով և բացառական հոլովով խնդիր են պահանջում ասելու, խոսելու, պատմելու, մտածելու իմաստ և զգացական ու հոգեկան վիճակ արտահայտող բայերը՝ ասել, խօսել (իմ), պատմել, հարցանել, վկայել, գիտել, ուսուցանել, զարմանալ, գոհանալ, տրտնջել և այլն. օրինակ՝ Ահաւաղիկ է այրն գորմէ (=որի մասին) ասացի քեզ (Ա Թագ., Թ, 17): Թշնամիք չարախօսելին ըզնըմանէ (Խոր., 2-րդ, ԻԹ)=նրա մասին: Չկիտացն ասեն և զղելփինաց (Եզնիկ, 1-ին, ԻԵ)=Գետերի և դելֆինների մասին են ասում: Դու գիտես զի սուտ վկայեն զինէն (Դան., ԺԳ, 43)=իմ մասին: Ուսուցանէ զբարոյ և զարդարոյ և զչա-

րէ (Եզնիկ, 4-րդ, Ա)=Սովորեցնում է բարու, արդարի և չարի մասին: Եւ ես գոհ էի զվաստակոց քոց (Ազ., Ե, 51)=Եվ ես գոհ էի քո ծառայություններից:

բ) Բռնելու, կապելու կամ կախելու իմաստ արտահայտող մի քանի բայեր՝ *ունիմ* (բռնելու իմաստով), *առնուլ* (բռնելու իմաստով), *բուռն հարկանել*, *կախել*, *կապել*, նույնպես պահանջում են *զ* նախդրով և բացառական հոլովով անուղղակի խնդիր, որն աշխարհաբար թարգմանվում է բացառական կամ հայցական հոլովներով. օրինակ՝ Եհաս և բուռն եհար զԹեկղէ (Թռռն., Բ, էջ 105)=Թեկղին: Կապեսցէ զգրաստ իւր զորթոյ (Ազ., ԼԹ, 376)=որթից: Բուռն եհար զձորձոց (=շորերից) նորա (Ծննդ., ԼԹ, 19): Կախեսցին զմանուկն Գրիգորիս զագւոյ (=պոչից) զձիոյն (Բուզ., 3-րդ, Զ):

գ) Մի քանի բայերի մոտ (հատկապես՝ առաքել, յղէ, արձակել, զնալ, երթալ և այլն) *զ* նախդիրն արտահայտում է *նպատակի* գաղափար. օրինակ՝ Ապա թագաւորն Պարսից... տաճիկ ուղտուք արձակէ ի Հայս արս զհողոյ և ըզջրոյ (Բուզ., 4-րդ, ԾԳ)=հողի և ջրի: Եւ ընդ սակաւ աուրս եկին բերին զայն ինչ, զորմէ (=ինչի համար) յղեսցն (Բուզ., 4-րդ, ԾԳ):

4. Գործիական հոլովի հետ *զ* նախդիրը կազմում է «պարառական հոլով» և ցույց է տալիս.

ա) Տեղ՝ *շուրջ* կամ *վրա* իմաստներով: Այս դեպքում *զ* նախդիրից առաջ հաճախ դրվում է *շուրջ* կապը: Աշխարհաբար թարգմանվում է *շուրջ* կապով կամ առանց *շուրջ* կապի՝ տարբեր հոլովներով. օրինակ՝ Նստան շուրջ զբերդաւն (=բերդի շուրջ) ամիսք երեքտասան (Բուզ., 4-րդ, ԾԵ): Պատահէին երանելւոյն զափամբ (=ափին) Ռահ գետոյն (Կոր., Թ): Եթող զիւր զբանակն զՍատաղ քաղաքաւն (Բուզ., 3-րդ, ԻԱ)=քաղաքի շուրջը: Եւ առեալ զջուրն էարկ զգլխով (=գլխին) նորա (Բուզ., 6-րդ, Ը): Չհանդերձս իւրեանց տարածանէին զճանապարհաւն (Ղուկ., ԺԹ, 36)=ճանապարհի վրա:

բ) Մոտավոր ժամանակ. օրինակ՝ Եւ ելեալ զերրորդ ժամու (=ժամը երեքի մոտերը) ետես այլ զի կային դատարկք ի հրապարակս (Մատթ., Ի, 3): Չայնու ժամանակաւ (=այն ժամանակները կամ այն ժամանակ) ասպտամբեաց յարքայէն Հայոց... մեծ իշխանն Աղձնեաց (Բուզ., 3-րդ, Թ):

գ) Մի շարք բայեր ընդունում են *զ* նախդրով և գործիական հոլովով անուղղակի խնդիր, որն աշխարհաբար թարգմանվում է տարբեր հոլովներով: Այդ բայերից են՝ անցանել, ելանել, դիզանել, ծիծաղել(իմ), ծաղր առնել, այլն առնել, կատակել, արհամարհել, հայել(իմ), զգուշանալ և այլն: Օրինակներ՝ Բայց յորժամ դու զայդ խնդրեցեր, անցեալ լիցիս զօրինօք Արեաց թագաւորութեանս (Բուզ., 5-րդ, Է)՝ Բայց երբ դու այդ խնդրեցիր, թող այդ բացառություն լինի Արյաց թագավորության օրենքից: Եւ երկոքեան անցեալ էին զատորբք իւրեանց (Ղուկ., Ա, 7)՝ Երկուսն էլ իրենց օրերն անցկացրել էին (ծերացել էին): Ծաղր առնէ զերիվարաւ և զհեծելով նորա (Յովբ., ԼԹ, 18)՝ Ծաղրում է ձիուն և նրա հեծնողին: Այլ մեք ոչ կարեմք անցանել զհրամանաւ մերոյ թագաւորին (Եղիշէ, էջ 171)՝ Իսկ մենք չենք կարող մեր թագավորի հրամանից

դուրս գալ (հրամանից անցնել, հրամանը չկատարել): Սկսան իբրև արբեալք անզգայք զմիմեամբք ելանել ի բանից պատասխանիս (Եղիշէ, էջ 161)՝ Հարբած ու անզգայացած մարդու նման սկսեցին միմյանց գերազանցել պատասխաններ տալու մեջ: Չգուշանայր զասիմանօքն Հայոց (Բուզ., 5-րդ, ԼԳ)՝ Չգուշությամբ պահպանում էր Հայաստանի սահմանները: Այիք զալեօք դիզանէին (ՆՀԲ)=Այիքները դիզվում էին այիքների վրա: Որ կատակէ զաղբատով՝ բարկացուցանէ զարարիչ նորա (Առակ., ԺԷ, 5)՝ Ով ծաղրի աղբատին, կբարկացնի նրա արարչին: Այսպն առնէին զնովաւ և հարկանէին (ՆՀԲ)՝ Նրան ծաղրում էին և ծեծում:

դ) Գործիական հոլովի հետ *զ* նախդիրը կազմում է մի շարք ոճեր՝ *զմտաւ ածել* «մտածել», *զարով երթալ* «սրից ընկնել, սրով սպանվել», *զմիմեամբք ելանել* «միմյանցից առաջ անցնել, իրար անցնել», *զձեռօք* (զձեռամբ, զբռամբ) *ածել*, «ձեռքը զցել, ձեռք բերել» և այլն:

Վարժույթյուն 167. *Թարգմանել, բացատրել, թե ո՞ր հոլովի հետ և ի՞նչ նշանակությամբ է գործածված զ նախդիրը:*

Չսմանէ երգիչքն Գողթան առասպելաբանէն: Արկին հող զգլխովք իւրեանց: Նա և մեք զահի հարեալ ենք և յոյժ երկնչիմք: Տես քանի ամբաստանեն զբէն: Հրամայեաց կախել զնա զլիսիվայր զմիոյ ոտանէն: Եւ շուրջ զգերեզմանաւ լինէին կամատր մահունք: Չայսու ժամանակաւ միաբանեալ Ալանք լեռնականօքն ամենայնի... մեծաւ ամբոխի տարածեալ ընդ աշխարհս մեր: Ահս պակուցանողս տարազուք յարձակմանցն սկայազունքն զմիմեամբք արկանէին: Եւ արկին զնովաւ քղամիդ կարմիր: Աբրահամ և Սառա ծերացեալք էին և անցեալք զատորբք: Վերանան բարձրանան ջուրք նորա, և ոչ անցանել կարեն զասիմանաւ: Այսուհետև ես ծիծաղեցայց զկորստեամբ ձերով: Յայնմ ժամանակի կոչէր առ ինքն Շապուհ արքայն Պարսից զբագաւորն Հայոց զԱրշակ: Յարեաւ թագաւորն, առ զգօրս իւր և ել հայել զքաղաքաւն: Եւ զհագար ամ յաշտ արար զի թերևս որդի մի լինիցի նմա, որում անուն Որմիդդ, որ զերկինս և զերկիր և զամենայն որ ի նոսա՝ առնիցէ: Բուռն արկ զձեռանէն և համբուրէր ընդ պատուհանն: Չահի հարեալ կազմէր զտապանն ի փրկութիւն տան իւրոյ: Երթիջիք զճանապարհն ձեր:

Վարժույթյուն 168. *Թարգմանել գրաբար՝ ընդգծված բառերը դնելով զ նախդրով և համապատասխան հոլովներով:*

Չզիտեմ, թե ինչ են խոսում նրա մասին: Հրամայում է նախարարների կանանց կախել բերդի պարիսպներից: Այն ժամանակ արքան շինեց մի դաստա-

կերտ: Բռնեց նրա *աջ ձեռքից* և բարձրացրեց նրան: Մաստիկ ցավերից զարկում է գլուխը *քարին*: Հավատում էր, որ իրեն որդի կծնվի, որը կստեղծի *երկինքն* ու *երկիրը* և *բոլոր արարածներին*: *Որի մասին* իսկույն պատմեցին արքունիքում: *Ժամը տասներեքի սնտերը* արեգակն սկսեց խավարել: Շինեց քաղաք և *նրա շուրջ* տնկեց ծաղկանոցներ ու բուրաստաններ: Վերցնում էր ջուր և լցնում իր *մարմնի վրա*: Գլխիվայր կախեցին նրան բարձր *աշտարակից*: Երբ մարդիկ լսեցին, սկսեցին ծիծաղել նրա *խոսքերի վրա*: Հանեց հոների գորքերին և ասպատակեց Պարսից *կողմերը*: *Այս ձևով* ազատվեցին:

Ծաղկանոց-ծաղկոց
լցնել-արկանել

ասպատակել-ասպատակ սփռել
ազատվել-ապրել(իմ)

ՎԱՍՆ ՍՈՎՈՒՆ ԵՐՈՒՍԱԳՆԵՄԻ
(Հատուած)

... Ասացից վասն անհնարին նեղութեանցն որ եկին հասին նոցա ի սովի անդ: ... Յորեան յայտնապէս բնաւ ոչ ուրեք երև էր, զի վազվազելով ընթանային և մտանէին ի տունս և ի մառանս, և խիլ արկանէին և յուզէին¹. և թէ ինչ առ ումեք գտանէին՝ յափշտակէին. և թէ ոչ գտանէին, որք վասն սովոյն քագուցեալ էին՝ անհնարին տանջանօք չարչարէին զնոսա: Բագումք ի ծածուկ զստացուածս իրեանց փոխանակէին ընդ կապճի միոյ ցորենոյ, եթէ մեծատունք էին և եթէ աղքատք ընդ գարոյ, և թագուցանէին զանձինս ի ներքնատունս իրեանց: Եւ կէսք ի նոցանէ ի բագում կարօտութենէ զցորեանն ուտէին՝ իբրու² չէր աղացեալ և էին որ եփէին՝ որպէս և հարկ օրինին հրամայէր...: Եւ յանդստին³ ի կրակէ անտի յափշտակէին և ուտէին զկերակուրն, և արտասուաց արժանի էր տեսիլ նորին, և որ միանգամ զօրագոյնք էին քան զընկերս իրեանց յափշտակէին զնա, և որ հիւանդոտքն էին լային և կային: Բայց քան զամենայն վիշտս և նեղութիւնս անցեալ անցանէր նեղութիւն սովուն. զի իրք որ յայլում վայրի ամօթոյ պատկառանաց արժանի են, ի մէջ նորա⁴ անարգեալ արհամարիէին: Ջի կանայք յարանց իրեանց, և մանկունք ի հարց իրեանց, և կորանք քան զամենայն⁵ մարք ի բերանոյ տղայոց իրեանցն յափշտակէին զկերակուրն: Յամենայն տեղիս իսկ հասեալ ժամանէին խռովիչքն. զի յորժամ տեսանէին ուրեք դուրս փակեալ՝ նշան էր այս այնոցիկ՝ թէ կերակուր ինչ գուցէ ի ներքս, և երթային և խորտակէին զդուրսն, արտաքուստ ի ներքս անկանէին, և հասանէին ունէին զկոկորդս նոցա և հանէին զկերակուրն: ... Հատաւ յոյս կենաց նոցա. և ևս սաստկանայր սովն յամենայն

տունս. յամենայն ազգս տարածանէր, և լիզաջինջ առնէր⁶ զամենայն ժողովուրդն: Եւ տանեստան⁷ լի էին կանամքք և մանկտով որ լուծեալ անկեալ դնէին, և հրապարակք՝ ծերոցն դիակամքք. իսկ երիտասարդք և կուսանք դանդաչէին⁸ իբրև զստուեր, և իբրև պատկերք ի հրապարակս շրջէին և անկեալ գլորէին. և ճար ուրեք միոյ ի նոցանէ ոչ լինէր ի չարչարանաց, զի թաղել իսկ ոչ կարէին զսիրելիս իրեանց: Յայս ամենայն անհնարին նեղութիւնս ողբք և լալիք ոչ կային, զի սովն սաստկացեալ զամենայն վիշտս չարչարանացն մոռացուցանէր, և ցամաք աչօք հայէին ընդ այնոսիկ՝ որք զառաջէին զնոսա ի մահ: Խոր լռութիւն պատեալ էր զքաղաքանս և զիշեր լի մահուամբ. և քան զայս ամենայն⁹ աւազակքն զչարէին¹⁰, զի կողոպտէին զքիակունս մեռելոցն ի տունս իրեանց, և փորձէին զսուրս սուսերի իրեանց ի մարմինս նոցա, և յայնոսիկ՝ որ դեռ ևս ոգովն կային¹¹: Ի հասարակաց գանձուէ անտի թաղել հրամայէին զմեռեալսն, վասն զի ոչ համբերէին չար հոտոյն: Իսկ իբրև թաղել ոչ եղեն բաւական, ի պարսպէ անտի ի ձոր անդր ընկեցուն զնոսա:

(Եւսերիոս Կեսարացի. ԿԵՆՍ ԹՈՒՆ., Բ, Էջ 552-554)

¹ խիլ արկանէին և յուզէին-փնտրում էին, որոնում էին
² իբրու- մինչ, մինչդեռ, նախքան
³ այստեղ՝ իսկույն
⁴ հավանաբար՝ նոցա
⁵ կորանք քան զամենայն-և ամենից

ավելի ամոթալից այն է
⁶ լիզաջինջ առնել-լավել, ջնջել
⁷ տանեստան-տանիքներ
⁸ այստեղ՝ երերալ, տարութերվել
⁹ և քան զայս ամենայն-այս ամենից բացի
¹⁰ զչարել(իմ)-չարանալ, չարիք գործել
¹¹ ոգովն կային-կենդանի էին

Ի(3)

§ 195. *Ի* նախդիրը գործածվում է հայցական, տրական և բացառական հոլովների հետ:

1. ա) *Ի* նախդիրը հոգնակի հայցականի, ինչպես նաև սեռական-տրականում *n, ա* հոլովիչներ ունեցող արտաքին թեքման բառերի եզակի հայցականի հետ արտահայտում է ներգոյական հոլովի իմաստ (մանրամասնությունները տե՛ս համապատասխան հոլովումների բաժնում)։ օրինակ՝ Ուսուցանել նմա ի տան և ի հրապարակս (Խոր., 1-ին, էջ 93)=տանը և հրապարակներում: Աճեաց ժողովուրդն և բազմացա յԵզիպտոս (Գործ., է, 17)=Եզիպտոսում: Շինելով եկեղեցիս... ի քաղաքս, յաւանս, ի շէնս, ի գեօղս և յագարակս (Ազ., ՃԺԹ, 837):

բ) *Ի* նախդիրը հայցականը ցույց է տալիս այն տեղը, առարկան, դեպի ուր կամ դեպի որը ուղղվում է գործողությունը (ուղևորման հայցական)։ օրինակ՝ Առաքեա՛ դու դեսպանս յերկիրն Հայոց (Բուզ., 4-րդ, ԾԳ)=Հայոց երկիրը: Յարեա՛ զնաց ի տուն իւր (Բ Թագ., ԺԷ, 23)=իր տուն: Էջ յաղբերն (=աղբյուրը) և ելից զսափորն իւր (Ծննդ., ԻԴ, 16): Աճապարէին հասանել ի բանակն (=բանակը) Երուանդայ (Խոր., 2-րդ, ԽԶ):

գ) Արտահայտում է տրական հոլովի իմաստ (նախդիրով տրական): Այս իմաստով խնդիր են պահանջում մի շարք բայեր՝ հաւատալ, յուսալ, նախանձել, հայել(իմ), խնայել, մատնել, տալ, գթալ և այլն: Օրինակ՝ Ես հաւատացի ի նա (=նրան) և ի հայրն (=հորը) նորա (Խոր., 2-րդ, ԼԳ): Ի հինգերորդ ամի թագաւորութեան նորա ի նա (=նրան) հասուցանէր (Կոր., 2): Ես նստաւ Փառէն յաթոռ (=աթոռին) հայրապետական սակաւ ժամանակս (Բուզ., 3-րդ, ԺԶ): Ի կայսր և ի զօրս նորա յուսացեալ (Բուզ., 3-րդ, Ի)=Հույս դնելով կայսրի և նրա զորքի վրա:

դ) Արտահայտում է գործիական հոլովի իմաստ. օրինակ՝ Եւ երդնու Շապուի արքայն յարեզակն և ի ջուր և ի կրակ (Բուզ., 4-րդ, ԺԶ)=Շապուի արքան երդվում է արեզակով, ջրով և կրակով: Բագու՛ք զայցեն յանուն (=անունով) իմ և սպիցեն թէ ես եմ (Դուկ., ԻԱ, 8): Երդուիր ինձ յօրէնս (=կրոնով) քո (Բուզ., 4-րդ, ԺԶ):

ե) Անորոշ դերբայի հայցական հոլովի հետ ցույց է տալիս *ժամանակ*։ օրինակ՝ Իսկ ի գնալն Սմբատայ (=երբ Սմբատը գնում է) ի Պարսս հասանեն հարկահանք կայսեր (Խոր., 2-րդ, ԽԸ): Իսկ ի լինել մարտին՝ (=կովի ժամանակ) հարկանի զօրն Արայի (Խոր., 1-ին, ԺԵ): Եւ ի բախել (=բախելիս) գղուրս տանն, մատեաւ աղախին մի, ունկն դնէր (Գործ, ԺԲ, 13):

զ) Անորոշ դերբայի և իմաստով գործողության հետ կապված այլ բառերի հայցական հոլովի հետ ցույց է տալիս *նպատակ*։ օրինակ՝ Պատրաստ եմք ի սպանանել և ի մեռանել (Եղիշէ, էջ 73) =Պատրաստ ենք սպանվելու և մեռնելու: Որպէս օրէն էր զայր թագաւոր ի հաց մեծ կոչել (Բուզ., 5-րդ, ԼԲ)=մեծ

հացկերույթի կանչել: Եւ զնաց ժողովուրդն յուտել և յըմպել (Նէեմ., Ը, 12)=ուտելու և խմելու:

է) Արտահայտում է մի բան մի այլ բանի դարձնելու, վերածելու, փոխելու իմաստ. օրինակ՝ Չջուրն ի գինի դարձոյց (Ազ., Ծ, 453)=Չուրը գինի դարձրեց: Եւ հուրն ի ջուր դարձաւ (Ազ., ԿԷ, 544)=Կրակը ջրի վերածվեց (կամ՝ ջուր դարձավ): Չմատեանս և վէպս ի յոյն լեզու փոխարկեաց (Խոր., 1-ին, Բ)=Մատյաններն ու պատմությունները հունարենի փոխեց (թարգմանեց հունարեն):

2. Եզակի տրականի հետ *ի* նախդիրն արտահայտում է.

ա) Ներգոյական հոլովի իմաստ (տե՛ս համապատասխան հոլովումների բաժնում)։ օրինակ՝ Մեռանի և Արայ ի պատերազմին (=պատերազմում) ի մանկանցն Շամիրամայ (Խոր., 1-ին, ԺԵ): Եւ եզիտ զպատանեակն Գնել ի մօտաւոր տեղուջն (Բուզ., 4-րդ, ԺԵ)=մոտակա տեղում:

բ) *Վրա* իմաստը. օրինակ՝ Արդ նի՛ստ և գրեա՛ ի տախտակի (Եսայի, Լ, 8)=տախտակի վրա: Մի ոտնս ի միոյ լերին (=մի լեռան վրա) կայր, և մեա ոտնս իմ ի միոյ լերին (=մի այլ լեռան վրա) կայր (Բուզ., 4-րդ, ԾԳ):

գ) Ցույց է տալիս ժամանակ՝ սովորաբար ժամանակի իմաստ ունեցող բառերի մոտ. օրինակ՝ Ծնեալ Որմըզդի ի ժամու իւրում (Եզնիկ, 2-րդ, Ա)=իր ժամին: Յայնմ ժամանակի (=այն ժամանակ) իշխանք և զօրք և նախարարք առ նա հասանէին վաղվադակի (Ազ., Դ, 41): Ի հովուութեան (=հովվության ժամանակ) նորա բազում խաղաղութիւն լինէր աշխարհին (Բուզ., 4-րդ, Դ):

3. *Ի* նախդիրը կազմում է բացառական հոլովը (տե՛ս «Հոլովների կազմությունը» բաժինը):

Վարժություն 169. *Թարգմանել, բացատրել, թե ո՞ր հոլովի հետ և ի՞նչ նշանակությամբ է գործածված խ(յ) նախդիրը:*

Մո՛ւտ ի սենեակ քո: Եւ առցես զարուակդ իւղոյ, և արկցես ի գլուխ նորա: Փութայր հասանել ի տեղի պատերազմին: Եւ յիջանել արեզականն ի հարաւակողմն կոյս, շնչեն ցրտաշունչ սառնամանիք: Եւ ահա երկուք ի նոցանէ երթային ի նմին ատր ի գեղ մի: Չորս սպան ի կենդանութեան իւրում: Եւ ի տալ զբարմունս չասաց սա՛ թէ դու ինձ յաշտ առնիցես: Եկն դիպեցաւ սմա օտար պատանի մի աշխարհական ի ձի հեծեալ: Չարին թուխ՝ ի սպիտակ արիւն դարձուցանէ, և զմազ սեաւ ի սպիտակ մազ շրջէ: Եւ որ երդուաւ ի տանարն՝ երդնու ի նա և ի բնակիչն նորա: Ի մեծարանս ինչ զնա կոչիցէ թագաւորն: Ապա եմուտ բազմեցաւ յուտել և յըմպել: Յետ մահուանն Արգարու բաժանի թագաւորութիւնն Հայոց յերկուս: Յիմաստութիւնն քո մի՛ հպարտանայր: Իսկ թագաւորն Պապ համարէր ի միտս իւր թէ ի պատիւ ինչ նորա զայն առնիցեն: Որ հաւատայ յիս՝ հաւատայ յայն, որ առաքեացն զիս: Մնուցին զնա, և ի չափ հասուցին: Հայեցարուք ի ձեզ վասն արանցս այսոցիկ զինչ արժան իցէ գործել: Ի սիրտ և ի մարմին վստահացեալ արանց գորաւորաց: Ի նաւ մտեալ զնային ի Թրակայ: Եւ ի մտանելն նորա յԵրուսաղէմ, դղրդեցաւ քաղաքն ամենայն:

Վարժություն 170. Թարգմանել գրաբար՝ ընդգծված բառերը դնելով ի նախադրով և հայցական հոլովով:

Գաղթեց Հունաստանի կողմերը: Կուռքերի անունով էին երդվում: Կապեց նրան կապանքներով և տարավ Բաբելոն: Նրան նստեցրին ձիու վրա: Եկել էին նրան տեսնելու և լսելու նրա պատմությունները: Քո թշնամիներին պարտության կմատնի: Չէին կարողանում նայել արեգակի ճառագայթներին: Բորբոքված կրակի վրա փայտ էր ավելացնում: Չխնայեցիր քո սիրելի որդուն: Ասում են՝ Արհմնը Որմիզդին հրավիրեց ճաշի: Օտար թշնամիների ձեռքով ձեզ կդատի: Այդ բոլոր մատյանները թարգմանեց ասորի լեզվով: Նրանց սուգը ուրախություն կդարձնեմ: Գետն անցնելիս նրանցից շատերը խեղդվեցին: Երբ նա վախճանվեց, թագավորեց նրա որդին:

ավելացնել-յաելուլ	թարգմանել-փոխել, փոխարկել, յեղուլ
հրավիրել-կոչել	խեղդվել-հեղձնուլ

ՆԿԱՐԱԳԻՐ ԾՈՎՈՒ
(Հատուած)

Բարի և գեղեցիկ է ծով ի խաղաղ ժամանակի, յորժամ հանդարտացեալ կայցէ՝ յալեաց և ի մրրկաց. ի պարզ և յստակ ժամանակի, յորժամ միտ եղեալ նայիցիս ընդ ծիծաղել ջուրց նորա, որ յազգի ազգի գոյնս ցուցանեն գերին երփն նարօտուց², մերթ ծիրանույ, մերթ կապուտակի, մերթ սև աներկ երանգաց. և յորժամ քաղցրաշունչ սողոխ վետս վետս զմկանունսն ճօճեալ ճենեցուցանիցէ. յորժամ ոչ բռնութեամբ օդոյ յանդգութեան³ ծփեալ կոծիցէ գերկիր՝ զիւր դրացի, այլ խոր խաղաղութեամբ և ջերմեռանդ սիրով զիրկս արկեալ պատեալ կայցէ զցամաքս⁴: Առաջին գեղեցկութիւն ծովու այս է, զի նա է ակն մեծ խոնաութեան ջուրցն բազմութեան⁵, և յաներևոյ յանդունդս են գնացք իւրոյ յորդութեանն⁶ որպէս յայտ առնեն փոքուածք երկրի և ցնցղաձև երակք՝ որ են ի միջի նորա: Ջի ջուրք ծովու փորեն ծակոտեն գերկիր, որ և գնան ի նմա մանուածապատ շրջանօքն, շրջին կոծին ընդ վայրս բազումս, մինչև քամին պարզին աղի ճաշակքն⁵ և դառնութիւնք, և ապա բող-խեն ի ներքոյ ի վեր քաղցր և անուշ ճաշակօք, և առնին⁶ ըմպելի ուրախարար ամենայնի՝ որ գեռան յերկրի:

Դարձեալ և ջերմկաց տեղիք նկատեալք են յերկրի, և ի բազում ջերմութեանէ՝ որ մթերեալ կայ ի սիրտ երկրի, եռան ելանեն իբրև ջեռուցեալք հրատիք⁹, վասն բազմութեան ջերմութեան հրատին՝ որ իբրև հնոց բորբոքի՝ եռացուցանէ զնոսա: Եւ ի կղզիս բազումս գտանին ըստ նմին օրինակի, և անդրէն գեղերք ծովուն ընդ բազում տեղիս գտանին ջերմուկք: Եւ շուրջ զգետովքն որ գնան ի ցամաքի՝ ջուրք ջերմկաց բոխեն խառնին ի ջուրսն ցրտաբուղխս. և

այսպէս յամենայն տեղիս զնոյն գտանես: Եւ պատճառք ճառիս այս են, զի ցուցից՝ թէ ամենն ին յամենայն տեղիս փորեալ ծակոտեալ է երկիր ի ջուրց ներքին անդնդոց, որ զնոյն ծակոտեն և ի նմին գնան և ի միջի նորուն շրջին:

Բարի և գեղեցիկ է դարձեալ ծով... վասն երազընթացն գնացից ջուրցն անդնդոց, որ պայմանաւոր⁸ չափով բաժանին բաշխին ընդ ամենայն կողմանս, լինել հանգիստ ամենայնի: Բարի և գեղեցիկ է դարձեալ ծով, որ ասպնջական և հիւրամեծար է գետոց բազմաց, որ յամենայն տեղեաց մտանեն ի նա: Առնու ամփոփէ զամենեսին, և ինքն կայ ի նոյն սակի և ի նոյն սահմանի առանց թերութեան⁹ և յաւելուածութեան: Բարի և գեղեցիկ է դարձեալ ծով, զի նա է ակն զլիսաւոր ջուրցն օդոց, որ պարզին ելանեն ի նա ճառագայթիւք արեգական, յառնուլ ընդ աղօտ¹⁰ և նուրբ ջերմութեամբքն՝ քաղցրացուցանել զջուրսն քաղցրացուցիչ տապովն, որ ձգին ելանեն ի բարձունս վերինս: Եւ առնուն ջերմութիւն ի տապոյ արեգականն, և ապա դառնան հովանան հովանեօք ամպոց՝ որ զնոսա ընդունին ի շնչել հողմոց ամպավարաց¹¹: ... Եւ ապա գան հասանեն ջուրքն, լինին յանձրևս հրամանաւ Արարչին, թանան գերկիր և արբուցանեն գնա:

... Բարուք և գեղեցիկ է դարձեալ ծով, զի է պատճառք բարի. զի պնդէ ամբացուցանէ զկղզիսն՝ որ ի միջի նորա են, և պահին առանց վնասու՝ և առանց նենգութեան կերակրին ի նմանէ իբրև ի ցամաքի, և առնին¹² ի նմա գեղեցիկ օթևանք տեղտջէ ի տեղի, և ի հանգիստ այնոցիկ¹³ որք շրջին ի նմա: Բարի է և գեղեցիկ է դարձեալ ծով, զի է պատճառք բարի, քանզի նովին ընտրին¹⁴ և սահմանին աշխարհք ի միմեանց: Եւ է դարձեալ ճանապարհ յատակեալ¹⁵ ի շահ վաճառականաց, և ամենայն կերպարանօք լցուցիչ է կարօտութեան մարդկան: Շահ մեծաշահ է մեծատանց՝ բերելով զվաճառսն ազգի ազգիս. դարմանիչ և կերակրիչ է աղքատաց, զի գտանեն ի պատճառս¹⁶ նորա զպէտս կարօտութեան կենաց իւրեանց: Եւ ես զի՞նչ իցեմ, տկար մի տառապեալ կալ¹⁷ ճշգրտի պատմել զմեծապայծառ գեղ վայելչութեան ծովու:

(Բարսեղ Կեսարացի, րե՛ս Թռն., Բ, էջ 26-29)

¹ հանդարտացեալ կայցէ-հանդարտվում է
² երփն երփն նարօտուց-գույնզգույն նարտուների
³ վերացականը թանձրացականի փոխարեն
⁴ զիրկս արկեալ պատեալ կայցէ զցամաքս-գրկում-պատում է ցամաքը
⁵ այստեղ՝ համ
⁶ առնին-դառնում են, լինում են
⁷ հրատ-բոցավառ կրակ
⁸ պայմանաւոր-հավասար, չափավոր
⁹ առանց թերութեան-առանց

պակասելու՝ նվազելու
¹⁰ աղօտ-մեղմ
¹¹ ամպավար-ամպերը ցրող
¹² առնին. այստեղ՝ շինվում են
¹³ ի հանգիստ այնոցիկ-նրանց հանգստի համար
¹⁴ ընտրին-բաժանվում են
¹⁵ այստեղ՝ հարթ
¹⁶ ի պատճառս-ճորտիկով, միջոցով
¹⁷ ավելադրություն է

ԸՆԴ

§ 196. Ընդ նախդիրը գործածվում է հայցական, սեռական, տրական, բացառական և գործիական հոլովների հետ:

1. Հայցական հոլովի հետ արտահայտում է.

ա) *Հետ, հետ միասին* իմաստները (հատկապես հոգնակի հայցականի հետ). օրինակ՝ Աւար բազում ածին ընդ իւրեանս (Բ Թագ., Գ, 22)=իրենց հետ: Գամք ընդ քեզ (=քեզ հետ միասին) յաշխարհն քո (Թռռն., Բ, էջ 518): Վաճառականք ձեր խառնեն ջուր ընդ գինի (Եսայի, Ա, 22)=գինու հետ:

բ) Յույց է տալիս գործողության ուղղությունը դեպի մի տեղ (ուղև որման հայցական). օրինակ՝ Ապա հրաման տայր ընդ կողմանս կողմանս (=դեպի զանազան կողմեր) դեսպանս արձակել (Ազ., Ա, 22): Յորժամ ընդ արևելս (=դեպի արևելք) ընթանան (Եզնիկ, 1-ին, Գ):

գ) Տրական հոլովի իմաստ (նախդրիվ տրական). օրինակ՝ Հայեցեալ ընդ նա (=նրան կամ նրա վրա), զարհուրեցաւ (Գործ., Ժ, 4): Չարմանային ամենեքեան... ընդ իմաստութիւնն (=իմաստության վրա) և ընդ պատասխանիս (=պատասխանների վրա) նորա (Ղուկ., Բ, 47): Նախանձէր նա ընդ փառսն (=փառքին) Մանուէլի (Բուզ., 5-րդ, ԼԸ):

դ) Միջով, միջից, վրայից, վրայով, տարածությանը իմաստները. օրինակ՝ Ընդ եղեգան փող (=փողով, փողի միջով) ծուխ ելանէր (Խոր., 1-ին, ԼԱ): Անցին ընդ հուրն և ընդ ջուրն (Ազ., ՉԳ, 636)=Անցան կրակի և ջրի միջով: Եւ հոսեցաւ ծառայեցաւ ընդ դաշտս (=դաշտերով մեկ) ամենայն (Ազ., ՃԲ, 739):

ե) Գործիական հոլովի իմաստ. օրինակ՝ Կորեան ընդ քո ձեռն (Փարս., 3-րդ, ՂԵ)=Կորան քո ձեռքով: Ծառայ որ ընդ ունկն (=ակնջով) ոչ լսէ՝ ընդ մկանունս (=մկաններով) տան լսել նմա (Եզնիկ, 1-ին, ԺԵ):

զ) Տեղ, որն աշխարհաբար թարգմանվում է սովորաբար ներգոյական, տրական կամ հայցական հոլովներով. օրինակ՝ Ընդ ամենայն կողմանս (=բոլոր կողմերում) գաւառացն դներ հիմունս եկեղեցեաց (Ազ., ՃԺԷ, 831): Եւ շրջէր ընդ քաղաքս և ընդ գեղս (Ղուկ., ԺԳ, 22)=Շրջում էր քաղաքներում և գյուղերում:

է) Անորոշ դերբայի և ժամանակ ցույց տվող գոյականների հետ ցույց է տալիս ժամանակ. օրինակ՝ Ընդ ծագել (=ծագելու ժամանակ) արեգականն զգունդն յերիս մասունս բաժանեալ ի բանակն արկանէին (Եղիշէ, էջ 66): Ընդ առաօտն (=առավոտյան) հանեալ տանէր զկապեալսն յապարանսն իւր (Եղիշէ, էջ 152):

ը) Եւ շաղկապով կրկնվելով արտահայտում է միջև իմաստը. օրինակ՝ Մի՛ լիցի կռիւ ընդ իս և ընդ քեզ, և ընդ հովիս իմ և ընդ հովիս քո (Ծննդ., ԺԳ, 8)=Թող չլինի կռիվ իմ և քո միջև, իմ հովիվների և քո հովիվների միջև:

Այսպիսի կրկնությամբ ցույց է տրվում նաև առարկաների միասին վերցված լինելը, ամբողջականությունը. օրինակ՝ Ընդ այր և ընդ կին և ընդ մանուկ ատելի քան զչորեք հարիւր բիւր (Ազ., ՃԺԹ, 835)=Տղամարդ, կին և մանուկ միասին՝ ավելի քան չորս հարյուր բյուր:

թ) Կախել բայի մոտ ցույց է տալիս այն առարկան, որից մի քան է կախվում. օրինակ՝ Եւ կախեաց գնոսա չուանաւ ընդ պատուհանն (Յեսու., Բ, 15)=պատուհանից:

ժ) Կազմում է առանձին ոճեր՝ ընդ գինիս մտանել=գինովնալ, հանել ընդ սուր=սրի մատնել, ընդ ակամբ հայել=ծուռ աչքով նայել, ընդ այս ընդ այն=այս ու այն կողմ:

2. Ընդ նախդիրը սեռական հոլովի հետ առանձին կամ փոխանակ բառի հետ միասին արտահայտում է փոխարեն, դիմաց, երբեմն էլ՝ համար իմաստները. օրինակ՝ Նա ինձ չար ընդ բարոյ հատոյց (Բուզ., 4-րդ, ԾԳ)=Նա ինձ բարու փոխարեն (դիմաց) չար հատուցեց: Մահու պատիժ փոխանակ ընդ վատութեանն կրեն (Եզնիկ, 1-ին, ԺԳ)=Վատության համար (դիմաց) մահվան պատիժ են կրում: Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման (Ելք, ԻԱ, 24)=Աչքի փոխարեն աչք, ատամի փոխարեն ատամ:

3. Ընդ նախդիրը եզակի տրականի հետ արտահայտում է հետ, հետ միասին իմաստը. օրինակ՝ Դաշինս կռէր ընդ նմա (Ազ., ՃԻԶ, 877)=նրա հետ: Ընդ ո՞ւմ (=ո՞ւմ հետ) խօսեցայց (Երեմ., Զ, 10): Քացախ ընդ լեղոյ (=լեղու հետ) խառնեալ մատուցանէին (Ազ., ԾԵ, 476):

4. Ընդ նախդիրը բացառական հոլովի հետ, առանց ի նախդրի, նշանակում է կողմից, կողմը (կողմում) կամ արտահայտում է միայն բացառական հոլովի իմաստ. օրինակ՝ Եւ եղև ջուրն պարիսպ ընդ աջմէ (=աջ կողմից) նոցա (Ելք., ԺԳ, 22): Նիստ ընդ աջմէ (=աջ կողմը, կողմում) իմմէ (Մարկ., ԺԲ, 36): Այսպես էլ ընդ կողմանէ «կողմից», ընդ հարաւոյ «հարավից» և այլն:

5. Ընդ նախդիրը գործիական հոլովի հետ նշանակում է տակ՝ տարածական, այլ և ենթարկման, հնազանդման իմաստներով. օրինակ՝ Ոչ լուցանեն ճրագ և դնեն ընդ գրուանաւ (=ամանի տակ), այլ ի վերայ աշտանակի (Մատթ., Ե, 15): Որ ոչ ընդ նովին օրինօք մտանէին (Եղիշէ, էջ 6)=Ովքեր չէին ենթարկվում նույն կրոնին:

Վարժություն 171. Թարգմանել, բացատրել, թե ո՞ր հոլովի հետ և ի՞նչ նշանակությամբ է գործածված ընդ նախդիրը:

Ընդ մտանել արևուն մտցէ ի բանակն: Չայլ ականաւոր և քաջ արս ի պարսիկ մարդկանէ հանին ընդ սուր: Եւ չոգաւ ընդ նմա Թեկղ և եմուտ ի տուն նորա: Աւերէին զամենայն երկիր սահմանացն, որ ընդ Պարսից թագաւորութեամբն և ընդ իշխանութեամբն էր: Դատաստան կայ իմ ընդ քեզ: Արդ աղաչեմ զքեզ և զամենեսեան, որ ընդ քոյով իշխանութեամբ են: Յայնժամ թքին

ընդ երեսու նորա: Առաքեցին ընդ ամենայն գաւառն: Գւնա՛ դու ի կողմն հարաւոյ ընդ ճանապարհի, որ իջանէ յԵրուսաղէմն ի Գազա: Եւ եթէ տեսանիցես ընկերի քո անկեալ ընդ բեռամբ, մի՛ գանց առնիցես զնովաւ, այլ յարուսցես զնա ընդ նմա: Շրջի ընդ անջրդիւն տեղիս: Ծածկեցին զմարմին սրբոյն Դանիէլի ընդ հողով: Կռուեցան տարի մի ընդ Արուանից արքայի: Թոյլ տուք, անցից ընդ երկիր քո: Արդ փոխանակ ընդ ձեր՝ ես աղաչեմ զձեզ: Ի ծագել իւրում ելանէ ընդ հարաւ, և պատի ընդ հիւսիսիս: Գտին զիս պահապանքն, որ շրջէին ընդ քաղաքն: Սի՛ լիցի պատերազմ ընդ իս և ընդ քեզ: Եւ այլն անկաւ յերկիր բարուք, և ելեալ աճեցեալ տայր պտուղ, և բերէր ընդ միոյ երեսուն և ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարեր: Տրտմեալ ընդ մահ աղջկանն, տխրացեալ սգայր:

Վարժություն 172. *Թարգմանել գրաբար՝ ընդգծված բառերը դնելով ընդ նախորդով և հայցական հոլովով:*

Վիճում էին *միմյանց հետ*: Յամաք *ելնելիս* պատահեց նրան մի մարդ քաղաքից: Ավետավորներ ուղարկեց իր երկրի բոլոր *կողմերը*: Նրանք էլ գնացին *նրանց հետ*: Անցան Հորդանան *գետով*: Բուսնելիս չորացավ: Իսկ Պարսից քաղաքավորը զարմացավ Մուշեղի *բարերարության և քաջության վրա*: Նրանց համբավը տարածվեց ամբողջ *աշխարհում*: Այլ *ճանապարհով* գնացին իրենց երկիրը: Չարմացավ նրա *խոսքերի վրա*: Չեր անասունները թող ուտեն հարդ՝ *գարու հետ* խառնած: Երեսուն տարի կռվեց իր *քննամիտների դեմ*: Մեծ վիհ կա *մեր և ձեր միջև*: Սի՛ նախանձիր նրա *փառքին*: Կախվեց *երկնքի և երկրի միջև*:

Վարժություն 173. *Թարգմանել գրաբար՝ ընդգծված բառերը դնելով ընդ նախորդով և համապատասխան հոլովներով (սեռական, տրական, բացառական, գործիական):*

Նրա *փոխարեն* թագավորեց նրա որդին: Հաշտվիր քո *եղբոր հետ*: Չագերին կտաքացնի իր *թևերի տակ*: Ասա, որ սրանցից մեկը նստի քո *աջ կողմում*, իսկ մյուսը՝ *ձախ կողմում*: Նստեցին *ծառերի տակ*: Նրա քույրերը եկել էին *նրա հետ*: Իմ *ձեռքի տակ* ունեմ զինվորներ: Հայոց աշխարհն ընկավ պարսից անօրեն *լծի տակ*:

ՆՐԴԵՏ

Իցէ՞ տեսեալ՝ յորժամ հրդեհ զմեծամեծ տանց հարկանիցի, զիարդ ցոլանայ բոցն և ծուխն և անդր յերկինս կցի, և չիք որ ժտի մատչել և զչարն շիջուցանել. այլ ամենայն ոք ընդ անձին ճեպի՞ և զիւրն միայն գիտէ. և հրդեհն ոչ մեղմով՝ այլ սաստիկ զամենայն ճարակեցի. և բազում անգամ ամենայն քաղաքն շուրջ կայցէ և տեսողք և եթ չարեացն լինիցին, և ոչ զօրաւիզն և օգնա-

կանք: Եւ անդ իցէ տեսանել զի ոչ ինչ օգուտն լինիցին որ շուրջն կայցեն, այլ իւրաքանչիւր ոք զձեռս ձգիցեն և նոցա որ առ ժամայն՝ իցեն եկեալ՝ զտեղի իմն ցուցանիցեն, կամ ընդ պատուհանս զբոցն ցոլացեալ, կամ զգերանսն որ հապ՝ կիսայրեաց անկանիցին, կամ ողջոյն իսկ զփողոցսն՝ որ միանգամայն ի սեանցն և ի մութից՝ զերծանիցին և յերկիրն կործանիցին: Իցեն թերևս և բազումք յանդուռք և ի վտեր եկեալք՝ որ և մօտ իսկ ժտիցին ի հրդեհ շինուածոյն հասանել. ոչ զի ձեռն տայցեն և զչարն շիջուցանիցեն, այլ զի ցանկալի իմն զտեսիլն համարիցին յորժամ ի մօտոյն ստոյգ կարիցեն նշմարել, որոց մինչ ի բացեայն կային՝ չերևէր այնպէս: Եւ անտի զի՞նչ օգուտ գտանիցեն, բայց թէ միայն վնաս: Եւ եթէ զեղեցիկ և ս և մեծամեծ շինուածքն իցեն, զայն համարին եղուկ և ողորմ՝ բազում արտասուաց արժանի: Նա և է իսկ ողորմ տեսիլ. քանզի սիւնքն հանդերձ ախաւեղագէս՝ խոյակօքն մանրիցին և ի յատակսն կործանիցին. և իցէ ինչ բազում գոր ինքեանք բեկտիցեն, կէսն ի հրոյն այրեցի, և զկէսն շինողացն ձեռքն մղիցեն ընկենուցուն, զի մի և ս քան զև ս սաստիկ ջամբ՝ հրոյն լինիցի: Անդ իցէ տեսանել և զբազում պատկերսն գոր ազգի ազգի նկարուք քանդակեալ դրօշեալ, որք յորժամ ձեղումքն բանայցեն և մերկ յարկացն՝ լինիցին, բազում անշքութեամբ մերկացեալ խանձատեալ նշաւակ կայցեն. և զազգի ազգի զհանդերձսն, և զոսկեղէն և զարծաթեղէն անօթն, գոր յանկարծ ուրեք՝ տանուտէրն հանդերձ իրով միայն ամուսնովն տեսանէր, սապատք՝ հանդերձիցն և խնկոցն կաւառայրք՝ ի մարմարակուռ սենեակսն յերփնէրփն կճեիցն՝ դրուագացն՝ ամենայն միանգամայն ի միոյ հրոյն զռեհիկ կաճառանոց՝ լինիցի: Եւ հասանէ տեսանել այնուիտես աղբակիրս, որթաւորս՝, թիաւորս, զամենեսեան խառն և անհարց ի ներքս մտեալ: Եւ այլ ինչ ոչ իցէ անդ տեսանել՝ բայց միայն ջուր և հուր և կաւ և մոխիր և զփայտսն թերայրեացս:

(Յովհանն Ոսկերեան. րե՛ս Թռն., Ա, էջ 165-168)

- | | |
|---|---|
| ¹ փխ. իցէ՞ քո տեսեալ | նշանակում են՝ ցավալի |
| ² ճեպել ընդ անձին-ինքն իր համար | ⁹ հոմանիշ է հաջորդ բառին |
| հոգալու շտապել | ¹⁰ ջամբ- կեր, ճարակ |
| ³ այստեղ՝ դեռ նոր | ¹¹ փխ. ի յարկացն |
| ⁴ հապ-միանգամից | ¹² յանկարծ ուրեք-քիչ անգամ |
| ⁵ այստեղ՝ պատշգամբ իմաստով | ¹³ սապատ-արկղ |
| ⁶ մոյթ, մութի, ից. նեցուկ, հենարան | ¹⁴ կաւառայր (խնկոց)-խնկաման |
| ⁷ յանդուռք և ի վտեր եկեալք. | ¹⁵ կուճ, կիճ-կարծր և փայլուն բար, մարմար |
| հոմանիշ բառեր են՝ վտանգի մեջ | ¹⁶ գռեհիկ կաճառանոց-հասարակ (ռամիկ) |
| նետվողներ, հանդուգներ | մարդկանց հավաքատեղի |
| ⁸ եղուկ և ողորմ. նույնանիշ բառեր են, | ¹⁷ որթաւոր-կողով տանող |

§ 197. Ըստ նախդիրը գործածվում է հայցական, տրական և բացառական հոլովների հետ:

1. ա) *Ելանել, անցանել, հանել* և նման բայերի մոտ *ըստ* նախդիրը, դրվելով հայցական հոլովի վրա, նշանակում է *դուրս, մի բանից այն կողմ*, որն աշխարհաբար կարելի է թարգմանել նաև բացառական հոլովով. օրինակ՝ Կամէր թագաւորն ըստ քաղաքն (=քաղաքից դուրս) ելանել (Ազ., Ի, 219): Եւ ամպարիշտք անցին ըստ սահման (Յովբ, ԻԳ, 2)=սահմանից: Ոչ կարացին հանել ըստ ձորակն (Ազ., ՃԺԴ, 811)=այն ձորակից դուրս: Անցէք ըստ ջուրդ (ԲԹագ., ԺԷ, 21)=Անցէք այդ ջրից այն կողմ:

բ) Հայցականի հետ (հատկապես հոգնակի թվում) նշանակում է՝ *ըստ, համաձայն, համեմատ, պես, նայելով*. օրինակ՝ Մի՛ ըստ աչս դատիք, այլ ուղիղ դատաստան արարէք (Յովհ., Է, 24)=Աչքերի համեմատ (աչքերի տեսքով) մի՛ դատէք, այլ ուղիղ դատաստան արեք: Կաց ըստ իս՝ և ես ըստ քեզ (Յովբ., ԼԳ, 6)=Մնա ինձ պես, և ես՝ քեզ պես: Այն են ազգք որդոց Նոյի ըստ ծնունդս իւրեանց, ըստ տոհմս իւրեանց (Ծննդ., Ժ, 32)=Սրանք են Նոյի որդիների ազգերը՝ ըստ իրենց ծնունդների և տոհմերի:

2. Տրական հոլովի հետ *ըստ* նախդիրը նշանակում է՝ *ըստ, համաձայն, նման*, որն աշխարհաբար կարող է թարգմանվել նաև գործիական հոլովով. օրինակ՝ Առէք գնա դուք, և ըստ ձերոց օրինացն (=ձեր օրենքի համաձայն, ձեր օրենքով) դատեցարուք (Յովհ., ԺԸ, 31): Եւ տանջեցին զնա տասն մարդ՝ ըստ հրամանի (=հրամանի համաձայն, հրամանով), թագաւորին (Ազ., Է, 74): Ըստ պատկերի (=պատկերի նման) Աստուծոյ արար զմարդն (Ազ., ԼԲ, 329):

3. Ըստ նախդիրը բացառական հոլովի հետ, առանց *ի* նախդրի, ցույց է տալիս *հաջորդականություն*. օրինակ՝ մի ըստ միոջէ=մեկ առ մեկ, ամ ըստ ամէ=տարեցտարի, օր ըստ օրէ=օրեցօր և այլն: Եւ օր ըստ օրէ բերէին իբրև զգէշ ընկենուին ի մեծ հրապարակին (Եղիշէ, էջ 139): Չսոցանէ, որ մի ըստ միոջէ անուանեցան թագաւորք (Թոռն., Ա, էջ 360): Այր ըստ առնէ մոլորեցան (Եսայի, ԽԷ, 15)=Իրար ետևից մոլորվեցին:

Յ

§ 198. Յ նախդիրը գործածվում է միայն հայցական հոլովի հետ:

ա) Յ նախդիրն առանձին կամ *մինչև* բառի հետ միասին, դրվելով հայցական հոլովի վրա, նշանակում է *մինչև*. օրինակ՝ Որ ցայժմ (=մինչև այժմ) կենդանի կայ (Եզնիկ, 1-ին, ԻԵ): Մինչև ցայսօր (=մինչև այսօր) կենդանի պահեցեր զնոսա (Եղիշէ, էջ 143):

բ) *Ասել, տալ, հարցանել* բայերի մոտ *ց* նախդիրը, դրվելով հայցական հո-

լովի վրա, արտահայտում է տրական հոլովի իմաստ. օրինակ՝ Ասէ ցնա (=նրան) դատաւորն (Թոռն., Բ, էջ 112): Յմեզ զի՞ հարցանէք (Եղիշէ, էջ 135)՝ Ինչո՞ւ եք մեզ հարցնում: Չբարսմունսն զոր ի ձեռնին ունէր՝ ցորդին իւր ցՈրմիզդ ետ (Եզնիկ, 2-րդ, Ե)=Բարսմունքը, որ բռնում էր իր ձեռքում, սվեց իր որդուն՝ Որմիզդին:

Վարժություն 174. Թարգմանել, բացատրել, թե ո՞ր հոլովի հետ և ի՞նչ նշանակությամբ են գործածված *ըստ* և *ց* նախդիրները:

Չամենայն ազգս ժողովեա՛ւ և անցո՛ ըստ Պահ դուռն ի ներքս: Եւ յայնժամ հատուցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր: Ըստ այսմ պատճենի հրովարտակ եհաս յաշխարհն Հայոց: Իբրև ելին ըստ քաղաքն... ասէ Յովսէփ ցհազարապետն իւր: Ըստ կամաց քոց արա զինչ և կամիս: Սոքա են որդիք Քամայ յազգս իւրեանց, ըստ լեզուս իւրեանց: Որոց ջուրն ըստ աճել լուսնին՝ աճէ, և ըստ լնուլն՝ լնու, և ըստ պակասելն՝ պակասէ: Եւ կատարեալ դահճացն զգործն ըստ հրամանին Վեհղենշապիոյ: Եւ զմիօրինակ զթագն օր ըստ օրէ ինքեան և նմա թագաւորն Պարսից զարդ պատրաստէր: Ժողովեցին զամենայն զգերին քաղաքին ի մի վայր, և անցուցին ըստ Տափերն կամուրջ: Չայս ամենայն կարգաւ, մի ըստ միոջէ ոճով պատմեցից: Ետ ցնա զթագաւորութիւնն հազար ամ: Յայժմ ես վասն քո յաշտ առնէի:

Վարժություն 175. Թարգմանել գրաբար՝ ընդգծված բառերը դնելով համապատասխան նախդիրով (ըստ, ց) և հոլովով (հայցական, տրական, բացառական):

Տանջեցին նրանց տրված *հրամանի համաձայն*: Երբեք չեն անցնում իրենց *սահմաններից*: Նրա *պես* արդար մարդ չկա: Չէին կարողանում *քաղաքից* դուրս ելնել: Ինչ որ պատմում էին այդ քաղաքի շինության մասին, *մեկ առ մեկ* գրեց: Մի՛ անցիր այս *բլուրից այն կողմ*: Նրանց դատեցին իրենց *գործերի համեմատ*: Օրեցօր գրում և ցույց էր տալիս մեծ հազարապետին: *Տարեցտարի* տոնում էին (տօնախմբելին) նրանց հիշատակը: Այդ բոլորը կատարեց իր *սովորության համաձայն*: Նրանցից կրտսերն ասում է *հորը*:

ՃԱՌՔ
(Հատուած)

1. Եւ մի՛ զարմանայցես, եթէ թեթև բնութիւնն զմարմինն ծանր եքարձ. նախ աստէն իսկ յայսմ արարածս՝ որ մեզս երև ին, է՛ ինչ որ բնութեամբ՝ ծանր է, և է՛ ինչ որ յախտարակաց՝ թեթև է. և չէ ինչ ըստ ծանրութեան և ոչ ըստ մե-

ծութեան, այլ ըստ իրաց բնութեան արարածոց, որպէս զհարոյ և իցէ: Ընդէ՞ր ամենայն մայրք մեծամեծք, և թէ ամենայն իսկ անտառք կոտորեսցին և ի ջուր անկանիցին, չընկղմեսցին. և զասեղն մի փոքրիկ կամ սակաւ ինչ քծուար³ յերկաթոյ՝ չկարէ ծով մեծ ի վեր ունել: Եւ այսպէս՝ ոչ ըստ մեծութեան ինչ է⁴ և ոչ ըստ ծանրութեան, այլ յարարչին արուեստէ. բայց սակայն երկաթոյ ուրոյն առանձին չէ հնար ի վերոյ ջուրոց կալ, այլ թեթև իիիք⁵ կայ ի վերայ ջրոց, և կրի տեղեաց ի տեղիս: Լնուն գնաւս մեծամեծս երկաթով, և տանին յո և կամին. և քանզի թեթև է փայտի բնութիւն, բառնայ թեթևն զծանրն: Առ մեւս և ս այլ օրինակ. մարդ չկարէ բազում ժամս ի վերայ ջուրոց դողալ⁶. թէպէտ և զարուեստն գիտիցէ, այլ քանզի չկարէ կարի ի տոկ ձգել⁷ առանց հանգչելոյ, աշխատին⁸ բազուկքն, և հարկ լինի ընկղմելոյ:

(Սերերիանոս Եմեսացի. փե՛ս Թռնն., Ա, էջ 272-273)

¹ փխ. յայս արարածս կամ՝ յարարածս յայտասիկ	կախում ունի և ոչ...
² այստեղ՝ ֆիզիկապէս	⁵ թեթև իիիք-թեթև բաներով, առարկաներով
³ քծուար-մետաղի կտոր, քծուար յերկաթոյ-երկաթի (բառացի՝ երկաթից) կտոր	⁶ դողալ, դողիմ, դողիմ-լողալ
⁴ ոչ ըստ մեծութեան ինչ է-ոչ մեծությունից	⁷ ի տոկ ձգել(իմ)-երկար տևել շարունակել
	⁸ այստեղ՝ հոգնելու նշանակությամբ

2. Չոր օրինակ յորժամ բժիշկն զերկաթն ի գործ արկանէ և խարանս ի մարմինն դնէ, ոչ այնու ընդ մարդոյն կռուի, այլ ընդ ցաւս մարտնչի...: Մի՞թէ տեսեր երբեք զբժիշկ առ ցասման ձեռն ի գործ արկեալ, կամ առ զայրացոս¹ ինչ ի խարանս մատուցեալ, կամ այլ ինչ նոյնպիսի. թէպէտ և հիւանդին՝ երեսքն բժշկին ահագին թուեսցին, այլ բժշկին օգուտ գործել կայ ի միտս...²:

Վիրածն³ յորժամ տեսանիցէ զբժիշկն՝ զի կտրել զվերն կամիցի, ահագին համարի, և իբրև ի թշնամոյ խուսափէ. իսկ յորժամ բժշկեսցի, գոր երբեմն տեսանէր և զերեսս դարձուցանէր՝ յետոյ մօտ հայի և երկիր պագանէ: Եթէ չգիտիցեմք իսկ, զի առ զայրացոս ցաւոցն՝ թշնամանս դնեն հիւանդքն բժշկացն, և բժիշկն ներէ զայրացելոցն. քանզի գիտէ եթէ ոչ ի կամացն են թըշնամանքն՝ այլ առ ցաւս: Իսկ յորժամ ապաքինին յախտէն՝ և վարձ և ս տան նոցա, գորս անագորոնս⁴ համարէին. տան վարձս՝ ոչ իբրև պահանջեալք, այլ ինքնակամ յօժարութեամբ:

(Սերերիանոս Եմեսացի. փե՛ս Թռնն., Ա, էջ 294-295)

¹ սովորաբար՝ առ զայրուցս-զայրությանից, բարկությունից	³ վերք ունեցողը
² կայ ի միտս-մտադրվել է	⁴ անագորոյն կամ անագորոն-դաժան, անգուրք

§ 199. Բացի բուն նախդիրներից (առ, գ, ի, ընդ, ըստ, ց), գրաբարում կան նախդիրների դերով հանդես եկող այլ բառեր (վասն, յաղագս, առանց, զհետ, առաջի, զկնի, ի սակս և այլն), որոնք կոչվում են նախադրություններ: Դրանք ծագում են տարբեր խոսքի մասերից, մեծ մասամբ քարացած հոլովաձև եր են և հաճախ գործածված բուն նախդիրների հետ (պատճառաւ, աղագաւ, ի ներքոյ, ի վերայ, իբրև գ, մերձ առ, մինչև ց և այլն):

Նախադրություններն ընդհանրապես դրվում են իրենց խնդիրներից առաջ: Որոշ նախադրություններ (հանդերձ, զկնի, առաջի) կարող են գործածվել և՛ նախադաս, և՛ ետադաս, իսկ մի քանի նախադրություններ (պէս, չափ, աղագաւ) լինում են միայն ետադաս՝ որպէս ետադրություններ:

Ի տարբերություն բուն նախդիրների (բացի ց-ից), որոնք գործածվում են տարբեր հոլովների հետ, նախադրությունները հիմնականում պահանջում են միայն մեկ հոլովով խնդիր:

Հայցական խնդրով նախադրություններ

Իբրև գ, որպէս գ (=ինչպէս, իբրև, նման, պէս). Իբրև զկեղև նռան են այտք քո (Երգ., Դ, 3): Եւ եղերո՛ք դուք, ասէ, խորագէտք իբրև զօճս (Ագ., ՀԸ, 602): Որպէս զեղբարս հարազատս... յանպատում ուրախութեան ուրախ լինէին (Բուգ., 4-րդ, ԺԶ):

Քան գ. Այս նախադրությունը հայցական հոլովի հետ՝ ա) կազմում է ածականների համեմատական կամ բաղդատական աստիճանը, օրինակ՝ Հզօր և իմաստունն էր քան զհայրն (Եզնիկ, 2-րդ, Զ)=Հորից ավելի հզոր և իմաստուն էր. բ) նշանակում է չափ, օրինակ՝ Եթէ ունիցիք հաւատս քան զհատ մանանխոյ (Մատթ., ԺԷ, 19)=Եթէ մանանխի հատի չափ հավատք ունենաք:

Ծանոթություն. Հաճախ *քան գ-ից* առաջ նախադրության նշանակությամբ գործածվում են մի շարք մակբայներ՝ *արտաքոյ, արտաքս, ի ներքս, յառաջ, ի վեր, ի վերոյ* և այլն: Այս դեպքում *քան գ* նախադրության խնդիրը թարգմանվում է սովորաբար բացառական հոլովով. օրինակ՝ Հանին գնա արտաքոյ քան զայգին և սպանին (Մատթ., ԻԱ, 39)=Նրան այգուց դուրս հանեցին և սպանեցին: Եւ եթէ էր ոք ի վեր քան գնա և քան զորդին (Եզնիկ, 2-րդ, Ե)=Եվ եթէ նրանից և նրա որդուց ավելի վեր մեկը կար:

Մօտ ի(յ), մօտ առ, մերձ ի(յ), մերձ առ. Պատահէր նմա մերձ ի սահմանս Վրաց (Եղիշէ, էջ 75): Երբեալ նստեր մօտ առ դին (Բուգ., 4-րդ, ԺԵ):

Մինչև ի(յ), մինչև ց. Յարև մտից մինչև յարևելս երթայ (Ագ., Է, 92): Ամենեքին ծանիցեն զիս ի փոքրկանց մինչև ցմեծամեծս նոցա (Եբր., Ը, 11):

Սեռական խնդրով նախադրություններ

Վասն (=համար, պատճառով, մասին). Աղօթս մատուցաներ վասն նոցա փրկութեան (Ազ., Ի, 224): Հարցին և ցնոսա վասն նորա (Եղիշէ, էջ 133): Վասն ձերոյ յամառութեանդ եղև այդ ամենայն (Եղիշէ, էջ 161):

Յաղագս (=մասին, վերաբերյալ, համար). Յաղագս շինուածոյ Երուանդաշատ քաղաքի (Խոր., 2-րդ, ԼԹ):

Աղագս (=պատճառով, համար). ունի ետադաս գործածություն: Այնր աղագս պատուիրեր նմա (Եզնիկ, 2-րդ, Ե):

Պատճառաւ, ի պատճառաւ (=պատճառով, պատրվակով, նպատակով, համար). *պատճառաւ* նախադրությունն ունի միայն ետադաս գործածություն: Եւ հատուածի պատճառաւ (=գաղթի պատրվակով) փախստական լինի յԱրտաշիւ (Խոր., 2-րդ, ՀԳ): Եղեաք առ ձեզ... և ոչ ի պատճառաւ ազահութեան (ԱԹեառ., Բ, 5): Առաքէ յԵրուսաղէմ հանդերձ հեծելազօրո. իբր թէ ի պատճառաւ խաղաղութեան (Խոր., 2-րդ, ԺԹ):

Առանց. Ոչ է պատմութիւնն ճշմարիտ առանց ժամանակագրութեան (Խոր., 2-րդ, ՉԲ):

Յետ (=հետո). Եւ յետ ինն հազար ամի Որմիզ թագաւորեսցէ (Եզնիկ, 2-րդ, Ա): Յետ այնորիկ ետու գնա ընկենուլ ի խոր վիրապն (Ազ., ԺԲ, 136):

Ձեւտ (=ետևից). Շրջէին զհետ նորա (Ազ., ՃԺԶ, 818): Թողցէ այր զհայր իւր և զմայր և երթիցէ զհետ կնոջ իւրոյ (Ճննդ., Բ, 24):

Ձկնի (=ետևից, հետո), Եկ զկնի իմ. և յարուցեալ զնաց զկնի նորա (Մատթ., Թ, 9): Աղաղակեաց զկնի նորա (Գ Թագ., ԺԷ, 10):

Առաջի (=առաջ, առջև). գործածվում է նախադաս, երբեմն էլ՝ ետադաս: Ածէին զնա առաջի մեծի թագաւորին Խոսրովու (Բուզ., 3-րդ, Ը): Յորժամ քո առաջի զմատեանդ ընթեռնուցուն (Ազ., ՃԻԷ, 897):

Ի մէջ (=մեջ, միջև). Եւ նա էջ և սպան զառիծմ ի մէջ գրին (Բ Թագ., ԻԳ, 20): Եղև խաղաղութիւն ի մէջ թագաւորին Յունաց և ի մէջ թագաւորին Պարսից (Բուզ., 4-րդ, ԻԱ):

Ի վերայ (=վրա). լինում է նախադաս, հազվադեպ՝ ետադաս: Յարձակեցան ի վերայ բերդիցն (Եղիշէ, էջ 68): Ոչ թողին բնաւ քար ի քարի վերայ (Բուզ., 4-րդ, ԾԵ):

Ի ներքոյ (=ներքև, տակ). Մնալով ի ներքոյ ձեանն զերիս տիւս և զերիս զիշերս (Խոր., 2-րդ, ԼԶ):

Յանդիման, յանդէպ (նաև՝ *ի հանդէպ, ի հանդիպէ, ընդդէմ*) (=դիմաց, դեմ). Եւ եհան զԱդամ, և բնակեցոյց յանդիման դրախտի (Ճննդ., Գ, 24): Բանակեցաւ յանդէպ լերինն (ՆՀԲ): Մատի՛ր, յառաջեա՛ ընդդէմ սրոյն (Եղիշէ, էջ 178):

Ի ձեռն (=ձեռքով, միջոցով). Ոչ միայն ի ձեռն արանց, այլ և ի ձեռն կանանց սրբոց քարոզեցաւ աւետարանն (Ազ., ԴԲ, 684):

Փոխանակ (=փոխանակ, փոխարեն). գործածվում է առանձին կամ *ընդ*

նախդրի հետ միասին: Փոխանակ իւր յղեաց զիւր աթոռակիցն զԽաղ (Բուզ., 4-րդ, ԺԵ): Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարոյ (Մաղմ., ԼԷ (ԼԸ), 21):

Չօրէն (=նման, պես). Չօրէն ազատ էրեոյ շրջէին ի մէջ ծաղկաբեր լեռանց (Եղիշէ, էջ 194):

Սակս, ի սակս (=պատճառով, համար). ունեն թե՛ նախադաս, թե՛ ետադաս գործածություն: Մի՛ կակակածեր ի կայսերէ սակս այնր (Խոր., 2-րդ, Լ)=այդ պատճառով (դրա համար): Այդպես էլ՝ ի ձեր սակս=ձեր պատճառով, յորոյ ի սակս=որի պատճառով, ոչ ի մեղացն սակս=ոչ այդ մեղքերի պատճառով և այլն:

Բացառական խնդրով նախադրություններ

Բաց, բայց (=բացի). Ոչ ոք գոյր ընդ մեզ ի տանն բաց ի մէնջ երկոցունց (Գ Թագ., Գ, 18): Չիք աստուած բայց ի նմանէ (Եղիշէ, էջ 163):

Գաղտ (=գաղտնի). Գաղտ ի մօրէն երթայր յեկեղեցին (ՆՀԲ):

Հեռի (=հեռու). Ճակատէր ոչ հեռի յիւրմէ բանակէն (Խոր., 2-րդ, ԽԶ): Նըստաւ Դենշապուհ արտաքոյ բանակին... հեռի երկոտասան հրասախաւ (Եղիշէ, 159):

Մեկուսի (=հեռու, մի կողմ, դուրս, զատ). Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէ անտի (Մարկ., Է, 33)=այն ամբոխից հեռու (մի կողմ): Այսպես էլ՝ մեկուսի ի ճանապարհէն=ճանապարհից մի կողմ՝ հեռու, մեկուսի ի բանակէ=բանակից մի կողմ՝ հեռու՝ դուրս և այլն:

Ուրոյն (=բացի, առանց, զատ). Սովոր էր ուրոյն ի նոցանէ (=առանց նրանց) կալ յաղթոս (ՆՀԲ): Եւ փոխեալ անդր զամենայն ինչ յԱրմաւրայ, ուրոյն ի կոռցն (Խոր., 2-րդ, ԽԷ)=բացի կուռքերից:

Հետէ (=ի վեր, հետո). գործածվում է միայն ետադաս: Նոքա ի վաղնջուց հետէ (=վաղուց ի վեր) էին իսկ կուրացեալք (Եղիշէ, էջ 55): Յայն օրէ հետէ (=այն օրվանից ի վեր)... յուզեցաւ պատերազմ (Բուզ., 4-րդ, Ի):

Գործիական խնդրով նախադրություններ

Հանդերձ (=հետ, հետ միասին, հանդերձ). գործածվում է և՛ նախադաս, և՛ ետադաս: Գնայ յերկիրն Արարադայ... հանդերձ որդուվք իւրովք (Խոր., 1-ին, Ժ): Հանդերձ նոքօք դիմեաց եմուտ ի բերդն Արտագերից (Բուզ., 4-րդ, ԾԵ): Խաղայր գնայր ամենայն գօրօքն հանդերձ (Ազ., ՃԸ, 778):

Շուրջ զ. (=շուրջ). Եւ զգօրսն ամենայն սփռէր տարածանէր շուրջ զքաղաքան (Եղիշէ, էջ 88): Եւ նստան շուրջ զբերդան ամիսք երեքտասան (Բուզ., 4-րդ, ԾԵ):

Չափ (=չափ). ունի միայն ետադաս գործածություն: Թէ՛ ձեւք չափ (=ձեր չափ) իմանայցեմ (Յովք, ԼԲ, 12): Հինգ հարիւրով չափ (=հինգ հարյուրի չափ) յականէ յանուանէ ճանաչեմ (Եղիշէ, էջ 199-200):

Վարժություն 176. *Թարգմանել, բացատրել, թե որ հոլովի հետ և ինչ նշանակությամբ են գործածված նախադրությունները:*

Յետ Արտաշիսի առաջնոյ թագաւորէ Տիգրան որդի նորա: Հանդերձ օգնականօք իւրովք իջանէր ի քաղաքն Սամոսատացոց: Լուցանէին ջահս ի վերայ աշտարակացն քաղաքին: Երթային զհետ նոցա երգովք և նուագարանօք: Լուարո՛ւք ամենեքեան, զի մահ առն իմոյ վասն իմ եղև: Տիգրիս, նա է որ երթայ յանդիման Ատրեստանի: Երկիրն դողայր ի ներքոյ նոցա: Յաղագս Շամիրամայ, թէ է՛ր աղագաւ կոտորեաց գորդիս իւր: Փոխանակ ցորենոյ բուսցի եղինճ, և փոխանակ գարոյ մորենի: Սիրեցին զխաւար առաւել քան զլոյս: Եւ առեւծ իբրև զեզն յարդ կերիցէ: Բանակէր մօտ ի գեօղն: Քանզի էր սպանեալ նորա զհայր իւր Վարդան՝ յաղագս ուրացութեան: Խաւար կալաւ զերկիր մինչև ցինն ժամ աւուրն: Դուք ի ձեռն ձերոց սպասատրացդ գործէք: Ամենեքեան բերանաբաց հառաչէին զկնի նորա: Դի՛ր ուխտ ի մէջ իմ և քո, և ի մէջ հօր իմոյ և հօր քո: Բայց ի նախարարէ ումեմնէ՝ որոյ անուն Օտայ կոչիւր: Ելեալ երթայր հատուածի պատճառաւ ի կողմանս Հայոց: Քո առաջի այսօր տալոց եմ պատասխանի: Երթ առ փարաւուն... և կացցես հանդէպ նորա: Ածին փոս զբանակաւն իրեանց մօտ ի լեռանն ի Նպատ մերձ ի զետն Եփրատ: Կռուէր մինչև յամն վեցերորդ Արտաշիսի արքայի Հայոց, որդոյն Վռամշապհոյ: Չիք այլ ոք բաց ի նմանէ, ոչ երիցագոյն և ոչ կրսերագոյն:

Վարժություն 177. *Թարգմանել գրաբար, ընդգծված բառերն արտահայտել համապատասխան նախադրություններով (յաղագս, վասն, հանդերձ, յանդիման, բաց, ի վերայ, ի մէջ, զկնի, քան զ, մինչև ց(ի), իբրև զ, փոխանակ) և նրանց պահանջած հոլովներով:*

Նախարարների հետ միասին ներկայացավ (յանդիման եղև) թագավորին: Իմ որդու պես սիրեցի քեզ: Մեր հայրերի և եղբայրների մասին, որոնք քաջաբար կռվեցին իրենց հայրենիքի փրկության համար: Իմ պատճառով կհալածեն և կչարչարեն ձեզ: Այս վեմի վրա կշինեմ իմ տունը: Կամենում էին խռովություն գցել երկու քաջ ազգերի մեջ: Շատերը գնացին նրա ետևից: Արեգակը լուսնից ավելի մեծ է: Նրա մահվանից հետո Հայոց թագավորությունը բաժանվում է երկու մասի (յերկուս): Իր փոխարեն նրա մոտ ուղարկեց իր ընկերոջը: Ծովից մինչև ծով էին ձգվում նրա տերության սահմանները: Բոլորը ցրվեցին, բացի նրանից: Մինչև երբ պիտի լինեն ձեզ հետ:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆՆ ՆԻՆՈՒԷԱՅԻՈՑ

Ահա հրաման հասեալ (էր) առ մարգարէն Յովնան քարոզել Նիմուէի: Եմուտ ի քաղաքն և ահել ձայն նորա խռովեցոյց զամենեսեան: Քաղաքն հեթանոսաց խռովեցաւ ի ձեռն քարոզին Հեբրայեցոյ: ... Լուաւ թագաւորն և տրամնէ

ցաւ. ընկէց զթագ իւր և խոնարհեցաւ: Լուան իշխանքն և տագնապեցան, և փոխանակ պատմութեանի քորձ զգեցան: Լուան ծերքն պատուականք և արկին մոխիր ի գլուխս իրեանց: Լուան մեծատունք և բացին զգանձս իրեանց աղքատաց: Լուան փոխատուքն և մութակաւ գործեցին զարդարութիւն: Լուան փոխառուքն և փութապէս հատուցին զպարտսն: Ամենայն մարդ վասն անձին իւրոյ խոկայր յարդարութիւն: Ոչ գոյր անդ մարդ խորանանկ, թէ որպէս զրկեցէ: Ի պատերազմ ստուգութեան մտեալ էին. զի ամենայն մարդ զանձն իւր շահեցի: Յովնանու լուան գողք և աւագակք, և զկապուտն դարձուցին տերանց իւրեանց: Կողոպտոյն տեարքն արհամարհեցին զինչս իրեանց, և աւագակացն եղեն թողիչք: Ամենայն մարդ զանձն իւր խոշտանգէր, զի բարկութիւն զամենեսեան կշտամբէր: Լուան սպանողքն և խոստովան եղեն, և արհամարհեցին զահ դատաւորացն: Լուան դատաւորքն և լռեցին, զի կորեան դատաստանքն ի բարկութենէն: Ամենայն մարդ գողորմութիւն սերմանէր, զի հնձեցէ զփրկութիւն: Յովնանու լուան մեղաւորք և խոստովան եղեն զմեղս իւրեանց: Լուաւ քաղաքն աղտեղեալ և մերկացաւ զաղտեղութիւն իւր:

... Յովնան իբրև առաքեցաւ յայն քաղաք, ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Երեք ատուրք են և Նիմուէ տապալեցի: Եւ ի ձայնէ նորա շարժեցաւ քաղաքն և պատեաց զնա մէզ և մառախտոյ: Մրտաբէկ և սրտակոտոր լինէր Նիմուէ, զի ետես զդէմս մարգարէին թէ ահագին էին և սաստիկ:

... Յարեաւ թագաւորն և կանայք իւր, և ի բաց եղին զթագն ի զլիտյ թագաւորին. զի լուան թէ վաղիւն չիցեմք: Ամենայն քաղաքն միաբան գոչեցին առ Աստուած, վասն զի ի գոչել հողմոյն պտուտկէր զհող երկրին, զի երկինք խռովեալ էին. ամայք և մէզք զմիմեամբք պատեին, և զօրացեալ թանձրանայր մառախտոյն: Փայլակն զփայլակն բախէր, որոտումն որոտման պատահէր, կայծակունք զկայծակունս ստիպէին. դողումն անդ և հիանալ սրտի: Ամենայն մարդ ընդ գետին հայէր, թէ ահաւասիկ տապալի: Լային ամենեքեան զմիմեանս ի կատարել ատուրցն: Եհաս ժամն այն. կացին ամենեքեան յաստիճան մահու, բունն հարին զմիմեամբք, վասն զի եհաս յուսահատութիւնն: Եւ ի լալն իւրեանց հայէին ընդ միմեանս, եթէ եկն զիշերս և երէր մեզ խաւար անմեկնելի. եկն զիշերս և ահա չիք մեզ տեսանել զառաւօտն: Եւ ասէին, թէ յորո՞ւմ պահու կործանի. յերեկորեա՞յ երբէք տապալի. եթէ առաւօտուն կործանի. յորո՞ւմ պահու արդէօք գայ ձայն գուժին: Կարծէին թէ յերեկորեայ տապալի, եկն երեկոյն և նա կայր կանգուն: Ակն ունէին եթէ ի զիշերի ընկղմեցի. եղև զիշեր և նա կայր և ստակալին: Ակն ունէին եթէ առաւօտուն կործանի. բացաւ առաւօտն՝ բացաւ ողորմութեան և գթութեան դուն Աստուծոյ ի վերայ քաղաքին: Չի յայն ատուրսն երկիրն ի շարժմանէ ոչ դաղարէր, յայս վեց եօթներորդան երանի էր մեռելոց քան նոցա. կենդանի մեռեալ էին, և չէին թողեալ: Եղբայր եղբօր պատահէր, և ոչ ճանաչէր զկերպարանս նորա. և ոչ ունկն կարաց ի միմեանց մեկնել զձայն ի ձայնէ: Իբրև զխանձող կրակի էին ի պահոց. մորթ և ոսկերք լոկ մնացին:

(Եփրեմ Ասորի. Կենսագրութեան, Բ, էջ 502-515)

ԳՐԱԲԱՐԻ ՀԱՏԸՆՏԻՐ

ԿՈՐԻԻՆ (5-ԲԳ Դ.)

ՎԱՐՔ ՄԱՇՏՈՅԻ (Հատուածք)

Յետ այնորիկ առնոյր հաւանութիւն երանելի Մաշտոց հանդերձ օգնականօքն, որոց առաջնունն Տիրայր անուն ի Խորձենական գաւառէն, և երկրորդին Մուշէ անուն ի նահանգէ Տարօնոյ, հանդերձ այլովք և սպասաւորօք աւետարանին, զոր չեմք բաւական ըստ անուանցն նշանակել, երթեալ իջանէր յՌոտաստակն Գողթան, յառաջին դաստակերտն իւր: Եւ կարգէր յամենայն զիւրս գաւառին՝ դասս սրբոց վանականաց:

Ապա յետ այնորիկ ի սահմանակիցս ի Սիւնական աշխարհն ելանէր: Եւ ժողովեալ մանկունս առ ի նիւթ վարդապետութեանն, առաւել զգազանամիտ զվայրենագոյն զճիւղաբարոյ կողմանցն, դայեկաբար սնուցանել և խրատել, ապա և զերկիրն Սիւնեաց դասուք վանականաց լնոյր:

Դարձեալ յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ, հոգ ի մտի արկանէր և վասն բարբարոսական կողմանց: Եւ առնոյր կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուին: Գրէր, կարգէր և օրինօք յարդարէր. և առնոյր ընդ իւր զոմանս լաւագոյնս յաշակերտաց իւրոց, յարուցեալ գնայր իջանել ի կողմանս Վրաց: Եւ երթեալ յանդիման լինէր թագաւորին, որում անուն էր Բակուր, և եպիսկոպոսի աշխարհին՝ Մովսէս: Եւ նորա զիւր արուեստն առաջի արկեալ՝ խրատէր յորդորելով. յորում և յանձն առեալ ամենեցուն զխնդրելի կատարել: Եւ գտեալ զայր մի թարգման վրացերէն լեզուին, որ անուանեալ կոչէր Ջաղայ, այր զրագէտ և ճշմարտահաւատ. հրաման տայր այնուհետև արքայն Վրաց՝ ի կողմանց կողմանց, և ի խառնադանջ գաւառաց իշխանութեան իւրոյ՝ ժողովել մանկունս և տալ ի ձեռն վարդապետին:

Իսկ իբրև ընդ ամենայն տեղիս Վրաց կարգեալ զգործ աստուածապաշտութեանն, այնուհետև հրաժարեալ ի նոցանէ՝ դառնայր յերկիրն Հայոց և պատահեալ Սահակայ կաթողիկոսին Հայոց, պատմէր նմա զողջութենէ եղելոցն: Խորհուրդ առնէր այնուհետև վասն կէս ազգին Հայոց, որ էր ընդ իշխանութեամբ թագաւորին Հռոմոնց: Եւ փութացեալ գնայր հանդերձ աշակերտօք բազմօք, անցանել ի կողմանս Յունաց: Հասանէին ի թագաւորակաց քաղաքն Կոստանդինական, զորմէ իսկոյն պատմէին յարքունիսն, և մտեալ առաջի պատուական արքոռոյն՝ յանդիման լինէր աստուածակարգ թագաւորացն և

հայրապետին: Եւ ապա ցուցեալ կայսերն զպիտոյիցն զհանգամանս, և առեալ զանընդդիմակաց հրամանն հանդերձ սակերօք¹ կայսերագիր նշանակելովք՝ վասն մանկտոյն յաշակերտութիւնն առ ի կէս ազգէն Հայոց ժողովելոյ: Գային հասանէին ի ժամադիր կողմանս, և անդէն վաղվաղակի պատահեալ սպարապետին Հայոց, հանդերձ սակերօք կայսեր յանդիման լինէին: Եւ նորա առեալ սակերս կայսերական նշանօք, փութայր վաղվաղակի զհրամանն կատարել: Եւ հրեշտակս արձակեալ այնուհետև ի գաւառս կէս ազգին Հայոց յիշխանութեանն կայսեր, բազմութիւն մանկտոյ ժողովել:

Յայնմ ժամանակի եկեալ դիպէր նմա այր մի երէց աղուան ազգաւ, Բենիամէն անուն. և նորա հարցեալ և քննեալ զբարբարոս զբանս աղուաներէն լեզուին, առնէր ապա նշանագիրս:

Յետ այնորիկ հրաժարեալ բազում աշակերտօք զայր անցանէր ի կողմանս Հայոց Մեծաց. և հասեալ ի Նոր քաղաքն՝ յանդիման լինէր սրբոյ եպիսկոպոսին Սահակայ և թագաւորին Հայոց, որում անուն Արտաշէս կոչէին: Եւ պատմեալ նոցա զգործս կողմանցն այնոցիկ ըստ աջողութեանց շնորհացն Աստուծոյ, դադարէր անդ աուրս ինչ:

Եւ ապա յետ այնորիկ հրաժարեալ գնալ ի կողմանս Աղուանից: Եւ երթեալ իջանէր յաշխարհն և հասեալ ի թագաւորական տեղիսն, տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից, որում անուն Երեմիա կոչէին, և զնոցին թագաւոր, որում Արսվազ էր անուն, առաջի եղեալ վասն որոյ եկեալն էր: Տային և ս հրաման՝ ի գաւառաց և ի տեղեաց իշխանութեանն իրեանց, բազմութիւն մանկանց՝ յարուեստ դպրութեանն ածել:

Յետ այնորիկ ուշ եղեալ երկոցունց երանելեացն՝ զիւրեանց ազգին զդպրութիւն առաւել յարգել² և դիւրացուցանել: Չեռն ի գործ արկանէր ի թարգմանել և ի գրել մեծն Իսահակ ըստ յառաջագոյն սովորութեանն:

Որոց դարձեալ դէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն՝ յուղարկել ի կողմանս Ասորոց ի քաղաքն Եդեսացոց, զՅովսէփ, զոր ի վերոյն յիշեցաք, և երկրորդն Եզնիկ անուն՝ յԱյրարատեան գաւառէն, ի Կողբ գեղջէ, զի յասորական բարբառոյն՝ զնոցին հարցն սրբոց գաւառութիւնս հայերէն գրեալս դարձուցեն:

Իսկ թարգմանչացն հասեալ՝ ուր առաքեցանն, և կատարեալ զհրամանսն և առ պատուական հարսն առաքեալ, անցեալ գնային ի կողմանս Յունաց, ուր և ուսեալք և տեղեկացեալք, թարգմանիչս կարգէին ըստ հելլենական լեզուին:

Ապա յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ՝ դէպ լինէր ոմանց եղբարց ի Հայաստան աշխարհէս, դիմել իջանել ի կողմանս Յունաց, որ և Ղևոնդէս առաջնոյն անուն էր, և երկրորդն՝ Կորիմոս, և մատուցեալ յարէին յԵզնիկն. և անդ միաբանութեամբ հոգևոր պիտոյիցն զխնդիրն վճարէին: Յետ այնորիկ

հաստատուն օրինակօք աստուածատուր գրոցն, գային երևելով աշխարհին Հայոց, և առաջի դնէին հարցն զքերեալ կտակարանն:

Իսկ երանելոյն Մահակայ զեկեղեցական գրոց գումարութիւնն³ կանխաւ ի յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ, և բազում ևս զհայրապետաց սրբոց զճշմարիտ զիմաստութիւնն: Դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ Եզնակաւ զյառաջագոյն զյանկարծագիտ զփութանակի զթարգմանութիւնս հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք: Եւ շատ ևս մեկնութիւն գրոց⁴ թարգմանէին:

Եւ այնպէս զամենայն ժամանակս իւրեանց՝ յընթերցուածս գրոց ծախէին հարքն՝ զտիւ և զգիշեր:

¹ սակեր-կայսերական նամակ: Հանդերձ սակերօք կայսերագիր նշանակելովք-կայսերագիր դրոշմած նամակներով հանդերձ

² այստեղ՝ մշակել, զարգացնել

³ գրոց գումարութիւն. բառացի՝ գրքերի ամբողջությունը, այսինքն՝ բոլոր, ամբողջ գրքերը

⁴ մեկնութիւն գրոց-Ս. Գրքի մեկնություն

ՓԱԲՍՏՈՍ ԲԻԻԶԱՆԴ (5-ԲԴ Դ.)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱՅՈՅ

(Հատուած)

Յաղագս անօրէնութեան թագաւորին Արշակայ, թէ որպէս եսպան զորդի եղբոր իւրոյ, որում անուն Գնէլ, ի քսութենէ չարութենէն Տիրիթայ... կամ որպէս զմեւս ևս եղբորորդին Տիրիթ. կամ որպէս զհինն Գնէլայ արար իւր կին. կամ որպէս էած իւր կին ի Յունաց զՈղիմպին. կամ որպէս երէցն Մրջիւնիկն մահուան դեղովն զնա ընդ օրէնսն՝ սպանանէր՝ խորհրդով Փառանջեմայ:

Չայնու ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ Անդովկայ ուրումն, մի ի նախարարացն նահապետին Սիւնեաց, որում անուն Փառանձեմ կոչէր. զորմէ² կարի անուանեալ էր գեղեցկութեամբ և պարկեշտութեամբ: Ապա Գնէլ պատանեակն եղբորորդին արքային էառ զնա ի կնութիւն իւր: Եւ համբաւ գեղեցկութեան աղջկանն ընդ վայրսն տարածեցաւ, և համբաւ գեղոյ նորա յաճախեալ թագմանայր և հնչէր: Ապա առ համբաւ ցանկութեան նուանն տրփեալ լինէր³ մին ևս հօրեղբորորդին Գնէլոյ, որում անուն Տիրիթ կոչէր: Վասն որոյ անկանէր ի գաղտագողօնս⁴, մինչ զի զնուն իւր տեսանել կարասցէ: Եւ յորժամ կարացն տեսլեանն՝ որում ցանկայր, այնուհետև հնարս խնդրէր առն կնոջն կորստեան ո՛ր զիտէ զկին նորա նմա հնար լիցի յափշտակել:

Ապա Տիրիթն ի հնարս նենգութեան մտանէր, և բազում վարձեր իւր օգնականս և սատարս, որով զիւր չարախօսութիւնն յառաջ վարել կարասցէ: Եւ քսիս ստութեան՝ զԳնէլոյն նենգութեամբ առ թագաւորն Արշակ մատուցանէր՝ թէ «Գնէլ թագաւորել կամի և զքեզ սպանանել. և ամենայն մեծամեծք և նախարարք և ազատք սիրեն զԳնէլ, և ամենայն աշխարհիս նախարարք կամին զտէրութիւն նորա ի վերայ իւրեանց առաւել քան զքո: Արդ, ասեն, զիտեա՛ և տես՛, արքայ, զինչ գործեսցես. որպէս և կամիս, զիարդ մարթասցիս ապրել»: Եւ այսպիսի բանիւք զրգռէին թագաւորն Արշակ, մինչև հաստատէին ի միտս թագաւորին զիւրեանց ասացեալսն:

Ապա յիսացեալ թագաւորն ընդ պատանեկին Գնէլոյ, և բազում անգամ հալածական առնէր. և միթեալ լինէր նենգութիւն բազում ժամանակս: Ապա զնաւասարդաց ժամանակօքն առնէր խորհուրդ թագաւորն Արշակ, կոչել առ ինքն զպատանեակն Գնէլ և սպանանել: Ապա առաքէր զՎարդան զեղբայր սպարապետին զնահապետ ազգին Մամիկոնեան տոհմին, զի մեծաւ երդմամբ և նենգութեամբ կոչել կարասցէ, զի մի՛ խորհուրդն յայտնեսցի. գուցէ

փախիցե և ապրիցի. այլ զի պատրանօք և հրապտրանօք ածիցե մինչև ի տեղին մահուն: Եւ էր բանակ թագաւորին ի Շահապիվանի ի բուն բանակի տեղսն Արշակունեացն ի ներքոյ Սիւսեացն և ի վերայ ասպարիսացն: Եւ առաքեալ զՎարդանն⁵, զմեծ նահապետն յարքայէն Արշակայ, եկն եգիտ զպատանեակն Գնել ի մօտաւոր տեղոջն, այս ինքն ի զիւղն Առախտոց անուանալ: Մեծաւ ուխտի և բազում պատրանօք զպատանեակն Գնել հանդերձ իրով կնասն և դրամբն⁶ հաւանեցուցանէր երթալ հասանել ի բանակն արքունի. իբրև այն թէ ի մեծարանս ինչ զնա կոչիցէ թագաւորն, բազում խնդրանօք տարեալ հասուցանէր՝ եթէ թագաւորն Արշակ ոչ կամեցեալ զտօնս նաւասարդաց առանց թո անցուցանել, զի հաճեալ և քաղցրացեալ է ընդ քեզ, վասն զի ըստ բանից չարախօսացն ոչ ինչ գտաւ ի քեզ չարութիւն. և եհաս ինքն ի վերայ, զի գուր այժմ ատէր զքեզ՝ որ ի նմանէն մեծ սիրոյ արժանի ես:

Ապա չուեաց ամենայն կազմութեամբն իրով Գնել, երթեալ հասանէր ի բանակն արքունի ամենայն բազում փութով տագնապաւ...:

Իսկ իբրև առաւօտն ծագեաց, հասանէր վաշտն Գնելոյ ի բանակն արքունի. և մինչ Գնելն արքունական բանակին լինէր միջամուխ, ազդ լինէր թագաւորին եկն նորա: Ապա ելանէր հրաման յարքունուստ, արտաքս ունել և տանել սպանանել: Եւ մինչ դեռ գայր նա ընդ բանակամէջն, և էր հեծեալ յերկվարին իւրում, իբրև մերձ եղև ի հրապարակն արքունի, և անդ ի յարքունուստ հասանէին բազում սպասաւորք վառեալք սուսերաւորք նիզակաւորք վաղրաւորք սակրաւորք սունաւորք և սպարակիրք հետևակք, որք մատուցեալք բուռն հարեալք⁷ ընկենուին յերկվարէ անտի զպատանեակն Գնել. և ձեռն յետս կապէին զնա, և առեալ զնային ի տեղի կառափելոյն: Եւ քանզի կին նորա եկեալ էր ընդ նմա ժանուաւ, ի նմին ի նորին վաշտու էր ընդ առն իւրում:

... Իսկ զպատանեակն Գնել առնուին զնային մօտ ի Սիւսն արքունի և անդէն կառափէին ի սարակ լերինն. որում տեղոյն Լսին անուանեալ է, մօտ յորմածս արգելոցացն որոյն էրիոցն, ընդդէմ մուրտաստանին աղբերացն բազմոցացն արքունի, յանդիման բանակետեղ բնին:

Ապա հրաման եղև յարքայէն. «Ամենայն մարդիկն որ իցեն ի բանակին, մեծ և փոքր առ հասարակ, մի՛ որ իշխեսցէ չերթալ. այլ ամենայն որ առ հասարակ երթիցեն դիցեն աշխար կոծոց, և լացցեն զԳնել մեծ սեպուհն Արշակունի զսպանեալն»:⁸ Իսկ ինքն թագաւորն զնացեալ ի լալիսն⁸, նստեալ լայր զեղբօրորդին իւր, գոր ինքն եսպան: Երթեալ նստէր մօտ առ դին, լայր ինքն, և տայր հրաման՝ կոծ մեծ և աշխար դնել շուրջ զսպանելով դիակամբն: Իսկ կինն սպանելոյն Փառանձեմն զհանդերձսն պատառեալ, զգէս արձակեալ, մերկատիտ ի մէջ աշխարանին կոծէր. ձայն արկանելով ճչէր, յորքս արտասուաց յաղիողորմ գուժի առ հասարակ զամենեսեան լացուցանէր: Իսկ թագաւորն Արշակ ի լալիսն տեսանէր զկինն սպանելոյն, տոփէր և ակն դնէր՝ առնուլ զնա իւր կնութեան:

Իսկ այն որ զնենգութիւն քութեանց նիւթեաց, և դաւով ի վերայ իւրոյ հարազատին սպանութիւնս⁹ կատարեաց, վասն նորին կնոջն արար զայն. զի մեծապէս սիրով հարեալ էր ի նմա: ՉՏիրիթն ասեմ, որ յառաջագոյն հարեալ ի կնոջն յայնմիկ, վասն որոյ զնենգութիւնս սպանութեանցն թագաւորան գործեաց: Իսկ մինչ դեռ ի նմին կոծն սաստկացեալ էր, Տիրիթն սկսանէր ժոյժ չունելոյ տոփանացն: Պատգամ յղէր առ կին մեռելոյն, ասէ՝ զի «Մի՛ կարի զանձն թո աշխատ առնէր այդչափ, զի այր բարի ես եմ քան զնա. ես սիրեցի զքեզ, վասն այտորիկ մատնեցի զնա ի մահ, զի զքեզ առից ինձ կնութեան»:¹⁰ Արդ մինչ դեռ կոծ մուրթեան զդիակամբն ջայլէին, զայսպիսի պատգամս առաքէր Տիրիթն: Բողոք բառնայր՝ թէ «Լուարո՛ք ամենեքեան, զի մահ առն իմոյ վասն իմ եղև. զի որ ինձ ակն եղ վասն իմ, զայրն իմ ետ սպանանել»:¹¹ Չհերն փետէր, ճչէր ընդ կոծելն:

Ապա իբրև մեծ իրքն համարձակ յայտնեցան ի լսելիս ամենեցուն և ի ձայնարկուքն ամենայն, եղև նա մայր ողբոցն, և ձայնարկուքն ամենայն ի ձայն ողբոցն սկսան նուագել զիրսն տրփանացն Տիրիթայ, զակն դնելն, զքսութիւնն, զհնարս մահու նիւթել զսպանումն, ձայնիւքն մրմնջոցն ի վերայ սպանելոյն ի մէջ կոծոյն բարբառէին զեղգեղեալ խանդաղատութեամբ: Ի նուաճել իրեանց ձայնիցն, իրքն յայտնեալ հռչակ հարկանէր: Չոր իբրև լուա թագաւորն Արշակ, և եհաս ի վերայ իրացն, զարմացեալ լինէր արմանայր ընդարմանայր, ստրջացեալ ի միտ առնոյր զիրսն: Ապա խօսել սկսանէր թագաւորն, ծափս զծափի հարեալ մեծաւ զղջմամբ ընդ իրսն՝ գոր գործեաց, ասէ. «Վասն զի ի կնոջն Գնելոյ զանարժան սիրով հարաւ Տիրիթն, առ այնմ զչարիսն նիւթեաց զքսութիւն, զմահուն գոռութիւն, գուր և տարապարտ և զմեզ և ս արդար արեանն շաղախեաց վասն իւրոյ պղծութեանն, զեղբայրն իւր ետ կորուսանել, և զանհնարին չարիսն և զանէծս որ ոչ անցանեն՝ ետ մեզ ժառանգել»:

Ապա իբրև հասանէր թագաւորն յիրացն հաստատութեան ի վերայ, և ճշգրտէր զիրսն, խլխլեալ անսայր բանին առ ժամանակ մի: Իսկ իբրև զմեռեալն ծածկեցին անդէն ի տեղոջն՝ յորում սպանան, և ատուրք հարուստ անցին ի վերայ իրացն գործելոց, պատգամ յղէր Տիրիթն առ թագաւորն: «Կան լիցի, ասէ, քեզ արքայի, զի հրաման տացես՝ զՓառանձեմ կին Գնելոյ թող առից ինձ կնութեան»:¹² Չոր իբրև լուեալ արքային, ասէ. «Արդ հաստատ գիտեմ գոր լուայն թէ ստոյգ է, վասն կնոջ իւրոյ եղև մահն Գնելոյ»:¹³ Եւ անդէն արքայն մահ խորիէր. սպանանել զՏիրիթ և ս փոխանակ ընդ մահուն Գնելոյ: Չոր իբրև լուա Տիրիթ, զահի հարեալ յարքայէն՝ զիշերի փախստական լինէր: Ապա ազդ լինէր թագաւորին Արշակայ փախուստն Տիրիթայ, տայր հրաման թագաւորն Արշակ ազատագունդ բանակին զհետ լինել Տիրիթայն. զի իբրև հասցեն նմա, անդէն ի տեղոջն սպանցեն: Բազումք և քաջք զհետ լինէին փախուցելոյն Տիրիթայ. ասպ երթեալ հասանէին ի գաւառին Բասենոյ ի մէջ մայրեացն. ի տեղոջն յորում հասանէին, անդէն զՏիրիթն սպանանէին:

Եւ յետ այսորիկ էառ իւր Արշակ զկինն սպանելոյն զՓառանձեմն: Եւ որ-
չափ սիրէր արքայն Արշակ զկինն, նոյնչափ ատեաց կինն զարքայն Արշակ.
ասելով՝ թէ «Թաւ է մարմնով, և թուխ է գունով»: Ապա իբրև կինն ի նա ոչ յան-
գոյց զմիտս իւր, առաքեաց արքայն Արշակ յերկիրն Յունաց, և խնդրեաց էաժ
անտի կին ի կայսերական տոհմէն ազգաւ, զի անուն էր նորա Ողոմայի: Եւ
ուժգին սիրով սիրեաց զնա, և նախանձուկս արկանէր նովաւ առաջին կնոջն.
և կինն Փառանձեմն յխաջաւ ընդ Ողոմային, և խնդրէր սպանանել զնա: Բայց
ծնաւ ապա Փառանձեմն թագաւորին ուստր մի, և կոչեցին զանուն նորա Պապ,
և սնուցին զնա, և ի չափ հասուցին: Եւ իբրև ջրթափեաց և եղև հուժկու, ե-
տուն զնա պատանդ ի դուռն կայսերն յերկիրն Յունաց:

Իսկ Փառանձեմն ի մեծ նախանձու և յխութեամբ զնայր ընդ Ողոմային, և
խնդրէր սպանանել զնա դեղովք: Իբրև ոչինչ հնարս մեքենայից չկարէր գտա-
նել, վասն զի անձինն իւրում կարի զգոյշ կայր, մանաւանդ ի կերակրոց և յըմ-
պելեաց, բայց զիւրոց նաժշտացն կերակուրս արարեալ և կամ զնոցին պար-
զեալ զգինի ճաշակէր, և եթ ոչ ինչ գտանէին հնարք դեղել զնա մահուան դե-
ղօքն, ապա դրան երէց ոմն արքունի՝ որ էր ի ժամանակին յայն, որում անուն
Մրջիւնիկ, յԱրշամունեաց տեղեացն ի նահանգէն՝ Տարօն գաւառէն, զնա ի
բանս արկանէր Փառանձեմն անօրէնն: Չանարժանս զանկատար զանջնջե-
լի զչարեացն մեղացն չնռացական տանջանացն կատարեաց զգործսն զա-
նարժանս զանտես զանլուր, այս ինքն ընդ կենաց դեղն զդեղ մահուն խառնե-
լով, որ ուրեք երբէք այսպիսի գործք յումեքէ ի վերայ երկրի ոչ գործեցան: Ընդ
տէրունական ընդ սուրբ ընդ աստուածական մարմինն ընդ հացն օրինաց
խառնէին զդեղն սատակման. երէցն Մրջիւնիկ անուն, տալով յեկեղեցուջն Ո-
ղիմայիայ տիկնոջն ընծեռել զմահուն գործ, սպանանէր: Ըստ չարեացն կա-
տարելոց զՓառանձեմնայն ամենայն չարեօք լցեալ զկանս կատարէր. և յանօ-
րէնն Փառանձեմնայն պարզև առեալ չերիցուն զգեղուն՝ ուստի իսկ ինքն էր ի
նահանգէն Տարօն գաւառէն, որում անուն Գոմկունք կոչին...:

(4-րդ ժե)

¹ մահուան դեղովն ընդ օրէնսն-հաղորդութեան
մեջ (խառնված) մահվան դեղով

² պատմական բացառական է, համապա-
տասխան բայ-ստորոգյալը՝ ասէին,
պատմէին, չի արտահայտված

³ առ համբաւ ցանկութեան տրփեալ լինէր-(այս)
համբավից բորբոքվելով սիրահարվեց

⁴ ի գաղտագողօսն անկանել(իմ)-,
գաղտնի հնարք որոնել

⁵ ենթական՝ Վարդանը և նրա լրացումը
ուղղականի փոխարեն դրված են հայ-
ցական հոլովով

⁶ այստեղ՝ գերդաստան, տուն ու
տեղ իմաստով

⁷ անցյալ դերբայը հոգնակի ենթակայի
մոտ դրված է հոգնակի թվով, սովորականը
եզակի թվով գործածությունն է

⁸ լացողների մեջ

⁹ այստեղ u-ն հոդ է

ԵԶՆԻԿ ԿՈՂՐԱՅԻ (5-ԲԴ Դ.)

ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ

(Հատուածք)

1

... Եւ եթէ զազանացն զազանութիւն չար ինչ բնութեամբ կարծեցուցանիցէ
նոցա, գիտասցեն՝ զի կէսքն յանասնոցն ի պէտս արարան, որպէս¹ և արջառ
և ոչխար և ամենայն ինչ, որ ուտելի է և կրելի² է. և կէսքն վասն երկիւղ ի միտս
մարդկան ծնուցանելոյ: Չի թէ զազանք ահագինք են, և վիշապք և օձք և այլ
ճճիք վնասակարք, և³ մարդն այնչափ հպարտացեալ է՝ մինչ ըստ աստուծոյ
երկիւղին սահմանս արտաքոյ ելեալ անաստէ, եթէ այնպիսի զարհուրեցու-
ցիչք չէին՝ ո՞րչափ և ս առաւել չկայր երբէք յակաստանի:

Նա և նոքին իսկ, որ չարքն կարծին անմտաց, երբէք երբէք օգտակար լի-
նին և զերծուցիչք ի մահուանէ: Չինչ չար քան զօձ կայցէ, և ի նմանէ թերիա-
կէ. և ի սպանող դեղոց, որք ի նենգութենէ մարդկան կազմեցան, չև հասուցեալ
և անդէն բուժէ: Եթէ բնութեամբ չար ինչ էր օձ, կամ չարի իրիք արարած, ա-
պա չգտանէր ինչ ամենին ի նմա օգտակար, և ոչ զգօնանայր երբէք ի գա-
զանութենէ անտի իւրմէ. նա աւանիկ⁴ տեսանեմք ի հնարագիտութենէ թովչաց
զգօնացեալ, և իբրև զչուան խաղալիկ է նոցա, և բազում անգամ բնակեալ ի
տան՝ չմեղանչեն բնակչացն:

Եւ արդ եթէ հեթանոս իցէ՝ որ չար ինչ բնութեամբ կարծիցէ, յանդիմանեա-
ցի յիւրոց արուեստակցացն օձապաշտացն. որ այնչափ զգօնացուցանել
զօձս գիտեն, մինչև կոչել⁵ յուրթիւք ի տունս, և կերակուրս մատուցանել⁵, որ-
պէս Բաբիլացիքն վիշապին՝ զոր պաշտէինն...:

Եւ եթէ մոզ իցէ, և չարի արարած զազանսն վասն զազանութեանն ասի-
ցէ. ի հասարակաց մտաց փաշաման կրեալ ըմբերանեցի: Չի եթէ զազանքն
չարի արարածք իցեն, և երկիր բարոյ, զիա՞րդ բարոյն արարած չարին ա-
րարածոցն դայեակ մտեալ՝ սնուցի լինիցի, որք ի նմանէ կերակրին և ի ծոց
նորա հանգչին. զի երկու հակառակք իրերաց՝ միմեանց ծախսիչք են, որպէս
խաւարի լոյս, և ջեր սառնամանեաց:

Արդ եթէ զազանք չարի արարածք էին, և երկիր բարոյ, ծախել պարտ էր
զնոսա երկրի՝ և ոչ սնուցանել, սպառել և ոչ սերել. ապա եթէ երկիր և զգա-

գանսն սնուցանէ և ոչ ապականէ, յայտ է՝ եթէ յորմէ արարչէ երկիր լեալ է, ի նմանէ և գազանքն արարեալ են. և չիք ինչ չար բնութեամբ. քանզի չիք ինչ չար արարիչ բնութեամբ: Եւ մանաւանդ թէ և գազանք իսկ, գորոց ասեն՝ թէ ի չարէ արարչէ եղեալ են, ցուցանեն թէ չեն ուստեք՝ այլ յերկրէ, այնու զի յերկրէ կերակրին և ի նմա բնակեն, և անդրէն ի նոյն շրջեալ հողանամ:

Նա՝ թէ և ի չարէ ինչ էին չարք արարեալք, ոչ ինչ ի նոցանէ օգտակար գտանէր, այլ ամենն ին իսկ վնասակար: Իսկ արդ եթէ տեսանենք, զի կիսոցն մորթքն պատասպարան մերկութեան մերոյ լինին, և կիսոցն ճրագուն դեղնեղի լինի, և այլ ինչ յանդամոցն, որպէս առիծուն և արջոյ և այլոցն՝ ըստ իւրաքանչիւր մի ըստ միոջէ, յայտ է՝ եթէ ի բարոյ արարչէ լեալ են, վասն միոյ իրիք օգտակարին գտանելոյ ի նոսա: Չի որ չար ինչ է, նորա և ամենայն ինչ վնասակար է, և մորթ և միս. այլ նոցա որպէս զմորթն զգենումք, և ոչ վնասէ, և զմիսն եթէ սիրտ ուրուք առնոյր⁶ և ուտէր՝ ոչ վնասէր. որպէս վարազի՝ որ գազանագոյն է քան զամենայն գազանս՝ ուտի միսն, և ոչ վնասէ. նոյնպէս և նոցայն՝ եթէ ուտէր ոք՝ չվնասէր:

Եւ յարջառ, գոր ասեն՝ եթէ ի բարոյ արարչէ արարեալ է, գտանի ինչ վնասակարութիւն: Չցլու միս ուտել՝ դարման է մարմնոյ, բայց եթէ զարիւնն ոք ըմպիցէ՝ սատակի: Նոյնպէս և ի բանջարս է ինչ՝ որ առանձին սատակիչ է, և խառնեալ ընդ այլ բանջարս՝ բժշկիչ պէսպէս ցաւոց լինի: Չմանրագորն եթէ ոք լոկ ուտիցէ՝ սատակիչ է, և խառնեալ ընդ այլ արմատս՝ քնածու լինի քնահատաց: Եւ զհազար՝ եթէ ի տօթ ժամանակի ուտիցէ ոք, քանզի զովացուցիչ է, զտապս ի փորոյն փարատէ. և եթէ ի հով ժամանակի ուտիցէ ոք, վնասէ. և եթէ զգորն քամեալ անապակ ըմպիցէ ոք, սատակի. և եթէ զսերմն աղացեալ՝ ջրով ըմպիցէ ոք, ի ցանկութենէ արկանէ: Եւ կանեփուկն թուփ ինչ է, որոյ սերմն նորա՝ դեղ է, և նոյն դարձեալ կասեցուցիչ ցանկութեան: Եւ մոլախինտոյ, որ առանձինն ի յայտնի ինչ ժամանակի սպանող է, նովիմք զմաղձս հնացեալս հնարին բժիշկք հատանել: Եւ կաղանջանան ազգ ինչ՝ առանձինն սպանող է, և խառնեալ ընդ այլ դեղոյ՝ մաղձագեղ է բուժիչ ի մահուանէ:

Արդ յայսպիսի իրս անհարթս առ ոչ ուղիղ հայելոյ, կարծեցին եթէ չար ինչ բնութեամբ իցէ. բայց աստուած այսպէս իմաստուն զմարդն կազմեաց զի և ի դարմանիչսն մարթիցէ վայելել. և որք վնասակարք կարծիցին, և անտի և ս հնարիւք օգտակարութիւնս կարիցէ գտանել, առ ի յանդիմանելոյ զբարս անմտացն՝ թէ չիք ինչ որ բնութեամբ չար է:

(1-ին, ԺԵ)

Այլ և վիճեալ և ս պնտին ի բանիցն վերայ: Մին ասէ՝ թէ «Ի մերում գեղ¹ ծովացու զկով գործեաց² և զգոչիւնն հանապազ մեք լսենք ամենեքեան»: Եւ միւսն ասէ. «Չպայն իսկ իմ աչօք տեսեալ է»:

Միթէ և զարալիզէն և ս ոք կարիցէ ասել՝ թէ և զայն ուրուք տեսեալ իցէ. և եթէ յառաջին ժամանակսն արալեզք լիզէին զվիրաւորս և ողջացուցանէին, արդ ընդէ՞ր ոչ լիզիցեն և ողջացուցանիցեն. ո՞չ նոյն պատերազմունք են, և նոյնպէս վիրաւորք անկանին:

Այլ յայնժամ, ասեն, դիւցազունք էին:

Եւ մեք զդիցն իսկ պահանջեսցուք ի նոցանէ: Մարմնաւորք էին արդեօք դիքն, թէ անմարմինք: Եթէ մարմնաւորք էին, յայտ է, թէ մարդիկ էին, և զմարդկան ուրուականս ի պաշտօն առեալ՝ դիս անուանէին. ապա եթէ անմարմինք էին, չէր մարթ անմարմնոցն ընդ կանայս մարմնաւորս ամուսնանալ: Չի եթէ այնմ հնար ինչ էր, ոչ երբէք դադարէր սատանայ ի կանաց սատանայածինս ծնուցանել. զի որ անմարմին ոք է, նա և անսերմն է. վասն զի սերմն մարմնաւորաց է, և ոչ անմարմնոց...:

Այլ և վիշապք, ասեն, և նհանգք կեղծս ի կեղծս լինին³. յորոց մին անձնաւոր է, և միւսն ոչ անձնաւոր:

Վիշապն՝ որ մարմնաւոր է, զիւր կերպարանսն ոչ կարէ փոխել: Չի եթէ հնար ինչ էր մարմնաւորաց զկերպարանս փոփոխել, նախ մարդ՝ որ առաւել քան զնոսա է՝ փոխէր զկերպարանսն յինչ և կամէր. այլ որպէս մարդոյ ոչ է հնար փոխել ի կերպարանս ինչ՝ յոր և կամիցի, նոյնպէս և ոչ վիշապին:

Նա և ոչ նհանգ ինչ անձնաւոր գոյ, բայց եթէ դև ի տեղիս բնակեալ իցէ, և մերթ կերպարանիցի, և մերթ վնաս գործիցէ: Եւ ոչ վիշապք զտոհմականս արդեանց⁴ կրեն, և ոչ գրաստ գոյ նոցա՝ եթէ զարդիւնս ի կալոյ ուրեք կրիցեն, և ի գուր է կալ կալն ասել ումեք ի կալս՝ և ոչ ա՛ռ ա՛ռ: Չի վիշապն որ ինքն գրաստ է, այնու զի անասուն և անխօսուն է, զհարդ՝ որ ինքն գրաստ է՝ զայլ գրաստ վարիցէ. զի վիշապի այլազգ ինչ բնութիւն չէ՝ եթէ ոչ օձի, այն յայտ իսկ է: Եւ զօձ յաղթանդամ, կամ զգազան ինչ ծովածին, կոչեն զիրք վիշապ. որպէս զմարդ յաղթանդամ հսկայ անուանեն, նոյնպէս և զօձ ցամաքային անճոռնի, և զգազանն ծովական լեռնաձև, զկիտացն ասեն և զդելփինաց, վիշապս անուանեն. ըստ այնմ՝ թէ դու ջախջախեսցեր զգլուխ վիշապացն ի վերայ ջուրց. և ետուր կերակուր ժողովորոց Եթովպացոց:

Տեսանէ՞ս, զի զձկունս մեծամեծս ծովածինս՝ վիշապս կոչեն զիրք. և յայտ անտի է՝ թէ զձկանց ասէ, այնու եթէ ետուր կերակուր ազգաց Եթովպացոց. թէպէտ և աստ այլք ի սատանայ առակեցին զվիշապն, որպէս և զայն՝ գոր Յորն

¹ այստեղ՝ օրինակ, ինչպէս օրինակ
² կրելի-կրող, բեռ տեղափոխող
³ այստեղ՝ բայց, իսկ
⁴ նա աւանիկ-սահա, մինչդեռ

⁵ գործածված է դիմավոր բայի նշանակությամբ
⁶ սիրտ առնուլ- սիրտը վերցնել, սիրտը տանել, ախորժել
⁷ ավելադրություն է

գրեալ է: Եւ այլ ինչ ոչ են վիշապք՝ բայց կամ օձք մեծամեծք ցամաքայինք, կամ ձկունք անարիք ծովականք. գորոց ասեն, թէ լեռնաբերձք և մեծամեծք են. և որս և կերակուր նոցա մանր ձկունք են, որպէս և օձից մեծամեծաց մանր մանր ինչ ճճիք կամ անասունք: Եւ ոչ որս երբէք՝ որպէս մարդկան՝ արարեալ են վիշապաց, կամ առնիցեն. և ոչ տաճարք իբրև մարդկան են նոցա ի բնակութիւն. և ոչ զոք ի թագաւորագգեաց և ի դիւցազանց ունին կապեալ առ իւրեանս կենդանի. զի կենդանիք ի մարմնատրաց երկու և եք կան, Ենովք և Եղիա:

Այլ որպէս զԱղեքսանդրէ խաբէին դևք՝ թէ կենդանի կայցէ, որոց ըստ եգիպտական հնարողութեանն կապեալ արկեալ կախարդանօք զդև ի շիշ, կարծեցուցանէին, թէ Աղեքսանդրոս կենդանի իցէ և մահ խնդրիցէ. և գալուստն Քրիստոսի խայտառակեաց զխաբէութիւնն, և երարձ ի միջոյ զգայթակղութիւնն: Նոյնպէս և մոլորութիւնն դիւաց խաբեաց գդիւցապաշտս Հայոց, եթէ զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, և նա ելանելոց է և ունելոց զաշխարհս, և ի սնոտի յոյս կապեալ կան անհաւատք...:

Եւ այնպէս ջանայ սատանայ՝ զի զամենայն ոք ի բարւոք ակնկալութենէ վրիպեցուցէ, և ի սնոտի յոյս կապիցէ: Մեծացուցանէ յաչս մարդկան զվիշապս, զի յորժամ ահագինք երևեսցին ոմանց՝ առնուցուն զնոսս ի պաշտօն: Կարծեցուցանէ թէ և նհանգք ինչ իցեն զետոց, և շահապետք վայրաց. և յետ կարծեցուցանելոյ՝ ինքն կերպարանի կամ ի վիշապի կերպարանս կամ ի նհանգի իմն և ի շահապետի, զի այնու զմարդն յիւրմէ արարչէն թիւրեսցէ: Չի եթէ էր ինչ նհանգն անձնատր, ոչ երբեմն ի կնոջ կերպարանս երևէր, և երբեմն փոկ լինէր և լուղորդաց ընդ ոտս անկեալ՝ հեղձուցանէր. այլ կամ կինն կին կայր, կամ փոկն փոկ.

Նոյնպէս՝ և զոր շահապետ վայրաց կոչեն, ոչ մերթ մարդ երևէր և մերթ օձ, որով և զօճապաշտութիւնն հնարեցաւ յաշխարհ մուծանել: Նոյնպէս և վիշապն ոչ մի անգամ օձաձն երևէր, և միւս անգամ մարդակերպ, որպէս յառաջագոյնն իսկ ասացաւ՝ թէ որ մարմնատր ինչ է, յայլ կերպարանս չկարէ փոխել:

Այլ թէ ի կալս ջորիք և ուղտք երևիցին՝ դիւաց կերպարանք են այն⁵, և ոչ վիշապաց. և եթէ ի դաշտս երագագանք ձգիցին, և հեծեալք իբրև զմարդիկ զհետ երէոյ արշաւիցեն, կեղծիք դիւաց են և ոչ ճշմարտութիւն ինչ իրաց. և եթէ ի գետս ի կանաց ինչ ի կերպարանս երևիցին, սատանայի կերպարանք են: Քանզի նհանգ ինչ անձնատր չիք, և ոչ ի մարդ իբրև զդև մտանէ վիշապ, որպէս ոմանք ի շչելոյ դիւահարին կարծեցին, քանզի մարմնատրի ի մարմնատր չէ հնար մտանել: Եւս եթէ բառնայցի ի վեր այնպիսի վիշապն, ոչ եթէ եզամբք ինչ անուանելովք՝ այլ ծածուկ զօրութեամբ իւիք յաստուծոյ հրամանէ, զի մի՛ շոգին՝ մարդոյ կամ անասնոյ մեղանչիցէ. որպէս որ բասիլիսկոսն կոչի ազգ ինչ օձից՝ հայելով միայն սատակէ զմարդ կամ զանասուն. ուստի յորժամ

ի ջրհորս գտանիցի՝ ճրագ առեալ իջանեն ի ներքս ըմբռնել, զի հայեցեալ ընդ ճրագն՝ ոչ մեղանչիցէ մարդոյն օձն:

(1-ին, ԻԵ)

¹ սովորականն՝ ի մերում գեղջ

² գործել. այստեղ՝ ծնել

³ կեղծս ի կեղծս լինին- զանագան

⁴ խաբուսիկ կերպարանքներ են ընդունում

⁵ սեռականով ավելադրություն է.

արտերի բերքը

⁵ օճանդակ բայը թվով համաձայնել է

ստորոգելիական վերադրին, իսկ

ենթական՝ այն, եզակի է

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ (5-ԲԳ Դ.)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱՅՈՑ

(Հատուածք)

Յաւորս ժամանակացն այնոցիկ զօրաժողով լինէր իշխանն Գթաց, և բազում գունդս զօրաց ժողովեալ՝ գայր տալ մարտ պատերազմի ընդ իշխանին Յունաց: Պատգամս յղէր օրինակաս այսուիկ, եթէ «Ընդէ՞ր բնաւ ելանենք խառնամյխի¹ ի պատերազմ՝ սպառել զգօրս մեր, և վտանգ և տագնապ միանգամայն² աշխարհի հասուցանենք. ես աւասիկ ախոյեան ելանեմ քեզ ի մերոց զօրաց աստի, և դու ինձ ի յունականաց այտի. հասցուք եկեսցուք ի մարտի տեղի. եթէ ես զքեզ յաղթահարեցից՝ Յոյնք ինձ հնազանդեսցին ի ծառայութիւն. և թէ դու ինձ յաղթեսցես՝ մեր կեանքս քեզ նուաճեսցին և հնազանդեսցին. և առանց արեան և կոտորածոյ լիցի շինութիւն կողմանցս երկոցունց»:

Եւ իբրև զայն ամենայն լուսա թագաւորն Յունաց՝ երկեաւ. քանզի օրինօք կազմութեամբ, գունդ առ գունդ ճակատել ոչ առնուին յանձն, և ըստ պատգամին պատշաճի ոչ կարէր ունել յանձին, քանզի տկար էր յոսկերաց զօրութեամբ. սրտաթափ եղեալ զարհուրեցաւ, քանզի ոչ գիտէր, զինչ տացէ բանիցն պատասխանի:

Յայնմ ժամանակի հրաման տայր թագաւորն՝ հրովարտակս և դեսպանս առնել առ իշխանս և զօրս զօրութեան³ իւրոյ, զի ուր և իցեն՝ առ նա հասանիցեն վաղվաղակի: Յայնմ ժամանակի իշխանք և զօրք և նախարարք առ նա հասանէին վաղվաղակի: Առեալ և Լիկիանէ զբուն գունդն որ ընդ իւրով ձեռամբն էր՝ փութայր հասանէր ի տեղի պատերազմին՝ յանդիման լինել թագաւորին, և Տրդատէս ընդ նմա:

Եւ մինչ դեռ գային գունդք զօրացն՝ դէպ եղև նոցա զալ մտանել ի նեղագոյն տեղի մի, յառուամէջս այգեստանոյն, ի փողոցամէջս համբարոցացն, առ դրունս քաղաքին. քանզի զդրունս քաղաքին աղխեալ էր⁴, զի ժամ էր հասարակ գիշերոյ: Իբրև ոչ գտաւ խար երիվարաց զօրուն բազմութեան դարման կերակրոյ մինչև ի մէջ գիշեր՝ հայեցեալ տեսանէին ի գուարափակ քաղաքորմի միոջ, զի խոտահամբար մթերեալ էր. և ոչ ոք կարաց ձգել իւր վասն որմոյն բարձրութեան: Յայնժամ Տրդատէս ելեալ և իջեալ՝ հոսէր ընկենոյր բարդս բարդս⁵ ի մէջ զօրացն մինչ ի լիութիւն բաւականի³: Նա և զհամբարա-

պանսն իսկ բազումս ի շանց յայսկոյս որմոյն ընկենոյր ի մէջ զօրացն, և ինքն անդրէն ելեալ իջանէր:

Չայն ամենայն ոյժ պնդութեան տեսեալ Լիկիանէս զարմացաւ: Իսկ իբրև այգն զառաւօտն մերկացաւ՝ դրունք քաղաքին բացան, և զօրքն ամենայն առ հասարակ ի ներքս մտանէին. և Լիկիանէս յանդիման լինէր թագաւորին, և ամենայն մեծամեծքն և սպարապետքն և զօրագլուխքն և իշխանքն:

Ապա կաց պատմեաց թագաւորն իշխանացն զամենայն պատգամս թագաւորին Գթաց: Յայնժամ խօսել սկսաւ Լիկիանէս ընդ արքային և ասէ. «Մի՛ ինչ զարհուրեսցի սիրտ տեսոն իմոյ. զի գոյ աստ այր մի ի դրան քում, զի իրքոյ այդ նովաւ վճարին⁶. Տրդատէս անուն նորա, ի տոհմէ թագաւորին Հայոց աշխարհին»: Եւ կաց պատմեաց զերեկորին զգործս քաջութեան նորա: Յայնժամ հրաման ետ, և ածին զՏրդատիոս յանդիման թագաւորին. և պատմեաց նմա կարգաւ զամենայն: Յայնժամ ժամ ետուն կազմութեան մարտի՝ առ ի ժամ վաղուի զմիմեանս տեսանել պատերազմաւ:

Իսկ ի միւսում աւուրն ընդ այգն ընդ առաւօտն հրամայեաց արկանել ծիրանիս. և զարդարեցին զՏրդատիոս ի զարդ կայսերական, արկեալ զնովաւ զնշան թագաւորութեանն. և ոչ ոք գիտէր վասն նորա. հրաման ել ամենեցուն, թէ ինքն իսկ կայսրն իցէ: Եւ նորա առեալ զգունդն զօրաց բազմութեան՝ ի ձայն փողոյ տագնապաւ յառաջ մատուցանէր մինչև յանդիման թշնամեացն: Իբրև յանդիման եղեն միմեանց կայսերակերպն և թագաւորն՝ մտրակ ի կուշտ արարեալ⁷ երիվարացն ի միմեանս հասանէին. անդ յաղթահարէր կայսերակերպն զթագաւորն. ձերբակալ արարեալ՝ ածեալ յանդիման առաջի կայսերն կացուցանէր:

Յայնժամ մեծացոյց յոյժ թագաւորն զՏրդատիոս, և մեծամեծ պարզևս ետ նմա. թագ կապեաց ի գլուխ նորա և ծիրանեօք զարդարեալ մեծացոյց զնա, և կայսերակերպն զարդու շքեղացուցեալ մեծարեաց զնա. և գումարեաց ի ձեռս նորա զօրս բազումս յօգնականութիւն նմա, և արձակեաց յիւրական⁸ աշխարհն Հայոց:

Եւ յետ մարտին յաղթութեան քաջութեանցն զոր արար՝ դարձեալ լինէր ի կողմանցն Յունաց Տրդատ արքայ Հայոց մեծաց: Խաղաց զնաց թագաւորն ի կողմանս Հայոց, և եկն եգիտ անդ զօրս բազումս Պարսից, զի զաշխարհն յինքեանս գրաւեալ էին ի ծառայութիւն. զբազումս կոտորէր, և զբազումս փախստականս արարեալ ի կողմանս Պարսից արկանէր. և զհայրենեացն տէրութիւն յինքն նուաճեաց, և զօրացաւ ի վերայ սահմանաց նորա:

Յառաջին ամին Տրդատայ արքայութեանն Հայոց մեծաց, խաղացին եկին հասին յԵկեղեաց գաւառ, ի գեղն Երիզայ, ի մեհեանն Անահտական, զի անդ

գոհս մատուցեն. և իբրև կատարեցին զգործն անարժանութեան՝ իջին բանակեցան առ ափն գետոյն զոր Գայլն կոչեն:

Իբրև եկն եմուտ ի խորան անդր և յընթրիս բազմեցաւ, և իբրև ընդ գինիս մտին՝ հրաման ետ թագաւորն Գրիգորի, զի պսակս և թառ ոստս ծառոց նուէրս տարցի բազմին Անահտական պատկերին: Այլ նա ոչ առնոյր յանձն պաշտօնատար լինել դիցն երկրպագութեան՝:

Յայնժամ խօսել սկսաւ թագաւորն ընդ Գրիգորի և ասէ. «Այր մի օտարական և անաշխարհիկ¹⁰ եկիր յարեցար ի մեզ, և զհարդ իշխես պաշտել զԱստուածն զայն, զոր ես ոչ պաշտեմ»: Եւ առ այն օր պահել հրամայեաց: Եւ ի վաղիւ անդր հրաման ետ, և ածին զԳրիգորիոս առաջի թագաւորին:

Խօսել սկսաւ թագաւորն ընդ Գրիգորի և ասէ. «Այսչափ ամբ են, զի տեսի ես զքեզ, և յամենայն զօրութենէ քումմէ ծառայեցեր դու ինձ միամտութեամբ. և ես գոհ էի զվաստակոց քոց և ունէի ի մտի կեցուցանել զքեզ. ընդէ՞ր ոչ առնես զկամս իմ»:

... Եւ մինչդեռ խորհէր Տրդատիոս խօսել և այլ ողորձով ընդ նմա, յառաջ մատուցեալ ոմն ի նախարարացն, որում անուն էր Տաճատ, փեսայ Արտաւանայ սպարապետի արքայի՝ սկսաւ խօսել և տալ տեղեկութիւն և ասել յայպէս վասն նորա, թէ «Չի այսքան ժամանակք են, որ առ մեզ բնակեալ է, և ոչ գիտեաք զսա. այլ դա է որդի Անակայ մահապարտի, որ սպան զհայր քո Խոսրով, և արար խաւար Հայոց աշխարհիս և ի կորուստ մատնեաց զայս աշխարհ և ի գերութիւն. արդ՝ չէ պարտ կեալ դմա, զի որդի վրիժապարտի է դա»: Արդ՝ իբրև այնմ և ս հասանէր թագաւորն ի վերայ իրացն, եթէ արդարև որդի Անակայ Պարթևի է, որ սպան զԽոսրով հայր նորա՝ հրաման տայր կապեալ ոտիք և կապեալ ձեռօք և կապեալ պարանոցաւ խաղացուցանել զնա յԱյրարատ գաւառ, և տալ զնա ի դղեակ բերդին Արտաշատ քաղաքի, և իջուցանել ի վիրապն ներքին, որ անհնարին էր խորութեամբ, մինչև անդէն մեռցի: Եւ եղև նա յայնմ վիրապի ամս երեքտասան:

... Եւ զայն ամս երեքտասան, որ եղև Գրիգորիոս ի բերդին բանդին և ի խոր վիրապին, կին ոմն այրի, որ էր ի բերդին յայնմիկ, հրաման առեալ յարհարաց¹¹ զի աւուրն նկանակ մի արարեալ պատրաստական ընկենուլ ի ներքս ի խոր վիրապն. և այնու կերակրեալ լինէր նա ի հրամանէն Աստուծոյ զայն ամս որ եղև նա անդ: Իսկ այն վիրապ, ուր ընկեցին զնա՝ պահեալ լինէր նա կենդանի շնորհիւ Տեառն իւրոյ: Իսկ այլ մարդիկ, որ միանգամ իջուցեալ էր անդր՝ ամենեքեան մեռեալ էին վասն դժնդակ չարաշունչ դառնութեան տեղոյն, վասն կարակում¹² տղմին, օձախառն բնակութեան և խորութեանն: Վասն չարագործաց իսկ էր շինեալ զայն տեղի և ի սպանումն մահապարտացն ամենայն Հայոց:

... Յայնմ ժամանակի գայր հասանէր դեսպան առ Տրդատ արքայ Հայոց մեծաց, և յանդիման լինէր թագաւորին ի Վաղարշապատ քաղաքի: Եւ իբրև մատոյց զհրովարտակն՝ առ ի ձեռանէ նորա խնդալով: Եւ էր պատճեն հրովարտակին օրինակ գայս.

«Ինքնակալ կայսր Դիոկղետիանոս, առ սիրելի եղբայր աթոռակից մեր Տրդատ, ողջոյն:

«Գիտութիւն լիցի եղբայրութեանդ քում նիզակակցի մերում վասն չարեացս, որ անցանեն ընդ մեզ հանապազ ի մոլար աղանդէս քրիստոնէից. զի յամենայնի դարովեալ լինի տէրութիւնս մեր յուխտէ նոցա, և արհամարհեալ լինի արքայութիւնս մեր ի նոցանէ. և ինչ համեստութիւն ոչ գոյ ի նոսա: Չի ինքեանք զմեռեալ ոմն զխաչեալ պաշտեն, և փայտի երկիր պագանեն, և զուկերս սպանելոցն պաշտեն, որ զիրեանց մահն, որ վասն Աստուծոյն իւրեանց է՝ փառս և պատիւս համարին: Եւ ի մերոց արդար օրինացս դատապարտեալ լինին. վասն զի և զմեր զնախնիսն, զառաջին հարսն զթագաւորսն, դառնացուցեալս ձանձրացուցին. զի մեր սուրբս բքեցան, և նոքա ոչ զարհուրեցան ի մեռանելոյ: Չի ինքեանք զհետ Հրէի ուրումն խաչելոյ մոլորեալ են, և զթագաւորս անպատուել ուսուցանեն, և զլխովին իսկ զպատկերս դիցն զաստուածոց անարգել ուսուցանեն...:

«Դէպ եղև տեսանել ինձ յաղանդոյ ուսման նոցա օրիորդ մի կոյս և գեղեցիկ, և կամեցայ առնուլ զնա ինձ կնութեան. սակայն և զայն իշխեցին խորամանգել յինէն: Եւ ոչ իբրև ի թագաւոր ցանկութեամբ փափաքեցին յիս. և ոչ ի սաստից սպառնալեաց իմոց երկեան ինչ նոքա. այլ առաւել և ս վասն աղանդոյն իւրեանց՝ աղտեղի և պիղծ և գարշ համարեցան զիս, և սնուցիչ նորին դայեկանս ի կողմանս ձերոյ տէրութեանդ փախուցեալս յուղարկեցին:

«Արդ՝ փոյթ լիցի քեզ, եղբայր մեր, զի ուր և իցեն զկողմամբքդ զայդոքիք՝ զհետս նոցա զտանել մարթասցես. և որ ընդ նմայն իցեն դայեկանս հանդերձ՝ վրիժուց մահու արժանի արասցես. և զհրապուրեալն զչքնադազեղն ինձ ի տոյն այսրէն յուղարկեցես. սպա թէ հաճոյ թուեսցի քեզ տեսիլ գեղոյ նորա՝ այդրէն առ քեզ պահեսցես, զի ոչ երբեք գտաւ նման նմա ի մէջ Յունաց աշխարհիս: Ողջ լեր դիցն պաշտամամբ ամենայն պատուով»:

Եւ եղև իբրև ընթերցան զթուղթն հրամանաց հրովարտակին այնորիկ՝ հրաման տայր թագաւորն մեծաւ սաստկութեամբ պատուիրանաւ, զի զամենայն տեղիս իշխանութեան իւրոյ քննայոյզ փութով խնդրեսցեն¹³: Վաղվադակի դեսպանս արձակէր ընդ կողմանս կողմանս, զի ուր և գտցեն՝ ի մէջ անցեն վաղվադակի, և որ գտցէ զնոսա՝ մեծամեծ պարգևս հատուցանել խոստանայր:

Մինչդեռ յայն յոյզ քննութեան³ էին յաշխարհին սահմանացն Հայոց՝ սուրբ վկայքն այնոքիկ եկեալ ղօղեալ էին յարքայական կայանին, ի նմին թագաւորականին ի Վաղարշապատ քաղաքի...:

Գտեալ լինէին նոքա ի հնձանս շինուածոցն...: Իսկ ի միտում աւորն ընդ այզն ընդ առաւօտն, և ևս վաղագոյն, հրաման ելեալ ի թագաւորէ անտի, զի զերանելին Հռիփսիմէ տանել յարքունիս, և զսուրբն Գայիանէ անդէն պահել պարկեշտ ընկերօքն հանդերձ:

... Ի նմին զիշերի եկին հասին վաղվաղակի ի տեղի անդր իշխանք թագաւորին, և դահճապետն դահճօքն հանդերձ ընդ նոսա, և ջահք լուցեալք առաջի նոցա: Եւ մատեան վաղվաղակի, կապեցին զնա (զՀռիփսիմէ) ձեռս յետս, և խնդրէին զի հատցեն զլեզուն: Իսկ նա իւրովի կամօք բացեալ զբերանն՝ հանեալ մատուցանէր զլեզուն:

Եւ անդէն զհանդերձիկն պատառոտուն որ զնովան էր՝ ի բաց զերծուին ի նմանէ. և հարեալ չորս ցիցս ի գետինն, երկուս ոտիցն և երկուս ձեռացն՝ և պրկեցին զնա. և մատուցին զկանթեղունսն. այրէին և խորովէին զմարմինս նորա հրով կանթեղացն: Եւ քարինս վարեցին¹⁴ ընդ գոգս նորա և ի վայր վայրեցին զաղիս նորա. և մինչդեռ կայր կենդանի փորեցին զաչս երանելոյն: Ապա անդամ անդամ յօշէին զնա և ասէին, եթէ «Ամենեքեան որ իշխեսցեն անգոսնել և անարգել զհրամանս թագաւորաց՝ ըստ դմին օրինակի կորիցեն»: ... Իսկ ի վաղիւ անդր մատուցեալ՝ առնոյր հրաման դահճապետն վասն սրբոյն Գայիանեայ սպանման:

... Արդ՝ ի քսան և ի վեց ամսոյն հռո՛ի կատարեցաւ սուրբն Հռիփսիմէ դատուն սրբով, երեսուն և երեք նահատակակից ընկերօքն հանդերձ. և ի քսան և եօթն ամսոյն հռո՛ի՝ սուրբն Գայիանէ երկու իւրովք ընկերօքն, որք ընդ նմա պատերազմեալք պսակեցան և առին զպսակն յաղթութեան:

¹ խառնիխառն կերպով
² այստեղ՝ միաժամանակ
³ սեռականով ավելադրութիւն
⁴ աղիսեալ էր (նոցա)-(նրանք) փակել էին
⁵ բարդս բարդս-դեզ-դեզ
⁶ այստեղ՝ կկատարվեն
⁷ մտրակ ի կուշտ առնել-մտրակել

⁸ իւրական-իր
⁹ պաշտօնատար լինել երկրպագութեան-երկրպագել
¹⁰ օտարական, պանդուխտ
¹¹ արհաւիրք. այստեղ՝ զարհուրելի երագ, տեսիլք
¹² կարակում-ցեխտտ, ճահճոտ
¹³ քննալոյզ խնդրել-որոնել
¹⁴ վարել. այստեղ՝ գցել, լցնել

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ (5-ԲԴ Գ.)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՅՈՅ

(Հատուած)

Յաղագս անիմաստասէր բարոց առաջնոցն մերոց
թագաւորաց և իշխանաց

Կամիմ զանիմաստասէր բարս առաջնոցն մերոց նախնեացն ոչ առանց յիշատակի բամբասանաց թողուլ, այլ աստէն իսկ, ի սկզբան մերոյ գործառնութեանս, վասն նոցա կշտամբութեան յարմարել զբանս¹: Չի թէ արդարս արժանի գովութեան այնք ի թագաւորաց իցեն, որք գրով և պատմութեամբ զիւրեանցն հաստատեալ կարգեցին զժամանակս², և զգործս իմաստութեան և զբաջութիւն իւրաքանչիւր արձանացուցին³ ի վէպս⁴ և ի պատմութիւնս՝ ըստ նոցանէ⁵ և պարապեալքն այսպիսում ճգնութեան⁶ դիւանագիրք մատենից ներբողականաց ի մէնջ արժանի եղեն ասից⁷. Ի ձեռն որոց և մեք յընթեռնուլն զառ⁸ ի նոցանէ շարածս բանից՝ ըստ աշխարհօրէն⁹ կարգաց իմաստնաւ ասիմք, և քաղաքականս ուսանել կարգս, յորժամ զայսպիսիս¹⁰ ընթերցասիրիցենք իմաստութեան¹¹ ճառս և զրուցատրութիւնս¹², որք են¹³ Քաղդէացոց և Ատրեստանեայց, Եգիպտացոց և Հելլենացոց. առ այսոքիւր¹⁴ և փափագիցենք ևս արդեօք¹⁵ իմաստութեան արանցն այնոցիկ, որ զայսպիսի փոյթ յանձին կալան. ապա ուրեմն ամենեցուն մեզ յայտնի է թագաւորացն մերոց և այլոց առաջնոցն առ ի յիմաստն¹⁶ տխմարութիւն, և անկատարութիւն ոգւոյն բանականի: Չի թէպէտ և ենք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ¹⁷, և զօրութեամբ տկար, և ընդ այլով¹⁸ յոյով անզամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ¹⁹ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի, զոր և ոչ մի որ ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրել: Արդ՝ այնոքիկ, որ և ոչ անձանց խորիցեան բարի ամենէ, և անուն յիշատակի աշխարհի թողուլ, զի²⁰ արդեօք և մեղադրութիւն մեր այնպիսեացն ի ճահ պատահիցէ²⁰, զևս մեծագոյնս ի նոցանէ պահանջել և որ ինչ հնագոյն քան զնոսա:

Այլ ասիցէ որ արդեօք¹⁵, վասն ոչ լինելոյ զիր և դպրութիւն ի ժամանակին, կամ վասն պէս պէս պատերազմացն, որ կուռ զմիմեանց զկնի ի վերայ գային: Այլ ոչ արդարս այսոքիկ կարծեցեալ լինի. քանզի գտանին և միջոցք լեալ²¹ պատերազմացն. և զիր Պարսից և Յունաց, որովք այժմ զիւրից և զաւառաց,

և ս և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց²² և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ գրուցաց²³ մատեանք, մանաւանդ որ ի սեպիական ազատութեան պայազատութիւն²⁴: Այլ ինձ թուի, որպէս այժմ՝ և առ հինսն Հայաստանեայց լեալ²⁵՝ անսիրելութիւն իմաստութեան և երգարանաց բանաւորաց: Վասն որոյ աւելորդ է մեզ և այլ յաղագս արանց անբանից, թուլամտաց, վայրենեաց ճառել:

Բայց ընդ քո²⁶ յոյժ զարմացեալ եմ ընդ մտացդ ծննդականութիւն²⁷, որ ի սկզբանցն մերոց ազգաց մինչև ցայժմուս միայն գտար զայսպիսոյ մեծէ իրէ բունն հարկանել, և մեզ խոյզ խնդրոյ առաջի արկանել²⁸՝ երկար և շահաւոր գործով զազգիս մերոյ կարգել զպատմութիւնն ճշդիւ՝ զթագաւորացն և զնախարարականաց ազգաց և տոհմից թե՛ ո՛վ յունմէ, և զինչ իւրաքանչիւր ոք ի նոցանէ գործեաց, և ո՛վ ոք ի ցեղիցս որոշելոց²⁹ ընտանի և մերագնեայ, և ո՛րք ոմանք եկք ընտանեցեայք և մերագնացեայք. և զգործս և զժամանակս իւրաքանչիւր գրով դրոշմել, ի ժամանակէ անկարգ ամբարտակին շինուածոյ մինչև ցայժմ.- զեղեցիկ զայս քեզ համարեալ ի փառս և անջան հեշտութիւն³⁰ ...:

(1-ին, Գ)

1 փխ. զբանս կշտամբութեան յարմարել
 2 փխ. հաստատեալ կարգեցին զիւրեանցն զժամանակս-հաստատեցին իրենց ժամանակները
 3 այստեղ՝ արձանագրեցին
 4 վէպ. այստեղ՝ պատմություն
 5 ըստ նոցանէ -նրանց պէս
 6 այսպիսում ճգնութեան-այսպիսի ճգնությամբ,
 7 այսպիսի ծանր աշխատանքով
 8 փխ. ներքողականաց ասից
 9 առ նախդիրը գործածված է որպէս ավելադրություն, իսկ գ-ն վերաբերում է շարածս բառին. զառ ի նոցանէ շարածս բանից-նրանց կողմից շարադրված գրվածքները
 10 այստեղ՝ աշխարհական, աշխարհիկ
 11 ճառս բառի լրացումն է
 12 այստեղ՝ գիտական
 13 այստեղ՝ պատմություն
 14 օժանդակ բայը (եմ) սեռական հոլովի հետ ունենալու նշանակությամբ. որք եմ-որոնք ունեն
 15 առ այսոքիք- (սրանց) սրա հետ միասին
 16 այստեղ՝ գուցե

16 այստեղ՝ գիտություն
 17 ընդ փոքու սահմանեալ-սահմանափակ
 18 թագաւորութեամբ բառի լրացումն է
 19 գտանին գործեալ-կատարվել են
 20 ի ճահ պատահել-հարմար լինել, հարմար
 21 գալ, հարմարվել
 22 գտանին լեալ-ունեցել են
 23 սեփականություն
 24 այստեղ՝ պատմություն
 25 ի սեպիական ազատութեան պայազատութիւն-իշխանական, ազնվական ծագման վերաբերյալ դիմավոր բայի նշանակությամբ է
 26 գործածված՝ եղել է
 27 հեղինակը խոսքն ուղղում է իր մեկենաս Մմբատ Բագրատունուն, որի թելադրանքով գրել է իր «Պատմությունը»
 28 ընդ մտացդ ծննդականութիւն-քո մտքի
 29 բեղմնավորության վրա
 30 մեզ առաջարկեցիքի հետագոտություն կատարել
 31 այստեղ՝ բաժանված
 32 ի փառս և անջան հեշտութիւն-փառք և բավականություն առանց նեղության

ԵՂԻՇԷ (Տ-ԲԳ Դ.)

**ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՆԱՅՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ
(Հաստատ)**

Վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց և ընկերաց իւրոց

... Այս անօրէն Սիւրհներսեհ, քանզի յառաջագոյն ստուգեալ¹ գիտէր զամբարշտութիւնն Վասակայ, և յայնմ ժամանակի և ս յղէր և կոչէր զնա առ ինքն: Որպէս նորա իսկ յառաջագոյն զատեալ և որոշեալ էր ի միաբանութենէն Հայոց, եկն և յանդիման եղև. և ստուգէր² զիւր հաւատարմութիւնն և զՀայոց անիրաւ ապստամբութիւնն: Յաւել և պատմեաց և ս առաւելաբանութեամբ գորինչ ոչ էր գործեալ Հայոց, և կամէր ընտանեբար ընդ միտ մտանել³ անօրինին:

Բայց նա թէպէտ և ի ներքոյ յոյժ դարովէր զնա, այլ արտաքին դիմօք մեծարեաց, և եղ առաջի նորա զմեծամեծ պարզևս երկրաւորս: Եւ խոստացաւ նմա իշխանութիւն անլի քան զոր ունէրն, և հայեցոյց⁴ զնա ի կարծիս սնոտիս, որ ի վեր քան զիւր տէրութիւնն. իբր թէ անկ իցէ նմա հասանել մինչ ի թագաւորական վիճակն. բայց միայն հնարս իրացն խնդրեսցէ, թէ որպէս քակտեսցի միաբանութիւն ուխտին Հայոց, և թագաւորին կամքն կատարեսցին յաշխարհին:

Եւ իբրև յանձն էառ զամենայն ինչ՝ երթալ զկնի կամաց նորա, գիտաց և ծերն դառնացեալ, եթէ թմբրեալ և ցնորեալ և քակեալ է ի հաստատութենէ միաբանելոցն. յոյժ մխիթարեցաւ ի միտս իւր տրտմեալս, և էաժ զմտաւ՝ թէ և զամենեսեան այսպէս կարիցեմ որսալ յանգիտ կորուստն...:

Չեռն էարկ կամակորութեամբ և եմուտ յորդէգրութիւն դիւապաշտութեանն, և եղև աման չարին, և ելից զնա սատանայ ամենայն խորամանկութեամբ: Ի ձեռն էառ իբրև զվահան, և ագաւ զնա իբրև զգրահս, և եղև իբր զինուոր կատարեալ կամաց նորա: Մարտեաւ հնարիւք ընդ իմաստունս, և յոյժ խորագիտութեամբ ընդ գիտունս, յայտնի ընդ անմեղս, և ի ծածուկ ընդ խորհրդրականս. ձեռն էարկ և եհան զբազումս ի գնդէն Քրիստոսի, և խառնեաց ի գունդս դիւաց: Եւ ի բազում յայլ տեղիս գողաբար սողեցաւ և եմուտ իբրև զօժ ի մէջ ամրացելոցն. և խրամ հատեալ յափշտակեաց և էառ և եհան յայտնութեամբ զբազումս յազատաց և զբազմագոյնս ի շինականաց, և զայլ ոմանս յանուանեալ քահանայից...:

Եւ ժողովեաց զամենայն զայթակողութիւն, և արար զունդ զօրաց բազմաց. զրեաց և եցոյց զբազումս ի նոցանէ յականէ յանուանէ մեծ հազարապետին, և զհր բաշտութիւն արութեանն, մեծապէս պարծելով՝ որպէս աշակերտեաց ի մոլորութիւն խաբէութեան, և բաժանեալս և երկցեղս⁵ երևեցոյց զգօրսն Հայոց:

Եւ իբրև այս ամենայն չարիք յաջողեցան մնա, քակեաց և զմիաբանութիւն աշխարհին Վրաց ի Հայոց, և Աղուանիցն ոչ ետ յառաջ խաղալ. և զաշխարհն Աղձնեաց ըստ մմին իսկ օրինակի յետս կալաւ: Գրեաց հրովարտակ և աշխարհին Յունաց, ցուցանելով նոցա այլ ընդ այլոյ ստութեամբ, առ այր մի, որոյ Վասակ անուն էր, յայնց Մամիկոնեանից՝ որ կան ի ծառայութեան Յունաց: Եւ ի թշուառութեան ժամանակին այրն այն սպարապետ էր Ստորին Հայոց, և հաւատարիմ զօրացն Հռոմոնց ի սահմանին Պարսից, և արտաքոյ էր օրինացն Աստուծոյ գործովք իւրովք: Եզիտ այս Վասակ զայն Վասակ իւր գործակից ի մեծամեծ չարիսն՝ զոր միաբանեցին երկրքեանն:

Գրէր նա և ցուցանէր հանապազորդ, իբր թէ ամենայն Հայք զկնի իւր միաբանեցին: Եւ զնոյն զիւր մեծաւ զգուշութեամբ ներքին Վասակն տայր տանել ի թագաւորանիստ քաղաքն կայսեր. մինչև զտուրք եպիսկոպոսացն զմիտս և ս ուծացոյց⁶ ի նոցանէ, և զամենայն զօրսն Յունաց յերկբայս արար յուխտէն:

Մանաւանդ զի ի ձեռն սուտ քահանայիցն պատրէր և խաբէր իբրև ճշմարիտ մարդովք. աւետարան հանդերձ խաչիւ տայր տանել, և զիւր զամենայն սատանայական ստութիւնն նոքօք ծածկէր...:

Սոյնպէս առնէր և ընդ ամենայն կողմանս ամրականաց⁷ աշխարհին, ի Տնորիսն և ի Կորդիսն, յԱրցախ և յԱղուանսն, ի Վիրս և յաշխարհն Խաղտեաց. յղէր պնդէր, զի ասպնջականութեան որ արժանի մի՛ արասցէ:

Եւ ըստ մեծի չարութեան նորա առաւել և ս ժամանակն երբն մնա զյաջողութիւն իրացն. զի ամենն ին արտաքուստ օգնական որ ոչ գտաւ զնոյն Հայոց, բաց յայնց Հոնաց, որոց բանս եղեալ էր⁸: Սակայն և վասն նոցա կուտեաց զբազում այրուծին Արեաց, արգել և փակեաց զորունս ելին նոցա: Քանզի ոչ տայր դադար ամենն ին թագաւորին Պարսից, այլ յղէր և կոչէր զունդս բազումս ի պահակն Ճորայ...:

Չայս ամենայն իբրև արար և կատարեաց ըստ հրամանի թագաւորին, օր ըստ օրէ գրէր և ցուցանէր մեծ հազարապետին Պարսից, որ դողեալ և թաքուցեալ էր ի քաղաքն Փայտակարան: Համարձակեցաւ այնուհետև և նա ցուցանել զինքն բազում ազգաց, էր՝ որոց ահ արկանէր, և էր՝ որոց սիրով պարզ և բաշխէր: Կոչէր առ ինքն զՎասակ, և որք ընդ մնա իշխանքն ամենեքեան, բազում պարզ և շնորհէր նոցա յարքունուստ, և զօրացն՝ որ ի նորա բանի էին: Տանէր զառաջեաւ և զուրացեալ երիցունսն. ցուցանէր. հաստատէր և յայտ առնէր, եթէ սքօք որսացայց զնոսս՝ քակտել ի միաբան ուխտէն: Իսկ

հազարապետն իբրև զայն լսէր՝ յոյժ շնորհակալ լինէր երկոցունցն, և յոյս առաջի դնէր նոցա. «Եթէ լիցի մեր յաղթութիւն, զայլոց քահանայից կեանս դոցա շնորհեցից, և զմեծ վաստակ դոցա ցուցից թագաւորին»:

Եւ այսպէս շարժեաց և շփոթեաց զաշխարհն Հայոց, մինչև զբազում եղբարս հարազատս քակեաց ի միմեանց, ոչ եթող միաբան զհայր և զորդի, և ի մէջ խաղաղութեան արար խռովութիւն...:

Չայս ամենայն չարիս իբրև ետես ի մնա Միհրներսեհ, քան յանձն իւր՝ առաւել ի նա էր յուսացեալ: Հարցանէր և ստուգէր՝ թէ քանի՞⁹ այր կայ ի Հայոց աշխարհին ի գնդին Վարդանայ ընդ ամենայն բազմութիւնն: Իբրև լուաւ ի մմանէ՝ թէ աւելի քան զվաթսուն հազար են, խնդրէր և ս տեղեկութիւն վասն իւրաքանչիւր անձին քաջութեան, և կամ քանի՛ այն որ իցեն՝ որ սպառազէնքն իցեն, և կամ քանի՛ այն որ իցեն՝ որ մերկ առանց զինու աղեղնաւորք իցեն. տոյնպէս և վասն վահանաւոր հետևակացն...:

Եւ իբրև զայս ամենայն տեղեկացաւ ի մմանէ, կոչէր զամենայն զօրագլխեանն, պատուէր հրամանի տայր ամենեցուն յանդիման նորա, զի խրատու նորա լուիցեն ամենեքեան: Եւ զամենայն զօրսն զօրագլխօքն հանդերձ յանձն առնէր առն միում յաւագացն, որում անուն էր Մուշկան Նիսաւաւուրտ:

Եւ ինքն խաղայր անդէն գնայր յերկիրն Արևելից. և յանդիման եղեալ մեծի թագաւորին, պատուէր զամենայն անցս իրացն, զիւր հնարաւոր⁹ իմաստութիւնն և զՎասակայ խաբէրայ պատրանս հայթայթանացն¹⁰. որպէս զառաջինն զիւր զամբարշտութիւնն կամեցաւ ծածկել այնու՝ զի քակեալ երկպառակեաց զգունդն Հայոց:

Իբրև լուաւ զայս ամենայն թագաւորն ի բերանոյ մեծ հազարապետին, դառնացաւ յանձն իւր, և ասէ անսուտ երդմամբ. «Եթէ ապրեացի անօրէնն այն ի մեծ պատերազմէն, մեծաւ անարգանօք տամ ըմպել մնա զբաժակն դառնութեան մահու»:

(Էջ 90-97)

¹ այստեղ՝ ստույգ, հաստատ
² ասպնջացում էր
³ ընդ միտ մտանել-հաճոյանալ
⁴ հայեցոյց-ուշադրութիւնը բն եռեց
⁵ երկցեղ-պառակտված, անմիաբան
⁶ ուծացոյց-սառեցրեց, օտարացրեց

⁷ ամրական-ամուր
⁸ որոնց բանս եղեալ էր-որոնց հետ խոսք էր կապել
⁹ հնարաւոր-հնարագետ
¹⁰ խաբէրայ պատրանս հայթայթանացն-նյութաւոր խաբէութիւնները

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ (5-ԲԴ Դ.)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱՅՈՑ

(Հատուածք)

1

Եւ զօրավարն Միւնեաց Գղիհովն փութացուցանէր ստիպով զգօրագլուխն Պարսից գնդին զՇապուհն ասելով, թէ «Առնն Վահանայ Մամիկոնէից փորձ քաջութեանն և դու առեր և ամենայն աշխարհն Արեաց. և ես իրաց և գործոց առնն իմանալ ինչ ես ոչ կարեմ. զի թերևս գունդն ամենայն ի Գունի առ նմա միաբանեալ էր՝ նա մեզ անդէն զիր քաջութեանն գործ ցուցանէր. բայց արքայից արքայի թագն և Արեաց փառքն մեզ այնպէս յաջողեցին, զի նորա իրք այնպէս դիպեցան, որպէս տեսաքն, և մեզ բարի վճարումն եղև: Եւ արդ՝ տեսէք, այդչափ սակաւ արամբք զի՞նչ գործ գործէ այրն, և օր քան զօր նուազեցուցեալ զգունդս մեր և վատնէ: Արդ՝ թէ ուստեք ևս այլուստ կարէ գտանել օգնական՝ տեսջիք, զի նա ամօթով զմեզ դարձուցէ և սակաւաւորս. այլ և դառնալոյ իսկ մեզ անդէն անվատահ եմ շատ: Բայց փութա՛ և մի՛ տար առն հանգիստ առնուլ. գուցէ թէ մեք ծուլանամք, և նա առնիցէ զմեզ աշխատ, և անաչիցենք: Եւ եթէ յիս միայն թողոր զնա՝ ցուցանեմ ձեզ յաւորս հինգ իմով իսկ զնդաւս, թէ որպիսի մատնեալ վատի կորուսանեմ զնա և որք ընդ նմայն են»:

Եւ վասն զի ոչ էին գործք առնն Գղիհոնի մաքուր հոգւոյ արժանի, այլ այսն պիղծ որ էր ի նմա՝ գուշակէր նմին զանձնէ իւրմէ. թէ յետ հինգ ատուր չար մահուամբ սատակելոց ես ի յարանցն, որք են ընդ Մամիկոնենիս Վահանայ. քանզի թափուր գտեալ ամենն իմր դիւին յԱստուծոյ խնամոցն զայրն՝ այնուհետև նման Մատուղայ ուր կամէր սպանանէր զնա: Եւ լուեալ զայս ամենայն բանս զօրագլխին Պարսից Շապուհոյ՝ ոչ տայր դուլ անձինն և ոչ զօրացն որ ընդ նմայն էին, այլ փութով զհետ առնն երթայր սրտմտեալ. և հասեալ ի տեղիս բանակէր. կարծէր ի տեղիս ուրեք անյայտս գետառուին թաքչել:

Եւ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի և իւր ևս զօրուն որ ընդ նմա, զոնեա զայն զհշեր հանգստի յագեալ քնով, և հաւանեցուցեալ զարսն ի գեղջ Երիզայ. քանզի ամենայն անձն երկիւղիւ և կամաւ լսէր հրամանի նորա, իբրև թագաւորի, որ կարգեալ իցէ յԱստուծոյ ի վերայ երկրի. և ինքն Աստուած ընդ նմա էր յամենայն ի գործ՝ ուր և ուղղէր զկամս իւր: Եւ առեալ ընդ իւր զարս զօրուն իւրոյ և զշինականսն զԵրիզացիսն՝ զայր հասանէր ի վերայ դակշին ի զհշերի. և սպարափակ արարեալ Երիզացօքն գտեղի կռւոյն իւրեանց, և ին-

քեանք ըստ նմանութեան տեղատարափ շառաչման՝ նետածիզ սաստկութեամբ զգունդս Պարսկացն ահաբեկէին: Եւ խառնեալ ընդ միմեանս զամբոխն զօրացն որ ի դակշին էին՝ այլ ևս առաւել ինքեանք զինքեանս Պարսիկք առաքուր հարեալ կոտորէին. և լինէր ձայն լալոյ և ձայն գուժի ի բանակէ ամօթինացն: Բայց ի Հայոց զնդէն Գաբաղ միայն, սեպուհն Գաբեղեան, կամատրութեամբ կռուեալ և մեծ արութիւն ցուցեալ՝ խոցեցաւ...:

(Դրուագ Գ, գլ. 2Բ)

2

Եւ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան դարձեալ ի կոտորածէ թշնամեացն՝ երթեալ հանգչէր զմնացեալ մասն ի զհշերոյն յՈղիս գեղջն, զոր Շտեայ անուանեն, ի գոմս տեղեացն, մինչև յառաւօտուն ծագել. և ի ծագել լուսոյն՝ երթեալ բանակէր ի գիւղն Շտեայ: Եւ մինչ կամեցեալ հանգչել առ վայր մի զօրացն Հայոց Վահանայ Մամիկոնէի ի ծանրութենէ զհշերոյն աշխատութեանց՝ զաչս ի վեր առեալ տեսանէին, և ահա հասեալ կայր ի վերայ նոցա զօրագլուխն Պարսից Շապուհ. զայրագնեալ սրտի մոռայր իբրև զգազան: Վասն զի առաւել քան զամենայն ատուրք՝ այն զհշերոյն վնասք չարութեան առաւել թուէր նմա և կարևոր. որ եղևն իսկ արդարև այնպէս, այլ ոչ ինչ նման առաջիկայ մեծ բեկմանն, զոր առժամայն էր տեսանելոց և ի սպառ բեկանելոց: Եւ տեսեալ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի զյանկարծահաս դիմեցմունս զօրագլխին Պարսկաց Շապուհոյ ամենայն բազմութեամբ զօրուն ի վերայ նոցա, թէպէտ և անպատրաստ տեսանէր զիր գունդն ի ժամուն և կամ ի նուագս, ըստ սաստկութեան թշնամեաց զօրուն՝ սակայն զանգիտէր և բնաւ իսկ ոչ. այլ հրաման տուեալ՝ փութանակի կազմէր որքան իսկ էին. ի ձայն բարձր զոչէր առիւծաբար, ասելով, թէ «Մարդոյ հաւատացելոյ միում յերկուց վրիպել անհնար է՝¹, և դիպմունք երկրորեան մեծարգոյ են և պատուական. այլ սակայն մինն յերկուսեան առաւել ևս մեծ ի վեր է և բաղձալի քան զմիւսն. և ոչ անյօժարք և անխորհուրդ դիպմունք, որում և պատահենք յերկոցունց. և որ ցանկացայք կեալ ժուժկալութեամբ և մեռանել յուսով, այլ կեալն և մեռանելն մասն է պարծանաց. և մեռանել ի վերայ ուխտի սրբոյ՝ վիճակ է մարտիրոսութեան...»:

Եւ ասացեալ զայս ամենայն բանս զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենի, բաժանեալ որքան իսկ էին արք զօրուն ընդ նմա՝ տայ իւրաքանչիւր զօրագլխացն, զորոց կարծէր եթէ ի դէպ է և պատշաճս: Եւ մինչ դեռ ևս նա կազմէր յարձակմանն, և զօրքն Պարսից ճակատեալք կարգմամբ զային սաստկապէս ի պատերազմ՝ հայեցեալ տեսանէ, զի գունդն ամենայն Հայոց, դարձուցեալ զերեսս յուխտէն երդմանն Աւետարանին և ի խրատուէ զօրավա-

րին Հայոց Վահանայ Մամիկոնէի՝ երթային փախստեայք ամենեքեան: Եւ մնաց ինքն և յոխտապահացն Մուշեղ ի տոհմէն Մամիկոնէից և երեքեան Կամսարականքն, որդիք երանելոյն Արշարայ, ինքեանց երկուք կամ երեք դայեկօք, և այլ թուով արք, որք ի յազատաց և որ իւր իսկ ի Մամիկոնէից տանէն, ընդ բնաւ որպէս թէ քառասնիւք կամ նուասիւք և ս: Որոց և ս տեսեալ զփախուստն ամենայն գնդին Հայոց առհասարակ և զարհուրեալք՝ ասէր ոմն ցգորավարն Հայոց ցՎահան Մամիկոնեան, թէ «Յո՛ւշ, տէր, յո՛ւշ»։ այսինքն թէ հնար ինչ է ի ժամուս տեղի տալ և անձին զգուշանալ: Եւ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի տեսնագրեալ զինքն՝ բարձր ձայնիւ ասէր, թէ «Յիսարդ որ յուշ մի՛ ասէք. զի ինձ յուսալ ի մարդ և կամ պարծել մարդով՝ քա՛ւ լիցի, բայց միայն ի խաչն տեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Եւ քաջաբար ի մէջ ամենայն զօրացն Պարսից յարձակէր հանդերձ լաւ ուխտապահ արամբքն սակաւութ, որ մնային առ նմա: Եւ ապշեալ ընդ ահաւոր աներկիւղ ուժին զօրավարին Հայոց Վահանայ և ընդ այլ սակաւ այնքան արանցն որ ընդ նմա, զօրագլխին Պարսից Շապիոյ՝ ճեպով ցիշխան Սիւնեաց առ Գդիհոն յղէր, ասէ. «Չե՛ռն տոր յիս կողմն, վասն զի իրս անպատումն իմն և նորոգս ցուցաւ. զի թէ արդարև զօրութիւն իմն աներևոյթ այլ է, որ օգնէ նոցա և մեզ չերևի՝ զայն ես ոչ գիտեմ. բայց եթէ անմտութեամբ ցանկան անձնամահք լինել՝ ապա ի մէջ արարեալ զամենեսեան զնոսա այսօր ձերբակալս առնեմք»։ Եւ իշխանն Սիւնեաց Գդիհոնն խնդալից եղեալ ընդ կոչն Շապիոյ՝ նշկահելով փութանակի ի տեղին արշաւէր: Եւ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան, հանդերձ ընդ իւր միասիրտ սակաւ արամբք, օգնութեամբ աչոյ հօգորին յարձակեալ՝ հերձանէր զբովանդակ գունդն Պարսից, որպէս յորդահոսանք բազմութիւնք ջրոց, որ հեղեղատեն զերկիր և անցանեն: Եւ ինքն հօգորաբար քաջ ուխտակցօքն նման առիւծու ընդ մէջ ամենեցուն յայնկոյս ելանէր. և սպանեալ իւր և արանցն որ ընդ նմա բազում արս հօգորս պատերազմողս ի զօրացն Պարսից՝ հարեալ խոցէին նիզակաւ ընդ անութ կարելէր և զհպարտ իշխանն Սիւնեաց Գդիհոն, և զահաւորալոր ամբութիւնն զինուն, յոր պանծացեալ յուսայր անօրէնն՝ ցելեալ վեր ի վայր թափ ընդ լեարդն զնիզակատէզն հասուցանէին: Որոյ դառնակոռոչ չարալլուկ հեծմամբ յաւորս սակաւս վճարեալ զոգին՝ սատակէր անխոստովան. որ պարծէրն ամբարտաւանութեամբ և ասէր, թէ «Ես ընդ Վահանայ և ընդ այլ Հայերդ ոչ եթէ նետիւ կռուիմ, այլ գողըկով պուղեալ զբողորս ցնդեմ, օ՛ն և անդր ցիր և ցան արկից ձորոցդ և դաշտացդ»։ Եւ եղև բան հպարտութեան նորա բեկումն նմին. զոր մատնեալ Աստուծոյ ի ձեռս արանց զօրուն Վահանայ Մամիկոնէի մի անգամ և երկիցս զիշխանն Սիւնեաց Գդիհոն, և դարձեալ երկայնամտեալ ի նա Աստուծոյ իբրև զմարդասէր՝ ներէր խնայելով, զի թերևս զղջացեալ զոցէ ժամ դարձի և ապաշխարութեան, և կեցցէ: Եւ իբրև ոչ զգաստացաւ, այլ բնաւ ամենն իմբ արհամարհեաց զճշմարտութիւն և եղեալ անպատասխանի յաստուածային հարցմանն՝ ընկալաւ զաստակումն ամօթոյ իւրոյ

զաստիս և զհանդերձելոցն: Եւ զօրքն Պարսից զկնի փախստէիցն Հայոց անցեալ երթային, յորոց և արս բազումս սպանին ի թուլացեալ մեղկացելոցն:

Բայց զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէնի հանդերձ իւրովք գործակցօքն զգործ քաջութեանն վճարեալ Աստուծոյ զօրութեամբն՝ երթայր այնուհետև յանհոգս, որպէս թևակից զօրուն Պարսից. և գունդք ամենայն զօրացն Շապիոյ և հայել ի նոսա լոկ ոչ իշխէին: Քանզի այնպէս արկեալ էր Աստուծոյ զահ և զերկիւղ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի ի վերայ զօրացն Պարսից, զի կարծէին, թէ ի հայեցուածէ լոկ առն Մամիկոնէնի և յարանցն որ ընդ նմայն էին՝ չգերծանիցին առանց վտանգի...:

(Գրուագ Գ, գլ. 2Գ)

¹ մարդոյ հաւատացելոյ միում յերկուց բանից մեկին հավատացող մարդը սխալվի վրիպել անհնար է-անհնար է, որ երկու

ՇԱՐԱԿԱՆՔ

1

Ծով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ.
Մրրկեալ ալիք՝ թշնամին ինձ յարուցանէ.
Նաւապետ բարի, լե՛ր անձին իմոյ ապաւէն:
Ի համբառնալ իմում առ քեզ զաչս իմ՝ օգնեա՛ ինձ, տէր:
Ի յօրհնութիւն նոր օրհնեսցուք զքեզ, Քրիստոս փրկիչ մեր:
Այցելու մեր և փրկիչ, կեցո՛ զանձինս մեր:

(Մեսրոպ Մաշտոց)

2

Խորհուրդ մեծ և սքանչելի,
Որ յայսմ աւուր յայտնեցաւ,
Հովիւքն երգեն ընդ հրեշտակս՝
Տան աւետիս աշխարհի:
Ծնաւ նոր արքայ
Ի Բեթղեհէմ քաղաքի,
Որդիք մարդկան, օրհնեցէ՛ք,
Չի վասն մեր մարմնացաւ:
Անբաւելին երկնի և երկրի
Ի խանձարուրս պատեցաւ.
Ոչ մեկնելով ի հօրէ՛
Ի սուրբ այրին բազմեցաւ:

(Մովսէս Խորենացի)

ՅՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ (7-ԲԴ Գ.)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՐՆԱՅ

(Հատուած)

... Եւ մինչ այս այսպէս գործեցաւ, Սմբատ և իշխանն Պալունեաց, քաքեան ի ձորս ուրեք և առաքեցին զոմն ի Մեղոտի, թէ փութացէք զալ ի վերայ դոցա: Եւ ինքեանք առաքեցին արս ճ(100)՝ զրգռել զգօրսն. զորս իբրև տեսին զօրքն Պարսից, գռռ¹ ետուն զհետ, և մի մի հասանէին: Իբրև հասին Հարիւրքն առ Սմբատ և ելին ի բլուրն, և զօրքն Պարսից սկսան բազմանալ ի վերայ Սմբատայ և Վարազայ. և նոցա ծունր կրկնեալ² յօգնականութիւն կոչելով սուրբ Կարապետն, ասելով այսպէս. «Յիշեա՛ զմեզ, սուրբ Կարապետ և զմեր երախտիսն, և որպէս օգնեցեր ի հեռաստանէ, օգնեա՛ և ի մօտոյս»: Եւ եհաս ի թիկունս օգնականութիւնն աստուծոյ:

Եւ փողոց տուեալ³ ի վերայ բլերն Սմբատ յաջ թևն և Վարազ յաիեակ, և ըսկըսան արեամբ թաթաւել ինքեանք և երիվարք իւրեանց: Եւ մածեաւ սուրն ի ձեռին Սմբատայ և ոչ կարաց հանել, զի մածաւ արիւն ընդ սուրն, և ընդ ձեռնատեղին կոտորեցաւ: Իբրև տեսին պարսիկքն զի մածեալ էր ձեռն ընդ սուրն և կոտորեալ, և չկարաց փոխել այլ սուր, ձայն տուեալ միմեանց. «Փութասջիք, զի մածաւ սուր քաջին, և սուրն, որ ի ձեռին նորա, կոտորեցաւ»: Եւ պատեցին զնա յանխնայ. իբրև զչոր փայտ, որ ի ճեղքելն ճարճատէ, այնպէս ճարճատէին ի վերայ զլիտյ նորա զէնք նոցա: Իսկ նա ասէր ձայնիւ բարձր. «Վա՛յ քաջութեանդ ձերոյ և արութեանդ, զի ոչ կարացէք հերձուլ զգլուխ իմ»: Չայս ասաց, զի յիշելիք լիցի բանն: Բայց զիտաց, եթէ կարի սաստկանայ, ձայն բարձեալ ասէ. «Ո՞ր ես, բազուկ քաջ և հզօր ընդդէմ թշնամեաց, գաւազան իմոյ ծերութեանս, իշխանդ Պալունեաց, յառաջ մատիւր իբրև զքաջ արծիւ, զի անգեղք և բուէճք պատեցին զիս»: Իսկ նորա թողեալ զահեակ թևն յորդին իւր ի Վահան, որ զՎահանովիտն շինեաց, և որպէս զարծիւ կանչեաց ի վերայ նոցա, որ և ի դողման հարեալ⁴ երիվարացն, և անդէն ի թիկունս հասեալ օգնականութեամբն աստուծոյ, և բախեալ զտէգն ի վերայ պարսկին թիկանն, և անդէն եհան ընդ յողմ երիվարին. և այլ ոչ ժամանեաց⁵ հանել, և անդէն մեռաւ:

Իսկ Սմբատայ ելեալ յեզր պատերազմին, հրամայեաց բերել պարսիկ մի. և ետ զենուլ ի վերայ ձեռինն, զի իջցէ ջերմ արիւնն և թուլացուցէ զքոնատե-

ղին: Եւ նորա փոխեալ այլ սուր և հեծեալ յայլ երիվար: Իբրև հեծաւ, ետես զի վեց հազար այր պատեցին զնոսա, և ի մէջ առին զհինգ հարիւրն: Եւ զիտաց, եթէ կացեալ են երիվարքն, եհար զմի պարսիկն և ընկէց, և ասէ. «Հեծի՛ր, իշխանդ Պալունեաց»: Եւ նորա հեծեալ. և այնպէս արարեալ ի մէջ ահաւոր պատերազմին՝ փոխէին զերիվարս իւրեանց. զի որչափ զօրքն բազմանային, նոքա յանհոգս լինէին ի մէջ նոցա. այնչափ կուտեցան ի վերայ, որ տեղի անգամ ոչ գտանէին որք յեզերսն էին:

Եւ սկսան ոմանք երկմտել ի զօրացն Սմբատայ: Իսկ ըստ տեսչութեանն աստուծոյ տեսին զմիւս Սմբատ, զի գայր, որ էր իշխան Հաշտենից. և ածեր զՎահան Կամսարական, զորդին Սմբատայ, և վեց հազար այր ընդ նմա: Չոր տեսեալ Վարազայ իշխանին ասէ. «Քաջ որդի Վահան, ո՞ր էիր, որ այլ վաղ չեկիր յօգն»: Իսկ Վահան ձայն բարձեալ ասէ հանդերձ արտասուօք. «Կա՞յ այն տառապեալ հայրն իմ ծերունի, եթէ փոխեցաւ առ տէր⁶ ի հանգիստ»: Իսկ Սմբատ լուեալ ասէր. «Սուրբ Կարապետն ինձ ի թիկունս հասանէր, և ես ի պարսից մեռանէի⁷»: Իսկ նորա զոհացեալ յաստուծոյ, և ի դիմի հարեալ⁷ և կտրեալ փողոց⁸, անց ի ներքս. և պարգեաց զմիւս թևն նա և միւսն իշխանն Հաշտենից: Եւ յինքեանս առին և սկսան կոտորել զպատերազմագլուխսն. և ի վերայ շրջեալ բոլորեցին. և ի մէջ առեալ զգօրս Պարսից և սկսան կոտորել յանխնայ մինչև ի մուտս արևուն: Եւ մնաց ի Պարսից Գճ այր, որք ընդ միջոցս ելեալ փախստական եղեն. և զի մնացին երիվարք նոցա, երթեալ մտին ի ձոր մի և քաքեան. ննջեցին խոյս տուեալ մինչև ցմիւս օրն օրհասարակ⁹. զոր եկեալ զօրացն Հայոց զարթոցին զնոսա և ջուր ցանցեցին և տարան ի Մեղոտի, որ և անուանեցաւ ձորն այն Թըմրաձոր: Իսկ Սմբատ հրամայեաց զմեռեալ դիակունսն կուտել ի վերայ իրերաց ի բլեր մի, և անուանեցաւ Վարազակայ բլուր: Եւ ինքեանք եկեալ իջին ի վանացն գեղոն. ընդ յառաջ եղեն (նոցա պարաւորքն) և երգս առեալ բազում իրաց գովէին. որ և յետոյ ի հոտել դիականցն շէր հանեալ¹⁰ ասէին.

Կերան զազանք զմարմինս դիականցն և զիրացան.

Կուզ կերեալ ուռեաւ որպէս զարջ.

Եւ աղուէս հպարտ եղև քան զառեւծ.

Գայլ, քանզի շատակեր էր, պայթեաց.

Եւ արջ, քանզի զոր ուտէն¹¹

Չմնայ առ ինքն, ի սովոյ մեռաւ.

Անգեղք, քանզի ազաիք էին, նստան

Եւ այլ ոչ կարացին վերանալ.

Մկունք, քանզի շատ կրեցին ի ծակսն,

Ուրքն մաշեցան:

Չայս ամենայն ասացին. և ի դէպ եկն վասն իրացն, որ և կոչեցաւ գեղջն Շիրանիկք անուն:

(Էջ 238-247)

¹ կամ՝ գրոհ

² ծունր կրկնել-ծնրադրել

³ փողոց տալ-ճանապարհ բաց անել

⁴ ի դողման հարկանել(իմ)-դողալ, սարսել

⁵ ոչ ժամանեաց. այստեղ՝ չկարողացավ

⁶ փոխել(իմ) առ տէր-մեռնել

⁷ ի դիմի հարկանել(իմ)-հաղթահարել

⁸ փողոց կտրել տես 3. փողոց տալ

⁹ կեսօր

¹⁰ շէր հանեալ- երգելով

¹¹ ն-ն հող է

ՍԵՔԷՈՍ (7-ԲԳ Գ.)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Հատուած)

Հրաման դարձեալ ի կայսերէն ժողովել զօրս ի Հայոց և առաքել ի շեռն Սահակայ Մամիկոնենի և Սմբատայ Բագրատունոյ. դառնալ Սմբատայ անդրէն յեզս և խորհուրդն ապարամբութեան: Սմբատ ըմբռնի և ածի ի Կոստանդնուպոլիս. հասրանի վճիռ ի վերայ նորս արկանել ի կիւնիկն¹: Նահապակուքինք Սմբատայ և գրանել ողորմութիւն. զկնի արտոր նորս յԱփրիկէ:

Յայնմ ժամանակի դարձեալ հրաման ելանէր ի կայսերէն՝ վերստին քննել և խնդրել յաշխարհէն Հայոց զայր և զձի արս ընտիրս սպառազէնս ԲՌ հեծելոց. և տալ յերկուս² արս հաւատարիմս և արձակել մեծաւ ստիպով:

Յայնժամ ի խնդիր ելեալ ընտրեցին արս ԲՌ սպառազէնս և ետուն երկու հազարս յերկուս արս հաւատարիմս, մի հազար ցՍահակ Մամիկոնեան և մի հազար ի ձեռն Սմբատայ Բագրատունոյ, որոյոյ Մանուէլի: Եւ ոչ ընդ մի ճանապարհ արարեալ նոցա զչուն, այլ զՍահակ Մամիկոնեան արձակեն միով հազարս ընդ Սեբաստիա, և զՍմբատ Բագրատունի միսովն ընդ կողմանս Խաղտեաց: Եւ Սահակ զնացեալ տանի հասուցանել զգօրն ի պաղատն, և յանդիման լինի թագաւորին:

Իսկ Սմբատ հասեալ ի Խաղտիս՝ բռնանայ. քանզի երկեաւ զօրն ի ճանապարհի, ոչ կամեցեալ երթալ ի տեղին յայն զհետ թագաւորին խնդրոյ: Ազդ լինի թագաւորին եղեալ իրքն. ապա ի ձեռն հրովարտակաց և հաւատարիմ հրեշտակաց երդմամբ խոստանայ՝ մեծաւ պատուով փութանակի արձակել յերկիրն իւր: Եւ զօրուն խոստանայր պատիւս մեծամեծս և ինչս, այնպէս ողորքեալ ածէ ի հաշտութիւն: Եւ զնացեալ միաբանութեամբ յանդիման լինէին թագաւորին: Եւ թագաւորն սպառազինէ զգօրն և զարդարէ և զումարէ ի սահմանս Թրակացոց, և զՍմբատ մեծաւ պատուով յուղարկէ անդրէն հասանել յերկիրն իւրեանց բազում ստացուածովք:

Ապա դարձեալ սկսան միաբանել մնացեալ նախարարքն Հայոց, և խնդրէին ի բաց կալ ի ծառայութենէն Յունաց թագաւորին և նստուցանել իւրեանց թագաւոր, զի մի՛ և նոցա հասցէ մեռանել ի կողմանս Թրակացոց, այլ

կեալ և մեռանել ի վերայ աշխարհին իրեանց: Եւ բանք խորհրդոց նոցա ոչ ունէր³ զմիաբանութիւն իրին յինքեանս հաստատեալ, այլ ոմանք ի նոցանէ շոգմոգութեամբ⁴ հասուցին զբանս խորհրդեանն յունկն թագաւորին, և ինքեանք այսր և անոր տրտորեալ խուսափէին:

Յայնմ ժամանակի հասանէին դեսպանք արքունականք հրովարտակօք, և կալեալ զՍմբատ հանդերձ այլովք ոմամքք եւթն արամքք և տարան յանդիման թագաւորին: Եւ քննեալ զնոսս ի մէջ բազմամբոյս հրապարակին՝ հաստաւ վճիռ ի վերայ նոցա՝ մերկացուցանել և ընկենուլ ի կիւնիկն:

Եւ էր սա այր անհեղեղ անձամբ⁵ և գեղեցիկ տեսեամբ, և բարձր և լայն հասակաւ, և բուռն և ցամաք մարմնով⁶: Յայնժամ հօգօր և պատերազմող, որ ի բազում պատերազմունս ցուցեալ էր զիր քաջութիւնն և զբռնութիւն⁷: Այս է զօրութիւն նորա. քանզի անցեալ սա ի ներքոյ անտառախիտ⁸ մայրեաց և զօրաւոր ծառոց, ի վերայ յաղթանդամ և հօգօր երիվարին, և յարձակեալ զոստով ծառոյն՝ բուռն հարկանէր, և կծկեալ ուժգին երանօքն⁹ և ոտիւք զմէջ երիվարին՝ վերացուցանէր երանօքն ի գետնոյն. մինչ զի ամենայն զօրացն տեսեալ ահաբեկ լինէին ի զարմացմանէ:

Եւ արդ՝ մերկացուցեալ զնա և ագուցեալ անդրավարտիս և ընկեցեալ ի կիւնիկն, զի կուր լիցի գագանաց:

Եւ արձակեալ ի վերայ նորա արջ: Եւ եղև՝ իբրև դիմեաց ի վերայ նորա արջն՝ նա աղաղակեաց մեծածայն և ընթացաւ ի վերայ արջոյն, և զարկեալ բռամբ իւրով զճակատն, և անդէն սատակէր զնա ի տեղուջն:

Երկրորդ անգամ արձակեցին ի վերայ նորա ցուլ: Իսկ նորա բուռն հարեալ զեղջերացն ցլուն... զելոյր զպարանոցն և խորտակէր զերկոսին եղջիւրսն ի վերայ զլիտոյն. թուլանայր ցուլն և յետս զնալով ի փախուստ դառնայր: Իսկ նորա զհետ ընթացեալ՝ բուռն հարկանէր յագին և ի կճղակն ազդեր միոյ ոտին նորա, և թափեալ զկճղակսն՝ մնայր ի ձեռին նորա: Եւ ցուլն զնայր ի նմանէ փախստական, միով ոտամբն բոկ:

Դարձեալ երրորդ անգամ արձակեցին ի վերայ նորա առեւծ: Եւ եղև՝ ի վերայ նորա յարձակել առիւծուն՝ այնպէս իմն յաջողեալ նմա ի տեսնէ, բուռն հարեալ յականջ առիւծուն՝ հեծաւ ի վերայ նորա: Եւ անդէն բուռն հարեալ զխաչավիտոյն՝ խեղդէր զառեւծն և սպանանէր: Անդ աղաղակ բազում ամբոխին զերկիրն լնուին, և խնդրէին ի վերայ նորա ողորմութիւն ի թագաւորէն:

Եւ նա վաստակեալ ի մարտին՝ նստէր ի վերայ առիւծուն մեռելոյ, զի փոքր մի հանգիցէ: Անդ և կին թագաւորին անկեալ առ ոտս նորա՝ խնդրէր ի վերայ նորա առնել ողորմութիւն. վասն զի սիրելի էր յառաջն այրն այն թագաւորին և կնոջ նորա, և անուանեալ էր զնա իւր յորդեգիրս: Եւ նա զարմացեալ ընդ զօրութիւն և ընդ պնդութիւն առնն և լուեալ պաղատանաց կնոջն և ամենայն

պաղատոյն՝ հրամայեաց առնել ի վերայ նորա ողորմութիւն:

Յայնժամ տարան զնա ի լուացումն ի բաղանիս. լուացին զնա և զգեցուցին, և կոչեցին զնա յընթրիս արքունի, դարմանեցին զնա կերակրովք: Եւ ըզկընի սուղ ինչ անցելոց, մանաւանդ եթէ ոչ ի չար ինչ կամաց թագաւորին, այլ ի նախանձորդաց չարախօսութենէ, հրամայէ հանել զնոսս ի նաւ և աքսորել ի կղզիս հեռաւորս. և ապա անտի հրամայէ անցուցանել յԱփրիկէ...:

(ԺԸ)

¹ կիւնիկ-գագանամարտի կրկես

² տալ բայի մոտ հայցական հոլովի

վրա դրված ի նախդիրն արտահայտում

է տրականի իմաստ. նման դեպքում

սովորականը ց նախդրի գործածութիւնն է

³ ստորոգյալը թվով չի համաձայնել

հոգնակի ենթակային

⁴ շոգմոգութիւն-բանասարկութիւն

⁵ անձն. այստեղ՝ մարմին

⁶ բուռն և ցամաք մարմնով-ուժեղ և

պիրկ մարմնով

⁷ այստեղ՝ ուժը

⁸ անտառախիտ-տերևախիտ, սաղարթախիտ

⁹ երանք. այստեղ՝ ազդրեր նշանակութեամբ

ՂԵՒՈՆԴ (8-ԸԳ Գ.)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Հատուած)

Իսկ ի գալ զարնայնոյն գունդ կազմէր իշխանն¹ Իսմայելի ի վերայ երկրիս Հայոց. և գումարէր զընտիրս հեծելոց իբրև արս ԼՌ. ընտիր երիվարաւ և կուռ սպառազինութեամբ ի տոհմէ Խորասան գնդին, և տայր ի ձեռս զօրավարի միոյ որում անունն էր Ամր. և առաքէ զնա յինքենէ ի լայնանիստ և ի հռչակաւոր անուն քաղաքէն, գոր շինեաց ինքն Արդլա ապաւէն ամրութեան հօրագոյն և անառիկ պարսպով ամրացեալ, որ անուանեալ կոչէր Բաղդադ:

Եւ համբարձեալ զօրավարին ի կողմանցն Ասորոց՝ գայր հասանէր յաշխարհս Հայոց ի քաղաքն Խլաթ, մեծաւ զգուշութեամբ և բազում պատրաստութեամբ զինուց: Իբրև մտանէր ի քաղաքն՝ տեղեկանայր ի քաղաքացոցն անտի գորայիսութիւն զօրացն Հայոց, եթէ քանիք և եթէ ո՛յք իցեն զօրագլուխք, և եթէ միարանք իցեն ի սէր միմեանց եթէ երկբայք, եթէ քաջայա՛ղք իցեն եթէ յամրեղք², եթէ ունիցին պատրաստութիւն զինուց եթէ ոչ: Չայս ամենայն տեղեկացեալ՝ պատրաստէր ըստ նմին զօրագլուխս զօրաց իւրոց:

Իսկ Աշոտ որդի Սահակայ, զի էր ի քաղաքին յայնմիկ՝ զեկուցանէր զգալուստ թշնամեացն նախարարացն Հայոց. զի ուր ուրեք և իցեն, ի մի վայր գումարեսցին կեալ և մեռանել ի վերայ միմեանց: Իսկ նոցա անհաւատայի թուեալ իրք հրովարտակին՝ համարէին, (թէ) դաւօղ խորամանկութեամբ կամի փրկել զքաղաքն ի պաշարմանէ անտի, իբր մտերիմ զինքն ցուցանել Իսմայելացոցն³. և զայս առեալք ի միտ՝ անընկալք եղեն բանից նորա, այլ տակաւին զառաջի արկեալն իւրեանց խոկային կատարել: Ապա յետ այտրիկ գումարէին նախարարք ազգին Արծրունեաց զգօրս Վասպուրական աշխարհին, Համազասպ և եղբարք իւր և որք ի տոհմէ Ամատունեաց և զօրքն որ ընդ նոսա: Կոչէին ի թիկունս օգնականութեան⁴ զՎասակ որդի Աշոտոյ, զեղբայր Սմբատայ սպարապետի ի տոհմէ Բագրատունեաց և զգօրսն նորին. և խաղացեալ յառաջ երթային ի վերայ Արճէշն աւանի՝ բրել զնա ի հիմանց և զգօրս որ ի նմա՝ հարկանել սրով:

Եւ իբրև հասանէին ի գաւառն Առբերանի ի գիւղն Բերկրի՝ մնային միմեանց գումարութեան: Եւ զբազումս յաշխարհականացն հրապուրեալ զկնի

ինքեանց՝ ի հետխոտս տանէին ի մարտ պատերազմի⁴: Եւ մինչդեռ զայս խորհուրդ առհասարակ կամէին կատարել՝ վաղվաղակի հասանէր առ նոսա լուր զօրացն Իսմայելի. քանզի եկեալ ոմն պատմեաց նոցա, եթէ զօր բազում յորդուցն Իսմայելի հասեալ ի վերայ՝ սպասէ ձեզ: Որում ոչ անսացեալ Համազասպ տէրն Արծրունեաց՝ հարուածովք տանջէր զնա իբրև զհրապուրիչ ստութեան. և ինքն խրոխտացեալ զնաց ի վերայ Արճէշն աւանի հանդերձ զօրօքն իւրովք: Եւ իբրև մօտ հասանէին ի քաղաքագիւղն՝ բնակիչք քաղաքին յառաջ զգացուցին ի քաղաքն Խլաթ առ Ամր զօրավարն Իսմայելի զգալուստ նախարարացն Հայոց: Եւ նորա խաղացեալ՝ բազմութեամբ զօրացն գայր և դարանամուտ լինէր մերձ ի գիւղն Արճէշ: Եւ մինչդեռ մարտնչէին գումոն Հայոց ընդ ամրոցին՝ վաղվաղակի յարեան դարանամուտքն ի թագստենէն և զեղան ի վերայ զօրացն Հայոց և ի փախուստ դարձուցեալ՝ կտտորեցին զմեծ մասն հետևակ զօրուն որ յաշխարհաբնակ⁵ մարդկանէն էին. քանզի էին մերկք և առանց զինուց և անհմուտք պատերազմի. որք միանգամ հանդիպեալք դառն լուսոյ աուրն այնորիկ, ի սուր անողորմ մաշեցին զնոսա, և ոմանք առ վտանգի տարակուսանացն գետավէժ և ծովահեղձ լինէին: Իսկ ի տոհմէ նախարարացն վախճանեցան արք Գ. որք էին ի նոցանէն երեքն ի տոհմէ Տրունեաց և մինն Յուրծայ գեղջէ. իսկ որ յաւմիկ ժողովոյն վախճանեցան՝ էին իբրև Ռ.Շ. մարդ: Եւ այլք ի փախուստ դարձեալք՝ հազիւ ուրեմն զապրուստ⁶ անձանց գտանէին: Եւ եղև չարքմբեր նեղութիւն վտանգիս այտրիկ յամենանն հրոտից, որ օր չորրորդ էր ամսոյն յաուր շաբաթու: Եւ թշնամեացն հետամուտ եղեալ՝ հալածէին զգօրսն Հայոց մինչև ի տեղին որ կոչի Տայ գիւղ. և ապա դարձան ի հետոց նոցա և առնէին ուրախութիւն մեծ ի բանակն իւրեանց:

Յայնժամ ոչ սակաւ յաճախէր հեծութիւն աշխարհիս Հայոց, և ուրացողաց թշնամեացն ցնծութիւն և հրճուանք. քանզի նոյնժամայն շունչ կլեալք⁷ դարձեալ յարձակէին, ուշ եղեալ ելանել յառաջին պողոտայն արքունի ընդ գաւառն Ապահունիս: Հասանէին ի գաւառն Բագրևանդ ի գիւղն Արճնի. անդ հարկանէին զբանակս իւրեանց առ եզերք գետոյն որ ընդ նա անցանէ. և ընդ նոսա ամենայն արուեստականք և յարդարիչք զինուց, որք պատրաստէին զէնս և անօթս պատերազմի:

Իսկ այն զօրք, որք պահէին զքաղաքն Կարնոյ՝ հասուցանէին զնա մերձ յապականութիւն. քանզի սաստկացաւ սով ի քաղաքին, և կամէին յակամայ տալ զքաղաքն ի ձեռս: Եւ իբրև եհաս զրոյց պարտութեան զնդին ի քաղաքն Կարնոյ՝ յայնժամ լքաւ սիրտ արանց պատերազմողաց զօրացն Հայոց. և թոյլ ետուն պաշարման քաղաքին: Եւ թէպէտ կարօղ էին մեկնել ի կողմն Յունաց

և ապրեցուցանել զանձինս ի չարասէր ապիրատութենէ՝ զրպարտողացն՝ սակայն լաւ համարեցան զմահ անձանց քան տեսանել զկորուստ աշխարհիս...: Եւ զայս զմտաւ ածեալ՝ թէպէտ և նուագունք էին քան զթիւ թշնամեացն՝ ինքնակամ յօժարութեամբ դիմեցին ի վիշտն. և ժողովեալ զգունդս իրեանց իբրև արս ԵՌ.՝ զնացին ի քաղաքէն Կարնոյ, անցանէին ընդ սահմանս Բասենոյ ի գաւառն Բագրևանդ: Իսկ և իսկ⁹ անցեալ ընդ գետն Արածանի՝ յարձակէին արիութեամբ սրտի ի վերայ թշնամեացն. և բացագոյն երկու վտաւանօք զատուցանէին զաղխն իրեանց և զերիվարս. և ի հետիոտս զայրագնեալ պատրաստէին ի մարտ պատերազմի թշնամեացն: Ելանէին ապա և գունդք թշնամեացն ի վերայ նոցա բազում պատրաստութեամբ:

Եւ ընդ ծագել արեգականն խմբեցաւ պատերազմն. և իբրև բախեցին ընդ միմեանս՝ նախ զօրացեալ գունդն Հայոց՝ հարկանէին բազում հարուածս, և ի փախուստ դարձուցեալ զթշնամիսն սատակէին զբազումս: Եւ դարձեալ զօրացեալ՝ դարձան ի փախստենէ, և դիմադարձեալ զայրագին ցասմամբ՝ լնուին արհաւորք զբազմութիւն ռամիկ ժողովոյն. և ի փախուստ դարձուցեալ զոմանս ի նախարարացն և ի նոցին հեծելոցն և զռամիկսն որք ընդ նոսա, զի բազումս ի նոցանէն հարեալ տապաստ դաշտացն արկանէին:

Իսկ քաջայարթ նահատակքն թէպէտ և նուագունք էին ի մէջ չարաշուք որտողացն՝ սակայն ոչ ինչ զանգիտեցին ի դառնաշունչ օրհասէն. այլ մինչ ի սպառ գումարեալք ոգով չափ՝ մարզէին զմիմեանս բանիք ասելով. «Քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր և ի վերայ ազգիս, և մի՛ տեսցեն աչք մեր կոխան ոտից լեալ պղծալից արանց զարբարանս մեր... այլ նախ՝ ընդդէմ մեր լիցի սուր թշնամեացն. և ապա լիցի գոր կամիցին...»

(ԼԳ)

¹ այստեղ՝ զորավար

² յամբեղ-դանդաղկոտ, ոչ քաջ

³ խոսքը վերաբերում է արաբներին

⁴ սեռակամով ավելադրութիւն է

⁵ աշխարհաբնակ-տեղացի

⁶ այստեղ՝ փրկութիւն

⁷ շունչ կլեայք-շունչ առնելով

⁸ ապիրատութիւն-անզգամութիւն, անիրավութիւն

⁹ իսկ և իսկ. այստեղ՝ իսկույն

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ (10-ԲԳ Գ.)

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

(Հատուածք)

ԲԱՆ Ա.

Չայն հառաչանաց հեծութեան սրտի՝ ողբոց աղաղակի քեզ վերընծայեմ, տեսող զաղտնեաց. և մատուցեալ եղեալ ի հուր թախծութեան անձին տոչորման¹ զպտուղ ըղձից ճենճերոյ² սասանեալ մտացս, բուրվառաւ կամացս առաքել³ առ քեզ: Այլ հոտոտեսցիս, հայեսցիս, գթած, քան ի պատարագն բոլորապատու⁴ մատուցեալ ծխոյն բարդութեան⁵: Ընկալ զակաւամասնեայ բանիցս յօղուած⁶ քեզ ի հաճութիւն⁷ և մի ի բարկութիւն⁷ ...:

ԲԱՆ Թ.

Եւ արդ զինչ արժանաւոր ըստ քեզ բամբասանս շարագրեցից ի կտակ մաղթանաց⁸ մատենի⁹ այսր ողբերգութեան, ո՛վ անձն իմ թշուառ, ամենապատկառ¹⁰ և առ պատասխանիս բանից անբարբառ, անպիտան աստուծոյ և սրբոց մասնակցութեան: Ձի եթէ զլիճ¹¹ մի ծովուց ի յորակութիւն դեղոյ¹² յեղյեղեցից, և զղաշտս ասպարիսօք բազմօք սահմանեալ՝ ի տարածումն լայնութեան¹³ քարտենի¹⁴ չափեցից¹⁵, և զպուրակս յոքունց¹⁶ անտառաց շամբից եղեգանց¹⁷ ի հատուածս գոյութեան գրչաց կազմեցից¹⁸, և ոչ զթիւ մի ի բարդելոցն անօրէնութեանց զօրեցից ընդ գրով սահմանի գրաւել¹⁹: Նա²⁰ զի թէ զմայրսն²¹ Լիբանանու ի մի լուծ կշռոց²² զօղեցից, և կամ զլեռն Արարատեան ի կէտ ամբարձման նժարի միոյ արդարութեան միջնորդ²³ կացուցից, ոչ հաւասարէ այնր²⁴ հարթութեան²⁵ համագուգակցել²⁶:

Ծառս²⁷ ամբարձուղէ՛՜ ստուարաստեղն²⁸ տերևալից՝ ունայն ի պտղոց, նմանակից յաւէտ հարազատ այնր թզենոյ՝ գոր տէրն գօսացոյց, քանզի սահարթօք վարսից, այս է²⁹ արտաքին դիմօք բարեշուք կերպից իբր պսակաւ իմիք պաճուճեալ, բացականացն³⁰ զոս բարձալի, իսկ եթէ մերձեսցի տնկողն խուզել³¹ զխնդրելին, գտցէ զքեզ ունայն ի բարեաց և զարշելի ի գեղեցկութեանց, ծաղր տեսողաց և նշաւակութիւնք նախատողաց: Ձի եթէ ապաժա-

ման յանգզոյ՝ ժամուն³² հերսպանձ տունկն պտղակորոյս անկենդան, որ դոյզն պատկերն է անպատրաստից³³, եկն ընդ անիծիւք³⁴, և կամ երկիր ոռոգեալ ցօղով, և³⁵ ոչ բազմապատիկ զաւանդս արգասեաց երկրագործութեան տաժողացն մատուցանէ՝ լքեալ մոռանի³⁶, իսկ դու, ո՛վ անձն իմ եղկելի, սահման բանատր և տունկ կենդանի՝ և ոչ ի ժամու իւրում պտղատր, ի՞նչ³⁷ ոչ զնոյն կրեսցես պատիժ նախնում առակիդ³⁸: Վասն զի զհամայնն ընկալար ի քեզ անպակաս յառաւելութեանց, սկզբնատրեալ ի մարդն առաջին և մինչև ի սպառումն ծննդոց նորին, զբերս գործոց նանրութեանց³⁹ և զգիտս նորոգս՝ ատելիս և անախորժելիս հաստողին զքեզ աստուծոյ...:

1 անձին տոչորման-տոչորվող հոգուս
2 զպտուղ ճենճերոյ-ճենճերացող պտուղը
3 գործածված է ներկա ժամանակի
4 եզակի 1-ին դեմքի նշանակությամբ
5 բոլորապտուղ-բոլորանվեր
6 մատուցեալ ծխոյն բարդութեան-
մատուցված առատ ծխով
7 զսակաւամասնեայ բանիցս յօղում-
այս սեղմ խոսքերիս շարադրանքը
8 ի նախդիրը հայցական հոլովի հետ
9 գործիական հոլովի իմաստով
10 մաղթանք-աղաչանք
11 ի կտակ մատենի-կտակարան մատչանում
12 ամենապատկառ-խիստ սև երես
13 այստեղ՝ ջրեր իմաստով
14 ղեղ. այստեղ՝ թանաք, մելան. ի յորս-
կութիւն ղեղոյ յեղյեղեցից. մելանի փոխեն
15 ի տարածումն լայնութեան-լայն
16 տարածութեամբ, լայնատարած
17 քարտէն-թուղթ, մագաղաթ
18 այստեղ հոմանիշ է յեղյեղեցից բառին
19 յոգն, յոգունք, ունց կամ յոքն, յոքունք,
ունց. ա. շատ, բազում
20 շամբ, եղէզն նույնանիշ բառեր են
21 ի հատումս գոյութեան գրչաց
22 կազմեցից. այսինքն՝ գրիչներ շինեն
23 ոչ զօրեցից ընդ գրով սահմանի գրա-
24 տել. այսինքն՝ չեն կարողանա գրի առնել
25 գործածված է շաղկապի իմաստով՝ նաև, և

26 մայր-մայրի ծառը
27 լուծ կշռոց-կշռեքի լծակ
28 արդարութեան միջնորդ. այստեղ
29 գործածված է փոխաբերական իմաս-
30 տով, նշանակում է՝ կշռաբար
31 խոսքը մեղքերով լի մյուս մտարի մասին է
32 այստեղ՝ մակարդակի իմաստով է
33 ավելաորոյթուն է: Ամբողջ նախադա-
34 ստայան միտքը հետևյալն է. և եթե Լիբա-
35 նանի մայրիները գողելով կշռեքի լծակ
36 շինեն, ու Աբարատ լեռը, իբրև կշռաբար,
37 ղենն մտարներից մեկի մեջ, ապա այն
38 չի հավասարվի իմ մեղքերով լի մտարին
39 ս-ն այստեղ դիմորոշ հող է. ես՝ ծառս
40 ստուարաստեղ-հաստ՝ խոշոր ոստերով
41 այս է-այսինքն
42 բացական-հեռու գտնվող
43 այստեղ՝ փնտրել
44 յանգզոյ՝ ժամուն-անձամանակ,
45 չսպասված ժամին
46 այստեղ նշանակում է մեղավորների
47 եկն ընդ անիծիւք. բառացի՝ եկավ
48 անեծքի տակ, այսինքն՝ անիծվեց
49 այստեղ՝ բայց
50 փխ. մոռանայ-մոռացվում է
51 իբր. այստեղ՝ ինչպես
52 այստեղ՝ օրինակ. նախնում առակիդ.
53 այսինքն՝ վերևի օրինակում հիշված
54 վերացականը թանձրացականի փոխարեն

ԱՐԻՍՏԱՎԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻ (11-ԲԴ Գ.)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
(Հատում)

... Ձեռորձեան և զՀանձէթն յորժամ յիշեն և որ ինչ ի նոսա գործեցաւ, հատկիւմ արտասուօք, փոճկի սիրտ իմ, և յիմարին միտք իմ, և գողդի հարկանի ձեռքս և ոչ կարեն գոճ տողիս¹ յառաջ խաղացուցանել: Բազում և անհամար հոգիք ի վերագոյն զաւառացն, վասն տեղեացն ամրութեան՝ անդր ժողովեալ էին. յորոց վերայ հասեալ անօրինացն արագապէս որպէս թռչունք, անողորմաբար որպէս զագանք, սրամտութեամբ եռացեալք որպէս վրէժխընդիրք, և խիլ արկեալ ի քարանձաւս և յանտառախիտ մայրիս՝ անյազաբար կոտորեցին զորս և գտին. մինչ զի արիւնն զօրէն զարմանաբեր ժամանակին, յորժամ ի ջերմութենէ օդոյն ջուրն ծորեալ ելանէ՝ ի ձեանն առուս առուս վիժելով, զհող երկրին զկնի իւր հեղեղատելով, այսպէս և յայնժամ լինէր. արեան առուք ի դիականցն անկելոցն ելեալ, ի գառ ի կող տեղիս ի յորդութեան գնացիցն զհող երկրին հեղեղատելին:

Այլ դու յայնժամ եղեալն ա՛ծ զմտաւ, զկրօնաւորացն դաս և զքահանայիցն՝ որ անդ հանդիպեցան, կամ զերամս ծերոցն, կամ զերիտասարդացն զբազմութիւնս, որոց ղեռաբոյս մօրուացն² իբրև զնկար զեղեցկայարմար զայտսն զարդարելին, և խոպոպք վարսիցն փաղփեալք ի վերայ ճակատուն զօրէն վարդի վառ ի վառ գունով զդիրս երեսացն պայծառացուցանելին, թէ որպէս յանկարծակի ի սրոյ թշնամեացն իբրև ի կարկտայ հարեալք՝ յերկիր թաւալ անկեալ գոր խաղային: Բեր ի մէջ և զտղայոցն համար, զորս առեալ ի գրկաց մարցն յերկիր ընկենուին, որ մեծակական հառաչմամբ զմարսն խնդրէին. իսկ զծնօղսն զանալից հարուածովք՝ առ շտապ ի նոցանէ բաժանելին: Ո՛ր սիրտ քարեղէն, որ զայս լսելով ոչ հեղձնու արտասուօք ընդ բազմադիմի չարեացն յաճախութեամբ: Կոյսք ի խալտառականս անկեալք, նորահարսունք յարանց բաժանեալք և ի գերութիւն մատնեալք. ի միում վայրկենի երկիրն՝ որ իբրև զքաղաք մարդախիտ առատութեամբ խճողեալ էր, եղև անմարդ ամայի, յերկուս բաժանեալ կամ սրակոտոր կամ զերի:

... Իսկ զոր ի Գերջան և յԵկեղեաց և ի միջասահմանս նոցա եղև կոտորումն, զայն և ընդ գրով արկանել չէ ոք բաւական. բայց դու ասացելովքս կըշռեա՛ զայն: Իսկ որ ի Տայսն մտին, առեալ զերկիրն և հասեալք մինչև ի գետն

մեծ՝ որ կոչի Շորոխ, և զկնի գետոյն դարձեալ իջին յաշխարհն Խաղտեաց. և առեալ զառ և զգերի զառառին՝ դարձան, և եկեալ մինչև ի բերդաքաղաքն որ կոչի Բաբերդ, հանդիպի և անդ գունդ մի ի զօրացն Հռոմոց որ կոչին Փռանկը, որք յանգէտս միմեանց ի դիմի հարեալք ճակատեցան. և յորդմութենէն աստուծոյ զօրացան գունդն Հռոմոց, և յաղթեալ թշնամեացն՝ զգլուխ զօրուն սպանին և զբազումս ընդ նմա, և զայլսն ի փախուստ դարձուցեալ, զառ և զգերի զամենայն թափեցին, բայց փախստեիցն զհետ ոչ իշխեցին յերկարել, քանզի երկեան թէ զուցէ ծանր զօրու հանդիպեցին: Իսկ գերիքն որ ազատեցան, զոհացեալք զաստուծոյ, չոգան ի տունս իւրեանց: Իսկ որ ի վերայ Հայոց գնացին, զոր և գտին՝ ի սուր և ի գերութիւն ծախեցին, և լցեալ արարա՝ դարձան անդրէն. և եկեալ ի սահմանս Վանանդայ, որոց ի դիմի հարեալ քաջագուն իշխանքն Գագկայ որդոյ Աբասայ, և բազում նախճիրս ի տեղոջն գործեալ: Որոց ի վերայ հասեալ զօրք անօրինաց ի մէջ փակեցին. և քանզի յերկարել պատերազմին և յահագին կոտորուածէն ի զօրութենէ պակասեալք էին ինքեանք և երիվարք իւրեանց, վասն որոյ ոչ կարացեալ զպատնէշ թշնամեացն պատառել և ելանել, յորոց սուր ի վերայ եղեալ կոտորեցին յազատացն արս երեսուն:

Իսկ զմի ոմն յազատացն կալեալ, որում անուն էր Թաթուլ, որ էր այր հզօր և պատերազմասէր, զոր³ առեալ տարան առ Սուլտանն: Եւ քանզի կարեվեր խոցեալ էր զորդի Արսուրանայ Պարսից ամիրային, զոր իբրև ետես Սուլտանն՝ ասէ. «Եթէ դա ապրի, զքեզ ազատեմ. ապա թէ մեռանի, զքեզ դմա մատաղ հրամայեմ առնել»: Որ յետ սակաւ ատուրց մեռաւ: Իսկ նորա պատասխանեալ, «Թէ իմ է զարկածն, չէ կենաց. թէ այլում է, զայն ոչ գիտեմ»: Սուլտանն իբրև լուսա թէ մեռաւ, հրամայեաց սպանանել զնա, և զաջ բազուկ նորա հատեալ, ետ տանել Արսուրանայ ի մխիթարութիւն, թէ ի վատ բազկէ չէ մեռեալ քո որդին:

Արդ զինչ է ինձ մի ըստ միոջէ զանկանգնելի կործանումն քրիստոնէից ընդ գրով սահմանել, որ իբրև ծով ի սաստիկ հողմոց յուզեալ՝ ահագին ծփանօք, և փրփրաղէզ կուտակօքն յամենայն կողմանց զայ ի ծփանս, այսպէս և մեզ հանդիպեցաւ. աշխարհս ամենայն յանկարծակի լի եղև խռովութեամբ, և ոչ ուրեք գտանիր տեղի ապաւինի. զի վասն անհնարին չարեացն՝ բարձաւ յոյս կենաց յամենայն մարդկանէ:

... Յետ երից ատուրց շարժեալ ամենայն բանական, խաղայ իջանէ ի տուարածոյ տափ⁴, և անտի իջանէ յընդարձակ դաշտն Բասենոյ առ անառ ամրոցան որ կոչի Աւնիկ, յորում ետես աշխարհաժողով մարդոյ և անասնոյ, և ոչ ինչ փոյթ արար, քանզի ի հայելոյն միայն ծանեալ թէ անառ է. և անցեալ առ նովաւ զայ ի գլուխն Բասենոյ, մերձ ի գեղոն՝ որ կոչի Դու: Եւ ելեալ անտի

սակաւ արամբք յանգէտս ի վերայ գահին որ հայի ի Կարին, ետես զքաղաքն վառեալ ամենայն պատրաստութեամբ, և նայեցեալ յերկար ժամս՝ դարձաւ անդրէն: Իսկ արքն Մանակերտոյ անկասկած ի դուրս ելեալ ի քաղաքէն՝ պատրաստեցին առատապէս դարմանս մարդոյ և անասնոյ, քանզի ժամանակն հնձոց իսկ էր: Եւ մինչ Սուլտանն զայսու զայնու եղեալ դարձաւ անդրէն, նոքա յանոգս եղեալ էին. և ապա եկեալ նորա վառեալ սրտմտութեամբ, դնէ մարտ պատերազմի ընդ քաղաքին:

... Արդ ամսականօք ատուրքք եկաց ի վերայ քաղաքին, առ մի մի օր երկիցս անգամ դնէր մարտ պատերազմի ընդ քաղաքին, մի ի լուսանալ ատուրն և մի ընդ երեկն: ... Արդ մինչդեռ քաղաքն յայս տարակուսի և ի վտանգի կայր, արկանէր խորհուրդս բարուք ի սիրտ իշխանի միոջ, որ էր յոյժ ի մտերմաց Սուլտանայ, որ զառ ի նմանէ խորհեալսն ծանուցանէր քաղաքին՝ կամ բանի կամ գրով: Բազում անգամ գրեալ ի քարտիզի⁵ ի սլաք նետին կապէր, և պատերազմի օրինակաւ մերձեալ ի պարիսպն՝ զնետն ի քաղաքն ընկեցնոյր. և այնու զամենայն կռուոյ օրինակսն ծանուցանէր նոցա, թէ առ վաղիւն այսպէս և ըստ այսմ ձևոյ է կռուոյն օրինակն և եթէ յայս նիշ տեղոջ ի գիշերին կամին ի ներքոյ պարսպին զերկիր փորել և մտանել ի ներքս. բայց դուք պի՛նդ և ամուր կացէք, և ի տեղեացն վերայ զգուշացարո՛ւք:

... Արդ յոր կողմ և նոքա ի պատերազմ կացին թէ ի գիշերի և թէ ի տուրնջեան, սոքա վառեալք և պատրաստ անդր գտանէին: Յետ այսորիկ մեքենայս կանգնեալ, այնու պատերազմէին: Իսկ երէց ոմն ի մերոցս հնագոյն ունելով զաւուրս, որ յոյժ տեղեակ էր արուեստին, և սա իւր կանգնեալ փիլիկուանն. և լինէր յորժամ նոքա քար եղեալ ի պարսատիկս մեքենային և ձգէին ի քաղաքն, երէցն զիւր քարն դէպ ուղիղ նոցա քարին արձակէր, որպէս զի դիպեալ քար երիցուն ի քար անօրինացն, ի վերայ իւրեանց ընկեցնոյր: Չայս արարեալ անօրինացն եօթն անգամ, ոչ ինչ կարացին վճարել. քանզի զօրացաւ քարն երիցուն ի վերայ քարի նոցա:

Ապա ա՛յլ պատերազմական գործի պատրաստեալ, զոր ինքեանք բաբան կոչէին, որ յոյժ ահագին էր զոր ասէին, թէ չորս⁶ հարիւր սպասաւորք էին նորա, որք զպարանսն քարշէին, և վաթսուն լիտր քար եղեալ ի պարսատիկսն՝ ի քաղաքն ձգէին. և առաջի նորա պարիսպ կանգնեցին ի բամբակի բեռանց և յայլ բազում կարասոյ, զի մի՛ քար երիցուն հասցէ ի նա: Եւ իբրև զայս այսպէս յարդարեցին, արձակեցին քար մի, որ դիպեալ ի պարիսպն ուժգնակի, փլոյց և խռռեաց զնա. զոր տեսեալ քաղաքին՝ յոյժ զորդի հարան, և առ աստուած աղաղակէին մեծաւ հառաչմամբ, զալ յօգնականութիւն. իսկ անօրինացն լինէր մեծ ուրախութիւն: Իսկ ի զալ երկրորդ ատուրն Ռոտիլմեզ՝ որ զօրուն իշխանն էր, առեալ զօրս իւր եկեալ մարտ եղեալ կռուէր ընդ մերսն,

քանզի այր քաջ էր. եկեալ խռոին կամէր հզօրապէս ի ներքս մտանել, և յանկարծակի զհարովին երթեալ⁷ անկաւ: Իսկ որ ի վերայ պարսպին էին, ձգեալ զճանկ երկաթի՝ կալան գնա և քարշեալ ձգեցին ի ներքոյ պարսպին. և զօրացն տեսեալ՝ դարձան լի տրտմութեամբ ի բանակն. իսկ քաղաքին լինէր ուրախութիւն ոչ սակաւ:

Յայնժամ մի ոմն զօրաւոր ի զօրացն Հռոմոնց պատրաստեալ հուր նաւթի և ծծմբով, արկեալ յաման ապակեղէն, և նստեալ ի վերայ ազնիւ երիվարի, քաջասիրտ և արի գոլով, վահանաւ միայն զթիկունս ամրացուցեալ, և ելեալ ընդ դուռն քաղաքին՝ մտանէ ի բանակն այլազգեացն, Մանտատօր ձայնելով զինքն՝ այսինքն թղթաբեր, և երթեալ մինչև ի բաբանն՝ շուրջ անցեալ զնովաւ, և յանկարծակի ի վեր առեալ զշիշն եհեղ ի վերայ բաբանացն, և նոյնժամայն բորբոքեալ հրոյն՝ բոց ծիրանի ի դուրս ելանէր, և ինքն դառնայր փութապէս: Չոր տեսեալ անօրինացն, ի հիացման եղեալ, հեծեալ յերիվարսն, զհետ մտեալ և ոչ կարացին հասանել: Եւ նորա եկեալ խաղաղութեամբ եմուտ ի քաղաքն, օգնականութեամբ աստուծոյ ոչ ինչ ունելով վերս յանձին: Իսկ Սուլտանն իբրև ետես զեղեալսն, ցասմամբ մեծաւ հրամայեաց զպահապանսն սրակոտոր առնել...:

Իսկ Վասիլն՝ որ քաղաքին իշխանն էր, հրամայեաց ռամկին ի վերայ պարսպին մեծածայն աղաղակաւ անարգել և թշնամանել զՄուլտանն, որ յետ երկուց ատուրց շարժեալ բանակաւ գնաց ի տեղոյն և երթեալ՝ հանդիպի քաղաքի միոջ, որ կոչի Արծկէ, որ է ի մէջ ծովուն Բզնունեաց, և ունի մօտ յինքն բերդ ամուր և անառիկ. և քաղաքացիքն յայս ապաստան եղեալ ի ծովն և յամբոցն, յանհոգս կային: Իսկ արիւնարբու գագանն ծանծաղ տեղի գտեալ ի ծովուն, եթէ առաջնորդութեամբ ուրուք, և եթէ իւրեանց հնարագիտութեամբն, մտին ի քաղաքն. և սուր ի վերայ եղեալ կոտորեցին զամենեսին. և առեալ զգերին և զկապուտ զքաղաքին, ելին ի տեղոջէն: Եւ այս սրտին դիւր եղև Սուլտանին և գնաց մեծաւ տրտմութեամբ յաշխարհն իւր. քանզի ոչ զոր ինչ կամէր՝ կարաց վճարել ինչ:

(ԺԶ)

¹ գոճ տողիս-շարադրանքս
² ունի ուղղական հողովի նշանակություն
³ գործածված է հավելաբար
⁴ սուրաբաժոյ տափ-անասուններ
⁵ արածեցնելու տափարակ տեղ
⁶ ի քարտիզի-թղթի վրա
⁷ փխ. չորք
⁷ զհարովին երթալ-սպանվել, ինքնասպան լինել

ՄԵԻԹԱՐ ԳՈՇ (12-13-ԲԴ ԴԴ.)

ԱՌԱԿՔ

1. Խոհեմ որ և ծառք

Խոհեմ որ եհարց զծառս¹, եթէ զի՞նչ են պատճառք, զի որքան բարձրանայք, այնքան արմատս ի խոր ձգէք: Եւ նոքա ասեն. Խոհական գոլով զիա՞րդ ոչ զիտես՝ եթէ ոչ կարէաք² այսքան ոստս բառնալ և ընդդիմանալ հողմոց բռնութեան, եթէ ոչ զարմատս ի խոր և բազմոստս առնէաք². տեսանես զեղբարսն մեր զհաճարի և զփիճի³, զի ոչ են բազմոստք և ոչ ընդդիմանալ հողմոց կարեն, ի խոր արմատս ոչ ունելով:

(ԻԲ)

¹ հարցանել բայը սովորաբար պահանջում է g նախդրով հայցական խնդիր
² գործածված է ստորադասական
ապառնու իմաստով
³ սոճի ծառն է

2. Մկունք և կարու

Մկունք համանգամայն¹ հրեշտակս առաքեն առ կատուն և ասեն. Չի՞նչ քեզ մեղանչենք, որ այդքան զմեզ հալածես, զի՞նչ քո ուտենք: Ասէ ցնոսա. Ո՞չ զիտէք եթէ յայն սակս զմեզ մարդիկ դարմանեն, զի զամբարս նոցա մեք պահեսցուք. արդ եթէ դուք այնմ ոչ մեղիցէք, համարձակ շրջեսցիք, ոչինչ ձեզ վնասեցից, և զայս երդմամբ հաստատեցից: Եւ ձեռն եղեալ ի գլուխ երդուաւ: Եւ մկանցն համարձակեալ կամեցան զանկեալ հատան առնուլ, և յարուցեալ կատուն զբազումս սատակեաց: Եւ ասեն. Ո՞չ ապաքէն երդուար անկեալ հատի ոչ առնուլ վրէժ: Եւ նա ասէ. Ոչ երդուայ, այլ ըստ սովորութեան զգլխով զձեռս արկի:

(ՂԱ)

¹ համանգամայն-միասին. բոլոր

3. Բու և արծիւ

Բու հրեշտակ¹ առաքեաց առ արծիւ և խնդրեաց զդուստր նորա հարսն, ա-

սելով. Դու տուրնջեան քաջամարտիկ ես, և ես գիշերոյ, պատշաճիմք ի խնամութիւն: Եւ յետ բազում թախանձանաց յանձն առ տալ: Եւ ի լինել հարսանեացն ի տուէ՝ լոյս ոչ կարէր տեսանել փեսայն. և ծաղր առնէին բազմեալքն: Եւ իբրև եղև գիշեր՝ և ոչ հարսն ետես լոյս. յաճախեաց և անդ այսպանումն: Եւ վասն այսորիկ փութով լուծաւ հարսանիքն:

(ՃԻԳ)

¹ այստեղ՝ խնամախոս

² ի տուէ-ցերեկը

4. Արզ և Տրգիւն

Չբոյն մրջեան արջ փորէր, և լեզուաւ ժողովէր և ուտէր: Եւ հնարի մրջին սատակել գնաւ. երթեալ առ պիծակ և գոռեխ և մծեխ և շանաճանճ և բրէտ, և առ նմանս սոցին, և աղաչէ օգնել իբր ազգայինք: Յաւակցեն՝ հարկանեն զաչս և զլսելիս արջուն, և հարկանէ զլուխ զքարի, և նեխի և որդունք և ս ծնանին. և ի սաստկութենէ ցաւոց՝ զբերան բացեալ գոչէր. և նոցա մտեալ յորովայնն՝ խոցոտեն զաղիսն. և նեղեալ դիմէ ի հոսանս ջրոյ, և անչափ ի ներքս մտեալ՝ հեղձանի:

(ՃԾԴ)

5. Թռչուն թագաւորին Յնդկաց և ձի արքային Յունաց

Թագաւորին Հնդկաց էր թռչուն ինչ. որ արկանէր մարգարիտ և ականա իբրև զձու. և լուեալ արքային Յունաց՝ այնմ ցանկացաւ, և առաքեաց հրեշտակ և խնդրեաց. և նա ետ: Սակայն և նա հայցեաց զձի նորա, որ երագութեամբ անցանէր ընդ թռչունս: Եւ թէպէտ ծանր էին միմեանց խնդիրքն, անյապաղ երկաքանչիւրքն կատարէին: Եւ ի գալ հատուն ի Յոյնս՝ ըստ օրինակի այլոց ածէ ձու, և ձիոյն երթեալ ի Հնդկիս՝ կաղայր, և ոչ բնաւ արշաւէր: Դարձուցանէ թագաւորն հնդկաց զերիվարն, մեղադրելով յոյժ. և նա նմանապէս՝ ամբաստանելով զթռչունն: Եւ իւրաքանչիւրքն յինքեանցն երթեալ տեղիս՝ լինէին ըստ առաջին օրինակին:

(ՃԿԱ)

ԲԱՌԱՐԱՆ

Ա

Ազանել(իմ), ազայ, ազի՛ր, ազեալ կամ ազուցեալ. հ. հազնել, հազնվել:

Ազանել(իմ), ազայ, ազի՛ր, ազուցեալ. չ. իջևանել, գիշերել. մնալ մի տեղ մինչև առավոտ:

Ազազել(իմ), եցայ. չ. չորանալ:

Ազապ, ի, աց, ա. 1. ազատ, անկախ. 2. արձակ, բաց. 3. գ. ազնվական, իշխան:

Ազապակոյր. գ. ազատների՝ ազնվականների խումբ:

Ազգ, ի, աց. գ. 1. տեսակ. 2. սերունդ. 3. տոհմ, ցեղ. 4. ժողովուրդ: **Ազգի ազգի**. տեսակ-տեսակ, զանազան:

Ազդ. գ. զգացում, զգալը, իմացում: **Ազդ առնել**. իմաց տալ, տեղեկացնել, հաղորդել: **Ազդ լինել**(իմ) իմաց տրվել:

Ազդել, եցի. ն. իմաց տալ, տեղեկացնել:

Ազն, զին, զինք, զանց. գ. ազգ, ցեղ, ժողովուրդ:

Ախարասեր, սիրի, բաց. ա. ցանկասեր, հեշտասեր:

Ածել, ածի, ա՛ծ. ն. 1. բերել. 2. տեղից տեղ տանել. 3. խփել, հարվածել. 4. շարժել. 5. լցնել:

Ածու. ոյ, ոց. գ. 1. մարգ. 2. փխբ. ազգ, ժողովուրդ:

Ական. գ. փոս, անցք, ծակ: **Ական հարանել**. փոս՝ անցք բանալ:

Ակասարան, յակաստանի. գ. հաստատուն՝ ապահով վիճակ:

Ակն¹, ական. գ. 1. աչք. 2. հույս, ակնկալություն: **Ակն ունել**(իմ). սպասել, ակնկալել:

Ակն², ական, ականք. գ. թանկագին քար, գոհար:

Ակն³, ական, ակունք. գ. ակունք:

Ակնակառոյց լինել(իմ). աչքը վրան մնալ, աչքը մի բանի վրա գցել:

Ահ, ի, ից. գ. վախ, երկյուղ, սարսափ: **Ահ արկանել**, վախեցնել, սարսափեցնել: **Զահի հարկանել**(իմ). վախենալ:

Ահադիկ
Ահաանիկ
Ահաասիկ } մ. ահա:

Ահեակ, եկի. ա. գ. 1. ձախ, ձախ կողմը. 2. ձախիմը:

Աղաբողոն, ի աւ. գ. փիլոն, հոգևորականի վերարկու:

Աղագ, ի, աւ. գ. պատճառ:

Աղագաւ. նխ. պատճառով, համար:

Աղանդեր. գ. մրգեղեն կամ քաղցրեղեն, որ տրվում է սովորաբար ճաշից հետո:

Աղէ՛. ձ. հապա՛, դե՛:

Աղիս, ի, ից. գ. 1. կողպեք. 2. բազմություն, ժողովուրդ, 3. ընդհանրապես՝ գույք, ունեցած չունեցածը:

Աղիսել, եցի. ն. կողպել, փակել:

Աղփաբերք կամ **Ալփաբերք**, տաց. գ. այբուբեն, տառեր:

Ամ, ի, աց. գ. 1. տարի, 2. տարիք, հասակ. 3. թվական: **Ամ ըստ ամէ, ամի ամի, ամ յամէ**. տարեցտարի:

Ամալ, ացի. ն. լցնել, թափել, դատարկել: **Ամարայնի**, նոյ կամ նոյ. մ. ամառ ժամանակ, ամառը. գ. ամառ:

Ամարանի կամ **Ամարանից**. մ. ամառը, ամառվանից:

Ամարասարան, ի. գ. ամառանոց:

Ամբառնալ, բարձի, բարձ. ն. բարձրացնել:

Ամբառնալ, բարձայ, ձի՛ր. չ. 1. վեր ելնել. 2. բարձրանալ, մեծանալ. 3. հպարտանալ:

Ամբար, ոյ, ոց. գ. 1. շտեմարան, մթերանոց, ամբար. 2. ամբարած մթերք, մթերապաշար:

Ամբարիչ կամ **Ամպարիչ**, բշտի, բըշտաց. ա. անօրեն, անիրավ, չար:

Ամբարձուղէշ. ա. բարձր ճյուղերով, ճյուղերը բարձր:

Ամբոխ, ի կամ ոյ, ից. գ. 1. բագմոթյուն, ամբոխ. 2. իրարանցում, շփոթություն, աղմուկ-աղաղակ:

Ամենեքեան, եցունց, **Ամենեքին**, եցուն. դ. 1. ամենքը, ամենքն էլ. 2. բոլոր, ամեն, բովանդակ:

Ամիճ, ամճոյ, ոց. գ. ընտիր խորտիկ՝ պատրաստված որսի մսից:

Ամու, լոյ կամ լի, մանավանդ հոգնակի թվով՝ **ամուրք**, լաց կամ լից կամ լեաց. ա. գ. լծակից, լուծ քաշող գույգ եզ. նմանությամբ՝ գործակից երկու ընկեր:

Ամուր, ամրի, րաց կամ բոյ, ոց. գ. ամբոց, բերդ:

Այգ, ոյ կամ ու, ուէ, ուց. գ. 1. առավոտ, վաղ առավոտ. 2. լուսաբաց: **Անդայգն**. մ. վաղ առավոտյան, լուսադեմին:

Այգորդ, ի, աց. գ. այգեպան, այգեգործ: **Այդր**. 1. մ. այդտեղ, դեպի այդտեղ. 2. դ. այդ:

Այդրեն. մ. այդտեղ, նորից դեպի այդտեղ:

Այլազգ. ա. մ. ուրիշ տեսակ, այլ կերպ:

Այլ ուրեք. մ. ուրիշ տեղ:

Այնու գի. շ. որովհետև:

Այպանել, եցի. ն. ծաղրել, անարգել, արհամարհել:

Այան առնել տե՛ս **Այպանել**:

Այս, ոյ կամ ու, ոց. գ. 1. քամի, հողմ. 2. չար ոգի, դև:

Այսր. 1. մ. այստեղ. 2. դ. այս: **Այսրանդր**. այս ու այն կողմ:

Այսրեն. մ. 1. նորից այստեղ. 2. նորից. 3. այստեղ:

Այտի կամ **Այդի**. 1. մ. այդ տեղից. 2. դ. այդ:

Այսնուկ, տեայ, տի՛ր, տուցեալ. չ. ուռչել: **Այր**, առն, յառնէ, արամբ ... գ. 1. տղա-

մարդ. 2. ամուսին: **Առն** կամ **արանց լինել**(իմ). ամուսնանալ:

Այրևծի, առն և ձիոյ. գ. այրուծի, հեծելագոր:

Անագան, ի. ա. մ. 1. ուշ, ուշ մնացող, ետին. 2. ուշ ժամանակ, երեկոյան դեմ: **Անագան ուրեմն**. մ. ուշ, վերջում:

Անառ. ա. անառիկ, անմատչելի:

Անարի, բոյ, րեաց. ա. 1. վախկոտ. 2. վիթխարի, 3. ոչ պարսիկ:

Անգիւր. ա. 1. անգտանելի. 2. անօգուտ, փուչ:

Անգոսնել, եցի. ն. անարգել, արհամարհել, պախարակել:

Անդ. մ. 1. այնտեղ. 2. այն ժամանակ. 3. դ. այն:

Անդաճել, եցի. ն. մտածել, քննել, խորհել:

Անդարման, ա. անխնամ՝ անմշակ թողած:

Անդեայ, դեյ, ոց կամ ից, անդեայք, եայց. գ. նախիր (եզնեբի, կովերի):

Անդէն. մ. 1. այնտեղ, նույն տեղը. 2. անմիջապես, իսկույն, տեղն ու տեղը:

Անդուսր. մ. 1. այնտեղից. 2. նրանից հետո:

Անդպրին. մ. 1. հենց սկզբից. 2. վերըստին, նորից. 3. իսկույն:

Անդր. 1. մ. այնտեղ, դեպի այնտեղ. 2. դ. այն:

Անդրեն. մ. 1. նորից, դարձյալ. 2. ետ. 3. նույն տեղը. 4. նույն ժամանակ:

Անխալամ. ա. զանգ չունեցող, առանց զանգի:

Անխայել, եցի. ն. չ. 1. խղճալ, խնայել, գթալ. 2. չխնայել. 3. զգուշացնել:

Անկանել(իմ), անկայ, անկի՛ր. չ. 1. ընկնել. 2. վիճակվել. 3. մեռնել. 4. հարձակվել, վրա հասնել. 5. վրան դրվել:

Անհեղեղ. ա. խաշոր:

Անհնարին. ա. մ. 1. անկարելի, անհնար. 2. սաստիկ, խիստ. 3. չափազանց, խիստ շատ:

Անձկալի, լոյ, լեաց. ա. սիրելի, բաղձալի, կարոտով փափագելի:

Անձն, ձին, ինք, անց. գ. 1. անձ. 2. ինքը:

Յանձին ունել(իմ). հանձն առնել, ընդունել:

Անձնատր, ի, աց. ա. 1. մարմին ունեցող, որպես անհատ գոյություն ունեցող. 2. շունչ ունեցող, կենդանի:

Անձնեայ. ա. խաշոր, թիկնեղ:

Անուշարար, ի, աց. ա. անուշեղեն՝ քաղցրավենիք պատրաստող:

Անուր, ոյ, ոց. գ. փայտե կամ մետաղե օղակ:

Անսալ, ացի. սա՛. չ. լսել, հնազանդվել, ականջ դնել:

Անսասրել, եցի. չ. չլսել, չհնազանդվել, ըմբոստանալ, հակառակվել:

Անսրի. 1. մ. այնտեղից. 2. դ. այն:

Անցանել, անցի, անց. չ. 1. անցնել. 2. գերազանցել. 3. զանց առնել. 4. պակասել, սպառվել. 5. մարել, հանգչել. 6. մոռացվել:

Անցաոր, ի, աց. գ. անցորդ, ուղևոր, ճամփորդ:

Անքթթելի. ա. մ. առանց աչքը թարթելու, աչքը հառած:

Աշխար առնել. ն. նեղություն պատճառել, չարչարել, անհանգստացնել, հոգնեցնել:

Աշխարություն. գ. 1. նեղություն, չարչարանք. 2. աշխատանք:

Աշխար. գ. ողբ, լաց ու կոծ, վայնասուն: **Աշխար դնել**, ողբալ, սգալ, լաց ու կոծ անել:

Աշխարահեծ. ա. լաց ու կոծով լի:

Աշխարան, ի. գ. սուգի՝ լաց ու կոծի տեղ:

Աշխարել, եցի. ն. 1. սգալ, ողբալ, լաց ու կոծ անել. 2. գղջալ:

Աշխարհառոգ. ա. երկրի կամ ազգի գործերը հոգացող:

Աշրանակ, ի, աց. գ. մոմակալ, ճրագակալ:

Աշրեայ կամ **Աշրէ**, տէի, ից. գ. տեգ, նիզակ:

Ապաժաման. ա. մ. անժամանակ, տարաժամ:

Ապականել, եցի. ն. 1. ավերել, քանդել, կործանել. 2. պղծել:

Ապարդանել, եցի. չ. գոռզանալ, մեծամտել, հոխորտալ:

Ապաքէն. մ. իհարկե, անշուշտ, արդարև:

Ապոռ, ապրի, ից. գ. կողոպուտ, ավար: **Ապրել**(իմ), եցայ, չ. փրկվել, ազատվել:

Առ. նխ., տես «Լեռակ.» § 193:

Առ, ի, ից. գ. ավար, կողոպուտ:

Առագասար, ի, ից կամ աց. գ. նորահարսի և փեսայի համար առանձնացված ներքնասենյակ-հարսնարան:

Առաթուր կամ **առ աթուր**. մ. սոսնատակ տալով, կոխկրտելով:

Առաջեալ կամ **զառաջեալ**. մ. առջև, դիմացը:

Առաջի. նխ. մ. 1. առջևը, դիմացը. 2. առջև ից: **Առաջի արկանել**, ձեռնարկել, գործադրել, նպատակ դնել: **Առաջի դնել**. 1. մտադրվել, հանձն առնել, աչքի առաջ ունենալ. 2. առաջը դնել, ներկայացնել: **Առաջի կալ**, դեմն առնել, դիմադրել:

Առասան, ի, աց կամ ից. գ. պարան:

Առժամայն. մ. իսկույն, նույն պահին:

Առնել, արարի, արա՛. ն. 1. անել. 2. ստեղծել. 3. փոխել, դարձնել. 4. ունենալ:

Առնուկ, առի, առ՛. ն. 1. առնել, բռնել. 2. գրավել, տիրել. 3. հափշտակել. 4. վերցնել, ստանալ: **Խոսմբ առնուկ**, հավաքվել:

Առումէջք. գ. ջրանցք:

Ասպազէն, ի, աց. գ. ձիու կամ ձիավորի զենք ու զարդ:

Ասպասարան, ի, աց. գ. ձիու ախոռ:

Ասպարակ, ի, աց. գ. 1. կողոպուտի նպատակով արշավանք կատարող ձիավոր խումբ. 2. ձիավոր խմբով արշավանք՝ կողոպուտի համար: **Ասպարակ սփռել՝ դնել՝ առնել**, ասպատակել:

Ասպար, ի կամ ոյ, աց. գ. վահան:

Ասպարեզ կամ **Ասպարէս**, րիզի, րիսի, սաց կամ սից. գ. 1. ձիարշավարան. 2. հին հունական երկայնություն չափ (=184,97 մ.). 3. քաղ տարածություն, հրապարակ:

Ասպեդ, ի, ալ կամ իւ, աց. գ. ավազ իշխան:

Ասպնջական, ի, աց. կամ ից. ա. հյուր-
ընկալ:

Ասար. 1. մ. այստեղ. 2. դ. այս:

Ասարանօր, 1. մ. այստեղ. 2. ա. այստե-
ղի, այժմյան:

Ասարեղազէր, գիտի, տաց. գ. աստղա-
գուշակ, աստղահմա, մոգ:

Ասարէն. մ. 1. այստեղ. 2. այստեղից. 3.
այժմվանից:

Ասարի. 1. մ. այստեղից. 2. դ. այս: **Ասարի
և անարի**. այս ու այն կողմից:

Ասարուսար. մ. 1. այստեղից, այս կող-
մից. 2. այստեղ:

Ասր, սրոյ կամ բու, ասու, ասրով կամ
ասերբ, ասուտց կամ ասրոց. գ. ոչ-
խարի բուրդ:

Ասրեան, ատենի, ից. գ. 1. դատարան.
2. դատողների կազմը, դատավոր-
ներ:

Ասրուշան, ի, աց. գ. կրակի պաշտա-
մունքի տեղ. կրակատուն, մեհյան:

Արալէզ կամ **առլէզ**, **յարալէզ**. գ. ա-
ռասպելական կենդանի, որը լիզե-
լով պատերազմում ընկած քաջերի
վերքերը՝ կենդանացնում էր մե-
ռածներին:

Արար, ոյ, ոց. գ. 1. ունեցվածք, ստաց-
վածք. 2. շինվածք, շէնք. 3. բերք,
արդյունք:

Արգելույ, գելի, գել. ն. 1. արգելել. 2.
փակել, բանտարկել. 3. պահել:

Արդ, ու, ուց. գ. ձև, կերպարանք:

Արդ¹. մ. այժմ:

Արդ². շ. ուրեմն, այսպիսով:

Արիք, եաց. գ. պարսիկներ:

Արծուի, ծուոյ, ծուեաց. կամ **Արծի**,
ծուի. գ. արծիվ:

Արկանել, արկի, արկ. ն. 1. նետել, գցել.
գնել. 2. տարածել, սփռել. 3. լցնել.
4. հագնել, հագցնել. 5. վրան գցել.
6. մտցնել: **Արկանել ի միպս**. 1.
մտադրվել. 2. մտաբերել, հիշել: **Ի
գործ արկանել, ի կիր արկանել**.
գործադրել, կիրառել: **Ձեռն արկա-
նել**. ձեռնարկել: **Յինքն արկանել**.
իր կողմը ձգել:

Արձակել, եցի. ն. 1. ուղարկել. 2. ազա-

տել. 3. գցել. 4. դուրս հանել, բող-
բոջել:

Արմանալ, ացայ. չ. զարմանալ:

Արմապաքի. մ. արմատներով հան-
դերձ, արմատով միասին:

Արուեսար, ի, ից կամ աց. գ. 1. արհեստ.
2. հնարամտություն, ճարտարու-
թյուն:

Արուեսարական, ի, աց. ա. գ. 1. երաժըշ-
տական գործիք, նվագարան. 2. ե-
րաժիշտ, նվագող:

Արուեսարկից, կցի, ցաց. ա. 1. արհես-
տակից. 2. փխբ. կրոնակից:

Արջառ, ոյ, ոց կամ աց. գ. աչառ:

Արդաշէլ. ա. շիկացած, կաս-կարմիր:

Արդաքոյ. նխ. մ. 1. դուրս, դուրսը, դըր-
սից. 2. գատ. 3. հեռու:

Արդաքս. մ. դուրս, դուրսը:

Արդօսր. գ. արցունք:

Աագանի, նույ, նեա կամ նով, նեօք.
գ. ավագներ, իշխաններ:

Աադիկ }
Աասիկ } մ. ահա:
Աանիկ }

Բ

Բագին, գնի, նաց կամ նից, նեաց. գ. 1.
կուռքի սեղան. 2. գոհարան, գոհա-
սեղան, 3. կուռքերի տաճար, կռա-
տուն, մեհյան:

Բագմական, ի, աց. գ. 1. սեղան նստող,
սեղանի հրավիրված, հյուր. 2. սե-
ղան. 3. նստարան, բազմոց. 4.
խրախճանք, կոչումը: **Բագմական
առնել՝ արկանել**. բազմելու տեղ
պատրաստել, սեղան գցել:

Բաժ, ի, ից. գ. բաժին, տուրք, հարկ:

Բան, ի, ից. գ. 1. խոսք, 2. պատգամ,
պատվեր. 3. բանականություն,
խելք, միտք. 4. բան, գործ, իր. 5. լե-
զու:

Բանատր, ի, աց. ա. գ. 1. բանականու-
թյուն ունեցող, բանական. 2. լեզու
ունեցող, խոսող. 3. խելացի, գի-
տուն:

Բաջողանք, նաց. գ. դատարկաբա-

նություն, ցնդաբանություն, շա-
ղակրատանք, ավեղցփեղ խոսքեր:

Բառնալ, բարձի, բարձ. ն. 1. վերցնել,
տանել. 2. շալակել. 3. վեր բարձ-
րացնել. 4. մեջտեղից վերացնել. 5.
բարձել, վրան դնել. 6. համբերել,
տանել, դիմանալ. 7. փխբ. պարզել,
բացահայտել:

Բասիլիսկոս. գ. օձի մի տեսակ. արքա-
յօժ:

Բասպեռն, ռան, ռուք. գ. փափուկ
բազմոց, գահավորակ:

Բարակ. գ. որսի շուն:

Բարապան, ի, աց, գ. դռնապան:

Բարբառ, ոյ, ոց. գ. 1. մարդու ձայն,
խոսք. 2. լեզու, բարբառ. 3. անորոշ
ձայն, աղաղակ:

Բարբառել(իմ), եցայ. չ. 1. ձայն արձա-
կել. 2. գովերգել, երգել. 3. խոսել:

Բարիոք. ա. մ. լավ, բարի. լավ կերպով:

Բարձ, ի, ից. գ. 1. բարձ. 2. գահ, բարձր
նստարան. 3. փխբ. պատիվ. աս-
տիճան:

Բարձրագաիք, ից. գ. բարձր գահ,
բարձր աթոռ:

Բարսմունք, մանց. գ. ծառի բարակ
ճյուղերի խուրձ, որ քուրմերը բըռ-
նում էին ձեռներին՝ գոհ անելու ժա-
մանակ:

Բարք, բուց, բուք. գ. 1. բնավորություն.
2. սովորություն. 3. կարծիք,
սկզբունք. 4. եղանակ, կերպ:

Բաց, ա, օք. ա. բաց: **Ի բացի**. մ. բաց
տեղ, դուրս տեղ:

Բաց ի. նխ. գատ, ուրիշ, բացի, առանց:
Բացականել. ի աց. ա. հեռավոր, հեռուն
գտնվող:

Բացաբրել, եցի. ն. արձակել, գցել, նե-
տել:

Բեկանել, բեկի, բեկ. ն. 1. մաս-մաս ա-
նել, կտրտել. 2. կտրել, փշրել. 3.
պատռել, բզկտել. 4. ուժը կտրել,
տկարացնել. 5. վայսեցնել:

Բերդեան. գ. 1. բերդեր. 2. բերդապահ-
ներ:

Բևեռ, ի, աց. գ. 1. գամ, մեխ. 2. ա-
ռանցք. 3. կենտրոն:

Բիժ, բժոյ. գ. աչքի կեղտ, ճպուռ:

Բնակ, ի, աց. գ. ա. 1. բուն բնակիչ, տե-
ղացի. 2. բուն տեղը. 3. բուն, բնիկ,
հարազատ:

Բնալ, ի, ից. 1. ա. բոլոր, ամեն. 2. մ. բո-
լորովին, ամենևին, իսպառ: **Ընդ
բնալ**. 1. ամեն տեղ, ամենուրեք. բո-
լորը միասին, ընդամենը:

Բոկ. ա. մ. բոբիկ, ոտաբոբիկ, բոբիկ
ոտքով:

Բորբորիպ, **Բորբորիբուն**. ա. վավա-
շուտ, ցանկասեր, անառակ, պիղծ:

Բուռն, բռին կամ բուռն, բուռնք, բուռնք.
գ. 1. բուռ, ձեռք. 2. կարողություն,
իշխանություն: **Բուռն հարկանել**.
1. ձեռք զարկել, ձեռնարկել, սկսել. 2.
բռնել: **Ի բուռն արկանել, զբուռնք
աժել**. բռնել, ձեռքը գցել:

Բունանալ, ացայ. չ. բռնությամբ՝ ուժով
տիրել, իր ձեռքի տակ պահել:

Բրել, եցի. ն. փորել, քանդել:

Բրէր, բրիտի, տաց. գ. իշամեղու:

Գ

Գահ, ու կամ ոյ, ուց, նակ ՝ ի, ից. գ. 1.
գահ. 2. պատիվ, իշխանություն. 3.
բարձր տեղ, դարավանդ:

Գահոյք, ոյից. գ. 1. արքայական գահ.
2. բախտ, անկողին, մահճակալ. 3.
պատգարակ:

Գաղպ. մ. գաղտնի, գաղտնաբար:

Գաղպագողօնք. գ. ծածուկ հնարք,
գողություն:

Գայռ, ի, ից. գ. ցեխ, տիղմ:

Գան, ի, ից. գ. ծեծ: **Գան հարկանել**.
ծեծել, ձաղկել, տանջել:

Գանձ, ու, ուց. ն ի, ից. գ. 1. գանձ. 2.
գանձարան. 3. հարկ:

Գատառապեր, ի, աց. գ. գավառի, գյու-
ղի՝ տան վերակացու, գործակալ,
տնտես:

Գելույ, գելի, գել. ն. ոլորել, տրորել,
սեղմել, ճնշել, ճզմել:

Գեհեն, ի կամ ոյ, իւ. գ. դժոխք:

Գեղ, ոյ, ոց. գ. 1. գեղեցկություն. 2. ե-
րես, դեմք:

Գեղապարշաճ. ա. վայելչատես, վայելչագեղ:

Գեղարառու. գ. գետից բաժանված առու:

Գեղարվեժ կամ **գեղարվեժու առնել, լինել**(իմ). գետի մեջ ընկղմել, ընկղմվել:

Գեղարսբեկ. ա. մերկ գետնի վրա պառկող:

Գեղրնախշպի. ա. տես **Գեղրնաբեկ:**

Գէշ, գիշոյ, ոց կամ ուց, և ի. գ. մարդու կամ կենդանու դիակ, լեշ:

Գէշ գէշ, գէշագէշ. մ. պատառ-պատառ, կտոր-կտոր, բզիկ-բզիկ:

Գէջ, գիջոյ, ոց կամ ի, ագ. գ. 1. թագ, խոնավ. 2. ցանկասեր, անառակ:

Գժղմնել(իմ), եցայ կամ **Գժղմնել**(իմ), նեցայ. չ. խոժոռվել:

Գղզիկ կամ **Գղզուկ,** գկոյ. գ. նետի կոթը:

Գո՛գ, գոգջիր, գոգջիք, ցես, ցուք, ցեն. (պակասավոր բայ). ասա՛, ասես: **Գոգցես թէ՛** կամ **իմն**, կարծես թե, համարյա թե:

Գոլ, գոմ, գոս, գոյ... (պակասավոր բայ). լինել, գոյություն ունենալ:

Գոռեխ, ի կամ ոյ. գ. վայրի ճանճ բռնի նման, ճիւղաբոս:

Գոռութիւն, գ. ոխ, թշնամություն:

Գործակալութիւն. գ. գործակալ լինելը, վերակացություն:

Գործառնութիւն, գ. գործի ձեռնարկելը, ձեռնարկում:

Գործել, եցի. ն. 1. բանել, աշխատել. 2. անել. 3. ներգործել, ազդել:

Գործօն, ի, ագ կամ ից. ա. բանող, աշխատող, գործունյա:

Գոսք, գբոյ. ոց կամ գբի. գ. փոս, հոր, վիհ, խորխորատ:

Գումարել, եցի. ն. հավաքել, ժողովել:

Գունակ, ի, ագ. գ. 1. գույն. 2. կերպ, տեսակ, եղանակ. 3. նխ. նման, պես, ձևով: **Գունակ-գունակ,** գույնը-գույն, տեսակ-տեսակ, պես-պես:

Գրգել, եցի. ն. փափուկ պահել, փայփայանալով մեծացնել, փայփայել:

Գրիչ, ի, ագ. գ. գրագիր:

Դ

Դադարել, եցի, **Դադարիմ**, եցայ. չ. 1. հանգիստ առնել, հանգստանալ, դադարել, մնալ. 2. խաղաղվել. 3. իջևանել, օթևանել:

Դահեկան, ի, ագ. գ. հին հռոմեական արծաթ կամ ոսկի դրամ. դենար:

Դանդաշել, եցի. չ. 1. երերալ, տատանվել. 2. մտքով տատանվել, ցնդաբանել:

Դաշն, շին, շինք, շանց. գ. ուխտ, պայման, դաշինք:

Դառնակոռոչ. ա. դառն՝ ողբալի աղաղակ՝ ճիչ:

Դասարակերպ, ի, ագ կամ ից. գ. 1. մեկի կողմից հիմնված ավան, գյուղ, ագարակ, կավվածք, քաղաք. 2. ձեռքի աշխատանք, ձեռակերտ:

Դասարպան, ի, ագ. գ. թրի կոթ, երախակալ:

Դասարանակ, ի, ագ. գ. ձեռքի սրբիչ, անձեռոցիկ:

Դարել, եցի. **Դարիմ**, եցայ. ն. 1. դատաստան անել, վճիռ արձակել. 2. դատապարտել. 3. պատժել:

Դար, ի, ից. գ. 1. բարձր տեղ, բարձրավանդակ. 2. գետի ափ: **Դարի դարի.** մինչև ափերը լցված, լեփ-լեցուն (գետի հոսելը):

Դարաանդ. ի, ագ. գ. բարձր տեղ:

Դարձուցանել, ձուցի, ձո՛. պբ. դարձնել, փոխել:

Դեգերել(իմ), եցայ. չ. 1. մի տեղ մնալ. 2. մի բանով զբաղվել, պարսպել, ուսումնասիրել:

Դելփին, փինի կամ փնի, ագ. գ. ծովային կաթնատուն կենդանի. դելփին:

Դեղնելի, գ. դեղ, ճար:

Դեն, ի, ից. գ. կրոն, հավատք:

Դեսպան, ի, ագ. գ. լուր տանող, պատգամավոր:

Դերբուկ, բլի, կաց. ա. գ. խորդուբորդ՝ քարքարոտ տեղ:

Դեմ, դիմի, դիմա, դեմք, դիմաց, գ. 1. երես, դեմք. 2. կողմ, դիմացը, դեմը. 3. տեսք, կերպ. 4. նշանակություն:

Զղեմ ունել(իմ). դեմն առնել, դիմադրել: **Ի դիմի** կամ **զդիմի հարկանել**(իմ). ընդհարվել, զարնվել, հանդիպել:

Դէպ, դիպի, ագ. գ. 1. դիպված, դեպք, անցք. 2. առիթ: **Ի դէպ ելանել.** հարմար գալ, հաջողվել:

Դէպ, ի, ագ. գ. 1. դիտող, 2. դիտանող. 3. նպատակ: **Դէպ ունել**(իմ). ուշ դնել:

Դէպակն ունել(իմ). 1. ուշխուշով նայել. 2. սպասել. 3. զննել, հետախուզել:

Դէրակն ի վեր ունել կամ **ամբառնալ.** աչքերը՝ հայացքը վեր բարձրացնել դիտելու համար. նայել:

Դժնդակ, ի, ագ. ա. դաժան, խիստ, ծանր, անտանելի, չարաչար:

Դժնեայ, նէի, ից. ա. չար, դժնդակ:

Դի, ոյ, ոց. գ. դիակ:

Դիակապուր, պտի, տաց կամ տից. գ. դիակը կողոպտող՝ թալանող:

Դիմել, եցի. չ. դեպի առաջ գնալ, ընթանալ, հարձակվել:

Դիմեցուցանել, ցուցի, ցո՛. պբ. վազեցնել, քշել:

Դիպան. ա. հարմար, պատշաճ: **Դիպան ելանել** կամ **պարահել.** դիպչել, զարնվել, դեմ ելնել:

Դիպել(իմ), եցայ. չ. հանդիպել, պատահել:

Դիպումս, ոյ, ոց. գ. դեպք, պատահմունք:

Դիր, դրի, ից. նաև դրոյ, ոց. գ. 1. դիրք. 2. կարգ, կերպ:

Դիւան, ի, ագ. գ. պետական գրագրություններ վարելու տեղ, դիվանատուն:

Դիւթ, ի, ագ կամ ից. գ. կախարդ, փուկ, թովիչ, մոգ:

Դիւր, ի, ից. ա. 1. դյուրին, հեշտ. 2. հաճելի, ախորժելի, դուրեկան. 3. գ. անդորրություն, հանգստություն, հանգիստ:

Դիւցապաշպ, ի, ից. ա. կռապաշտ, հեթանոսական աստվածներ պաշտող:

Դիք, դից. դիօք, գ. հեթանոսական աստվածներ, չաստվածներ:

Դոյզն. ա. մ. 1. քիչ, փոքր չափով. 2. աննշան, չնչին:

Դուզնաքեայ, քէի, իւ կամ քոյ, քոյ, քէից կամ քեայց, քեօք. ա. 1. չնչին, քեթս. 2. քիչ. 3. մ. մի քիչ, փոքր չափով:

Դուռն, դրան, դրունք, դրանց. գ. 1. դուռ. 2. թագավորական պալատ, արքունիք:

Դպրութիւն. գ. 1. գրութիւն, գիր. 2. գրագիտություն. 3. գրականություն, գիրք:

Դարովել, եցի. կամ **Դարովել,** եցի. ն. պարսավել, անդիմանել, նախատել:

Դրանիկ, նկի, նկաց. գ. պալատական պաշտոնյա:

Դրդուեցուցանել, ցուցի, ցո՛. պբ. դրդեցնել, խախտել, ետ դարձնել, շուռ տալ:

Դրօշել, եցի. ն. քանդակել, տաշելով՝ քերելով կուռք շինել:

Ե

Եթէ. շ. 1. եթե. 2. թե:

Ել, ի, իւ, ելք, ելից, ելիք. գ. 1. դուրս ելնելը. 2. անցք, ճանապարհ. 3. վերջ. 4. ծագելը:

Եկ, ի, ագ. գ. եկվոր, դրսեցի, պանդուխտ, գաղթական:

Եղեռն, ռան կամ րան, եղերունք կամ եղերք. գ. չարիք, վնաս:

Եղծ. գ. 1. փչացնելը, ավերելը, ապականելը. 2. հերքելը, մերժելը:

Եղկելի, լոյ, լեաց. ա. խեղճ, թշվառ, ողորմելի:

Եղն, եղին, եղինք, եղանց. գ. եղնիկ:

Եղուկ. ձ. ավա՛ղ, վա՛ւ, ավա՛տ, վա՛խ:

Եղջիւր, ջեր, ջերք. գ. 1. կոտոշ. 2. եղջերենի ծառի պտուղը: **Եղջիւր աձել.** գոռոզանալ, հոխորտալ:

Եռալ, ացի կամ ացայ. չ. 1. եռալ. 2. վառվել, բորբոքվել. 3. վխտալ:

Երդ, ետեղ. գ. տեղ:

Երագ, ի, երագք կամ գունք. ա. մ. աքաղաղ, շուռ, սրընթաց, շուռով:

Երագագ, ի, ից. հոգն. երագագանք. գ.

թակարդ, ցանց կամ ուռկան՝ կենդանիներ բռնելու համար:

Երազագեղ, գիտի, աց. ա. 1. երազահան, երազ մեկնող. 2. սին երազներով, երազական բաներով ապրող:

Երախան, ի, աց. գ. 1. սեղան, սեղանակցություն. 2. խումբ:

Երանել, եցի. ն. երանի տալ, երանի ասել: **Երասան**, ի, աց. **Երասանակ**, ի. աց. գ. սամձ:

Երբեմն. մ. 1. երբեմն. 2. մի անգամ, մի ժամանակ:

Երբեք կամ **Երբեք**. մ. երբեմն: **Երբեք երբեք**. մ. երբեմն-երբեմն:

Երդ, ոյ, ոց. գ. 1. երդիկ, 2. տուն, ընտանիք: **Երդմնեցուցանել**, ցուցի, ցո՛ւ. պր. երդվեցնել, երդվել տալ:

Երեկ. գ. երեկո: **Առ երեկս, ընդ երեկս**. երեկոյան դեմ:

Երեկորեայ, եայք, եայց. ա. գ. երեկոյի, երեկոյան, երեկոյան պահը: **Յերեկորեայ**. մ. երեկոյից, իրիկվանից:

Երեկորի, րոյ, րեաց. գ. երեկո:

Երեկորին. 1. ա. երեկոյան, իրիկնային. 2. մ. երեկոյան դեմ, իրիկնայեմին:

Երես, ի. մանավանդ՝ **Երեսք**, սաց, օք. գ. 1. դեմք. 2. անձ. 3. աչք: **Յերեսաց**. 1. կողմից, առջևից. 2. ընդդեմ:

Երեսցուցանել, ցուցի, ցո՛ւ. պր. ցույց տալ, երևացնել:

Երեքթևեան. ա. երեք ծայր ունեցող (նետ): **Երէ** կամ **Էրէ**, ոյ, ոց. գ. վայրի կենդանի՝ որսալի և ուտելի:

Երիվար, ի, աց. գ. արագավազ ձի, նժույգ: **Երկայնամտել**, եցի. չ. համբերող՝ ներողամիտ լինել:

Երկայնանիստ, նատի, իւ. ա. երկար նիստ կամ դիրք ունեցող, երկայնածիղ:

Երկան, ի, աց կամ ից. գ. երկանք, ջրադացի քար:

Երկաքանչիւր, իւրոյ, րոց կամ ռից. ա. գ. երկուսն էլ:

Երկեամ. ա. երկամյա, երկու տարվա: **Չերկեամ**. մ. երկու տարվա տևողությամբ:

Երկին, կնի, նաւ, նիւ, **Երկինք**, կնից, իւք. գ. երկինք:

Երկիր, կրի, րաւ. գ. 1. հողագունդ, երկրագունդ. 2. երկրի մի մաս, գավառ. 3. աշխարհ. 4. երկրի բնակիչներ, մարդիկ. 5. հող, գետին: **Երկիր պագանել** կամ **Երկիրպագանել**, պագի, պագ. երկրպագել, երկրորպագություն անել:

Երկիրաձծ, ի, աց կամ ից. ա. 1. աստվածավախ, աստվածապաշտ, առաքինի. 2. վախեցող, երկչոտ:

Երկիրուկ կամ **Երկեղուկ**. գ. վախ: **Երկն**, կան, կունք, անց. գ. ծննդաբերական ցավ, երկունք:

Երկնադէզ, դիզի, աց. գ. բարձր, երկար, հսկայաչափ:

Երկուրասան, ի, ից. թ. տասներկու: **Երկուանալ**, ացայ. կամ **Յերկուանալ**, ացայ. չ. երկմտել, կասկածել, տարակուսել:

Երկուորի, րոյ, ռիք, րեաց. ա. գ. գույգ, ջուխտ, երկվորյակ:

Երկուրեան, կոցունց, **Երկուրին**, կոցուն. թ. երկուսն էլ:

Երվին, ի, իւ, երվունք, փնից. գ. գույն, երանգ: **Երվին երվին**. գույնգույն, պեսպես:

Եղ տե՛ս **Իղ**: **Եօթանքեան**, նեցունց, **Եօթանքին**, ցուն. թ. յոթն էլ:

Չ

Չագիր, ի, աց. ա. զգվելի, զարշելի: **Չահի հարկանել**(իմ), հարայ, հարեալ. չ. սարսափահար լինել, խիստ վախենալ, զարհուրել:

Չանգիպել, եցի. չ. վախենալ, երկյուղ կրել:

Չառաջեաւ, ջեօք. մ. առջևը, դիմացը: **Չգացուցանել**, ցուցի, ցո՛ւ. պր. 1. գիտակցել տալ, հասկացնել. 2. տեղեկացնել, իմացնել:

Չգենուկ, զգեցայ, ցի՛ր. հ. հագնել, հագնվել:

Չենուկ, զենի, զե՛ն. ն. 1. մորթել, վիզը կտրել. 2. զոհել, անասուն մորթել զոհի համար. 3. կտրել:

Չեռալ, ացի կամ ացայ, ռա՛. չ. 1. սողալ. 2. վխտալ:

Չերծուցիչ, ցչի, ցչաց. ա. ազատող, փրկող:

Չէն, զինու, ուց կամ ից. գ. զենք: **Չի**. շ. 1. որ. թե. 2. որպեսզի. 3. որովհետև: **Չի՞**. դ. ի՞նչ, ի՞նչո՞ւ, 2. ինչպե՞ս, ի՞նչ պատճառով:

Չիա՛րդ. մ. 1. ինչպե՞ս. 2. ինչո՞ւ. 3. **զիարդ**. ինչպես որ:

Չկնի. 1. նխ. ետև ից, ետև. 2. մ. հետո: **Չկնի լինել**(իմ). հետամուտ լինել, հետապնդել:

Չհեռ. նխ. հետքով, ետև ից:

Չմուռ. զմռտյ կամ սի, սաւ, սաց, սօք. գ. մի տեսակ ամուշահոտ՝ դառնահամ խումկ կամ խեժ:

Չմունենի, նոյ, նեաց. գ. զմուռ տվող ծառ:

Չուարակ, ի, աց. գ. հորթ, եգ: **Չուարակակ** կամ **Չուարակափակ**, ի. գ. գոմ, փարախ:

Չօր, ու, րաց, ռօք սի, րաւ, րով, րոց, ռօվք. գ. գորք: **Չօր հարանել** կամ **Չօր առնել**. գորք հավաքել:

Չօրածողով լինել(իմ) կամ **առնել**. գորք հավաքել:

Չօրական, ի, աց. գ. 1. զինվորներ. 2. պահապան գորք:

Չօրէն. 1. նխ. նման, պես, կերպ. 2. մ. շ. օրինակ, օրինակի համար. 3. իբր, որպես թե:

Չօր հանապազ. մ. 1. ամեն օր, միշտ. 2. ամբողջ օրը:

Չօրոյին. գ. 1. ուժ, քաջություն. 2. հրաշք, սքանչելիք. 3. գորք:

Է

Է, էի. մանավանդ՝ **Էն** կամ **Էնն**, **Էին**, **զէն**, **յէն**. գ. 1. նա որ կա, գոյություն ունեցող, գոյող, էակ, արարած. 2. աստված, տեր:

Է, էի, էք, էից կամ **էաց** կամ **էոց**. դ. ինչ որ կա, նա որ կա, գոյություն ունեցող, արարած, էակ:

Է՛ երբեմն, Է՛ զի, Է՛ ուրեք. մ. 1. երբեմն,

մերթ, պատահում է որ, կա որ, կա տեղ. 2. մի կողմից:

Էութին. գ. 1. գոյացություն, բնություն. 2. գոյություն, լինելություն, իրոք լինելը. 3. ինքնագոյություն, աստվածություն, աստված. 4. գույք, ինչք, ունեցվածք, ստացվածք. 5. էակ:

Էրէ տե՛ս **Երէ**:

Ը

Ըմբերանել, եցի. ն. մեկի բերանը փակել, ձայնը կտրել տալ, ստիպել լռել, լռեցնել, սանձել:

Ըմբռնել, եցի. ն. 1. բռնել, ձեռքը գցել. ձեռքակալել. 2. հասկանալ, հասու լինել, մտքով ըմբռնել, գլխի ընկնել. 3. որսալ:

Ընդ. նխ. գործածությունը տե՛ս «Ընրակ.» § 196:

Ընդ առաջ. մ. առջևը: **Ընդ առաջ ելանել, երթալ**. 1. հանդիպել, պատահել. 2. դիմավորել:

Ընդարմանալ, ացայ. չ. 1. խիստ զարմանալ, ապշել. 2. թմբել, անզգայանալ, փայտանալ, կարկամել, սառչել:

Ընդդէմ կամ **ընդ դէմ**. նխ. 1. հակառակ, ներհակ, դեմ. 2. դիմաց, հանդիման, դեմուդեմ: **Ընդդէմ լինել**(իմ). ներկայանալ, հանդիպել:

Ընդդիմակաց, ի, աց. ա. 1. դեմ կանգնող, դիմադրող, հակառակորդ. 2. ներհակ, հակառակ:

Ընդդուգանել, լուզի, լո՛ւ, զեալ. պր. 1. իրար հագցնել, կցել, շարել, հյուսել, մեկը մյուսի հետ միացնել. 2. դուրս հանել, տակից հանել:

Ընդէ՛ր. մ. ինչո՞ւ, ի՞նչ պատճառով, ինչի՞ համար:

Ընդհար. ա. 1. տարբեր, առանձին. 2. պակաս, նվազ, քիչ. 3. գ. արանք (միջև եղած) տարածություն:

Ընդոծին կամ **Ընդոծին**, ծնի, նաց. ա. գ. 1. մեկի տանը ծնված և մեծացած, բայց տանտիրոջը ոչ արյունակից. ստրուկի, ծառայի կամ աղախնու զավակ. 2. գերդաստանի

հետ միասին ապրող կողմնակի, անհարազատ անձ՝ սորուկ, ծառա, աղախին:

Ընդունայն. 1. ա. դատարկ, սին, փուչ, ապարդյուն, անօգուտ, ունայն. 2. մ. իզուր, զուր տեղը:

Ընդվզել(իմ), եցայ, չ. գլուխ բարձրացնել, չինագանդվել, չենթարկվել, ըմբոստանալ:

Ընթեռնուլ, քերցայ, ցիր. ն. հ. կարդալ: **Ընթերցուած**, ոյ կամ ի, ոց. գ. կարդալը, ընթերցում, ընթերցանություն, ընթերցմունք, ընթերցվածք:

Ընկենուլ, կեցի, կեաց կամ կեց, կեա՛. ն. գցել, ձգել, նետել:

Ընկլուսուլ, ընկլցե՛. կր. ընկլայ. ն. **Ընկլուզանել**, լուզի, լոյզ կամ լոյց. լո՛. պր. կուլ տալ, ընկզմել, խորասուզել, ջրասույզ անելով խեղդել:

Ըստ. նխ. գործածությունը տես «Քերակ.» § 197:

Ըստանձնել, եցի. ն. 1. շալակել, վրան առնել. 2. հանձն առնել, իր վրա վերցնել:

Թ

Թաթուլ, թլոյ, ոց. գ. կենդանիների առջևի ոտքի թաթը:

Թանալ, թացի, թա՛ց. ն. թրջել, թացացնել, թաթախել (ջրի կամ այլ հեղուկի մեջ):

Թանձրամիս, մտի, տաց. ա. տխմար, բթամիտ, հաստագլուխ:

Թանձրացուցանել, ցուցի, ցո՛. պր. թանձրացնել, շատացնել, ավելացնել:

Թափ կամ **ընդ թափ** կամ **զթափ անցանել**. թափանցել, միջով ներս անցնել:

Թափանցիկ լինել(իմ). միջով ծակելանցնել, միջով կտրել-անցնել, թափանցել:

Թափել, եցի. ն. 1. թափել, դատարկել, պարպել. 2. խլել, կորզել, դուրս քաշել, ուժով քաշելով պոկել տեղից. 3. ազատել, փրկել:

Թաքուս, քստեան ըամ քստի. գ. 1. թաքնվելը, թաքցնելը. 2. թաքնվելու տեղ, թաքստարան:

Թաքուցանել, բուցի, բո՛. պր. թաքցնել, պահել, ծածկել:

Թեկն կամ **Թէկն**, թիկան, թիկունք, թիկանց. գ. 1. թև. 2. օգնականություն. 3. ետևի կողմը, կրմակը:

Թերաքանալ. ա. կիսով չափ խրված պատյանի մեջ, պատյանից կիսով չափ հանված, կիսահան, կիսամերկ (սրի մասին):

Թերիակէ կամ **Թիրակէ**, էի, էից. գ. հակաթույն, դեղթափ:

Թեամոխ լինել(իմ). ձեռնարկել, ձեռք զարկել, ձեռնամոխ լինել:

Թիկունք, թիկանց. գ. 1. թիկունք, կրծնակ, ետևի կողմը. 2. օգնականություն, օգնություն, սատար: **Թիկունս առնել**. նեցուկ՝ օգնական՝ պաշտպան դարձնել:

Թիւն. գ. թույն:

Թշնամանել, եցի. ն. թշնամաբար անարգել, նախատել, անպատվել, հայհոյել:

Թող թէ. շ. ուր մնաց, ուր մնաց որ, մանավանդ, այն էլ:

Թողուլ, թողի, թո՛ղ. ն. 1. թողնել. 2. ներել, շնորհել, արձակել:

Թոշակ կամ **Թօշակ**, ի, աց. գ. 1. ճանապարհի պաշար, պարեն, ուտելիք, սննդամթերք. 2. զինվորական ծառայության համար տրվող ռոճիկ, գորքին տրվող վարձ՝ պարենեղենով կամ դրամով:

Թովիչ, վճի, չաց. ա. գ. օձ հմայող՝ զգուցանող, օձահմա, կախարդ:

Ժ

Ժահր, ի. գ. թույն, մահադեղ:

Ժամանել, եցի. չ. 1. գալ, հասնել, ժամանել, 2. կանխել, ավելի առաջ անցնել, առաջ տեղ հասնել. 3. ժամանակ գտնել մի բան անելու:

Ժանաար կամ **Ժանու** կամ **Ժանուար**, ի, ա. գ. ուղևորության համար նա-

խատեպած գահավորակ՝ ձիու, ուղտի, փղի, կառքի վրա, նամանավանդ՝ ձի, ուղտ, փիղ, կառք՝ գահավորակով:

Ժանր կամ **Ժանդ**, ի, ից կամ աց. 1. ա. չար, դաժան, անզգամ, զարշելի, զագրելի, անպիտան, վատթար, վնասակար. 2. գ. ժանտախտ, վարակ:

Ժոյժ. գ. համբերելու՝ դիմանալու ուժ, համբերելը, դիմանալը: **Ժոյժ ունել**. համբերել, դիմանալ, հանդուրժել, տանել:

Ժուժալ, ացայ կամ ացի, **Ժուժել**, եցի. չ. դիմանալ, համբերել, տանել:

Ժարիէ(իմ), եցայ. կամ **Ժարիել**, եցի. չ. համարձակվել, հանդգնել:

Ժպել, եցի. 1. ն. աղերսել, թախանձել. 2. չ. հանդգնել, համարձակվել, սիրտ անել:

Ժպել(իմ), եցայ. չ. աներեսություն անել, հանդգնել, համարձակվել, լըկտիանալ:

Ի

Ի(Յ). նխ. գործածությունը տես «Քերակ.» § 195:

Ի բաց. մ. 1. հեռու, մի կողմ. 2. դուրս: **Ի բաց առնել**. հեռացնել: **Ի բաց կալ**. հեռու մնալ, ետ կանգնել:

Իբր. 1. նխ. ինչպես, որպես, պես. 2. մ. ինչպես, ինչ կերպով. 3. երբ, մինչդեռ. 4. շ. ինչպես, ասես թե, կարծես թե. 5. որ:

Իբրև. 1. մ. երբ, երբ որ. 2. շ. ինչպես որ. 3. կարծես, ոնց որ. 4. որովհետև, քանի որ:

Իբրև (զ). նխ. 1. ինչպես, նման, պես. 2. մոտ, մոտավորապես:

Իմն, իմեմն, յիմեմն. դ. 1. մի, որևէ, ինչ-որ. 2. ինչ-որ բան, որևէ բան: **Իմն իմն**. պես-պես, զանազան, մի քանի:

Ինչ. դ. 1. մի որևէ, ինչ-որ. 2. մի բան, Որևէ բան. 3. մի քանի:

Ինչք, ընչից. գ. ունեցվածք, ստացվածք: **Իշավայր**, ի, ից կամ աց, **Իշավայրի**, րույ, րեաց. գ. վայրի էշ, ցիռ:

Իշխել, եցի. չ. 1. իշխել, տիրել. 2. համարձակվել, կարողանալ:

Իր, ի, աց. գ. 1. իր, առարկա, բան. 2. գործ. 3. դեպք, դիպված, իրողություն:

Իրազգած կամ **Իրազգաց լինել**(իմ). իրագել լինել, տեղեկանալ:

Իտլ, ոյ, ոց. գ. 1. յուղ, ձեթ. 2. կարագ. 3. օժան յուղ, մեռն. 4. անուշահոտ օժանելիք:

Իսրովի կամ **իսրովին**. մ. 1. ինքնիրեն, անձամբ. 2. իր կամքով, ինքնակամ:

Լ

Լայքա կամ **Լաքայ**, ի. գ. բաց կարմիր գույնի ներկ, որով ներկում էին մորթիներ:

Լանջք, ջաց, ջօք կամ ջիւք. գ. կուրծք:

Լեզեռն կամ **Լեզեռվն**, **Լեզեռն**, ի, ից կամ աց. գ. 1. հռոմեական զինվորական միավորում, գորախումբ, լեզեռն. 2. լեզեռնի զինվոր:

Լեզուլ, լեզի, լե՛գ. ն. լիզել:

Լեռնաբերձ. ա. լեռան պես բարձր կամ մեծ:

Լեռնույն, ոտին, ոտամբ. գ. լեռան ստորոտը:

Լնուլ, լցի, լի՛ց. ն. 1. լցնել. 2. լրացնել. 3. լիացնել, հագեցնել. 4. փխբ. կատարել, իրագործել:

Լուալի, լույ, լուալիք, լեաց. գ. լվանալու կամ լողանալու տեղ, լողարան, բաղնիք:

Լուծանել, լուծի, լո՛յծ. ն. արձակել, քանդել:

Լուցանել, լուցի, լո՛յց. ն. վառել, այրել:

Լսելիք, լեաց. գ. ականջ, ականջներ:

Խ

Խազմ, ի, ից. գ. կռիվ, պատերազմ, խռովություն:

Խաթարել, եցի. ն. ավերել, կործանել, խանգարել:

Խահամոք կամ **Խախամոք**, ի, աց. գ. խոհարար:

Խաղալ, ացի, ա՛. չ. 1. խաղալ. 2. շարժ-

վել, ճանապարհի ընկնել։ 3. վխտալ։
4. ծիծաղել, 5. կատակ անել, խեղ-
կատակություն անել։

Խաղացուցանել, ցուցի, ցո՛ւ. պր. 1. տե-
ղից շարժել, առաջ քշել, տանել,
տեղափոխել, 2. հոսեցնել (ջուր)։

Խայտալկն. ա. վառվառն աչքերով։

Խանգար. գ. 1. խանգարվելը. 2. խռո-
վություն։

Խաշն, շին, շինք, շանց. գ. 1. ոչխարնե-
րի և այծերի բազմություն, հոտ. 2. ընդհանրապես՝ խոտաճարակ ա-
նասուն։

Խառնագնաց, ի, ից. ա. ցուփ, անա-
ռակ, չարագործ։

Խառնաղանձ կամ **Խառնաղանջ**, ի,
ից. ա. գ. 1. խառնիխտուն, անկարգ.
2. ամբոխ, խաժամուժ։

Խար. գ. անասունների կեր, չոր խոտ։
Խափուցանել. փուցի, փո՛ւ, փուցեալ.
պր. հանգցնել, մարել. դադարեցնել։

Խելամուտ առնել. հասկացնել, ըմբռ-
նել տալ։

Խելք, աց, օք. գ. 1. ուղեղ. 2. խելք, միտք,
բանականություն։ **Խելք կամօջաց**.
կամուրջի գլուխ՝ սկիզբ։ **Խելք նա-
փն**. նավի գլուխ, նավախել։

Խիլ արկանել. փնտրել, որոնել, հետա-
խուզել, հետամուտ լինել։

Խլխլել, եցի. ն. խուլ ձևանալ, չլսելու
տալ, անտես առնել։

Խնամակալել, եցի. չ. խնամակալ լի-
նել, խնամք տանել, խնամել. փխբ.
տիրել, թագավորել։

Խնդրել, եցի. ն. 1. փնտրել, որոնել. 2.
ուզել, խնդրել, հայցել. 3. հարցնել,
քննել. 4. պահանջել։

Խնուլ, խցի, խից. ն. խցել, փակել։

Խոնջան, ի, ոյ, նունք, նանց. գ. անդրա-
վարտիքի կապ։

Խոռել, եցի. ն. անցք՝ խոռոչ բացել։

Խոտաբուս. ա. 1. խոտով ապրող, խո-
տակեր. 2. խոտեղեն։

Խոտահամբար. գ. անասունների հա-
մար դիզված խոտ, պահած խոտ։

Խոտել, եցի. ն. 1. արհամարհել, մերժել.
2. անարգել։

Խորորել, եցի. ն. 1. ուղուց շեղել, մի
կողմ քաշել՝ ծռել. 2. մոլորեցնել։

Խորան, ի, ագ. գ. 1. վրան. տաղավար.
2. գմբեթավոր դահլիճ, արքունա-
կան ատյան. 3. սեղյակ։

Խորանատր, ի, ագ. ա. վրանաբնակ։

Խորգահանդերձ. ա. բուրձ հագած։

Խորխուղել(իմ), եցայ. չ. ճաքճքել (հողի
մասին)։

Խուժադուժ, ի, ագ. ա. բարբարոս, վաչ-
րենաբարո։

Խուռն, խռան. գ. խրնված՝ կուտակված
բազմություն։

Խստամբերություն. գ. ճգնողական
կյանք վարելը, ճգնություն։

Խստանալ, ագայ. չ. 1. կարծրանալ,
ամրանալ. 2. խստությամբ վարվել,
չներել. 3. անհնազանդ լինել. 4. հա-
մառել։

Խրախոսություն. գ. խրախճանք, կերու-
խում, մեծ ուրախություն։

Խօլ, ի, ագ. ա. կատաղի, խենթ։

Խօսք, սից, գ. 1. խոսք. 2. գրույց, խո-
սակցություն. 3. լեզու, բարբառ։

Ծ

Ծախել, եցի. ն. 1. ծախսել, վատնել, մըս-
խել. 2. ոչնչացնել, բնաջնջել, սպա-
նել. 3. վաճառել։

Ծաղկոց, ի, ագ. գ. ծաղկանոց, բուրաս-
տան։

Ծաղր, դու կամ դեր. գ. 1. ծիծաղ. 2. կա-
տակ, ծաղր։ **Ծաղր առնել**. ծաղրել,
կատակել։

Ծանակել, եցի. ն. խախտառակել, ծաղր
ու ծանակի ենթարկել։

Ծանուցանել, նուցի, նո՛ւ. պր. տեղեկաց-
նել, իմաց տալ։

Կ

Կագել, եցի. կամ **Կագել**(իմ), եցայ. չ.
վիճել, հակառակվել, կռվել։

Կագմ. ա. մ. պատրաստ, զինված։

Կագվել, եցի. ն. 1. պատրաստել. 2. հան-
դերձել. 3. սպառագինել. 4. ստեղծել։

Կալ, կամ, կաս, կայ, կայի, կացի, կա՛ց,
կացե՛ք. չ. 1. կանգնել. 2. սպասել,
մնալ։ **Կալ ի վերայ**. 1. հասկանալ.
2. վերակացու լինել։ **Կալ յաղօթս**.
աղոթել։

Կալնուլ, կալայ. ն. բռնել, տիրել։ Տե՛ս
նաև **Ունել**(իմ)։

Կահ, ի, ից և ու, ուց. գ. տնային շար-
ժական իրեր, կահկարասի։

Կահոյր, ուրի, րաց. գ. ջրի աման, սա-
փոր։

Կաղանջան. գ. իշակաթնուկ բույսը։

Կապիճ, ի, ագ. գ. արմտիքներ չափելու
աման։

Կասուր. գ. կողոպուտ, ավար։

Կառանչել կամ **Կառաչել**, եցի. չ. թա-
ռանչել, սաստիկ հառաչել, բարձր
և ցավագին գոչել։

Կառավար, ի, ագ. գ. 1. կառապան. 2.
կառավարող, ղեկավար։

Կառափն, փին, փունք, փանց. գ. մար-
դու գլուխ, գանգ։

Կասուլ, կասի, կաս՛ն. գ. կալսել։

Կաբարած, ի, ից կամ ագ. գ. 1. ա-
վարտվելը, վախճան, վերջ. 2.
ծայր, գլուխ։

Կաբարել, եցի. ն. 1. ավարտել, վեր-
ջացնել, գլուխ բերել. 2. սպանել,
նահատակել։

Կար, ոյ, ոց, ովք կամ իւք. գ. պարան,
չվան, լար, փոկ։

Կար, ի, իւ կամ ոյ. կարիք, րից, րիւք. գ.
կարողություն, ուժ։

Կարակնաձև, ի. ա. կամարածն։

Կարակում. ա. գ. 1. ցեխտու, տղմոտ. 2.
ցեխ, կուտակված տիղմ։

Կարասի, տոյ կամ տոյ, սեաւ կամ ստվ,
սեաց. գ. 1. կահկարասի, ունեցած-
չունեցածք, գույք. 2. դրամ, ունեց-
վածք, հարստություն։

Կարգել, եցի. ն. 1. կարգավորել, ուղղել,
հաստատել, որոշել. 2. գրել, շա-
րադրել։

Կարդալ, ացի. ն. չ. 1. կանչել, գոչել,
ձայն տալ. 2. հրավիրել. 3. անվա-
նել, անուն դնել. 4. ըմթերցել։

Կարել, ացի. չ. կարողանալ։

Կարելվեր կամ **Կարելվեր**. ա. մ. սաստիկ
վերք ստացած, սաստիկ վերք
հասցներով։

Կարի. մ. սաստիկ, ուժգին, խիստ, շատ։

Կարևան կամ **Կարաան**, ի, ագ. գ. ու-
ղևորների՝ զինվորների բազմու-
թյուն, խումբ։

Կարօրանալ, ագայ. չ. 1. կարիք զգալ.
2. կարոտել։

Կարօրություն. գ. 1. չքավորություն,
պակասություն. 2. փափագ, տենչ։

Կացուցանել, ցուցի, ցո՛ւ. պր. 1. կանգ-
նեցնել. 2. դնել, գետեղել. 3. անել,
կատարել, իրագործել. 4. կարգել,
նշանակել։

Կաքառել, եցի. չ. պարել, թռչկոտել։

Կեալ, կէի, կեայր, կեցի, եկեաց, կեա՛ց.
չ. 1. ապրել. 2. կենդանանալ։

Կեանք, կենաց, նօք. գ. 1. ապրելը. կեն-
դանություն. 2. այս կյանքը, այս աշ-
խարհը. 3. ունեցվածք, ապրուստ։

Կեմ, ոյ. գ. խոտից հյուսած պարան։

Կենցաղաւեր, սիրի, րաց. ա. աշխար-
հիկ կյանք սիրող, կենսասեր։

Կեցուցանել, ցուցի, ցո՛ւ. պր. 1. կենդա-
նացնել. 2. փրկել, ազատել. 3. ա-
ռողջացնել։

Կիզուլ, կիզի, եկեզ, կէ՛զ, կիզեալ. ն. 1.
այրել, բորբոքել. 2. հրդեհել, կրակի
մատնել։

Կինճ, կնճի, ճաց. գ. վայրի խոզ, վա-
րագ։

Կնդրուկ, դրկի, կաց. գ. ազնիվ խնկի
տեսակ։

Կնքել, եցի. ն. 1. կնիք դրոշմել, կնիք դնել.
2. ամրացնել, փակել, ծածկել. 3. ար-
ձակ չթողնել. 4. հաստատել, վկայել.
5. ավարտել, վերջացնել. 6. մկրտել։

Կոծել, եցի. ն. ծեծել, բախել, զարկել։

Կոծել(իմ), եցայ. չ. ն. 1. լալ, ողբալ. 2.
ծփալ. ալեկոծվել։

Կողմնակալ, ի, ագ. գ. երկրի մի մասի
կառավարիչ, կուսակալ։

Կողմնապեղ, տե՛ս **Կողմնակալ**։

Կողր, դեր, դերք, երաց կամ երց. գ.
ճյուղ, ոստ։

Կոյս, կուսի, կուսաց. գ. կողմ։

Կոչել, եցի. ն. 1. կանչել, հրավիրել, ձայն տալ. 2. անվանել, անուն դնել:
Կորզել, եցի. ն. 1. քաշել, հանել, խլել. 2. ազատել:
Կոփիւն, գ. կոփելու՝ զարկելու ձայն, բախյուն:
Կոփել, եցի. ն. 1. բռնուցքով զարկել, ապտակել, ծեծել. 2. փխր. հաղթահարել:
Կօշիկ, շկի, կաց. գ. 1. կոշիկ, ոտնաման. 2. հոգն. ձևով՝ վարձ, վարձատրություն:

Ն

Նազար, ոյ. գ. մառու բույսը:
Նաղթք, բից. գ. թակարդ, որոգայթ:
Նան, ա. հաշտ, բարեհամբույր, լավ տրամադրված:
Նամակ, ա. մ. 1. լրիվ, ամբողջովին. 2. միշտ, շարունակ:
Նամարիք, տիոց. ա. հասակակից:
Նամարել(իմ), եցայ. բեա՝ հ. 1. համրել, թվել, հաշվել. 2. կարծել, ենթադրել, համարել:
Նամբար, ոյ, ոց կամ սց. գ. 1. շտեմարան. 2. պաշար, մթերք:
Նամօրէն. 1. ա. բոլոր, համայն, բովանդակ. 2. մ. բոլորովին, առհասարակ:
Նայել(իմ), եցայ, եա՛ց, եա՛. չ. 1. նայել. 2. դեպի վեր նայել, աչքերը վեր բարձրացնել:
Նանապագ. մ. միշտ, շարունակ, ամեն անգամ:
Նանուցանել, գուցի, գո՛. պբ. հանգըստացնել:
Նանգչել(իմ), գեայ, գի՛ր, գուցեայ. չ. 1. հանգտանալ. 2. իջնանել, մի տեղ դադար առնել. 3. նստել, պառկել. 4. լրանալ, ավարտվել, վերջանալ. 5. վախճանվել, թաղվել:
Նանդերծել, եցի. ն. պատրաստել, կազմել, հոգալ (ճանապարհ դնելու կամ այլ բանի համար):
Նանդերծել(իմ), եցայ. չ. պատրաստություն տեսնել, պատրաստվել:
Նաշմ, ի, ից. ա. կաղ, խեղ, անդամալույծ:

Նասանել, հասի, հա՛ս. չ. 1. հասնել, գալ, ժամանել. 2. վերահասու լինել, հասկանալ, տեղեկանալ, իմանալ. 3. հասունանալ: **Ի վերայ հասանել**. 1. վերահասու լինել, հասկանալ, իմանալ. 2. վրան հարձակվել: **Ի չափ հասանել**. չափահաս դառնալ:
Նասարակ, ի, սց. ն ուց. ա. 1. կես, կես եղած. 2. ընդհանուր, բոլոր. 3. համանման, միօրինակ, հավասար. 4. մ. հավասարապես, միատեղ:
Նասարակաց, ա. մ. 1. ամենքի, բոլորի, ընդհանուրի. 2. հավասար, հավասարապես:
Նասարակել, եցի. ն. կիսել, կես անել, կես լինել:
Նաստել, եցի. 1. ն. 1. հաստատել, ամրացնել. 2. սահմանել, կարգել, որոշել. 3. ստեղծել, հորինել:
Նարկլել(իմ), եցայ. չ. լաց լինելուց շքնափեղծ լինել:
Նարուած, ի. գ. գաղթ, գաղթելը:
Նարկանել, հարի, հա՛ր. ն. 1. զարկել, խփել, ծեծել, տանջել. 2. կտրել, կտարել, ջարդել. 3. դիպչել, իրար զարնվել, բախվել. 4. փռել, տարածել, շաղ տալ. 5. վիրավորել, խոցել, խայթել: **Սպասավորություն հարկանել**. սպասարկել, ծառայել:
Նարկանել(իմ), հարայ. չ. 1. մի բանի դիպչել՝ հարել. 2. սիրահարվել:
Նարուլ, հարի, հա՛ր. ն. խփել, զարկել:
Նարսրել, եցի. ն. խորը խրել, մխրճել:
Նացարար, ի, սց. գ. հացագործ, հացթուխ:
Նալ, ու, ուց ն ոյ, սց. գ. 1. թռչուն. 2. հավ. 3. արքաղաղ:
Նալ. գ. պապ, մախահայր:
Նաան, ի, ից. ա. միաբան, համախոհ, կամակից:
Նաանել(իմ), եցայ. չ. 1. համաձայնել, համոզվել, հավանություն տալ. 2. լսել, հնազանդվել. 3. միաբան՝ համախոհ լինել:
Նաասրեալ. մ. հաստատապես, հավաստի կերպով:
Նեղձանել(իմ), **Նեղձուլ** կամ **Նեղձուլ**,

ձայ, ձեայ կամ ձուցեայ. չ. խեղդվել:
Նեղուլ, հեղի, հե՛ղ. ն. թափել, դատարկել, լցնել:
Նեշտացուցիչ, ա. հաճելի ու դյուրին դարձնող:
Նեշտութիւն, գ. 1. ւխտըժելի՝ հաճելի՝ ցանկալի լինելը. 2. փափագ, ցանկություն:
Նեսկ, ոյ. գ. հյուսած պարան, կապ:
Ներ. նխ. 1. ետև ից. 2. հետ, հետ միասին:
Ների նխ. ետև ից, հետո:
Ների. 1. ա. ոտքով գնացող, հետևակ. 2. մ. ոտքով, քայլելով:
Ներապանծ, ի, ից. ա. վարսագեղ, տերևագարդ:
Ներձանել կամ **Ներձուլ**, ձի, հե՛րձ. ն. 1. ճեղքել, պատռել. 2. պառակտել:
Ներձուած, ոյ, ոց. գ. 1. երկպառակություն, տարածայնություն, անմիաբանություն. 2. հերետիկոսություն, հակառակ դավանություն, աղանդ:
Նէն, հի՛նի, նից. գ. ավազակ. ասպատակ, ասպատակություն:
Նի՛ւմ, տե՛ս **Զի՛**:
Նինաուրց, ա. 1. ծեր, ծերացած. 2. նախկին:
Նիւթ, ոյ, ոց կամ ի, ից. գ. նյութ, տարր՝ խոնավ կամ չոր. խոնավություն:
Նիտ, ի, ից. գ. հյուղակ, խրճիթ:
Նիտ, **Նիտէ**, **Նիւէ**, էի, ից, իւք կամ հիւղեայ, եաց. գ. 1. նյութ, տարր, հյուլ. 2. արեգակ:
Նիւպարեան. գ. հյուպատոսներ, իշխաններ:
Ննարել, եցի. ն. **Ննարել**(իմ), եցայ. հ. 1. հնար գտնել, ճար անել. 2. ջանալ, աշխատել. 3. գյուտ անել, վարպետություն բանեցնել. 4. կարողանալ:
Ննձան, ի, սց. գ. այգու մ շինված ավազան՝ խաղող տրորելու համար:
Նոգաբարձու, ի, սց. գ. ա. հոգ՝ խնամք տանող, վերակացու, առաջնորդ:
Նոմանի, նույ, նեաց. ա. գ. ուրիշի կնոջ սիրող, սիրելի:
Նոռի, գ. հին հայոց տոմարի երկրորդ ամիսը:
Նոսել, եցի. ն. 1. թափել, հոսեցնել. 2. ցած գցել, նետել:

Նոտարան, ի, սց. գ. բուրաստան, ծաղկանոց:
Նոպ, հայոյ կամ հպի, ից. ա. 1. մոտիկ. 2. կցորդ, հաղորդակից, մման. 3. նխ. մոտ, մերձ. 4. մ. շուտով:
Նոպ ընդ հոպ, **Նոպ առ հոպ**. 1. շատ շուտով, անմիջապես. 2. մոտ առ մոտ, կից:
Նոսկ, **Նոսկ յեղին**, **Նոսկ յեղոյ**, ա. մ. ամենավերջի, ամենից վերջում, բոլորից հետո:
Նրաժարել, եցի. չ. հեռանալ մի տեղից, հրաժեշտ տալ, բաժանվել, մեկնել:
Նրար, ի, ից. գ. վառած կրակ:
Նրեշտակ, ի, սց. գ. 1. հրեշտակ. 2. պատգամավոր, սուրհանդակ, լրաբեր. 3. մարգարտ:
Նրեշտակագնացություն. գ. պատգամավոր գնալը, պատվիրակություն:
Նրոսակ, ի, սց. գ. ասպատակելու համար հարձակվող գործ:

Ձ

Ձայն ածել՝ առնել՝ առնուլ՝ արկանել՝ արձակել՝ բառնալ՝ դալ. ձայն հանել, կանչել, խոսել:
Ձայնարկու, ուի, ուաց. ա. գ. 1. ձայն հանող, կանչող. 2. լալական, լացի ու ողբի ձայներ արձակող, մեռելի վրա լացող՝ սգացող (կին կամ տղամարդ). ողբասաց, ողբարկու:
Ձեղուն, ուան, անց. գ. 1. առաստաղ, առիք, օճորք. 2. ծածկ, տանիք, կտուր. 3. վերնատուն, դստիկուն, հարկաբաժին, հարկ:
Ձեռագործ, ի, սց. ա. ձեռքով շինած՝ ստեղծած, ձեռակերտ. գ. 1. ձեռքի գործ՝ աշխատանք. 2. կուռքի արձան, կուռք:
Ձեռն, ռին, ձեռք, ուաց. գ. 1. ձեռք. 2. միջոց, գործիք. 3. ուժ, կարողություն, գործություն, իշխանություն. 4. հովանավորություն, պաշտպանություն, օգնություն: **Ի ձեռն**. նխ. ձեռքով, միջոցով, միջնորդությամբ: **Ձեռն արկանել**. 1. ձեռք զարկել, ձեռնար-

կել, սկսել. 2. ձեռք բարձրացնել մեկի վրա՝ սպանելու կամ ծեծելու մտադրությամբ. 3. բռնել: **Չեռն դնել**, ձեռնադրել: **Չեռն ի գործ առնել** կամ **արկանել**, ձեռք զարկել, ձեռնարկել, սկսել: **Չեռն փայլ**, օգնության ձեռք մեկնել, օգնել:

Չիմաստաղ կամ **Չիմաստաղխաղ**, ա. հավված ձյունով առատացած՝ հորդացած (գետ):

Չիմաստյգ, ա. ձյան տակ ծածկված, ձյունով լցված, ձյան ջրով առատացած (գետ):

Չմերային, յնոյ. **Չմերայնի**, նոյ. **Չմերանի**, նոյ կամ նոյ. գ. ձմեռ, ձմեռային ժամանակ կամ եղանակ: **Չմերայնի**, **ձմերանի**, **ի ձմերայնի**, մ. ձմեռը, ձմեռանը, ձմեռան ժամանակ:

Չմերոց, ի, ագ. գ. ձմեռը մնալու՝ անց կացնելու տեղ, ձմեռանոց:

Չորձ, ոյ, ոց. գ. 1. շոր, զգեստ, վերնահագուստ. 2. քուրձ:

Ղ

Ղակիշ, կշի կամ կիշի, շաց. գ. գորք, բանակ:

Ղոզել, եցի. չ. թաքնվել, պահվել, ծածկվել, պահ մտնել, թաք կենալ:

Ղոզել(3ԱԼ), եցայ. չ. թաքնվել, պահվել, ծածկվել, պահ մտնել, թաք կենալ:

Ղոզել(3ԱԼ), եցայ. չ. լողալ:

Ղոզեցուցանել, ցուցի, ցո՛ւ. պր. թաքցրնել, պահել, ծածկել:

Ճ

Ճակար յօրինել յարդարել, գորք դասավորել, ճակատ կազմել պատերազմելու համար:

Ճապաղել, եցի. ն. շաղ տալ, փռել:

Ճառագրել, եցի. ն. 1. նկարագրել, պատմել. 2. գրի առնել, շարադրել, արձանագրել:

Ճարակել, եցի. **Ճարակել**(իմ), եցայ. ն. հ. 1. կերակրել, սնել. 2. արածել:

Ճենճեր, ոյ կամ ի, իւ, ագ. գ. 1. եփվող

կամ խորովվող մսի գոլորշի՝ հոտ. 2. զոհի հոտ և ծուխ:

Մ

Մախաղ, ի, ից. գ. տոպրակ, պարկ:

Մածանել(իմ), ծայ. **Մածնուլ**, ծեայ. չ. 1. կպչել, 2. բանձրանալ, պնդանալ, մակարդվել:

Մայր, ի, իւ, ից, իւք. գ. մայրի կամ եղևին ծառը:

Մայրատր, ի, ագ. գ. 1. մայրի ծառերի անտառ. 2. ընդհանրապես՝ անտառ:

Մայրի, բոյ կամ բոյ, ըեսգ կամ բաց. գ. 1. ամուսառ. 2. գազանների որջ:

Մանուկ, նկան, կուրք, կանց. գ. 1. երեխա, մանուկ. 2. զինվոր, կտրիճ՝ քաջ զինվոր. 3. ա. փոքր, մանր, մատղաշ. 4. մանկական:

Մանրապոր, գ. թղթաբեր, սուրհանդակ:

Մանրագոր, գ. մորմազգիների ընտանիքին պատկանող թունավոր բույս:

Մաշկաարզան, ի, ագ. գ. կաշվով պատած վրան պարսից թագավորների կանանոցի համար:

Մափեան գունդ, պարսից ընտիր հեծելազորի գունդ:

Մաբուցանել, տուցի, տո՛ւ. պր. 1. մոտեցնել. 2. տալ, մատուցել, նվիրել:

Մաբչել(իմ), տեայ, տի՛ր. չ. 1. մոտենալ, մոտ գնալ. 2. դիպչել, շոշափել:

Մարախ, ոյ, ով, ոց, ովք, և աւ, օք, գ. մորելխ:

Մարդպետ, ի, ագ. գ. ներքինապետ:

Մարդպետութիւն, գ. մարդպետի աստիճանը՝ պաշտոնը:

Մարզիկ, գ. կռվող զինվոր, մարտիկ:

Մարթել, թացի. չ. կարողանալ:

Մարթ է, **Մարթի**, եր. կարելի է, հնարավոր է, արժան է:

Մարի, բոյ. ըեսգ. գ. էգ թռչուն:

Մեծամոր, ա. շատ ամուր. լավ ամրացրած:

Մեծաբուն, տան, տնոյ, տնի, տանց. ա. հարուստ:

Մեկնել, եցի. ն. 1. գատել, բաժանել. 2. տարածել, երկարացնել (ձեռքը). 3.

պարզել, մեկնել, հասկացնել. 4. թարգմանել:

Մեկնոց, ի, ագ. գ. վերարկու, քիկնոց:

Մեհեան, հենի, ից կամ ագ. գ. 1. կռատուն, հեթանոսական տաճար. 2. զոհարան, զոհասեղան. 3. կոռք, արձան:

Մեղանչել, մեղայ, մեղուցեալ. չ. 1. մեղք՝ չարիք՝ հանցանք գործել, սխալվել. 2. վնասել:

Մեղի, ի, ից. ա. 1. մեղմ, թույլ, փափուկ. 2. կամագորկ, թուլամորթ:

Մեղկանալ, ագայ. չ. թուլանալ, փափկել, թուլամորթ դառնալ:

Մեղկել, եցի. ն. թուլացնել, մեղմացնել:

Մեղսասն, ի, ից. թ. տասմեկ:

Մերժել, եցի. ն. 1. հեռացնել, վռնդել, զրկել. 2. ժխտել, հերքել:

Մերկարիպ, ա. ստինքները մերկացրած, կուրծքը բաց:

Մերկել, կացի, կաց կամ կեսաց, կեա՛. ն. 1. հանել, մերկացնել. 2. չ. մերկանալ, հանվել:

Մեքենատրուփին, գ. 1. հնարք, վարպետություն. 2. խաբեություն:

Մէջ, ոյ, ով, ի միջի, մէջք, միջոց, ովք կամ ագ, օք. գ. 1. մեջտեղը. 2. մեջք (մարդու և կենդանու), գոտկատեղ. 3. ա. միջին, կես: **Մէջգիշերոյ**. կեսգիշեր:

Մթար, ի, ագ. ա. գ. 1. մութ, աղոտ. 2. ճպուռ, աչքի կեղտ:

Միահաղոյն, մ. 1. միանգամից, մեկից. 2. միահամուռ, խմբովին. 3. անընդհատ, շարունակ. 4. իսկույն, անմիջապես:

Միամիտ, մտի, տաց. ա. 1. անմեղ, անխարդախ, 2. հավատարիմ, մտերիմ. 3. հաստատ հույսով:

Միանգամայն, մ. 1. միանգամից, մեկից. 2. միաժամանակ. 3. միատեղ. 4. մի անգամ:

Միաշարաթի, թոյ կամ թոջ. գ. կիրակի:

Մինչ զի, չ. այնպես որ, այնքան որ, որ:

Մինչև, մ. դեռ չ..., բանի դեռ չ..., մինչև որ:

Միջոց, ի, ագ. գ. 1. մեջտեղը, մեջը, 2. միջոց (ժամանակի վերաբերյալ). 3. տարածություն:

Միջօրեայ, ըէի, ից. **Միջօրէ**, ա. 1. կեսօրվա, կեսօրի. 2. հարավային. 3. գ. կեսօր. 4. հարավ:

Միտ, մտի, մտաւ, **միտք**, մտաց, մտօք. գ. 1. միտք, խելք, բանականություն. 2. իմաստ: **Զմրաւ ածել**, մտածել, խորհել:

Ի միտ առնուլ, հասկանալ, իմանալ, ըմբռնել: **Ի մտի դնել**, մտքում դնել, մտադրվել:

Միտել, եցի. ն. 1. խորել, ներս մտցնել. 2. ձեռնարկել, ձեռք զարկել:

Մկանունք, նանց կամ **Մկանք**, նաց. գ. 1. քիկուրք, մեջք. 2. ալիքներ:

Մնչին, գ. մեղմ հեծեժանք:

Մոգ, ու, ուց կամ ի, ագ. գ. 1. գրադաշտական կրոնի հոգևոր պաշտոնյա, քուրմ. 2. կախարհ. աստղագուշակ:

Մոլախինդ, խնդի, իւ. գ. հովանոցավորների ընտանիքին պատկանող թունավոր բույս:

Մոլաթ, ի, ագ. կամ ից. ա. 1. մոլորեցնող, խաբեբառ. 2. մոլորված. 3. քուրմ, սխալ, ծոռ:

Մոլել(իմ), եցայ. չ. ցնդել, խելքը թոցնել, խենթանալ:

Մոյգ կամ **Մոյկ**, մուկի, կաց. գ. կոշիկ, ոտնաման, հողաթափ:

Մորենի, նոյ. գ. վարդագիների ընտանիքին պատկանող փշոտ թուփ, մորմենի:

Մուծանել, մուծի, մո՛յծ. պր. մտցնել:

Մուրասարան, գ. մրտենիների անտառ:

Մրաղիպ, ա. մ. 1. հոժարակամ. 2. սիրով, հոժարությամբ:

Մրատր, ի, ագ. ա. 1. միտք ունեցող, մտածող. 2. բանական, իմացական:

Մրցել(իմ), եցայ. չ. 1. ծեծկվել, բռուցքով հարվածել. 2. քաջաբար կռվել, մարտնչել, պատերազմել:

Մօր, ի, ից կամ ագ. գ. տիրմ, ցելխ, ճահճոտ տեղ:

Յ

Յագել, եցի. ն. 1. գոհել, զոհաբերել. 2. հոշոտել:

Յաղագս, նխ. 1. համար. 2. մասին, վերաբերյալ:

Յաղթահարել, եցի. ն. 1. հաղթել, պարտության մատնել. 2. ընկճել, նվաճել. 3. իշխել, տիրել:

Յանախել, եցի. ն. շատացնել, ավելացնել. չ. շատանալ, ավելանալ, բազմանալ:

Յամել, եցի. ն. **Յամենալ**, եցայ. չ. ուշացնել, ուշանալ:

Յայր, ի, ից. 1. ա. հայտնի. 2. մ. հայտնապես, հայտնի կերպով: **Յայր է**, հայտնի է, պարզ է:

Յանգեղս. մ. չիմանալով:

Յանդիման առնել կամ **կացուցանել**. 1. ներկայացնել, ցույց տալ. 2. ապացուցել. 3. հանդիմանել, խրատել:

Յանդիման լինել(իմ) կամ **կալ**. ներկայանալ, առջև ը կանգնել:

Յանցանել, ցեայ, ցի'ր, ցուցեալ. չ. հանցանք գործել, մեղանշել, մեղք գործել:

Յաշր, ի, ից. գ. գոհ, մատաղ, գոհաբերություն:

Յառաջնմէ, Յառաջնում. մ. սկզբից, առաջուց, սկզբում:

Յառնել, յարեայ, արի', յարուցեալ, չ. 1. վեր կենալ, ոտքի կանգնել, բարձրանալ. կենդանանալ, հարություն առնել. 2. քնից արթնանալ:

Յարակել, եցի. ն. 1. քանդել մինչև հատակը, գետնին հավասարեցնել. 2. սալահատակել, հարթել:

Յարանել, յատի, յա'տ. կամ **Յարել**, եցի. ն. էտել, ավելորդ ճյուղերը կտրել:

Յարդարել, եցի. ն. 1. զարդարել. 2. կարգավորել, կոկել, շտկել. 3. պատրաստել, հորինել:

Յատելույ, լի, ւել'. ն. ավելացնել, շատացնել. չ. ավելանալ:

Յեղակարծ, Յեղակարծում. մ. հանկարծ, անսպասելի կերպով:

Յեղյեղել, եցի. ն. փոխել, վերածել, դարձնել մի բանի:

Յեղույ, դի, յե'ղ. ն. 1. փոխել, փոփոխել, շրջել, դարձնել. 2. թարգմանել:

Յենույ, եցայ, ցի'ր. չ. հենվել, կռթնել, թիկնել:

Յեպ. նխ. մ. հետո:

Յեգս. մ. ետ, դեպի ետ, ետև ից:

Յերկուանալ, ացայ. չ. կակածել, տարակուսել, երկմտել:

Յո՞. մ. ո՞ր, դեպի ո՞ր:

Յողով, ի, ից. ա. շատ, բազում, բազմաթիվ:

Յոյժ. մ. ա. խիստ, սաստիկ, սաստկապես. շատ, մեծ:

Յորժամ. մ. երբ:

Յորսայս, Յորսայսեալ. մ. երեսն ի վեր՝ մեջքի վրա պառկած:

Յուզել, եցի. ն. 1. փնտրել, որոնել, պրպտել, խուզարկել. 2. տակնուվրա անել, խառնել, շարժել. 3. գրգռել:

Յուլանալ, ացայ. չ. 1. ծուլանալ, թուլանալ, դանդաղել. 2. անհոգ ու անփույթ լինել:

Յուլարկել, եցի. ն. 1. ճանապարհ դնել, ուղարկել. 2. հուղարկավորել:

Յո՛ւշ. ձ. գոուշացի'ր, գոուշ եղի'ր. հիշի'ր:

Յուռոյթ, ոքի, մանավանդ՝ **Յուռոյթք**, ոքից կամ ոց. գ. 1. կախարհություն, հնալուսություն. 2. թախանձ, համայիլ:

Յոդել, եցի. ն. գողել, կապկպել, կցել, հարմարեցնել:

Յոշել, եցի. ն. հռչոտել, բզկտել, պատառապատառ անել, մաս-մաս կտրտել:

Յօրինել, եցի. ն. 1. ստեղծել, շինել, կառուցել. 2. շտկել, կարգավորել, հարմարեցնել. 3. շարադրել:

Յօրինուած, ոյ, ոց, կամ ի, աց. գ. 1. շենք, շինվածք. 2. գարդ:

Ն

Նա. շ. մանավանդ թե, նույնիսկ, այլ, իսկ: **Նա աանիկ**. 1. ահա, ահավասիկ. 2. բայց, այժմ, իսկ: **Նա զի**. մանավանդ որ:

Նախանձ, ու, ուց. գ. 1. նախանձ. 2. վրեժ, վրեժխնդրություն. 3. եռանդ:

Նախանձ արկանել. նախանձը շարժել՝ գրգռել:

Նախանձուկս արկանել. նախանձը շարժել:

Նախնիրք. գ. սաստիկ կոտորած, մեծ վնաս, չարիք:

Նաշիճ, շիոյ կամ հոյ. գ. ընտիր՝ ճերմակ այլուր:

Նարօր, ու, ուց կամ ի, աց. գ. գույնը-գույն թելերից հյուսված հաստ թել՝ կտոր, հյուսվածք:

Նաւասարդ, ի, աց. գ. հին հայկական տոմարի առաջին ամիսը, որով սկսվում էր նոր տարին:

Նեռն, ոին, ոինք. գ. 1. հակաքրիստոս, սուտ մեսիա. 2. փխբ. չարագործ մարդ. 3. ա. չար, դաժան:

Ներկուած, ոյ, ոց. գ. 1. ներկվածք. ներկ. 2. բիծ, արատ:

Ներքինի, նոյ, նեաց, ա. գ. 1. ամորձատված տղամարդ. 2. պալատական պաշտոնյա (մանավանդ՝ ամորձատված)՝ արքունի կանանոցում:

Նիշ գ. կետ, նշան: **Այս նիշ**. այս նշանը կրող, այսինչ:

Նկանակ, ի, աց. գ. հացի բլիթ:

Նհանգ, ի, աց. գ. գետածի, ջրային առասպելական գազան:

Նշան, ի, աց. գ. 1. նշան. 2. հրաշք, 3. դրոշ. 4. դրոշմ:

Նշանագիր, գրոյ կամ ի, աց. գ. տառ, գիր, այբուբեն:

Նշանակապ. ա. նշաններով՝ զարդերով հյուսած՝ զարդարած:

Նշանակ, ի, աց. գ. նպատակակետ. 2. նախատիք. 3. խայտառակություն:

Նշկահել, եցի. ն. 1. արհամարհել, անարգել. 2. ապստամբել:

Նշոյլ, ուլի, ից կամ աց. գ. ճառագայթ, շոյ, ցուլք:

Նոխազ, ի, աց. գ. արու այծ, քոշ:

Նողկացուցանել, ցուցի, ցո՛. պք. զըզվեցնել, փսխել տալ:

Նու, նուոյ, ով կամ աւ, նուք, նուոց կամ նուանք, անց. գ. հարս:

Նուազ, ի, աց. գ. 1. գավաթ. 2. գինի խմելը:

Նուազ, ի. գ. մ. 1. ժամանակ. 2. անգամ: **Առ մի նուազ**. 1. մի անգամ. 2. այժմ:

Նուանել, եցի. ն. 1. տիրել, իրեն ենթարկել. 2. լռեցնել:

Նուիրակ, ի, աց. գ. 1. հասարակ զինվոր՝ հրամանակատար. 2. պալատական սպասավոր, հասարակ պաշտոնյա:

Նրան, ի, աց. գ. սուսեր, դաշույն, թուր:

Շ

Շաբաթամուր, մտի, ից. գ. 1. շաբաթվա արարողություններն սկսելը. 2. ուրբաթ երեկո, երբ սկսվում էր հերթական շաբաթը:

Շահապետ, ի, աց. գ. որոշ վայրեր պահպանող ոգի:

Շահարակել(իմ) եցայ. չ. առաջ վազել, գրոհել, հարձակվել:

Շաղաշուր. ա. ցոփ, ստոր, անմիտ:

Շամբ, ի, ից. գ. եղեգ, եղեգնուտ:

Շամբշուփուն կամ **Շամշուփին**. գ. մոլի ցանկություն, կրքոտություն:

Շեշր. մ. շեշտակի:

Շիկափուկ. ա. ծիրանագույն երկար կաշուց պատրաստած:

Շինած, տե՛ս **Շինուած**:

Շինուած, ոյ, ոց. գ. շենք. շինվածք, շինություն:

Շինուփին. գ. 1. շինելը, շինվելը. 2. բարեկարգություն, շեն լինելը. 3. խաղաղություն, հաջողություն:

Շիջանել(իմ) շիջայ. չ. հանգչել, մարել:

Շնորի, ի, իւ կամ աւ, աց. օք. գ. 1. պարգև. 2. ձիրք, շնորհք. 3. բարիք, ողորմածություն. 4. շնորհակալություն: **Շնորիս առնել**, շնորհել, ներել: **Շնորի ունել**. շնորհակալություն հայտնել, շնորհակալ լինել: **Շնորիս գրանել**. հաճելի՝ սիրելի լինել:

Շոգի, գոյ, գեաց. գ. 1. գոլորշի. 2. շունչ:

Շուրջանակի. մ. չորս կողմից, ամեն կողմից:

Շրապ, ի, աւ կամ իւ, ու նյ, ով. գ. խուճապ, տագնապ: **Շրապ փազնապի**, տե՛ս **Շրապ**:

Շրջել, եցի. ն. շուռ տալ, փոխել:

Շփոթել, եցի. ն. 1. հուզել, վրդովել, իրարանցում գցել. 2. խառնակել:

Ո

Ո. դ. ով:

Ոգի, ոգով, տոց կամ եաց. գ. 1. շունչ, հոգի, մարդ. 2. չար ոգի, դև. 3. կյանք, սիրտ. 4. քամու փչելը:

Ողն, ողին, դամբ, դունք, դանց. գ. 1. թիկունք, մեջք, կռնակ. 2. ողնաշար:

Ողորմ, ոյ, ով. 1. գ. գուք, ողորմություն, ցավակցություն. 2. ա. ողորմելի, խղճալի, խեղճ. 3. մ. ողորմագին, խղճալի կերպով:

Ողորմել(իմ), եցայ. եաց կամ եա՛. չ. խղճալ, գթալ, ողորմություն անել:

Ողորք, ոյ, ով. գ. 1. աղաչանք, թախանձանք. 2. շողորթություն:

Ողջամբ. մ. ողջ և առողջ:

Ողջոյն. ա. 1. ողջ, ամբողջ, բովանդակ. 2. մ. ամբողջապես, բոլորովին:

Ոսկիկմբեայ, **Ոսկիկմբե**. ա. որի միջին ուռուցիկ մասը ոսկուց է (վահանի մասին):

Ոսր, ոյ, ոց. գ. 1. ճյուղ. 2. բլուր, մի փոքր բարձր տեղ:

Ոսրանիկ, նկի, նկաց. ա. արքայական տոհմից սերված, ազնվական, թագավորական:

Ոսրիկան, ի, ա. գ. վերակացու, գլխավոր իշխան, կուսակալ:

Ոսրչել(իմ), ոստեայ, տուցեայ. չ. ցատկել, թռչել:

Ոսրն, ոսին, ոսամբ, ոսք, ոսից. գ. 1. ոսք. 2. նմանությամբ՝ լեռան ստորոտ: **Յոսրն կալ**. ոսքի ելնել, կանգնել, վեր կենալ:

Որեար, որերոյ կամ եարոյ, ով, որեարք. գ. մարդկանց խումբ, որոշ խումբ մարդիկ: **Աագ որեար**. ազնվականներ, ազնվականների խումբ:

Որթ¹, ոյ, ոց. գ. 1. խաղողի տունկ. 2. որթի ճյուղերից հյուսած կողով:

Որթ², ու, ուց. գ. հորթ, մոզի:

Որձաքար, ի, աց. գ. կարծր քար, ապառաժ:

Որումն, ման, մունք, մանց. գ. հացագլխների ընտանիքին պատկանող մոլախոտ:

Որոշել, եցի. ն. 1. սահմանել, կարգել. 2. գանազանել, ընտրել, ջոկել. 3. գատել, բաժանել. 4. որոշել:

Որոջ, ի, աց. կամ ից. գ. գառ, գառնուկ:

Ուլն, լան, լունք, լանց. գ. վիզ, պարանոց:

Ուխար, ի, ից. գ. 1. խոսք տալը, խոստում, երդում. 2. դաշինք, պայման. 3. սաստիկ բաղձանք, աղոթք. 4. միաբանություն. 5. վանք, ուխտատեղ:

Ուղեշ կամ **Ուղեշ**, ի, աց, օք կամ ից, իք. գ. ճյուղ, ընձյուղ:

Ունել(իմ), կալայ, կալ՛ կամ կա՛. հ. 1. ունենալ, կա. 2. առնել, տիրել, տեր լինել. 3. բռնել, պահել. 4. վերցնել, տանել. 5. համարել. 6. վերաբերություն՝ առնչություն ունենալ. 7. կալողանալ:

Ունկն, կան, հոգն. ականջք, ջաց. գ. ականջ:

Ունջ, ընջոյ, ջոց կամ ջաց. գ. 1. անկյուն, բունջ, ծայր. 2. գետին, հատակ, տակ:

Ուշ, ոյ, ով, ովք և ի, իւ. գ. 1. հիշողություն, միտք, խելք. 2. ուշադրություն, գգոշություն: **Ուշ առնել՝ առնուլ՝ դնել՝ ունել՝ կալ**. լավ նայել, ուշադիր լինել, ջանալ, գգոշանալ: **Յուշ լինել ունք**, միտքը գալ, հիշել:

Ուռնուլ, **Ուռչել(իմ)**, ռեայ. չ. 1. ուռչել. 2. փխք. հպարտանալ, գոռոզանալ:

Ուռումնակից, կցի, ցաց. ա. գ. 1. միասին սովորած, դասընկեր. 2. մեկտեղ սովորեցնող. 3. կրոնակից, դավանակից:

Ուռումն, սման, սմունք, մանց. գ. 1. ուսում, գիտություն. 2. կրոն, աղանդ:

Ուսրեմն. մ. մի տեղից, ինչ-որ տեղից:

Ուսրեք, տե՛ս **Ուսրեմն**: **Ուսրեք ուսրեք**. գանազան կողմերից, այս ու այն կողմից:

Ուսրի. 1. գ. որտեղից, որտեղից որ. 2. շ. ուստի, ուրեմն:

Ուսրր, տեր, երաց. գ. արու զավակ, տղա:

Ուրասար. գ. ուրանալը: **Յուրասար լինել՝ կալ**. ուրանալ:

Ուրեք. 1. մ. մի տեղ, որևէ տեղ. 2. դ. ինչ-

որ, որևէ: **Ուրեք ուրեք**. մ. 1. տեղ-տեղ. 2. երբեմն-երբեմն: **Է ուրեք**. լի-նում է տեղ որ..., պատահում է որ...:

Ուրոյն. 1. մ. մի կողմ, առանձին, հեռու. 2. նխ. գատ, առանց. 3. ա. հատուկ, մասնավոր, առանձին, ուրույն:

Ուր ուրեք, մ. 1. ուր որ լինի. 2. երբ որ լինի:

Չ

Չարալուկ. ա. մ. 1. չարաչար լլկված՝ խոշտանգված՝ ծեծկված: 2. չարաչար լլկող, խոշտանգիչ:

Չարախարավար. ա. դաժան, դժնդակ, անտանելի, խիստ վատ:

Չարաշուք. ա. 1. խղճալի, ողորմելի. 2. վատթար, դժնդակ. 3. չարաբարո, անօրեն:

Չարախարավար. 1. ա. տե՛ս **Չարախարավար**. 2. մ. չարաչար, չարաչար կերպով:

Չարակն, կան, կունք, կանց. ա. չար աչք ունեցող, նախանձոտ:

Չարամահ առնել՝ լինել(իմ). չարաչար կերպով սպանել՝ սպանվել:

Չափատր, ի, աց. ա. 1. սովորական, հասարակ. 2. նվաստ, խոնարհ. 3. պարկեշտ, համեստ, չափավոր:

Չգոյ, ի, ից. ա. գ. չեղած, գոյություն չունեցող: **Առ ի չգոյե**. չլինելուց:

Չերեց, ռիցու. գ. անարժան՝ սուտ քահանա:

Չեւ, Չև ևս. մ. դեռ չ..., դեռ չեղած:

Չերն. նա որ չկար, չեղածը:

Չիք. չկա:

Չորեքդասան, ի, ից. թ. տասնչորս:

Չու, չուոյ, ոց. գ. գնալը, տեղից տեղ շարժվելը, չվելը, ճանապարհվելը, գաղթելը: **Չու առնել, Ի չու անկանել(իմ)**. ճանապարհվել, տեղափոխվել, գաղթել:

Չուառ. ա. թշվառ, խեղճ, ողորմելի:

Պ

Պարարկապ. ա. զարդարուն, զարդարանք ունեցող:

Պակասել, եցի, **Պակասել(իմ)**, եցայ, չ. 1. պակասել, նվազել. 2. տկարանալ, թուլանալ, մարել:

Պակշորություն. գ. անառակություն, վավաշուտություն:

Պակուցանել, կուցի, կո՛. պք. խիստ վախեցնել, ահաբեկել, սարսափեցնել:

Պահանգ կամ **Պահանկ**, ի, աց. գ. պատի շարվածքի մեջ դրված փայտ կամ այլ իր՝ շարվածքի ամրության համար:

Պահ արկանել, **Պահ ունել(իմ)**. պահպանել, պահել:

Պահող, ի, աց. ա. ծոռ պահող, քիչ ուտող, ժուժկալ:

Պահպանակ, ի, աց. գ. մարմինը արտաքին հարվածից պաշտպանող զրահներ:

Պահք, հոց. գ. պաս, ծոռ:

Պահուճել, եցի. ն. 1. զարդարել, գեղեկացնել, պճնել. 2. զմռսել, օժել:

Պայ, ի, ից. գ. առասպելական մտացածին կենդանի՝ մարդուց սերված:

Պայազպություն. գ. հաջորդություն իշխանության կամ սերնդի:

Պաշրօն, տաման, մունք, մանց. գ. 1. պաշտելը, պաշտամունք, երկրպագություն. ժամերգություն, պատարագ, աղոթք. 2. ծառայություն. 3. հեթանոսական աստվածներ (չաստվածներ). 4. մարդահաճություն, հաճույական բան: **Պաշրօն առնուլ**. պաշտվել: **Պաշրօն հարկանել**. պաշտել:

Պաշրօնեայ, նէի, ից, գ. պաշտող, սպասավոր, ծառա:

Պասքել(իմ), եցայ. չ. սաստիկ ծարավել, նմանությամբ՝ տենչալ, փափագել:

Պասր առնուլ. շուրջը պատել, մեջ առնել, շրջապատել:

Պասրասխանի առնել. պատասխանել, պատասխան տալ:

Պասրապ, ի, աց. գ. 1. գոհ, 2. նվեր, ընծա. 3. կաշառք:

Պասրենագէն, զինի, նաց. ա. զրահավոր:

Պասրերագմագլուխ. գ. պատերազմի զլխավորը, հրամանատար:

Պասրկանդարան. ի. գ. նետերի աման, կապարճ:

Պապմունճան, ի, աց. գ. երկար զարդարուն զգեստ. 2. ընդհանրապես՝ զգեստ:

Պապուհասել, եցի. ն. 1. պատժել, տանջել, չարչարել. 2. սաստիկ հանդիմանել, անարգել:

Պապրել, եցի. ն. խաբել, խելքից հանել:

Պարարակ, ի, աց. ա. պարարտ, բուսած, գեր:

Պարսել, եցի. ն. հաղթել, պարտության մատնել:

Պարսել (իմ. պակասավոր բայ). 1. պարտական լինել, պարտավոր լինել. 2. պարտք ունենալ. 3. պետք է որ:

Պարս է. եք. պետք է:

Պէտք. գ. հարկավորություն, պետք եղած բանը, պիտույք: **Պէտք յանձին ունել** (իմ). հոգալ: **Ի պէտքս**. համար:

Պիտոյ է. եք. պետք է, պատշաճ է:

Պնդաղեսպան, ի, աց. գ. արագընթաց սուրհանդակ, պատգամատար:

Պնդել, եցի. ն. 1. պնդացնել, ամրացնել. 2. կապկպել:

Պնդել (ՅԱԼ), եցայ. չ. 1. համատել. 2. վագել:

Պուղել, եցի. ն. վանել, ցրել, քշել:

Պսակասեր. ա. իր անուսումն՝ պսակին հավատարիմ:

Ջ

Ջամբել, եցի. ն. 1. մանր պատառնեքով՝ փոքրիկ կտորներով կերակուր՝ սնունդ տալ. 2. սնել, կերակրել, խմեցնել. կաթով սնուցանել. 3. մատակարարել:

Ջայլել, եցի, **Ջայլել** (իմ), եցայ. չ. խմբովին ողբալ՝ լաց լինել՝ լաց ու կոծ անել մեռելի վրա:

Ջան, ի, ից և ոյ, ու, ուց. գ. ճիգ, ջանք, աշխատանք:

Ջեռնուլ, ջեռայ, ռեալ կամ ռուցեալ. չ. 1. տաքանալ, ջերմանալ. 2. բորբոքվել, կրակ կտրել. 3. թուխ և ըստել (թռչունի մասին):

Ջեր, ոյ, ոց կամ ի, ից. գ. 1. տաքություն, ջերմություն, տապ, տոք. 2. տաք՝ բարեխառն եղանակ, ջինջ՝ ա-

նանպ երկինք. 3. ա. տաք, շոգ, ջերմ, բարեխառն:

Ջերմուկ, մուկք, մկաց. գ. գետնից բխող տաք ջրի աղբյուր. տաք լողարաններ:

Ջերուր. ա. տաք, ջերմ, բարեխառն:

Ջիլ, ջիլ, ջլաց. կամ **Ջիղ**. գ. 1. ջիլ. 2. (ջիլերից՝ մանրաթելերից պատրաստած) ձգտան, թոկ, լար. 3. փխր. ուժ. գորություն:

Ջրել, եցի. ն. 1. ջնջել, ավերել, ոչնչացնել, եղծանել. 2. դրժել, խախտել. 3. հերքել. 4. ջուր տալ, ջրել, ռոռզել:

Ջրթափել, եցի. չ. մեծանալ, չափահաս դառնալ, արբուճքի հասնել:

Թ

Թագմ, ի, ից. կամ մուրք, մանց. գ. 1. մարտի՝ կռվի պատրաստվող գորքի ճակատ. 2. ճակատամարտ, կռիվ:

Թոճիկ, ճկի, աւ կամ ով, կաց. գ. ամեն օրվա ուտելիքի պաշար, օրվա պարեն, օրապահիկ, թոշակ:

Ս

Սակ, ի, աւ կամ ով, ից. գ. 1. սահմանված կարգ, պայման, չափ, թիվ. 2. օրենք, դաշինք. 3. սահմանված տուրք, հարկ: **Սակ արկանել**. սակարկել, գին նշանակել:

Սակաւ, ու, ուց. ա. քիչ, չափավոր, մի քիչ, պակաս: **Սակաւ ինչ, առ սակաւ մի**. մի քիչ, մի փոքր: **Սակաւ սակաւ, առ սակաւ սակաւ**, քիչ-քիչ: **Սակաւտար**, ի, աց. ա. 1. թվով քիչ. 2. քիչ բան ունեցող, չքավոր:

Սակուր, կրի, ռաւ. կրաց, կրօք. գ. կացնի ձև ունեցող պատերազմական զենք:

Սակս, ի սակս. նիւ. պատճառով, համար: **Յոր սակս**. ինչ պատճառով, ինչ բանի համար:

Սակր, կեր, կերք կամ կրով. տես **Սակուր**: **Սան**, ու, ուց. գ. 1. սան, ձեռքի տակ սնած՝ մեծացած երեխա. 2. սանիկ:

Սառնահալ. ա. սառույցները հալած (զետի մասին):

Սառնամանի, նույ, սառնամանիք, նեաց. գ. 1. սառնամանիք. 2. սառույց:

Սասար, ի, ից. գ. 1. սաստիկ հրաման, ահավոր սպառնալիք. 2. պատիժ, պատուհաս:

Սագակել, եցի. ն. 1. հիմնատակ ավերել, բնաջնջել, կորցնել. 2. սպանել, կոտորել, կր. սատկել, մեռնել, սպանվել:

Սագակումն, կման. գ. կոտորած, չարաչար մահ:

Սագանայակիր. ա. 1. դիվահար. 2. սատանայական:

Սագար, ի, աց. գ. 1. գործավոր, մշակ. 2. օգնական, գործակից, 3. օգնություն. 4. պատճառ, առիթ:

Սարակ, ի, աց. գ. 1. փոքր լեռ, բլուր. 2. լեռան տափարակ գագաթ:

Սարիք. բեաց. գ. պարան, շղթա, կապանք:

Սարսել, եցի կամ **Սարսել** (իմ), եցայ. չ. դողալ, տուկալ, սարսափել, քաշվել:

Սեաւ, սև ոյ, ոց կամ սև ի, ից. ա. 1. սև. 2. փոխանությունը՝ սև ձի:

Սեղանատր, ի, աց. գ. դրամափոխ:

Սեպիական կամ **Սեփական**, **Սեփական**, ի, աց. ա. սեփական, հայրենի:

Սիգալ, ացայ կամ ացի. չ. հպարտանալ, մեծամտել, գոռոզանալ:

Սիղոբայ, **Սիղոբայ**, **Սիղոբայ**..., ի, ից. գ. վանկ, հնչյուն, տառ:

Սկայ, ի, ից. ա. գ. հսկա, քաջ:

Սկիզբն առնել՝ առնուլ՝ ունել. սկսել:

Սնար, մանավանդ՝ **Սնարք**, ի, ից. գ. 1. գլխավերև. 2. գլխատակ, ծոծրակ. 3. գլխատակի բարձ. 4. մանությունը՝ լեռան գլուխը:

Սողոխ կամ **Սղոխ**, ի, ից. գ. մեղմ քամի: **Սորսորել**, եցի. չ. 1. հոսել, թափվել. 2. ցրվել:

Սող, սղի, ից. ա. քիչ, նվազ, բարակ, նուրբ, կարճ: **Սող ինչ**. մի փոքր, փոքր-ինչ:

Սունատր, ի, աց. գ. սվինավոր, սվին կրող:

Սպառ, ի սպառ. գ. 1. սպառվելը, վերջանալը, վախճան. 2. վերջ. 3. մ. մինչև վերջ:

Սպառել, եցի. ն. 1. սպառել, վերջացնել. 2. ոչնչացնել, բնաջնջել:

Սպաս, ու, ուց. գ. 1. աման, գավաթ, սպասք, զարդ. 2. սեղան. 3. կերակուր. 4. պաշտոն, ծառայություն:

Սպասատրոթին հարկանել՝ մարուցանել. ծառայել, սպասարկել:

Սպարակիր. ա. գ. վահան կրող, վահանավոր:

Սպարափակ առնել. վահաններով փակել:

Սքացուած, ոյ կամ ի, ոց. գ. ունեցվածք, սեփականություն:

Սքիպաւ, **Սքիպուվ**. մ. 1. շտապելով, փութով. 2. ստիպելով, հարկադրելով:

Սքիպել, եցի. ն. շտապեցնել:

Սքրապելապ, ի, ից. գ. գորավար, սպարապետ:

Սքրջանալ, ջացայ. չ. 1. գղջալ, 2. ետ քաշվել մի բանից. 3. սրտնեղվել:

Սրահակ, ի, աց. գ. 1. փոքր սրահ. 2. սրահի վարագույր. 3. վարագույրով առանձնացված ներսի սենյակ. 4. հարսի առանձնասենյակ, ննջարան:

Սրսկապան, ի, աց. գ. նորել հարսների համար հատկացված ներսի սենյակ՝ բաժանված վարագույրով:

Սրարթափ, ի, ից. ա. մ. 1. սիրտը կոտրած, սրտաբեկ, վիատված. 2. վախեցած, զարհուրած:

Սրարթափումն. գ. սրտաբեկություն. վիատություն, զարհուրանք:

Սրարկաթ. ա. կարտազին, սիրավառ, խանդակաթ:

Սրրի մրօք. սրտանց, հոժարությամբ:

Սրրմրել, եցի. չ. բարկանալ, զայրանալ:

Սրրմրություն. գ. բարկություն, զայրույթ:

Սփածանելի, լույ, լեաց. գ. մեջքը կապելու լաթ կամ ձորձ. գոգնոց, դեմզակ, ծածկոց:

Վ

Վախճան, ի, աց. գ. 1. վերջ, ավարտ. 2. մահ:

Վաղի, դուի, դուէ. 1. գ. վաղվա օրը, ա-

ռավոտը. 2. մ. վաղը, առավոտյան:
Վաղին, ի վաղին, առ վաղի, ի վաղի անդր. վաղը, հաջորդ օրը:
Վաղվաղակի. մ. շուտով, իսկույն, անմիջապես, շուտափույթ կերպով:
Վաղր, դեր, դերք. գ. կարճ սուր:
Վաղրատր, ի, աց. ա. վաղրով գինված:
Վաղթել, եցի. ն. դուրս թափել, դատարկել:
Վայրապար. 1. մ. իզուր, զուր տեղը. 2. ա. փուչ, անիմաստ:
Վայրել, եցի. ն. ցած թափել, շող տալ, կր. ցած թափվել, ցրվել:
Վայր մի, առ վայր մի. մ. մի պահ, մի փոքր ժամանակ:
Վանք, նաց կամ նից կամ նուց. գ. բնակարան, օթևան, կացարան. 2. մեցաստան:
Վառել, եցի. Վառել(իմ), եցայ. ն. չ. 1. սպառազինել, սպառազինվել, նախապատրաստել կամ նախապատրաստվել պատերազմի. 2. զարդարել, զարդարվել:
Վասն. նխ. 1. մասին, վերաբերյալ. 2. համար. 3. պատճառով:
Վասն զի. շ. որովհետև. որպեսզի:
Վասրակ, ոյ, ոց և ի, ա. գ. 1. աշխատանք, ծառայություն, վաստակ, 2. հոգևորություն. 3. տառապանք, չարչարանք. 4. շահ, աշխատանքի արդյունք. 5. ա. հոգնած:
Վաստակել, եցի և Վաստակել(իմ), եցայ. չ. 1. աշխատել, չարչարվել, տանջվել. 2. հոգնել:
Վասրասիրտ. սրտի, տաց. ա. վախկոտ, երկշոտ:
Վասրթարել, եցի. ն. 1. թուլացնել, տկարացնել, ընկճել. 2. անարգել, նախատել:
Վասրշուր, ուիրի, րաց. ա. չար, անըզգամ, անօրեն, չարագործ:
Վարարել, եցի. ն. քշել, ցրել, բաժանել:
Վարգել(իմ), եցայ. չ. վագել, սլանալ, սուրալ:
Վարդապետություն. գ. 1. ուսուցանելը, սովորեցնելը. 2. ուսում, ուսուցչություն. 3. քարոզ. 4. վարդապետի պաշտոնը:

Վարել, եցի. ն. 1. վար ու ցանք անել, վարել. 2. տանել, քշել. 3. կառավարել, կարգ դնել. 4. խոթել, ներս հրել. 5. չ. կյանք վարել:
Վարք, րուց, րուք. գ. 1. կենցաղավարություն, գործունեություն. 2. գործածելը, գործածություն:
Վառաշ կամ Վավաշ, ի, ից կամ աց. ա. անառակ, ցանկասեր, վավաշոտ, տոփոտ:
Վերանալ, ացայ. չ. վեր ելնել, բարձրանալ:
Վերձանել, եցի. ն. կարդալ:
Վերջորնել(իմ), չ. ետ քաշվել, ետ մնալ:
Վեզ, վիզի, աց. գ. վեճ, հակառակություն, կռիվ: **Ի վեզ գալ.** վիճել, հակառակել:
Վեմ, վիմի, աց. գ. կարծր թար, վեմ:
Վեք, վեք. գ. 1. մանր ալիք. 2. անցք, փոս:
Վիճակ, ի, աց. գ. 1. բախտ. 2. մեկին ընկած բաժին. 3. իշխանության տեղը, թեմ. 4. կալվածք, հող, արտ:
Վիրապ, ի, աց. գ. հոր, փոս:
Վիկույթին. գ. կախարդություն:
Վճարել, եցի. ն. **Վճարել(իմ),** եցայ. չ. 1. գլուխ բերել, կատարել, իրագործել, ավարտել, վերջացնել. 2. վախճանվել. 3. հատուցել:
Վճարումն, րման. գ. 1. վերջացնելը, ավարտելը, վերջ, ավարտ. 2. կյանքի վերջանալը, մահ:
Վճիռ հաբանել. վճռել, վճիռ կայացնել:
Վնաս. ու, ուց կամ ի, ից. գ. 1. վնաս. 2. անիրավություն, հանցանք, չարիք:
Վշտամբեր, ա. 1. նեղության դիմացող. 2. վշտալի:
Վրանգել, եցի. ն. **Վրանգել(իմ),** եցայ. չ. վտանգի մեջ գցել, չարչարել, նեղ ընկնել, նեղը գցել:
Վրասան, ի, աց. գ. տարածության չափ (մի նետընկեց):
Վրտել, եցի. ն. **Վրտել(իմ),** եցայ. չ. 1. տկարացնել, տկարանալ. 2. նվազեցնել, նվազել. 3. նեղել, նեղվել:
Վրիպել, եցի. Վրիպել(իմ), եցայ. չ. 1.

սխալվել, մոլորվել, շեղվել. 2. մեղանչել. 3. գրկվել:
Վրիպեցուցանել, ցուցի, ցո՛. պր. մոլորեցնել, խաբել, գրկել:

S

Տագնապ, ի, աւ կամ ով. գ. 1. դժվար կացություն, հոգեկան անհանգիստ վիճակ. 2. շտապելը, խուճապ, իրարանցում, շփոթմունք. 3. նեղություն, աղետ
Տագնապաւ. մ. շտապ կերպով, անպարելով, խուճապահար:
Տագնապել(իմ), եցայ. չ. խուճապի մատնվել, շտապել:
Տագր կամ Տայգր, գեր. գ. տղամարդ ամուսնու եղբայրը:
Տախր, ի, ից. գ. 1. աթոռ, մստարան, բազմոց. 2. գահ, գահույք:
Տածել, ծի կամ ծեցի. ն. խնամել, հոգ տանել, դարմանել:
Տակալին, Տակալին ևս. մ. դեռ, դեռևս, մինչև հիմա:
Տաղանդ կամ Տաղանք, ոյ, ոց կամ ի, աց. գ. արծաթ կամ ոսկի դրամի միավոր. քանքար (եբրայական):
Տանար, ի, աց. գ. 1. տանար, եկեղեցի. 2. կռատուն. 3. պալատ, ապարանք, արքունական սենյակ. 4. սեղանատուն. 5. խրախճանք, կերուխում:
Տանիկ, ճիկ, կաց. գ. ա. 1. արաբացի. 2. փխր. արագավագ, արագընթաց (կենդանի):
Տանուբեր, տեռն, տեռք կամ տերանց. գ. 1. տան տերը՝ մեծավորը. 2. նահապետ, ցեղապետ:
Տաշր, ի, ից. գ. 1. գավաթ, բաժակ, թաս. 2. տաշտ, կոնք:
Տաշրախի լինել(իմ), արմատախիլ լինել:
Տապ, ոյ, ով. գ. ջերմություն, տաքություն:
Տապալ. մ. թավալվելով, տապալվելով:
Տար. ա. օտար, հեռու, հեռավոր:
Տարաբերել(իմ), եցայ. չ. 1. տատանվել, տարուբերվել, ալեկոծվել. 2. տարակուսել, վարանել:

Տարագ, ու, ուց կամ ոյ, ոց կամ ի, ից. գ. կերպ, եղանակ, ձև:
Տարածամ. 1. ա. անժամանակ. 2. գ. ոչ հարմար ժամանակ. 3. մ. ուշ կամ կանուխ, հանկարծակի:
Տարակաց. մ. հեռվից, հեռու կանգնած:
Տարակուսել(իմ), եցայ. չ. 1. ծանր՝ անբանելի կացության մեջ ընկնել, շփարել. 2. կասկածել, երկմտել, տարակուսել. 3. չարչարվել, տառապել:
Տարապարտ, ի փարապարտ. ա. մ. 1. անպետք, փուչ, սնոտի. 2. իզուր, զուր տեղը:
Տարապարտուց, ի փարապարտուց, մ. իզուր տեղը, իզուր:
Տեռնագրել, եցի. ն. երեսը խաչ հանել, խաչակնքել:
Տեղ, ոյ. գ. առատ անձրև:
Տեղի, դույ, դեաց, գ. տեղ, տեղը:
Տեսադուրթին. գ. տեսադուրթյուն:
Տեսիլ, սլեան, անց. գ. 1. տեսք, կերպարանք, երես, պատկեր. 2. տեսիլ, երազ. 3. տեսարան, հանդես. 4. տեսնելը, տեսանելի բաներ:
Տերունական, ի, աց. ա. աստվածային, սրբազան. սուրբ:
Տիւ, տուրնջեան. գ. ցերեկ:
Տիք, տիոց կամ տից. գ. հասակ, տարիք:
Տնանկ, ի, աց. ա. աղքատ, չքավոր:
Տնանկություն. գ. աղքատություն, չքավորություն:
Տոհմական, ի, աց. ա. 1. տոհմային, ցեղային. 2. ազգական, ազգակից. 3. ազնվական. 4. գ. առատ բերք, արդյունք. 5. շահ, օգուտ:
Տող, ի, ից. գ. շարք, կարգ:
Տոռն, ռին, ռունք, ռանց. գ. պարան, շղթա, լար, կապ:

Յ

Յայգ¹, ոյ. գ. գիշեր:
Յայգ², մ. մինչև առավոտ: **Չցայգ. մ.** գիշերը, գիշերով:
Յանկ¹ կամ **Յանգ,** ոյ, ոց. գ. ցանկապատ, ցցապատ. ճյուղերից պատարաստված կամ կավաշեն պատ:

Յանկ², Յանկք. գ. գրքի գլուխների ցանկ՝ ցուցակ:

Յանկ³, Յանգ. մ. միշտ, մշտապես, շարունակ, անընդմեջ:

Յասնուլ, սեայ, սի՛ր, սուցեալ. չ. 1. սաստիկ բարկանալ, զայրանալ. 2. վրեժով՝ վրեժխնդրությամբ լցված. 3. նեղանալ, սրտնեղել:

Յելել, եցի, լեա՛. **Յելուլ,** ցելի. ցել՛. 1. պատռել, ճեղքել, ճղել:

Յիռ, ցոյ կամ ու, ուց. գ. վայրի էջ:

Յիր ընդ ցիր լինել(իմ). ցրվել, ցրիվ գալ, ցիրուցան լինել:

Յուցանել, ցուցի, ցո՛ւյց. ն. 1. ցույց տալ. 2. ապացուցել. 3. անել, հասցնել. 4. հանդես բերել, դրսևորել:

Փ

Փախստական առնել՝ արկանել՝ վարել՝ րալ. փախուստի մատնել, փախցնել, հալածել, քշել:

Փախստական լինել՝ գնալ կամ երթալ՝ դառնալ՝ անկանիլ՝ դիմել. փախչել, փախուստ տալ, փախուստի դիմել, փախչելով մեկի մոտ կամ մի տեղ ապաստան գտնել:

Փախստեայ, տէի, ից. գ. փախստական, փախչող:

Փաղփաղել(իմ), եցայ. չ. փայլփլել, շողշողալ, պլավալ:

Փաղփել(իմ), եցայ. տե՛ս **Փաղփաղել**(իմ):

Փայր, ի, ից. գ. 1. փայտ, փայտանյութ. 2. ծառ, տունկ: **Փայր ընկենուլ.** փայտի կտորներով վիճակ ձգել, չոփ գցել:

Փայրահար. ի, աց. 1. ա. գ. փայտ կամ ծառ կտրող (մարդ). 2. գ. կացին, փայտատ:

Փաշաման. գ. 1. գոջում. 2. վիշտ, փորձանք, չարիք:

Փարարել, եցի. 1. ն. ցրել, հեռացնել, վերացնել. 2. չ. ցրվել, հեռանալ, վերանալ:

Փարել, եցի. ն. շուրջը պտույտ գործել, չորս կողմը պտտել, ման ածել:

Փարել(իմ), եցայ. չ. 1. փարվել, փաթաթվել, գրկախառնվել. 2. շրջել, ման գալ:

Փարշման, տե՛ս **Փաշաման:**

Փափկատուն. ա. փափկության մեջ սընված, փափուկ՝ հեշտ կյանքի սովոր. փափկակյաց, փափկակենցաղ, փափկատուն:

Փիլիկոն կամ **Փիլիկուան** ի. գ. պարաստիկ, բարբան, քարոնկեց պատերազմական մեքենա:

Փղձկալ, ացայ. **Փղձկել**(իմ), եցայ. չ. սիրտը հուզմունքով կամ դառնությամբ լցվել, լացակումել, սիրտը փչել՝ լցվել:

Փշտիպան, տե՛ս **Փուշտիպան:**

Փոկ, ի, աց. գ. ծովային կաթնասուն կենդանի. փոկ, ծովաշուն:

Փող, ի, մանավանդ՝ **Փողք,** դից. գ. 1. վիզ, պարանոց. 2. կոկորդ:

Փողոտել, եցի. ն. վիզը՝ գլուխը կտրել, մորթել:

Փողոցամէջ, միջի. գ. փողոցի մեջտեղը. հրապարակ:

Փողփողել, եցի. ն. չ. 1. փայլեցնել, փայլվիլել, շողշողալ. 2. ծածանել:

Փոյթ առնել կամ **ուռել**(իմ). հոգ տանել, հոգալ, ջանալ:

Փոյթալ, ացայ, ա՛ կամ ացի՛ր. չ. 1. արագ անել, շտապել, աճապարել. 2. հոգալ, հոգ տանել, ուշադիր լինել:

Փոյթանակի. մ. շտապ, շտապ կերպով, շտապով:

Փուշտիպան, ի, աց. ա. գ. թիկնապահ, անձնապահ (զինվոր, զինվորական):

Փսիրայ կամ **Փրիսայ,** ի, ից. գ. չորացած խոտ, չոր ճյուղեր:

Փքալ կամ **Փքանալ,** ացայ կամ ացի. ա՛ կամ ացի՛ր, ացեալ. չ. 1. օդով՝ քամով լցվել, ուռչել. փխբ. հպարտանալ, գոռոզանալ, մեծամտել, հոխորտալ:

Ք

Քակել, եցի. ն. 1. քանդել, ավերել, կործանել, ոչնչացնել, փչացնել. 2. բաժանել, զատել. 3. քանդել, արձակել. 4. ցրել:

Քաղաքորմ, ոյ կամ ի. գ. 1. քաղաքը շրջափակող պատ, պարիսպ. պատնեշ. 2. պարսպի մեջ եղած տեղը՝ տարածությունը:

Քաղղեայ, դէի, ից. տե՛ս **Քաղեայ:**

Քաղել, եցի. ն. 1. քաղել, հավաքել, ժողովել. 2. դուրս քաշել, հանել, պոկել:

Քանգի. շ. որովհետև, քանի որ, այն պատճառով որ:

Քանքար, ի կամ ոյ կամ աց, ովք կամ օք. գ. արծաթ կամ ոսկի դրամի միավոր. տաղանդ (եբրայական):

Քաջ, ի, աց. ա. 1. ուժեղ, կտրիճ, անվեհեր, քաջ. 2. լավ, բարի, առաքինի, արժանավոր, երևելի, նշանավոր. 3. դյուցազն, հերոս. 4. մ. լավ, շատ, խիստ:

Քաջազանգուր. ա. գանգրահեր, խիստ գանգուր մազերով:

Քաջամարտիկ. ա. քաջ ռազմիկ, քաջարի կտրիճ զինվոր:

Քաջընթացիկ. 1. ա. արագ վագող, արագավազ. 2. գ. սուրհանդակ:

Քառամանեակ, եկի, աց. գ. կանանց պարանոցի ականակոտ զարդ, գոհարազարդ մանյակ՝ վզնոց:

Քաղեայ, դէի, ից. գ. աստղահմա. աստղագուշակ, երագահան, մոգ:

Քէն, քինու. գ. դիս, դիսակալություն, քինախնդրություն, վրեժխնդրության զգացում, ցատում, վրեժ:

Քէշ, ի, ից. գ. կրոն, աղանդ, հավատք. գրադաշտական կամ հին պարսկական կրոնը:

Քինախնդիր լինել կամ **եյանել.** վրեժխնդիր լինել, վրեժ լուծել:

Քիրորն, քրտան, տունք կամ տինք, տանց. գ. 1. քրտինք. 2. մանուքյամբ՝ ծանր աշխատանք:

Քնածու, ի, աց. ա. քուն բերող, քնաբեր: **Քնահար,** ի, աց. ա. քունը փախած՝

կտրված, անքնությունից տառապող, քնատ:

Քոյրաթի. գ. հորեղբոր կամ հորաքրոջ աղջիկ, քույր համարված, խորք քույր:

Քսիք, քսեաց. տե՛ս **Քսութին:**

Քսութին. գ. քսություն անելը, բանսարկություն, չարախոսություն, մատնություն, բամբասանք:

Քսրմնել, եցի. **Քսրմնել**(իմ), եցայ. չ. սարսափել, զարհուրել, տոկալ:

Օ

Օդիկ, օդիկ կամ օդկան. գ. ոչխարի կամ գառան մորթուց մուշտակ:

Օծանել, օծի, օժ. ն. յուղ՝ ձեթ քսել, օծել:

Օծարել կամ **Օցարել,** եցի. ն. միմյանցից բաժանել, հեռացնել. չ. ուղի շավղից դուրս գալ, շեղվել, խտտորվել:

Օճան, ի, աւ, ից. գ. 1. օգնություն, աջակցություն, օժանդակություն, նպաստ. 2. բարիք, երախտիք:

Օշման, ի. գ. օճառ. նակ՝ մեխակազգիների ընտանիքին պատկանող բույս, որի արմատը փրփրող ու մաքրող հատկություն ունենալու պատճառով գործածվել է որպես օճառ, օճառախոտ:

Օրէն, օրինի, մանավանդ՝ **Օրէնք,** օրինաց. գ. 1. կարգ, կանոն, օրենք. 2. կրոն, հավատք, ավանդություն. 3. իրավունք, պատվիրան. 4. (սուրբ) հայրորդություն. 5. օրենսգիրք. 6. գաւառ, նահանգ: **Օրէն** է. եր. արժան է, վայել է, օրենք է, սովորություն է:

Օրինակ գայս, զօրինակ գայս, գայս օրինակ. այս օրինակով, այս ձևով, այս կերպ, այսպես:

Օրինակ իմն. 1. որպես թե, իբրև թե. 2. իբրև՝ որպես օրինակ, օրինակի համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 3
 Համառոտագրություններ 4

ԴԱՍ ԱՌԱՋԻՆ

1. Գրաբարի այբուբենը, հնչյունների արտասանությունը և գրությունը 5
 2. Հնչյունափոխություն 8

ՉԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**Ա. խոնարհում
ԴԱՍ ԵՐԿՐՈՐԴ**

1. Դերբայներ 10
 2. Փոխանցումներ բայերի մեջ 12
 3. Բայի եղանակներն ու ժամանակները 13
 4. Ներկայի հիմքը և նրանից կազմվող ժամանակները 13
 5. Կրավորականի կազմությունը ներկայի հիմքից կազմվող ժամանակներում 15

ԴԱՍ ԵՐՐՈՐԴ

Ներկա 15

ԴԱՍ ՉՈՐՐՈՐԴ

Անցյալ անկատար 18

ԴԱՍ ՆԻՆԳԵՐՈՐԴ

Առաջին ապառնի 21

ԴԱՍ ՎԵՅԵՐՈՐԴ

Արգելական հրամայական 24

ԴԱՍ ՅՈԹԵՐՈՐԴ

1. Անցյալ կատարյալի հիմքը և նրանից կազմվող ժամանակները 26
 2. Խոնարհման տիպերն անցյալ կատարյալի հիմքից կազմվող ժամանակներում 27

ԴԱՍ ՈՒԹԵՐՈՐԴ

Անցյալ կատարյալ 30

ԴԱՍ ԻՆՆԵՐՈՐԴ

Երկրորդ ապառնի 34

ԴԱՍ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Բուն հրամայական (հրամայական եղանակի ներկա) 37

ԴԱՍ ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ

Հորդորական հրամայական (հրամայական եղանակի ապառնի) 41

ԴԱՍ ՏԱՄՆԵՐԿՈՒԹԵՐՈՐԴ

1. Անցյալ դերբայ 44

2. Ենթակայական դերբայ 45
 3. Ժխտական խոնարհում 45

**Բ. հոլովում
ԴԱՍ ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ**

Անվանական հոլովում 47
 1. Պարզ և խառն հոլովում 48
 2. Արտաքին և ներքին թեքում 48
 3. Հոլովների կազմությունը 48
 4. Դիտողություններ գոյական և ածական անունների հոլովման վերաբերյալ 55

**Գոյական անունների հոլովումը
ԴԱՍ ՏԱՄՆՉՈՐՍԵՐՈՐԴ**

1. Պարզ հոլովումներ

Ա արտաքին հոլովում 56
 Ա ներքին հոլովում 59

ԴԱՍ ՏԱՄՆՆԻՆԳԵՐՈՐԴ

Ե հոլովում 64
 Ի հոլովում 67

ԴԱՍ ՏԱՄՆՎԵՅԵՐՈՐԴ

Ո հոլովում 71
 Ու հոլովում 74

2. Խառն հոլովումներ

ԴԱՍ ՏԱՄՆՅՈԹԵՐՈՐԴ

Ի-Ա արտաքին հոլովում 78
 Ի-Ա ներքին հոլովում 81
 Ո-Ա հոլովում 85

ԴԱՍ ՏԱՄՆՈՒԹԵՐՈՐԴ

Անկանոն հոլովումներ 89
 Համանուն բառերի հոլովումը 93

ԴԱՍ ՏԱՄՆԻՆՆԵՐՈՐԴ

Դերբայների հոլովումը և գործածությունը 95

ԴԱՍ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Դերանվանական հոլովում 99
 Անձնական դերանուններ 99

ԴԱՍ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

Ցուցական դերանուններ 104

ԴԱՍ ՔՍԱՆԵՐԿՈՒԹԵՐՈՐԴ

Ստացական դերանուններ 113
 Փոխադարձ դերանուններ 115

ԴԱՍ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ	
Հարցական-հարաբերական դերանուններ	117

ԴԱՍ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ	
Անորոշ դերանուններ	120

ԴԱՍ ՔՍԱՆՏԻՆԳԵՐՈՐԴ	
Որոշյալ դերանուններ	129
Դերանվանական մակբայներ	132

ԴԱՍ ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ	
Ածական անունները և նրանց հոլովումը	136
Ածականների գործածությունը գոյական անունների հետ	138
Վերացականը թանձրացականի փոխարեն	140

ԴԱՍ ՔՍԱՆՅՈՑԵՐՈՐԴ	
Թվական անուն	142
Քանակական թվականները և նրանց հոլովումը	142
Դասական թվականները և նրանց հոլովումը	144
Անձներական թվականները և նրանց հոլովումը	145
Թվականների գործածությունը գոյական անունների հետ	145

ԴԱՍ ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ	
Պատճառական բայեր	150

ԴԱՍ ՔՍԱՆԻՆԵՐՈՐԴ	
Անկանոն բայեր	154

ԴԱՍ ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԴ	
Պակասավոր բայեր	160
Պակասավոր բայերի գործածությունը	161
Եղանակիչ բայեր	163

ԴԱՍ ԵՐԵՍՈՒՄԵԿԵՐՈՐԴ	
Բաղադրյալ ժամանակներ	167

ԴԱՍ ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԹԵՐՈՐԴ	
Մակբայ	173

ԴԱՍ ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ	
Շաղկապ	180
Չայնարկություն	181

ՇԱՐԱՅՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ	
ԴԱՍ ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ	
1. Շարադասություն	185
2. Համաձայնություն	186
3. Հոլովների գործածությունը	187

ԴԱՍ ԵՐԵՍՈՒՆՏԻՆԳԵՐՈՐԴ

Հողեր	191
Որ հարաբերական դերանունը	196

ԴԱՍ ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ

Նախդիրներ	199
Առ	200

ԴԱՍ ԵՐԵՍՈՒՆՅՈՑԵՐՈՐԴ

Ձ	205
---------	-----

ԴԱՍ ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ

Ի(Յ)	210
------------	-----

ԴԱՍ ԵՐԵՍՈՒՆԻՆԵՐՈՐԴ

Ընդ	214
Ըստ	218
Ց	218

ԴԱՍ ՔԱՌԱՍՈՒՆԵՐՈՐԴ

Նախադրություններ	221
Հայցական խնդրով նախադրություններ	221
Մեռական խնդրով նախադրություններ	222
Բացառական խնդրով նախադրություններ	223
Գործիական խնդրով նախադրություններ	223

ԳՐԱԲԱՐԻ ՆԱՏՆՏԻՐ

Կորին (5-րդ դ.), Վարք Մաշտոցի (Հատուածք)	226
Փաւստոս Բիւզանդ (5-րդ դ.), Պատմութիւն Հայոց (Հատուած)	229
Եզնիկ Կողբացի (5-րդ դ.), Եղծ Աղանդոց (Հատուածք)	233
Ազարանգեղոս (5-րդ դ.), Պատմութիւն Հայոց (Հատուածք)	238
Մովսէս Խորենացի (5-րդ դ.), Պատմութիւն Հայոց (Հատուած)	243
Եղիշէ (5-րդ դ.), Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին (Հատուած)	245
Ղազար Փարպեցի (5-րդ դ.), Պատմութիւն Հայոց (Հատուածք)	248
Շարականք	251
Յովհան Մամիկոնեան (7-րդ դ.), Պատմութիւն Տարօնոյ (Հատուած)	252
Մեքէոս (7-րդ դ.), Պատմութիւն (Հատուած)	255
Ղեւոնդ (8-րդ դ.), Պատմութիւն (Հատուած)	258
Գրիգոր Նարեկացի (10-րդ դ.), Մատեան ողբերգութեան (Հատուածք)	261
Արիստակէս Լաստիվերցի (11-րդ դ.), Պատմութիւն (Հատուած)	263
Մխիթար Գոշ (12-13-րդ դդ.), Առակք	267
ԲԱՌԱՐԱՆ	269

**Ներքի Միսակի Ավերիսյան
Ռուբեն Սերոբի Ղազարյան**

ԳՐԱԲԱՐԻ ՁԵՌՆԱՐԿ

Հրատարակության է ներկայացրել
համալսարանի հայոց լեզվի պատմության ամբիոնը

Տեխնիկական խմբագիր՝ Վ. Ջ. ԲԴՈՅԱՆ
Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հանձնված է շարվածքի 10. 09. 2001 թ.: Ստորագրված է տպագրության 15.
09. 2003 թ.: Չափեր 60x84 1/16: Թուղթ տպ. N 2: Տպագրության եղանակը
«Օֆսեթ»: Հրատարակչական 17,0 մամուլ: Տպագրական 18,75 մամուլ=17,44
պայմանական մամուլի: Տպաքանակ 1000: Պատվեր՝ 72:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Ա. Մանուկյան փ. N 1

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Աբովյան փ. N 52